Գ. ա. Ջ. Գր. ՉԱՓՈՒՆՑԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԷՆՋՎԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՐ Ա

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԱԺՈՂԿՈՄԱՏ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

41
2-53

Պրոֆ. ԴՐ. ՂԱՓԱՆՑՅԱՆ

Հ ՄՏՄԻԳՎԱԾ Է 1961 թ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾԱԿԱՆ—ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ, ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ,
ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
(ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ)

ՀԱՏՈՐ I

ԿՈՓԵ
II
14715



ՀՍՀ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1939

Проф. ГР. КАПАНЦЯН

ОБЩЕЕ ЯЗЫКОВЕДЕНИЕ

Вводно-общая часть, фонетика, морфология, лексикология (с семантикой)

Том I

ИЗДАТЕЛЬСТВО
ЕРЕВАНСКОГО ГОСУНИВЕРСИТЕТА

ՀԿԼԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Մեր այս աշխատանքը հանդիսանում է միայն վորպես մի փոքր «Ընդհանուր լեզվաբանության» համար, ինչպես այդ մատնանշել է Տոմասևի, Սոսյուրի, Վանդրիեսի և այլոց կողմից։ Այսուհետ ոգտագործվել են մեր ձեռքի տակ եղած բոլոր լեզվաբանական ուսումնասիրությունները, թեպետ որինակների մեջ ավելի տեղ է տրված հայոց լեզվին, ի նկատի ունենալով տեղիս ուսանողության պատրաստությունը և պահանջները։ Ձեռնհասով լեզվական երևույթների բացատրության մատերիալիստական դիրքերից, հեղինակն աշխատել է քննաբար վերցնել եղած հետազոտությունների լավագույն մոտեցումները և փաստերը։

Մեր «Ընդհանուր լեզվաբանության» նախորդ հրատարակությունը (1937 թվին), ընդգրկում էր միայն ներածական—ընդհանուր մասը, իսկ մասնագիտական մասից՝ միայն հնչյունաբանությունը։ Այս նոր հրատարակությամբ այդ «մասնագիտական» մասին ավելացված են ձևաբանությունը և բառապիտությունը (իմաստաբանության հետ)։ Հուսա ունենք այս առաջին հատորը լրացնել երկրորդով ևս, ուր մտնելու են լեզվի ծագումը և զարգացումը, լեզվի և գրի փոխհարաբերությունը, լեզուների պատմական դասակարգումը և վերջապես՝ լեզվաբանական ամբողջ կուրսը։

I

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՎԱԾՔԸ, ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԻՍՑԻՊԼԻՆՆԵՐԸ

Լեզվաբանությունը յուր պատմական զարգացման ամենում և մեր երայից դես շատ դարեր առաջ, վորի մասին կխոսանք մենք դրքիս վերջում։ Այստեղ, սակայն, չենք կարող չնշել նրա վերջին ընթացքը, վորը գերիշխում է այժմյան «քառակերպին» աշխարհում։

19-րդ դարի առաջին քառորդից լեզվաբանությունը մտնում է յուր Sturm- und Drangperiode։ Կապիտալիզմի արագ ծաղկումը անդրադառնում է և այդ դիտության վրա։ Ցերեկան են հանվում այսպես կոչված «հնդեվրոպական» կամ նախկին սեռալ գործածությամբ «արիական» լեզուներ և դրանց ազգակցությունը՝ մայր «նախալեզվից» առացված։ Առաջին պատվանդան դղող լեզվել է Ձրանց Բոպպը։ Այդ լեզուների հայտնագործումը մեծ թափ և տալիս նաև այլ դիսցիպլինների վերաժշկման և զարգացման, ինչպես պատմությանը, մարդաբանությանը և այլն։ Սակայն այդ լեզվաբանությունը «հնդեվրոպական լեզուների համեմատական քերականությունն» սկիսակով հիմնականում յուր մեթոդոլոգիայով և նպատակներով արտացոլում և տիրող դասակարգերի շահերը, նկրտումները։ Առաջ և մղում «ոսկայական» տեսակետը, այն է՝ հնդեվրոպացիների «ազնիվ» լինելը, ժողովրդությունն ու հակամետությունը իրեն ավելի զարգացած լինել քան ուրիշները։ Մանավորապես զաղութային քաղաքականության ասպեկտով անգլիացիք, որինակ, հատկապես ուսումնասիրում են հնդիկների հին (սանսկրիտ) և նոր լեզուները (բարբառները), զբաղանացիք նվիրվում են մանավորապես այն հին ու նոր լեզուների ուսումնասիրությանն, վորոնք ընկած հին իրենց կղզիից հառուցվող Բաղդադի յերկաթուղու յերկարությամբ, սահմանելով

այդ լեզուները ուսումնասիրող մի շարք «Արևելյան ընկերություններ» (Orient—Geselschaft)։ Գերմանացի լեզվագիտները, իրենց «աղգային» նկրտումներից յելած, դեռ համառ կերպով շարունակում են հնդեվրոպական լեզուները կոչել «հնդգերմանական»*։

Պետք է ասել սակայն, որ տիրող հնդեվրոպական ուղղությունը «յերիտասարդ քերականներից» հետո ունի և յուր առաջավոր դպրոցը, ինչպիսին է Սոսյուր'ի և Մեյե'յի «սոցիոլոգիական» դպրոցը, յնթե չխոսենք նման կոնցեպցիա ունեցող Վիեննայի համալսարանի հանգուցյալ պրոֆեսոր Հուգո Շուխարդտի մասին, կամ Ռուսաստանում՝ Ֆորտունատովի, Բոդուեն դե Կուրտենեյի և այլոց մասին։ Սակայն, այստեղ լեզվի «հասարակայնությունը», այսինքն՝ նրա ֆակտուրանների պատմահասարակական բովանդակությունը զարգացումը վերցվում և ինքնաբավ և հոգեբանական մոտեցումով։ Լեզվի հասարակայնության բնույթը և ընթացքը չի կապվում հարատևորեն յուր պատվանդանի (բազիսի) հետ. լեզուն չի վերցվում իբրև վերնաշենք, վերնաշենքային կուլտուրա։ Լեզվի մեջ չեն տեսել հասարակական մտքի կնիքը, լեզվի և մտածողության պատմական աղերսը, դասակարգերի պատմական փոխհարաբերությունը, պայքարը և այլն, Ինչևիցե վոչնչից կողմից և չեշտվում և դասակարգային կամ պրոֆեսիոնալ տարբեր լեզուները։

Ինքն ըստ ինքյան հասկանալի յի, վոր յնթե չկար ընդհանրական լեզվի մատերիալիստական ըմբռնում, չեր եր կարող լինել վերլուծման և նորագույն մարքսիստական հոնցեպցիան, յուր մատերիալիստական դիալեկտիկայով։

Թեպետ հնդեվրոպական և այլ լեզվագետները ձգտում են ցույց տալ, վոր իրենց գիտությունը ատոլիտիկ է, քաղաքականության չի հետևում, տարվում է միայն հանուն «մաքուր գիտության», սակայն մենք գիտենք, վոր այդ այդպես չե, վոր այդ լեզվագետները իրենց մեթոդոլոգիայով դրսևորում են տիրող դասակարգերի նպատակադրությունները, շահերը։ Մեր վերաբերմունքը դեպի այդ լեզվաբանական ուղղությունները պիտի լինի հարկավ բացասական, սակայն պետք է խիստ քննադատորեն վերամշակելով վերցնել այդ «պատմական», «նատուրալիստական», «հոգ-

---

* Հնդեվրոպաբանության տրամաբանական զարգացումը Գերմանիայում այժմ, ինչպես գիտենք, հանդեցրել է փաշիստական տեսության՝ գերմանական վոգու և ռասայի փիլիսոփայության։ Այդ «հնդեվրոպական» լեզվաբանության փշրանքներով կերակրվում են և հայ ազգայնամոլները։

տուբ-պատժական», «լեքսիքալական», «հոգեբանական», «սոցիոլոգիական», և այլ դպրոցների մի շարք փաստական քննություններ, նրանց նկարագրական լեզվական դրույթյունները, նրանց տեխնիկան։ Մեծ դեր են խաղացել դրանք լեզվի հնչյունական կողմի ուսումնասիրության մեջ, ինչպես և նրա ձևաբանական կառուցվածքի, սինտագմեն դասդասման և վերլուծման մեջ։ Թույլ և անշուշտ լեզվի «հոգեկան», «իմաստաբանական» (Семантика) և սոցիալական կողմերի քննությունը, այն էլ կատարված իդեալիստական տենդենցներով։ Իսկ նրանց կոմպարատիվիզմը մեզ համար նախնական և սահմանափակ դեր կարող է խաղալ։

Մատերիալիստական լեզվաբանության տեսակետից չկան արտոնյալ և դասալության լեզուներ, ինչպես նաև չկան ավելի և քան լեզուներ, ինչպես մենք հնդեվրոպական մորթ լեզվաբաններին մոտ։ Ընդհակառակը, մենք ճնշված կապանքներից ազատում ենք մի շարք լեզուներ, որոնք ցարական Ռուսաստանում լեզու կոչվելու իրավունքն անգամ չունեին, ինչպես «մարի», «ուդմուրտ», «մորդվա», «կարելո» և այլ լեզուները։ Մենք ոչ միայն իրավահավասարության լեզվական քաղաքականություն ենք վարում, այլև ավելին. այդ ճնշված ազգերի լեզուները դարձնում ենք մեր սոցիալիստական շինարարի համար. շեշտը դնում ենք ազգային ըստ ձևի կուլտուրաների ծաղկման վրա (պրոլետարական՝ ըստ բովանդակության)։ Դեռ ավելին. մենք սոսկական ու աբիբիկական բնակիչների մեջ լեզվի ազգային քաղաքականությունը դարձնում ենք կալխոզլիզմի հենարաններ խարխլելու միջոց, մենք այդ լեզվային ազգային քաղաքականությունը ծառայեցնում ենք սոցիալիստական հեղափոխության ուրբյայի համար։ Վերջապես, ազգային միջազգային սոցիալիստական մի հայրենիքում մենք կարգավորելու չենք և միանգամայն այդ միջազգային լեզվի խնդիրը։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, լեզուն և լեզվաբանությունը մեզ համար ստանում են ոչ միայն տեսական առարկայի բնույթ, այլ նաև մեր հեղափոխական պրակտիկայի և հետևանքների մի գենք։ Ավելորդ չենք համարում այստեղ բերել մի բուրժուական լեզվագետի մտորումները այդ դալիք հեղափոխության ու լեզվի մասին։ Այդ լեզվաբանը դուրս է եկել ֆրանսիական «սոցիոլոգիական» դպրոցից (Meillet-ի աշակերտն է), վանդրիես ազգանունով, որն ասում է. «Ցնծե մենք պատկերացնենք մեզ քաղաքական համ սոցիալական մի կատակլիզմ, որը փշրե այն

սահմաններըը, վոր գոյություն ունեն այժմ մարդկային խմբավորումների մեջ, վորը (կատակլիզմը) խառնե յուր տակնուվրայի մեջ այլ և այլ դասակարգերի, ազգությունների, ռասաների ներկայացուցիչներին, վորը վոչնչացնե մեր գարավոր քաղաքակրթությունը, վորպեսզի տեղ հարթի այլ բազայի վրա հիմնված նոր քաղաքակրթության համար, մեզնե լեզուն առաջինը չի յենթարկվի այդ կատաստրոֆային։ Ի՞նչի կվերածվի այս ժամանակ մեր ֆրանսիական լեզուն.—վոչ ավել, վոչ պակաս, քան վայրենիների մի լեզվի» (տես H. Даниловъ, Краткий очеркъ исторіи науки о языке, Москва, 1931, եջ 18)։ Կարծում ենք, վոր կոմմենտարիաները ավելորդ են, քանի վոր կան յերկու աշխարհներ, յերկու հակամետ տեսակետներ, իսկ պատմական պրակտիկան Սոցիալիստական Միության մեջ բնավ չհաստատեց վանդրիյեսների տեսակետը. հեղափոխության հետևանքով մեզ մոտ լեզուները զարգացան և ծաղկեցին։

Լեզուն և լեզվաբանությունն ունեն մեզ համար և առօրյա սոցիալիստական շինարարության համար մեծ նշանակություն։ Մենք պիտի ստեղծենք պրոլետարական գրական լեզու, մենք լեզուն պիտի յուր հին անմատչելի դիրքերից իջեցնենք մասսաների սպասարկմանը, դրանով բնավ այդ լեզուն վուլգարիզացիայի յենթարկելով։ Մեզնե ընդհանուր միջազգային բառերն ավելի յեն դրծածական ու մասսաներին հասկանալի, դրանք պիտի վորդեգրվեն։ Լեզվաստեղծման այն տենդենցները, վոր նկատվում են լեզվի զարգացման դինամիկայի մեջ և ունեն մասսայական բնույթ և յուրացում—այդ ավելի շուտ պիտի մանեն պրոլետարական «գրական» լեզվի արտեղալը, քան շատ հին բառեր ու վոճեր, վորոնք խոսողի գիտակցության և կենդանի աշխարհայացքին վոչինչ չեն տալիս։

Լեզվաբանությունը, իբրև ընդհանուր առարկա, ունի յուր գործնական նշանակությունը և մեր դպրոցական պրակտիկայի ասպարեզում, մայրենի կամ ուսաց լեզվի ուսուցման տեսակետից։ Ա. Տոմսոնի ասելով՝ „Нечего говорить, напр. о томъ, что преподаватель языка, не изучивший основательно известныхъ отделовъ языковѣдения, можетъ преподавать лишь такъ, какъ можетъ лечить знахарь, не изучивший анатоміи, физіологіи, фармакологіи и пр.“ (տես նրա Общее языковѣдение, Одесса, 1910, եջ 3)։

Լեզվաբանությունը յուր ընդհանուր նշանակությամբ մեծ

ծառայություններ և մատուցում նաև այլևայլ գիտությունների՝ սոցիոլոգիային, պատմությանը, հնագիտությանը, իրավաբանությանը, մարդաբանությանը, աղղագրությանը և այլն և այլն։ Դիցուք թե լեզվաբանը պարզում է, որ մեր հայոց «օրիորդ», «օրևար» կամ «օրևանք» (տերեր) և «օրևն ևս» (վայել և, սկզբում—տիրոջական և) բառերն առաջ են ելել մի հնագույն ori արմատից, որ նշանակել է «տեր». այստեղ սոցիոլոգը յուր տեսակետով կըմտանենա, իրրև դասակարգային բառատեղծագործության փաստերի, պատմաբանը՝ յուր տեսակետով, իրրև ուրարտական (նախահայկական) ժառանգության, իրավաբանը՝ յուր տեսակետով (օրևնք=այն, ինչ վերաբերում է տիրոջը) և այլն*։

Լեզվի մեջ կատարվելիք «հնեաբանական» այդ պեղումները մեզ կարող են տալ մի այնպիսի շրջան, յորում մինչև անգամ նյութական կուլտուրայի միացորդները կամ չկան և կամ քիչ բան են ասում։ Լեզվաբանությունը լեզվի այդ հնագույն շերտերի մեջ ելևէան է հանում մարդուս հնագույն աշխարհայացքը, ինչպես, օրինակ, կոսմոգոնիական—տոտեմական շրջանից։ Լեզվի տարբերի խաչավորումը, յորը ցեղերի կամ հիմնանների դոյացման ժամանակ մի քանի լեզվական միավորներից կամ տիտեմներից առաջանում է նոր սինթետիպացիա, վկայում է սկզբնական արտադրական կոլլեկտիվների նույն խաչավորման պրոցեսին յինթարկվելը։ Այսպիսով, ինչպես տեսանում ենք, լեզվի և իրեն կրողի սոցիալ-պատմական ուսումնասիրությունն անհնարին չեն իրարից. և հիրավի, լեզվաբանությունը մեծագույն շահած կլիներ յուր նվաճումների հաղորդ լինելու մեջ, յուր համընթաց լիներ և՛ պատմա-սոցիալական դիսցիպլիններին մանավանդ որ դասակարգերի դոյությամբ և պայմանավորված և՛ դասակարգային լեզուն. իսկ վերջինս մեզ համար, դեռ լեզվի պատմական ուսումնասիրում, փաստ և և հաստատվում և լեզվի առարկայով, նրա պատմական նոր փուլերով։

Այժմ գանք այն հարցին, թե լեզվի ուսումնասիրությունն

---

* Կամ թե հայոց լեզվում ունենք «տարգան», «ձեր», (վորից՝ ձրի, ինչպես ասում են՝ dar—darom), «պատարագ», «ընծա», «ձոն», «նվեր» բառերը, վորանք «նվեր» են նշանակում. այստեղ համեմատելու տարբեր բնագավառի տեսարանը յուր վերաբերմունքը կցուցադրելի. սոցիոլոգի համար շնչող գրվելու յի դրանց պատակարգային գոյացման վրա, այն է՝ վոր դասակարգը և ինչ տեսակի նվեր և մատուցել. պատմաբանի համար հետաքրքիր է նաև այդ բառերի ծագումը, օրինակ հարևան լեզուներից փոխառած լինելը և այլն («տարգան» և «նվեր» պարսկերեն են)։

ինչ մեթոդներով և տարվել, և լեզվի ինչ առանձին խնդիրներ կապված են այդտեղ քննության առնվել, ամբողջապես թե մասնակի։

ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՑԻՊԼԻՆՆԵՐԸ

Լեզուն կարելի չէ ուսումնասիրել թե ընդհանրապես, այսպես ասած ընդհանուր կերպով, և թե այս կամ այն լեզուն վերցրած առանձին։ Լեզվի ընդհանուր ուսումնասիրության կոնցեպցիան բնական է, որ չուր նախնական ձևավորման շրջանում ծնունդ պիտի առնի կոնկրետ լեզուների ուսումնասիրություններից։ Այդ վերջին ուսումնասիրությունը, այսինքն՝ վերցրած միայն կոնկրետ լեզուները, կարող է լինել թե պատմական հաջորդականության մեջ (դիախրոնիկ), և թե մի փուլի մեջ (սինխրոնիկ), թե ընդհանուր նկարագրական և թե դրանից յուրաքանչյուր՝ պրակտիկ-գործնական, վորոշ և սովորական դպրոցական նորմատիվ քերականություններ։ Կոնկրետ լեզվի ընդհանրապես ուսումնասիրությունը, այսինքն՝ աչքաթող անելով դրա մանկավարժական և այլ դրվածքը, շատ նման է այլ փորձնական՝ համալիրիկ գիտություններին, ինչպես են օրինակ՝ ֆիզիկան, բնագիտությունը։

Սակայն, այդ նկարագրական կոնկրետ ուսումնասիրությունը վոչ միայն չուր ընդհանուր բնույթով և ծավալով տարբերվում է այդ տվյալ լեզվի պրակտիկ քերականությունից, այլև չուր մեջ պիտի արտացոլի ժարդկային լեզվի ընդհանուր կուլտուրը, պիտի չուրչ տա այդ մանավոր կոնկրետի մեջ ընդհանուր լեզվականը, վորովհետև վոչ միայն կա այդ ուրույն մի լեզվի բնագավառը, այլ դրա մեջ՝ ընդհանուրը, վոչ միայն այդ մանավոր մի լեզվի նկարագրությամբ մենք շնչում ու դրսևորում ենք «ինքնուրույնը», «առաբերությունները», այլև ընդհանուրը։ Այսպիսով, ինչպես տեսնում ենք, մենք «ընդհանուր լեզվաբանության» և մի վորևե կոնկրետ լեզվի նկարագրական ուսումնասիրությունը (առատիկ թե դինամիկ առանձնահատկություններով) չենք դարձնում միմյանց հակամերժ, ինչպես այդ արվում է հայտնի ֆրանսիացի լեզվաբան, սոցիոլոգիական դպրոցի առաջնորդ Ֆերդինանդ*

---

* *Տվյալ լեզվի մի կոնկրետ փուլի ակադեմիական (դիտական) նկարագրությունը տալիս է այդ լեզվի և՛ նորմատիվ յերևույթների նկարագրությունը և՛ նոր սկսվող կամ սոցիանալվող, ի մեջ առնելով և՛ լեզվի տարածաուրան («քերականություններ») և լեքսիկան։ Նյութի դասավորության մեջ ևս այդ դիսցիպլինան պատ ե։ Այլ և պրակտիկ, մանկավարժական թեքումով քերականություններ։*

դե Սոսյուրի կողմից (Ferdinand de Saussure) յուր սինխրոնիկ և դիախրոնիկ լեզվաբանությունների մեջ։ Այդպիսի ուսումնասիրությունը, այսինքն՝ լեզվի ընդհանուր առումով («ընդհանուր լեզվաբանություն») կամ նրա կոնկրետ՝ ժամանակորը, մեզ մոտ միայն պիտի իրար լրացնեն, մեկը մյուսով պայմանավորվեն և արդասավորվեն։ Այստեղ կա ոչ միայն այդ դեպսիպլիննների հակադրություններ, այլև դրանց միասնություն։

Վերցնենք այժմ կոնկրետ լեզվի ուսումնասիրության քննադատությունը և մեթոդները։ Ինչպես վերևում արդեն նշվեց, կա կոնկրետ մորևև լեզվի սովորական գործածական (պրոցական) քերականություն, որը ոչ այլ ինչ է, քան նույն լեզվի լոկ սորուհուսը մասի ուսումնասիրությունը՝ նորմատիվ որինաչափություններով և մանկավարժական նպատակներով։ Մենք խոսելու ենք այդ կոնկրետ լեզվի ընդհանուր դիտական նկարագրության մասին։ Այստեղ մենք կարող ենք ուսումնասիրել կամ դրա հնչյունական մասը, կամ բառաձևերի տեսակները (բառափոխություն, «թեքում»), կամ բառակազմությունը (словообразование), կամ բառերի դասավորության կարգանակը, կամ բառաձևերը և յուր նշանակություններով դասդասումը, կամ լեզվի իմաստական՝ նշանակոդական կողմը։ Կարող ենք ուսումնասիրել և այդ բոլորը միասին։ Հետևապես կստացվին կամ նկարագրական «հնչյունաբանություն» (фонетика), կամ «ձևաբանություն» (морфология), կամ «բառակազմություն» (словообразование), կամ «շարահյուսություն» (синтаксис), կամ «լեքսիկոլոգիա», կամ «իմաստաբանություն» (семантика, семасиология)։

Ինչպես ասացինք, կարելի կն և այդ բոլոր կողմերը միասյալ ձևով ուսումնասիրել։ Եթե այդ վերջին դեպքում մենք կունենանք մի մորևև կոնկրետ լեզվի նկարագրական գիտական քերականություն*։

Բայց կոնկրետ լեզուն կարելի կն վերցնել ուսումնասիրելու ոչ միայն մի տվյալ ժամանակամիջոցում, ոչ միայն, այսպես ասած, յուր ստատիկ մի վիճակում, այլև յուր անցած վուլերի մեջ, այսինքն՝ պատմականորեն։ Այստեղ արդեն նկարագրական ուսումնասիրությունն ընդդրկում և ավելի մեծ շրջան, այն է՝

* Կոնկրետ լեզվի մուլի գիտական այդ ամբողջական ուսումնասիրությունը մեթոդոլոգիապես իրեն ավելի պիտի արդարացնի, քանի որ լեզվի բոլոր իրականությունները միացյալ են, միասնաբար են հանդես գալիս, միմյանց կապակցությամբ են լավ հասկացվում և պայմանավորվում։

կոնկրետ լեզուն յուր պատմականորեն հայտնի բոլոր ժամանակներում, յուր դինամիկ զարգացման ասպարեզում։ Ցնծեն այդ կոնկրետ լեզվի մի տվյալ ետապի ուսումնասիրությունն ենք կատարում, մենք այդտեղ լեզվական փաստերը կամ յերևույթներն ըստ իրենց տեսակների կամ հատկանիշների ընտրում և դասդասում ենք, սեփականում ենք կատարում, պահելով դրանց մեջ վորևե հաջորդականություն։ Բայց յեթե այդ լեզուն վերցնում ենք յուր զարգացման պատմական շրջանների մեջ, մենք արդեն ամեն մի լեզվական պատկանելիություն, ամեն մի իրակություն (փաստ) պիտի համեմատենք նախորդ և հաջորդ ձևերի մեջ և դանելով հետևեան դրանց հնագույնը, վորքան թույլ և տալիս այդ լեզվից մեզ ծագած պատմական մատերիալը, մենք մոտավորապես ստանում ենք տվյալ լեզվի հնագույն փուլի պատկերը յուր հետագա զարգացումով, կամ ընդհակառակը՝ նոր փուլը յուր նախորդ ետապներով։ Այս կլինի այդ լեզվի «պատմական ուսումնասիրությունը» կամ, ինչպես ասում են, «պատմական քերականությունը»։ Բայց կարելի յե կոնկրետ լեզվի պատմական ուսումնասիրությունը շարունակել ավելի հնագույն ժամանակաշրջանների մեջ։ Այստեղ թեպետ այդ լեզուն պահած չունի դրավոր հին ձևեր, բայց այլ «ազգակից» լեզուների ոգնությամբ մենք, համեմատելով պատմական այդ լեզվի ձևերն ազգակից այլ լեզուների նման ձևերի հետ, կարող ենք մոտավորապես վերականգնել ավելի հին տեսակները։ Որինակ, մեր ժողովրդական «ախպեր» (=брат) ձևն առացվել և «ազիներ», սա ել «աղբայր» հնագույն պատմական ժողովրդական ձևից (համմ. դրաբարի «եղբայր» ձևը)։ Բայց մյուս ազգակից լեզուների ոգնությամբ մենք այդ «աղբայր»-ը ձևափոխված ենք համարում „lbayr", սա ել „blayp" ‖ „brayr", իսկ վերջինս՝ bhrater(=брат) նախնական և հին ձևից։ Այսպես կարող ենք անել միայն մի բառի նկատմամբ, միայն կոնկրետ լեզվի բառամթերքի՝ լեքսիկոնի, այլև լեզվի մյուս բոլոր տարրերի նկատմամբ։

Այստեղ արդեն մենք թևակոխում ենք կոնկրետ լեզվի «նախապատմական» շրջանը։ Ամեն պարագայում, ինչպես տեսանք, մեթոդը համեմատական եր. և հետևապես առացվում են տվյալ կոնկրետ լեզվի «պատմական քերականությունն» և «համեմատական քերականությունն»։ Այդ բաժանումը, հարկավ, պայմանական է. յերկուստեք տեղի ունի այդ տվյալ լեզվի պատմական ուսումնասիրությունը համեմատական մեթոդով. միայն մի դեպ-

քում՝ այդ ուսումնասիրությունը կանգ և առնում յեղած գրավոր հիշատակարանների հնագույն շրջանում, սկսած յուր զարգացման նորագույն շրջանից և առացվում և «պատմական քերականություն», իսկ մյուս դեպքում՝ այդ պատմա-համեմատական ուսումնասիրությունը, չունենալով այդ ավյալ լեզվի ավելի հին գրավոր աղբյուրներ, հենվում և «ազգակից» պատմական և հին լեզուների նման ձևերի վրա և համեմատական ուսումնասիրությունից հանում լեզվի ավելի հին «նախապատմական» ձևեր. այդ իհարկե անկատար պիտի լինի։

Այս պատմական և համեմատական ուսումնասիրությունները կարելի յե կատարել թե կոնկրետ լեզվի ամբողջության նկատմամբ և թե նրա վորոշ մասերի։ Եվ յեթե այդ վերջին ժամանակում ունենանք, ապա կատանանք, դիցուկ թե «պատմական հընչյունաբանություն» (հայերենի, վրացերենի, ռուսերենի...) «պատմական ձևաբանություն» և այլն և այլն, ինչպես և «համեմատական հնչյունաբանություն» և այլն։

Ցերը բառերի, կամ ավելի ճիշտ՝ բառարմատների ծագումն ու հետագա ձևերն են քննում, այդ կոչվում և բառերի «ստուգաբանություն» կամ հունարեն լեզվով ասած՝ «էտիմոլոգիա» (etymos logos „истинное слово“). բայց պրակտիկ դպրոցական քերականություններին մեջ այդ «ստուգաբանություն» անվան տակ յերբեմն սխալմամբ վերցնում են հնչյունաբանությունն ու ձևաբանությունը։

Համեմատական քերականությունն այժմ յեվրոպական լեզվաբանության հիմքն ու գլուխ գործոցն է։ Կարելի յե հաստատ ասել, վոր «հնդեվրոպական լեզուների համեմատական քերականություն» և ծնունդ առնում և ընդհանրապես դիտական լեզվաբանությունը։ Այստեղ տենդենց կա գտնել վորոշ խմբի լեզուների հնագույն ձևը, ասենք ասը. դրանց պատմական հավասարությամբ հարց և դրվում լեզվական փուլերի հաջորդականության մասին, դրանց որինաչափական փոխհարաբերությունների մասին, դրանց ծագման մասին մի ընդհանուր դրություն և այլն։ Այդ ձևով վերստեղծում են, որինակ, սեմական լեզուների «նախալեզուն», այսինքն այն սկզբնական դրությունը, վորի հաջորդական և հետագա ձևափոխություններն են ասորա-բաբելական, արաբական, վյունիկիական, հրեական, սյուրիական (արամեական) լեզուները։ Նմանապես, հիմնվելով ռուսերենի, լեհերենի, բոլգարերենի, սերբերենի, չեխերենի և այլ սլավոնական լեզուների պատմական ուսումնա-

աիրությունների վրա, դրանք բոլորը հանում են մի «նախասլավոնական» մայր լեզվից, որը չեղած պիտի լիներ նախապատմական շրջանում և ծնունդ տված այդ պատմական լեզուներին*։

Ինչպես ասացինք, առաջին և ամենամեծ գյուտն էր «հնդեվրոպական» կոչված լեզուների հայտնաբերումն ու դրանց համեմատական ուսումնասիրությունը՝ «համեմատական քերականությունը»։ Դրա հիմնադիրն և գերմանացի լեզվագետ Ֆրանց Բոպը, որը 1833 թվին հրատարակեց յուր համեմատական այդ քերականությունը։ Հետագայում այդ դպրոցն** ավելի ու ավելի զարգացավ, կատարելագործվեց և դարձավ ընդհանրապես լեզվի գիտության բուլը։ Հնդեվրոպագիտությունը (Индоевропейстика) հետագայում շատ ձևափոխությունների ենթարկվեց, ունենալով յուր «երիտասարդ քերականների» դպրոցը, «հոգեբանա-

---

* Ինչպես տեսնում ենք, համեմատական մեթոդը (կոմպարատիվիզմը) վոչ միայն քերի է, ձևական է, չի պայմանավորվում լեզվի պատմա-հասարակական ֆակտորներով և դրանցով բացատրվում, այլ միմիայն նպատակադրված և ընդհանրություններ տեսական վերականգնումով՝ վերականգնել նաև սկզբնական դրանց աղբյուրը—մայր լեզուն։ Լեզուների տարբերությամբ այդ մեթոդը զբաղվում, վորովհետև իրեն նպատակ չի դնում, իսկ ընդհանրությունների այլ բացատրություն դրանք ի վիճակի չեն տալու, ինչպես և տարբերությունների բացատրություն։

** Հնդեվրոպական լեզվաբանության այդ առաջին փուլի մասին Ֆր. Ենգելսը ասել և դրական կարծիք, շեշտելով այդ դպրոցի պատմական մեթոդի առավելությունը, նրա առաջադեմ լինելը։ Ենգելսը ասում է. „Господин Дюринг, изгнав из своего учебного плана всю современную историческую грамматику, оставляет для обучения языкам в своей школе только старомодную, выкроенную в стиле древней классической филологии, техническую грамматику, со всей ее казуистикой и произвольностью, порождаемыми отсутствием в ней исторического основания... Очевидно, нам приходится иметь дело с филологом, никогда не слыхавшим *об историческом языкознании, так сильно и плодотворно развившемся в последние 60 лет*, и поэтому отыскивающем „современные возвышенные образовательные элементы" языкознания не у Боппа, Гримма и Дица, но у блаженной памяти Гейзе и Беккера" (Энгельс, Антидюринг, Москва 1932, էջ 233։Ընդգծումը մերն է. Գ. Ղ.)։ Ն. Մառը անհաշտելի չի համարում համեմատական լեզվաբանությունը յուր տեսության հետ („По этапам развития яфет. теории". Предисловие, 1926 г.) և ընդհանրապես բուրժուական անցյալի ժառանգականության ոգտագործման խնդիրը նրա մոտ կարծես թե բացատրվում է, չկարևորելով միայն իրեն տվյալները, այն ինչ բուրժուական այդ լեզվաբանության անգամ շատ նվաճումներ և ավել, ինչպես շեշտել է Ենգելսը։

կան» դպրոցը, «սոցիոլոգիական» դպրոցը և այլն։ Մակայն, հիմնականում այդ հնդեվրոպաբանությունը ծնունդ և առնում է ծաղկում կապիտալիզմի հետ և անհրաժեշտորեն դառնում նրա իդեալի և տենչանքների արտահայտիչը։ Այդ լեզվաբանական ուղղությունն իշխում է այժմ և՛ ամերիկացիների, և՛ ֆրյուբքադեմների, և՛ կովկասագետների, և՛ այլոց մոտ։ Ոմն ավոդը նա չի լսե «նախալեզվով», «նախահայրենիքով», քեպետ շատերը հենց իրենցից սկսում են քերահավատ լինել և՛ դեպի այդ նախալեզուներն ու նախահայրենիքները և՛ դեպի համեմատական մեթոդի այդ ձևական կիրառումը։ Մարքսիստ-մատերիալիստ լեզվաբաններն իրենց հերթին դեռ չեն պատասխանել լեզվական մի շարք յերևույթների պատճառականության մասին, որովհետև նախալեզուները, նրանք դեռ չեն բացատրել այն ընդհանրությունները (բառարժատ և ձևեր), որ կան մի շարք «ազգակից» լեզուների մեջ։ Հիմնական ազգակիր վոմանց կողմից համարվում է «խաչավորումը» (скрещение), իբրև սկզբնական արտադրական միավորումների (կոլլեկտիվների) խաչավորման արդյունք։ Բայց սա էլ ընդհանուր բնույթ է կրում և լեզվի շատ կողմեր դեռ չեն լուսաբանված, շատ բան էլ դեռ չի կենդրնացված։ Լեզվատեղծ պատմական սուբստրատը, այն է՝ արտադրական պրոցեսը յուր հասարակական դինամիկ հարաբերություններով դեռ կոնկրետ չի ուսումնասիրված և յուրացված լեզուների պատմական զորոշ դարաշրջանների տեսակետից։ Էլ չենք ասում այդ լեզուների նախնական՝ նախապատմական ձևերի համար։ Պատմականորեն չեթե կա լեզվի ինքնադարգացում և ժառանգականություն, կա և լեզվի հետափոխություն, բաղխում, լեզուների սինթեզացիա (խաչավորում) և ներթափանցում, կա և լեզվի սոցիալական շերտավորում դասակարգային լեզուներով, հասարակական հարաբերություններից յելած և կազմակերպված հոգեբանություն, իբրև մի կոնդրադավորող գործոն, որն անմիջապես յուր կնիքն է դնում նախորդ լեզվական ժառանգության վրա, յուրացնելով կերպարանափոխում այդ վերջինը։

Ահա յելնելով հենց այս ընդհանուր դրույթներից և ոգտագործելով կոնկրետ լեզուների պատմական քեե սատուկ նկարագրությունները, ծնունդ և առնում լեզվի մի նոր գիտություն—ընդհանուր լեզվաբանություն։ Այդ գիտությունն կոչվել և կամ հենց այդպես, այսինքն ընդհանուր լեզվաբանություն (общее языковедение), կամ լինգվիստիկա (лингвистика) լսումներեն «լինգ-

վա» (lingua) «լեզու» բառից, կամ «լեզվի տեսություն», «լեզվի փիլիսոփայություն», կամ ավելի շուտ «լեզվաբանության ներածություն» (Введение в языковедение): Ընդհանուր լեզվաբանությունը յուր նյութը վերցնում է կոնկրետ լեզուների պատմահամեմատական կամ նկարագրական ուսումնասիրություններից, հիմնվում և դրանց վրա և այդ նախկին դիտությունները փոխարինում է սիստեմատիկ դոկտրինայով: Այդպիսով, ինչպես տեսնում ենք, ընդհանուր լեզվաբանությունը ուսումնասիրում է ընդհանրապես մարդկային լեզուն և ոչ թե կոնկրետ այս կամ այն լեզուն. լեզուն այդտեղ վերցվում է աբստրակտ դրությամբ, ուսումնասիրությամբ, սակայն յեղնելով կոնկրետներից, քանի որ չկա աբստրակտը, այլ կան պատմական լեզուներ: Այս նոր դիսցիպլինի համար բոլոր լեզուներն էլ կարևոր են, սակայն կուլտուրապես ամենացածր մակարդակի վրա կանգնած ցեղերի (բուշմեններ, հոտենտոտներ, նեգրիտոսներ) լեզուներից մինչև «ամենակատարյալ» յեվրոպականը: Դեռ ավելին պրիմիտիվ կամ վայրենի ցեղերինը ավելի կարևոր կարող է լինել, նայած որ խնդիրն է շոշափվում:

Կարելի յե վերցնել ոչ միայն «մարդկային լեզուն» ընդհանրապես, այլ նրա որոշ մասերը. որինակ, կարելի յե ուսումնասիրել միայն հնչյունաբանությունը կամ միայն ձևաբանությունը և այլն: Այս դեպքում, իհարկե, պիտի ոգտագործվեն աշխարհիս բոլոր լեզուները, յերեք դրանց պատմական և նկարագրական կոնկրետ ուսումնասիրությունները կան: Բայց այս մասնատրված ուսումնասիրությունները լեզվի հասարակական արժեքավորման տեսակետից անբավարար են:

Ընդհանուր լեզվաբանությանը յենթակա յե, իբրև ուսումնասիրության օբյեկտ, մարդկային լեզվի տարրերի (resp. ֆակտուրայի) ամենքը, և՛ նկարագրորեն, և՛ ծագմամբ ու զարգացման պրոցեսով: Այդպես են քննվելու, որինակ, լեզվի հնչյունները, իրենց նկարագրությամբ սկսած հոտենտոտների կամ բուշմեններ «գլգլոցներից» (ներշնչական հնչյուններից) մինչև մեր այժմյան հնչյունները, դրանց ֆիզիոլոգիան և ակուստիկան, դրանց համադրումը արտասանությամբ և դրանց փոխազդեցությունը, դրանց պատմական զարգացման դինամիկան ու փոփոխությունները, վերջիններիս հիմնական դրդապատճառները, սոցիալ-պատմական ֆակտորը, դասակարգային «արտասանություն» և այլն, և այլն: Նման վերաբերմունք պիտի լինի հարկավ և՛

ձևաբանության, և՛ իմաստաբանության, և՛ բառաստեղծման վերաբերյալ։ Բայց ընդհանուր լեզվաբանությունը չ'ոչ միայն սահմանափակվում է լեզվի, այսպես ասած, ներքին աշխարհով, նրա ֆիզիկո-ֆիզիոլոգիական, հոգևոր և սոցիալական կողմերով, այդ դիտությունը զբաղվում է և լեզվի ծագման խնդրով, լեզվական իրականությունների և հասարակական-անհատական գիտակցության փոխհարաբերությամբ, լեզվական ընդհանուր օրինաչափությունների խնդրով, լեզվի և մտածողության փոխհարաբերությամբ, լեզվի և հոգեբանության փոխհարաբերության խնդրով, լեզուների խառնվածքաբանությամբ, լեզվի դիալեկտիկայով, լեզվի և գրի փոխհարաբերությամբ և այլն, և այլն։

Ընդհանուր լեզվաբանությունը կամ, ինչպես այլ կերպ նաև ասում են, «լեզվի գիտությունը» (наука о языке, лингвистика), ուսումնասիրում է վերոհիշյալ լեզվական իրականությունները ու խնդիրները մեսամին վերցրած։ Բայց ընդհանուր դրույթի տեսակետից, այսինքն՝ չ'ոչ կոնկրետ լեզվի նկարագրության համար, մենք կարող ենք, ինչպես արդեն ասվել է, ուսումնասիրել և առանձին այդ լեզվական երևույթները։ Սակայն այդ մասնավոր հետազոտությունները անպատճառ պետք է մեզ համար ընդունելի չլինեն (բնական ծագման ու մեթոդոլոգիայով), մանչափ դրանք նպաստում են լեզվի մյուս իրականությունների պարզաբանված ճանաչողության և բնութագրման։ Որինակ, հնչյունաբանությունը առանձին ուսումնասիրում են ֆիզիոլոգիական և ակուստիկական (ֆիզիկական) տվյալներով, հնչյունները դծագրում են զանազան գործիքներով՝ կազմելով դիագրամներ, և այլն. առնում են այսպես կոչված «փորձնական (նքսպերիմենտալ) հնչյունաբանություն»։ Ինչ խոսք, մոր ընդհանուր դիսցիպլինայի մեջ՝ ընդհանուր լեզվաբանության մեջ՝ այդ փորձնական հնչյունաբանության մասը-նները ամենքը և, թեպետ մոմանք այդ արել են մասամբ, ինչպես Ա. Տոմսոնը, վերցնելով նաև արտասանության անատոմիական և ֆիզիոլոգիական բարդ մեքենան յուր կենտրոններով ուղեղում և այլն։ Այդ մասնավոր նեգմամբ պետք հետաքրքրվեն թեկուզ բոնաներները և գուցե բժիշկները, մեզ համար այդ ամենը, դիցուք թե բաժին թվաբանության կամ կակազության. սակայն ընդհանուր լեզվաբաններին համար այդ լեզվի մասնավոր կողմերի ընդհանուրը պետք շաղկապվի լեզվի մյուս տարրերի դրսևորման ու բացատրության հետ։ Այդ նույն կոնցեպցիան, ինչ-

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ

պես ասվել է, մենք ընդհանուր լեզվաբանության կազմելու տեսակետից ունեցինք և մասնավոր կոնկրետ լեզուների ուսումնասիրության նկատմամբ, որը պատմականորեն ի հայտ եկած այդ բոլոր մասնակի օբյեկտները ոգտագործվում են մեր ընդհանուր այս դոկտրինայի համար։ Բայց այդ կոնկրետ լեզուները ու իրենց պատմական խնդիրները մեզ համար ակտուալ են դառնում, որը իրենց մեջ արտացոլում են ընդհանուրը, ասել թե ոչ՝ շաղկապումը կամ կլլները անհնարին կամ մեխանիկական։

II

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

ԼԵԶՈՒ—ՀՈՄՔ—ՄԻՏՔ. ԱՐՏԱՍԱՆՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Խոսելով լեզվի մասին, մենք այստեղ առայժմ սահմանափակվելու չենք միայն նրա ֆունկցիոնալ նկարագրությամբ, Թողնելով դյուտաղոնիական ընդհանուր հարցերը մի այլ թեմայի, ուր արվելու չի լեզվի ծագումը, զարգացման պրոցեսը և այլն։

Լեզուն միշտ չի եղել. նա յուր ծնունդն առնում և մարդուս պես կիսամայրենի վիճակում, հետագայում կազմակերպվելով հասարակական աշխատանքի պրոցեսից կամ պրոցեսի հետ։ Հետևապես լեզուն պատմական կատեգորիա չի, մարդու կողմից ձևք բերած մի նվաճում, պատմա-կուլտուրական մի բարդ արվեստ, վերնաշենքային մի բարձր կուլտուրա։ Լեզուն, ուրեմն, պատմա-հասարակական երևույթ է։

Փոքր հասակից այժմ մարդս յուրացնում է այդ լեզուն յուր շրջապատից. նշանակում է այդ լեզուն բնազդորեն ևս նրան հատուկ չի եղել, վոչ էլ հատուկ է եղել նրա ցեղին կամ ռասային։ Ցեղախառն վոր շրջապատն ընկնի, այն լեզուն էլ կյուրացնի, թեպետ այս դեպքում ևս ժառանգականության ունակությունները վորոշ չափով դեր կարող են խաղալ։ Որինակ, արտաքին ուրույն սիստեմի լեզվի ժառանգականությունը դժվարել է այն դեպքում, երբ արաբ փոքրիկ չխոսող երեխային տարել են Ֆրանսիա և Ֆրանսերեն սովորեցրել։ Ցեղախառն, սակայն, նույն տնտեսով և մանավանդ նույն կատարելության չի յուրացրել այդ Ֆրանսերենը. այս պատմական փորձը վերագրում են լեզվական սիստեմի ժառանգիչորեն ժառանգական ունակության առանձնությունը, թեպետ այդ ևս ոլրոբլեմատիկ է և այսպես կարող է լինել միայն մի սերունդի կամ ավելի ճիշտ՝ վորոշ տարիքների համար։ Համենայն դեպս, լեզվի այս կամ այն սիստեմը կամ տեսակը, չլինելով բնապատմական օրգանիզմ, անհրաժեշտորեն չի կապված այս կամ այն

ռասայի կամ ցեղի հետ։ Պատմությունը մեզ շատ ու շատ դեպքեր է տալիս, երբ ցեղերը և ազգերն իրենց լեզուները փոխում են, յուրացնում են այլ ցեղի կամ ազգի լեզու. որինակ բոլշարները իյուրքական ցեղից են, բայց յուրացրել են սլավոնական մի բարբառ, կամ Նովիասի (Թևմիր-խան-Շուրայի մոտ) հրեաները, գաղթած լինելով միջնադարյան Պարսկաստանից, ընդել են այնտեղից և հին ձևի պարսկերենը, որը յուրացրել էին նրանք դեռ Պարսկաստանում, և այլն, և այլն*։

Ընդհանուր լեզվաբանության համար բնականաբեն բոլոր լեզուները համարժեք և կարևոր են։ Մենք համամիտ ենք Ալեքսանդր Տոմսոնի հետ, երբ նա ասում է.—„Все языки и говоры, даже самых диких и некультурных народов, имеют одинаковую ценность для науки; последние во всяком случае более подходящие об'екты научного исследования, чем литературные языки образованных народов, которые для лингвиста то же, что оранжерейные растения для ботаника„ (տես նրա—Общее языковедение, Одесса. 1910, էջ 4)։ Այսպես գրական լեզուն ասելով հասկացվում է մասամբ արվեստական, ինտելիգենցիայի կողմից ձևափոխած, կոկած. ավելի ևս կարելի չի այդ տողերը վերագրել միջազգային արվեստական լեզուներին (նապերանտո, վոլապյուկ և այլն)։ Ցերկերտը, լեզու ասելով, մենք այս դեպքում (այսինքն՝ լեզվաբանության համար իրրև կարևորություն) պիտի արժևքավորենք նաև ամեն մի բարբառ, յենթաբարբառ կամ խոսվածք (говор), որովհետև դրանք ել իրենց հերթին պարզաբանում են լեզվական սխատիպի վորոշ կարևոր մոմենտներ, հատկապես մանավորի և բնդհանուրի փոխհարաբերության խնդրում։ Իսկ առանց այդ բոլորի մեզ համար պարզ չի լինի, թե ինչ է լեզուն։

Այժմ դանք հենց այդ դլխավոր հարցին, թե ինչ է լեզուն։

Մարքսը լեզուն համարում է «նոսել դիտակցություն» („pe-

---

* Դեռ հնագույն շրջանում, երբ առհասարակ ու ցեղերը եքզոգամիայի (այլ ցեղից կին վերցնելը), սակավաթիվ փոխանակության և պատերազմական բախման հետևանքով լեզվական նորանոր հարաբերություններ և փոփոխություններ էլին առնվում, արդեն այդ ժամանակից իսկ լեզուների պատմական նորաղոյացումները կոլլեկտիվների հասարակական (և մաշ տասայական) ֆունկցիայից էլին սերվում։

зальное сознание")*, որով պարզաբանվում է լեզվի սպեցիֆիկությունը, իբրև վերնաշենքի (իսկ քաղաքատնտեսության քննադատության յուր նախածանկության 1859 թվին նա ասում էր.—«լեզվի պարզացումը առանց մեսսիոն ապրող և մեյջանց հետ խոսող մարդկանց—անմտություն էր։ Լեզվի ծագման մասին դրել է Ենգելսը յուր «Աշխատանքի դերը կապիկի մարդկացման պրոցեսում» բրոշյուրում։

Լեզվաբաններն կողմից արված բնորոշումից բերենք յերկուսը։ Առաջինը Գաբելենցի, Կուռուերի, Ցոմսոնի և այլոց բնորոշումն է, որն ասում է. «լեզուն տարբորոշված (расчлененный) մաքի հաղորդման միջոցն է հնչյունների միջոցով։ Այստեղ խոսքի «հնչյունները» շեշտվում են այն տեսակետից, որ միտքը կարելի յե հաղորդել նաև այլ միջոցներով, որինակ, միմիկայով (յերեսի մկանունքների շարժումով), պանտոմիմայով (ձեռքի և մարմնի շարժումներով), արտաքին առարկաներով կամ նվագարաններով, ինչպես այդ անում են, իբրև խաղ, Հյուսիսային Ամերիկայի ընդհնները («հնդիկները») կամ Աֆրիկայի նեգրերը։ Բայց, իհարկե, նշանացի այդ խոսակցությունը «հնչյուն-լեզվին» և վերջինիս նրբություններին չի կարող փոխարինել, թեպետ այդ նշանացի «լեզվով» յերբեմն վերացական դաղափարներ էլ են արտահայտում։ Գծային մեսսիների այդ դերը առաջին անգամ ուժեղ կերպով շեշտել և վուննդտը։ Ի միջի այլոց, ըստ Մաուի այդ նշանացի կամ «ձեռք-լեզուն» (կամ գծային լեզուն) մի ժամանակ որպանական նախորդությունն և յեղել հնչական լեզվի և իրեն մնջ զարգացրել և այդ վերջինը։ Մեր ժողովրդի մնջ (հայերի մնջ) մի ժամանակ ունեցինք կանանց մի դաս—նորահարսներ, որոնք իրենց սկեսուրի, սկեսրայրի, հնգքահոր և այլ «մնծամնծներիս» հետ իրավունք ունեին խոսել միայն «հնշանացի լեզվով», թեպետ այս յերևույթը, ըստ իս, նոր սոցիալական հարաբերությունների հետևանք է, կապված սեփականության հետ և վոչ թե հնադույն ճնացորդ է, ինչպես կարծում է Ն. Մաուը։

Վերոհիշյալ բնութագրումը՝ «լեզուն տարբորոշված մաքի

---

* «Լեզուն նույնպես հին է, որքան և գիտակցությունը։ Լեզուն—այդ պրակտիկ, ուրիշների համար գոյություն ունեցող, հետևաբար և ինձ համար գոյություն ունեցող, անալ գիտակցությունն է։ Ճիշ լեզուն, գիտակցության նման, գոյանում է այլ մարդկանց հետ հաղորդակցվելու պահանջից» (Архив Маркса и Энгельса, книга I· стр. 220):

արտահայտությունն և հնչյուններով» պիտի ունենա, ըստ իս, վորոշ վերապահումներ։ Նախ, չի շեշտվում լեզվի հաղորդման ձևական կողմը, սորուկտուր մասը. յերկրորդ, լեզուն և խոսքն այստեղ նույնացվում են. յերրորդ, լեզվի դեֆինիցիան տրվում է ստատիկ ասպեկտով և վոչ նաև լեզվի զարգացման պատմահասարակական գենետիկայից յելած. չորրորդ, չի շեշտվում լեզվի հասարակական կողմը, հաղորդման պահանջը։ Տարրորոշված միտք (членораздельная мысль) մարդուս առաջին թոթովանքի ժամանակ կարող ևր և չլինել*։ Հավանորեն, նախաժարդը նախադասությունը («միտքը») մի միանգամյան բառով կամ բառակոճով և արտահայտել «գծայինի» լեզվի ոգնությամբ. որինակ, «ջուր» կամ «գցեյլ» բացականչելով, նա մի ամբողջական միտք և ցանկացել ասել («ջուր տուր», «ջուր խմիր»... Նույնն պարագային և կամ «գցյալը յեկավ», «գցյալը վախչում ե» և այլն), կոնկրետացման հավար դիմելով ժեստերի ոգնության, վոր սկզբում գերակշռե ևր։ Հետագայում այդ ամբողջությունը յերկփեղկվելով բաժանվում և ըստ առարկայի («գոյականներ») և հատկանշի կամ գործողության («ածականներ», «բայեր», վորպես դրա ստորոգություն)։ Այնպես վոր լեզվի վերոհիշյալ բնութագրումը դեռ տարակուսանքի կետեր ունի յուր ծագմաբանական տեսակետից, իսկ այժմյան կատարյալ լեզուների տեսակետից, ինչպես և յուրած պատմական ամենապրիմիտիվ լեզուների, այդ բնութագրումը մասամբ և ճիշտ և ընդունելի, յերեն խնդիրը վերաբերում և լեզվական սոսկ ակցիային։

Բերենք և մի յերկրորդ բնութագրում, այն և ֆրանսիացի լեզվագետ Ա. Մեյյեյինը (A. Meillet), վորը համարվում և

---

* Կենդանական «լեզվի» համար համեմատեք Վ. Պորժեզինսկու հետևյալ խոսքերը. „Не переоценивая наших средств в деле раскрытия внутреннего мира животных вообще, мы должны признать, что некоторые вопросы истории человеческого языка, касающиеся его происхождения, должны получить важные указания для их разрешения из изучения языка животных. Замечу здесь же, что существенное отличие этого последнего от языка людей заключается *в отсутствии раздельности* в выражении внутренних переживаний; звук или сочетание звуков выражает у животных их переживания *как нечто цельное, не разложенное на части*. Само собой разумеется, языком в тесном смысле этого термина, мы не назовем и здесь непроизвольных звуковых рефлексов, которые, так многочисленны у животных“ (В. Поржезинский, Введение в языковедение, Москва. 1913 г., стр.—4—5). Ընդգծումները մերն են։

յիվրոպական ամենամեծ լեզվագետներից մեկը։ Նա ասում է. «Անհատի տեսակետից լեզուն մի բարդ սիստեմ է, կազմված խոսքի գործարանների և դրանց զգայուններին անդիտակցելի դուզորդություններից, որը (սիստեմը) նրան հնարավորություն է տալիս խոսել և ուրիշի բառերը հասկանալ։ Այդ սիստեմը պատկանում է յուրաքանչյուր անհատին և նույնանման կատարյալ ձևով չի գտնվում ուրիշի մեջ։ Բայց նա (սիստեմը) նշանակություն ունի միայն այն չափով, որչափով նույն սոցիալական խմբի մյուս անդամներն ունեն նման սիստեմներ. հակառակ դեպքում այդ անհատը չեր հասկացվի ուրիշների կողմից և չեր հասկանա ուրիշին։ Ամեն մի անհատ խոսափոխում և նորմալ տեսից վորևե կերպ թեքվիլ և շատ զգայունությամբ է վերաբերվում ամենափոքր թեքվելուն անգամ, չերբ վերջինս նա դտնում է ուրիշների մոտ։ Լեզուն, լինելով մի կողմից անհատների սոփականություն, մյուս կողմից պարտադիր կերպով փոխաբերվում է (навязывается) ուրիշներին և դրա շնորհիվ նա (լեզուն) դառնում է վոչ միայն բնախոսական և հոգևկան չերևույթ, այլև սոցիալականը (տես նրա գլուխը ռուսերեն թարգմանած Введение в сравнительную грамматику индо-европейских языков, Юрьев, 1911, եջ 21)։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, շեշտվում են վոչ միայն լեզվի բնախոսական (ֆիզիոլոգիական) և հոգևկան այդ չերկու կողմերը, այլև չերրորդը՝ սոցիալականը։ Բայց Meillet-ն, չեթե «լեզուն» չի վերցնում իրրև սոսկ մի անհատական ակտիա, ըստ իս, մի սխալ և գործում, չերբ լեզվական այդ սիստեմն ուրույնացնում և յուրահատուկ է դարձնում միայն անհատին*։ Վերջինիս մեջ այդ սիստեմը միայն այն չափով գոյություն ունի և կենսունակ է, վորչափով դա կա և հասարակության մեջ. անհատական ուրույն ժառանգություններ և նախադասություններ կազմելու չեղանակներն անհատի հետ մեռնում են, իսկ ժառանգաբար փոխանցվում և մեզ ընդհանուրից (կոլլեկտիվից) վերցվածը՝ կոլլեկտիվ լեզվաստեղծման նորամուծություններով։ Անհատը ներգործող և լեզուն տարածող կամ փոփոխող միայն այդ ընդհանուր ու դինամիկ հասարակական լեզվի տեսակետից։ Ճիշտ է Meillet-ի այն սոցիա-

---

* Ֆերդ. դե-Սոսյուրն ևս «խոսային գործունեություններ» (речевая деятельност, ֆրանս. language) հասկացնում է գլխավորապես անհատին, լեզվին (langue) տակից տալով սոցիալական ընդհանուր բնույթ յուր բառապաշարներն և դրանց կապի ընդհանուր սիստեմով

լական պարտադրության շնորհիվ, իրը անհատը չի կարող ինքնին ընդունված սովյալ լեզվական սիստեմից, շրջապատը նրան հարկադրում է իրեն նման ժամանել և խոսել։ Հիշենք հենց այն տգեղ վարմունքը, որ ցույց են տալիս շատերը դեպի կակազները կամ թլվատները, իրրև «անպաղները» անելով կամ ծիծաղելով այդ թերալեզվանիկների վրա։ Բայց մինչդեռ դրանք դժվար թե ուղղվեն, մորմոքեն այդ դեֆեկտները օրգանական բնույթ են կրում, դրա դիմաց սովորական շեղումներն այդ հասարակական հարկադրումից և ճնշումից ուղղվում են, ակամայից յեն-թարկվում են ընդունված միջին հավասարեցուցիչ հասարակական լեզվին։ Այս հասարակականն անշուշտ վերացական և ունիվերսալ բնույթ չպիտի կրի, ինչպես կարծում է սոցիոլոգ Դյուրկհեյմին հետևող Ա. Մեյյեն։ Այն, լեզվի սոցիալական լինելը մեզ համար վերացական և միանգամայն իմաստ չպիտի ունենա, այլ ինքն՝ սովյալ հասարակությունն ու յուր մտածողությունը (և աշխարհայացքը) ինքնաբավ և միաձույլ չեն, այլ յերկուսն են կոնկրետ, մտաբերել բաղադրից, արտացոլում են սովյալ արտադրական հասարակական պրոցեսը, մակարդակը, թեպետ և վոչ անմիջապես։ Սրա հետ կա իհարկե և լեզվի ինքնաշարժացումը հասարակության այդ կացության մեջ, ինչպես և լեզվի հաջորդականության (преемственность) խնդիրը, նախորդ ձևի յուրացումը։

Հարկ ենք համարում ժամանակին և ռուս լեզվաբան վ. Ա. Բոգորոդիցկու տեսակետը լեզվի մասին, որ շատ ռեալիստական է. „Каждый язык в своей разговорной, письменный и в литературной форме, представляет продукт деятельности социальной среды, среды взаимодействующих индивидуумов не только данного времени, но и предшествующих эпох; усваиваемый с детства вместе с другими явлениями социального характера—нравами, обычаями и пр., он становится естественно-необходимой нормой общения членов коллектива данного времени и частных в нем об'единений по труду, классовости и др., и кажется существующим как бы особо от ума или представления отдельных индивидуумов этого коллектива; в своем развитии он отражает хозяйственно-экономические, социально-политические и умственные переживания общества". *Տես* проф. В. А. Богородицкий, Общий курс русской грамматики, 1935.

Լեզուն, այսպիսով, սկսած մարդու ամենապրիմիտիվ արտա-

դրական կողմնակիների կյանքից մինչև այժմյան հասարակական— անտնտական բարդ ձևավորումները ընկալել և (преломлять) և արտացոլել յուր մեջ այդ պատմական ժառանգել սուբստրատը, հասարակական հարաբերությունների այդ բարդ պատմական կոմպլեքսը։ Արտադրական պրոցեսի անմիջականությունը լեզվի հանդեպ դրսից չի մանամանդ պատմական զարգացման նախնական եւ տալներում, յերբ ինքն արտադրությունը պարզ բնույթ եր կրում։ Հետագայում այդ անմիջականությունը վոչ միայն դրսեն չի զգացվում, այլ լեզուն ինքն արդեն դառնում է ապրելության գիտակցո (գործոն) յուր բաղխի վրա, մարդկային հասարակական— անտնտական զարգացման բարդ սիստեմի վրա՝ յուր մտածողության և աշխարհայացքով։ Լեզվի այս անդրադարձ բնույթն այժմ, կարելի չի ասել, արդեն դիալեկտոն է։

Ի նկատի ունենալով լեզվի այս սոցիալական բնույթը, ինչպես և նրա պատմական հաջորդականությունը, մենք հետևյալս լեզվի մեջ պիտի տեսնենք ցեղի, դասակարգի resp. դասի, ինչպես և ազգության սոցիալ-կուլտուրական և քաղաքական անցյալը, այն է՝ նախնական արտադրության պրիմիտիվ վիճակը յուր աշխարհայացքով, հետագա աշխատանքի բաժանման պրոցեսը յուր այլևայլ ստադիաներով, դասակարգերի հանդես գալը և դրանց աշխարհայացքը, պայքարը և այլն։ Լեզուն այդպիսով դառնում է մի շատ մասամբ պահված և այդ անցյալը յուր բաղմազանությամբ, միայն հարկավոր է «պեղումներ» կատարել այդ բոլորը հայտնաբերելու*։

---

* Այսպես մասնաբանական վերլուծության լուսաբանումով, կոնկրետ պատմական պայմաններում, կարող են դրծադրվել մեզ բոլորիս հայտնի լեզուների պատմահամեմատական ուղղությունը (կոմպարատիվիզմը), որը այժմ լեզվ և ուսա ֆարմալ, կարված լեզուները կրտնների պատմահասարակական պայմաններից։ Դիցուք թե մենք անում ենք, որ «կոն»—Kon որոշ տեղ և ժամանակ նշանակել և «ձի», որոշ տեղ և ժամանակ՝ «շուն» և որոշ տեղ և ժամանակ՝ «լեզվ», ինչպես հյուսիսային մի շարք ցեղերի մեջ։ դրանից լեզվաբանությունը հասարակագիտորեն հատաստում ենք, որ այդ «kon» բառը նկատում դրսում (вьючное животное) ֆունկցիան արտահայտող բառ և լեզվ։ հետագայում, յերբ շունը փոխարինվում է լեզվ և ձիով, այդ նախնական բառն ևս յուր ֆունկցիոնալ առումը փոխադրում է նոր առարկաների վրա։ Մասն մոտ զնդրկում է և, կարելի չի ասել, միևնույն և նրա «հնհաբանական» մեկնողը, որը դառնում է մտահայեցողական և որով նա աշխարհիս բոլոր լեզուները համադրաբար ուսումնասիրելով, ուզում է դանել լեզվի և հասարակության բոլոր նախնական տարրերը, պահպանելությունները։ Ինչ խոսք, որ այդպես ծայրահեղություններն և յերևակայություններն անսահման դուռ է

Բայց լեզվի հասարակական բնույթը չերևան և գալիս միայն նրանով, որ այդ լեզուն մարդու հասարակական-տնտեսական աշխատանքի բարդ կոմպլեքսն և վերարտացոլում յուր մեջ, իբրև լեզվի ընդհանրական միացորդ և վկայություն։ Լեզուն այդ հասարակական անհրաժեշտ բնույթը պահում է անընդհատ և լեզվի, իբրև խոսքի, արտաբերման ժամանակ. այսինքն՝ լեզուն, իբրև տվյալ մոմենտում (ստատիկ վիճակում) մի բնախոսական և հոգևկան ակտ (գործունեություն) յուր այդ չերկու կողմերի վրա ևս կրում է հասարակության (կոլլեկտիվի) անմիջական ազդեցությունը։ Մենք յուր տեղում կտեսնենք, որ հնչյունն անգամ յուր ֆոնեմա-ժամանակներով անհատին չի պատկանում և դրանք չերկուստանք հասարակական կացության մեջ են փոխադարձաբար ազդում, ձևակերպվում և պայմանավորվում։

Բայց մենք վերցնենք քննության այդ լեզուն միայն պատմա-հասարակական զարգացման կամ ձևավորման տեսակետով, այլ յուր դրսևորված կողմով, իբրև տվյալ մոմենտի մի ֆիզիոլոգիական, ֆիզիկական, հոգևկան և սոցիալական մի ակտ, հասարակական թե անհատական, որտեղից էլ վերջնվերջո այդ հասարակական կոնկրետ խոսելու ակտն անցավ անհատների միջոցով և լինում։ Այստեղ, հետևապես, լեզուն վերցվում և իբրև խոսելու արտահայտություն, իբրև խոսվածք (речение), անկախ նրանից, որ այդ բոլորն անցնում և մեր կազմակերպված, ցեղային, դասակարգային կամ ազգային անդասակարգ հասարակության հոգևկանության միջոցով, դրա բովով։ Այս արվում և հարկավ մեթոդական տեսակետից և կրում և որոշ պայմանավորվածություն։ Լեզուն այստեղ վերցվելու չե յուր խոսողական ակցիայում։

ՀՈՍՔ—ՄԻՏՔ

Մենք գիտենք, որ ինակ, որ համր-խուլերը նույնպես «խոսում» են, մեզ նման մտածողություն և դատողություն ունեն.

բացվում։ «Հնչաբանական» այդ ընդհանուր (և մասամբ վերացական) մեթոդի հետ, անտղվելու և տեսաբանվելու լուրջ նյութ պիտի լինի լեզվի պատմականության (հիստորիզմը)։ Հենց յուր մեջ նրա պատմական մեզ հայտնի (գրավոր աղբյուրներից) հատվածների օրինաչափությունները, տենդենցները։ Վերջիններն իրենց հողը պիտի ունենային և նախորդ էնախատատմական շրջաններում. և ահա այստեղ միայն մատերիալիստական սոցիոլոգիան և, որ է վճռի չե յուր գիտական և վերջնական խոսքն ասելու այդ բոլոր փաղերի հետամտմամբ։ Լեզվի իմմանենտը և պատմականը պիտի հասկացվին հասարակական մարդու կեցությամբ, մարդկային մտածողության միջոցով։

սակայն այդ նրանք կատարում են յուրեսի միմիկայով կամ ձեռքերի այլևայլ շարժումներով միջոցով։ Այդտեղ, այդ շարժումները ծառայում են նրանց համար իբրև աղդանշիչներ (սիգնալներ) իրենց ներսում միտք արտաբերելու և ուրիշի մեջ նույնը զարթեցնելու համար։ Այստեղ, այդ շարժումային արտաքինը նրանց «խոսելու» հնչյունների տեղ է ծառայում։ Նույն դերը մեր հնչական լեզվի մեջ, այսինքն նորմալ ուիլի խոսողների մոտ (վոչ դիֆեկտավորների մոտ, ինչպես համր-խուլերը) խաղում են մեր սովորական հնչա-աղմկային արտադրության հնչյունները։ Հնչյուններն այդտեղ աղդանշանների դեր են խաղում, լեզվաբանների կողմից կոչվում են նաև «նշաններ», «ժեստեր», իսկ արտասանվածքը՝ դրանց հանրադումարը։ Ինչպես Բոդուեն-դե-Կուրտենեն էր ասում, հնչյունները „метка“ չեն, ինչպես տեսնում ենք, որինակ, թաշկինակի վրա։ Հնչյունները աղդանշանակիներ են, վորովհետև վոչ միայն իրենց կոմպլեքսով նրանք կապակցվում են վորոշ պատկերացումների կամ հասկացողություններին հետ, այսինքն՝ վոչ միայն նշանակություն են պատճառում, այլև ունեն իրենց ներքին պատկերացումն առանձին։ Կա այդ հնչյունների հոգեկան աղբյուրը՝ «ֆոնեմաները» և հետևապես հնչյունը սոսկ «նշանակիչ» (метка) չէ։* Գերմանական լեզվագետներն այդ աղդանշանները կոչում են նաև հնչաժեստեր (Lautgebärde):

---

* Մեր արտաբերվող խոսքը, իբրև տարբորոշված լեզվի (գերմ. gegliederte Sprache) կենդանու և հիմնական զանազանությունը, իր մեջ պարունակում է անասնական միմոլորներին (քիչ թե շատ անկախ) մի շղթա։ Այդ խմասալից միմոլորները հանդիսանում են հասկացողություններին, յուրեսյունների կամ ֆունկցիաների պայմանական աղդանշանները։ Եվ ես բնությունից մենք անմիջապես ենք առնում տարբեր բնություններ, տարբ լեզվական մտածողության ժամանակ հնչյունական այդ աղդանշանների (խորհրդանիշների) միջոցով մենք միշտ ավելի ճշտորեն ենք առնում մարդ տարբերների պատկերացումները։ Հայտնի ֆիզիոլոգ Ի. Պ. Պավլովը հուլիսի 30-ին (1935 թ.) Լենինգրադում կարդացած իր զեկուցման մեջ հետևյալն է ասում լեզվի մասին (տես „Известия“ կենտրոնական օրթերթի № 177, հուլիս 30, 1935 թ.).

Животное до появления семейства homo sapiens сносилось с окружающим миром только через непосредственные впечатления от разнообразных агентов его, действовавших на разные рецепторные приборы животных и проводимые в соответсвующие клетки центральной нервной системы. Эти впечатления были единственными сигналами внешних об'ектов. У будущего человека появились, развились и чрезвычайно усовершенствовались сигналы второй степени, сигналы этих первичных сигналов,—в виде слов произносимых, слышимых и видимых. Эти новые сиг-

Ցերեխան, յերբ սկսում է լեզու սովորել, արդեն անատոմիական և բնախոսական տեսակետից ավելի յն պատրաստուհնակ այդ նոր պրոցեսը (լեզուն) յուրացնելու, քան յերբ վայրենին եր այդ ուղղությամբ առաջին քայլերն անում։ Ցերեխան արդեն հանդիպում է քիչ թե շատ կայուն և կազմակերպված մի լեզվական սիստեմի և նրան միում է այդ յուրացնել, ոժտված լինելով անշուշտ ժառանգաբար ստացած բնախոսական զարդացման լեզվական ունակությունից։ Առաջին ապավորությունները (գրգիռները) նրա համար լեզվի արտաքին՝ հնչյունական կողմն են, բայց դրանց հետ հետզհետե նա յուրացնում է և լեզվի ներքին՝ իմաստական (բովանդակության) մասը։ Ինչ խոսք, վոր նրա մտապատկերները քանդրացած առարկաներին միայն պիտի վերաբերեն կամ դրանց հետ կապված տարբեական գործողություններին (ջուր խմել, ծիծի-ուտել, հաց-ուտել, հաց-տալ և այլն)։ Ցերբ յերեխան վերարտադրել և փորձում բառերի հնչական կողմը, վորի մտապատկերային ապավորությունը նա անընդհատ ստանում է ականջից, նա (յերեխան) կարողանում է այդ անել հարկավ միայն մասամբ, թոթովելով այդ հնչական մասը կամ յերբեմն առաջին վանկերը միայն վերարտադրելով։ Հնչյուններն անգամ, բնական և, վոր 100 տոկոսով չպիտի դուգադիպելին մեծերի արտաբերություններին։ Լեզվի ներքին (իմաստական) և արտաքին (հնչական) կողմերի յուրացումը կարող և լինել և վոչ միաժամանակ։ Ցերբեմն և, թերևս, հաճախ յերեխան սկսում է հասկանալ, այսինքն՝ ունենում է, ձեռք է բերած լինում ուրիշներից լեզվի այդ տարրերը, բայց վերարտադրել անժիշատև չի կարողանում. հետագայում միայն զանգադորեն նա սկսում է թոթովել լեզվի հնչական մասը։ Լեզվական բարդ սիստեմը յերեխան իհարկե միանգամից չի յու-

---

налы, в конце концов, стали обозначать все, что люди непосредственно воспринимали как из внешнего, так и из своего внутреннего мира, и употреблялись ими не только при взаимном общении, но и наедине с самим собой. Такое преобладание новых сигналов обусловила, конечно огромная важность слова, хотя слова были и остались только вторыми сигналами действительности...; благодаря двум сигнальным системам и в силу давних и хронически действовавших разнообразных условий жизни людская масса разделилась на художественный, мыслительный и средний типы. Последний соединяет работу обеих систем в должной мере. Это разделение дает себя знать как на отдельных людях, так и на целых нациях[a]: *Այդ վերջին մասը՝ ազգերի այսկերպ կամ այնկերպ մասնավորաբար բաժանվելը, հարկավ մատերիալիստական չի։*

բացնում, այլ այդ սխեմայի հիմնական, ցայտուն մասը: Նա այս դեպքում չորեքհատ վոչ միայն վերարտադրողի դերումն է լինում (այսինքն՝ նրբ յուրացրած և լինում լեզվի տարբերական սխեմը), այլև արտադրողի դերում: Որինակ, երբ Աշտարակի չորեքհատ յուր յուրացրած տարբերական դասարտաբերական սխեմին համընթաց լսում է կնարբ եմ—կնարնեցի, խմբ'մ եմ—խմբեցի, վծղղմ եմ—վծղղեցի..., նա «անալոգիայով» կազմում է ուղիղ ձևով (յուր տարբերական սխեմային համապատասխանելով) նաև՝ եբբմ եմ—եբբեցի ասում եմ—ասեցի և այլն*, այնինչ դյուղացիք, երբևց բարդ լեզվական սխեմի մեջ, նախորդ ձևերից պահած ունեն եբբմ եմ—դնեցի, ասում եմ—եբբա և այլն: Վերջիվերջո չորեքհատ կորցնում է յուր սեփական նման լեզուն, յուր ոգին ու տարբերանը. նա յունիֆորմվում է մեծերի հակասությունների բարդ լեզվին: Այդ ամբողջ յուրացման պրոցեսը մի չորեքունք է, մի ծանր աշխատանք, վոր կատարում է չորեքհատ: Հիշենք հենց այդ տեսակետից, թե վորքան դժվարությամբ ենք հաղթահարում, չորը լսելով անգլիական th հնչյունը, առանալով նրա վորոշ հնչական ապավորությունը, այնուամենայնիվ մենք անվիճելիս չենք կարողանում անգլիացիս պես արտասանել. մենք այլևայլ վորձեր ենք կատարում բերնի օրգանների մեջ, մեր լեզուն արտասանական, մայրենի լեզվի հնչական պաշարի ոգնությամբ մի կերպ աշխատում ենք th-ի մոտավոր անգլիական հնչումը տալ և չորեքհատ վարժվելուց հետո մենք ի վերվի այդ հնչումը հարատարուն կատանք, վորի հետևանքով դրա սիզմական «հնչական ապավորությունը», իբրև դրդիչ մեր մեջ արդեն առաջացնում է այդ հնչյունի քիչ թե շատ կայուն և ձևոք բերած մտապատկերը՝ ֆոնեման: Հնչյունի յուրացման այդ ներքին պրոցեսը՝ արտաքինից ստացված ապավորության հանդեպ՝ յուր հերթին դառնում է հակահանդրդռության մի ֆակտոր և այն էլ՝ ավելի կայուն և հարատև, կապվելով վոչհատարձաբար յուր արտաբերությունների հետ:

Հիմնական պահանջը և նախադրյալն է՝ յուրացրած ունենալ բառերի հնչական մտապատկերները (представления), իբրև բառխմատակ և մտքի առաջին պայման: Մենք ունենք, որինակ, «բայց», «սակայն», «յուվ», «իսկ», «վորովհետև», «յեղրակացու-

* Իմ ազգիկը հաղնակին միայն եր մանկիով եր կազմում, ինչպես բաժակը, հուշիկը և այլն. յերեխ նրա հայոց բառապաշարում հաղնակի-եր մանկին ավելի յի ազդել նրա վրա, քան հաղնակի-ներ մանկիը: Տղաս ևս այդ կերպ վարվելով, այնինքն հաղնակին միայն վերջ ով կազմելով (ջուղնակը, կուկուակը, աքռակը...), անցյալ կատարյալը սխեմատիկաբար «ցից» մանկիով եր կազմում—ասեցի, դնեցի, տարեցի, հաքեցի, մտեցի, վերցրեցի և այլն:

թյուն», «հույս» «սեր» (любовь) և նման հասկացողություններին բառանշական մտապատկերը մեր մեջ, որոնց շնորհիվ ենք կարողանում հաղորդել և դրանց բովանդակությունը՝ հասկացողությունները։ Ինչպես ունենք հնչյունի մտապատկեր՝ ֆոնեման, այնպես պիտի ունենանք և ամբողջ բառի հնչական մտապատկերը և ոչ միայն վերացական հասկացողությունների, ինչպես բերինք վերևում. այլև շատ կոնկրետ, ինչպես «ջուր», «քար», «սեղան» և այլն։ Ցավ մեր մտածողությունը մեր լեզվական սիստեմի ձևի միջոցով կատարվում և հենց այդ հնչական բառապատկերների կապակցությամբ (զուգորդությամբ) իրենց նշանակությունների հետ անմիջապես թե միջնորդապես, այսինքն՝ «սեղան» հնչապատկերը կարող է զուգակցվել թե ընդհանրապես «սեղան» գաղափարի հետ, առանալով «նշանակություն» կամ թե կոնկրետ մեզ վրա ավելի ազդած մի սեղանի հետ*։ Միայն «բնաձայնական» բառերն են, որոնք իրենց հնչական մտապատկերի արտաբերման ժամանակ (հնչելիս) անմիջապես կապվում են առարկայի հետ,— համմտ. «թշշալ», «բզզալ», «գլգլոց» և այլն։

Մեզ հետ հաճախ և պատահում, որ ունենք «բառի» հնչական մասի մտապատկերը, սակայն իմաստը՝ միտքը չդիտենք. այդ պատահում է մանավանդ տեխնիկական տերմինների կամ հին բառերի հետ։ Որինակ, չես ունենա «ադրիզատ» բառի հնչական պատկերացումը և դիտես, որ դա վերաբերում է հիդրոկայանի մի ինչ որ մասին, սակայն դրա ճիշտ բովանդակությունը (նշանակությունը) քեզ հայտնի չէ։ Կամ հին գրվածքներ կարդալիս կարող ենք պատահել, որինակ, ըմբռշխնել, առշնական, սինկլտոր և նման «բառերի», որոնց նշանակությունը յերկար ժամանակ չենք ճանաչում (յեթե բառարան չնայենք կամ մի ուրիշ մարդ չասի)։ Հաճախ պատահում է և ընդհակառակը, այն է՝ առարկայի պատկերացումը կամ մի հասկացողություն ունենք մեր մտքում, բայց դրա բառական, այսինքն՝ հնչական մասը չենք հիշում։ Այս իրարկե մանանկի և արտաքին դիպվածքներ են, որոնք բառի իսկական «բառացում» դեռ չկան։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, լեզվի մեջ բառերի հնչական պատկերացումներ ունենալը (հիշողության մեջ պահելը) անհրաժեշտ նախապայմանն և հանդիսանում մի առարկայի պատկերացում կամ հասկացողություն նշանակելու համար և հե-

* Այդ կոնկրետ կապակցությունը շատերի կողմից բացատրում է, այն ինչ, անշուշտ, այդ յերկուսն էլ կան, թե ընդհանուրը և թե կոնկրետը։

տևառնս մեր լեզվական մտածողության ունի իրեն անբաժան և բաղկացուցիչ մաս՝ բառերի հնչական պատկերացումները։ Լուռ կարդալու ժամանակ տառերի շարքն առաջ և ընթում մեր մեջ հնչական բառերի պատկերացումները, որոնք, կապվելով որոշ իմաստական պատկերացումների հետ, տալիս են մեզ նախադասության (խոսքի) բովանդակությունը, իբրև մի ամբողջական միասնական միտք։ Սակայն լեզվի հիմնական և կենդանի պրոցեսը մեզ չի լուռ կարդալն և կամ մեր մեջ մտածելը, այլ բարձր խոսելը, այսինքն՝ մեր մտքերը լսելի հնչյուններով ուրիշին հաղորդելը։ Այս դեպքում մեզ ողնության և գալիս մեր արտասանական ապարատը, որի գործունեության շնորհիվ արտասանական պրոցեսում մեր կամքի և լսողության, ինչպես և լսողի (շրջապատի) կոնտրոլի տակ է*։ Արտասանության ժամանակ մենք առանում ենք բառի հնչական, մեր մեջ յեղած հնչապատկերի իրացումը. այդ դեպքում մենք առանում ենք նաև արտաբերման՝ արտիկուլացիայի մոտորային զգացմունքները, կամ ավելի ճիշտ զգայությունները և դրանց բոլոր զուգորդությունները։


Հնչյուններից առաջացած ալիքները փղդում են լսողի ականջաթաղանթը և նյարդի միջոցով՝ առաջ բերելով բառերի հնչական պատկերացումներ նրա ուղեղում, զուգակցվում են նաև իմաստական կատեգորիաների հետ. այսինքն՝ այն պրոցեսը, որ խոսողի մեջ կատարվում է, նույնն արտացոլվում է և լսողի մեջ։ Ըստ Ա. Տոմսոնի** առանում ենք հետևյալ ողակաբոլումները այդ լեզվա-հաղորդության մեջ (տես աղյուսակ 1)։

Այդ նկարը մեզ ասում է, որ յերբ չհաշվենք արտաքին (ֆիզիկական) աշխարհի միջնորդությունը, ապա խոսողի և լսողի մեջ հիմնականում կատարվում են յերկու պրոցեսներ. առաջինի ժամ մտքի ժողովրդագիտ իրեն մասերի հնչական պատկերացումներով և դրանց ֆիզիոլոգիական արտաբերումը (артикуляция) արտասանական օրգանների միջոցով, իսկ լսողի մոտ լինում է ընդհակառակը — բառահնչյունների ակուստիկական—ֆիզիոլոգիա-

---

* Համմ. նաև Ֆ. Ենգելսի խոսքերը մեր այդ ապարատի պատմականության մասին. «Потребность [что-то сказать друг другу] создала себе орган: неразвитая глотка обезьяны преобразовывалась медленно, но неуклонно, путем постепенно усиливаемых модуляций, и органы рта постепенно научились произносить один членораздельный звук за другим». տես նրա Диалектика природы. 1929 г. էջ 65)։

**Տես А. Томсон. „Общее языковедение", Одесса, 1910 г. էջ 84։


ԽՈՍՈՂ.
ԼՍՈՂ.
A
Բարդ պատկերացում յեվ զգացումներ (ամենքս միասի)
1
Նախադասության ճանաչություններ (դասդրություն)
2
Լսողական պատկերացումներ բառերի նախադասության մեջ
3
Խոսքի օրգանների շարժումների պատկերացում
4
Խոսքի օրգանների շարժում
5
Ոգի ներշնչող ալիքներ
6
Լսողության վերոս օրգանների տատանումներ
7
Լսողական պատկերացումներ բառերի նախադասության մեջ
8
Նախադասության ճանաչություններ (դասդրություն)
B
Բարդ պատկերացում յեվ զգացումներ

Աղյուսակ 1

կան պրոցեսն ականջի շնորհիվ և հնչական բառապատկերացում-ների միջոցով՝ ներքին հոգեկան խոսացական պրոցես։ Առանց դրան, այն է՝ ֆիզիկական աշխարհի մեջ ունորդավորման այդ մարքի հաղորդումն ուրիշին չեր կարող լինել։ Ինքը խոսողն էլ իր ականջներով ընդունում է իր արտասանած բառերի պատկերա-ցումները, սակայն նրա համար դրանով նոր հոգեկան ներքին պրոցես չի դոյանում, քանի որ դրսևորման, արտաբերման պրո-ցեսը և նման ֆիզիոլոգիական ընդունման պրոցեսը, յերկուսն էլ միևնույն «ներքին» լեզվի միաժամանակ կատարվող պրոցեսի կողմերն են. այդ ներքին հոգեկանը մի յև յերկուսի համար էլ, իրրև ապրյուր։ Խոսողի համար իր լսողական պրոցեսը մարքի յուրացման տեսակետից կարևորություն չունի, այդ լսողական-ակուստիկը կարևոր է միայն ընդունողի (լսողի) համար։ Սա-կայն սրանով մենք չենք ժխտում խոսողի արտաբերման (արտի-կուլացիոն) պրոցեսի կարևորությունը «ներքին լեզուն» կազմա-կերպելու մեջ. այդ արտաբերական լեզուն է յեղել հասարակա-կան լեզվի կազմակերպիչը, ունենալով իր դրդման պատճառ-ները հասարակական աշխատանքի մեջ։ Միայն արտաբերական այդ հաղորդման լեզվով և կազմվել լեզվի «ներքին», այն է՝ հո-գեկան կողմի սիստեմը. այդ ներքին լեզվական սիստեմի կրումը մեր մեջ մենք կոչում ենք լեզվի իմացում (знание языка)։ Վերջինս մեր մեջ մնում է իրրև մի ընդունակություն, իմմանենտ միտակ, որը ցանկացած ժամին, հատկապես ուրիշի հետ խոսե-լու համար, առանում է իր դրսևորումը հնչյուններով։

Իսկ լսողի (ընդունողի) համար մեկ է, թե այդ հնչական դրսևորումը այդ ֆիզիկական հնչյուններով ով կկատարի,—մարդ, թե այլևայլ խոսող մեքենաներ՝ գրամոֆոն, ռադիո, հեռախոս...։ Ընդունող-լսողի համար կարևոր են այդ արտաքին հնչական դեր-դիմները, որոնք նրա ականջի միջոցով հնչական բառապատկե-րացումներ են ծնեցնում նրա ուղեղի մեջ և ասոցիացիաներ կազմում բառիմաստների հետ։ Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, որ այդ ընդունողի մոտ նախապես պիտի կազմված լինի նույն լեզվական նույն սիստեմի ունալ գիտակցումը, այն է՝ ովյալ այդ որոշ լեզվի գիտությունը, ապա թե ոչ՝ դրսից ստացվող այդ հնչական դրդիռները կմնային սոսկ այդպիսիներ, այսինքն՝ կըս-տացվելին միայն հնչական տպավորություններ և դրանով չեր իրագործվի լեզուն։

Մենք գիտենք նախնապես, որ գրագետ մարդս հնչական

գրգիռների փոխարեն կարող է ստանալ տեսանելի նշանների (տառերի) գրգիռը, որոնք նմանապես ընդունողի (կարդացողի) մեջ առաջ են բերում հնչական բառապատկերներ և դրանց հետևանքով՝ բառիմաստներ։ Այստեղ ականջի փոխարեն աչքն է ընդունող օրգանը հանդիսանում։ Ցերկուստանք [միևնույն նշանակելիությունները (назначаемость) տեղի ունեն՝ առաջ բերել հնչական մտապատկերներ, միայն մեկը՝ ոդի ալիքների միջոցով, իսկ յերկրորդը՝ տառերի միջոցով։ Ականջի ֆունկցիոնալ այդ դերը գենետոլոգիական տեսակետից հնագույնն ու հիմնականն է, իսկ յերկրորդը՝ աչքի ֆունկցիոնալ դերը, արդասիք է նոր դարաշրջանների, քաղաքակիրթ մարդու նվաճումն է։ Այդտեղ տառերին կարող են փոխարինել և այլ տեսակի սիմվոլներ՝ նկարներ, դաղափարագրեր, գծերի և կետերի սիստեմ (հեռագրական ապարատի համար) և այլն և այլն։

Ինչպես տեսնում ենք, մտածողությունը և այդ նույնը ուրիշի մոտ զարթեցնելը (մտքի հաղորդումը) միմիայն լինում է հնչական պատկերների միջոցով։ Սակայն այդ հնչական բառապատկերացումները, ինչպես և լեզվական ամբողջ սիստեմի կացությունը, ինքնաբավ չեն, այլ կապված են և փոխադարձաբար պայմանավորվում են հնչական լեզվի պրակտիկ գործադրումից, իբրև հասարակական ամենաուժեղ մի գործոնից։ Այդտեղ գոյություն ունի դրանց դիալեկտիկական միասնություն։

Ցեթե մեր գաղափարությունը (մտածողությունը) հասարակական պրակտիկայի հիման վրա պայմանավորված և հնչյունական պատկերներով, ապա վերջիններս, իբրև հոգեկան կատեգորիաներ, իրենց ձևավորման աղբյուրն ունեն ունալ հնչյունի ֆիզիոլոգիական և ֆիզիկական (ակուստիկական) գոյացումների մեջ։ Հատկապես արտասանական ապարատի և հատկապես նրա ակտիվ օրգանների (լեզվի, փափուկ քիմքի և շրթունքների) մոտորային զգացումների կոմպլեքսն առաջ է բերում և հնչյունի պատկերացման զուգորդություն։ Այն ասոցիանի յև սերտ հնչյունի այդ յերկու կողմերի (ֆիզիոլոգիական—մոտորային և հոգեկան) կապը, որ յերբ[ում մտածելիս՝ շատերի մոտ սկսում է գործել և այդ ֆիզիոլոգիական կողմը, այսինքն՝ քնած մարդը նաև արտասանում է բարձրաձայն (բայց ինքը չի զգում և չի լսում)։ Մինչև անգամ արթուն ժամանակ, յերբ մենք մեր մեջ մտածում ենք, այսինքն՝ գործ ենք ածում լեզվի ներքին՝ հոգեկան մասը, ակամայից մեր փակ բերնում սկսում են հնչյունական թույլ մոտո-

բայլին շարժումներ կամ ավելի ճիշտ՝ դրանց զգացողությունները։ Ցավ դա բնական է. չե՞ որ հնչապատկերի հիմնական կազմավորման աղբյուր է յուղել դրա գործադրականը, նրա մասնիկի մասը, իբրև պատմական առարկա փաստ։ Շատ մարդկանց մոտ, մանավանդ ծերերի և յերեխաների, այնքան թույլ է լինում նեղքին արգելակումը, որ մտածողությանն նրանց պրոցեսը դուրսակցվում է և արտասանականին, այսինքն՝ մեն մենակ խոսում են։ Կարելի յե ասել, դրանք ավելի ճիշտ են վերարտադրում նախնական մարդու պատմական լեզվական պրոցեսը, հարկ են տալիս «առաջխմբին»։

Պատմական անհրաժեշտություն չկա, որ այսինչ հնչակոմպլեքսի ժառանգները (պատկերացումը) հատկացվեր միայն այս առարկայի պատկերացմանը, այս իմաստին, այս հասկացողությանը. որինակ, ինչու՞ «հաց» հնչյուններով պիտի նշանակվեր մեր սովորական ուտելու առարկան, իսկ «քար»-ով՝ քար առարկան և վոչ թե այլ հակառակ կամ ընդհակառակը։ Այստեղ ամենակարևոր մոմենտը հնչյունական առաջին (սկզբնական) հատկացումն է առարկային կամ յերևույթին. այդ կապակցելիությունն (увязка) կոնկրետ պատմություն գիտնականները դեռ լավ պարզված չեն համարում*։

Բառի այդ անվանումն ու իմաստն իհարկե երկնց տվյալ դրությամբ չեն մնում, այլ փոփոխվում են։ Այստեղ հիմնական ազդեցության պատճառը հասարակական պատմական մտածողության (և աշխարհայացքի) հարափոփոխ ներգործությունն է, իսկ այդ իմաստի փոփոխությունը կատարվում է տարբեր յեղանակներով՝ բուն կցորդության, նմանության և հակադրության զուգորդությունների։ Բառի և նախադասության (resp. լեզվի), ձևի և բովանդակության փոխհարաբերության մասին երկնց պատմական զարգացման մեջ մենք կխոսենք առանձին («Ձևաբանություն»—«Բառագիտություն» հատվածներում)։

Լեզվագետներ կան, ինչպես, որինակ, Մառը, վորոնք կարծում են, թե սկզբնական բառանվանումն ընդգրկում էր առարկաներն կամ հասկացողություններն մի ամբողջ-շարք, ինչպես,

---

*Ըստ իս, աշխատանքի պրոցեսի հետ գոյացող պարտադիր հասարակական մտածողությունը, իբրև կազմակերպման և հաղորդակցման անհրաժեշտություն, սկզբում պատահականորեն միայն կարող էր առաջացնել այս կամ այն բառամեծությունները, վորոնք իբրև նվաճումներ արդեն զանազան են լեզվական կոքսուբայի անհրաժեշտ տարրերը (տե՛ս «Լեզվի ծագումը»)։

որինակ՝ մի «յերկինք» կարող եր նշանակել «յերկինք», «աստղ», «թռչուն», «բարձրություն», «ջրջան», «աշտարակ», «տաճար» և այլն և այլն։ Բայց այստեղ ևս գործում են մեր ժամանակած ասոցիացիաների օրենքները (կցորդության և նմանության) թեկուզ և «տոտեմական» կամ մոգական (նախատրամաբանական) մտայնության մեջ։ Իսկ Մառի պնդումը, որ սկզբում յեղել են միայն վորոշ հնչական միավորներ կամ ելեմենտներ (sal, ber, ros, yon), վորոնք աշխարհիս բոլոր սկզբնական լեզուներին պիտի պարտադիր լինելին, կաղմելով հնչական և բազմիմաստ բառի սաղմնային առաղձը, հարկավ սոսկ յենթադրություն է, կրում և վերացական բնույթ և քննադատության չի դիմանում, քանի վոր այդ ֆիքս ելեմենտների համատարած պարտադրությը չի կարելի հասարակայնորեն ապացուցել, այլ միայն բնագիտորեն։

ԱՐՏԱՍԱՆՎԱԾԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ

(Lèvfi smrrer)

Ցեթե վորևե մեկի արտասանածը մենք չենք հասկանում, բնական է, վոր այդ մեր վրա միայն հնչյունական մի ամբողջ շարքի տպավորություն կթողնի, վորը ժամանակի և տարածության տեսակետից մի կապակցված հոսուն շղթա յե կամ, ինչպես ֆրանսիացի լեզվագետ Մոսյուրն է ասում, մի հնչյունական շղթա յե,—la chaîne phonétique։ Ցեթե, որինակ, այդ արտասանածն իր մեջ վորոշ տեղերում շեշտեր ունի, ապա այդ արտասանածի վերլուծությունը կարելի յե կատարել նախ և առաջ ըստ այդ շեշտավոր կետերի, այսինքն՝ ամբողջ արտասանածը («շղթան») մենք կարող ենք բաժանել «շեշտավոր կետերի»։ Ամենապարզ նմուշը այդպիսի ամբողջության և ըստ շեշտի բաժանման՝ վոտանավորն է։ Համեմատեր, որինակ, Զենդավեստայի լեզվից այսպիսի մի կտոր—«Ա՛տ հե մրաոմ Զարթաուշտրայ, մաղրմ յո Ահուրամազդայ, վիսանհա մե յիմա սրիրա, մրաո բրաո-չա դենայայ (=Արդ, հետևյալն եմ ասում Զրադաշտին, յես, վոր Արամազդն եմ, ծառայեր ինձ «յիմա» գեղեցիկ՝ համբավող և կրող կրոնի)։ Բայց շեշտավոր կետերն ևս, ըստ արտաշնչման մասերի (ըստ ձայնավորների), մենք կարող ենք բաժանել «վանկերի», իսկ վերջիններս էլ իր բաղկացուցիչ մասերի՝ հնչյունների (= ձայնավոր և բաղաձայն)։ Մինչև իսկ մեր սեփական արտասանության միջոցով մենք հնչյունի մոտորային (արտիկուլյացիոն) ժամանակներն անդամ կարող ենք տարբերել և

զգալ. և հետևապես այդ հնչյուն ամբողջությունը, իբրև ակուստիկական հոգեկան և պատմահասարակական մի անբաժանելի ժխտոր, մենք ֆիլիպպիտա կարողանք տարբորոշել, այսինքն՝ բաժանել յուր արտիկուլացիոն մասնիկներին։

Սակայն արտասանածի վերլուծությունը սովորաբար դուրդաղիպում է դրա (արտասանածի) ըմբռնմանը*, այսինքն՝ մենք հասկանում ենք խոսողին։ Ապա այս դեպքում այդ արտասանածը մեզ ինչ «տպավորություններ» և պատճառում։ Նախ այն, որ մենք ստանում ենք մի ամբողջական միասնական միտք—նախադասություն։ կարող է լինել և դրանց կազակցված շարքը կամ շարքերը։ Բայց մենք վերցնենք միայն մի նախադասություն։ Ինչ ենք ստանում ամբողջական այդ միասնական նախադասության մեջ, զգում ենք, արդյոք, դրա իմաստական մասերի («բառերի») կամ մասնիկների ներկայությունը։ Անշուշտ, զգում ենք։ Ապա թե ոչ—միասնական ամբողջ «նախադասությունը» չէինք հասկանա։ Իսկ այդ հասկանալու համար պետք է մեր մեջ կրենք խոսողի լեզվական սիստեմը, լիներ մինչև իսկ նրա խավի, դասակարգի միջավորը, ունենանք նման ապրելակերպ (մենք ուզում ենք 100%-ով ըմբռնել խոսողի մտքը)։ Որինակ բերենք մի պարզ լեզվական ամբողջություն՝ «Paul aime Olga» (ֆրանսերեն) կամ հայկական բարբառով ասած՝ «Պողոս կսիրե Ոլգա»։ Այդ հասկանալի ամբողջությունը մեր ըմբռնման մեջ ունի իր իմաստական ողակները՝ մասերը (Պողոս=Paul, կսիրե=aime, Ոլգա=Olga)։ Բայց բացի այդ, կա այստեղ և արտահայտության ձևը՝ կերպը, այսինքն՝ այդ իմաստական կտորների դասավորության հաջորդականությունը, որի շնորհիվ և միայն ամբողջական ճշգրիտ միտք առացվում։ Այլ իմաստ կունենար, մենք դասավորված լիներ Olga aime Paul («Ոլգա կսիրե Պողոս»)։ Այդ դասավորությունը («շարահյուսությունը») այս տիպի լեզուներում կամ այդ տիպի լեզվական արտահայտություններին մեջ կրում է ձևաբանական նշանակություն. ուրիշ տիպի լեզուներում կարող է և դրան փոխարինել իրեն բուն ձևը և դրանց հարակցությունը, անկախ դասավորությունից։ Որինակ, ռուսաց «Павел любит Ольгу» կամ մեր՝ «Պողոսը սիրում է Ոլգային» հենց այդպիսի կազմություն ունի, թեկուզ բառերի տեղերը փոխենք («Ольгу любит Павел»,

* Մինչև իսկ անծանոթ լեզուն, սեփական լեզվի ներքինացվյալներով, ակում ենք իմաստավորել, «հասկանալ», բայց խարխլ այդ խոսուն և

«Ոլգային սիրում է Պողոսը» կամ «любит Ольгу Павел», «սիրում է Ոլգային Պողոսը» կամ «любит Павел Ольгу», «սիրում է Պողոսը Ոլգային»)։ Այստեղ մի փոքր նրբություն կարող է մտցնել միայն այսպես կոչված «հոգեբանական» (վերաբերմունքի) շեշտը (О'льгу любит Павел այլ է, քան Ольгу лю'бит Павел, քան Ольгу любит Па'вел)*։

Տեսական վերլուծման չենթարկենք հայերեն այսպիսի մի նախադասություն — «մտավորականության դիրքը ցայժմ չերեր-ուն է չեղել»։ Նախ այս ամբողջությունը մենք բաժանում ենք չերկու բաղկացուցիչ մասի—«մտավորականության դիրքը» և «չերերուն է չեղել». «ցայժմ» բառիմաստը սահմանագծում է (կոնկրետացնում է) ընդհանուր այդ մասիճը («ստորագրվածը») ըստ ժամանակի, այսինքն՝ վոր չերերուն է չեղել վոչ թե ընդհանրապես, այլ մինչև հիմա, մինչև վերջերս։ Ծավալ վերլուծության տեսակետից, մենք բաժանում ենք նաև «մտավորականության դիրքը», ինչպես և «չերերուն է չեղել», իրրև չենթամասբողջություններ նախադասական միասնության հանդեպ։ Որովհետև, առաջին ամբողջությունը—«մտավորականության դիրքը» (=չենթական) հայոց լեզվի մեջ կարող է հակադրվել նման այլ ասույթների, այսինքն՝ վոչ միայն ունենք «մտավորականության դիրքը», այլև «մտավորականության աշխարհայացքը», «մտավորականության վիճակը», «մտավորականության կազմությունը» և այլն, ինչպես նաև—«գինվորության դիրքը», «դյուդացիության դիրքը», «ուսանողության դիրքը» և այլն և այլն**։ Այդպիսով մենք զգում ենք, վոր միացյալ «մտավորականության դիրքը», իրրև ամբողջական չենթական խոսքի (դրա մասին և խոսվում) իր հերթին մեր գիտակցության մեջ բաժանվում է չերկու ստորամասերի՝ «մտավորականության» և «դիրքը»։ Սակայն, լեզվական նման վերլուծությամբ մենք այդ փոքրիկ ամբողջություններն ևս բաժանում ենք իրենց ավելի փոքր խաս-

*О'льгу любит Павел նշանակում է Ոլգային և սիրում վոչ թե ուրիշին, Ольгу лю'бит Павел նշանակում է Ոլգային սիրում է Պողոսը և վոչ թե ատում կամ անտարբեր է, իսկ չերբորդում՝ միայն Պողոսն է սիրում։

** Այս վերլուծման մեր մեթոդը կիր են անում բոլոր լեզվաբանները (Բոգուշևը, Սոսյուրը և այլն)։ Սոսյուրը այդ կոչում է սինտագմատիկ և ստոցիատիկ զուգորդություններին չեզրանակ։ Այս մեթոդը, ըստ իս, բաժանման և կոպիտ գիտելակիկական սկզբունքն է, իրրև հակադրամիասնության։

Այս մասին մանրամասնորեն տես «Զնաբանության» մեջ։

տական մասերի, որոնք թե ֆունկցիոնալ (ըստ պաշտոնի) նշանակություն ունեն և թե նշանակողական։ Այդպիսով, եթե վերցնենք «մտավորականության» ամբողջությունը՝ դրան կարող ենք հակադրել «մտավորականություն», «մտավորականությունից», «մտավորականությամբ» և այլն, ինչպես և «դիվնվորականություն», «հոգևորականություն» և այլն և այդպիսով մենք գտնում ենք «մտավորականություն» ամբողջության մասերը՝ մտ (=մըտ—մխտ) +ավորականություն։ Բայց քանի որ ունենք նաև «մտավորական—մտավոր— մխտ», ինչպես «հոգևորական — հոգևոր—հոգի», ինչպես «դիվնվորական—դիվնվոր—գնվ(ք)», ապա մտավորականության» ամբողջությունն ըստ պաշտոնի և նշանակության պետք բաժանել «մըտ—(< մխտ—) + ա+վոր + ական+ություն», թեպետ կարելի չի բաժանել նաև «ական» երկու մասի «ա—կան» (համմտ. դնաց—կան, լալ—կան...) և «ություն» մասնիկը նաև երկու առորամասնիկների (համմտ. բնություն—բնություն, դրություն—դրություն..) այն է «ութ (< ույթ)+յան», որը (—յան) արտահայտում և նշանակության հետ նաև կախվածության ֆունկցիա («սեռական» հոլով)։ Այդպես և «դիրքը» ամբողջությունը մենք բաժանում ենք «դի+ր+ք+ը»։ Նման վերլուծություն կարող ենք տալ «ցայժմ» (համմտ. «այժմ», «ցմահ», «ցտեսություն»...) ամբողջությունը, իբրև «ց+այժմ», իսկ պատմական վերլուծությամբ նաև «այ-(< ույս) +ժըմ (< ժամ)»։ Նմանապես «յերերուն և յեղել» բաժանվում և յերկու մասի «յերերուն»+«ն յեղել» (=յեղել ե), ինչպես և դրանցից ամեն մեկը՝ իրեն առորամասնիկներ։ Համեմատել «յերերուն» միտանության համար «շարժուն», «միայուն», «կայուն», «ցցուն», յուռանդուն»..., իսկ «յերեր»—(=հին, «երեր--er—er—) հիմնական մասը պատմական վերլուծությամբ մենք համարում ենք կրկնակի ձև, ինչպես «ողողող-ալ» (համմտ. «ողո-ղո-ջուն», ուր «ջ»-ն առացվել և «ղ» հնչյունից), «տատան-վել» կամ «ծածան-վել» (արմատներ են «տան-» և «ծան-»), դոզդոռալ, բարբառել և այլն։

Նմանապես «ն յեղել», որ հենց իրեն հակադրությամբ («յեղել ե») ղտացվում և յերկու մաս, ինչպես և «յեղել» միտանությունը=յեղ+ել (համմտ. յեղ-ա, յեղ-աբ...)։ Մի խոսքով այս մեր բերած ամբողջ նախադասությունը ներկայացնում և մի միտանության զանազան իմաստալից մասերի, որոնք նշանակողական կամ ֆունկցիոնալ (ձևական) դեր են խաղում միմյանց հանդեպ։ Այդ մասերի մեջ մենք անտնում ենք նաև տարբեր

տարրամասեր, որոնք ևս բաժանվում են յեննթամասերի և այլն։ Ամենավերջին բաժանելի միավորը մենք քերականորեն կոչում ենք մորֆեմա (морфема), որոնցից հիմնական միաք ցույց տվողը կոչվում է արմատ, այդ ընդհանուրը կոնկրետացնող կամ սահմանագծող ձևական մասերը՝ ածանցներ (=նախածանց, միջածանց, վերջածանց), իսկ կապակցող՝ ֆունկցիոնալ տարրը կոչում ենք «վերջավորություն» (флексия, окончание)։ Այդ կապակցության ֆունկցիան մեծ մասամբ «վերջավորություններին» միջոցով է ավելացած լինում, կարող է կատարվել մեր լեզվում և բառավերջի ածանցի մեջ կամ հենց իրեն բառի մեջ. հմմտ. «տատավորականություն—տատավորականության» կամ «տուն—տան», ուր վոչինչ չի ավելանում, բայց, որինակ, քաղաք—քաղաքի—քաղաքից—քաղաքով—քաղաքում այդ ֆունկցիոնալ հարաբերությունն արտահայտվում է նոր մասնիկների—(«վերջավորությունների») հավելմամբ*։ Այդ մասին մանրամասնորեն տես «Քերականության» մեջ։

Մեր այս «արտասանվածի վերլուծությունը» բերում է մեզ այն յեզրակացության, վոր խոսքի մեջ մենք գործ ունենք վորոշ անքակտելի տարրերի հետ։ Նախ՝ գործ ունենք հնչյունների հետ, հնչյունական կողմի հետ, հետո՝ կա այդ հնչյունական ձևով իմաստի կամ մտքի ամբողջության իր բաղկացուցիչ իմաստալից կտորներով (բառեր, մասնիկ—ածանցներ) և վերջը՝ նախադասության ձևական մասը, վորն արտահայտվում է թե բառերի ֆունկցիոնալ կապով (մասնիկ—ֆլեքսիայով), բառերի դասավորության միջոցով և այլն։ Այդ վերջին ձևական մասը քերականները բաժանում են յերկու մասի—«ձևաբանություն» նեղ իմաստով, վերցրած սոսկ յերկրորդական ձևը բառի մեջ, և «շարահյուսություն»՝ այդ ձևերի արտահայտչական կողմը բառերի դասավորման մեջ (ինչպես և բառերի և նախադասությունների դասավորումը և արտահայտչականը)։ Այդ յերկուսն էլ արտահայտում են խոսքի ձևական մասը՝ կազմելով «քերականություն»։ Մենք, յերբ մտածում ենք, անշուշտ այդ լեզվական մտածողություն կատարում ենք հնչյունատեսիլների resp. բառերի հնչյունատեսիլ-

* Մի ժամանակ մեր դպրոցներում սովորեցնում էին, հենվելով մեր մի հայտի հայտնի վրա, վոր այդ «բաղաք, քաղաքի, քաղաքից, քաղաքով քաղաքում»—առանձին բառեր են, առանձին բառիմաստներ են, այնինչ ամենուրեք դրանք «քաղաք»-ն նշանակում, իմաստն անփոփոխ է, միայն ֆունկցիաներն են տարբեր։

նների միջոցով։ Այդ հնչական մասը, կատարվի դա մեր մեջ՝ ներքուստ, թե դրսևորվի (այս խնդրում այդ մեկ է), մենք անհրաժեշտորեն գործ ունենք այս «հնչաբանական» կատեգորիայի հետ, և հետևապես՝ այս «Ընդհանուր լեզվաբանության» առարկայի մեջ հենց առաջին դիտելի մասը պիտի լինի այդ հընչյունաբանությունը։ Հետո, քննելու կինք լեզվի (խոսքի) ձևաբանական կամ ստրուկտուր կողմը, նախադասել և շարահյուսությունը, և ի վերջո՝ նաև բառագիտությունը և իմաստաբանությունը, այսինքն բառերն ու նրանց նշանակոդական—իմաստական մասը (սեմանտիկա)։ Այդ բոլոր մասերն անշուշտ պիտի վերցվեն թե ստատիկ և թե դինամիկ՝ պատմական տեսակետներով։ Բացի այս և մի շարք այլ գլոտտոլոգիական խնդիրներից (լեզվի ծագումը, ընթացքը և այլն), մեզ նամանավանդ մոտ պիտի լինի և լեզվի «դրային» ձևը, թեպետև հետագայում և դա առանձ դալիս և հնչական լեզվի դիմաց կրում և «արտալեզվային» բնույթ։ Բայց քանի մոր «դրային» լեզուն քաղաքակրթական հսկայական նշանակություն ունի, ազդում և նաև ազդային գրական լեզու ստեղծելու վրա, ինչպես նաև հնչական լեզվի արտահայտության ընդհանրացման և դրա պահպանման վրա,—ուստի այդ «դրային» լեզուն ևս պիտի մտնի «Ընդհանուր լեզվաբանության» առարկայի մեջ, թող թե դրի նշանակությունը մեր ապագա միջազգային լեզվի կոնսոլիդացիայի խնդրում։

III

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

(ФОНЕТИКА)

ՄԱՍ I

(ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՖԻԶԻԼՈԳԻԱ)

Խոսքի վերլուծման ժամանակ մենք տեսանք, որ նախադասության հիմնական տարրերը կամ մասերիալը հնչյուններն են (ֆոնեմաները), որ մինչև անգամ լուռ մտածելիս կամ լուռ կարդալիս մենք այդ լեզվական մտածողության պրոցեսը հնչյունական մտապատկերներով ենք կատարում, resp. բառերի հնչական մտապատկերներով։ Քողնելով նախադասության մյուս հիմնական տարրերը (ձևաբանության և իմաստաբանության), մենք այստեղ ձեռնամուխ լինենք լեզվի հնչյունական տարրերի ուսումնասիրության։

Հնչյունն առանձին վերցնելով, թեպետ մենք դրանով արտադրակցիա չենք կատարում, այսինքն՝ կենդանի հնչյունը հանում ենք կենդանի խոսքի կամ բառի միջից, բայց ուսումնասիրության այլ յեղանակ մենք չունենք։ Պետք է ընդգծել սակայն, որ կան և առանձին հնչյուններ, իբրև բառեր կամ բառի դեր կատարողներ, հմմտ. յես ու դու, ռուսաց о нем; я и ты; я говорю, а он не слушает..., *բայց թե դրանք ել վերջ ի վերջո իրենց դիրքով հնչյունների շարքի մեջ են և մասամբ դրանց ազդեցության են կրում. այդ «միասյնակ» հնչյուններն անգամ անանջատ չեն և պայմանավորվում են (աջից և ձախից) հարևան հնչյունների դիրքով և վորակով։*

Մենք արդեն ժամանակնել էինք (առաջին մասում), որ հնչյուններն ընդհանրապես կարող ենք յերկու մոտեցումով ուսումնասիրել—ստատիկ վիճակում, այն է՝ մի տվյալ ժամանակաշրջանում և դինամիկ վիճակում, այսինքն՝ հնչյունական պատմական զարգացումը։ Ցուր տեղում մենք ցույց կտանք, որ հնչյունների ստատիկան («կացությունը») անգամ իր մեջ պարու-

նակում է շարժունակային վիճակ և մոմենտներ և հետևապես այն բաժանումը, որ տալիս են լեզվագետ Բոդուեն դը Կուրտենեն և ուրիշները, մենք պետք է ընդունենք պայմանական ձևով։ Այդ բաժանմամբ ընդհանուր «Հնչյունաբանություն» հատվածը պետք բաղկանա յերկու հիմնական մասերից—հնչյունների այժմյան աստաթերությունն իր բոլոր կողմերով („статика звуков") և հընչյունների պատմական փոփոխությունները („динамика звуков")։

«Հնչյունաբանություն» ասելով մենք հասկանում ենք այն, ինչ լեզվաբանները հասկանում են «Ֆոնետիկա» անվան տակ (հունարեն բառ է)։ Սկսել է հայերեն թարգմանել և գործ ածել «հնչյաբանություն», որովհետև մենք հնչելու ուսմունքը չենք տալիս, որն է միջի այլոց կոչվում է «Ֆոնոլոգիա», «Ֆոնացիա», այլ տալիս ենք կոնկրետ հնչյունի ուսումնասիրությունը, այդ հնչյունի ուսմունքը (=հնչյունաբանություն)։ Ել չենք խոսում այն մասին, թե այդ «հնչյունաբանություն» անվան տակ մտնում է նաև հնչյունի պատմական կյանքը, նրա պատմական փոփոխությունները. հետևապես այստեղ չկա «հնչյաբանություն»*։

Իսկ հնչյունն առանձին վերցրած այնչափ մեզ համար նշանակություն ունի, իբրև վերլուծելի առարկա («օբյեկտ»), որչափով նա կազմում է լեզվի հասարակական գիտակցման մեջ անհրաժեշտ և նշանակելի տարր և մեր հոգեկանության մեջ մի ամբողջություն, այսինքն՝ որչափով մենք ունենք նրա ամբողջական պարտադիր պատկերացումը—հիշողություն։ Հետևապես այդ հնչյունն իբրև «Ֆոնեմա» յե ի հայտ գալիս մեր մեջ և իբրև այդպիսին կազմում լեզվի հիմնական առարկը, շինանյութը։ Ակուստիկական, հոգեկան և պատմահասարակական յուրացման մեջ Ֆոնեման անքակտելի վորակ է։

Այդ հնչյուն-Ֆոնեման կարող է լինել շատ պարզ a, e, o,... s, l, m...) բայց կարող և լինել և բարդ (dž=ջ, dz=ձ, ts=ծ...) կազմված լինելով յերբեմն յերկը հնչական ժխտվորներից, ինչպես ունենք, որինակ, աբխազները (թ+փ+ս, իբրև մի հնչյուն)։ Սկզբնական այդ բարդ, անանջատ հնչյունները կոչվում են յերբ «դիֆֆուզիդ» հնչյուններ։ Սակայն չի կարելի ասել, որ միշտ բար-

* Ավելի սխալ կլիներ գործածել «ձայնախոսություն» տերմինը, որ գոթ է ածվում վոմանց կողմից, քանի որ «ձայն» (голос) կոչվածը մտնում է մեկին սոնոմանտական հնչյուններին մեջ (ձայնավոր, սոնանտ), որոնց հակադրվում են «աղմկավորները»։

դերը վեր են ածվում պարզերի, կա և հակառակ պատմական յեր-
եւույթը—պարզի վերածվելը բարդի։

Բայց, ընդհանրապես, իրրև փաստ պետք է ընդունել, որ
սկզբնական շրջանում յեղել են ավելի դժվար հնչյուն-ազմուկ-
ներ և այն էլ արտասանվելիս են յեղել գլխավորապես կոկորդում.
հետագայում արտասանության բույրը դառնում է բերանի խոռոչը,
իսկ կոկորդային դժվարարտասանելի շատ հնչյուններ անհետա-
նում են, ինչպես, օրինակ, վրաց ყ (ķ) հնչյունն այժմ անհետա-
նում է և մինգրելերենում (արդեն չկա լազերենում) կամ հին վրաց
ქ բարդը վեր է ածվել այժմ միայն «խ» պարզի։ Նույնը
նկատում ենք և արաբերենում, ուր հին «'այն» (ع) բաղաձայնն
այժմ վեր է ածվել կոկորդի սոսկ կծկման («ընդհատման»)։

Արտասանության համար պետք է նկատի առնել նաև այն
հանգամանքը, որ սկզբնական շրջանում, յերբ մարդս նոր էր
դուրս գալիս կապկային վիճակից, հավանորեն շատ են յեղել
«ներշնչական» հնչյուններ, ինչպես այդ մասամբ մնացել է այժմ
վայրենիների մեջ—Աֆրիկայի բուշմեններն (6 «հնչյուն») և հո-
ւոնտոտների մեջ (4 «հնչյուն»)։ Այդ «ներսասանելի» հնչյունները
նման են արու հնդկահավի գլգլոցին, այսինքն՝ դրանց արտաբե-
րումը (артикуляция) կատարվում է ոդի ներշնչման ժամանակ և
ոչ թե արտաշնչման, ինչպես լինում է այժմ մեր այժմյան ար-
տասանության ժամանակ։

Կենդանիներից այժմ միայն թռչուններն են, որ կարող
են մեր մարդկային հնչյուններն արտաբերել, ունենալով յերևի
ավելի դյուրին արտասանական ապարատ, քան այլ կենդանի-
ները։

Լեզվի հնչյունն ունի յերեք կողմ—բնագիտական, հոգեկան
և սոցիալ-պատմական։ Առաջինի մեջ մտնում են հնչյունի ֆիզիո-
լոգիական-անատոմիական, ֆիզիկական (ոդի ալիքները) և ակուս-
տիկական-ֆիզիոլոգիական («լսողության») մոմենտները։ Ներկ-
բորդի (հոգեկանի) մեջ մտնում է և հնչյունի ընդհանուր մաս-
պատկերը կամ պատկերացումը (հիշողությունը), առանց որի
մենք չենք կարող կոնկրետ հնչյունն արտաբերել։ Ցավ վերջա-
պես, հնչյունի յերրորդ կողմը՝ նրա սոցիալ-պատմական պատ-
վանդանն է, որովհետև այդ հնչյունները գոյացել են մեր մեջ
կոլեկտիվի հարկադիր կազմավորմամբ և այնպես արժեք ունեն
անհատի մեջ, որքան այդ հնչյունը գրեթե նույն աթե-

կուլտիսայով դոյութիյուն ունի մյուս անհատների մեջ, ապա թե ոչ հասարակական լեզու չեր առաջվի։

Մեր քննելի նյութին և լինելու հնչյունի բնագիտական կողմը և այն էլ՝ բնախոսական («Ֆիզիոլոգիականը») մասը, այսինքն՝ թե ինչպես և արտաբերվում հնչյունը մեր արտասանական ապարատի միջոցով և ինչ խմբերի չեն այդ հնչյունները բաժանվում («Հնչյունների ֆիզիոլոգիան և կլասիֆիկացիան»)։ Այս մասի բովանդակալից իմացումը մեծ գործնական նշանակություն ունի լեզվաբանության մեջ, քանզեռ իմարկի հնչյունի այդ ֆիզիկո-ֆիզիոլոգիական կողմը արդասավորվում և կապակցվում նրա մյուս կողմերով։

ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԸ

Մեր լեզվի գործարանները ըստ իրենց դերախաղացության բաժանվում են յերկու տեսակի—դնկավարող (վարիչ) գործարան, կատարողական գործարան և ընդունող գործարան։ Ղեկավարող գործարանի դերը խաղում է, ինչպես հայտնի չե, ուղեղը, որի հանդեպ հոգեկան-լեզվային գործունեությունը դեռ մնում է մթին և մեծ մասամբ անմատչելի գիտական հետազոտության։ Մենք գիտենք միայն որոշ կետեր այդ ուղեղում, որոնք կենտրոնն են կազմում խոսելու, գրելու և այլն*։ Կատարողական գործարանը արտասանելին (վոկալան) ապարատն և, իսկ լեզվի դրայվեր («անալիզատոր») ձևի նկատմամբ՝ նախ ձևաքը և այլևայլ գրող մեքենաներ—գրամեքենաներ։ Վերջապես ընդունող գործարանն և ականջը, իսկ «դրայվեր լեզվի» նկատմամբ՝ նաև աչքը։

Կատարողական և ընդունող գործարանները կապված են մեր ուղեղի հետ յերկու տեսակ նյարդային հաղորդիչներով՝ կենտրոնախույս ու կենտրոնաձիգ։ Կենտրոնախույս արտասանական պրոցեսը կոչվում է «Ֆոնացիա», իսկ ընդունող կենտրոնաձիգ պրոցեսը կոչվում է «աուդիցիա»։ Իսկ այն պրոցեսները, որոնք կատարվում են անհատական ուղեղում, իբրև հոգե-քիմիական հականերգործություններ ամբողջությունների, կոչվում են «ցե-

* Ասենք (արտաբերելու) կենտրոնը գտնվում է մեր ուղեղի ձախ կիսագնդի յերրորդ խորշում՝ դալարում (извилина), որ կոչվում է Բրոկայի կենտրոն. խոսելու խանդարումը կոչվում է աֆազիա։ Հիշողության կենտրոնը դրա (Բրոկայի կենտրոնի) մոտ և (Վերնիկեյի կենտրոն), որի խանդարումը կոչվում է ամնեզիա։ Գրելու խանդարումը կոչվում է ագրաֆիա։

բերբրացիա» (լատիներեն cerebrum = ուղեղ), — ենթվի վերաբերմամբ՝ ենթվային ցերեբրացիա (ըստ Բոդուենի դը Կուրտենեյի)*։

Դալով բուն արտասանական ապարատի նկարագրության, մենք այդտեղ պիտի ընդգծենք մի քանի մասեր։ Նախ՝ սկզբնական մասը — դա կրծքի խոռոչն է, որը արտասանության համար նյութ (= ոդ) է մատակարարում և որը միակ կարգավորիչն է վանկավոր («սիլլաբիկ») արտասանության. ինչքան առանձին արտաշնչումներ կան — այնքան էլ վանկեր կան։ Բացի դրանից, կրծքային խոռոչը հարմարվում է արտասանական (կատարողական) գործարանի մյուս մասերին, ավելացնելով կամ նվազեցնելով արտաշնչման ոդի քանակը։

Կրծքային խոռոչի մասերն են — ստոծանին (диафрагма) և թոքերը, որոնք շնչափողի հետ մեր արտաշնչման գործարաններն են հանդիսանում։ Միջանկյալ պիտի ասվի, որ ստոծանու ընդհատ կծկվելու ժամանակ առաջանում են տարբեր և արտասովոր հնչյուններ։ Որինակ, յերբ այդ ստոծանու ընդհատ կրճկրվելուն միանում է ոդի ներշնչումը, այն ժամանակ առացվում է այն, ինչ որ կոչում ենք «հեծկլտանք», «հեկեկանք» (рыдание)։ Իսկ այն ժամանակ, յերբ այդպիսի ընդհատ կծկվելուն միանում է ոդի արտաշնչումը, առաջանում է փռնջոցը (чихание)։ Հազը գոյանում է, յերբ այդպիսի արտաշնչումը բաժանվում է մի շարք հրնդումների, զարկերի (толчок)։

Հետևյալ մասը — կոկորդն է (larynx), որով վերջավորվում է մեր շնչափողը (trachea)։ Կոկորդը սահմանափակվում է առջևից վահանաձև կրճիկով (cartilago thyreoidea), որը դուրս է պրծած և պարունակում է իր մեջ «հադիկ» կամ «Ադամյան խնձոր» կոչվածը։ Այդ վերջինը աղամարդկանց մոտ ավելի յե առաջ յեկած, քան թե կանանց, իսկ այդ հանգամանքը կապակցություն ունի ձայնալարերի յերկարության հետ և հետևապես ձայնի կամ «տոնի» բարձրության հետ։

Ձայնալարերը (chordae vocales) միացած և ամրացված են վահանաձև կրճիկի վրա, թևքված են մի յեղյանց վրա և հետևապես կազմում են անկյուն. դրա կատարն և միևնույն հանդչում վա-

* Դա մի բարդ կոորդինացիա և ազեցակցություն և կատարողական (բրսկայի) կենտրոնի արտասանական ապարատի և հիշողության (Վերնիկեի) կենտրոնների միջև։ Այդ համագործակցության խախտումն առաջ և բերում յենթվական դեֆեկտներ (աֆազիա, ամնեզիա, ագրաֆիա, ալեքսիա, կալկուլիա...)

հանաձև կրճիկի վրա, իսկ ետացած մասերը հանդչում են այսպես կոչված «դրգռաձև» կամ «բրգաձև» փոքրիկ կրճիկների վրա (черпаловидные или пирамидальные хрящи)—ալ մասը՝ ալ կրճիկի վրա, ձախ մասը՝ ձախ կրճիկի վրա։ Ձայնալարերի միջին անկյունը (ծերպը), որը կոչվում է rima glotidis («ձայնածերպ») և շատ նման և բերնի շրթունքներին, կարող և ընդունել այլևայլ դրություններ։ Մինչև իսկ դրանք կարող են սերտ միանալ և ծերպ չկազմել։ Ձայնալարերը հանդիսանում են մեր կազմվածքի գլխավոր յերաժշտական գործիքը. դրանք են միակ աղբյուրը յերգեցողության, բայց վոչ սակավ դեր են խաղում և հնչյունների արտասանության ժամանակ, մանավանդ «ձայնավորների» և «սոնանտների»։ «Խուլ» հնչյունների ժամանակ ձայնալարերն այնքան են արձակ, վոր թոքերից հոսող ոդը չի կարողանում յերաժշտորեն շարժել նրանց։ Ձայնի «ինտոնացիաները» նմանապես ձայնալարերի արդասիք են։ Շշնջելիս (шопот) ձայնավորները չեն սոսնում ձայնալարերի աշխատանքը։

Ի միջի այլոց, կոկորդի գործունեության ժամանակ և պայմանավորված և h հնչյունը (придыхание, spiritus), որը ճիշտ կլիներ կոչել «շնչյուն», թեպետ դա ֆոնեմա չե և ամեն լեզվում չի գտնվում*։

Կոկորդի վերևից գտնվում է մի «մակալեզու» (epiglottis, надгортанник), որը կարող է կոկորդը բացել կամ ծածկել. նա բարձրացած և վերև՝ շնչելու և արտասանության ժամանակ, իսկ ուտելու ժամանակ փակ է, վորպեսզի կերակուրը չանցնի շնչափողն ու թոքերը, իսկ այս վտանգավոր է կյանքի համար։ Իջած մակալեզվի վրայով ամեն մի թանձր կամ հեղուկ նյութ գնում է վորկորը։

Կոկորդից հետո գալիս է բերանի խոռոչը (cavum oris), վորի հետին մասն է «յերախը» (pharynx, зев)։

Բերնի խոռոչը մեր արտասանության ամենագլխավոր բոլն է։ Նրա հետևի և վերևի մասում գտնվում է շարժվող քիմքային ծածկոցը — վարագույրը (velum palati, небная занавеска) և փափուկ քիմքը (palatum molle, мягкое нёбо), վորը կոշտ և անշարժ քիմքի (palatum durum) շարունակությունն է և հնարավորություն է տալիս բացել կամ գոցել քթի («ռնդային»)

---

* Սովորական շնչառության ժամանակ ձայնալարերի ծերպը ավելի բաց է բացված լինում, քան h հնչյունի ժամանակ։

խոռոչը կամ «քոանները» (choanae): Այնպես վոր փափուկ քիմքը մի դռնակի դեր է խաղում մի կողմից յերախի և բերնի խոռոչների միջև, իսկ մյուս կողմից՝ յերախի և քթի խոռոչների միջև: Սովորական շնչառության ժամանակ, յերբ մարդ չի խոսում, մեր փափուկ քիմքը իջած է և ողն անցնելով քթի խոռոչի միջով կամ դուրս է գալիս, յերբ արտաշնչում ենք, կամ ներս է գնում մեր թոքերը, յերբ մենք ներշնչում ենք: Արտասանության ժամանակ ավելի քիչ է պատահում, վոր փափուկ քիմքը իջած լինի և քթի խոռոչը («քոաննները») բաց լինի. մեծ մասամբ այդ փափուկ քիմքը բարձրացած է և քթի խոռոչը փակ է: Վերջինիս բաց լինելը տեղի ունի այսպես կոչված «ռնգայինների» (носовые) հնչյունների ժամանակ, ինչպես m, n, ą, ǫ, և այլն (համեմատիր ֆրանս. temps, mon և այլն, ուր այդպիսի ռնգային ձայնավորներ կան): Այդ փափուկ քիմքը ցածից վերջանում է մի «լեզվակով» (uvula, язычек), վորը հատուկ դեր է խաղում վորոշ ցեղերի և անհատների արտասանության մեջ (որինակ ֆրանսերենում, գերմաներենում):

Ինչպես մեր բերանային խոռոչը, նույնպես և քթինը, ամբողջ արտասանական—կատարողական գործարանի հանգնել հանդիսանում է իբրև մի «վերամբարձ փող» (գերմաներեն՝ Ansatzrohr, ռուս. надставная труба) և ծառայում է, իբրև արձագանգարան (резонатор) այն ձայնեղ ոդի համար, վորը ձայնալարերի շարժումով և պայմանավորված: Քթի («ռնգային») խոռոչի ռեզոնանսը (արձագանգը), հատուկ է այսպես կոչված ռնգային հնչյուններին. իսկ բերնի խոռոչի ռեզոնանսը միանում է մյուս հնչյունների ձևաժամանության, ինչպիսիք են ձայնավորները, սոնանտները և ձայնեղ բաղաձայնները, կազմում և դրանց կամ գլխավոր հյությունը (ձայնավոր, սոնանտ) կամ յերկրորդական (ձայնեղ բաղաձայն): Բերնի խոռոչի դիրքը փոփոխելու հետևանքով, փոփոխվում է դրա ռեզոնանսը. մասնավորապես ձայնավորների տարբերությունը կամ դիֆֆերենցիացիան առաջացել և հենց այդպիսի փոփոխելի ռեզոնանսից, կախված բերնի այլ և այլ դրությունից: Բերնի խոռոչը կարող է նեղանալ և սեղմվել այս ու այն շարժվող գործարանների միջոցով, ինչպիսիք են՝ շրթունքները, լեզուն յուր մասերով, փափուկ քիմքը և սաղրին ծնոտը: Սրա հակառակն է ոչնգային (քթի) խոռոչը, վորը կրավոր և միատեսակ դեր խաղալով՝ տալիս է չփոփոխվող ռեզոնանս. դա հարկավ հետևանք

և այն բանի, որ բերի խոսողը, իբրև ուղղնատար, չունի յուր մեջ շարժվելու դործարաններ, որոնք կարողանային փոփոխել այդ ուղղնատարի ձևը, նվազեցնելով կամ ավելացնելով ծավալը և հետևապես ինքնուրույն հնչյուններ ու արտասանություններ առաջացնելով։

Այդ կողմից բերանի խոսողը անհամեմատ տարբերություններ և տալիս։ Դրա շարժվող գործարանները փոխակերպում են ամբողջ բերանային խոսողի ձևը (համեմատիր այս ձևը u, i, o, a, ü, ö... և այլն ձայնավորների արտասանության ժամանակ)։ Եվ այդպիսով, կարելի չի ասել, որ բերանային խոսողը հանդիսանում է ամենագլխավոր բոլը («ոջախը») մեր արտասանական գործակատարումների («արտիկուլյացիաների») համար, հարկավ լեզվային արտահայտությունների նկատմամբ։ Իսկ կոկորդի խոսողը հանդիսանում է իբրև յերաժշտական գործարան, յերգեցողության գլխավոր բոլը։

Ամենաշարժուն որգանը լեզուն է, որի պատճառով և շատ լեզուներում «լեզու-խոսքը» նույն որգանի անունն է կրում (համեմատիր մեր «լեզուն, ռուսաց язык, լատին. lingua և այլն. բայց դիմ. Zunge = լեզու — որգան, Sprache = լեզու — խոսք)։ Լեզվի մեջ կարևոր է ընդունել՝ a) լեզվի յետին կամ վերջին մասը յետնալեզվային գործունեության համար և դադարության համար, b) լեզվի միջին մասը յուր գործունեության համար և դադարության համար, c) լեզվի առաջին կամ սկզբնային մասը յուր գործունեության համար և դադարության համար։ Բայի դրանից, հարկավոր է տարբերել լեզվի պատնեշների և լեզվի միջին յերեսի գործունեությունը և նշանակությունը. նմանապես պետք է տարբերել լեզվի ծայրը և այլն։ Զգեստ է ժողովել սակայն, որ արտասանության մեջ ժամանակցություն է ցույց տալիս միայն լեզվի վերին յերես մասը, այնինչ լեզվի տակը, նրա ստորին մասը կամ որմտատ, ճնշում է արտասանական շրջապատից դուրս, թեպետ առանց այդ ստորին մասի անհնարին է լեզվի վորևե շարժում։

Ինչպես մեր բերանային խոսողի բոլոր շարժուն գործարանները, նույնպես և այդ խոսողի բոլոր անշարժ տեղերը բացահայտ նկատելի չեն սովորական աչքով. սակայն մեր մեջ կարող ենք նկատել այդ, նայելով հայելու միջոցով կամ թե մի ուրիշի բերանը։ Ավելի լավ են դիտվում մեր այդ գործարանները շոշափմամբ, մինչև անգամ դրանց մկանային զգացությունները կարելի չի դիտավորյալ կերպով ուժեղացնել, վորպեսզի այդ գործարանները ավելի դյուրագնելի դառնան։

ՅԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՑԵՎ ԱՂՄԿԱՑԻՆ ՀՆՉՅՈՒՆՆԵՐ

Հնչյունի առաջանալու ամենատարբերական պրոցեսն այն է, որ ոդն անցնելով շնչափողի միջոցով դեպի կոկորդը, յերախը բերանը, քիթը, հանդիպում է այդ արտահոսման ժամանակ գտնվող խոչընդոտների, որոնց շնորհիվ և գոյանում են հնչյունները։ Մենք վորոշակի պիտի տարբերենք հնչյունների յերկու տեսակներ — յերաժշտական և աղմկային հնչյուններ։ Աղմուկն այն հնչյունն է, վորն առաջ է գալիս մեր վորևե գործարանի վոչ պարբերական ճոճումներից կամ յերերումներից, իսկ յերաժշտական հնչյունը, «տոնը», կազմվում է գործարանի պարբերական շարժումներից։ Աղմուկներ են ստացվում և այն ժամանակ, յերբ միանում և գումարվում են այնպիսի զատ զատ ալիքներ, կամ ալիքների հոսանքներ, վորոնց միմյանց հարաբերումը, «տեմբրը», ներդաշնակ չեն։ Այդ հնչյունատար ալիքներն ունեն յերկու տեսակ կիրակնանը (ֆոկուսներ)—գլխավոր և յերկրորդական, ուր այդ յերկրորդականը գոյանում և կամ յերկրորդական լսելի ալիքներից կամ գլխավոր ալիքների կիրպարանափոխումներից՝ շնորհիվ ոդահունով հոսող ոդաձևի։

ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Հնչյունների հիմնական խմբերն են — ձայնավորներ և բաղաձայններ (гласный—vocalis, согласный—consonans), սակայն այժմյան լեզվաբանությունը դրանցից հանում է և յերրորդ խումբակը — սոնանտ հնչյուններ («ձայնորդներ»), վորոնք կարող են լինել թե բաղաձայն, թե ձայնավոր և թե դիֆտոնգի տարր։

Ձայնավորների և սոնանտների արտասանության ժամանակ մեր ձայնալարերն ամբողջապես դրժում են. «ձայնի» գերը գերիշխողն է և այդ տեսակետից և, վոր այդ յերկու խումբ հնչյունները միացվում են իրրև սոնոր հնչյուններ։ Ճիշտ է, դրանք կարելի է արտասանել և առանց ձայնալարերի ոդնության բայց դա կլինի արտասանություն շշնջումով (шепот), յերբ փոփսալով ենք խոսում։

Ձայնավորների արտասանության յերկրորդ հիմնական պայմանն ու հատկությունն այն է, վոր բերնի խոռոչն իրրև արձադանգարան (резонатор) է ծառայում, և այդ խոռոչում ոդը ազատ խաղում և ուժեղանում է և արդելող պատնեշի չի հանդիպում։ Ճիշտ է, բերնի խոռոչը դրանց ժամանակ կիրպարանա-

փոխվում և, վորով առաջ են գալիս և ձայնավորների տեսակները (շնորհիվ լեզվի դիրքի, շրթունքների կլորացման և այլն),—սակայն դրանց արտաբերության հիմնական ֆոկուսը կոկորդումն է, իսկ բերնի մեջ լեզվի այլևայլ աստիճանի բարձրացումը խոչընդոտ չի կազմում ոդի ազատ հոսելուն և արձագանգվելուն։ Բերանի խոռոչը սխնուսմինաչիվ ձուլում է փուչ, դատարկ, այսինքն՝ առանց միջնորմների։

Հնչյունների անվանակոչությունը մենք պիտի տանք ըստ շարժվող գործարանների կամ, ինչպես Բոդուեն դը-Կուրտենեն եր ասում, ըստ մուրճերի (молот) և վոչ թե ըստ դնդանների (наковальня)։

Եթե հետևենք պատմականության, հնչյունների բոլոր դասակարգումները պիտի տանինք յնտեից (կոկորդից) դեպի առաջ, լինեն դրանք ձայնավոր, թե բաղաձայն, թե սոնանտ։ Ի միջի այլոց հենց այդպես են վարվել հնդիկ քերականները, վորոնք իրենց այբուբենը (dēvanāgarī) նույնպես այդ ձևով են կազմել։ Ազատա դիտական այբուբենը թերևս ընդդրկի այդ սկզբունքը, ինչպես մասամբ արվում է և այժմ լեզվագետների կողմից։

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐ*

Ինչպես արդեն ասվել է, ձայնավորների արտասանության ժամանակ այն ոդը, վոր արտահոսում է թոքերից, կոկորդում ձայնեղ բնույթ և ստանում շնորհիվ մեր ձայնալարերի և հետո, իր արտահոսման շարունակության ընթացքում, վոչ մի տեղ չի հանդիպում ընդհանուր կամ մասնավոր խոչընդոտի։ Իսկ բերանային խոռոչը դրա համար ռեզոնատորի դեր է խաղում,—մի բան, վոր կարող է կատարել և քթի խոռոչը, «ռնդայնության» պատճառելով այդ ձայնավորներին։

Բերանային ռեզոնատորի ձևը կնրպարանափոխվում է շնորհիվ լեզվի, փափուկ քիմքի և մասամբ շրթունքների փոխադարձ հարաբերության։ Եթե լեզուն վերև և բարձրանում իր յուրյին մասով, մոտենալով փափուկ քիմքին, բայց ի հարկե չկպչելով նրան, այն ժամանակ ստացվում է ձայնավորներից այն շար-

---

* Ձայնավորների այսպես բերվող կլասիֆիկացիան վերջնականապես ձևակերպել անգլիական լեզվաբան Henry Sweet-ը (Հենրի Սյուիթ), վոր և ընդունված է այժմ բոլորի կողմից։

քը, որ անվանում են «յետնալեզվային» (այլ անվանակոչությամբ՝ «յետնաքիմքային»)։ Հետո, յերբ այդ լեզուն իր միջին մասումն է բարձրանում, որը յետին մասից քիչ առաջ է, և մոտենում է փափուկ ու կոշտ քիմքերի բաժանման կետին, այն ժամանակ առացվում են «միջնալեզվային» ձայնավորներ («միջնաքիմքային ձայնավորներ»)։ Վերջապես, յերբ լեզուն իր ավելի առջևի, բայց վոչ սկզբնական, մասով է բարձրանում, չկպչելով սակայն կոշտ քիմքին, այն ժամանակ առաջանում են «առաջնալեզվային» («առաջնաքիմքային») շարքի ձայնավորներ։ Նման դեր է խաղում լեզուն իր յերեք մասերով նաև բաղաձայնների նկատմամբ, բայց այդ յերեք մասերը չեն զուգադիպում իրար, վորովհետև, ինչպես կտեսնենք, բաղաձայնների նկատմամբ լեզվի յերեք մասերն ավելի առաջ են, քան ձայնավորների արտաբերման ժամանակ։

Ուրեմն, ձայնավոր հնչյունների ժամանակ լեզուն կարող է մեր բերնի խոռոչին, իբրև ռեզոնատորի, յերեք ձևափոխություններ (դրությունները) պատճառել, բարձրանալով իր յետին, քիչ առջևի և ավելի առջևի մասերով։ Բայց լեզուն այդ յերեք կետերում կարող է և տարբեր աստիճանների բարձրացում ունենալ, սկսած ամենաբարձր աստիճանից, յերբ լեզուն քիչ է հեռու վոր ժոռենա քիմքին, և վերջացնելով ամենանվազ աստիճանի բարձրացումով։ Այնպես վոր լեզվի ամեն մի մասի պնդաես դրությունները ևս պատճառ կարող են դառնալ ձայնավորների ավելի նոր տարբերացման՝ դիֆֆերենցիացիայի։ Այդ տեսակետից մենք պիտի ընդունենք հիմնականորեն լեզվի յերեք բարձրացումներ իր յերեք մասերում—ստորին բարձրացում, միջին բարձրացում և վերին բարձրացում։ Հետևապես, մենք կարող ենք տարբերել ինն տեսակ ձայնավորներ, աչքաթող անելով լեզվի յերեք մասերի (դրությունների) անցողական միջին մակերևույթները։ Բայց այս վերոհիշյալ բաժանման սկզբունքից (principium divisionis), վոր կատարում ենք ձայնավորների նկատմամբ, սրան ավելացվում է և լեզվի կծկված կամ «փռված» (հանդիստ) բարձրացման յերանգները,—այնպես վոր ինն տեսակ հիմնական ձայնավորները տեղ-տեղ կարող են դառնալ 18, այսինքն՝ կրկնապատկվել։ Լեզվի այդ կծկված բարձրանալու ժամանակ բերնի խոռոչն ավելի յև նեղանում. այդ պատճառով էլ այդ տեսակի ձայնավորները կոչվում են «նեղ» կամ «դոց» («փակ»), վորի հակառակն են «լայն» կամ «բաց» ձայնավորները։ «Նեղ» և «լայն» տերմինները պատկանում են անգլիացի հնչյունաբաններին, իսկ «դոց» («փակ»)

և «բաց» տերմիններով՝ ուս հնչյունաբաններին։ Այնպես վոր, նայած լեզվի կծկվածորեն թե արձակ բարձրանալուն, այդ լեզվի յերկը կնեղուում, և այն էլ յերկը աստիճանով, ստացվում են ինն «նեղ» ձայնավոր և ինն «լայն» ձայնավոր, ուր յուրաքանչյուր նեղ թե լայն տեսակը լոկ ներքոթյուն և կազմում և մեր յողոքյամբ հաղիվ է նշմարվում։

Այդ բոլոր (18) ձայնավորները կարելի յե արտասանել նաև մեր շրթունքների կլորացումով կամ առաջ յերկարացնելով, վորով առաջ կգան նուինչափ (18) «շրթնային» (губные) ձայնավորներ։

Իսկ այդ բոլոր ձայնավորները, լինեն դրանք սովորական թե շրթնային, կարող են ստանալ և ռնգային ներքաղաքություն, յերբ բերանի խոռոչից ողն անցնում է քթի խոռոչը։

Ցետին վոչ շրթնայնացած շարքի ձայնավորները «a» ձայնավորի այլևայլ տեսակներն են, վորոնք կարող են լինել մի կողմից նեղ և լայն և մյուս կողմից՝ վերին, միջին և ստորին։ Այդ «a»-ի տեսակներն ակուստիկորեն շատ մոտ են իրար։ Որինակ, ուսերեն раб բառի մեջ գոյություն ունի յետին վոչ շրթնայնացած ստորին ձայնավորը, իսկ նույն շարքի միջին «նեղ»-ը տալիս և անգլերեն but բառի միջում հնչվող ձայնավորը. անգլերեն father բառի մեջ «a»-ն ունի միջին և «լայն» բարձրացում. գերմաներեն Vater բառը հյուսիսային գերմանացիների մոտ ունի միջին և լայն դիրք, իսկ հարավային Գերմանիայում հաճախ և ուսաց «a» ձայնավորին раб բառի մեջ, այսինքն՝ ստորին և լայն և։ Հայոց «ա»-ն յետնալեզվային միջին բարձրությամբ է։

Ցետին շրթնայնացած շարքի ձայնավորներն են՝ 1) վերին ձայնավոր u (հայոց ու), նեղ և լայն, 2) միջինը՝ o նեղ և լայն, 3) ստորինը՝ å։ Որինակ, յետին շրթնայնացած ստորին նեղ ձայնավորն է անգլ. all բառի a ձայնավորը, իսկ լայնը՝ անգլ. not o գրության հնչյունը։ Միջին նեղ ձայնավորն է գերմ. so, ֆրանս. seau բառերի մեջ, իսկ միջին լայնը՝ ուսաց воз, անգլ. no, գերմ. voll բառերի մեջ։ Վերին նեղ ձայնավորն է գերմ. du, ֆրանս. sou, անգլ ooze բառերի մեջ, իսկ վերին լայնը՝ ուսաց дух, անգլ. full, գերմ. Mutter բառերի մեջ։

Միջին լեզվային վոչ շրթնայնացած շարքում՝ 1) a^{a} կամ $ɔ^{a}$ —ստորին նեղ ձայնավորը անգլ. bird բառի մեջ և լայնը՝ անգլ. how բառի մեջ. 2) ə—միջին նեղը՝ գերման. Gabe բառի

վերջին հնչյունը (մոտ մեր «ը» հնչյունին). 3) ы («ъ»)—վերին նեղը՝ ռուսաց сын բառի մեջ։

Միջնալեզվային շրթնաչյացած շարքում հայտնի չեն՝ 1) վերին ʮ, 2) միջին ʭ, 3) ստորին ä° կամ ʭə։ Ֆրանսերեն homme (=մարդ) բառի առաջին վանկում ունենք միջին բարձրացման լայն շրթնաչյացած ձայնավորը։

Առաջնալեզվային վոչ շրթնաչյացած շարքում՝ 1) a° կամ e°—ստորին բարձրացման նեղ ձայնավոր ունենք, որինակ, անգլ. let, ֆրանս. bête բառերի մեջ, իսկ ստորին լայնը՝ անգլ. man, ֆրանս. vin բառերի մեջ. 2) e—միջին բարձրացման նեղը՝ ռուսաց селп, գերմ. see, ֆրանս. été, անգլերեն day բառերի մեջ. այդպես և և մեր հին է ձայնավորը. իսկ միջին բարձրացման լայնը՝ ռուսաց села, անգլ. men, գերմ. Männer կամ Aehre բառերի մեջ. այդպես և և հայոց «է» հնչյունը. 3) i—վերին բարձրացման նեղը՝ ռուսաց миля, мил, անգլ. feel, ֆրանս. fini, գերմ. sie բառերի մեջ, իսկ վերին լայնը՝ ռուսաց мила, անգլերեն bit, գերմ. Tisch բառերի մեջ։

Առաջնալեզվային շրթնաչյացած շարքում՝ 1) ö—միջին բարձրացման նեղը՝ գերմաև. schön, Töne, ֆրանս. peu բառերի մեջ, իսկ միջին լայնը՝ ֆրանսերեն peuple, գերմաներեն Völker բառերի մեջ. 2) ü—վերին բարձրացման նեղը՝ գերմ. über, Glück, ֆրանս. lune, une բառերի մեջ, իսկ վերին լայնը՝ գերմաներեն schützen բառի մեջ. 3) ստորին բարձրացման ձայնավորներն են ä° , ö° ։

Ահավասիկ սխեմատիկ աղյուսակը

I

ՎՈՉ ՇՐԹՆԱՉՅԱՑԱԾ ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐ

	Ցեմին շարքը	Միջին շարք	Առաջին շարքը
Ստորին բարձրացում	a^1	a^2 , $ə^a$	a^e , e^a
Միջին —»—	a^2	ə	e
Վերին —»—	a^3	ы	i

II

ՇՐԹՆԱՑՆԱՑԱՅ ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐ

	Ճակատնեղվային	Միջնալեղվային	Առջևալեղվային
Սաոբին բարձրացում	$\overset{\circ}{a}$ [a°, o^{a}]	$\overset{\circ}{a}_{ə}$, $\overset{\circ}{e}^{a}$	$\bar{a}^{\circ}$, $\breve{o}^{a}$
Միջին ——»——	o	ə°	ŏ
Վերին ——»——	u	ы°	ŭ

Այս բոլոր տեսակի ձայնավորները կարող են հնչվել և քթե ռեզոնանսով և առաջվել նույն քանակի «ռնդային ձայնավորներ», որոնք լեզվագիտության մեջ նշանակվում են ձայնավոր տառին կցված մի անկյունավոր գծով (ų), ինչպես, օրինակ, o, a, e և այլն։ Այդպիսի հնչյուններ կան, օրինակ, ֆրանսերենում, հին սլավոներենում և այլն։ Սլավոներենում կային «յուս»-եր (юс большой և юс маленький), որոնք հնչվում էին o և e, նման ֆրանս. front (ճակատ) և vin (գինի) բառերի ռնդային ձայնավորներին (irǫ, vę)։ Այժմ այդ «յուս»-երի տեղ ռուսերենում առաջացել են y (մեծ յուսի տեղ, օրինակ зуб, հին zǫb-ից) և я (փոքր յուսի տեղ)։ Հայերենում ըստ բացականչության ունի այդպիսի ռնդային յերկու «ը» ձայնավորներ (=əhə)։

Հարկավոր է տարբերել այդ ռնդային ձայնավորները այն հնչյունական դեմարթից, որը կարող է առաջանալ ձայնավորից և ռնդային բաղաձայնից (a + n, e +n...) կամ քթե ռնդային ձայնավորից և ռնդային բաղաձայնից (ą+ n. ę + n...)։

Մենք արդեն մատնանշել ենք, որ ձայնավորները շղնջյունի («փսփսոցի») ժամանակ կարող են արտասանվել առանց ձայնալարերի դործակցության կամ նրանց կիսաա (թերի) մասնակցությամբ, ինչպես, օրինակ, գերմ. hatte բառի վերջին ձայնավորն և սովորաբար հնչվում։ Այդ ժամանակ մեր արտասանական դործաբաններն ունեն միևնույն դրությունները, ինչպես ձայնավորների բովանդակ արտահայտություններն ժամանակ շշնջյունի ժամանակ ձայնավորները ճեում են անշարժ և ողն անցնում է

իր նախկին հունով, քավելով ձայնավորների միջին ներպի պատերին։

Բացի ձայնավորների այս վորակից, կամ ձայնավորների այս արտաբերական ֆիզիոլոգիայից, կա նաև ձայնավորների քանակ։

Այդպես են, այսպես կոչված, շեշտավորված կամ անշեշտ ձայնավորները։ Ցավ ավելին. լեզուներ կան, ուր այդ ձայնավորը կարող է լինել թե կարճ, թե յերկար, ինչպես մի շարք «հնդեվրոպական» լեզուներում։ Լեզվաբաններն այդ ձայնավորները գրում են այսպես ā, ō, ē, և այլն, այսինքն ունենք ā — յերկար, ō — յերկար, ē — յերկար և այլն։ Ցեթե մի լեզվում լինելին քանակի յերեք ժամանակներ՝ յերկար, միջին և կարճ ձայնավոր, այն ժամանակ պիտի նշանակվելին (դիցուք a հնչյունի վերաբերյալ) այսպես՝ ā (= ա յերկար), a (=a — ա միջին տևողության), ă (= ա կարճ տևողության)։ Սովորաբար յերկար բաղաձայնից (ֆրանս. consonne géminée) առաջ ընկնում է կարճ ձայնավոր. որինակ, ռուսաց сума (=պարկ) բառի մեջ «у»-ն յերկար է, բայց сумма (=գումար) բառի մեջ՝ «у»-ն կարճ է։ Այդպես է հայոց «շեպսել», «վազգել» և այլն գավառաբառերի մեջ, ուժեղացած «պպ», «զզ» և այլ բաղաձայններից առաջ ընկնում է կարճ ձայնավոր (ե, ա)։ Այնպես վոր տարբեր «о»-եր են КОМУНИСТ և КОММУНИСТ (կամ հայոց կոմունիստ և «կոմմունիստ») արտասանության մեջ։

Ձայնավորների այս քանակը (= տևողությունը) մեծ նշանակություն ունի լեզուներում և հատկապես վոտանավորների չափի մեջ, վորտեղ այդ ձայնավորների քանակը բնորոշվում է կամ իր այդպես լինելով (natura — «բնություն») կամ իր դիրքով («դրություն» — positione)՝ նայած հետևյալ բաղաձայնների քանակին։ Հայոց լեզվի այժմյան զարգացման մեջ ձայնավորների այս քանակի հարաբերությունը կարող է վճռական նշանակություն ունենալ ուղղագրության համար (որինակ՝ գրել «կոմունիստ», թե «կոմմունիստ» և այլն)։

ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ

Բաղաձայն հնչյունները գոյանում են շնորհիվ այլևայլ խոչընդոտների, վորոնց հանդիպում է թոքերից հոսող ողը մեր կոկորդում և բերանում, և հետևապես առաջանում են այսպես կոչված «ազմուկներ» (шумы)։ Սակայն այդ աղմկային

տպավորությունները կարող են բարդվել և ձայնալարերի շարժողությունների և հետևապես տպմկային բաղաձայնները ստանում են նաև «ձայնային» բնույթ։ Այս տպմկային բաղաձայններից բացի, մենք ունենք և «սոնանտ» բաղաձայններ, որոնք քննվելու են առանձին։

Բաղաձայնների դասակարգումը կազմվում է նույն ուղղությամբ, ինչ որ և ձայնավորներինն էր։ Այստեղ ևս դասավորման սկզբունքն առնվում է լեզվի մասերի պես-պես դործողություններից։ Եվ՝ ձայնավորի դոյանալու ժամանակ լեզուն բարձրանում է իր տարբեր մասերով, բայց չի կպչում քիմքին, բաղաձայնների ժամանակ տեղի չի ունենում հակառակ տարեւույթը— բերանի տեղ լեզվի մասերը կպչում կամ քսվում են քիմքին և պատնեշներ կանգնեցնում թոքերից հոսող ոդի հանդեպ։

Այդ խոչընդոտների տեղի տեսակետից մենք ունենում ենք յնանալեզվային, միջնալեզվային, առաջնալեզվային և շրթնային բաղաձայններ։ Սակայն, ինչպես արդեն նկատվել է, չկա՛ տեղ լեզվի այդ տարբեր մասերի արտիկուլացիան ձայնավորների դոյացման նման տարբեր մասերի հետ, որոնք ավելի մոտ են, քան բաղաձայնների արտաբերության ժամանակն է։ Շրթունքների մասնակցությունը կարող է լինել կամ տարբեր շրթունքների ոդնությամբ (билабиальные согласные) կամ ստորին շրթունքի և վերին շարքի ատամների ոդնությամբ, որով ստացվում են «շրթնա-ատամնային» բաղաձայններ (համեմատեք ձեր «վ», «ֆ» հնչյունները)։

Բաղաձայնի արտաբերումն այս չորս գլխավոր կետերում (յնանալեզվային, միջնալեզվային, առաջնալեզվային և շրթնային կամ շրթնա-ատամնային) կարող է լինել տարբեր կերպ կամ տարբեր տեղանակով. կամ որպաններն ուժեղ կերպով հպվում են և պայթում (այդ հպումը կոչվում է implosio, իսկ պայթումը՝ explosio), կամ այդ որպաններն ունենում են փոքրիկ ծերպ—անցք (щель), և ոդը հոսում է այդ միջանցքով դուրս, որով ստացվում են տեսակներ բաղաձայններ։ Այդպիսի տարբեր արտաբերության հետևանքով ստանում ենք պայթուցիկ կամ պայթական բաղաձայններ (взрывные согласные) և շփական կամ «սպիրանտ» կամ «ֆրիկատիվ» բաղաձայններ (щелинные, придувные согласные)։ Ակուստիկական տեսակետից պայթականները կարելի է անվանել վայրկենական, իսկ շփականները՝ տևական։

Իսկ տեղ այս տարբեր տեսակ բաղաձայնների արտաբերու-

բյանը միացնենք նաև ձայնալարերի աշխատանքը՝ գործունեությունը, այն ժամանակ կստացվեն և «ձայնեզ» պայթականներ և «ձայնեզ» սպիրանտներ (շփականներ)։

Պետք է նկատել, որ այդ ձայնեզությունը թուլացնում է բաղաձայնի հիմնական արտիկուլացիան (=հղումը). օրինակ, b (=մեր բ) թույլ է քան p (=մեր պ), v (վ) թույլ է քան f (ֆ) և այլն։

Պայթական բաղաձայնները կարող են «շնչայնության» (аспирация) ենթարկվել, օրինակ p (=հայոց պ) բաղաձայնը դառնում է ph կամ ինչպես վոժանք գրում են p՛(=հայոց փ), կամ b բաղաձայնը դառնում է bh (b՛) և այլն։ Այս դեպքում ասպիրացիան թուլացնում է պարզ պայթականին. օրինակ «b»-ն թույլ է քան «p»-ն (տես վերը), բայց »bh»-ն թույլ է քան «b»-ն։ Գրադացիան ըստ բարդացման և թուլացման այսպես է՝ p—b—bh, այսինքն՝ ձայնեզությունը թուլացնում է պարզ պայթականին, իսկ շնչայնացումը (ասպիրացիան) ավելի է թուլացնում։ Կան լեզուներ, որոնք կարծես չեն ենթարկվում այս «նորմային», ինչպես ելլաս-լոթարինգիայի գերմաներենը։ Ասպիրատը* հայերեն կարելի է թարգմանել շնչեղ կամ ավելի լավ՝ շնչական։

Այժմ տանք բաղաձայնների բոլոր տեսակները, հետևելով մեր բերած բաժանման սկզբունքին, այն է՝ ըստ բաղաձայնի արտաբերման տեղի, կերպի (եղանակի) և ձայնեզության կամ խուլության, իսկ պայթականները՝ շնչայնության տեսակետից էլ։

Բնական է, որ բաղաձայնների բոլոր տեսակները այստեղ չեն տրվելու, որովհետև դրանց շատ նրբություններ մեր սովորական ականջով չեն ըմբռնվում կամ քիչ հայերենի արտասանական ունակություններից հեռու չեն, անմատչելի չեն։ Լեզվաբաններն ընդունում են, որ ամեն մի ցեղային կամ ազգային արտասանություն իր կազմավորման պրոցեսում ձեռք է բերում այսպես կոչված «արտասանական կամ հնչարանական բազա», հետևապես և ունակություն։

Բաղաձայնների վերլուծման ընթացքը շատերը տալիս են ա-

---

*Ասպիրատ բառը լատիներեն է, կազմված ad-spiratus—«ընդ-շնչայնացած» (spiritus=շունչ, ոգի), ինչպես աֆֆրիկատը կազմված է ad-fricatus. այսինքն՝ ֆրիկատիվով (շփականով) բարդացած։ Քիչ ասպիրատները և քիչ աֆֆրիկատները համարվում են բարդ հնչյուններ։

առջից (շրթունքից) դնալի լինի, հակառակ պատմական զարգացման իրականության։ Թեպետ այդ լեզուներն ունեն ոչ մեծ դյուրություն և ներկայացնում մանկավարժական տեսակետից, վորովհետև առաջնալեզվային և շրթնային բաղաձայններն ավելի հեշտ են դիտելի, բայց մենք այստեղ կվերցնենք դրանց վերլուծումը պատմական ընթացքի տեսակետից, ինչպես վարվեցինք և ձայնավորների նկատմամբ։

ՅԵՏՆԱԼԵԶՎԱՑԻՆ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ

Յևրը լեզվի յերեսի յետին մասն իր այլևայլ տեղերով կըպչում կամ քսվում և փոփուկ քիմքին, առաջանում են k *հնչյունի այլևայլ տարբերակները։ Ամենասովորական արտաբերական «k»-ն կլինի* ka, ko ku, kə... *կոմպլեքսներին մեջ, ինչպես և դրա «g» ձայնեղ տեսակինը* (ga, go, gu, gə...)։ *Այդ «նորմալ» արտասանության քիչ յետ արտաբերվելուց առաջանում են խուլ* k *կամ ձայնեղ* g *բաղաձայնները, իսկ ավելի յետ՝ խուլ* k *կամ ձայնեղ* g *բաղաձայնները։ Առաջին խուլ* k, ḳ, k̇ *բաղաձայններն ունին, որինակ, վրացիք (գոնե* k *և* ḳ *)։ Դրանց սպիրանտ տեսակներն են* x (xa, xo, xu, xə... *կոմպլեքսներում) կամ* ɣ* (=հայոց ղ) *բաղաձայնները, վորոնք նմանապես կարող են յետ ու առաջ լինել լեզվի այդ յետին մասում։ Եվ և կոկորդային* h, h̓ *խուլ պայթականը (որինակ արաբերենում) և դրանց ձայնեղ տեսակը, վորը կա, որինակ, հայոց բարբառներում (որինակ,* ʻamen, ʻAruthyun, ʻari *և այլ բառերի սկզբում)։ Իսկ մի շարք ցեղեր (որինակ արաբները) ունեն կոկորդային պայթական բաղաձայն, վորն արտահայտվում է կոկորդի ուժեղ կծկումով և պայթումով։*

Սովորական k *և* g *յետնալեզվային բաղաձայնները մենք կարող ենք արտասանել նաև ասպիրացիայով, այսինքն՝ դրանց շնչեղությամբ (*h *հնչյունի միացմամբ), վորով ստացվում են* kh *(=հայոց ք-ը) կամ* gh *(=բարբառային* gʻ, *որինակ* gʻom, gʻalis em...)։

---

* *Այդ* ɣ *տառը վերցված է հունարեն այբուբենից (գամմա=մեր դիմ անունով տառն է, այսինքն՝ ղ հնչյունը)։ Այժմ դա գործ են ածում ղ հնչյունի համար։*

ՄԻՋՆԱԼԵԶՎԱՅԻՆ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ

Այստեղ ստացվում են նուրբ k—g *(կամ սպիրանտ* x—ɣ*) շարքի բաղաձայնները այլևայլ նրբություններով, յերբ լեզվի միջին մասն և կպչում կամ քսվում փափուկ և կոշտ քիմքերի մեջտեղին, այսինքն այն տեղին, վորտեղ այդ քիմքերը զատվում են։ Այդ կողմից՝ դրանք կոչվում են նաև «պալատալ» բաղաձայններ։ Միջնալեզվային այդ բաղաձայնները հատկապես բնութագրվում են, յերբ դրանց* (k—g, x—ɣ) *հաջորդում են* e, i (y) *ձայնավորները։ Ցեղ այդ հանգամանքն և, վոր շատ լեզուներում այդ* k' e, k'i *կամ* g' e, g'i *կոմպլեքսը հնչուն թյամբ վեր և ածում* –ʤe, ʧi *(ճև ճի) կամ* ǰe, ǰi *(ջև, ջի) նոր վորակների։ Որինակ մեր մի շարք բարբառներում և մինչև իսկ գյուղերի թաղամասերում հնչում են «գինի»-ն, իբրև «ʤĭnĭ» (գ'ինի > ջինի) և այլն. նմանապես և ասպիրատ միջնալեզվային* k'h, g'h *պայթականները* e *և* i *ձայնավորներից առաջ հնչուն թյամբ տեղի չեն տալիս չե, չի կոմպլեքսին (որինակ, քեռի > չեռի)։*

Ցեղնալեզվային բաղաձայնների այդ միջնալեզվայնացումը (осреднеязычение) *կամ պալատալիզացիան մեծ դեր և խաղում հատկապես ռուսերենում և քիչ դեր, որինակ, վրացերենում։ Մեր մի շարք բարբառները նմանապես ուժեղորեն յենթարկվում են այդ հնչաբտարերական յերևույթին։ Գրաբարի «ջեռ-նում, ջեր-ում» բառերը միայն այդ ձևով են իրենց «ջեր-(ջեռ-) մասը ստացել* g'her *հին արմատից։ Նուրբ յերևույթին և խոսում և ռուսաց* бегу—бежишь, пеку—печешь, лик—лицо (личный) *և նման հնչափոխակերպումների մեջ։ Միջնալեզվայնացումը նշվում և փըշիկով (՛), դրված տառի վերևի աջ անկյունում։*

ԱՌԱՋՆԱԼԵԶՎԱՅԻՆ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ

Առաջնալեզվային բաղաձայնների արտաբերման տեղը ավելի ընդարձակ և, քան թերևս մյուսներինը։ Այստեղ լեզուն կարող և կպչել կամ քսվել առաջիների յուրի մասից կամ դրանց արմատներից («ալվեոլներից») սկսած մինչև կոշտ քիմքի վերջը. և հետևապես կառնծվեն «առաջնաքիմքային» (зубонебные), այսինքն՝ առաջնաառաջնալեզվային, հետո՝ դուռ առաջնալեզվային (լեզվի ծայրի մասի բաղաձայններ) և քիչ յետը արտասանվող բաղաձայններ։ Այս բոլոր տարբերակները կարող են լինել նաև խուլ և ձայնեղ, իսկ պայթականները (խուլ թե ձայնեղ) նաև կա-

բող են յինթարկվել ասպիրացիայի։ Հետևապես ստանում ենք առաջնալեզվային պայթական բաղաձայններ— խուլ t (=հայոց տ) և ձայնեղ d (=հայոց դ), վորոնք կարող են արտասանվել այլևայլ ձևափոխումներով, նայած թե լեզվի առաջին մասի յերևսը կամ ծայրը կպչում և կամ կոշտ քիմքին, կամ ալվեոլներին (վերին շարքի առաջնակերի և քիմքի սկզբամասը), կամ վերին շարքի առաջնակերի յետևի մասին (պատին) և կամ վերին ու ներքին շարք առաջնակերի յետևի մասին միաժամանակ։ Յեթե լեզուն կպչում է քիմքին վոչ թե ծայրով, այլ այդ առաջի մասի յերեսով և առաջնակերից հետու (դեպի յետ), այն ժամանակ այդ t և d բաղաձայնները դառնում են, ինչպես անասուդդ ասում հին, «ցեներբրալ» (սխալ թարգմանություն և հին հնդկերենից). և գրում ենք ţ կամ t և ḍ կամ d (մոտ են մեր «ծ», «ձ» բաղաձայններին, սակայն պարզ են և վոչ աֆֆրիկատ՝ բարդ)։

Իսկ առաջնալեզվային շփական կամ սպիրանտ—(«քսվող»=ֆրիկատիվ) կոչվող բաղաձայնները կլինեն խուլ s (հայոց ս) և ձայնեղ z (=հայոց զ), վորոնք կոչվում են նաև «սուլիչ» (свистящие), հակադրելով դրանց «շչացին» (шипящие)—š (=մեր շ) և ž (=մեր ժ) տարբերականներին։ Վերջիններիս (š, ž) արտասանության ժամանակ լեզվի առաջին մասն ավելի յետ է և դրդալաձև կորության և կազմում, քան s և z սուլիչների նկատմամբ։

Յեթե t և d (կամ ţ և ḍ) բաղաձայններն ասպիրացիայի յենթարկենք, կստանանք th (=մեր թ) և dh (մեր բարբառներում կա, թեպետ այդտեղ ասպիրացիան ձայնեղ է)։ Իսկ դրանց շփական (ֆրիկատիվ) ձևերը կլինեն θ և ð հնչյունները (գրվում են հունարեն տառերով), վորոնք մոտ են անգլերեն th բաղաձայնի յերկու հնչումներին։

ՇՐԹՆԱՅԻՆ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ

Այստեղ կան իսկապես յերկու տեսակ բաղաձայններ.—նախ, յերբ բաղաձայնը գոյանում է յերկու շրթունքների միացման (հպվելու) կամ քսվելու ժամանակ (bilabiales, «билабиальные» =յերկշրթնային), և յերկրորդը, յերբ բաղաձայնը գոյանում է վերին առաջնաշարքի ու ստորին շրթունքի միջոցով և կոչվում է առաջնաշրթնային (labio-dentalis)։ Այստեղ առաջվում են պայթական խուլ p (=մեր պ), ձայնեղ b (=մեր բ), դրանց շփական տեսակները՝ խուլ f (=մեր ֆ) և ձայնեղ v (=մեր վ),

վոքոնցից p և b յերկշրթնային են, իսկ f և v—շրթնատամնային։ Իսկ յեթե այդ յերկշրթնային p և b բաղաձայններն ասպիրացիայի յենթարկենք, կստանանք ph (=մեր փ) և bh (համեմատիր սանսկրիտ bh և հայոց բարբառների bh, վորը ձայնեղ չնչաւոտ է)։

ԱՖՖՐԻԿԱՏՆԵՐ

(պայթա-շփականներ)

Ընդհանրապես վերցրած, աֆֆրիկատները կազմվում են պայթականներից (պարզ և ասպիրատ) և շփականներից, ըստ իրենց կազմության տեղի և ձայնեղության կամ խուլության։ Որինակ, p+f > p͡f (գերմ. Pferd, Kamphf և նման բառերի մեջ), k+x > k͡x, վոր կար, որինակ, հին վրացերենում և այլն։

Հատկապես այդ բարդ* բաղաձայնները որգանապես ձուլվում են, յերբ կազմված են լինում առաջնալեզվային t—d կամ th—dh բաղաձայնների և s և š կամ z և ž շփականների միացմամբ։ Այդ միացումը ակուստիկական տեսակետից մի ամբողջություն է, իսկ արտաբերական (արտիկուլացիայի) տեսակետից շարունակվող (տևական) ժամանակ կազմում են հենց այդ սպիրանտները՝ շփականները s // š, z // ž։ Ցնվ այսպես առանում ենք ts, վորը հավասար է մեր «ծ» աֆֆրիկատին, tš, վորը հավասար է մեր «ճ» աֆֆրիկատին, իսկ dz (ds անհնարին է) բարդությունը տեսնում ենք մեր «ձ» բաղաձայնի մեջ, dž (dš անհնարին է) բարդությունը՝ մեր «ջ» հնչյունի մեջ։ Յեթե վերցնենք th և dh ասպիրատներն ու բարդենք s // š, z // ž շփականների հետ, կստանանք t͡hs (t'͡s)=մեր «ց» (ռուս. ц), t͡hš t'͡š)=մեր «չ» (ռուսաց ч), dh͡z (d'͡z)=մեր բարբառային «ձ'» (ձ'ան, ձ'ու...), dh͡ž (d'͡ž)=մեր բարբառային «ջ'» (ջ'ուր, ջ'արդել)։ Ըստ այդմ, տեղի արտաբերման տեսակետից, նայած թե բարդությունը s—z շփականների հետ է, թե š—ž, առանում ենք առաջնալեզվային c (ծ), ç (ց), j (ձ), j' (ձ'), իսկ մյուս կողմից միջնալեզվային (ժողովրդական) č (ճ), č̣ (չ), ǰ (ջ), ǰ' (ջ')։ Ըստ խլության կամ ձայնեղության c (ծ), ç (ց), č (ճ), č̣ (չ) խուլ են, իսկ j (ձ), j' (ձ'), ǰ (ջ), ǰ' (ջ') ձայնեղ են։

---

* Բարդ են համարվում նաև ասպիրացիայի յենթարկված ph (=մեր փ), th (=մեր թ), k'h (=մեր ք'), kh (=մեր ք), ինչպես և bh, dh, g'h, gh հնչյունները։

Անավասիկ բաղաձայնների տախտակը

ՊԱՅԹԱԿԱՆՆԵՐ

(պարզ և ասպիրատ.)

Շրթնային . . .	Խուլը	Խուլ ասպիրատները	Ձայնեղ	Ձայնեղ ասպիրատներ
	p	ph (pʰ)	b	bh (bʰ)
Առաջնալեզվային	t	th (tʰ)	d	dh (dʰ)
Միջնալեզվային (պալատալ)	k′	k′h (k′ʰ)	g′	g′h (g′ʰ)
Ետնալեզ. (վելար)	k	kh (kʰ)	g	gh (gʰ)

ՄԱՆՈՒԹ.—Թեմանացի լեզվագետները միջնալեզվային բաղաձայնները նշանակում են ‿ նշանով, ինչպես k͡h, g͡h...:

ՇՓԱԿԱՆՆԵՐ

(«Ֆրիկատիվներ»)

	Խուլ շփականներ	Ձայնեղ շփականներ
Շրթնային	f (ֆ)	v (վ)
Առաջնալեզվային	θ, s (ս), š (շ)	ð, z (զ), ž (ժ)
Միջնալեզվային	x′ (խ′)	γ′ (=ղ′)
Ետնալեզվային	x (=խ)	γ (=ղ)

ԱՌԱՋՆԱԼԵԶՎԱՑԻՆ ԱՖՖԻԿՍՆԵՐ

	Խուլը	Խուլ ասպիրատները	Ձայնեղները	Ձայնեղ ասպիրատները
Սուլական	c (ծ)	ç (ց)	ǰ (ջ)	ǰʰ (ձʰ)
Շչական	č (ճ)	č̣ (չ)	ǰ̌ (ջ)	ǰ̌ʰ (ջʰ)

ՄԱՆՈՒԹ. 1 Միջնալեզվային x′ շփականը մոտ է գերմաներեն «ich» հնչյունին ich «իխ» բառի մեջ և մասամբ աւստրոյ ü հնչյունին «мой» (իմ) բառի մեջ։ Այդպես էլ γ′ մոտ է «յոատյին» (յ—հնչյունին.

ՄԱՆՈՒԹ. 2. Ձայնեղ ǰh և ǰ̌h աֆֆրիկատները կան մի շարք հայկական բարբառներում, ուր սակայն այդ ասպիրացիան նուազում ձայնեղ է (ճ» հնչյունի ձայնեղ տեսակին է)։

ՍՈՆԱՆՏՆԵՐ

(y, w, r, l, m, n)

Ընդհանուր տարբերությունն այդ սոնանտների կամ, ինչպես այլ կերպ են ասում, «սոնոր բաղաձայնների» և իսկական բաղաձայնների մեջ այն է, որ առաջինների գոյացման ժամանակ մեր ձայնալարերը դերիշխող դեր են խաղում և այդ պատճառով ձայնը (և ուշ ազմուկը) առանում է ավելի մեծ նշանակություն, քան ունենք ձայնեղ բաղաձայնների մեջ։ Ձայնալարերի աշխատության՝ սոնորության (sonorité) տեսակետից այս սոնանտներին մոտակից են միայն ձայնավորները, որի հետևանքով, այսինքն այդ յերկու դաս հնչյունների (սոնանտ և ձայնավոր) ձայնեղության տեսակետից, հնչյունաբանությունը դրանց միացնում է իրրև «սոնոր հնչյուններ» (сонорные звуки)։

Բացակի, այսինքն տևողականության տեսակետից, սոնանտներն ընդհատուն չեն, նման պայթականներին կամ աֆֆրիկատներին, այլ մոտ են սպիրանտներին (շփականներին)։

Սոնանտներն այսպես են բաժանվում. 1) «մնայ» սոնանտներ, որոնք լատիներեն կոչվում են liquidae, իսկ ռուսերեն՝ «плавные». դրանք են l, r հնչյունների այլևայլ տեսակները. 2) «անպայթն» սոնանտներ, որոնք են n (=մեր ն), m (մեր մ) իրենց այլևայլ տեսակներով. 3) y (մեր «յ»), որի ձայնավոր տեսակն է «i» (մեր ի). 4) w (մեր «ւ»), որի ձայնավոր տեսակն է u (մեր «ու»)։

r սոնանտը կարող է ունենալ հետևյալ տեսակներն ըստ տարբեր գործարանների ժամանակցության. 1) առաջնալեզվային («առաջնաբիմքային»), որոն իր հերթին բաժանվում է՝ առաջնալեզվային («առաջնաբիմքային»), ալվեոլար, առաջնային (postdentalis) և միջնառաջնային. 2) յետնալեզվային («յետնաբիմքային») r. 3) սակավ գործածական շրթնային r, որը կա, որինակ «տպուռ» կոմպլեքսի մեջ, որով ձիերին են կանգնեցնում։ Հայոց լեզուն ունի այս բոլոր տեսակները, թե առաջնալեզվային r (=մեր «ր», հայրիկ, մայրիկ նման բառերում), թե միջնալեզվային ուժեղ թրթռուն r (=մեր «ռ»)։

Ձերը r սոնանտն արտասանվում է լեզվի ծայրի և կոշտ քիմքի ու վերին առաջնիների միջանցքի (արմատների) միջնորդությամբ, այսինքն՝ լեզվի առաջնային (postdentalis) r սոնանտի տարբերակները, այդ ժամանակ

ունք չենք դնում այդ «r»-ը կազմող գործարանների միջև վոչ մի ծերպ, վորը հատուկ և շփական (ֆրիկատիվ, սպիրանտ) բառամասիններին։ Հետո, այդ ալվեոլար և յետնատաճնայինն r առնանոթի արտատանության ժամանակ թոքերից հոսող ոդի ներգործման շնորհիվ լեզվի ծայրը թրթռում է. և դրա հիման վրա չի, վոր r առնանոթը կոչվում է նաև «թրթռուն»* (дрожащий)։

2) Այդ «r» առնանոթի տարբերակների մեջ ավելի շատ ձայնեղություն (sonorité) պարունակում և «ցնցերբրալ» r-ի տարբերակը, վոր շատ մոտ է մեր «ղ» բաղաձայնին, ինչպես այժմ ֆրանսիացիք կամ գերմանացիք են արտասանում այդ «յետնալեզվային» (ցնցերբրալ) r առնանոթը.—համեմատիր ֆրանսերեն Paris, très, parler... կամ գերմաներեն Vater, Mutter, aber բառերի «r»-երը (=մոտ և մեր «ղ»-ին)։ Այս յետնալեզվային r առնանոթի արտասանության ժամանակ, այսինքն՝ յերբ լեզվի յետին մասը մոտենում և փափուկ քիմքի յետին մասին, մեր լեզվակը (uvula), իրրև այդ փափուկ քիմքի մի վերջույթ, շարժվում և յետ ու առաջ, շնորհիվ թոքերից հոսող ոդի. այնպես վոր այստեղ էլ ծերպ չի գոյանում։

3) r առնանոթի շրթնային հաղվագյուտ տարբերակը կազմվում և այն ժամանակ, յերբ մեր շրթունքները յերկարաձգվում են քիչ դեպի առաջ և հաղիվ քաշում իրար։ Այդ շրթնային r առնանոթը, ինչպես ասվել է, մենք տեսնում ենք այնպիսի բացատրական արտահայտության մեջ, ինչպիսին և, որինակ, ռուսաց тпру (=տպրու)։

Յերկրորդ՝ l նայ առնանոթը (=մեր լ) ունի ընդհանրապես առաջնալեզվային արտիկուլյացիա, նման և t կամ d բաղաձայնների իրենց արտատանական տարբերակներով։ Այս «l»-ն գոյանում և հետևյալ տեղերում՝ a) լեզվի ծայրի և կոշտ քիմքի սկզբի՝ միջնորդությամբ, b) լեզվի ծայրի և ալվեոլների (վերին առաջնիների արմատների) միջնորդությամբ, c) լեզվի ծայրի և վերին առաջնաշարքի ներսի մասի («պատի») միջնորդությամբ, d) լեզվի ծայրի և վերին ու ներքին առաջնաշարքերի մեջտեղի միջնորդությամբ։

Այդ բոլոր դեպքերում լեզվի ծայրը պինդ կպած և չինում քիմքին կամ առաջնիներին, բայց լեզվի կողքերը, աջ ու ձախ կող-

* Հին հայ լեզվաբանները «թրթռուն» անվանի տակ գործ ունեն ածում «ձայնեղ բաղաձայններ»։ Այդ ի հարկե ճիշտ չէ։

մերից, չեն կպչում քիմքին, այլ իջած են ցած, և հետևապես ողը հոսում է բերնից այդ յերկու միջանցքների միջով դեպի դուրս։ Ողի այդ կերպ հոսելն է վոր l առնանտին ուրույն աղմուկ և հաղորդում։ Շատ ժամանակ պատահում է վոր լեզվի յերկու կողմերից միայն մեկն է իջած և չկպած քիմքին։ Բայց ավելի հաճախ l առնանտի արտասանության ժամանակ բարձրանում է նաև լեզվի յետին մասը և այդ տեսակ «l»-ն հնչվում է ավելի, այսպես ասած «կոշտ», ինչպես ռուս. лоб—лба բառերի մեջ (բայց лёд—льда ունեին այլ l)։ Հենց այդ «կոշտ» l առնանտն է յեղել հին հայերենի «ղ» բաղաձայնը, վորը հետագայում, կորցնելով իր առաջնալեզվային արտիկուլացիոն հիմնական մոմենտը, դառնում է յետնալեզվային շփական, այսինքն՝ նրա յետնալեզվային ժամանակի բարդությունն ուժեղանում է, գերիշխում, վանելով առաջնալեզվային սկզբնական հիմնական տարբերությունը։

Գիտական այբուբենում («տրանսկրիպցիա»-յում) այդ յետնալեզվային (վելար) l առնանտը գրում են ł, այսինքն՝ l—տակին մի կետ (ինչպես Մառն է գրում) կամ ավելի շուտ լեհերենի և չեխերենի գրության ձևով, այն է l մեջտեղից մի գծիկ (ł)։

Ինգային առնանտներն են n (=մեր ն), m (=մեր մ) զանազան տարբերակներով։ Դրանց արտասանության ժամանակ փափուկ քիմքն իր ծածկոցով (velum palati) իջած է, և ողը հոսում է քթի խոռոչի միջով, իբրև անդոնատորի։ Ըստ այն տարբերության, վոր առաջ և գալիս շնորհիվ այլևայլ խոչընդոտների՝ (բերնում) բոքերից հոսող ողի հաժար, մենք ինգային n առնանտը բաժանում ենք այսպես—յետնալեզվային (n˙), միջնալեզվային (n̄), առաջնալեզվային կամ առաջնաքիմքային (n), վորը կարող է լինել զանազան տեսակի։ Շրթնային ինգային առնանտն է m։

Ինչ վերաբերում է y (=մեր յ) և w (մեր ւ) առնանտներին, ապա դրանցից առաջինը (y) միջնալեզվային բնույթ է կրում, նման լեզվի միջնալեզվային γ սպիրանտի. իսկ w առնանտը առաջանում է շրթունքների դործունեության, դրանց աշխատանքի միջնորդության, տարբերվելով սակայն շրթնաառաջնային v (=մեր վ) սպիրանտից։ Այդ w առնանտի արտասանության ժամանակ շրթունքները քիչ յերկարացած են լինում, քան u (=մեր ու) ձայնավորի ժամանակ, վորը շատ մոտ է այդ w-ին։ Այժմ այդ w-ն կա, արխնակ, անգլերենում, արաբերենում, քրդերենում և այլն։ Մի ժամանակ մեր «ւ» հնչյունը յեղել է նույն առնանտը և մոտավորապես համապատասխանել է

հունարեն ψ ձայնավոր սոնանտին։ Հաճախ այդ w-ի արտասանության ժամանակ լեզվի յետին մասն ևս բարձրանում է, իսկ հետագայում այդ յետին մասն ուժեղանալով առաջ է բերում gw բարդությունը, որը կարող է կորցնել ծայնան w սկզբնական ժամնտը և դառնալ g։ Նման շրջում տեսնում ենք և v շփականի մեջ (համեմատիր մեր «գինի», «գնը»... բառերը «vini», «վեր» սկզբնականից), իսկ վրացիք, որպնակ, մեր Վահրամ (պարսկերեն բառ է) կամ վիրապ բառերը փոխ առնելով պահել են միջին փոփոխման gwarami, gwirapi ձևերը։ W>G փոփոխությունը կրել են և պարսիկները։

ՀՆԶԵՒՈՒՆԻ ԲԱՆԱԿԸ

Մինչև այժմ մենք վերլուծում էինք հնչյունները, այսպես ասած, վորակի տեսակետից, այն է՝ հնչյունների ֆիզիոլոգիան։ Բայց դրանով հնչյունների ներքին բովանդակությունը չի սահմանափակվում. տարբերում են հնչյունի քանակը։

Բոլոր հնչյուններն իրենց արտասանության համար կարող են պահանջել տարբեր յերկարությամբ ժամանակամիջոց, այսինքն՝ կարող են ունենալ հնչյունի արտասանական տևողության տարբեր աստիճաններ։ Դա բացառիկ նկատելի յե «տևական» հնչյունների համար, ինչպես են ձայնավորները, շփական (սպիրանտ) և սոնոր բաղաձայնները։ «Վայրկենային»—պայթականները, ի տրիտուր այդ տևողության, ունենում են ավելի ուժգնություն իրենց տվման մեջ։ Իսկ մասնավորապես պայթական ձայնեղները մինչև իրենց պայթումը (explosio) ունենում են նախատես և ձայնալարերի աշխատության համար վորոշ ժամանակամիջոց, վորով առաջվում և խուլ ձայն (Blasslaut), ինչպես ռուսերենում և այլն։*

Միջանկյալ պետք է ասել, վոր հայոց ձայնեղ պայթականները չեն ունենում այդ ձայնեղության աշխատանքը մինչև պայթելը, այլ՝ միաժամանակ։

Հնչյունի քանակը տևական բաղաձայնների նկատմամբ (շփականների և սոնանտների) շատ լավ ըմբռնելի յե մեր ականջով, ակուստիկորեն. որպնակ մասսա (բայց՝ «սա մաս ա»—«это есть часть» ժողովրդական լեզվով), ռուսերեն оттого, վորը հնչվում և «աոտտավո» (բայց а того «իսկ նրան», վոր հնչվում և «ա տա-

---

* Բառացի «ժժգուն ձայն»։

վոց), труппа (=խումբ), բայց труппа (=դիակի, սեռական հոլովը труп բառի), Анна և она, поддать (տակից տալ) և подать (մատուցանել) և այլն։ Զգալի են տարբերությունը сумá (=պարկ) և су́мма (=գումար), коммунизм և коммунизм, կոլեկտիվ և коллектив և այլն և այլն։

Հայոց բարբառներն ունեն նաև վայրկենային խուլ պայթականների ուժեղացում, ինչպես մատաա («լավ», «գրավիչ» —արաբերեն բառ է), բայց «մատ ա» (=палец), ինչպես շեպալել, շեպալացնել և այլն, իսկ տևական բաղաձայնների նկատմամբ հակադեմատիվ—վազել, ամմենքը, տասը, ինը...։

Այդ տևական կամ ուժեղ բաղաձայնը ֆրանսերեն կոչվում է consonne géminée, որը թեպետ յավրոպական (և մեր) այբուբենում գրվում է յերկու (կրկնակի) միևնույն բաղաձայն տառով (сумма, коммуна, масса, Филипп...), բայց փաստորեն դա մի յերկար կամ ուժեղ բաղաձայն է, որը լեզվաբանության մեջ պիտի գրվի (сума, комунист, маса... նման արաբերեն գրության, ուր այդպիսի բաղաձայնները գրվում են մի տառով, բայց վերև «տաշդիդ» (~) կոչված դիակրիտիկ նշանով։

Արաբերենում այդ յերկար կամ ուժեղացած բաղաձայնն ունի նաև ձևաբանական նշանակություն (բացի արտասանական տարբերություններից), այսինքն՝ առաջ և բերում միևնույն արմատի տարբեր նշանակություններ կամ կիրառություններ։

Հնչյունի քանակը (տևողությունը) կարող է լինել տարբեր աստիճանների—ամենակարճ (կամ իրացիոնալ), կարճ, կիսայերկար, յերկար, շատ յերկար։ Ձայնավորների վերաբերմամբ գործ են ածում զանազան նշանացույցեր (որինակ «դիակրիտիկ նշաններ») այդպիսի տևողության համար, սկսած ամենակարճից (иррациональный) մինչև ամենայերկարը—ă, a, ā, â, a։

Իհարկե, հնչյունների տևողության աստիճանները բավականին հարաբերական իմաստ ունեն. դրանք բնորոշվում են ամեն մի լեզվի համար առանձին։ Տևողության աստիճանները մի լեզվում չեն համապատասխանում իրենց արտույտա նշանակությամբ նույն աստիճաններին մի ուրիշ լեզվում։

Յերկար բաղաձայնների արտասանությունը բավ մեջ ունի և այն նշանակությունը, որ դրանց արտիկուլացիայի առաջին մոմենտը (հարված կամ փակվելը), մեքանալով նախորդ ձայնավորին և թուլանալով՝ կազմում է վանկի անջրպետը, այնինչ դրա յերկրորդ մոմենտը (պայթումը, վերջը) կապվում է հաջորդ վան-

կի ձայնավորի հետ։ Ուրինակ matta կամ mayya հնչա-կոժալևքանևրի մեջ (mat—ta, may—ya...) բաղաձայն t և y հնչյուններն իրենց հպումը (t) կամ քավելը քիմքին (y) թուլացնում են ակուստիկությունն, նորից վերսկսելով ta կամ ya վանկերի հետ իրենց ավարտման ժամանակը։ Թևրևս այդ հանդամանքի հետ և կապված է այն, որ այդ տևական բաղաձայններից առաջ ձայնավորն ավելի թույլ և (կարճ), քան նույն տիպի սովորական (ոչ տևական) բաղաձայնից առաջ. այսինքն՝ matta բառի մեջ առաջին a-ն ավելի կարճ և, քան mata բառի առաջին «a»-ն։

Այնպիսի դեպքում, ինչպես «ապա—աստա», «и история» (և—իստորիա), a она» (=ա—անա) և այլն մենք չենք առանում կատարյալ յերկար a, i, a (ā, ī, ā), քանի որ վանկերի գոյությունն ականջով ըմբռնվում է, այսինքն ձայնական դեպրադացիայի որոշ թուլացում առաջին a և յերկրորդ a-ի մեջ. իսկ դիմանացիք, որինակ կոկորդի հպում—պայթումով միանգամայն բաժանում են այդպիսի յերկու ձայնավորների հանդիպումը (diese alte Eiche կամ թե die innere und äussere Einrichtung արտասանում են կտրվածորեն, յուրաքանչյուր բառասկզբի ձայնավորից առաջ ունենալով կոկորդային պայթյուն*)։ Ջրանսիացիք թևթև ասպիրացիա յեն դնում (Baal հնչում են իբրև Ba^{h}al)։

ՀՆՉՈՒՆԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՏՈՆԻ ԳԵՎ ԱՐՏԱՇՆՉՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ

Ինչպես տեսանք, բոլոր ձայնավորները, սոնանտները և ձայնով բաղաձայնները (թե պայթական և թե շփական) կազմվում են մեր ձայնալարերի ժամանակցությամբ և հետևապես ունեն այն, ինչ կոչվում է «ձայն» (голос)։ Բայց այդ ձայնը, ինչպես և ամեն մի յերաժշտական ձայն, ունի այլևայլ բարձրություն, նայած թե մեր ձայնալարերը որքան շարժուններ (տատանումներ) են կատարում մի վայրկյանում։

Ցածր ձայնալարերը կարճ լինելն, նման յերաժշտական գործիքի լարերին, այն ժամանակ ատատանումները մի վայրկյանում ավելի շատ կլինեն և հետևապես կ'առացվի բարձր ձայն, ինչպես որ տալիս են կանանց ձայնալարերը։ Նման հատկությամբ են

*Այդ պայթյունը նշանակում են՝ նշանով. որինակ «di ʾinnere und ʾoisere ʾainrichtung» (արտասկզբնյայով)։

բացատրվում իմարկե և տղամարդկանց սոպրանո, բարիտոն, բաս ձայները։

Հնչյունները, որոնք կազմվում են ձայնալարերի մասնակցությամբ, ունեն «ձայնեղություն». դրանք պիտի ունենան, հետևապես և ձայնի բարձրություն։

Ամենավորոշ և ըմբռնելի տարբերությունը տոնի տեսակետից ստանում ենք ձայնավորների և սոնանտների մեջ, այսինքն՝ սոնոր հնչյունների մեջ։ Վոչ կարճ սոնոր այդ հնչյունների մեջ տոնը կարող է լինել կամ հավասար (միալար), կամ վոչ հավասար. վերջին դեպքում տոնը կարող է լինել կամ հետզհետե բարձրացող, կամ հետզհետե իջնող (ցածացող)։ Վոչ կարճ այդ ձայնավորները և սոնանտները տոնի տեսակետից կարող են տալ նաև հավասար ու վոչ հավասար տոների միացում, կամ թե՝ վոչ հավասար ու հավասար տոների միացում, կամ թե՝ վոչ հավասար և նույնպես վոչ հավասար տոների միացում։ Որինակ, տոնը կարող է լինել հավասար—բարձրացող, հավասար—իջնող, բարձրացող—իջնող, իջնող բարձրացող։ Իսկ կարճ սոնոր հնչյուններն իրենց տոնի բարձրությունը տարածում են և հաջորդ վոկ սոնանտի վրա (ar, an...)։

Բայց ձայն ունեցող հնչյունը տարբերվում է մի այլ կողմով. այդ հնչյունի ուժգնությունն է, որը տարածվում է բոլոր հնչյունների վրա։ Հնչյունի ուժգնությունը կախում ունի մեր թոքերից հոսող ոդի ուժգնությունից, թափից. իսկ ձայներն այդ ուժը (դինամիկ մոմենտը) ստանում են նաև ձայնալարերի ամուր հպվելու հետևանքով, որոնց շարժելու համար (այսինքն՝ միջլարային ծերպը) պահանջվում է ավելի մեծ էներգիա։ Հետևապես սոնանտների գոյացման համար յեկող ոդի ուժը անդրադառնում է անմիջապես այդ սոնանտների «ձայն»-ի վրա, այսինքն՝ ձայնալարերը կարող են շարժվել տարբեր լարվածությամբ։

Վ Ա Ն Կ

Վանկն ավելի խոշոր հնչյունաբանական միավոր է, քան հնչյունը և մենք առանց դժվարության կարողանում ենք որոշել վանկերի քանակը բառի կամ նախադասության մեջ։ Հենց այդ հեշտության տեսակետից ել, որ նախնական դրությունը յեղել է սիլլաբիկ (վանկային) և հետագայում միայն ժարդկությունը զարգացման ճանապարհով հասել է սովորական հնչյունական դրության։ Վանկերի բաժանման այդ հեշտությունը բացատրվում է

վորոշ ակուստիկական և ֆիզիոլոգիական սուբյեկտիվ պայմաններով։

Ակուստիկորեն (լսողությամբ) վանկի բաժանման կետն են հանդիսանում հնչյունական շարքի մեջ յեղած թուլացման մոմենտները և կամ լրիվ դադարը՝ պաուզան, վորն ավելի տեսական է։ Կարելի յե վանկի մեջ յերկարացնել, որինակ, յերկար ā, ē և այլն։ Բայց յեթե մեջընդմեջ ուժեղացվի և թուլացվի դրանց արտադրող օդահոսանքը, կամ, որինակ, շուռ-շուռ ձեռքի ափով խփվի շրթունքներին հնչարտադրության ժամանակ, այդ ժամանակ ամեն մի նոր ուժեղացում, որինակ ā, ըմբռնվում է իբրև առանձին վանկ։

Այնպես վոր, լսողության համար առանձին վանկ և հանդիսանում հնչյունական շարքի այնպիսի մի փոքր մասը, վորն իբրև ավելի ուժեղը, ընդգրկվում և (պարփակվում) հնչյունի թուլացման կամ ընդհատման մոմենտների միջև (տես Томсон, Общее языковедение, եջ 220—221)։

Ցեթե վերցնենք aia—*հնչյունաշարքը, մենք կարող ենք այդտեղ յերեք վանկ կազմել, արտասանելով* i *հնչյունը վորոշ ուժեղությամբ և տևողությամբ, իսկ յուրաքանչյուր յերեք հնչյունը, իրենց արտասանության վերջմոմենտում թուլացնել։ Բայց կարելի յե այդ շարքն արտասանել և* a — ⁱa *կամ* a͡i — a *կամ* ai—ia (=ay—ya), *նայած թե հնչյունի թուլացումը կատարում ենք* i-*ից առաջ* a—ja), i-*ից հետո* (a͡i—a), *կամ* i-*ի մեջ* (ai—ia), *վորով* i-*ն յերկու վանկերի մեջ է բաժանվում։*

Ցեթե վանկն արտաբերվում և արտաշնչման ուժով կամ ընդհանրապես հնչյունի ուժեղությամբ, իսկ հնչյունի թուլացումներն ընդհանրապես վանկաբաժանիչներ են հանդիսանում, այն ժամանակ, այդպիսի վանկը, իբրև հիմնված հնչյունի ուժեղացման վրա, կոչվում և արտաշնչական վանկ (экспираторный слог, динамический слог)։ *Բայց յեթե* aia, aza, asa, ata *և այլ շարքերն արտասանենք և առանց վորևե հնչական թուլացման, այսինքն՝ մի հավասար անընդհատ արտաշնչուժով, եւլի կլսվեն յերկու վանկեր։ Դա նրանից է, վոր* i, z, s *և այլն պակաս լիահունչ* (полнозвучный) *են, այսինքն, նրանց հնչյունն ինքնին թույլ է, քան* a *ձայնավորինը. այնպես վոր հնչյունի թուլացումը, վորը կապված է* i, s, z *հնչյունների բնության հետ, մեր ականջի համար հանդիսանում և վանկաբաժանիչ։ Այդպիսի վանկաբաժանիչներ են և հպվող* (затворные) t, p, k *բաղաձայնները, վորովհետև դրանց*

հատան ժամանակ նախորդ հնչյունն ակուստիկորեն ամենևին դադարում է։ Այդպիսի վանկերը հիմնված են հնչյունների լիահնչության տարբերության վրա։ Լեզուներում հաճախ լինում մամիններն էլ միանում են, այսինքն՝ վանկը լինում է թե եքսպիրատոր (արտաշնչման ուժով) և թե հնչյունի լիահնչման վրա չի հիմնված։ Գոլովանովը այս վերջին մոմենտը կոչում է «հնչեղություն» (звучность), բնորոշելով վանկն այսպես. «վանկը կարելի չի բնորոշել իբրև խոսքի մի ժամանակական հատված, որը պարունակում է հնչեղության ուժեղացում յուրաքանչյուր պակաս հնչեղ մոմենտների միջև։ Ցեվ ամեն մի վանկում, հետևապես պիտի լինի մի հնչյուն, որն ավելի չի հնչեղ (звучный), քան նախորդ և հաջորդ մոմենտները։ Այդ հնչյունը կոչվում է վանկարար (слогообразующий)»*։ Տես Поливанов, Лекции по введению в языкознание и общей фонетике. Берлин, 1923 г. էջ 32)։ Ցեթե վանկարար հնչյունն ամենից շատ է դրսևորվում իր հնչեղությամբ, ապա մյուսները հարակցվում են դրան և կոչվում են «ոչ վանկարար» (неслоговые звуки)։ Վանկարար հնչյունը, լինի լիահնչեղ ըստ բնության, թե ըստ արտաշնչման ուժի, գրվում է տառի տակ փոքրիկ կլոր նշանով (о), ինչպես р, т, л··· (թեպետ այժմ ձայնավոր առանձնանների տակ չի դրվում)։ Իսկ առանձնանների ոչ վանկարար լինելը նշանակվում է – նշանով (р̯, т̯, л̯, г̯, п̯, м̯ թեև վերջիններըս – л, г, п, м··· այժմ նմանապես այդ դեպքում գրվում են պարզ л, г, п, м)։

Լիահնչության (հնչեղության, звучность, Schallfülle) տեսակետից առաջին տեղը գրավում են ձայնավորները, որոնցից ամենաուժեղն է а, հետո е և о, հետո і, и (=ուսաց у), ы (ուս-

---

* Հետապես վանկի նախկին բնորոշումը—«որքան եքսպիրացիաներ (արտաշնչումներ)—այնքան վանկեր» մեզ համար մասամբ միայն բնդունելի պիտի լինի։ Համեմատիր նաև Meillet-ի բնութագրումը, որը նմանապես ավելի դիտական է, քան այդ նախորդը „Будет-ли согласный элемент простой или сложный, в данном ряде звуков слог есть отрезок, заключенный между двумя крайними границами движений открывания и закрывания„ (Տես А. Мейе. Введение в сравнит. грам. индоевропейских языков, Юрьев 1911, էջ 103-104, թարգմանությ. պրոֆ. Դ. Կուդրյավսկու)։ Վանկարար հնչյունի համեմատական ուժեղությունն և իր նախորդների և հաջորդների հանդեպ, որ նրան դարձնում է «վանկարար» (слогообразующий)։ և այդպիսով մի դիտմանների Haus (տուն) մի վանկանի չի, իսկ մի ուսաց аул (=կովկասյան լեռնցիների գյուղ) կամ «а у него (=ա ու նրա) հնչյունական հաջորդության մեջ au (=աու) կոմպլեքսը յուրաքանչյուր վանկ և կազմում, որովհետև դրանք բանակի և համեմատական ուժեղության տեսակետից տարբեր են։

ապց և)։ Ձայնավորներից հետո հնչեզուքյամբ առաջին տեղն են դրավում սոնանտները (l, r, n, m), հետո շփական ձայնեղները (z, ž, v, ǯ), հետո շփական խուլերը (s, š, f, x...), հետո ձայնեղ պայթականները (b, d, g) և վերջը՝ խուլ պայթականները (p, t, k)։ Այդ պատճառով էլ ai, eu, ia, ie և այլ կապակցուքյուններն ավելի վանկարար հնչյունն են և ավելորդաբար «a»-ն և «e»-ն, այսինքն a͡i, e͡u, i͡a, i͡e...

Լեզուներ կան, ինչպես սերբերենը, չեխերենը և այլն, ուր վանկարար սոնանտներն ավելի լիահնչեղ են, քան ամենակարճ «իրրացիոնալ» ձայնավորները, ինչպես срб (=серб), срце (=сердце) կամ չեխերեն vlk (=волк), krk (=шея) և այլն։ Այստեղ r, l հնչյուններըվանկարար են և պիտի դրվին ŗ, ļ, այսինքն՝ srb, srce, krk, vlk...: Չեխերն ունեն, որինակ, Стржбрный ապրանուններ յերկու վանկարար r սոնանտով։

Վանկը կոչվում է բաց, յերբ վերջանում է վանկարար հընչյունով (=ձայնավորով) և փակ, յերբ դրան հաջորդում է մեկ կամ մի քանի վոչ վանկարար հնչյուններ (որինակ, բազաձայնները)։ Ռուսաց да, про բաց են, բայց трость, дай փակ են։ Վանկը նեմանապես կարող է լինել յերկար և կարճ, նայած դրա վանկարար հնչյունի քանակին։ Նեմանապես վանկը կոչվում է շնշառավոր և անշնշառ, նայած թե դրա վանկարար հնչյունը շնշառուն է, թե վոչ։

Շ Ե Շ Տ

Յուրաքանչյուր բառի մեջ վանկերն ունեն ուրույն բնույթ, ուրույն առանձնահատկություններ։ Յերբ մի վանկ ավելի յե առանձնանում բառի մեջ իր վանկարար հնչյունի ուժգնությամբ (արտաշնչության) կամ դրա տոնի բարձրությամբ, ապա դա կլինի այն, ինչ վոր կոչում ենք «շեշտ»։ Յեվ առանում ենք արտաշնչական շեշտ (экспираторное ударение) կամ յերաժշտական՝ տոնիկ շեշտ*, նայած թե վանկարար հնչյունն ինչ արտասանական մոմենտով և բնութագրվում։ Լինում է ինարկե և այդ յերկուսի միացում-խառնուրդը, նայած լեզվին։ Ռուսաց լեզվում, ինչպես և հայերենում, շեշտն ընդհանրապես արտաշնչական է, այնինչ, որինակ, հին հնդկերենում կամ հին հունարենում նա յեղել է յերաժշտական. այդպես և նաև ճապոներենում և չինարենում։ Վորոշ լեզուներում, ինչպես, որինակ, չեխականն և սերբ լեզուներ-

* Ռուսերեն՝ музыкальное կամ тоническое ударение։

բում, շեշտը կրում է իր հատուկ յերկու կողմերն ևս՝ «արտաշնչական—յերաժշտական» կամ «յերաժշտական—արտաշնչական», լինելով հետևապես խառն շեշտ։

Ձայնի բարձրացումը մենք հիմա ոգտագործում ենք նաև վերաբերմունք (զգացմունք) արտահայտելու համար, ինչպես—«այո» և «այո», ուր առաջին դեպքում բարձրացող (յելնող) և, իսկ վերջին դեպքում՝ իջնող։

Վորոշ լեզուներում, ինչպես, որինակ ճապոներենում և չինարենում, շեշտի այս նրբավորումները (оттенки—nuance) հաղորդում են նաև տարբեր իմաստավորումներ, ունենն նշանակոդական տարբերացման դերծոնականություն, ինչպես, որինակ, չինարենի Գևկին (=այժյան Բնյոլին) քաղաքի բարբառում տոնիկ շեշտի զանազան այդպիսի նրբավորությունների հետևանքով՝ ունենք—ma (ժա) «մայր», ma «կանեփ» (конопля), ma «ձի», ma «հայհոյել»։ Ահպես վոր այդտեղ ունենք չորս a ֆոնեմաներ, վորոնք չինացու համար, շեշտի շնորհիվ, ինքնորոշյալ են և լեզվական ժառանգության մեջ՝ ուրույն, ակտիվ և ստեղծագործող*։

Կարելի յե վերցնել և խոսքի (նախադասության) շեշտը, վորը կոչում են նաև «տրամաբանականը», ինչպես—յես գնացի տուն (և վոչ քե «դուս»), յես գնացի տուն (և վոչ քե «մնացի» և այլն), յես գնացի տուն (և վոչ քե «այլ տեղ»)։ Այդպես և մի ամբողջ պարբերության մեջ, ուր լինում և շեշտավոր խոսք։

Արտաշնչական շեշտը մեծ դեր և խաղում իր ազդեցությամբ մյուս վանկերի ձայնավորների վրա, թեև պետք և շեշտել, վոր շեշտավոր վանկի բաղաձայններն ևս լավ են հնչվում։ Բոդուեն դը-Կուրտենեն շեշտի այդ ազդեցական և հաստաձուլիչ դերն ի նկատի ունենալով—խոսքը վերաբերում և ի հարկե արտաշնչական շեշտին—կոչում և այն «ֆոնետիկական ցեմենտ» (фонетический цемент)։ Ցեմ այդ կողմից ուսաց ձայնավորները, քան արտասանության ուժեղության կամ թուլության, նա բաժանում և յերեք կարգի կամ աստիճանի—1) ձայնավորի կատարելու-

---

* Համիտամաիբ գրա հակադիրն այնոսների (Հյուսիսային Ճապոնիայում) լեզվով, ուր ձայնեղ և խուլ բաղաձայններն այդ ֆոնեմատիկ ինքնուրույնությունը չունեն (մի kotan բառը կարելի յե արտասանել և kodan առանց իմաստի տարբերության), նման խնդիրներին կամ Հարավային Ամերիկայի բնիկների մոտ dede կամ nene առաջնալեզվային արտիկուլյացիայով միևնույն բառերն են։

թյան վերջին առարկանը հոմանիշ և հավասար է շեշտված վանկի ձայնավորին, ինչպես—вода́, человек, ло́шадь... 2) Մյուսին առարկանի կատարելության ձայնավորներն են նրանք վորոնք շեշտված վանկից մի վանկ առաջ են ընկնում, ինչպես вода́, годово́й, самоте́к, берега́..., կամ բառավերջի անշեշտ բաց ձայնավորները— го́да, бе́рега, вы́пили...; 3) ամենացած կատարելությամբ են արտասանվում այլ դիրքերի ձայնավորներն ու վերջին փակ վանկերը, ինչպես—вы́ехать, ши́ворот, по́лгода, ко́локол, разбра́сывать...։ Ընդհանրապես նա դիտում է, վոր շեշտավոր վանկը, իբրև իշխող արտասանական տեղ (դիրք), իր վրա յի կենտրոնացնում արտասանողական ուշադրությունը, վորով այլ վանկերի ստուգապես արտասանվելը խանգարվում և և թուլանում։ Ինչ քանի շեշտված վանկից ավելի հեռուն ենք գնում, այնքան այդ արտասանական անկատարելությունը (անստուգությունը) ավելի յի մեծանում։

Մենք դիտենք նմանապես, թե ինչ մեծ դեր և խաղացել և խաղում է շեշտը նաև հայոց լեզվախմբում՝ դրաբարում և արդի բարբառներում, ուր արտաշնչական մեր շեշտի դիրքի փոփոխման հետևանքով նախկին շեշտավոր՝

*ի	> *ը	որինակ մեռա	> մռավ'ր
ու	> ը	» ձմեռկըն	> ձըկմին
է	> ի	» պարտէ՛զ	> պարտիզպան
ոյ	> ու	» լոյս	> լուսավ'ր
ևա	> և	» առևան	> առևնակալ
եայ	> է (բառավերջում)	» պաշտօնեայ	> պաշտօնէութիւն։

Մեր լեզվի հին քերականները շեշտի այս դերն անտես չեին առել և այս բառափոխությունները բացատրում չեին բառի «աճեցմամբ» միայն։

Ցերկար բառերում լինում են գլխավոր և յերկրորդական շեշտեր. համեմատեր մեր մյուսին հայերենի «վանջըրըկընները» (= վաճառականները),—մի յերևույթ, վոր կա շատ լեզուներում։

Վերջապես շեշտը վորոշ լեզուներում ընդունում է բառի վոր-ոշ դրությունը, այսինքն՝ դրվում է վերջին վանկի վրա (ֆրանսերեն, հայերեն), նախավերջին վանկի վրա (համեմատեր մեր Ղարաբաղի կամ Թբիլիսիի բարբառները), նախավերջին կամ վեր-

---

* Այս > նշանը ցույց է տալիս «առնալը, վերածվելը» իսկ < նշանը՝ «առացվելը, առաջանալը»։

չէց յերբորդ վանկի վրա (վրացերէն, յատիներէն), արմատի առաջին վանկի վրա (գերմաներէն) և այլն և այլն։ Այս բոլորը մշտական շեշտեր են, բայց կա և փոփոխական շեշտ (համեմատիր ռուսաց нога́—но́ги, стена́—сте́ны...)։

Կարող է լինել, որ միևնույն լեզուում գործ ածվին յերկու տեսակի շեշտեր—արտաշնչական և յերաժշտական, որինակ, ռուսաց «завтра?» հարցականի մեջ առաջին зав *վանկն ունի, բուն իր բառադիրքի, արտաշնչական շեշտ, իսկ վերջում—*тра *ունենք յերաժշտական շեշտ, հարցման և ապատանման վերաբերմունքը ցույց տալու համար։*

*Մենք դիտենք, նմանապես, որ միևնույն հնչակազմելքի շեշտի փոփոխումը ազդում է իմաստի կամ ֆունկցիայի փոփոխութեան վրա, ինչպես—*мука́ *(=ալյուր) և* му́ка *(=տանջանք),* сте́ны *(=պատեր), բայց* стены *(պատի, յեզակի—սեռական հոլով) և այլն։ Համեմատիր այս տեսակետից յերաժշտական ձայնի դիրքը նաև նախադասութեան վերջում, յերբ նա յերկրորդական է և հետևապես չի վերջացած և դրա հակառակը, յերբ նախադասութիւնը վերջացած է։ Որինակ, «յերբ դնացի՝ դու յեկար», վորտեղ ի ձայնավորը «գնացի» բառի մեջ այլ շեշտում ունի, քան ա ձայնավորը «յեկար» բառի մեջ և քան ի ձայնավորը «յերբ դնացի» հարցական նախադասութեան մեջ։*

ՅԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐ (ԴԻՖՏՈՆԳՆԵՐ)

Յերբ յերկու ձայնավոր միանում են մի վանկի մեջ, դա կոչում ենք «յերկբարբառ», «յերկձայնավոր» (=յերկձայն) կամ հունարեն բառով «դիֆտոնգ» (di-s—«յերկկից», phthong-os—«հընչյուն»). *բայց կարող են լինել մի վանկում և յերեք այդպիսի ձայնավորներ, ինչպես հաճախ տալիս և չինարենը* (liao *իբրև մի վանկ), վորը կոչում ենք «տրիֆտոնգ» (=յեռաբարբառ, յեռաձայն)։ Այդ յերկրաբարբառների կամ յեռաբարբառների մեջ մի ձայնավորը պիտի լինի «վանկակազմ»* (слоговой), *իսկ մյուսները՝ ոչ վանկակազմ (տես վերը—վանկի մասին)։*

Յերկրաբարբառը լինում և բարձրացող (восходящий), *յերբ հնչյունի ուժը դրա (յերկրաբարբառի) արտադրութեան ժամանակ ուժեղանում է, այնպես վոր յերկրորդ ձայնավորը լինում է վանկակազմ, այն է՝ ավելի լիահնչեղ (որինակ—*ia, ie, ua, uo..., *ինչպես ֆրանսերենում* quoi=ku a)։ *Յերկրաբարբառը լինում է նաև*

իջնող (нисходящий), յերբ դրա առաջին ձայնավորն է վանկաբարը (ինչպես край, лей, синий, стой, буйный բառերի մեջ)։ Հին քերականների որինակով այժմ էլ մեծ մասամբ «յերկբարբառ» (дифтонг) ասելով հասկանում են այդ իջնող տեսակը, իսկ բարձրացող տեսակի մեջ տեսնում են վոչ վանկարար ձայնավորի (i̯, u̯) զուգակցումը հաջորդ ձայնավորի հետ։

Յերկբարբառները լինում են բրևնց վանկարար ձայնավորով նաև կարճ (o i̯, a i̯...) կամ յերկար (ō i̯, ā i̯...)։

Յերկբարբառի յերկրորդ տարր կարող են լինել նաև r, l, m, n տնտանունները, վորոնք ավելի հնչեղ են քան «իրրացիոնալ» (Щербатскийի հոլջորջումն է) ձայնավորը (նման մեր կարճ «ր»-ին)։ Եվ վորովհետև տնտանունները պակաս հնչեղ են, քան ձայնավորները, բնական է, վոր վանկարարը պիտի լինի ձայնավոր, ինչպես ar, al, an, am, er, el..., or, ol... և այլն։

Յերկբարբառի յերկրորդ վոչ վանկարար տարրը ավելի թույլ է իր ուժեղությամբ և քանակով, քան վանկարար ձայնավորը, և շատ լեզուներում միտում ունի անհետանալու (ֆրանսերենում «իջնող» յերկբարբառ չկա)։ Համեմատեք մեր բարբառների յերկբարբառները դրսարարի հանդիպ։ (Մայր> մար, մեր. քայր> քուր, քիր. այուր> այուր, այիր...), այժմ միտում կա, հատկապես «հնդեվրոպական» կոչված լեզուների վերաբերյալ, դիֆտոնգներ անվանել այն հնչակոմպլեքսը, վորը կազմվում է a, o, e, ə (=մեր «ը» յերկար) ձայնավորներից և y, w, r, l, m, n տնտանուններից, վորոնք (տնտանունները) կցվում են այդ վանկարար ձայնավորներին կա սկզբից («բարձրացող» յերկբարբառ) և կա վերջից («իջնող» յերկբարբառ)։ Բայց տնտանուն սովորից (յերբ «բարձրացող» յերկբարբառ է) կամ հետևից (յերբ «իջնող» է) պիտի կցվի նաև բաղաձայն, վորը կարող է լինել կամ լոկ պայթական և շփական բաղաձայն («ռդմկայինը» բաղաձայն) կամ տնտանուն այլ բաղաձայն։ Եվ յեթե այդ բաղաձայնն անվանենք պայմանական կերպով C (consonans «բաղաձայն» լատիներեն բառի առաջին տառով), այն ժամանակ կ'տանանք հետևյալ յերկբարբառները—ayC (a i̯C), awC (a u̯C), arC, alC, amC, anC և կամ բարձրացող տեսակը՝ Cya (C i̯a), Cwa (C u̯a), Cra, Cla, Cma, Cna։ Այդպես կարելի յե կազմել նաև e, o, ə ձայնավորների հետ (eyC, ewC, erC..., Cye, Cwe, Cre... և այլն)։ Այնպես վոր հին հայոց մայր, մաւր (> մօր), մարդ, աղտ, ամպ, հանդ բառերի մեջ ունենք այդ «իջնող» տեսակի յերկբարբառ-

ներ, ովքոնց հաջորդում է մի ովրևե բաղաձայն (C). իսկ «բարձրացող» տեսակի կլինեն, որինակ, միմյանց, ՔՔաւուշ, Մռավյան և այլն, թեպետ այս տեսակն այնքան էլ ակներև և բնորոշ չէ հայերենի համար, բացառությամբ թերևս Cya, Cye... տեսակից (պատժությյան, Պապիկյան, արդյոք, դավառական «բյեր», և այլն)։

Ձևրկբարբառների այս դիրքավորվելը կամ բնորոշվելը բաղաձայնի (C) կցորդությամբ հնչափոխական տենդենցների տեսակետից ունի կարևոր նշանակություն. համեմատենք, որինակ, հայոց բարբառների հին «ինքնող» յերկբարբառների անհետանալը (մայր > մէր, մաւր> մօր, լոյս> լուս կամ լիս, ալիւր> ալուր կամ ալիր), ինչպես և «բարձրացող» տեսակից՝ Պապիկյանց > Պապիկենց կամ Պապիկանց և այլն (բայց հին- այա-, -ոյա-, -աւա -իւա-, և նման կոմպլեքսները մնացել են անփոփոխ, քանի որ դիֆտոնգ չեն կազմել)։

ՄԱՍ II

ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մինչև հիմա մենք քննել ենք ընդհանուր հնչյունաբանության (ֆոնետիկայի) այն մասը, որը վերաբերում է հնչյունների բնախոսական արտաբերմանն ու դասդասմանը («հնչյունների ֆիզիոլոգիա») և հնչյունների քանակին։

Հնչյունների այդպիսի քննարկումը հարկավ կատարվում է տեսականորեն, քանի որ հնչյունները առանձին գոյություն չունեն, այլ մտնում են արտասանելի խոսքի ընդհանուր շարքի մեջ, կապակցության կամ ասոցիացիայի մեջ են մտնում հարևան հնչյունների հետ և այլն։ Կենդանի արտասանության (խոսելու) ժամանակ մեծ փոփոխության և ենթարկվում միևնույն հնչյունի որակը, նայած այդ հնչյունի դիրքին բառի կամ արտասանելիի մեջ։ Այս պայմաններում և լեզվի հենց մի տվյալ մոմենտում (ոչ միայն պատմական զարգացման մեջ) տվյալ հնչյունի որակը ֆունկցիոնալ կապակցության և հետևապես փոփոխության մեջ է, ենթե այդ հնչյունը, որինակ, բառասկզբում է, թե բառավերջում, ենթե նա ասոցիացիայի մեջ է մտնում հարևան հնչյունի հետ, ենթե նա աղդվում է շեշտի հանգամանքից և այլն։

Սրանից արդեն պարզ կերևում է, որ Բոդուենդը-Կուրտենեյի կողմից սահմանվող «հնչյունների ստատիկա» և «հնչյունների դինամիկա» հորջորջումը մենք շատ պայմանական պիտի համարենք, քանի որ տվյալ լեզվի տվյալ մոմենտի արտասանության մեջ բացահայտ նկատելի չեն հնչաշարժիչ ուժերը։ Այդ կոնկրետ արտասանության մեջ հնչական դրությունը նույնպես փոփոխական վիճակ է կրում, ինչպես տեսնում ենք այդ լեզվի քիչ թե շատ կերկար զարգացման ընթացքում. այստեղ միայն կարող է լինել փոփոխությունների քանակի խնդիր, որովհետև որոշ հնչյունական փոփոխություններ («ընդհանուր պատմական հնչյունափոխություններ») նկատելի չեն դառնում այդ կոնկրետ լեզվի զարգացման քիչ թե շատ կերկար ժամանակամիջոցում։

Վորոշ լեզուներում կամ մի լեզվի վորոշ պատմաշրջանում հնչյունական (և ձևաբանական ու իմաստաբանական) փոփոխությունը ունենում է տարբեր տեմպ, քան այլ լեզուներում կամ նույն լեզվի այլ ժամանակաշրջանում։ Որինակ, լիտովցիների լեզուն, վոր քիչ է ազդվել այլ լեզուներից, այժմյան հնչյունական վիճակով շատ քիչ է փոխված համեմատած ազգակից այլ լեզուների նույն հնչյունական դրության հետ։ Մի հայերենի, ֆրանսերենի կամ անգլերենի այժմյան հնչյունական վիճակը շատ ու շատ է հեռացել մի հազար տարի առաջ լինած վիճակից, քան հենց նույն լիտովցիների մոտ, վորտեղ բաներ կան, վոր պահել են, ինչպես ասում են, «հնդեվրոպական» հին վիճակը։ Ընդունվում է ժամանավորապես, վոր ուժեղ ազդեցություն և գործում այդ հնչական և այլ փոփոխությունների վրա լեզուների խառնվելը՝ ցեղերի միգրացիայի և նորմալ հասարակա-տնտեսական ներթափանցման շնորհիվ, վորի հետևանքով առաջանում են խառն, բայց միատեսակ նոր լեզուներ (համեմատիր հայերենը, անգլերենը, բոլգարերենը և այլն)։ Բայց անշուշտ միայն այդ պատմական հետևանքն «խառն» լեզուները չեն, վոր տալիս են հնչական փոփոխության արմատական ընկումներ և թափեր (տեմպեր), թեև այնտեղ մաքուր անխառն («անաղդվելի») լեզուներ գոյություն չունեն։ Վորևե լեզվի «բնականոն» զարգացման ընթացքում նմանապես նշմարվում են այդպիսի արմատական փոփոխություններ, հատկապես իմաստաբանության մեջ, վորը (փոփոխումը) կախում ունի վերջին հաշվով ժողովրդների անտեսական-արտադրական կյանքի փոփոխումից։ Լեզվական բոլոր իրականությունների (հնչական, ձևաբանական, իմաստաբանական, լեքսիկայի) զարգացումը չի կարող ունենալ, վորպես այդ զարգացման աուբստրատ՝ լեզվի «ինքնաբավություն», վորը ֆիկցիա չէ՝ ճիշտ և, մենք պիտի ընդունենք լեզվի սոցիալիզիկը, նրա իմմանենտը, լեզվի ժամանակակցության ֆակտորն էս, յուր ավյալ լեզվի ավյալ սիստեմ յուր հնչյուններով և ձևաբանությամբ յուր ներքին դասնում և ձևավորման ու զարգացման կամ ազդեցման գործն հետևյալ հատվի համար, բայց այդ բոլորը մենք ընդհանրապես փոփոխության ենք չենթարկում մեր զարգացման պատմական պրոցեսում. ժամանավանդ այդ նկատելի է ամենաշատ և լեզվի իմաստաբանության և լեքսիկայի մեջ, վորոնք հասարակականության և նրա մտածության կենքը ամենից ևս կրում։

Լեզվական իրականությունների («փաստերի») ֆունկցիոնալ

կապը արտադրական ուժերի և հասարակական փոխհարաբերությունների հետ անժխտական է։ Եղել լեզվի զարգացման (ձագման) առաջին ժամանակաշրջանում (առաջնակարգ) հանդես են գալիս այդ արտադրական գործունեության վրա խարխլված նորանոր միջնորդավորող գործոններ ևս, ինչպես արտադրական կոլեկտիվի կամ ցեղի միությանը գործոնը, ցեղերի անատոմական-ցեղական (էթնիկական) խառնվածության գործոնը, լեզվական սիստեմի ժառանգական առաջադիմության գործոնը («լեզվի ինքնազարգացումը»), պետականության (քաղաքականության) գործոնը, գրի (գրականության) գործոնը, ավելի սոցիալ-կուլտուրական ընդհանուր կացությունը յուր կենցաղով, հոգևորականությամբ և այլն, դասակարգերը և մեկուսի ուրույնների փոխադարձությունը։ Աչքաթող անելով աշխարհագրական գործոնը, որը հին ժամանակ անշուշտ դեր խաղացել է*, յերբ սարերն ու ձորերը խանգարել են հաղորդակցության, մատնանշենք հենց մեր ժամանակվա այն ազդեցությունը, որը տալիս է գրի և գրականության («գրային լեզվի») գործոնը լեզվի մեռածության և կոնսերվացիայի վրա (համմ. անգլերենը Անգլիայում և Ամերիկայում) կամ ընդհակառակը՝ մի ցեղի (ազգի) բաժանված լինելը յերկու պետությունների մեջ, իրրև անջատող և տարազատության ազդակ։

Մի ժամանակ լեզվական տարրերի (նաև հնչյունական), ինչպես և ողջ լեզվի զարգացման մեջ ցանկանում էին տեսնել յերկու տեսակ գործոնների հաջորդական ազդեցություն՝ կառուցող (созидательный) և քայքայող (разрушительный)։ Այդպես էր ընդունում դերմանացի լեզվագետ Ա. Շլեյխերը և յուր հետևորդները, ազդված լինելով Հեգելից։ Սակայն մեզ համար չեն կարող լինել լեզվի մեջ այդպիսի անջատ փուլեր։ Լեզվի տարրերի (հնչակազմությունների) փոփոխման անմիջական ազդակներ կարող են լինել շատ յերևույթներ, ինչպես տեսանք վերևում և

---

* Համեմատիր Ֆր. Ենգելսի կարծիքը գերմանական բարբառների մասին. «Едва ли удастся кому-либо, не сделавшись смешным, объяснить экономически существование каждого немецкого государства в прошлом и в настоящее время, или объяснить экономически происхождение верхне-немецких изменений гласных, которое разделяет Германию (в отношении диалекта) на две полозины, *что усиливается еще географически цепью гор от Судетов до Таунуса*» (մեր նրա նամակը գրած 8. Բլոխին)

վորոնց մասին ավելի կխոսվի ստորև։ Իսկ յուրաքանչյուր ամենափոքր և աննկատելի փոփոխությունն անգամ հանդիսանում է մի ինչուէն ժամանակ և ստեղծագործական և քայքայող (նախորդի նկատմամբ) պրոցես. ժամանակական անջատ հաջորդականություն չկա այդտեղ, ինչպես շեշտում էր Շլեյխերը, վերցնելով լեզուն, իբրև մի բնագիտական օրգանիզմ։ Ի դեպ ասենք, վոր այդ տեսությունը իրավամբ չընդունվեց լեզվաբանների կողմից։

Ընդունելով միջնորդավորող հանգամանքների ազդեցությունը, իբրև պատմական իրողություն՝ ձևափոխված նյութական արտադրական պրոցեսից, մենք լեզվական բոլոր տարրերի (հետևապես և վոչ լեզվի) զարգացումը կարող ենք ըմբռնել միայն դիալեկտիկորեն։ Այստեղ լեզվական ամեն մի տարաիկ վիճակ (դրություն, հանգիստ...) իրենից ներկայացնում է փաստորեն մի շարժունակային հարաբերական «հանգիստ». ամեն մի լեզվական յերևույթ գտնվում է յուր զարգացման սպիռնային, լրիվ զարգացման կամ անհետացման վիճակում, ծնունդ և առնում նախորդ վիճակի ծոցում, բայց զարգացմամբ դառնալով նոր վորակ, դրանով բացատում և այդ յուր զարգացման ձևավորված տրյուրը՝ նախորդ վիճակը։

Լեզվի տարրեր տարրերը ևս (հնչա-ձևաբանական, իմաստաբանական), իրար մեջ ներթափանցվում են, պայմանավորվում փոխադարձաբար։ Բառն անգամ մի բարդ դիալեկտիկական միասնություն է և մի կողմից նրա հնչա-արտաբերական և այդ մանավոր արտաբերման հնչական հոգեկան տրյուրի (պատկերացման) մեջ և մյուս կողմից՝ այդ բոլորի և բառի իմաստաբանի միջև։

Զարգացման մեջ դրանք փոխադարձ կապվածության (կախման) մեջ են, ուր հետևանքը և պատճառը հակադարձ են դառնում միմյանց հանդեպ։

Վերցնենք այս հատվածում միայն լեզվի հնչյունական տարբ փոփոխությունները, իրենց կոնկրետ արտահայտություններն և պայմանների մեջ։

Այստեղ ընդհանրապես պիտի նկատել տակայն, վոր լեզուների հնչյունական քանակը իրեն բազմապիսի անընդհատ ձևափոխություններով հանդերձ չի անցնում 50—60 հնչյունից, յեթե չհաշվենք իհարկե հնչական նրբություններ, վորոնք դեռ ֆոնեմա չեն դարձել և հասարակախոսների դեռ չեն դիտակցվել իբրև լեզվի անհրաժեշտ և տիպիկ միավոր—տառդ։ Այդ և մարդկության նվաճումը, սկսած նրա կենդանական վիճակից, յերբ կա-

յին ամենից շատ հնչա-աղմկային դիֆֆուզոյիդ բարդուբյուններ. և արտաբերման (ներշնչողին թե արտաշնչողին) վայրը ավելի շուտ կոկորդն ևր, քան բերանի խոռոչը։ Իսկ յեթե թուքակը կաթողանում և նմանապես արտաբերել մեր հնչյունները, ապա հաստատ կարելի յե ասել, վոր մեր հնչյունական (և հնչական՝ ֆոնացիոն) կողմը դեռ շատ չի «կատարելագործվել»։

ԱՐՏԻԿՈՒԼԱՑԻՈՆ ԲԱԶԱ

Լեզուները իրենց զարգացման վորոշ աստիճաններում կարող են ստանալ արտասահմանական (հնչյունական) վորոշ ունակուբյուններ, վորոնք վոչ մի կապ չունեն այդ լեզուն կրող ցեղի կամ ազգի հետ, այսինքն՝ չկա այդտեղ ռասայականության ֆակտոր։ Տվյալ այդ լեզվի ֆիզիոլոգիական (հնչա-արտաբերման) պայմանների վորոշ փոխանուբյունը կոչում են «արտաբերական բազա» (артикуляционная база), վորն իբրև պատմական զարգացման վորոշ որինաչափուբյուն յուր հերթին հնչյունական փոփոխուբյան անմիջական գործոն կարող և լինել։ Ուրբաքանչյուր լեզվի այդ պատմականորեն ստացված արտասահմանական ունակուբյունը յուր բառերի (և խոսքերի) կամ հնչյունների կոնկրետ հնչումների մի փոխանուբյան ժամանակավոր արտահայտուբյունն և, վորով այդքան տարբերվում են լեզուները (իրենց հնչական կողմերով) միմյանցից։ Մենք կյանքից գիտենք, թե վորքան դժվար և մեծին յուրացնել մի ուրիշ լեզվի յուր սպեցիֆիկ արտասահմանուբյունը։ Մենք գիտենք նաև, վոր ամեն մի լեզվի անհատ կրողն անդամ կարող և ունենալ յուր «արտիկուլացիոն բազան», վորով այդ անհատը և տարբերվում և ուրիշներից (ինչպես և իրեն այլ շարժուններով). սակայն մեզ համար կարևորն և ընդհանուր ցեղական կամ ազգային լեզվի հնչա-արտաբերական բազան, վորն և լեզվի զարգացման տեսակետից արժեքավորը և հաշվի առնելիքը։ Անհատի սպեցիֆիկ հնչա-արտաբերումը կարող և և հիվանդագին ծայրահեղուբյան հասնել, ինչպես այդ տեսնում ենք կակաղների կամ թլվատների մոտ։

Տվյալ լեզվի ձեռք բերած արտիկուլացիոն ունակուբյուններով («բազայով») պիտի բացատրել այն յերևուբը, յերբ, որինակ, հայը բ, ռ, ղ հնչյուններով բառ չի սկսում, այլ դրանց սկզբին ավելացնում և վորևե ձայնավոր (ա, ե), ինչպիսի յե-

բևուլք հատուկ և յեղել, որինակ, և ենթերևնին, բասկերենին, մոնղոլա-թյուրքականին։ Այստեղ վոչինչ սպեցիֆիկ ազգային չկա։ Համեմատեր նաև վորպես պատմական հնչա-ունակութիւն և վրաց յերկու «ր» ունեցող բառի անհրաժեշտ դիսսիմիլացիան (Grigor դառնում է Grigol, Margarita = Margalita, or jer «յերկու անգամ» դառնում է „or jel“ և այլն) կամ ուժեղ բաղաձայն («կրկնակի բաղաձայն») արտասանել չկարողանալը վրաց մոտ, կամ արաբների մոտ յերկու բաղաձայնով բառ չսկսելը և այլն։

Արտիկուլացիոն բազայով և բացատրվում նաև ռուսաց փոխառյալ բառերի հնչյունների «սուբստիտուցիան», յերբ, որինակ, մի ռուսաց стол բառի л «կոշտ» հնչյունը փոխարինվում է մեր լեզվի արտասանյան բարբառի «կիսափափուկ» հնչյունով («ստոլ»), իսկ большевик բառի ճիշտ հնչելու համար դիմում ենք «բայշեվիկ» գրությանը։ Նման տեղական հնչյունների փոխադրութիւն ենք տեսնում նաև ռուսաց пюре, костюм և այլ բառերի „ю“ հնչյունի մեջ, վորն արտահայտվում է յեվրոպական ю հնչյունը (վորը ռուսները չունեն). այդպիսի պատմություն ունեն նաև анафема, Феодор և այլ հունական բառերը, վորոնց առաջնալեզվային հունական θ սպիրանտը վերափոխվել է ռուսերենում յուդած ֆ սպիրանտով (Ֆեոդոր, անաֆեմա...)։ Համեմատեր նաև մեր թբիլիսեցոց կամ դարբաղցոց քեփ, մարիփաթ... և նման բառերի «փ» տեղականը արաբական «ֆ»-ի դիմաց։

Լեզուների այդ հնչյունական քանակի, վորակի և արտասանական սովյալ ունակութիւնների նշանակութիւնը մեծ և մանավանդ լեզուների խաչավորման (խառնվելու) գոյացութեան համար։

Հետաքրքիր և մասնավորապես խառն հայերենի այդ տարբեր հնչյունական-հնչական ֆերմենտների պատմական գոյացումների դրսևորումը*։ Լեզուների խառնման ժամանակ այդ հնչյունական դրույթյունները իրենց արտասանական ունակութիւններով կամ կարող են սինթեսիզացիայի յենթարկվել յերկուսանք, այսինքն՝ յերկու խառնվող լեզուների մեջ և հետևապես դրծոն հանդիսանալ կազմակերպվող մի ընդհանուր լեզվի հնչյունական նոր դրույթյուն («ձայնական դրույթյուն») և արտասանական ունակութիւն («արտիկուլացիոն բազա») ստեղծելու ուղղութեան

* Տես մասամբ իմ «Հայա-արմենական լեզվախմբի ազգակցական բովանդակութիւնը» 1917 թ.

հանդիպ, կամ թե խառնվող լեզվից մեկը, ավելի թույլը և տըն-տեսապես և կուլտուրապես թույլ ցեղինը (այստեղ քանակն էլ նշանակություն ունի), կարող և ամբողջապես տեղի տալ ուժեղ լեզ-վի հանդիպ, իսկ դրա նախկին կրողները յուրացնում են (перени-мают) ամբողջապես նոր լեզուն, բայց իրենց նախորդ արտասա-նական ունակությունները մասամբ ներդրում են նոր լեզվի մեջ։

Համեմատիր աֆֆրիկատ և կոկորդային կամ յեռանալեզվային բաղաձայններին ճոխությունը ոսերի լեզվում (կամ հայերենում), իրրև վերոհիշյալ խառնման հետևանք։

ՀՆԶԵՒՈՒՆԱԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՈՒՆԻ ՆՊԱՏԱԿԱԴՐՈՒՄ

Այս հարցին մենք պիտի միանգամայն բացասական պա-տասխան տանք։ Մի ժամանակ լեզվաբանները առաջ էին դնում հնչյունական (և լեզվի ընդհանրապես) պարզեցման կամ հեշտաց-ման դպրոցը յուր պարզացման մեջ։ Այդ պարզացումը, սա-կայն, վոչնչով ցույց չի տալիս, վոր լեզվի նախորդ հատկում, և չենք ասում «իր սկզբնան անտի», արդեն տվյալները չեղել են հետագա այդ մշակնչնական հեշտացման։ Շատ-շատ այստեղ մոտա-վորապես կարելի յե կռահել մոտալուտ հաջորդ հնչական (և լեզ-վային ընդհանրապես) պատկերի մասին, բայց այն էլ շատ մա-կերևութային կերպով։ Կա միայն առաջացում սկսած յուր սաղմնա-վորումով, հետո զարգացման պրոցեսը և անհետացումը կամ վե-րածվելը նոր վորակի։ Ամեն մի լեզվական տարր (պատկանե-լություն) իրեն լեզվի ընդհանուր ներքին դրության և կրողնե-րի պատմական կացության համեմատ կրում է յուր սպեցիֆիկ փոփոխությունը։

Միակ «պարզեցումը», վոր նկատում ենք լեզվի այդ դիալեկ-տիկ զարգացման հետևանքով, այդ հնչյունական բովի և արտիկու-լացիայի ավելի դեպի առաջ գալն է, այսինքն՝ կոկորդից փոխա-դրվելը բերնի խոռոչը, հազագային (կոկորդային) բարդ «կխաս-կենդանական» ազդուն-հնչյունների հեշտարաշխվելը՝ վերածվելը իրենց պարզ հնչյունական միավորների։ Բայց այս յեղել է մար-դուս կուլտուրականության կամ, ինչպես Ենգելն է ասում, «ար-տիկի մարդկայնացման» հետևանք, վորպես աշխատանքի նման-ման արդյունք (վորով և մարդը իրոք վոր մարդկայնանում է)։ Դեռ մարդկային լեզվի պատմական շրջանում մենք տեսնում ենք շատ հազագային հնչյունների կամ անհետանալը կամ փոխարինվելը

ավելի առաջնալեզվային հնչյուններով։ Որինակ, արաբական k հնչյունը («'այն» տառով և գրվում) այժմ դարձել և սոսկ կոկորդային հպում—պայթուց, վրաց հին k· k͡x հնչյունները նմանապես անհետանում են բարբառներում (իսկ վերջին բարդ հնչյունը այժմ գրականում վերածվել է միայն հասարակ x հնչյունի), ինչպես վոր չկա արդեն k հնչյունը լազերենում (ճաներենում), իսկ մեգրելերենում նա վերածվել է կոկորդի պարզ հպման—պայթման, նման արաբերենին։ Աֆրիկայի հետամնաց ցեղերի մեջ ներշնչական հնչյունների քանակը սահմանափակ է։

Այս արտասանության առաջ ընթանալը կոկորդից դեպի բերանը, ինչպես ասացինք, մարդկության կուլտուրականացման և նվաճման արդյունք է և ունի յուր որոշական զարգացման հաջորդականությունը, պատմություն։ Այս յերևույթը բնավ չպիտի շփոթվի արտասանության հնչտացման (պարզեցման) նախադրյալ կամ նպատակադրում ունենալու հետ։

Իսկ լեզվի հնչյունական զարգացումը վորքան ասեք այժմ որինակներ և տալիս և հակառակ ուղղության մասին, այն է՝ պարզ միավորը բարդանում է (համեմատիր k կամ t հնչյունների c, č, ç, հնչյունների վերածվելը, տատանել—ծածանել, թորել—ծորել. теку—течёшь, корот-ить—укорачивать, նմանապես՝ д> жд, ինչպես՝ веду—вождь, город—гражданин, և այլն և այլն)։ Մեր լեզուների պատմական ժամանակաընթացքում—այսինքն՝ յերբ գրի յեն առնվել—աֆրիկատ հնչյունների մեծ մասը տառացվել և պարզ պայթականներից։ Ի՞նչ և ավելի պարզը—հին острый ից այժմյան острый, հին остров ից այժմյան остров (նմանապես струя < сруя, ժողովրդական страм < срам բառից և այլն), նման հայոց սուրա < սրա կամ գերմաններեն strom <srom նման բարդացման։ Համեմատիր նաև հետևյալ բարդացումները—գրաբարի դմբել > դմբրել, թմբել > թմբրել, ժողովրդական համբել > համբրել, ուժր (=կյանք)> ուժրր և այլն։ Լեհերենում հին պարզ r (=մեր «ր») հնչյունը, ինչպես դիցուք речь (=խոսք) բառի մեջ, այժմ rž (ր͡ժ) բարդացման միջոցով վեր և ածվում այդ յերկվության մի պարզ հնչյունի, այն է ž (ժ) հնչյունի։ Ել չենք խոսում այնպիսի «հնչտացման» մասին, յերբ առաջնալեզվային կամ շրթնային բաղաձայնը փոխարինվում է յետնալեզվային («դժվար») բաղաձայնով, ինչպես մեր բարբառներում—«վոստղ» դառնում է «կոստղ», կամ «վոզնի»> «կոզնի», «պատոր»> «կատոր», պորինջան> կորինջան և այլն։

«Բարեհնչունքյուն» կոչվածը, յերբ յերկու ձայնավորների մեջ ներս և ընկնում դրանց արտիկուլացիան փոխանցող մի յերբարդը (օրինակ, եի > եյի, սա և > սա յե... կամ քաոս > քաոս, (հին՝ հաոց > հաուց, արքաուքյուն > արքաուքյուն..), այդ բոլորը չունեն խոսողի կողմից «բարեհնչունքյան» նախապատրաստում, կամ իբրև լեզվի մի պերմանենտ հատկություն։

Շեշտում և շատ լեզվաբանների կողմից մոր, որինակ, ֆրանսերենը յուր պատմական զարգացման ընթացքում (ժողովրդական լատիներենից սկսած) յուր արտասանական բազան փոխադրել և լեզվի յետին մասից դնել դրա առաջին մասը, ինչպես մոր նկատում և k> ֆ փոխանցման մեջ (լատիներեն cantare «յերգել» > ֆր. chanter, canis «շուն» > ֆր. chien, լատ. camera «սենյակ» > ֆր. chambre* և այլն)։

Ահա թե ինչ և գրում Ա. Տոմսոնը ռուսերենի և ֆրանսերենի մասին. «В русском языке, в отличие напр. от французского, язык в общем артикулирует более задними частями, если не считать часто встречаемую в русском языке палатализацию согласных. При переходе от русской к французской речи язык подлается вперед, и двигательная энергия как бы переносится на передний язык» (տես նրա Общее языковедение, եջ 216—217)։ Սակայն, Տոմսոնը մոռանում և, մոր մեր աչքի առաջ այժմ ֆրանսերենը, ինչպես և դերմաներենը, առաջնալեզվային «հնչող» r (=մերը) սոնանտը այժմ փոխարինում են յետնալեզվային դժվար «rc»-ով, ինչպես ֆր. parler (=պարլե), Paris (Պարի), tres (=տրե)..., կամ գերմ, Vater (Ֆաաթեր), aber (=աբեր), Mutter (=Մուտեր) այլն. ուր այդ յետնալեզվային «r» հնչյունը («r» grasseyée=картавое «r») մոռանում և մեր «ղ հնչյունին (սակայն նույնը չե), արտասանվելով մասամբ քիմքի իջոցքի—լեզվակի (uvula) միջոցով, մոր մեզ (հայերիս) համար դժվար և արտաբերել։ Այստեղ մենք տեսնում ենք ֆրանսերենում և գերմաներենում հակառակ պրոցեսը։ Հետևապես, դիտական չե մորևե լեզվի պատմական մի ավյալ ընթացքը համարել այդ լեզվի թեկուզ հնչյունական կողմի զարգացման չափանիշը, անտես առնելով դրա պատմական զարգաց-

---

* Այստեղ mbr բարդացումը mr ավելի պարզից նման և հայոց նման յերևույթին (թմբել > թմբրել, ումբ > ումբր...)։ Նույնը կա և անգլերենում, որինակ, nomber ասացվել և nomer (=համար, թիվ) բառից։

ման բարդ դինամիկան, անտես առնելով մյուս լեզուների նման պատմականությունը:

Լեզվի այս «պարզեցման», «բարհնչացման» և նման նպատակադրման դեմ շատ իրավացի բողոքում եր յուր ժամանակին Բոդուեն դը-Կուրտենեն, ինչպես և այլ լեզվագետներ:

Մենք ասացինք, որ մի ժամանակ գերմանական լեզվագետ Շլեյխերը և յուր հետևորդները, ազդվելով Հեգելից ցանկանում եյին լեզվի զարգացման մեջ, յուր հնչառնարանական կողմերում, տեսնել յերկու ժամանակներ՝ ստեղծագործական (созидательный) և քայքայիչ (разрушительный), պնդելով այդ տեսակետի վրա հատկապես հնդեվրոպական «նախալեզվի» և հետագա յուր ձևերի (ձևափոխությունների) վերաբերմամբ: Սակայն այդ տեսակետը իրավամբ չընդունվեց լեզվագետների կողմից, որովհետև լեզվի զարգացման մեջ ամեն մի նորը, յերբեմն վոչնչացնում և նախորդը, բայց և միևնույն ժամանակ ստեղծում է. Նա քայքայիչ և և միևնույն ժամանակ ստեղծագործող: Այս վերաբերում և և լեզուների հնչական փոփոխությունների:

Հետևապես հնչական (և լեզվական՝ ընդհանրապես) զարգացման մեջ մենք չենք կարող տեսնել վորևե նպատակ, նպատակադրություն: Հենց մեր լեզուների պատմական զարգացման ընթացքում հնչյուններ կարող են առաջանալ, վորոնց ադրմերը շատ առաջ չեր կարելի նշմարել, և վորոնք վորևե կանխադիր նպատակ չեյին կարող հետապնդել, այլ առաջանում են՝ յելնելով լեզվի անմիջական (նախորդ) ոճյալ դրությունից: Վոչ ռոմանական, գերմանական, ռուսական... և վոչ էլ մեր լեզվում, օրինակ, չեր յեղել f (մեր ֆ) հնչյունը, այլ վորոշ լեզվում և վորոշ պատմական շրջանում նա ստացվել և նախորդ p (մեր պ) հնչյունից (գերմ. Vater հին phater < pater ձևից), վորոշ լեզուներում հին b-ից (=մեր բ), ինչպես լատիներենում (fero «բերում եմ» հին ber—<bher—արմատից), վորոշ լեզուներում հին v-ից (=մեր վ), ինչպես օրինակ, ռուսաց вход, встреча, второй... (=ֆխոտ, ֆստրեչա, ֆտարոյ..), վորոշ լեզուներում հին «hv» հնչակոմպլեքսից, ինչպես մեր բարբառներում (hogi զառնում և hvogi, սա էլ՝ fogi)* և այլն և այլն: Այդպիսի նոր հնչյուն

---

* Այդպես էլ —հոբք > հուոբք (հուբբք) > հվոբդ (հվբբք) > ֆոբք ‖ ֆուբբք. հոր > ֆուբբ և այլն: Հին «հարաւային» բառը մենք հնչում ենք «հարաֆային», ուր «ֆ»-ն ստացվել և այլ պայմաններում:

և և ձեր «ղ» հնչյունը, որը լինելով առաջնալեզվային «լ» (ձեր այբուբենական շարքում նա գրավում է հունարեն «լամդա»-յի տեղը), նման ռուսաց ЛЬ «կոշտ» հնչյունին, ուներ և լեզվի յուրային մասի փոքր բաթձրացում։ Սակայն դարերի ընթացքում այդ յնանալեզվային արտիկուլացիան դերիչխում է, հետագայում վանում և առաջնալեզվայինը, և այդպիսով ստացվում է նոր հնչյուն՝ յնանալեզվային ղ։ Իսկ մորքան հարուստ են ձեր բարբառները խրենց բազմապիսի, միանգամայն նոր հնչյուններով, որոնց մասին չէր կարելի սկզբից կռահել յնթե գրի առած ունենայինք դրանց հաջորդական զարգացման ետապներն անգամ։

Արդ, ուրեմն, լեզվի հնչական (և ձևաբանական) զարգացման մեջ մենք չենք տեսնում նպատակաբանություն («տելեոլոգիա»), որը իրավամբ մերժվում է այժմյան լեզվագետների կողմից։

ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Լեզվի հնչյունական մասի փոփոխություն ասելով՝ մենք պիտի հասկանանք սոսկական բառերի այդպիսի փոփոխությունը, վերցնելով այդ բառերը հարկավ նախադասություններն կամ ասույթներն (ժողերի) մեջ և լեզվի զարգացման պատմական ընթացքում։ Այդպիսով մենք աչքաթող ենք անում լեզվի (resp. բառերի) սկզբնական բարդ հնչա-ազմկային արտադրությունների վերածվելը պատմական շրջանի տարրորոշ հնչյունների կամ աղմուկների։ Այդ վերջին հարցն ևս իրեն ծագումնաբանական (գենեալոգիական) նշանակություն ունի, հատկապես յերբ մարդը կիսակապկային վիճակից հետզհետե բարձրանում է, «մարդկայնանում է»։ Սակայն մենք այստեղ անտեղյուր ենք լեզվի (resp. բառերի) այդ հնչյունական փոփոխությունները՝ նրա մեզ հայտնի պատմական ետապներից յելած։ Այդ հայտնի և գենեալ վիճակից քաղելով մորոշ տվյալներ, մենք կարող ենք ընդհանրացումներ կատարել և մորոշ չափով նմանը յենթադրել լեզվի նախապատմական շրջանների համար։ Այդ դեպքում, հատկապես հնչյունների զարգացման կոնկրետ որինաչափությունները յերևան բերելիս, մենք քիչ սխալ դործած կլինենք, նմանը վերագրելով լեզվի նախորդ, մեզ անհայտ շրջաններին։

Մենք արդեն ժամանակ յենք, որ լեզվի տվյալ արատանական, այսպես ասած «ստատիկ» դրության մեջ անդամ միանգամայն գենեալ յեն հնչյունական փոփոխությունների վո-

բոլ շարժիչ մոմենտներ, դրդապատճառներ։ Բայց կան և այնպիսիք, որ միայն շոշափելի չեն դառնում տեսական պրոցեսից հետո, լեզվի զարգացման յուրաքանչյուր ժամանակվա ընթացքում, որը առիթ է տվել այդպիսի փոփոխությունները կոչել «պատմական հընչյունափոխություն» (պայմանական տերմին է և գոյն է ածվում Բոդուեն դը-Կուրտենեյի կողմից)։ Ճիշտը կլիներ կոչել «ընդհանուր պատմական հնչյունափոխություն»։

Հնչյունական փոփոխությունները բառի մեջ կատարվում են կամ որոշ հնչյունների անհետացումով կամ նորերն ավելացնելով կամ դրանց որակական փոփոխություններով և կամ դրանց (հնչյունների) դասավորման՝ տեղի փոփոխմամբ։ Այդ փոփոխությունները կարող են կապված լինել հնչյունի դիրքի հետ բառի մեջ (resp. բառաշարքի) կամ կարող են կատարվել անկախ այդ պայմանից։ Առաջին դեպքում փոփոխության անմիջական պատճառը կարող է լինել հնչյունի արտաբերման (արտիկուլացիայի) կամ հոգեբանական ուղղորդության ազդեցությունը, իսկ երկրորդ դեպքում՝ սոսկ հնչյունաբանականը, արտիկուլացիոն մոմենտը։ Փոփոխության այդ վերջին տեսակն է («պատմական հնչյունափոխություն»), որ կրում է ընդհանուր և անհրաժեշտ բնույթ, դրսևորվելով բոլոր դեպքերում, անկախ հնչյունի դիրքից բառի մեջ։ Իսկ յուրաքանչյուր բացառություններ են լինում, ապա այդտեղ շեղող (խանգարող) հանգամանք և ծառայում մեր նշած առաջին սահմանափակությունը, այն է՝ հընչյունի դիրքը (պայմանավորվածությունը) բառաձիլում։ Միայն այդ վերապահումով և միայն որոշ պատմական ժամանակաշրջանի համար կարելի է ասել, որ հնչյունական «պատմական» փոփոխությունները (հնչյունափոխական «օրենքները») բացառություն չունեն։

Անցնենք կոնկրետ դեպքերի նկարագրությանը, որ հնարավոր բերելով հարկավ միայն յուրաքանչյուրը արձանագրելու տեսակետից, այն էլ՝ ամենացայտուն հնչափոխական յուրահատկությունները։ Իհարկե բոլոր նման փոփոխությունները անհնար և մեզանից բերել և այն էլ՝ բոլոր լեզուներից։ Հիմնական փոփոխությունները արդեն շատ լավ նկարագրում են լեզուների այդ ընդհանուր հնչափոխության դեպքերը և դրանց անմիջական դրդապատճառներն ու առանձնահատկությունները։

Այստեղ քննվելու են այն հնչյունական փոփոխությունները, որոնք սոսկ այդպիսին էլ ձևում են, ինչպես, դիցուք

«հայր»-ը դառնար «հեր», աղբայր»-ը > «ախպեր», «խեղդել»-ը > «հեխտել» և այլն, իսկ այն փոփոխությունները, որոնք առաջ են բերում նոր բառաձև (թեքման կամ բառակազմության տեսակետից)*, այդ մենք կքննենք «Ձևաբանություն» հատվածում։

Մենք վերջնում ենք հնչյունական փոփոխությունները իրենց անմիջական ժոտիվներով՝ դրդապատճառներով—ֆիզիոլոգիական (արտիկուլացիոն) և հոգևոր, լինի հնչյունը պայմանավորված յուր դիրքով բառի (բառաշարքի) մեջ թե վոչ։ Հաճախ ել այդ յերկու փոփոխիչ դրդապատճառները շաղկապվում են, այսինքն հնչյունի փոփոխությունը կրում և ֆիզիոլոգիական («ֆոնետիկական», «արտիկուլացիոն») և հոգևոր մոտիվների խառն (շաղկապված) աղերսություն։

Վորոնք են հնչյունական փոփոխությունների կոնկրետ տեսակները։

1

Բառասկզբում, յերբ ձայնավորով ենք սկսում, կարող են լինել հնչյաարտաբերման աշխատանքի տարբեր մոտեցումներ։ Մենք գիտենք, վոր ձայնավորները ձայնալարերի ոգնությամբ են հնչվում (յեթե դրանք չենք շշնջում)։ Արտաանական դադարից հետո, յերբ այդպիսի ձայնավորներով ենք սկսում նախադասություն, կամ ամեն մի բառը յուր սկզբնական ձայնավորով, հաճախ տեսնում ենք, վոր մեր արտաանության համար թոքերից հոսող ոդը և այդ ձայնավորների համար արտադրվող ձայնալարերի աշխատանքը տարբեր կամ ժամանակ ժամանում են հայտնաբերվում։ Որինակ ֆրանսերենում կամ ռուսերենում բառասկզբի ձայնավորի կամ ձայնալարերի այդ վիբրացիոն (թոթռուն) ժամանակը զուգադիպում է ոդի հոսանքի սկզբնավորության հետ և ստացվում է, ինչպես ասում են, «մեղմ սկզբնավորություն» (тихий приступ)։ Սակայն, այլ և, որինակ, գերմաներենում, ուր ձայնալարերը կծկված (աղմված) են լինում, և շեշտավոր ձայնավորով բառ արտաանելիս մենք ստանում ենք ձայնալարերի «պայթում», իբրև լուծում այն հպման, վոր հարկավոր եր նախորոք ձայնալարերի թոթռման համար (Eine alte Eiche='այնե 'ալտե 'այխե, ուր ' նշանը այդ կոկորդային

*Այդ ձևաբանական հնչյունափոխությամբ փոխվում է նաև բառի իմաստը կամ նրա ֆունկցիան՝ պաշտոնը նախադասության մեջ։

պայծառ և տալիս)։ Իսկ յեթե ձայնաշարերի ձևերը (անցքը) բաց և, սղմված չեն, և ողը հոսում է՝ նախորդելով ձայնավորի արտասանության համար հարկավոր ձայնաշարերի քնթոմանը, այն ժամանակ առացվում և «շնչունային» արտասանական սկզբնավորություն, վորն արտահայտվում է «h» շնչյունով։

Այդպիսի հնչումը կոչվում է spiritus asper և կար, որինակ հունարենում, լատիներենում և այլն։ Ռոմանական բարբառները այդ շնչումը (h) կորցրել են, շնորհիվ ոդահոսանքի և ձայնաշարերի միաժամանակ գործառնության։ Բայց, որինակ, հայոց բարբառներում ծնունդ և առել «ձայնեղ շնչյունի» արտաբերումը ձայնավորով սկսվող բառերի արտասանության սկզբում, և յեթե առաջ արտասանվում եր ուս, աղագ, ամէն, արի, Աշտարակ, էգուց, իպի (<էգի <այգի) և այլն, այժմ սկսում են արտասանել 'ուս, 'աղաք, 'ամեն, 'արի և այլն։

Այս յերևույթը, իրրև հնչյունափոխության պատմական զարգացման մի նոր դեպք, իրեն առաջացման պատճառները ուներ լոկ արտիկուլացիոն հողի վրա, այն է՝ ձայնավորով սկսվող բառերը, այլ կերպ ասած՝ ձայնավորը, արտասանվել և ձայնաշարերի և ողի հոսանքի միասնական գործածության։ Այդպես և, որինակ, արաբատյան բարբառում, ուր այդ միտումը քանի դնում, այնքան զարգանում է (վորովհետև դեռ շատ կան և հպմամբ—պայծառում արտասանվող ձայնավոր բառեր, ինչպես, ասել, ուտել, իմ, եշ...)։ Նման հողի վրա պիտի բացատրել և դարարագրոց «հինչ» (=ինչ), «հով» (=ով), արաբատյան «հընդրել» (=ընտրել), «հընգկեր» (=ընկեր) և այլ բառերի սկզբնական «h» շնչումի առաջ դալը։ Անգլերենում ժողովրդական բարբառներում «h» շնչումն անհայտացել և, բայց գրական արտասանության մեջ մնացել և, և «ջենտլմեններըը» այսինքն անգլիական բուրժուական խավերը, սիրում են իրենց տարբերությունը (բանվորից) դրանով դգալ տալ։ Գալիվանովն ասում է.

«Опущение звука h в английском, хотя довольно распространено, но считается вульгаризмом, не достойным подражания, например, у Thackeray'a приводится воззрение, что для джэнтльмена невозможно жениться на девушке, которая drops her h's. Интересно, что лица необразованные, говору коих свойственно такое опущение h, часто при попытках быть корректным в языке, вставляют этот звук там, где не нужно...», բերելով դրա համար

մի հետաքրքիր անհնդոտային պատմություն (տես նրա Лекции по введению в языкознание и общей фонетике, Берлин, 1923, էջեր 25—26)։

Ինչպես տեսնում ենք, բառասկզբի դիրքը վորոշ լեզուներում և իրենց վորոշ պատմական հատվածներում կարող է ունենալ հնչյունական փոփոխությունների համար հատուկ նշանակություն, մանավանդ ձայնավորով սկսվող բառերի նկատմամբ։ Բայց այս և նման հնչյունափոխությունը, վորն ունի յուր ֆիզիկո-ֆիզիոլոգիական արտաբերման անմիջական մոտիվները, պիտի հասկացվի լեզվի ընդհանուր պատմական զարգացման ֆոնի վրա, դրա ընդհանուր տվյալներով։ Այդ պատմականության համար, այդ լեզվական պատմական կացության համար է, վոր բացատրվում է «h» հնչյունի անհետացումը ֆրանսերենում, իտալերենում, իսպաներենում և այլ ռոմանական բարբառներում, այն ինչ դրանց զարգացման լատինական (ժողովրդական լատիներենից) ֆազայում այդ «h»-ն կար։

Հայոց բարբառների ձայնեղ սպիրանտ առաջ դալը բառասկզբում կապված է նաև այդպիսի սպիրանտով բարդված b', d', g', j', ǰ' (=բ', դ', գ', ջ', ձ') բաղաձայնների հետ (բ'ան, դ'ուռ, գ'ոմ, ջ'ուր, ձ'են...), վորոնց չպիտի շփոթել ph, th, kh... ասպիրատների հետ, ուր «h»-ն խուլ է։

Ձայնեղ սպիրանտ սկսում և առաջանալ և մի շարք ուրիշ բարբառներում։

Բառասկզբի դիրքը հնչափոխության համար կարևոր է նաև բաղաձայնով սկսվող բառերի համար, մի հանգամանք, վորի վրա ուշադրություն չեն դարձրել լեզվաբանները։ Հենց մեր վերը բերած ասպիրացիայի («h»ընչումի) առաջ դալը կամ անհետացումը կարելի է մանավանդ վրաց լեզվում, ուր այդ բառասկզբի նոր առաջացած «h»-ն հեշտ փոխանցվել է s սպիրանտի (տեսի ընդունենք Մառի տեսակետը), ինչպես speti = պետ, (պարսկ. pati բառից) sparsi = պարսիկ, spiloy = փիղ (= պարսկերեն pīl), spilenji = պղինձ (պարսկ. birinǰ)։ Սակայն, յերբ հետագայում հին «h»-ն սկսում է վրացերենում անհետանալ, ինչպես hune > une (= ձի), hormoy > ormo (= փոս), uriay = հրեայ (< հուբիայ), ambovri = համբույր, arami = արաբերեն haram (= հարամ), ša = պարսկ. šah (= թագավոր)* և այլն, այդ

---

* Համմ. նաև šanše հատուկ անունը «շահնշահ» ձևից։

speti, sparsi և այլ բառերի «sp» բարդությունը մեծ մասամբ ունում են Մակայն, չեթե այդ բառերի սկզբի «s»-ն «p» բաղաձայնից առաջ նոր հնչյուն է, այսինքն՝ հնարագայում է առաջացել, դրանից դեռ չպիտի չեզրակացնել, որ բոլոր նման sp, sr ,sv, sk... կոմպլեքսները այդ պատմությունն ունեն. որինակ կան rba և srba «վազել», kidva և skidva «գնել», vla և svla «գնալ», ni-karti և ni-skarti «կտուց» և այլն, և իզուր Մառը նման սխալ եզրակացությունն է անում (ճիշտ են միայն վրաց xvadagi հին xvastaki «անասուն, տավար» ձևից, leki «լեզգին» leski ձևից..)*

2

Նմանապես հնչյունափոխական նշանակություն կարող է պատճառել բառին հնչյունի դիրքը այդ բառի վերջում. Ուրուս լեզուներ, որինակ, ձայնեղ բաղաձայնները բառավերջում դարձնում են խուլ, որովհետև այդ դեպքում գոյություն ունի բաղաձայնի միայն հնչման կամ քավելու ժամանակը, բայց ոչ պայթման, չեթե ձայնեղությունը պիտի լսելի լիներ։

Համեմատելը գիտական տառադարձությամբ գրված ռուսաց rok, rot, vos, և այլն, որոնք կարող են լինել ռուսաց por (=կուռշ) և рок (=ճակատագիր), рот (=բերան) և род (=ցեղ), воз (=սայլ) և այլն, այն ինչ չեթե դրանց վերջից ավելացնենք մի ձայնավոր, այն ժամանակ խուլ և ձայնեղ բաղաձայնի տարբերությունը լսելի չե (համեմատելը pora, pory...; рока, року...; воза...)։ Այդպես և և դերմաներենում, ինչպես, ըստ իս, և հայերենում։ Ցեվ չեթե անգլերենում կամ ֆրանսերենում պարզ կերպով տարբերում են բառավերջի ձայնեղ բաղաձայնը խուլից, ապա դրա պատճառը այն է, որ կամ լսվում և դրանցից հետո մի «իրրացիոնալ» ձայնավոր (նման մեր «ը» ձայնավորին), կամ թե սպիրանտ (ֆրիկատիվ) ձայնեղ բաղաձայնը ուժգին և տևականորեն և հնչվում, ինչպես են, որինակ, անգլերեն «ֆայֆ» (գրվում և fife և «ֆայվ» (գրվում և five), «սեֆ» (safe) և «սեվ» (save), «հիս» (hiss) և «հիզ» (his)..., կամ ֆրանսերեն—«վիֆ» (գրվում և vif) և «վիվ» (գրվում և vive), «կաշ» (cache) և «կաժ» (cage) և այլն։

---

*Տես Н. Марр, Грамматика древнелитературного грузинского языка, Ленинград, 1925 г., стр. 17—18.

Այս հարցի առթիվ Պոլիվանովը նկատում է. „В ряде языков есть тенденция против произношения звонких согласных на конце слова. Она объясняется склонностью не доделывать работу голосовых связок перед тем моментом, когда им предстоит перейти в состояние покоя“: *Բերելով այնուհետև վերոհիշյալ որինակները ֆրանսերենից ու անգլերենից, ինչպես և շեշտելով դրանց հակադիր ռուսերենի կամ գերմաներենի չտարբերելը բառավերջում այդ ձայնեղ և խուլ բաղաձայնների, նա ավելացնում է.* „Во всех прочих позициях кроме конечной в слове, русские обыкновенно верно различают французские и английские звонкие от соответствующих глухих, но это трудно дается некоторым (в зависимости от диалекта) немцам“* *(տես նրա* Лекции по введ. в язык. и общ. фонетике“, *էջ 29։*

Բառավերջը կարող է «խուլության» պատճառել մինչև իսկ սոնանտ հնչյուններին, երբ դրանց նախորդում է խուլ բաղաձայն, ինչպես, որինակ, ռուսաց Петр, смотр, театр, министр *և նման բառերի վերջում «р» սոնանտը խուլ է հնչվում, այսինքն՝ առանց ձայնալարերի աշխատանքի, մորովհետև նախորդ խուլ «т» բաղաձայնը տղդում է։ Բայց կեթե ավելացնեյինք մի վոր-ևե ձայնավոր, որինակ,* Петра, смотру, театры..., *այն ժամանակ «р» սոնանտը կլիներ յուր սովորական ձայնեղ վիճակում։ Հետևապես այդ բառավերջի* tr *արտասանության («р» սոնանտի խուլ հնչման) նկատմամբ դեր է խաղում վոչ միայն «т» նախորդ խուլի առաջընթաց ասսիմիլյացիան, այլև բառի «р»-ով վերջանալը, բառի դադարը այդ «р» սոնանտի վրա։ Բառավերջի դերքն այս դեպքում նմանապես դեր է խաղում։*

Թևրևս բառավերջի դերքի պղտեցության պիտի բացատրել վորոշ հնչյունների անհետացումը իրենց պատմական ընթացքում։ Այդպես են, ըստ իս, ռուսաց (սլավոնական) мать, брать, дочь..., *հին* mater, bhrater, duster... *ձևերից (համեմատիր նաև նրանք սանսկրիտաբերենում, ուր* mata = *մայր, ուղղական հոլով և, ունենալով թևք հոլովներում* matr—*բուն, նման ռուսերենին—*

* *Մատնանշենք մեր կողմից իրրև փաստ, թե վերջին տարակուսանքի մեջ և դրել մի գերմանացու, երբ նա ասկորելով ռուսերենը, յուր «գրիպոր», արտասանության տակ հասկանում է ռուսաց* собор (=տաճար), забор (=ցանկապատ) և запор (=փորկապ), *գերմանալով այդ տարբեր նշանակությունների վրա։*

матери, дочери...)։ Նոր հայերենում ասում ենք «տալիս եմ, գալիս եմ, լալիս եմ», բայց «չեմ տալի(ս), չեմ գալի(ս), չեմ լալի(ս), ուր այդ վերջի «ս»-ն կարող է և չհնչվել (մեծ մասամբ այժմ չեն արտասանում արարատյան բարբառում)։

Հայտնի չի բոլորիս ֆրանսերեն լեզվում բառավերջի հնչյունների (թե բաղաձայն և թե ձայնավոր) անհետացումը, հապավվումը, որ յերբեմն կուրյողի չի հասնում նախկին բառերի այժմյան ձևերը—համմա. tą հին temps (=լատիներեն tempus «ժամանակ» ձևից), jour (=որ) հին diurnum ձևից և այլն։

Մեր հին կարասի, տեղի, պատասխանի բառերի վերջի «ի» ձայնավորի անհետանալը թերևս հնից այդպես բացատրվի, որովհետև հնից գրաբարում ունեինք հիւսիսի և հիւսիս, իրրև ուղղական հոլով, արծուի և արծիւ (ուղղ. հոլ.)։ Համեմատիր նմանապես մեր արարատյան բարբառի ք'ե, կ'ե, դ'ի... (=քեր, կեր, դիր...) կամ պարսկերեն հին —ak վերջածանցների a-յի վերածվելը) namak > nama, bandak > banda և այլն) կամ հին արաբերենի իգական սեռի—at վերջավորության a-յի վերածվելը (surat > sura, dovlat > dovla, xasiyat > xasiya...)։ Իհարկե այդ բոլոր դեպքերը յուրաքանչյուր լեզվի զարգացման կոնկրետ պատմության մեջ պետք է քննվին, որովհետև շատ անգամ այլ ֆակտորներ էլ են միջոցի գալիս և խաչավորվում։ Որինակ, յեթե ֆրանսերենում բառավերջի temps, vin, pont..., ą, ę, o... ձայնային ձայնավորները պահվել են, կազմված լինելով սկզբնական an, en, on պարզ միաձուլություններից, որովհետև այդ լեզվի արտասանական ավյալ դրություններ (զրազան») այդ ևր պահանջում, —մի յատկանիշներ ունեն, որինակ, հին on վերջավորությունը չի վերածվում ունգային պարզ ձայնավորի (որովհետև, թերևս, լեզվում այդ վորակի հնչյուն չեր առնդվել, չկար), և ունենք այնտեղ ուղղական հոլովներում constitutio, natio և այլն, բայց թեք հոլովներում պահվում է constitution-, nation-բուները (որինակ, սեռական constitutionis, տրակ. constitutioni, հայցական constitutionem և այլն։)

Այժմյան գերմաներենի բառավերջի հին «r» ձայնավոր վերածվելը «ուվուլար» r բաղաձայնի (նման մեր «ղ»-ին) թերևս պայմանավորված և մասամբ հնից յուր դիրքով։ Ցավի, կարող է պատահել, որ շատ մոտ ապագայում այդ «über, aber, Mutter, Wasser բառերի այդ վերջի «ուվուլար» r բաղաձայնը այդ աբ-

սիկուլացիոն տեղափոխության հետևանքով անհետացած, և գերմանացիք արտասանեն übe, abe, Mutte, Wasse *և այլն)։*

3

Բառամիջում յերկու հնչյունների միջև առաջացած կամ դրանց փոխադրության հետևանքով ստեղծված նոր հնչյունների հայտնագործվելը բավմասնակ և ըստ յուրաքանչյուր լեզվի և յուրաքանչյուր պատմական ժամանակաշրջանի։ Անտես առնելով այն յերկու ձայնավորների կոնտամինացիայի հետևանքով առաջացածները, վորոնք լինում են թե բառի մեջ և թե հատկապես բառաշարքի մեջ,— համեմատեր սա չե, ուտելու չե, Աննային, Մարուկիկին..., արքավություն («արքայություն»), «հաւոց» (=հայոց, ըստ մեր վորոշ ձևագրերի) և այլն,—մենք ժամանակնիս այստեղ նման արտիկուլացիոն յերևույթը յերկու բաղաձայնների միջև։

Նախ, կժամանակնշինք ասպիրատների գոյացումը յուր յերկու բաղադրիչ հարևան բաղաձայններից, յերբ p+h, t+h, k+h *դառնում են* pʻ (=մեր փ), tʻ (=թ) kʻ (=ք), *կամ մեր բարբառներում նաև նման ձայնեղ ասպիրատներ* (bʻ dʻ gʻ ǰʻ ɟʻ)։ *Որինակ, մենք ունենք «սեփական» բառը յուր «փ» մխասնական ասպիրատ բաղաձայնով, բայց գիտենք նաև, վոր դա առաջ գրբվել և արտասանվել և «սեպհական» < «սեպըհական» ձևից, վորը յուր հերթին ածանցվել և «սեպուհ» բառից (—ական ածանցով)։ Ի՞նչ և ստացվել այդ բառահնչումի պատմական ընթացքում։ Առաջացել և արտիկուլացիոն մխասնականություն* p+h, *յերկու անջատ հնչյուններից, իրրև* pʻ (=մեր փ), *վորն արդեն յուր մեջ պարունակում և թե «p»-յի և թե «h»-յի արտիկուլացիոն մոմենտները, սակայն վոչ հաջորդականորեն և անջատ, այլ միասնաբար, իրրև մի անանջատ բաղաձայն։ Նման դեպք լեզուների մեջ շատ կարող և պատահել, և դրանց բացատրությունը բղխում և միմիայն ֆիզիոլոգիական անմիջական դրդապատճառից։ Այդպես նաև շուտ արտասանության ժամանակ մենք լսում ենք «այս աղբանքը շատ փոդ էանի» (=կհանի), «նա վարժապետ ունի (=նա վատ համբավ ունի), իրրև արտասանական ամբողջության բղխած։*

Մեր հին «զատել», «զարկել» և նման կազմություններ, վորոնք առաջացել են «զհատել» և «զհարկել» ձևերից (համեմատեր գրաբարի «հատանեմ» և «հարկանեմ») նմանապես ալի-

տի բացատրել արտիկուլացիոն անմիջական մոմենտներով։ Մենք գիտենք, որ «ղ» բաղաձայնը սպիրանտ է (придувной), հընչ-ւում է տեսականորեն և «փչելով» (որչ պայթմամբ), և հետևապես յուր մեջ արդեն մասամբ պարունակում է «հ» շնչյունի մոմենտը. հետևապես այդ *ղհատել, *ղհարկել վերականգնելիք սկզբնական ձևերը բնականորեն (ֆիզիոլոգիական—արտիկուլացիոն տեսակետից) պիտի տեղի տային զատել, զարկել հնչումներին, քանի որ «ղ»-ն արդեն յուր մեջ ունի և կլանում է «հ» շնչումը։

Հետաքրքիր է այստեղ նշել նաև մի յերկու մասնավոր հընչափոփոխություններ, որոնք առաջ են գալիս յերկու բաղաձայնների մեջ, իրրև դրանց արտիկուլացիոն փոխանցման անմիջական արդյունքը։ Որինակ, դիտվում է, որ մի շարք լեզուներում հին sr կամ nr հնչակոմպլեքսների միջև ծագում է t (կամ d)՝ դրանց փոխանցման միջին և կապող բաղաձայնը, ինչպես որինակ, մեր բարբառների «սրա > ստրա», «ընրա > նդրա», «մանր» > «մանդր» (ծանր > ծանդր)... կամ ռուսաց *осрый > острый, *осров > остров, ժողովրդական срам > страм, нравиться > ндравиться և այլն։ Նման յերկբաղաձայնների արտասանական փոխանցման արդյունք մենք համարում ենք և mr > mbr զարգացումը, ինչպես, որինակ, թմրել > թմբրել, դրաբարի զմրիմ > զմբրիմ, ժողովրդական ումր (արաբերեն բառ և=կյանք) > ումբր..., կամ ֆրանսերեն nombre «թիվ» լատիներեն numerus բառից, chambre (շամբր) «սենյակ» բառը, որ առաջացել և լատիներեն camera բառից* և այլն։

Նման զարգացման արդյունք են և «t» բաղաձայնը աստված (դրաբար «աստուած») բառի մեջ հին փռյուգիական savajios (>*Asvaj-io—) հատուկ աստծու անունից, ուր sv արտասանության առաջացել և stv նոր (=հայկական) հնչակոմպլեքսը։

Ընդհանրապես այն պիտի ասել, որ հնչյունափոխական նման յերևույթները կարող են լինել շատ բազմազան. միայն կոնկրետ լեզվում և յուր պատմական հաջորդական ընթացքում դրանք պիտի դիտվեն և յերևան հանվեն։ Մենք բավականանանք միայն բերած որինակներով։

---

* Այդ ֆրանսերեն բառից մենք Կիլիկյան շրջանում ունենք «ջամբռ» (=դիվան) փոխառություն. համեմատիր անգլ. «չեմբեր» (Чемберлен—դիվանապետ)։

Մենք արդեն յուր տեղում խոսել ենք «կրկնակի բաղաձայնի» (consonne géminée) արտիկուլացիոն էությունն մասին, որ դրա մեջ մենք ունենք մոչ թե յերկու բաղաձայն, այլ մի ուժեղ, տևողությամբ և արտասանությամբ ուժգին բաղաձայն, նայած թե բաղաձայնը ձայնոր է, ֆրիկատիվ է, թե պայթական: Բաղաձայնի այդ ուժգնությունը կամ տևողությունը ազդում է յուր նախորդ ձայնավորի վրա և վերջինս դարձնում կարճ: Որինակ, մի «մասսա» բառի մեջ նախորդ (առաջին) «ա» ձայնավորը շատ կարճ է շնորհիվ ուժեղ ու տևական հաջորդ «ս» բաղաձայնի, բայց դիցուք թե «մասա» հնչման մեջ առաջին «ա»-ն յերկար է: Այդպես նաև коммуна, оттого *և նման բառերի մեջ* мм (=յերկար м) *և* тт (=ուժեղ т) *բաղաձայնից առաջ ընկած ձայնավորը կարճ է, իսկ յերբ հնչվեր և գրվեր* комуна, а того *և այլն, այդտեղ* о *և* а *ձայնավորները ավելի յերկար են: Այդ հնարավորով բաղաձայնը մեծ մասամբ լինում է բառի մեջ. բառասկզբում կամ վերջում կարող է լինել իբրև արտասանական ժամրողություն նախորդ կամ հաջորդ բառերի հետ. համեմատիր, որինակ, ռուսաց* с собой (=յուր հետ), к кому (=դեպի ովրը, ում), вот тебе (=ահա քեզ) *և այլն, թեպետ կան և* ссора, вверенный *և նմանները բառասկզբում:*

Հայոց լեզուն, հատկապես յուր բարբառները, առեղծում են այդ consonne géminée-*ն, հավանորեն նաև իմաստի ուժեղության պատճառելու, թեպետ ամեն դեպքում այդ չի յերևում, ինչպես, որինակ, արարատյան բարբառի—ամմենքը, վազղել, շեպել..., բայց և «ուրթը», «ինձը», «տասսը»: Ոտարազգի բառերի ուժեղ այդ բաղաձայնը հայերենում պետք է, ըստ իս, պահել (և գրել կոմմունա, կոլլեկտիվ, ասսոցիացիա և այլն, ինչպես մի ժամանակ գրվել է Յովհաննես, Ովսաննա...), մանավանդ որ մեր լեզվի զարգացման դինամիկան դրան չի խանգարում, ինչպես որ նաև այդպիսի գրությամբ մենք ավելի մոտ կլինենք սովորական յեվրոպական գրության: Բացի այդ, մեր լեզուն յուր ձևաբանության մեջ այդ չի մերժում. համեմատիր—անդորրություն, ուղղել, տատրակ, բարեկամվել, (գրանվորների գրությունը բարեկամվել է»), բզզալ, Աննա և այլն:*

Այդ ուժեղացած բաղաձայնը առաջ կարող է գալ կամ մի սոսկական բաղաձայնի այդպիսի ուժեղացումով, նման մեր բարբառների ամմենքը, վազղել..., և նման բառերի, ազդելով դրանով և իմաստի վրա, կամ թե կարող է առաջ գալ ձևաբանորեն, յերբ

պարզ բառի վերջին բաղաձայնը զուգակցվում և դրան ավելացող ածանցի նույն բաղաձայնով, ինչպես մեր բարելավ-վ-ել, ապահով-վ-ել և այլն (համեմատիր նաև ռուսերենում подать և поддать տարբեր բառերը) և կամ կարող և առաջ գալ ասսիմիլյացիայի հետևանքով (մանները, վոննները...)։ Հնդեվրոպական լեզուներում հետաքրքիր և, որինակ, tt ուժեղացած բաղաձայնի շարժումը։ Սանսկրիտում այդ այդպես էլ մնում և անփոփոխ և, որինակ, մի հնդեվր. sed- (=նստել) արմատից և to- անցյալ դերբայի ածանցից ստացվում և satta- (dt> tt ասսիմիլյացիայով և e, o ձայնավորների փոխանցմամբ a-ի, որն ընդհանուր իրանական յերևույթ է)։ Բայց այլ հնդեվրոպական լեզուներում այդ դեպքում առաջ և գալիս դիսսիմիլյացիա, այն է tt> st. համեմատիր ռուսաց сесть «նստել» * сед-ть ձևից, ինչպես և власть < *влад-ть, класть <* клад-ть և այլն. իսկ վորոշ լեզուներում այդ դիսսիմիլյացիան st դառնում և նոր ասսիմիլյացիայով ss, ինչպես գերմ. sass (նստեցի), լատին. sessio (նիստ) և այլն։

Ուժեղացած բաղաձայնի դիսսիմիլյացիան ենք մենք տեսնում և վրաց kk (մի սոսկական k-ից) բաղաձայնի ck փոխվելու մեջ (brkiali> brckiali («փայլուն»), ինչպես և վրաց xx> çx (խխ> ցխ), ss> sc ինչպես՝ scavla <* ssavla <* *savla*=սովորել (համմտ. մեր բարբառների սավր-ել) և այլն։

Մեր «տմսկվել», «չմշկել» (=ցամաքել) և նման դավառական բառերում մենք ցանկանում ենք տեսնել ուժեղացած բաղաձայնի (կ> կկ> սկ ‖ շկ) դիսսիմիլյացիան սովորական ամկվել (տամուկ «թաց» հին բառից) կամ չվքել < ցմքել (ցամաք) ձևերից, ուր ուժեղացած կկ> ձկ> սկ, իսկ քք> չք> շք> շկ։

Վրաց լեզուն յուր պատմական զարգացման մեջ հայոնի շրջանում չի հանդուրժել այդ «վերնակի» բաղաձայնը, այլ՝ կամ վեր և ածել պարզ բաղաձայնի, կամ էլ դիսսիմիլյացիայի միջոցով վեր և ածել յերկու բաղաձայնի։ Համեմատիր հին աթ-սամ-մետ (=տաս+յերկաք+հավելյալ), վորը նշանակում և «տասներկաք», սակայն հնում հնչվում էր «աթսամմետ», իսկ այժմ «ցամետ» (ուր «ց» բաղաձայնը «թս» բաղաձայնների արտիկուլացիոն մոտությունն է)։ Իսկ consonne géminée-ի յերկարացման (раздвоение) մասին, իբրև դիսսիմիլյացիան յերևույթի, մենք վերևում արդեն ասացինք. համեմատիր նաև վրաց riçxv-i (րիցխվ-ի) «քիվ» արմատը հնագույն *rixxv- <*rixv- ձևից (< wrx բուռ Մառի), կամ veçxli (=արծաթ) <*vexxli <*vexli ձևից և այլն։

Մենք յուր տեղում նմանապես ցույց ենք տվել, թե վորքան մեծ նշանակություն ունի ուժեղացած բաղաձայնը սեմական լեզուներում, ինչպես, որինակ, արաբերենում (kasara «կոտրեց», kassara «չարդ ու փշուր արեց»), ուր հնչյունի ուժեղացումն առաջ և բերում և իմաստի ուժեղացում։

5

Շեշտը, իբրև բառի վորոշ վանկի ձայնավորի ավելի ուժեղ հնչում՝ մյուս վանկերի համեմատ, կատարում է նմանապես հնչավոխական ուժեղ դեր, ինչպես մենք յուր տեղում ցույց ենք տվել Ա.յդ արտաշնչական («եքսպիրատոր») շեշտի ազդեցությունը մենք տեսնում ենք, որինակ, ռուսերենում, հայերենում, լատիներենում, ֆրանսերենում և այլն։ Համեմատենք, որինակ, ռուսաց пот հնչակոմպլեքսը пот (=քրտինք) և тóпот (=ձիու վոտքի դոփյուն) բառերի մեջ կամ թե час հնչումը час (=ժամ), сейчас (=այժմ) ու մյուս կողմից часы՛ (=ժամացույց), тóтчас (=նույնժամայն) և նման ձևերի մեջ։ Ընդունված է ընդհանրապես, վոր քանի հեռանում են վանկերի ձայնավորները շեշտված վանկից, այնքան թուլանում և շատ են ձևափոխվում։ Այս յերեվույթը բացի ֆիզիոլոգիական լինելուց, յերբ արտասանական նյութը ավելի շատ է բաշխվում շեշտավոր վանկի վրա, ունի դրա հետ մի խոսին և հոգեկան մոտիվը, այն է՝ ավելի ուշադրություն դարձնել շեշտավոր վանկի վրա, իսկ վորովհետև այդ պատճառով մյուս վանկերի լավ արտասանությունը վրիպում է մեր ուշադրությունից, և բացի այդ, մեր արտասանական բերանային օրգանները թեթև են և չեն յենթարկվում մեր կամքին, հետևանքը լինում է այն, վոր շեշտավոր վանկն է լավ արտասանվում, գերիշխում, յենթարկում իրեն մյուս վանկերը և առաջ բերում դրանց մեջ ձայնավորների քանակական և վորակական փոփոխություններ։ Այս մասին մեր «Հնչյունների ֆիզիոլոգիա» հատվածը շեշտի մասին։ Այստեղ պետք նկատել սակայն, վոր եքսպիրատոր շեշտի այդ դերը, լինելով ֆիզիոլոգիական և հոգեկան անմիջական դրդապատճառ, ամեն մի կոնկրետ լեզվում և դրա կոնկրետ պատմական շրջանում, յուր ձևավորումը ստանում է այդ լեզվի պատմական կոնկրետ վիճակի։ Որինակ, մենք գիտենք, վոր դեպի մեր դարաբաղցոց բարբառը վերջընթերն են շեշտում, այսինքն վերջին վանկից մի վանկ առաջ (բանվոռ, ըվեսարան...), և գիտենք,

քե ինչ անմիջական ազդեցություն և թողնում այլ վանկերի արտասանության և ձևափոխության վրա, սակայն հարց և առաջ գալիս, ինչու՞ չի այդ բարբառում վերջընթերը շեշտվում։ Ահա այստեղ է, որ պիտի դանել պատմական ստուգը, և չկրե՞ն ի նկատի ունենանք վրաց լեզվի այժմյան նման վերջընթեր շեշտելը և Ղարաբաղի տերրիտորիայի վրա (մինչ դրա հայացումը) վրացիների նման կովկասյան այլ ցեղերի նախորդումը (ալբանացիք, ուտիացիք...), մենք չենթադրաբար կարող ենք ասել, որ դարաբաղցոց հայերենը յուր շեշտի դիրքավորման և վորակի մեջ պահել է Ղարաբաղի բնիկների վերջընթեր շեշտը։ Իսկ որ այդ հավանական է, այդ յերևում է մյուս հնչյունների նման պատմականութիւնից, ինչպես, որինակ, դարաբաղցիների, լոռեցիների և հարևան հայ բարբառների այժմյան «ֆ» հնչյունի չարտասանելը նման վրացերենին, իբրև արտացոլանք հայերից առաջ յեղած բնիկների նման արտասանության (և վոչ թե վրացերենի ազդեցության, այն ել հեռավոր Ղարաբաղի և Դողիանի վրա)։

Շեշտի դերը հայոց լեզվում (գրաբարում և նոր հայերենում, ինչպես և բարբառներում) նոր և սկսվում դիտականորեն հաշվի առնվել, շնորհիվ Hübschmann-ի, Մառի և այլոց, այնինչ հին քերականները շեշտից առաջացած փոփոխությունները այլ կերպ էլին ձևակերպում, այսինչ հնչյունը (է, ի, ու, ևա, ոյ, եայ) «դառնում է», «վերածվում է» այսինչ հնչյունի, կամ բառի ածման ժամանակ, դիցուք ու կամ ի «սղվում են». ինչ խոսք, վոր այդ ճիշտ դիտական չե և այժմ չի կարելի ընդունել. և չկրե՞ մի «սահուն» դրաբարում դառնում է «սաղան», հապա պիտի մատնանշել նաև, վոր նախքան այդ «ա» հնչյունի սղվելը նա տեղի յեր տվել «ը» (կամ նման իրրացիոնալ) ձայնավորի, նման մու՛կ—մըկան, մ՛ուկ—մըկնոց և նման դեպքերի։ Մեր հին և նոր ուղղագրությունն այդ կողմից չի նպաստում բառին ճիշտ արտասանում տալուն և հնչափոխական յերևույթը ճիշտ բնութագրելուն։ Այդ «ը» չգրելը (scriptio defecta) յերբեմն խանգարում է բառի ճիշտ միտքը անմիջապես հասկանալուն (որինակ, ինչ և նշանակում «կարճի»), այնինչ մենք պիտի մտցնենք լրիվ հնչական դրության (scriptio plena)*, վորը և մանկավարժական և

*) Ինչ և նշանակում «սուտ, Սահման, սակ...» շարքի վերջին բառը։ Ճիշ այդ բառը մի հին (դրաբարի) բնագրում մի անդամ չհանդիպեցա, բայց դուրս և գալիս, վոր դա շատ սովորական բառ է (=որսակ) «սուտ» արմատից. իսկ նման լրամասնները շատ կարող են պատահել սխալ ուղղագրության հետևանքով։

Հնչափոխական ֆակտոր և նաև «արտիկուլացիոն բազան», վորի մասին վերևը (նջ 83) ասվել ևր Իրրև վորևե լեզվի, նրա տրվյալ պատմական շրջանի արտասանական ունակությունների ամբողջություն, այդ արտիկուլացիոն բազան հատկապես դեր է խաղում ոտար բառերի հնչական ձևափոխությունների մեջ։ Որինակ, յեթե վրացիք չունեն ֆ, կրկնակի բաղաձայն կայլն, նրանք փոխառությունների մեջ կամ կփոխարինեն նման հնչյունները իրենց մոտ յեղած մոտավոր հնչյունով («ֆ»-ն՝ «փ»-ով) կամ կվերածեն այլ որինաչափությամբ («կրկնակի» բաղաձայնը վերարտադրելով սոսկական պարզով) և նման շատ յերևույթներ։ Արաբներն որինակ չեն սկսում բառերը յերկու բաղաձայնով, իրրև իրենց լեզվի սվյալ մոմենտի որինաչափություն, և, յեթե վերցնում են ոտար բառեր, դիմում են այլ և այլ դարձուղի միջոցների, ինչպես «Պլատոն» հունարեն անունը վերարտադրում են «Աֆլատուն» (Իֆլատուն) կամ «Ֆիլատուն» և նման ձևերով, վորոնք հատուկ պիտի լինեն արաբերենին։ Նման յերևույթ մենք տեսնում ենք թյուրքերենում, ուր старик, спичка և նմանները դառնում են «աստաբիկ», «խալիչկա» և այլն։ Թյուրքերն այդ յերևույթի շնորհիվ (չկարողանալով յերկու սկզբնական բաղաձայն արտասանել) մեր հին տեղանուն «Վիժանը»-ը, վորը դանվում է Արաքածոտնում, դարձրել են «Ուշան» (թյուրքերը չունեն նաև «ժ» բաղաձայնը), վորն արդեն հետագայում անցնում է յուր արտասանության յուրահատուկ շրջակա հայերին. համեմատիր նաև Zor հին դյուղը նախկին թյուրք-ռուսական սահմանադլխին հայոց Ձոր-ից, կամ «Ջանգիղուր» թյուրքական արտասանությունը հին «Ձագնձոր»-ից, Արտած > Ալագյազ (և ժողովրդական սուտաբանությամբ՝ նաև «Ալագյոզ») և այլն և այլն։ Հայերը պարսկական ծ (ձայնեղ սպիրանտ ե) բաղաձայնը վերարտադրել են «ր» սոնանտով, ինչպես apaδana = ապարան(ք), spantaδata = Սպանդարատ, -aδana ածանցը -արան (ձեմարան, ննջարան և այլն..), կամ պարսկերեն 0r (r0r) կոմպլեքսը, ուր 0 առաջնալեզվային խուլ սպիրանտ է, վերարտադրել են «հր > ր»ն ինչպես հին պարսկերեն šnō0ra = շնորհ (*շնահր» ձևից), հին պարսկ. xšaθra = աշխարհ (այժմյան պարսկ. շահր.) և այլն։ Հետագայում այդ հայկական «ր»ն («հր»-ից) կոմպլեքսը դառնում է սոսկ «հ»։ Մենք գիտենք նաև, վոր ռուսները հունարեն θ սպիրանտը վերարտադրել են (իրենց լեզվի «բաղային» հարմարեցնելով) ֆ բաղաձայնով, վորն այս դեպքում

առաջ գրվում եր Θ (=фита), ինչպես Θеодор, анаθема. իսկ այժմյան театр, тема և նմաններըը փոխ են առել յևրոպական լեզուների միջոցով (հայերն այդ հունական θ բաղաձայնը վերարտադրել են «թ»-յով)։

7

Բառեր կան լեզուներում, որոնք իրենց չափազանց («արտակարգ») գործածութեյան պատճառով և մանավանդ իբրև կոչական բառեր, յենթարկվում են նաև արտասովոր կրճատման (վոչ ըստ նորմալ հնչական որինաչափութեյունների). մանավանդ վոր բավական և միայն բառի սկիզբը կամ կարևոր հնչական ժամանակները արտասանել, վոր դրմացինը հասկանա։ Որինակ, այդպես և ֆրանսերեն msyo (=պարոն) արտասանութեյունը monsieur ձևից, կամ ռուսաց здрасте արտասանութեյունը здравствуйте ձևից, կամ գերմանական ժողովրդական moin (=բարի առավոտ) guten Morgen ձևից կամ մեր «ցը» իբրև հասկանալի կրճատում «ցտեսութեյուն» ձևից և այլն և այլն։ Նման սոցիալ-հոգեկան դրդապատճառ ունեն և հայոց բարբառների «յնսիմ», «չըմդե», «չըտաև» կրճատումները, վորոնք առաջացել են «չես ինչ իմանում», «չեմ գիտեր» «չես գիտեր» ձևերից։ Մինչև իսկ մի գերմաններեն (հին վերին գերմ.) hiutu «այսօր» բառը չեն համարում որդանական հնչափոխութեյուն hiu (=այս) և tagu (որ) բառերից. համեմատ իր մեր ժողովրդական«ստի»,(=«եստեղ»ձևից),«ըտա»(=«եդտեղ»), «ընդե» (=«ենտեղ»), կամ «ստարի», «սոր», «գդար» կրճատումները «ես տարի», «ես որ», «ես(կ)դար» (=եչափ) բառերից։ Այստեղ ևս կրճատումները արտասովոր կարելի յև համարել, քանի վոր այդ դեպքերում պահվում և «էս», որինակ՝ էս դիշեր, էս տունը...։

Այս արտասովոր կրճատմանն են յենթարկվում և հատուկ անունները, ունենալով նման (շատ հասկանալի) դրդապատճառ, մանավանդ վոր օբյեկտը, իբրև կոչական բառ, անմիջապես դրանվում և դիմողի առաջին և ձեռքի շարժումով էլ ուշադրութեյան և կանչվում։ Համեմատեր ռուսաց Саша(=Александр), Коля (=Николай), Оля (=Ольга), Надя (=Надежда)... կամ մեր հայոց բարբառների, մանավանդ դարարագղինների Ա՛ Հայ (=Ա՛յ Հայրապետ), Ա՛ Սաք (=Ա՛յ Սարգիս), Ա՛ Թյուն, (=Ա՛յ Հարությունը) և նման սոսկալի կրճատումները, ուր սկզբի «Ա՛» բացականչական հավելացումը այլ բարբառներում փոխարինվում և ո վերջավորութեյամբ (Կարո, Գիքո, Հայո...), նման քրդերենի նման վերջավո-

բուքյան արական սեռի հատուկ անուններում (Ռոդո, Ալո, Ավդո Հասո...)*: Ինչպես տեսնում ենք նման արտահարդ կրճատումների մեջ ևս լեզուն ձգտում է ստեղծել որոշ որինաչափություններ:

8

Հնչափոխական կարևոր յերևույթ է և այսպես կոչված «դրափոխությունը», կամ հունարեն բառով ասած՝ մետաթեզիսը: Սրա էությունը կայանում է նրանում, որ բառի մեջ որոշ հնչյուններ (բաղաձայններ) կամ վանկեր կարող են իրենց դիրքը փոխել և ընկնել յետ կամ առաջ: Ամենատարածվածն է այն դեպքը, յերբ բառի հաջորդ կամ վերջին մասի բաղաձայնը (կամ վանկը) իրրև հնչական մոտպատկեր ավելի շուտ է արթնում (առաջանում) արտասանողի բառահնչման մտադրության մեջ, քան իրեն համակցվելիք մոմենտում, նախքան իրեն տեղին տրվելու: Որինակ, մի հին «կամարջ» կամ «կապերտ» բառերի «ր» ձոնեման, իրրև արտասանական մոտպատկեր և մտադրություն ավելի շուտ գոյանալով (առաջ ընթանալով), տալիս է ժողովրդական «կարմուջ» (վրից՝ կարժունջ) և «կարպետ»: Այդպես է դրել դդալ, ձգել> գձել (դրվում է «գդել»), լվացք> վլացք...

Համեմատեք նաև հունարեն πικρός «դառն» առաջացած πρικός ձևից, ռուսաց ладонь հին длань-ից, կամ մեր ժողովրդական դրափոխությունները — բալանի < բանալի ձևից (արմատն է հին բանալ «բացել»), ալանի < անալի (=անաղի) ձևից, դունքաչ <ղոքանչ, անկաղ <ականջ ձևից և այլն**: Վորոշ մետաթեզիսներ հայերենում պատմական որինաչափությունների անհրաժեշտություն են ստացել, ինչպես հնագույն «բաղաձայն+r (կամ l)» դառնում է «r (կամ l)+բաղաձայն», ինչպես «արտասու-ք արմատը, վորն առաջացել է *trasu- նախահնդկական ձևից tr>r դրափոխությամբ (համեմատեք հունարեն δάκρυ, լատին. lacruma >*dacruma ձևից և այլն), մերձ (=մոտ) հին *մեձր ձևից (համե-

---

* Դրաբարում այդ դեպքում, այն է՝ կոչական բառի սկզբում ավելացվում եր մի բացահանչական մասնիկը (ով մարդ, ով Տավակ...), վորը վրացերենում հին ժամանակ դրվել է բառի վերջում—կայե ով, բիձի ով..., վորոնք պահվել են կայս, բիձ և այլն (ըստ Մառի)։ Դարթարդյոց մեջ Ա Սաք, Ա Թյուն, Ա Հաղ և այլն դառնում են սովորական փաղաքշական բառեր (Ասաքը յեկավ), առաջացած Սարգիս, Հարություն, Հայրապետ և նման բառերից:

**) Ճեղերթս փոքր տղան յերկար տաբեկան հատկում, ան ըն դհատ արտասանում եր мрокий փոխանակ мокрый)= թաց), капажи փոխանակ показжи (=ցույց տալ), горову («гараву») փոխանակ говорю և այլն:

մատեր հուն. μέχρι), յեղբայր (‖ աղբայր) հին *lbayr ձևից a ‖ e նախադիր կամ պրոթետիկ ձայնավորներով), վորը յուր հերթին առաջացել է *rbayr <*brayr (=bhrāter) հնագույն ձևից։ Մինչև իսկ փոխառությունների անգամ յենթարկվել են այս օրինաչափության, ինչպես և գրաբարի հաղր-ք (=ծուղակ, թակարդ)= ասորական xawlā, արաբերեն ḥabl նույն բառերին։ Ժողովրդի մեջ դեռ մինչև հիմա էլ շարունակվում է այդ մետաթեզիսը, ինչպես արարատյան բարբառում սարվել <*սավրել (<սովրել <սովորել) ձևից, կամ այլ բարբառներում՝ մրկատ <մկրատ, առկա <ակռա և այլն և այլն։ Արդյոք պատմական նախատարոր հողի յեղել այդ արտասանական հնչափոխության հատար, յերբ նույնը տեսնում ենք նաև նախահայկական, այն է՝ խալդական, նման փոփոխության մեջ, ինչպես և խալդական (ուրարտական) Harsitani < ասորեստանցոց Ašurdan թագավորի անունից։

Ցերբեմն հետագա հնչյունի մոտալատակերը առաջ ընկնելով արտասանվում է նաև իրեն սովորական տեղում, ինչպես լատիներեն thesaurum (=գանձ) բառից ունենք ֆրանսերեն trésor նույն բառը։ Այս յերևույթը կոչվում է «անտիցիպացիա»։

Բայց կա սրան հակադիր այն դեպքը, յերբ հնչյունի (բաղաձայնի) արտասանական մոտգրությունը շարունակվում է, յերբ իրեն հատկացված տեղում արդեն արտասանվել է։ Այդպես դեմանների genug (=բավական) բառը ժողովրդի մեջ արտասանվում է նաև genung, այսինքն նախորդ «n» բաղաձայնի արտասանական մոտգրությունը դեռ շարունակվում է հարատևել և կրկնվել «g» բաղաձայնից առաջ։ Թերևս այս յերևույթին պիտի վերագրել և մեր ժողովրդական (և գրական) «մենք» բառի «ն» բաղաձայնի առաջ գալը, իբրև նախորդ ռնգային «մ» հնչյունի շարունակությունը, վորովհետև հին ժամանակ կար միայն «մեք» ձևը (մեք>*մեմք>մենք?)։ Համեմատիր նաև—կամայ>կամանց, կանայ>կանանչ, կամուրջ>կարմուջ,>կարմունջ, ճանապել>ճանանչել, ամպել>ամանչել և այլն։ Կարելի յե ընդունել նաև, վոր ռնգային ն կամ մ բաղաձայնը իր արտիկուլացիոն անմիջականության ընթացքում ռնգայնացնում և նաև իր հետ որպանապես շաղկապված հաջորդ ձայնավորը. և, որինակ, մեք նախ դառնում է męk՛ (ուր ę ռնգային ձայնավոր է) և ապա վերածվում menk՛ (մենք) ձևին, մանավանդ վոր հայերը ռնգային ձայնավոր չեն ունենում [այժմ ինձ հայտնի յե ռնգային «ը» ձայնավորը միայն ըմբ (=ահա) բառի մեջ]։

Բառերը կարող են փոխել իրենց հնչյունական արտաքինը և այլ բառերի ազդեցության կամ նմանողության հետևանքով (<անալոգիայով»), որի մի հատուկ տեսակն է կազմում այսպես կոչված «ժողովրդական ստուգաբանություն»-ը (народная этимология, գերմ. Volksetymologie), որն ավելի ճիշտ կլիներ կոչել ըստ Բոդուենի՝ «ժողովրդական իմաստավորում» (народное осмысление)։ Այս այն դեպքն է, երբ հին բառեր կամ ոտար տեխնիկական տերմիններ և տեղական հին անուններ (toponymica), չհասկացվելով իրենց կազմության՝ ենթարկվում են այնպիսի փոփոխության, որ այժմյան լեզվին ուռ իմաստ ստացվի, դուրսկցվելով այս կամ այն բառի հետ։ Որինակ, ռուս. չեր հատկանում сведетель (=վկա) հին բառի կազմը, որի հիմքում հին սլավոնական ведать (=գիտենալ) բայարմատն է և վորովհետև այդ բառի պաշտոնը հնչողության դուրսկցվում է «տեսնել» (գիտել) դործողության հետ, ուստի ժողովուրդն իմաստավորում է հինը այդպես, դարձնելով сведетель բառը свидетель, որտեղ գործելով առաջին հերթին նման կենդանի բայաձևը (вед—«գիտենալ» և вид—«տեսնել»), բայարմատները։ Այդպես որինակ, և արաբը Aleksander հատուկ անունը արաբական լեզվի ձևերի՝ ենթարկելով՝ սկսեց դիտակցել նրա սկզբնական Al—մասը իբրև արաբական ազդային al մասնիկը (հոդը), իբրև կոնկրետ առարկայի ցուցանիշ, նման al—koran, «դրան», as—surat «նկար» (<al—surat) և այլն կազմություններին. և դատելով ըստ իրեն լեզվական ըմբռնման այդ al—մասնիկը (որը տեղի ունի արաբական լեզվին հատուկ ձևաբանական պայմաններում), արաբը Aleksander-ը դարձրեց Eskander. այդպես և laškar պարսկերեն բառը (=զորք) դարձավ askar։ Հայերենից նաև կարելի է բերել բազմաթիվ նման որինակներ։ Հաճախ հին առևտրականները (որինակ Աշտարակում) զերազանում էին «բարձր լեզվով», այն է՝ ռուսական վոկալով և բառերով հասկանալ իրենց կխաղրատ հայերենը։ դործածելով «հաշիվկա ընկնել» (=ошибка ընկնել), այսինքն սխալվել, կապակցելով (և ձևափոխելով) ռուսական ошибка բառը հայոց հաշիվ բառի հետ, մանավանդ որ նրանց դործը անընդհատ հենց հաշիվներ տեսնելու մեջ եր, ուր

* Այդ al արաբական մասնիկը կա նաև al-kohol, al-gebra, al-khimia, և նման մի քանի բառերի մեջ, որոնք այժմ միջազգային են դարձել։ Իսկ eleksir-ը վեր և ածվել eksir, iksir ձևի, ինչպես որ փոխ են առել հայերը։

հեշտությամբ կարելի չեր «աշիրկա ընկնել»։ Ուսումնասիրելով «ցած» հայերենից՝ այդ վաճառականները գերադասում էին ասել և «բնավեստա», այսինքն անխիղճ, ուր ռուսական այդ бес-совестный (ան—խիղճ) բառը հայ կուլակը մասամբ հայացնում էր կապակցելով սկզբի «բե»—մասնիկը այն ժխտական «բե» մասնիկի հետ, որ մտել է դյուղական բարբառները պարսկերենից (բեժուրաղ, բեջինս, բեջուռա, բենամուս, բեֆասոն..). այդպես և «բե—ավեստա»։ Այդպես և хозяйка դառնում է «խազեյկին» (եջմիածնում) նման տնգերեակին, քավորակին, քեռակին բառերի հասկանալի կազմությամբ։ Ռուսերենից վերցրած չեվրոպական вазелин-ը հեշտությամբ դառնում է «մազելին» (կապակցվելով мазь—մազ, մազել բառերի հետ, որոնք կենդանի գործածական են)։ Համեմատիր նմանապես — Արագած < Ալագյազ < Ալագյոզ թյուրքական լեզվի ստուգաբանությամբ. հին Գուբատ (աստուրական անունն է Ծիփրատ գետի) անունը դարձել է Մուրատ-Չայ, Աղդք<Հախ և այլն, և այլն։ Շատ հին սիրում «ստուգաբանել» մեր հին հայոց պատմագիրները, բացատրելով Մասիսը—Ամասիայից, Արժավիրը—Արմայիսից, Արարատը—Արայից, Հարքը—հարք (=հայրեր) գրաբարյան բառից, Գեղաքունին դարձնելով Գեղարքունի, կապակցելով յերևի գեղ (=գեղեցիկ?) և արքունի բառերի հետ, և այսպես անհամար և անվերջ*։

Հայոնի չեն ռուսաց բարբառներում ցարիզմի որով հետևյալ ստուգաբանությունները — прижим «ռևժիմ» բառից (իբրև ճնշում, прижимать ռուսերեն արմատից) կամ секутор «եքզեկուտոր» (секать, сечь արմատից)։

10.

Շատ հայոնի չեն հնչյունափոխության մեջ այսպես կոչված ասսիմիլյացիայի («առնմանություն») կամ դիսսիմիլյացիա («տարնմանություն») յերևույթները, որոնք լինում են յուրաքանչ (*«առգրեսսիվ»*), յերբ հետագա հնչյունը ազդում և նախորդի վրա և իրեն նմանեցնում կամ հեռացնում. և լինում են առաջընթաց

---

* Շատերը, մանավանդ հին հայկաբաններից, մինչև հիմա էլ կարծում են, որ Volksetymologie յերևույթը գոյություն ունի միայն հին չհասկացվող անհայտ անունների կամ հասուկ անունների նկատմամբ։ Այդ սխալ և խարկիս ժողովուրդը հիմա հասարակ բառերի մեջ այդ ժողովրդական խմբասովորությամբ յերբեմն չափազանցության և հասցնում, ինչպես «գեղ տուր» խմբասովորությամբ «գոխտուր» (=доктор) բառից և այլն։

(«պրոգրեսիվ»), յորը բառի սկզբնական (նախորդ) հնչյունն է այդ կերպ ազդում հետևյալ հնչյունի վրա։ Ասիմիլյացիան կարող է լինել նաև լրիվ կամ մասնակի։

Այս յերկու հնչյունափոխական յերևույթներն էլ կարող են սահմանափակվել միևնույն բառի մեջ, նրա սահմանում, և կարող են ի հայտ գալ յերկու հարևան բառերի ներգործությամբ։

Բերենք որինակներ, նախ՝ ասիմիլյացիայից։

Մեր լեզվի նախագրաբարյան շրջանում յեղել է *ծանաչեմ (=ճանաչում եմ) չպահված ձևը*, վորից ունենք անցյալ կատարյալ «ծան-եայ», պատճառական ծանուցանեմ, ինչպես և ծանօթ բառերը (ծան-արմատը նույնն է ռուսաց зн-ать արմատի հետ, վորոնք հնդեվրոպական gen-արմատից են).—աչ վերջածանցը, իբրև գործողություն ակսվող բայերի (verba incohativa) ածանց (նման մեղաչնչեմ, յերկնչիմ, փախչիմ..) ավելանալով ծան-արմատի վրա յուր «չ» հնչյունով ազդում է սկզբնական «ծ» հնչյունի վրա և դարձնում նրան «ճ», այսինքն՝ շչայինն, վորը ժոռ է «չ» շչայինին, քան սկզբնական «ծ» սուլիչ (սուլական) բաղաձայնը։ Թեպետ դրաբարում դեռ զգացվում էր այդ յերևույթի արդիականությունը, յերբ անցյալ կատարյալը շարունակում էր «ծան» արմատը պահել (ծանեայ, ծանէր, ծանուցեալ.., ծանօթ), բայց ժողովրդական լեզվում այդ էլ է վոնտում և «ճանանչել»-ը դառնում է հիմնական և սկզբնական, վորից ճանանչեցի, ճանանչել եմ, իմ ճանանչը (=ծանօթը) և այլն։ *Ծանաչեմ > ճանաչեմ ասիմիլյացիան (*ծանաչեմ) յեռանդաց ու Ընդհանրապես պետք է ասել, վոր թեքական տիպի լեզուներում գերիշխում է այդ յեռանդաց ասիմիլյացիան, այսինքն՝ յերբ յետին հնչյունն է ազդում և իրեն նմանեցնում իր անմիջական կամ հեռավոր հնչյունին։

Այլ որինակներ։

Հին *դքօղեմ, *դփոփեմ, *դթափիմ դարձել են սքօղեմ, սփոփեմ (հատև. ամ-փոփեմ), սթափիմ։ կամ թե *դ-ականջեմ > շականջեմ, *անձան-ք > անձամբ, ան-բիծ > ամ-բիծ և այլն։ Այդպես և ռուսաց сделать, второй, встреча և նման դրությունները արտասանվում են ռեդրեսիվ ասիմիլյացիայի շնորհիվ здеать, фтарой, фстреча և այլն։ Գրաբարյան սկիզբն

---

* Յերբ վորևե բառ, ձև կամ հնչյուն վերականգնվում է իբրև առաջ յեղած, բայց պատմականորեն դրավոր կերպով չպահված, ապա դրանից առաջ դրվում է * (աստղ) նշանը։

ածանցավոր ձևը առացվել է *սկիս—(սկըս—անիմ) շեշտունակ արմատից, բայց «ս» հնչյունը փոխվել է «զ» հետևյալ «բ» ձայնեղի ազդեցությամբ (թերևս՝ skis-mən> skis-bən> skiz-bən)։ Համեմատեք լրիվ ասսիմիլացիայի հետևյալ դեպքերը—արաբերեն al—ժամանիկը as-surat, ad-din, ar-rahmat և նման բարդվածքում, կամ լատիներեն as-similatio, ag-gregatus, af-fectum և այլն սկզբնական ad-նախածանցով։

Առաջընթաց ասսիմիլացիան շատ ուժեղ է թյուրքական, ֆիննական և մոնղոլական լեզուներում, ուր այդ յերևույթը հատկապես ձայնավորների նկատմամբ կոչվում է «ձայնավորների հարմոնիզացիա» (ներդաշնակավորում)։ Որինակ՝ յեթե արմատի (առաջին բառն է) վանկարար ձայնավորը յետնալեզվային և միջնալեզվային է, ապա կցվող մասնիկների ձայնավորն ևս այդպիսին պիտի լինի, այսինքն a, â, o, u, aə, ə, ы, և նմաններըիսկ յեթե արմատի ձայնավորը առաջնալեզվային ձայնավոր է (aə, e, ə, i, ö, ü..), ապա և կցուլծներինը նույնպես։ Որինակ, taš (քար)—tašlar («քարեր»), բայց ev (տուն)—evler (տներ). կարելի յև և ավելի բարդացնել (ev-ler-imiz «մեր տները», ev-ler-imiz-dā «մեր տներում» նույն ասսիմիլացիայով և այլն)։

Մեր բարբառների սովորել, խորովել, կոլորիկ, մոլորվել և այլն բառերի o ձայնավորների ուժեղ կորացմամբ հնչելը պայմանավորված է, ըստ իս, այդ յերկու o-երի փոխադարձ ասսիմիլացիայով. դրա հետևանքով «ո»-ն չի դառնում «ուո» (ինչպես խոտ< խուոտ և այլն)։ Առաջընթաց ասսիմիլացիաներ են մեր բարբառների «շոշ»-ը шоссе բառից, «ջաղաչ»-ը՝ հին «ջրաղաց»-ից, հորոխպեր՝ հին «հօրաղբայր» ձևից և այլն։

Յեթե ասսիմիլացիան մանանակի յև, ապա այդտեղ նմանվելը կատարվում է հնչյունի մի հատկության նկատմամբ, այն է՝ կամ ըստ տեղի (ան-բիծ>ամ-բիծ, ն>մ շրթնայնանում, բայց պահում է ռնգայնությունը)*, կամ ըստ արտասանության յեղանակի (աչք>աշկ кто>хто...) և կամ ըստ ձայնալարերի աշխատանքի (խուլ կամ ձայնեղ), ինչպես *գքօղել>աքօղել, второй>фторой և այլն։

---

* Այդպես և առաջ և այլոց պալատալիզացիան, յերբ առաջնալեզվային կամ յետնալեզվային բաղաձայնները կամ e ձայնավորից առաջ դառնում են (միջնալեզվային k՝ կամ g՝-ի վրայով) ч, ж, ш ինչպես пеку-печешь, теку-течь.., бегу-бежишь.., верх-вершина (ухо-уши) և այլն։

Ասիմիլյացիայի և դիսիմիլյացիայի դրսևորումը միշտ լինում է կոնկրետ պայմաններում, այն էլ պատմական որոշ լեզվաուներում յուրահատուկ։ Ցեթե այսինչ տեղում և որոշ ժամանակ Սմրատ, ամրաթ, բամրակ... (մր հնչակոմպլեքսով) միանգամայն նպատակահարմար է այդ լեզվի ասիմիլատիվ ձգտումներին, ապա հարևան բարբառում կամ հենց այդ առաջին բարբառի այլ ժամանակաշրջանում դերազատվում է հնչել դիսիմիլատիվ կերպով, այն է՝ Մնբատ, անբաթ, բանբակ... (նբ հար և նման հնչյուններով)։

Հնչյունափոխական այս առնմանության կամ տարնմանության երևնաչափությունների հողն ևս պատմական է։ Որինակ, հայերը մի ժամանակ ունեցին յերկու լ, մեկը «փափուկ» (=ռուսաց ль), այդ «լ» տառի հնչյունն է, իսկ մյուսը՝ «կոշտ» (ռուսաց лъ), այդ «ղ» տառի հնչյունն է։ Ասում էին Պաւղոս (այսինքն ռուսաց դրությամբ Павлъос), աղ («алъ») և այլն, և խաղ խնդ, խնդալ, խաղող և նման բառերում «խ» և «ղ» հնչումները շատ հեռու էին (=ռուսաց «х» և «лъ») իրարից. իսկ յերբ մեր լեզվի պատմական զարգացման հետևանքով ղ=лъ սկզբնական հնչյունը դարձավ «ղ» (այժմյան յեռնալեզվային ձայնեղ շփականը), այն ժամանակ խաղ, խնդ, խնդալ և այլն բառերի մեջ առաջ և դալիս նոր տենդենց՝ դիսիմիլատիվ պայքար այդ յերկու նման բաղաձայնների (խ,ղ) մեջ, և վերջին «ղ»-ն աղդելով սկզբնական «խ»-ի վրա, վանելով նրա նմանությունը իրենից, դարձնում է հ. և բարբառների պայմաններին նայած, ստանում ենք հաղալ, հաղ, հնդ, հեխտել և այլն։ Խաղող բառի մեջ կրկնակի «պայքար» և տեղի ունեցել; յերբ նա դարձել և այժմյան հավող, այն է, սկզբից «խ»-ն դարձել և հ (=հաղող) վերջին և թերևս մեջինը «ղ» բաղաձայնի տարնմանիչ աղդեցությամբ, իսկ հետո մեջինը «ղ»-ն վերջինը «ղ»-յի նույն աղդեցությամբ դառնում է «վ» (=հավող), այսինքն հնագույն խալոլ (халъолъ)>խաղող>հաղող>հավող։

Համեմատելը նաև տարնմանական դեպք ժողովրդական սունչ սիճուկ, սեխճ, սրջան... բառերի մեջ նախկին շունչ, շիճուկ, շնդ, շրջան բառերից։

Ցերբեմն այս որինաչափությունները շաղկապված են լինում այլ որինաչափություններով, և դժվար է կոնկրետ պատասխան տալ յերևույթի առաջ գալուն։ Որինակ ռուսաց мебель (կահույք) բառը, վոր գերմաներենից է վերցրած, ժողովրդի բերնում դառնում է небель։ Այստեղ կարող է լինել թե ժողովրդական իմաստա-

վորում (не—«ոչ» և бель—«սպիտակ»), ինչպես վոր բացատրում եր իմ հանգուցյալ ուսուցիչ պրոֆ. Բողուչն դը-Կուրտենն։ Բայց այստեղ կարող և լինել և դիսսիմիլացիայի (տարնմանության) ազդեցությունը, այսինքն «մ» և «ն» յերկշրթնային նման բաղաձայնները իրարից ավելի յեն հեռանում, կոնկրետ ասած՝ հաջորդ «ն»-ն նախորդ «մ»-ին հեռացնում, դարձնում է «ո»*։ Նույն դիսսիմիլացիան է և антиллерия բառը (յերկու «ր» բաղաձայնների տարնմանությունը), ստացված артиллерия բառից։

Յերբեմն էլ միևնույն բառի մեջ տեղի յե ունենում թե ասսիմիլացիա և թե դիսսիմիլացիա, յերբ դիցուք թե առաջին և յերկրորդ հնչյունները մի հարաբերության (դիսսիմիլատիվ) մեջ են մտնում, իսկ այդ յերկրորդն ու յերրորդը՝ այլ (ասսիմիլատիվ) հարաբերությունների մեջ են մտնում, այսինքն՝ լինում և հնչյունափոխական հարաբերությունների բարդ խաչաձևում, վորը յերբեմն դուգակցվում է և այլ որինաչափություններով։ Որինակ, խեղդել բայը դիսսիմիլացիայի միջոցով դառնում է *հեղդել, բայց «դ» բաղաձայնի պատմական հնչյունափոխության հետևանքով (ինչպես ժարդ>ժարթ, վարդ>վարթ, և այլն) այդ հեղդել բայի «դ»-ն ևս դառնում է «թ» այսինքն ենք *հեղթել։ Պատմական հնչյունափոխական այս գործության կամ մոմենտի հետ սկսվում է նոր պրոցես. այն է՝ «ղթ» հնչյունակոմպլեքսի ասսիմիլատիվ փոխհարաբերություն,—«թ» խուլը ազդում է ձայնեղ «ղ»-ի վրա և դարձնում է նրան «խ», իսկ այդ վերջինը իրեն հերթին իրրև շնչում պարունակող չփական («փչողական», придувной) կլանում է «թ» ասպիրատի (շնչեղի) «հ» մոմենտը («թ»-ն ստացվել է t+h բարդացումից) և նրան դարձնում «տ», այդպիսով բառին տալով «հեխտել» վերջնակազմ հնչեձևը։ Յեթե գրական լեզվի ազդեցությունը չլիներ և բարբառի պրիմիտիվ կուլտուրա հասարակական կյանքը շարունակվեր, անշուշտ այդ «հեխտել» ձևը նույնպես կենթարկվեր նորանոր և այլ հնչյունափոխական որենքների կամ յերևույթների ազդեցության**։

---

* Համեմատիր յերևանների աֆտանաբիլ < աֆտամոբիլ ձևից նույն դիսսիմիլացիայով։ Իսկ իմ տոհմ համառորեն ասում է համոզ (< համով), ալբոմ (< альбом), նուբարա (<մուբարա)։

** Այս մի անգամ ևս շեշտում է, վոր հնչյունափոխական որինաչափությունների (ինչպես և այլ լեզվական ֆակտուրայի) դրսևորումը յեթե ընդհանուր ձևով է լինում, սակայն և պայմանավորված է հասարակական լեզվա-

Ասսիմիլյացիան և դիսսիմիլյացիան կարող են դոյանալ մի բառի մեջ հարևան բառի աղդեցությամբ։ Այդ լինում է հատկապես այդ հարևան բառերի միասին և սերտ հնչելու պայմանով, մանավանդ յերբ դրանք վորոշ ասոցիացիայի մեջ են մտնում իրար հետ (իրրև հականիշ միասնություն, իրրև թվարկության հաջորդական զուգորդություն և այլն)։ Որինակ, յեթե շուտ հնչենք «ծրտի ճրտի ճիտը ծուռը», կամ ռուսաց «раз дрова, два дрова, три дрова» կստանանք թե ասսիմիլյացիայի դեպք (ծրտի ճրտի ճիտը ծուռը) և թե դիսսիմիլյացիայի (раз двора կամ два двора)*։ Նորմալ դեպքերից մեզ հայտնի է, որինակ, ժողովրդական «սնկահավքեր» հնչումը (-կահավքեր մասով), ուր «պ» բաղաձայնը դառնում է «կ» հետևյալ հոկտեմբեր, դեկտեմբեր բառերի ձևաբանական ընդհանուր «-կտեմբեր» մասնիկի աղդեցությամբ։ Սլավոնական (և բալտիկ) девять «ինը» մի ժամանակ յեղել է *невять (< neven-ti), բայց հետևյալ десять բառի աղդեցությամբ ասսիմիլյացիայի յենթարկվելով դարձել է «девять»։ Այստեղ ասսիմիլյացիան բնական է, վոր լրիվ չի կարող լինել. *невять-ը նմանվել և десять-ին իրեն սկզբնական վանկով (не>де), բայց անհրաժեշտորեն պիտի պահի «в» և «с» հնչյունների տարբերությունը վորովհետև 100%-ով յեթե նմանվեր հաջորդին, կստացվեր յերկու «десять» հնչյունով բառ և «ինը» բառի ձևական—հնչյունական ինքնությունը կկորչեր։ Այստեղ խմաստն է, վոր արդելում է այդ հնչեվևերին միանալու։ Նմանապես մեր «ցած» բառը «բարձր» հականիշ բառի աղդեցությամբ սկսել է նմանվել այդ վերջինին, դառնալով «ցածր» (համեմատիր նաև «յեղը—մեղը»=յեղ ու մեղը)։ Այսպիսի ասսիմիլյացիան կոչվում է «ձևաբանական ասսիմիլյացիա», վորը մանում է «անալոգիա» կոչվող լեզվական յերևույթի մեջ (այս մասին տես «Ձևաբանություն» դլուխը)։

Ձևաբանական այս ասսիմիլյացիայի մասին մանավորապես պիտի շեշտել այն, վոր այդ յերևույթը յերկու հարևան բառերի

հարաբերության մեջ մեր այժմյան սոցիալնարարության և պատկանության պատճառով այլ ձևով և կատարվում բարբառալեզվական կատեգորիաների զարգացումը։

* Հաշվի չենք առնում այնպիսի դեպքեր, ինչպես домер нома փոխանակ номер дома կամ թե глухому попу двух обедед не служат փոխանակ глухому поп двух обеден не служит և այլն և այլն։ Համեմատիր նաև Աղայանի հայտնի «կուռեր մատնաց»-ը փոխանակ «մատիր կուռանաց»։

մեջ կարող է տեղի ունենալ այն դեպքում, երբ դրանց մեջ վորոշ հնչյունների հաջորդական ընդհանրություն, վորոշ հնչյունական համանմանություն, համահնչունություն (ասոնանս) կա, ապա թե վոչ տեղի չի ունենալ այդ ասսիմիլացիան։ Որինակ՝ «ցած» բառը կարող եր ավելի նմանվել հականիշ «բարձր» ձևին, քանի վոր ած և ա (r) ձ յերկու բառերի հնչյունակոմպլեքսը համահունչ է. այդպես և ռուսաց *невять և десять բառերի մեջ ընդհանուր „e—ять“ մասը թույլ և տալիս ավելի նմանվել (նմանապես «յեղը—մեղը» ունեն ընդհանուր «յեղ» մասը)։ Այդ ընդհանուր մի վորոշ մասի համահնչունությունը, ինչպես ասացինք, պարտադիր մինիմումն է զարգացող նոր առնմանության, նոր ասսիմիլացիայի, և յեթե, որինակ, «ծանր ու թեթև» «չորս—հինգ...» նման հայոց զուգակցություններքի մեջ չենք տեսնում ասսիմիլացիայի զարգացում, բայց հակառակ, այն է՝ նպաստավոր պայմաններում, այդպիսի դեպք պիտի տեղի ունենար, ինչպես տեսնում ենք մյուս խտալերեն grevis «ծանր» (լատիներեն «gravis» բառից) հականիշ levis «թեթև» (լատիներեն նույն բառն է) ազդեցության տակ վոխել է յուր միջին ձայնավորը (a> e), ունենալով ընդհանուր r—vis ‖ l—vis. նույնպես լատիներեն quinque «հինգ», վոր հին ժամանակ պիտի լիներ *pinque (=пять, հուն. πεντε, պարսկ. panǰ, հայոց հինգ...), զարձել է quinque ձևաբանական ասսիմիլացիայով նախորդ quattuor «չորս» բառի ազդեցությամբ, նրա qu մասնիկը յուրացնելով։ Ըստ իս, հայոց «յերկինք—դետինք» վոճի մեջ ևս ունենք այդ ազդեցությունը, այն է (գետ)-ինք վերջամասը չպիտի ունենար «ք», այլ յուրացրել է նմանվելով նախորդին (յերկինք բառի վերջամասին), ունենալով ընդհանուր «ե—ին» համահնչյունությունը։ Մենք մեր «յերկիր» բառն ևս այդ ճանապարհով բացատրելով (գրաբար «երկին—երկիր»)՝ գտնում ենք, վոր սկզբում պիտի լիներ e—kir (ե-կիր) և ընդհանուր պիտի լիներ Հայաստանի տերբիտորիայի և հարևան յերկրամասերի նման կուլտուրական այդ տերմինին (համեմատիր ուրարտական kiura և հնասագա kira «հող», սումերական kur «յերկիր»...)։ Վորոշ իդեոլոգիայի (կրոնական-միֆիզերաբանական, «կոսմոգոնիական») ազդեցության տակ նախնական *եկիր (ekir) բառը*, միշտ հաջորդելով erkin հին

---

* Fkir (=յերկիր, հող) նախահայկական բառը յուր բարբառին հատուկ որինքի համաձայն (կամ թեթև erkin բառի e-յի ազդեցությամբ ?) ընդու-

հնչածևը պահած բառին (Մառը դրա հետ համեմատում է վրաց rkina «յերկաթ» բառը), դառնում է աստիճանական օրինքով erkir (առանում է «ր» նոր բաղաձայնը), ունենալով նախնական „e—ki—“ ընդհանուր հնչյունակոմպլեքսը։

Ցեղակից բառերի մեջ տեղի ունեցող այդ աստիճանական յերևույթը թե հնչյունաբանական է և թե ձևաբանական, և ի դուր չեր Բոդուեն դը-Կուրտենեն այդ կոչում „морфологическая ассимиляция“ կամ „морфологическое уединообразение“։ Դա մասամբ տեղ ալիտի դրավի «Ձևաբանության» դլխում և «ձևաբանական դիսսիմիլացիայի» հետ, վորը, սակայն, լեզվաբանության ցայժմ չի տեսել կամ նտաղել։ Այդ յերկու օրինաչափությունները մի դիալեկտիկական միասնություն են կազմում և ձևաբանական մեծ նշանակություն ունեն (տես «Ձևաբանություն»)։

11

Հնչյունափոխության մեջ նկատվում է նաև բարդացման և պարզեցման կամ մեցման և բաժանման յերևույթը, վորը լինում է այլևայլ դրդապատճառներից՝ աստիճանական—դիսսիմիլատիվ կամ հնչյունա-ֆիզիոլոգիական։ Օրինակ, յեթե հին հայոց «անդուռ+ական» միավորը շեշտի հետևանքով դառնում է սեղեհական, առաս «ը» (չգրվող) ձայնավորի անկման շնորհիվ ևս (շուտ արտասանության և գիրքի պատճառով)* «պ» հնչյունահամադրությունը տեղի չի տալիս հնչյունափոխման, իրրև աստիճան նոր բարդ «փ» հնչյուն։ Այդ նույնը մենք տեսանք վրաց çameti «տառնեբնք» բառի մեջ, վորը («ցայտեմ») կազմված է at'- («տառան»)+ sam- («յերեք») + meti («հավելյալ») մասերից, և ուր t' + s (թ + ս) համադրությունը նմանապես վեր է ածվում աֆֆրիկատ նոր հնչյունի ç (= հայոց ց)։ Բայց կարող է լինել և ընդհակառակը, այսինքն՝ բարդը տեղի չի տալիս պարզեցման, ինչպես վաթսուն բառի մեջ, ուր «թ» բաղաձայնը հարևան «ս» հնչյունի դիսսիմիլատիվ ազդեցությամբ յուր բարդ «ց» (վաց < վնց) վիճակից վեր և ածվել ավելի պարզի։ Նմանապես աղաչ-արմատից ունենք «աղաւթք» (> աղօթք), ամաչ- արմատից՝ ամաւթ (> ամօթ), *ծանաչ- արմատից՝ ծանաւթ (> ծանօթ), *ծանաչ-

*տից՝ ծանուբ (> ծանօթ), արած- արմատից՝ արաւտ (> արօտ), գ-գած-իմ («վրան գցել») արմատից՝ գաւտի (> գօտի) *..., այս-տեղ ամենուրեք տեղի չէ ունեցել աֆֆրիկատների (չ, ծ) վե-րածումը կամ պարզեցումը («դնդաստիրիլացիա», սիբիլանտի կո-րուստում) նոր պարզ բաղաձայնի (թ, տ)։ Համեմատիր բար-դացման—պարզեցման տեսակետից նաև տատանել (< տան—տանել «դես ու դեն» տանել),**, որը բարդանում է, աֆֆրիկա-տիզացիայի (այն է՝ ասպիրիլացիայի) յենթարկվելով՝ դառնում է ծածանել և պարզեցման յենթարկվելով՝ տատանել. այդպես է՝ թորել > ծորել > տորել, թևքել > ծևքել, զաղիր > ձանձիր և այլն և այլն, որպիսի յերևույթը ձևաբանական է, այն է՝ նոր բառեր ստեղծելու հնագույն միջոցն է։ Համեմատիր ռուսաց* вид—вижд—виж-, լեհերեն речь > ржечь > жечь *(այժմյան հնչումն է),* գերմանական pf *բարդուբյունը ստսկ „p" բաղաձայնից* camp «դաշտ» > Kampf, Pflug < „плуг" և այլն...)։ *Մենք արդեն յուր տեղում տեսել ենք ուժեղ բաղաձայնի* (consonne géminée) *վերածվելը յերկուսի, ինչպես համարել > համժարել > համբարել, վրաց* xx > çx, kk > ck և այլն։ *Այդպես է և հրեական* манна *բառի վերածվելը մեր մանանա ձևին (տեսական մի «ննն» բաղաձայնը յերկվանում է)։*

Մի ցման (պարզեցման) լավ որինակներ ունենք ռուսաց знаменоносец > знаменосец *ձևի վերածման մեջ, ուր յերկու* ноно *վանկերը միաձուլվում են։ Այդպես և* минералология > минерал-логия, близозорок, > *близорок, *վորը ժողովրդական իմաս-տավորմամբ դառնում է* близорук *(կապակցելով* рука «ձեռք» *բառի հետ, յերբ կարճատեսները պիրքը և այլ իրերը ձեռքով մոտեցնում են աչքերին)։ Հայերենից որինակներ. աշխարհա-հայացք > աշխարհայացք, հասարակակարգ > հասարակարգ (դեռ սա պարտադիր կերպով չի ձևավորվել), *Արտաշաշատ > Արտա-շատ, Ծոլակակերտ > Ծոլակերտ, տավարաբաժ > տավարաժ։ Սերբերենում՝* бременоноша > бременоша։

**) Այս բացատրություններն առաջին անգամ „w" սոնանտի մեջ-բյան խնդրով (իբրև «հնեաբանություն») ավել ենք մենք մեր «Մի քանի հնեաբանական մեզոդրներ հայերենում» հոդվածում, տպված Գիտ. և Արվես. Խնամ. տեղեկ. № 4.*

***) Մաքուր արմատն է տան (tan-), վոր հին և և կա վրացերենում, ուրարտերենում և խուռրի (միտաննի) լեզվում (տես իմ „Общие элементы урартского и хеттского языков" (Эривань 1936, էջ 27 և 57[1]).*

Մինչև հիմա բերած հնչյունափոխական որինաչափությունները իրենց այդ փոփոխման դրդապատճառները ունենում էին կամ մնում բառի մեջ (շիշտ, դիրք, ասսիմիլյացիա...) կամ դրանից դուրս՝ հարևան կամ այլ կերպ դուրդրդված բառի աղդեցությամբ («անալոգիա» և «ժողովրդական էտիմոլոգիա»): Ցնվ այդ բոլորը հնշումնությամբ բացատրվում և կամ ֆիզիոլոգիական—հնչյունաբանական ոլյայնևրով, կամ հոգեբանական և կամ յեզուսի էլ մեջնորդությամբ. իսկ բառերի այդ կերպ փոփոխվելը (բայի շնշոի և ասսիմիլյացիա-դիսսիմիլյացիայի ներգործությունից) ընդհանրապես սահմանափակ է:

Բայց կա և մի այլ տեսակը հնչյունափոխության, որը շատ ընդարձակ տարածում ունի, փոփոխման դրսևորման համար պահանջում է ավելի յերկար ժամանակ. և յեթե այլ արդելք չի ծառանում, ապա այդ յերևույթը պիտի ընդգրկի բոլոր բառերը, այսպես ասած «պարտադիր եքսպանսիա» ունի բոլոր դեպքերի նկատմամբ, յեթե իհարկե դրանց պայմանները չեն փոփոխված: Վերջապես այդ որինաչափությունը միշտ չեր էլ կարող գործել („andere Zeiten, andere Lautgesetze"):

Այս որինաչափությունը ճիշտ կլինի կոչել, հետևելով Բոդուեն դը-Կուրտենեյին, ընդհանուր պատմական հնչյունափոխություն: Հնչյունը, հետևապես, փոխվում է բառի ամեն դեքում և իրեն մեջ, յուր արտիկուլյացիայի փոփոխման ներքին պատճառով, ինքնուրեն, որոշ չափով «սպոնտան» կերպով: Սակայն յուր պատմական տարածման մեջ բացարձակ չե և յուր ընդհանուր պարտադիր և հանրընկալ տենդենցի մեջ այդ որինաչափությունը կախվածության մեջ է լինում: Բացատրենք որինակներով:

Հայերը իրենց դրավոր լեզվի առաջին դարաշրջաններում, ինչպես և դրանից առաջ, իրենց «ո» տառը հնչել են «օ» (ինչպես այժմյան ուղղագրության մեջ), ինչպես որդի, տան, հոգի, խոտ, այծ և այլն*: Բայց հետագայում, թերևս VIII—IX դարից սկսած, այդ «ո» հնչյունի արտաբերման մեջ սկսվում է աստիճանա-

* Այդպես են տառադարձել և ուրիշ բառերը, ինչպես որթոդոքս (=հուն. ρτοδοξος), ալիմպիադ = հուն. Ολυμπιας (—αδος), ասուիկան = պահլավերեն. oōstikān և այլն: Համեմատիր նաև բնիկ հայկական բառերի մեջ՝ առ = հուն. ορρος, որբ = լատ. orbus և այլն:

կան և մի ուղղությամբ փոփոխություն, այն է՝ դրան սկսում է նախորդել յերկշրթնային (և ապա շրթնատատանային) տոնանտ w, վոր մոտ եր մեր «ու» ձայնավորին, բայց շրթունքների ավելի նեղ բացվածքով, իսկ իրեն «ո»-յի արտիկուլացիան յետնալեզվային միջին բարձրությունից դառնում է յետնալեզվային ստորին բարձրության, ունենալով թույլ շրթնայնացում։ Այդպես որդի > ուրդի, ոտն > ուտն, հոգի > հուգի և այլն, իսկ ավելի հետագայում բառասկզբի ու > վ, այսինքն՝ վրդի, վտն..., իսկ հուգի > հվգի > հֆգի (պրոգրեսսիվ ասսիմիլյացիա՝ խուլ «հ»-ն ձայնեղ «վ»-ին դարձնում է խուլ ֆ), վորը ճնացել և այժմյան բարբառներում fu o̯k'i, fu o̯rt', fuo̯ղ...), չի անցել գրական լեզվի արտասանության. այս մասնավոր կետում գրականը վերցրեց գրաբարյան արտասանությունը (հոգի, խոտ...), այնինչ ժողովուրդը ամեն դեպքում, թե բառասկզբում, թե բառամիջում և թե վերջում այդ հին «ո»-ն դարձրել է «ու» (բառամիջում և վերջում) և վ (բառասկզբում), ինչպես վրբի (վուրբի), խուտ, այուր (վանեցոց մոտ) և այլն և այլն։

Բայց արդյոք այս ընդհանուր պատմական հնչյունափոխությունը բացարձակ և անվերջ։ Դիմենք մեր բարբառներին, վորոնք որքանապես դեռ շարունակում են իրենց իմաստնոտ այս զարգացումը (առանց գրային լեզվի ուժեղ ազդեցության)։ Մենք այդտեղ կտեսնենք, վոր դեռ ասում են ոսկի (= օսկի), ոտվի—ոտվըներ, ոքմին, որթունք (թևերս գրաբարից փոխառյալ), ոչով, որըչի (=«ի դուր» Աշտարակում) և այլն, իսկ արարատյան բարբառում (Աշտ., Ոշակ...) այդ հին «ո» (=օ) հնչյունը նաև բառամիջ «վ»-ից առաջ չի դարձել դեռ ու, այլ հնչում են օ. որինակ, ծովի, ով, հով (վորն յեթե ուռ առանար, կդառնար ֆով), կով, բռով, լացով... Նման խոչընդոտ հանդիսացել և, ըստ իս, յերկու հարևան վանկերի «ո» հնչյունների փոխադարձ ասսիմիլյատիվ և պահպանողական ազդեցությունը, վոր թույլ չի տվել այդ սկզբի «ո»-յին դառնալ «վ», ինչպես՝ ոլորել (=օլորել), ոդորմի, ոչով (=վոչ վոք), բայց առանձին հին «ոչ»-ը դարձել է վոչ կամ վոնչ։ Այդ նույնը կարելի յե ասել և հին «ես» տառի մասին (մեր այբուբենի հինգերորդ տառը՝ է, «յեչ»), վորը հնչվել և ինչպես այժմյան մեր նոր ուղղագրության մեջ և ընդունված (=ռուսաց э)*։ Այդ հնչ-

* Այդ չպիտի շփոթել մեր այբուբենի յոթերորդ տառի հետ (է), վորն առաջնալեզվային միջին բարձրության է, ինչպես «ե», բայց ավելի նեղ և փակ, քեռես լեզվի կծկվածությամբ հանդերձ։

*չումը յեղել է թե բառասկզբում (երթալ, եա, երկու, երկար...) և թե բառամիջում (բերել, դեա, տեսնել, բերան...), բայց հետագայում, թերևս ելի նույն VIII—IX դարերից սկսած, այդ հին ե (э) հընչյունը սառնում և սկզբից բաղաձայն «յ» սոնանտը («կիսաձայնը»), այսինքն միջադային տերմինով ասած, յենթարկվում է յոտիզացիայի (йотировка-յի). և սառնում ենք բարբառներում՝ յես, յերկար, յերգ և այլն, բայց և բյերըմ եմ, կյեր և այլն, թեպետ այդ պրոցեսը դեռ չի ավարտվել և շատ տեղ դեռ ասում են՝ եսիր գալիս ա, եսիրմ եմ, երկու, եթալ և այլն, ժամանակ երեվալ, երես (փոխադարձ ասսիմիլացիայով, նման ոլորել, ողորմի...): Վոր այս յերկու արիևնաչափությունների մեջ վոչինչ ասկեցիկին հայկական չկա, այդ յերևում է և ուրիշ լեզուներից, վորտեղ նույնպես տեսնում ենք ո>վո, ե>յե (ի դեպ և այս վերջինից միայն բառասկզբի «յե»-ով դեպքերն է ընդգրկել մեր գրական լեզուն): Համառ. իսպանացոց Piedro (Պետրոս), puerta nueva (= լատ. porta nova «նոր դուռ») և այլն:

Այսպես, արևնակ, նաև վրացիք առաջ ասում էին ori «յերկու», oტ'xi (ոթխի) «չորս», իսկ հիմա ասում են ուրի (վորի) և ուոթխի (վոթխի), ինչպես ռուսաց դյուղերում դեռ ասում են вострый (=սուր) գրական острый բառի դիմաց (восемь ասացվել և осмь հին ձևից). ուկրայներենում вол (=յեզ) վորպես բարբառային ձև հնչում են вуол: Իսկ յոտիզացիայի լավագույն որինակը տալիս և հենց նույն ռուսերենը, ուր հին еда, ехать, есть և այլն այժմ հնչվում են йеда, йехать, йесть և այլն (սկզբի «й»=հավասար է մեր «յ»-ին և ձայնեղ է)*:

Հայերենում կժամանակներից նաև ձայնեղ բաղաձայնների (բ, դ, գ, ջ, ձ) պասիվական փոփոխություն, վորն ընդգրկում է բառի ամեն դիրքը, տարբերվելով ըստ ասիճանի և ժամանակի: Նկատվում և դրանց վեր ածվելը ասպիրատների (բ', դ', գ', ջ', ձ', կամ խուլ՝ փ, թ, ք, չ, ց), նայած արևնաչափության պարզացման: Այն բարբառներում, ուր ձայնավորով սկսվող բառասկզբում առաջ և դալիս մի նոր հավելյալ «ձայնեղ h» (ձայնեղ հարագ), նման 'արի, 'ուս, 'ամեն և այլն, այդ բարբառներում բառասկզբի բ, դ, գ, ջ, ձ բաղաձայնները վեր են ածվել ձայնեղ ասպիրատ բ', դ', գ', ջ', ձ' հնչյուններին, ուր վերջիններիս յերկրորդ բաղադրիչ

---

* Ռուսերենում չկա ձայնեղ «յ» դրության նշան և ակամայից «й» տառն ենք գործածում:

մասն և ձայնեղ սպիրանտ h կամ հնչանով դրած. իսկ բառամիջուկ այդ նախկին բ, դ, գ, ջ, ձ ձայնեղները վեր են ածվել խուլ ասպիրատների (փ, թ, ք, չ, ց), ինչպես, մարդ>մարթ, վարդ>վարթ, խաբել>խափել, գուբ>գ'ուփ, թագավոր>թաքավոր, արջ>'առչ, օձ>ոց և այլն։ Այստեղ, բառամիջուկում, մի արգելաոիթ հանգամանք և միայն այդ յերևույթի տարածման առաջը բանում, այդ այն ժամանակն է, յերբ այդ բ, դ, գ, ջ, ձ գալիս են «ն» առնանտից հետո, ինչպես «հինգ» ասում և անփոփոխ (այդպես և գանձ, բանջար...), թեպետ արարատյան բարբառում հին «ցնդել» հնչվում է «ցընթել» («թ»-ով, ըստ որինքի),

Հայերն ընդհանրապես նախահայկական («հնդեվրոպական») *bh, *dh, *gh վեր են ածել b, d, g, (բ, դ, գ), նախահայկական *b, *d, *g վեր են ածել p, t, k (պ, տ, կ), իսկ նախահայկական *p, *t, *k խուլերը վեր են ածել *ph>h, th, kh (=հայոց հ, թ, ք) ասպիրացիայի միջոցով։ Լեզվաբանները հակված են այս յերևույթը բացատրել նրանով, վոր հնդեվրոպական նախահայերը պայթականները որգաններն թուլ հպումով էին արտասանում (implosio-ն թուլ եր), և այդ հնչուեթյամբ տեղի յեր տալիս փափոխման (ասպիրացիայի և այլն)։ Սակայն սա ավելի քան պրոբլեմատիկ է, իսկ որինաչափությունը հազարավոր տարիներ չեր կարող հարատևել։

Գարսկերենից (և այլուստ) վերցրած հին բառերի b, d, g, բառամիջներն ևս յենթարկվում են այդ որենքին։ Որինակ, բազուկ>բ'ազուկ, բաժին>բ'աժին (բաժանել>բ'աժանել) բամբակ>բ'ամբակ, բանդ>բ'անդ, գունդ>գ'ունդ, գրաս>գ'ըրաս, գանձ>գ'անձ, դաշտ>դ'աշտ և այլն և այլն, բայց հետագա փոխառությունները պահում են իրենց բ, դ, գ ձայնեղ հնչյունները (և վոչ թե բ', դ', գ' կամ փ, թ, ք), ինչպես—ջանդուքան, ջեզվիկ, ջրհաննամ և այլն*։

Մեր բարբառներում հին այ դիֆտոնգը (բառամիջից առաջ հանգամանքով) հետագայում դառնում է վորոշ տեղ է (ե), իսկ վորոշ տեղերում ա (մայր>մեր կամ մար, այս>էս կամ աս և այլն)։ Այս իհարկե հնդհանուր պատմական որինաչափություն է, վորը բացատրվում է թե ընդհանրապես հին յերկձայնավորների (դիֆ-

---

* կա և առանձին հանգամանք, յերբ հին բ, դ, գ, ջ, ձ կարող են այդպես էլ հնչվել. ինչպես դավառական բռնել (բայց բ'ոթել bh հնչյունով), բառել, քնդել և այլն։

տոնդների) անհետացմամբ բարբառներում և ինչ այդ այ հնչման նեղքին փոփոխության մեջ։ Այնտեղ, ուր ավելի կոնսերվացիայի չի ենթարկված եղել «յ»-ն, իբրև հոդնեխեղոլոգիական ուժեղ ժոմնան, այդ բարբառներում «այ» դառնում է «եյ» և հետո՝ է (ե), ուր հաղթում է «յ»-ն (յոտային աղղեցությունը և հետո՝ ինքն էլ ձուլվում). այդտեղ «ա»-ն հարմարվում է, ասսիմիլացիայի չի ենթարկվում ըստ տեղի (լեզվի չետին մասից փոխադրվելով առաջին մասը), այն է, այդ «ա»-ն դառնում է «ե», մոտենալով «յ»-ին և հետո միանանալով մի հնչյունի մեջ (այ>եյ>է)։ Իսկ այնտեղ, ուր իշխել է այդ այ դիֆտոնգի առաջին մոմենտը («ա» տարրը), այդտեղ չկրկորդ «յ» տարրը, վոր շատ թույլ եղ և հընչելի (և հատկապես այդ տիպի բարբառներում), սկսել է անհետանալ և դիֆտոնգը վեր է ածվել պարզ «ա»-յի, ինչպես արևմտահայկական շատ բարբառներում (աս, ասիկա, մարթ, ձան, հար...)։

Գրական լեզվի տարածման և աղղեցության հետևանքով այժմյան վերոհիշյալ բարբառային bherel, dhanak կամ xuot' fuogi կամ hēr, mēr... (har,mar...) և այլն և այլն ձևերը փոխարինվում են (և վոչ թե փոխակերպվում) նոր գրական արտասանությամբ։ Մինչև իսկ բառամեջ հաճախ կարելի չե լսել «նուրբ» («ր» հնչմամբ և վոչ «լ»), «ընդհանուր» (հնչվում է ընդանուր և վոչ ընդանուր, ինչպես սովորականն է) և նման այլ դեպքեր։

Ինչպես տեսանք, ընդհանուր հնչյունափոխության այս որինաչափությունը* պայմանավորվում է հնչյունի սեփական արտիկուլացիայի փոփոխման մեջ առաջ կեկած ինչ-ինչ պատճառներով (անմիջապես՝ ֆիզիկո-ֆիզիոլոգիական թե հոդնական), ունի ընդհանուր տենդենց իրականացման համար և անխորտակելի ձգտում, չնեե խոչընդոտի չի հանդիպում այդ բարբառի կամ լեզվի արտաքին «լեզվական հարաբերություններից» կողմից, իսկ բուն լեզվում (բարբառում) նաև այլ և այլ ֆոնետիկական չերևույթների մեջամտուե լինելուց (անալոգիայի աղղեցություն, փոխառություն և այլն)։

---

* Ուսումնասիրում մատնանշենք այդպիսի փոփոխության հետևյալ դեպքերը հին «մեծ յուս» և «փոքր յուս» տառերը (որոնց հնչյունն եր ǫ և ę, անգային. o և e) հետագայում դառնում են у (ю) և я (а), ինչպես зуб, дуб, читаю, пять, счастье, святой... բառերի մեջ։ Համեմատիր ՔԵՐԵՎ իբրև այդպիսի պատմական որինաչափության հին е ձայնավորի վեր ածվելը o (ō)-յի շեշտի տակ —земля բայց черноземъ, ведро-вёдра... ուր դեր եր խաղում հետևյալ վանկի «փափուկ» կամ «կոշտ» ձայնավորի դերքը։

***

Հնչյունական փոփոխությունների իրականացման ամսվի մեջ զգացվում է կամ անմիջականություն կամ տևական աննկատելի պրոցես։ Եթե իրականացման ժամանակի տեսակետից վրա որոշ հնչյունափոխական յերևույթների մեջ (շեշտի աղդեցություն, ասսիմիլյացիա-դիսսիմիլյացիա...) այդ փոփոխությունների «հասարակագիտական», ինչպես ժամամբ և ֆիզիոլոգիական վ ո ր ա կ ա վ ո ր ու մ ը մեզ յերբեմն պարզ չի լինում,—խոսքս հատկապես վերաբերում է «ընդհանուր պատմական հնչյունափոխության»,—ապա այդ պիտի բացատրել նրանով, որ տվյալ լեզվում, յուր պատմահասարակական պարզացման սպեցիֆիկայի պայմաններում, հընչյունի անընդհատ և ականջով անըմբռնելի հարատև փոփոխվածությունը, նրա քանակական (մոչ ֆիզիոլոգիական առումով) աճի հետևանքը կամ չի տվել այդ հնչյունի ֆիզիոլոգիական-հոգեկան և հասարակական-լեզվական նոր վորակ, կամ յեթե ֆիզիոլոգիական-հոգեկան տեսակետից տվել է, ապա լեզվա-հասարակայնորեն իրրև պատմականորեն անհրաժեշտ յուրացված կատեգորիա, այդ վորակը դեռ չկա։ Մասնավորապես հայոց հին «ո»-ն (=յեվրոպական o հնչյունը) աստիճանական փոփոխություններով սկզբից ստանում է շրթունքների ավելի մոտ հպում, դառնալով հետագայում «ՈՒ», բայց սա դեռ բավական չեր լեզվի պարտադիր նոր գործոնը համարվելու։ Կարող եր պատահել, որ միևնույն լեզվում կամ նրա բարբառում յերկու մոտավոր հնչյուններն էլ գործածվելին (խո՞տ և խուո՞տ, ո՞րդի և ուո՞րդի...), ինչպես տեսնում ենք խեթերենում, ուր ձայնեղ և խուլ պայթականները լեզվի միևնույն շրջանում համահավասար գործածություն ունեյին (karp- ‖ garb- «դերվիլ»,tagn(a)- ‖ dagn(a)—«յատակ» և այլն և այլն). բայց ինչպես տեսնում ենք, յեթե բևեռագիր դրա գրություն մեզ չի խաբում, այդ փոխանցումն անցման շրջանում և դանվելիս յեղել, չի ստացել հասարակայնորեն գիտակցված վ ո ր ո ց վորակ. կար հնչյունների այդ ֆիզիոլոգիական տարբորոշ (t և d, k և g, p և g) ձևերը, բայց չկար լեզվի պատմա-հասարակայնորեն գիտակցություն և յուրացման մեջ մի պարտադիր ըմբռնում, ձևավորված մի սիստեմ, մի ֆիզիոլոգիական-հոգեկան, բայց և հասարակական-լեզվական ֆ ո ն ե մ ա։ Մոտավորապես նույն շփոթությունն եր տիրում գրաբարում, յերբ հին «բ» հնչյունը «ն» բաղաձայնից առաջ դառնում եր «ո» (*dhur-n > դուռն, բայց

դբբան, դբբունք..., *ar—«անել» > առնեմ, բայց արարք...)*, և յերբ հարևան «ն» բաղաձայնից առաջ (նրա ազդեցությամբ) ֆիզիոլոգիապես փոխված նոր «ռ» բաղաձայնը համազոյակից եր նախկին «բ»-ին։ Սակայն հետագայում ուղղահայեց «ռ»-ն վանում և թևք հոլոմների նախկին «բ»-ն, և այժմ ասում ենք՝ ասառ, դուռ, լեռ... յերբ միակ հնարավոր հնչուն և պարտադիրը բոլոր հոլոմների համար ել (դռան, ասառվա...)*։

Առաջին անգամ, վորքան մեզ հայտնի յե, հնչյունի քանակական աճման հետ նրա նոր ֆիզիոլոգիական վորակ ժամանակը յեղել և պրոզ. Բոդուեն դը-Կուրտենեն. սակայն այս միայն հնչյունի «ներքին» (արտիկուլացիոն, ֆիզիոլոգիական-արտաբերական) կողմն և, ինչպես ցույց տվինք, Ավելի կարևորն և հնչյունի «արտաքին» կողմը, նրա հասարակական արժեքավորումը. վորովհետև յեթե дань, дно... և день, д'ня և նմանների «дь» բաղաձայնը ֆիզիոլոգիական տարբերություն ունի (յերկրորդները— день, дня... պալատալիզացիայի յենթարկված), սակայն ընդհանուր լեզվական կամ լեզվի ընդհանուր ըմբռնման տեսակետից այդտեղ դեռ նոր վորակ չի առացվել (բայց լինելու եւ, որինակ, այդ առացվել և, յերբ պարտադիրը և «дзень» և նմանները նոր «дз»-ով)։

Ցերբևիս պատահում և, վոր հնչյունի ֆիզիոլոգիական մոմենտների փոխանցումները ևս աննկատելի յեն, և կարծես թե հանկարծակի կամ անմիջապես և կատարվում այդ փոխանցման թռիչքը, ինչպես ասենք p > k, g > b և նմանները (համեմատիր մեր բարբառների պատոր > կատոր, պորթնջոն > կորնջան..., կամ վոզնի > կոզնի, վոսատ > կոսատ...). բայց այս յերևույթի կամ ներքին ֆիզիոլոգիական մոմենտները մեզ անըմբռնելի յեն կամ դրա հանկարծակի փոխանցման ներքին (իմմանենտ) հոգեկան կողմը տևական պատրաստության հող պնտք և ունեցած լինելու։ Այս «անմիջական» կամ հակադիր որգանների հնչյունների (առաջնալեզվային ≷ յետնալեզվային) փոխանցումը շատ ռուս լեզվաբաններ կոչում են «перебой», վորը, սակայն, այժմ

---

*Այդպես և մեր այժմյան «յ» բաղաձայնի պատմական բռնկանացման խնդիրը հեռանկի յեն, սա յեղ, «հայկական» և նման դրությունների մեջ։ Այդտեղ յուրայն ֆիզիոլոգիական գոյացությունը շատ ու շատ թույլ և (30 տոկոս թերևս) և հասարակությունների վոչ պարտադիր և յուրայնած (կարելի յե այդ դեպքերում և «յ» չհնչել)։ Մեր սեռալ ուղղագրությունը նպատակում և դրա ճշմանը։

չի ընդունվում, որպես մի «առանձին» հնչյունափոխական յեբևույթ, և կարիք էլ չկա առանձնացնելու։

Նմանապես անընդունելի հնչյունափոխական տերմիններ են «անկում» (падение)—«բարձրացում» (под'ем), որ գործ են ածում վոմանք (որինակ Մառը)։ Հնչյունի ֆիզիոլոգիայի մեջ կան վորակական փոխանցումներ (т > ѳ > ս, п > ѳ > ф...), բայց վոչ անկումներ—բարձրացումներ և այլն։

Վորոշ առումով ընդունելի յե «ալտերնացիա» (чередование) տերմինը, յերբ հին կամ ավելի ճիշտ սկզբնական հնչյունը տեղի յե տալիս նորանոր փոխակերպումների. իրրև համապատկերց, լեզվի պատմության մեջ միատեսակ հանդես յեկող հնչյուններին, ինչպես ռուսաց к > ч կամ ц (лик—лиц-о, личный), г > ж, з, (друг—друзья, дружба) և այլն, և յերբ նախնական և հետագա փոխակերպումների հաջորդականությունը դժվար է հաստատվում, որինակ, ռուսաց бер—(беру) ‖ бор—(сбор) ‖ бр—(брать) ‖ бир—(собирать) և նմանները։ Հնդեվրոպական լեզուներում սիրելի յեր e ‖ o ‖ —(zero) յերբյակ ալտերնացիան։

Ընդհանրապես ընդունված է գործածել հնչյունի փոփոխություն, հնչյունական փոփոխություն կամ հնչյունափոխություն տերմինը, թեպետ գերմանացի գիտնականները ունեին «հնչյունի փոփոխություն» (Lautwandel) և «հնչյունի փոխարինում» (Lautwechsel) տարբեր տերմիններ*։

Ի վերջո, ընդհանրապես պիտի ասել, որ լեզվի հնչյունական փոփոխությունները միշտ պարզ ու մեկին չեն լինում, որ մեծ մասամբ յուրաքանչյուր բառապատկերի հնչյունական փոփոխումն անպատ բարդ է, հաճախ խճողված բայվածիսի և բազմաքանակ յերևույթներով։ Ել չենք խոսում «ընդհանուր հնչյու-

---

* Այդ կարծիքին է և Ա. Տոմսոնը, որն ասում է (տես նրա Общее языковедение, էջ 245—246). „Нужно строго различать между изменением звука (Lautwandel) и заменой звука (Lautwechsel)... Однако те и другие называются *звуковыми изменениями языка* или изменениями языка в звуковом отношении. Но замену звука не следует называть изменением звука, как нередко делают. Изменение звука происходит исключительно *фонетическим* путем, между тем как замена звука может произойти и при содействии значений, напр. вследствие „новообразования по аналогии", народной этимологии" и пр.

նախոխութեան» մեջ է հայտ չեկող հնչյունի արտիկուլացիոն նեբքին ունակութեունների փոփոխման դրդապատճառների մասին, որ այնքան կարծիքներ և հարուցել է

Հնչյունական փոփոխութեուններն ուսումնասիրութեան խընդրում միշտ պիտի լինել կոնկրետ, վերցնելով տվյալ լեզվի բառը յուր կրողների ճիշտ պատմականութեան մեջ, ըստ կոնկրետ պայմանների և դարաշրջանների՝ իրենց հասարակական լեզվահարաբերութեունների ճշգրիտ ըմբռնումով։ Որինակ, վերցնենք մեր ժողովրդական «ախպեր» բառաձևը յուր հնչյունական այժմյան այդ դրութեամբ։ Վոչ մի կասկած, որ այդ բառը պիտի կապակցել՝ համեմատելով նրա հայկական և բարբառային «եղբայր» հին բառի հետ, որը հնչվել է ejbayr (ţ կոշտ ł հնչյունն է)։ Այստեղ ակամայից աչքի է զարնվում սկզբի «ե» և «ա» ձայնավորների հակադրութեունը, որոն անշուշտ տարբեր բարբառախոսների ներդրումն է (համեմատիր—Աբաքս ‖ Երասխ, արագ ‖ երազ, աղտիւր ‖ եղտիւր, աղինջ ‖ եղինճ, արատոյ ‖ երատոյ, արագաղ ‖ երագաղ և այլն)։ Իսկ այդ «ա» կամ «ե» ձայնավորների նախադիր (պրոթեսիկի) լինելու տարբերացումը անշուշտ կախված է յեղել նաև այդ բարբառների պատմական կազմավորութեան տարբեր հիմնա-ցեղային ֆեյմենտների կամ տուբստրատների հետ, որոն այժմ և դժվար և ճիշտ պարզել*։ Այդ «ա» կամ «ե» հավելումը պարտադիր կերպով ծառացել է հայերեն համար, քանի որ նրանք այդ ժամանակ (և հիմա) յուրացրած ունեյին այն աղգային յուրօրինակութեունը, որ այլևս չեյին կարողանում բառասկիզբը յերկու բաղաձայնով հնչել, յերբ մանավանդ դա սկսվում եր ր (ռ) կամ ղ (=կոշտ լ) բաղաձայնով։ Մնում և մինչ այդ ստացած «ղբայր» բառամասը, որոն ավելի հին ժամանակ յեղել և պարզ «լբայր», ուր «լբ» մասը հայերին հատուկ «բաղաձայն + r (կամ l)», > «r (l)+ բաղաձ.» յուհատկութեան (մետաթեզիսի) պատճառով ստացվել և «բլ» սկզբնականից, նման (ա)-ղբեւր <-բղեւր < բրեւր=հուն. փրե(ե)ար, φρεαρ (նույն իմաստով)։ Հատատ կարելի յե ասել, որ նախնական *բլայր բառը դիսսիմիլյացիայի արդյունք և ավելի նախկին *բրայր (*braur) ձևի, որը յուր «բ» (<bh) և «այ»(<atr) մա-

---

* Համանսրեն բառի «ա» նախադրութեամբ (հավելմամբ) պիտի կազմվին Հայաստանի հյուսիս-արևելյան մարդերը։ Այս մասին մենք ավելի կունենանք խոսել առանձին

ձերով պատմական փոփոխությունն և հնագույն bhrat(e)r բառի դիսսիմիլացիան կարող էր լինել և ժեստաթեղիսից հետո, այսինքն՝ brayr> rbayr> lbayr, վորի ճշգրտման համար տվյալ դեռ չկա. բայց դա կարևոր չէ մեր այս պատմական վերլուծման համար, քանի վոր յերկրորդական նշանակություն ունի կարևոր և ժեստաթեղիսի և դիսսիմիլացիայի ֆակտորությունը, վորոնք ի հայտ են յեկել այս բառի մեջ: Իսկ ինչ և կատարվել «աղբայր» բառաձևի հետ հետագայում: Նախ «բ»-ն բառամիջում դարձել և «փ» (ինչպես՝ խարել> խափել, գուբ> գուփ և այլն), և ստացվել և «աղփայր». խուլ «փ»-ն աղդելով ձայնեղ «գ»-ի վրա դարձրել և նրան խուլ «խ», և ստացվում և «ախիայր», ուր սակայն «փ» ապիրատի «հ» ժամննտը լինելով «խ»-յի մեջ, կլանվում և վերջինիս կողմից և «փ»-ն դառնում և պարզ «պ»: Այս պրոցեսի հետ զուգահեռ տեղի յե ունեցել ընդհանուր պատմական փոփոխություն այ> է (ե), վորի մասին մենք ասել ենք: Հետևապես հնագույն bhrātēr բառի վերածվելը brayr (>rbayr) > blayr >lbayr միջոցակով «աղբայր» (‖ ե-դբայր) հինդևերորդ դարի արտասանություն մեզ տալիս և մի շարք «որինաչափություններ»—աղբային արտիկուլացիան «բ»-ով, դիսսիմիլացիա, ժեստաթեղիս, պատմական հնչյունափոխություն, ասսիմիլացիա-դիսսիմիլացիա...*:

Այս որինակի վրա մենք տեսնում ենք, թե հաճախ վորքան բարդ և ներխճոզված է լինում մի բառի պատմական զարդացումը յուր հնչյունական արտաքինի մեջ անգամ: Այսպես են, իհարկե, և լեզվի մյուս «իրականությունները» (ֆակտուրան): Ցեթե «աղբայր» կամ նման բառերի պատմական զարդացման այս ետապները և հնչյունափոխական յերևույթները մենք հնարավորություն կարողացանք տալ, յելնելով հնդեվրոպական կոչված bhrater հին ձևից (մեր մյուս patronomica—աղգակցական տերմիններ և դերիշ-

---

* Այս բոլորից հետո, վորքան տարօրինակ և հակադիտական և յերևում այն լեզվաբաններ վերաբերմունքը, յերբ այժմյան հնչյունատեսքով բառերը, կարելի յե ասել, ֆետիշացման և քարացման են յենթարկում, կարծես թե ատանձյակ հազարավոր տարիներում հնչյունները վեչ փոխվել են և վեչ էլ ավելացել կամ դուրս ընկել, վեչ իրենց դիրքերն են փոխել և այլն և այլն: Բայց, Գրիմմի, Դիցի, Գաստի և այլոց մեծությունը հենց նրանումն է, վոր նրանք, ինչպես և Ենգելսն և մասնավորում «Անտիդյուրինգում», կանդնեցին լեզվի զարդացման պատմական հողի վրա:

խող ժասով հնդեվրոպական են*), ապա համեմատական այս մեթոդով այլ դեպքերում շատ հեռուն չենք կարող գնալ, չունենալով թե այլ ավյալներ համեմատելու համար և թե լեզվի հասարակական զարգացման կոնկրետ պատմական ըմբռնումները, ուր նոր ու ցամաք կոմպարատիվիզմը հանգում է ֆորմալիզմին։

Այս տեսակետից ավելորդ չենք համարում նորից անդրադառնալ «հնչյունափոխական որենքներին» (фонетический закон), յուրը գոյություն ունի այդ որենքների հարաբերական անընդհատության և դրսևորման (գործոնականության) առկայության։ Հիմնական յերևույթը սկսվում է հնչյունի իրեն մեջ փոփոխվելով, նրա արտիկուլացիայի այլ ձևակերպումով։ Ցեվ ֆոնետիկական որենք կամ որինչափություն կկոչենք, յերե հավասարենք և ձևակերպենք, վոր այսինչ հնչյունը յուր լեզվի վորոշ դարաշրջանում և պայմաններում ստացել է ավյալ փոփոխակիը**։ Ինչպես արդեն ասվել է, այդ «որենքները» (=որինաչափություններ) ժամանակական չեն, և յերե պայմանավորված չեն ավյալ բառի արտաքին տեսքով, այլ ամեն բառի եվ բոլորովին են, այնուամենայնիվ իրենց անհրաժեշտության մեջ դեմ կարող են առնել շատ ու շատ հակընթաց «պատահականություններին», ինչպիսիք են, մասնավորապես անալոգիայի (ձևաբանական ասոցիացիայի) ազդեցությունը, բառային հնչապրության նոր պայմանները, փոխառությունը այլ լեզվից (կամ բարբառից) և այլն։

Ազգակից լեզուների համեմատական ուսումնասիրության մեջ ևս գոյություն ունի «հնչյունական որենք», վորը վոչ այլ ինչ է, քան յերե այդ լեզուների մեջ յեղած հնչյունական համապատասխանությունների (звуковые корреспонденции) վորոշ ձևակերպումը՝ ֆորմուլիրովկան։ Այդպիսի «որենք» է, որինակ, ֆրանսերեն e ձայնավորի համապատասխան լինելը լատինական շեշտավոր a-յին, ինչպես լատ. pàter («հայր») ~ ֆր. pére.

---

* Բացի զուտ ինչ բառից, վորը կովկասյան եւ հնդեվրոպական են—քոյր, մայր, եղբայր, հայր, սկեսուր, դուստր (վորից ուստր), տալ, տայդը, աներ...

** Ա. Մեյյեն հետևյալ կերպով է ասում. «Այն կանոնները, վորոնցով պահվում են հին արտիկուլացիաները և մտածվում նորերը, կոչվում են ֆոնետիկական որենքներ» (տես նրա՝ «Введение в сравнительную грамм. индоевр. языков», Юрьев 1911, եջ 26)։

լատ. amatum («սիրած»)—ֆր. aimé և այլն, կամ, որինակ, հունգ—սանսկր. bh, գերմ. և հայկ. b և այլն (ջ՛ըթ, սանս. bhàrami, գոթերեն baira, հայոց berem...)։

Հնչյունափոխական այս ընդհանուր «օրենքը», լինելով մի լեզվի տարբեր շրջանների նկատմամբ և կամ մի քանի լեզուների մեջ, ձևակերպված և հանդես գալիս միայն հետագայում, իբրև նմանբերիկ մի դիտում մեր կողմից. հետևապես այդ «օրենքը» նախապես չի կարող մեզ ասել, թե ինչ կարող և լինել հետագայում այս ինչ պայմաններում։ «Օրենք» տերմինը դուռ պայմանական է, և վոչ էլ հարմար. պահվում և լեզվաբանության պատմագործադրության տրադիցիայով և բնավ այն չէ, ինչպես, որինակ, մի ֆիզիկայում կամ քիմիայում։ Հնդեվրոպական լեզուների համեմատական ֆոնետիկայի մի շարք հայտնաբերումներից հետո, իբրև Բոպպի, Գրիմմի և Պոտտի խիստ կարևոր աշխատությունների հետևանքով դեռ շատ բացեր ու անհետևողականություններ էլին մնում, միայն 1875 թվին Վիլհելմ Շները, իսկ ժանավանդ 1876 թվին Ավգուստ Լեսկինը (ավելի վորոշ) ճիշտ ձևակերպեցին «հնչյունական օրենքը», վոր դրանք բացառություններ չեն հանդուրժում, վորչափ այդ օրենքների գործունեությունը չի խախտվում այլ օրենքների գործողությամբ։ Այդ «այլ օրենքների» տակ, ինչպես տեսել ենք, հասկացվում էր հոդեկան ասոցիացիան (անալոգիան), փոխառությունը և այլն։ Գործնականում իրերեն և դժվար և լինում ճշտիվ ձևակերպել այդ «օրենքը», քանի վոր դրա հանդեպ լինում են անբացատրելի այլ հանգամանքներ կամ իրևույթներ մանավանդ վոր դեռ չի ունենում տվյալ լեզվի պատմական գրավոր դոկումենտացիայի անընդհատությունը և այն պայմանների ըմբռնումը, վորոնք ազդել են այդ լեզվի հնչյունական կողմի փոփոխության վրա։

Ընդհանուր հնչյունափոխությունը, ինչպես դիտենք, կապված և հնչյունի արտիկուլացիոն հանգամանքների փոփոխման հետ, պայմանավորված և անմիջապես իրեն ներքին ֆիզիոլոգիական փոփոխմամբ, և իրեն խոչընդոտի չի հանդիպում, ապա պատմական վորոշ ժամանակաշրջանում տարածվում է բոլոր բառերի վրա, քանի վոր նա կոնկրետ բառական հանգամանքից չի կախված, այլ իրենով և պայմանավորված, իմմանենտ է։

Բայց այստեղ ընդհանրապես հարց պիտի ծագի, թե ինչու

յն այդ հնչյունափոխությունը կատարվում, վորոնք են դրա հիմնական դրդապատճառները։

Կար տեսակետ, վոր ասում էին մեջ են կանխավ դրված այն տրամադրությունները, վորոնք նախորոք գծում են հնչյունական փոփոխությունների ընթացքը*։ Այս տեսակետը իհարկե քննադատության չի դիմանում և մերժվում է բուրժուական լեզվաբանների կողմից անգամ (Wundt, de-Saussure և այլն)

Մենք կին բերում նաև բարհնչունության կամ հեշտության սկզբունքը, վորով իբր թե ընդհանրապես կարող են պայմանավորված լինել հնչյունական փոփոխությունները։ Նախ «բարհնչունությունը» շատ սուբյեկտիվ ըմբռնողություն է և այն էլ պայմանական, վորովհետև այն, ինչ մի լեզվում դեղեցիկ և հեշտ է (իբր թե), մի այլ լեզվի (կամ նույն լեզվի այլ շրջանի) համար հակառակն է լինում. մեր ծ, ճ.. կամ վրաց ჯ, արաբական «այն» և այլն, շատ նորմալ են իրենց համար։ Հաճախ մեր սովորական «ա», «է», «ո» և նմանները մեծ դժվարություն են հարուցում կուլտուրապես հետամնաց ցեղերի համար իրենց նրբծծվող հնչյուններով անգամ։ Այն, ինչ վոր հայի համար (խաղաղություն, ճիճու...) հեշտ և դեղեցիկ է, ռուս ժողովրդի համար անասանելի չի (նրա համար «խաղաղությունը»—հնչական պատերազմ է)։ Վերջապես բարհնչունության հիպոթեզը նրանում է մեղանչում, վոր մարդ յուր ամենօրյա կյանքում, յուր նորմալ պայմաններում դիտակցական վերաբերմունք չի ցուցաբերում հնչյունաարտադրման և փոփոխման խնդրում։ Իսկ յեթե հեշտությունն են մատնանշում, ապա մարդ յուր սովորական խոսակցության ժամանակ դժվարություն չի կրում, իսկ պատ-

---

* Այդ տեսակետի տեսակետ պաշտպանողներն են յեղել քան Ռ. Շորի հետևյալ լեզվաբանները—Lotze (Mikrokosmos, 1858), Merkel (Physiologie der menschlichen Stimme, 1857), Scherer (Zur Geschichte der deut. Sprache, 1868), Bentey (1876). յերիտասարդ քերականներից—Osthoff (Das physiologische und das psychologische Moment der Sprachlichen Formenbildung, 1879): Բոլորն էլ ի նկատի չեն առել խոսքը մեր որդանի անատոմիական կառուցվածքի առանձնահատկությունները։ Ռուսաստանում այժմ նման տեսակետ ունի С Рогов (О звук. изменениях речи, 1927; Об изм. звуков и органов речи 1929): Նույն տեսակետի այլ արտահայտություն է, յերբ հնչափոխությունները պայմանավորվում են կենտրոնական ներվային սիստեմի հատկություններով, ինչպես տեսնում ենք Rousselot-ի մոտ («Etude sur le patois»): Ռ. Շորի այս ծանոթությունը մենք վերցրել ենք Ф. де-Соссюр, Курс общ. лингвистики գրքից (ОГИЗ, 1933, էջ 243)։

մուքյունն էլ մեղ վկայում է նաև հակառակը, այն է՝ պարզ և առաջնալեզվային հնչյունների համախակի բարդացումը կամ փոխարինումը յետնալեզվայիններով, վորոնց (բարդերի և յետնալեզվայինների) արտաբերումը ավելի էներգիա յե պահանջում։ Մեր կարծիքով սխալ է Ն. Ցա. Մառի այն տեսակետը, թե բարդ (դիֆֆուզոյիդ) հնչյունները նորաստադիալ լեզուներում ստացվել և պահվել են հին ստադիալ վիճակներից («հարևթական» և նախորդ ստադիաներից), իբրև այդ նախորդ ստադիաների հատկանիշերից մեկը։ Այստեղ էլ ֆետիշացում և աբխազիզացիա յե կատարվում այդ հնչյունների նկատմամբ նրանով, վոր բարդերը վերագրվում են միայն հին դարաշրջաններին (կամ ավելի ճիշտ «լեզվաշրջաններին») և վոր նրանք վորոշ տրանսֆորմացիայով (ձևափոխումով) անցնում են հետագա շրջաններին։ Հետևապես դուրս է գալիս, վոր հետագա այդ լեզվաշրջանները (կամ լեզվավիճակները) կամ նոր բարդ հնչյուններ չեն առաջացնում, թեպետ ունենք խուլացող նոր յ, ջ կամ լեհերի r > rž, d > dz (որինակ день > дзень) կամ մեր բարբառների քʻևռի > «չևռի», բարդ «չ»-յով, կամ յեթե ունեն էլ, ապա դրանք պիտի հնագույն շրջանի անփոփոխ մնացած ստեղծագործությունը լինեն և հետագայում չեկին կարող զոյանալ*։ Բարդության վորակն էլ մարդուս կիսակենդանական լեզուում այլ կարող եր լինել, քան հետագա ասպիրատներն ու աֆֆրիկատները։ Բայց սրա հետ միասին չպիտի ժխտել մեր արտասանական ապարատի աստիճանական հարմարվելը մեր հընչման, նրա բովի յետևից (կոկորդից) ավելի առաջ գալը՝ դեպի բերանային խոռոչի մեջը և սկիզբը, մեծ էներգիա պահանջող և խիստ բարդ (նման աբխազականին) հնագույն («կիսակենդանա-

---

* И Мещанинов-ը յուր "Проблема классификации языков в свете нового учения о языке" (1935) գրքում տալով Ն. Մառի տեսությունը, ի միջի այլոց ասում է. Пережиточно сохраняющиеся нормы предшествующей стадии, в раженной в языках яфетических систем, должны прослеживаться и в следующем их уже «индо-европейском» оформлении. Если мы с этой стороны подойдем к «индоевропейским» языкам, то увидим, что сложная система заднеязычных звуков в языках «ин.-евр.» системы не сохранилось; правда, сложные звуки переднеязычного ряда имеются налицо, но все же в значительно меньшем количестве, чем в яфетических, например, русские «ц» и «ч» (տես էջ 58—59)։ Դուրս է գալիս, վոր ռուսաց ц, ч միայն ստադիալ փոխանցումով են ստացվել, նոր չեկին կարող լինել (k—t-ից)։

կան») դիֆֆուզոյիդ հնչյունների փոխանցումը նոր վորակի հնչյուններին, պարզ թե բարդ։

Մատնանշում են նաև մարդուս ֆիզիկական շրջապատի և վերջերս նաև կուլտուրական պայմանների աղդեցությունը լեզվի հնչյունական կազմի, հետևապես և փոփոխության վրա։ Այստեղ դժվար և լինում կոնկրետ կերպով մատնանշել այդ կապակցությունը։ Ըստ Վունդտի, լեզվի հնչյունական կողմի ֆոնետիկական փոփոխությունները հետևանք են բարդ հոգեֆիզիկական ակտի, վորն առաջանում և պատճառների համակցությունից՝ կոմպլիկացիայից. բայց գլխավոր տեղը նա էլի հատկացնում է ընդհանուր կուլտուրական պայմաններին։ Լեզվաբան Վ. Գորժդոնիկին այս առթիվ տալիս է հետևյալ ճիշտ առարկությունը և մնկնումը. «Ա.յդպես, յես կարծում եմ, վոր ընդհանրապես չի կարելի ժխտել մարդուս շրջապատող ֆիզիկական և կուլտուրական պայմանների աղդեցությունը ի միջի այլոց և լեզվի հնչյունական կողմի փոփոխության վրա, բայց անմիջապես դրսևորել (обнаружить) այդ աղդեցությունը մենք տակավին ի վիճակի չենք, վորովհետև նա (=աղդեցությունը) շատ ինստանցիաների և միջնորդավորող աստիճանների միջոցով և անցնում, մինչև վոր անդրադառնում և այս կամ այն կերպ այն հոգեֆիզիկական պրոցեսների վրա, վորոնք վերաբերում են խոսքին» (տես նրա „Введ. в языковедение“, Москва, 1913. եջ 141)*։

Մատնանշվում և հնչյունական վիճակի և փոփոխության նկատմամբ նաև լեզվին նախորդող և նրա մեջ մերված այլ լեզվական սուբստրատի դերը, այսինքն, յերբ այլալեզու (կամ այլատարբառ) մի հասարակություն յուրացնում և մի նոր լեզու կամ բարբառ), խառնվելով նոր ժողովրդի հետ։ Ըստ Ա. Տոմսոնի, «դժվար և ցույց տալ շահագործողական կամ եթնոգրաֆիական մի վայր, ուր յեղած չլինեն լեզուների կամ առնվազն բարբառների խառնում» (Общ. яз. 259) կամ թե «լեզուների խառնվելու ժամանակ ընդհանրապես միաժամանակ առաջանում

---

* Հնչյունական փոփոխությունների հարմարվելը հողին (=տեղին և կլիմային (почва и климат) պահպանել են, օրինակ, Lotze (Mikrokosmos, 1858), Osthoff (Das. phys. und psych. Moment, 1879), H. Meyr (Zeitschrift für d. Altertum, 45), Schrijnen (Einführung in das Studium, 1921)։ Բայց լեզվաբանների մեծ մասը այդ թեորիան համարում է անապացուցելի (տես Ռ. Շորի ծանոթ. հիշվ. գրքում, եջ 244)։

և հոծ թվով մարդկանց մեջ յերկլեզվություն... լեզուների խառնվելու հետևանքով կարող են ի հայտ գալ փոփոխվող լեզվի մեջ վոչ միայն այն հնչյունները, վոր կան փոփոխող լեզվի մեջ, այլև միանգամայն նոր հնչյուններ...» (եջ 260) կամ թե «լեզուների խառնվելով և բացատրվում կելտերենի, հայերենի, անգլերենի և այլոց խիստ փոխվելը» (եջ 261)։ Լեզվական խառնուրդ գոյացումը, վորպես հիմնական լեզվաստեբատրատ, հատկապես մատնանշվում և ռոմանական կոչվող (ֆրանսերեն, իսպաներեն, պորտուգալերեն, իտալերեն, ռումաներեն) լեզուների վերաբերյալ*, ուր կազմարար միավորները յեղել են ժողովրդական լատիներենը մի կողմից (իբրև գլխավորը) և կելտերենը, իբերերենը, դակերենը և այլն՝ մյուս կողմից։ Ըստ Ռ. Շորի (де Соссюр, Курс общ. линг. 245) „Теория субстрата, выдвинутая Асколи и другими романистами для об'яснения различий романских языков, пользуется широким признанием в лингвистике конца XIX—начала XX веков (Wundt, Paul, Windisch, Schuchardt, Meillet, Feist...) Теорией субстрата оперирует и яфетидология до момента введения понятия стадиальности (1924 г.),—ср. Н. Марр, Яфет. Кавказ и третий этнич. элемент в созидании средиземноморской культуры“։ Թխտել լեզվական սուբստրատի դերը ժողովրդների խառնվելու (Völkermischung) ժամանակ չի կարելի, քանի վոր դա կարելի չի ապացուցել բազմաթիվ փաստերով։ Բայց այդ ազդակը լինում և լեզվի գոյացման և ընթացքի սկզբնական շրջանում. իսկ յետո, այլևս չի կարելի հնչյունափոխական կամ այլ լեզվական նոր յերևույթները բացատրել այդ գոյացման լեզվաֆորմատիվներով. լեզուն դառնում և նոր սիստեմ, և նախկին որինաչափությունները ժամանցնական չեն։ Այս նույնը պիտի ասել և ապագայում

---

* Ծանոթը բերում է և հետևյալ որինակները. «Լատվիայում ապրող բնիկ գերմանացիների արտասանության մեջ կարելի չի լսել կոշտ (վելար) l, ինչպես wald բառի մեջ, վոր կա և լատիշերենում։ Դավկասյան k, t, p, և այլ համուր հարվածով» [հնչյունները] անցել են վրացերենից հայերենին, հարևան շրջաններում յեղած յերկլեզվության պատճառով, և ատրածվել գեպի արևմուտք... (եջ 259—260) կամ թե «Պրուսախայի գերմաներենի հնչյունական առանձնահատկությունները բացատրվում են նրանով, վոր պրուսակները մեծ մասամբ բալտիկական (=հին պրուսներ) և սլավոնական ծագումով են» (եջ 261)։ Մատնանշենք մեր կողմից, թե վորքան պահպանողական է գումառական շեշտը, յերբ այժմ մեր խորհրդային լավագույն ինտելիգենտները, քաջ տիրապետելով գրական լեզվին, այնուամենայնիվ պահում են տեղական շեշտը

խառնուրդ ձևով գոյանալիք համամարդկային մի լեզվի նկատմամբ։

Ամենաընդունված կարծիքը հնչյունական փոփոխության նկատմամբ այն է, որ նոր սերունդները իրենց փոխանորդության (դիներացիայի) հետևանքով ակամայից և անգիտակցորեն ասպիճանական փոփոխության են ենթարկում հնչյունները։ Ինչպես Դ. Ուշակովն է ասում—«Լեզու յուրացնողները—յերեխաները կամ ոտարազգիները—աշխատում են վերարտադրել այն հնչյունները, որոնք լսում են, ընտրելով այսպես ասած շոշափմամբ այս կամ այն արտիկուլացիան, ընդ որում կոնտրոլյորը հանդիսանում է ականջը։ Բայց ինչքան էլ շատ լինի նրա կոնտրոլական (ընտրողական) ունակությունը, այնուամենայնիվ դա սահմանափակ է և հնչին տարբերությունները նրա (ականջի) կողմից կարող են չնկատվել. իսկ այդ չնչին տարբերությունները հետևանք են արտիկուլացիայում յեղած թեկուզ չնչին տարբերությունների։ Մյուս սերունդի ժամանակ կարող է լինել էլի չնչին թեքում (շեղում), և հետևանքը լինում է, յերբեմն յերկարաձև պրոցեսում, արդեն այլ հնչյուն» (տես նրա Краткое введение в науку о языке, 1922 г., *եջ 110)։ Այս նույնը ձևակերպում է Վ. Գորժեղինսկին (եջ 140) այսպես. «Կա և այնպիսի կարծիք, որ լեզվի հնչյունական կողմի փոփոխությունը խոսքի պրոցեսի հետ կապված լեզվի սոսկական գոյության անհրաժեշտ հետևանքն է, ուր (խոսքի պրոցեսում) արտասանության ժամանակ սկզբում լինում են ամենափոքր շեղումներ (минимальные уклонения), որոնք մասամբ ուղղվում են, մասամբ էլ կուտակվում են վտոռ ուղղությամբ [ընդգծումը մերն է, Գ. Ղ.] և տալիս են վերջի վերջո արդեն զգալի հետևանքներ»։ Այս մեր մատնանշած «սերունդների տեսության» („теория поколений") կողմնակիցները յեղել են Bremer, Pipping, Oertel, Paul և այլն*։ Ռուսաց լեզվաբանները ևս այդ կարծիքին են (Տուտոն, Ֆորտունատով, Գորժեղինսկի, Ուշակով, Կնաուեր և այլն), իսկ հայերիս մոտ այդ գիծն ուժեղ կերպով պաշտպանել է Մ. Աբեղյանը յուր «Հայոց լեզվի տեսության» մեջ։ Նման տեսակետի եր և սոցիոլոգիական դպրոցի կարկառուն ներկայացուցիչ՝ հայտնի լեզվաբան A. Meillet (Մեյյե), որ և հայտնի հայագետ եր։ Նո-*

---

* *Հատկապես մեծ դեր խաղաց այդ կողմից դերմանացի Paul-ը յուր* Prinzipien der Sprachgeschichte *գրքով։ Տես նաև դր Սոսյուրի («Ընդհ. լեզվաքննության կուրս») գիրքը, եջ 141 և Ռ. Շորի ծանոթությունը (եջ 244)։*

սելով «լեզվի ևվոլյուցիայի նորմալ տիպի» մասին, նա ասում է, որ անհատի տեսակետից այդ լեզուն իր գործառնության մեջ հանդես է գալիս որպես անդիտակից ասոցիացիաների մի բարդ սիստեմ՝ արտադրող օրգանների շարժումների և զգացումների մեջ, որը (սիստեմը) թեպետ նույնությամբ ուրիշների մոտ չկա, բայց նմանը գտնում ենք և ուրիշների մոտ, և յուր նորմալ տիպով պարտադրվում է բոլորին. հետևապես լեզուն թե ֆիզիոլոգիական և հոգեկան երևույթ է և թե սոցիալական։ Բայց քանի որ ասոցիացիաների այդ սիստեմն անմիջապես չի կարելի փոխանցել մեկից մյուսի, որովհետև լեզուն իր չէ, այլ գործունեություն («язык не вещь, ἔργον, а деятельность, ἐνέργεια»*), ապա յերեխան խոսելու սկզբնաշրջանում մեծ լարվածությամբ և դժվարությամբ է ջանում վերարտադրել մեծերի այդ բարդ սիստեմը, բայց ամենայն ճշտությամբ այդ նրան չի հաջողվում. «արտասանության որոշ դետալներ («ներբամանություններ») չեն ըմբռնվում նրա լսողությամբ, բառափոխությունների որոշ առանձնահատկություններ վրիպում են նրա ուշադրությունից, և ընդհակառակն՝ այն սիստեմը, որը նա իրեն համար հաստատեց, միայն մասամբ և համընկնում մեծերի սիստեմների հետ. ամեն անգամ, յերբ յերեխան սովորում է խոսել, նա մուծում է լեզվի մեջ որոշ նորություններ» (տես նրա «Ներածություն»-ը ռուսաց թարգմ., եջ 20—22)։ Ինչպես տեսնում ենք, Մեյյեն ևս մեծ դեր է հատկացնում սերունդների փոխանորդության։ Մատնանշելով հին l mouillée («l փափուկ») հնչյունի փոխակերպվելը հյուսիսային Ֆրանսիայում նոր y (=հայոց յ) սոնանտի, և այն էլ ըստ տարիքների (1850—1855 թվերի ծնվածները դործ էլին ածում l mouillée, իսկ 1855—1860 թվականների ծնվածները «l»-ն փոխել էլին «y»), Հունաստանում այլևայլ ժամանակաշրջաններում և բարբառներում մինչև 328 թ. ս.թ. առաջ յերկակի թվի անհետացումը**, և տալով այդ յերևույթների անընդհատությունը և աննկատելի կուտակումը նոր սերունդների միջոցով, Մեյյեն ամփոփումներս վերջացնում է. «Այդ փոփոխություն-

---

* Այս ասույթը պատկանում է Վիլհելմ ֆոն Հումբոլդտին։

** «Двойственное число сохранилось в Аттике до конца V столетия до н. э. но около 410 г. в надписях замечается небрежное его употребление...», հետո գործ է ածվում ուղ. և հայց. հոլովներում, իսկ 329 թ. անհետանում։

նների պատճառները ընդհանրապես անհայտ են, հատուկ են վոչ մի տեղի, այլ դրծում են ընդարձակ տարածություններում» (նշ 22)։ Կարևոր է նշել, որ Մեյյեն Սոսյուրի և կրտսեր «յերիտքերականների» (Loewe, Brugmann) նման ընդգծում է հնչյունափոխությունների ժամանակագրությունը։ Սոսյուրն այդ առթիվ ասում էր. «Ծանրագույն սխալը... կայանում է նրանում, որ ձևակերպում են հնչյունական օրենքը ներկայումս, որպես թե նրանով հավաստող փաստերը գոյություն ունենային միևնույն ընդ միշտ. այնինչ իրոք նրանք գոյանում և անհետանում են ժամանակի որոշ հատվածներում» (Ֆ.де-Соссюр, Курс общ. лингв., 139)։

Ամենամեծ առարկությունը սերունդների դեներացիայի ֆակտորի դեմ բերում են այն, թե ինչու յերեխաները փոփոխում են միայն որոշ ուղղությամբ, ինչու արտասանական մեր որոշումների աշխատանքի մեջ չնչին շեղումները կուտակվում են միևնույն ուղղությամբ. և յուրաքանչյուր ոք հաջորդական փոխանցում հայրերից յերեխաներին տանում և դնում այս և վոչ այլ փոփոխումներին, որոնք էլ չնչին լինեն դրանք. իսկ յերբ հնչյունափոխումը միանգամից և լինում, ապա այդ բացատրում են կրկնվող սխալմունքներով (ավելացնելով դրանց մեջ обмолвка-ներ, ослышка-ներ*), բայց բնավ չեն ասում թե ինչու ամեն մի տվյալ դեպքում որոշ ուղղությամբ և այդ սխալը կատարվում (Порж. Введ. в яз., 142)։ Սոսյուրը հետևյալ ձևով է առարկում դեներացիայի հնչյունական գործունեության. „В самом деле, нельзя понять, почему данное поколение удерживает одни из усвоенных в детстве неточностей, а не другие, в одинаковой мере естественные; действительно, выбор ошибочных произношений представляется чисто произвольным, рационально не обоснованным. Далее, почему данное явление распространилось именно в данную эпоху, а не в другую? („Курс“ 141—142): Ցավ այս բոլորի հետևանքը այն է, որ հնչյունական փոփոխությունների պատճառների պարզությամբ, ինչպես Սոսյուրն է ասում,

---

* Обмолвка-ն այն է, որ լավ չի արտասանված, կիսատ-պռատ է դուրս բերվում, իսկ Ослышка-ն վատ լսելու հետևանքով՝ սխալ արտասանելն է յուրացնողի մոտ։

հանդիսանում և լեզվաբանության ամենադժվար խնդիրներից մեկը*։

Կասկած չկա, որ ընդհանուր հնչյունափոխության երևույթը սկսվում և մասնավոր դեպքից և անալոգիայի ազդեցությամբ «կույր» բնական ուժով** տարածվում է և բոլոր նման դեպքերի վրա, ստանալով կանոնավոր օրինաչափական արտահայտություն. իսկ մենք միշտ կամ կատարված վերջնական կամ քիչ թե լավ ձևակերպված փաստն ենք արձանագրում, ինչպես հայոց ո> ուո (>վո), հայոց ե>յե, բ, դ, գ, ջ, ձ>բ՛, դ՛, գ՛, ջ՛, ձ՛ կամ փ, թ, ք, չ, ց (նայած բառասկիզբին և բարբառին) կամ թե գերմաներեն բոլոր ī (i երկարը) դարձել է ei և հնում՝ ai (wīn>Wein «գինի», trīben>treiben, «հալածել, քշել», zīt>Zeit «ժամանակ», līhen>leihen «շնորհել»*** կամ գերմ. երկար ū, դառնում է au (hūs>Haus «տուն», zūn «ցանկապատ»>Zaun, rūch «մուխ»>Rauch...) կամ երկձայն ie դարձել է երկար ī, պահելով ուղղագրությունը (biegen «ճկել», lieb «սիրելի», Tier «գազան»..), կամ երկու ձայնավորների միջև h-ն դուրս է ընկնում (sehen>seen, leihen>leien..), ֆրանս. l փափուկը>y (յոտա), լատ. միջձայնավոր s>r (*genesis>genesris, *asena>arena...) և այլն և այլն։

Այդ «օրինաչափությունը» բացարձակ և ժշտնջենական չի համարվում. սկսվելով մասնավորից նա տևողենց և ստանում ընդգրկել բոլոր նման դեպքերը, սակայն հանդիպելով խոչընդոտների՝ նա կամ կիսաճանապարհին և կանգնում կամ ընդհանրապես դադարում է. և այդ լինում և մոչ միայն լեզվի տարբրյունրին զարգանալիս, այլ և գիտակցական կանոնավորման ժամանակ (դպրոցի, գրական լեզվի ազդեցությամբ և այլն)։ Բառերի հնչյունական փոփոխությունները միշտ էլ լինելու չեն, և մարդկային գիտակցությունն ու կամքը այստեղ դեր չեն խաղում։ Կոլ-

---

*Выяснение причин этих изменений [ընդհանուր հնչյունափոխությունների մասին է] является одним из труднейших вопросов лингвистики („Курс" 139).

** Ձևբխաստարդ քերականները այդպես նյին ձևակերպում այդ օրենքը»—«Die Lautgesetze wirken mit blinder Naturgewalt» (=Հնչյունական օրենքները գործում են կույր բնական ուժով)։

*** Համեմատեք գոկերի կամ գաբարազգիների նույն օրենքը (i>ai), հինկ>հնայգ, ծիծաղ>ծայծաղ...

չկախվի յուրացման տեսակետից եւ սկզբից միայն վորոշ քանակին եւ սկսում փոփոխված ձեւով արտասանել, իսկ այս կարող է կամ հող ունենալով տարածվել վողջ մասսաների մեջ կամ եւ չզարգացնալ եւ անհետանալ. այդ վերջին դեպքում այդ փոքրաթիվ խաւրակի եւ խմբակների (հատկապես բարբառներում*) ՝նոր արտասանութիւնը յերբեմն ծաղրանքի առարկա յի դառնում, վորը ցոյց է տալիս հնչյունական յերեւույթի (ֆենոմենի) սահմանափակ լինելը եւ մասսաներից մերժվելը։ Իսկ յեթե բարենպաստ ընդհանուր հող կա, ապա այդ հնչյունական ֆենոմենը տարածվում է անարգել եւ կանոնավոր, իհարկե պատմական սահմանափակ շրջանում։ «Բարենպաստ հողի» տեսակետից մինչեւ իսկ անհատները, մանավանդ քաղաքական հայտնի ճարտասաններ կամ դործիչներ, ինչպես եւ հայտնի դպրասաններ կամ դրողներ, կարող են յերբեմն ուժեղ արտասանական տպավորութիւն թողնել իրենց խոսքի ինդիվիդուալ առանձնահատկութեամբ։

Ապա ինչ յեղրակացութեան են դալիս լեզվի հնչյունական փոփոխութիւնների պատճառները հայտնաբերելիս թեպետ այդ՝ ըստ Սոսյուրի, «լինգվիստիկայի դժվարագույն խնդիրներից մեկն է»։ Վերը պիտի լինի այս խնդրում այն նորը, վոր տալու յի լեզվի մատերիալիստական ըմբռնումը յուր պատմական զարգացման մեջ։ Պիտի խուսափել այստեղ ևս վորոշ մոտեցում ցուցաբերել, թեպետ այդ առ այժմ փորձի եւ պրոբլեմի դրվածքով միայն կարող է լինել, հավակնութիւն չունենալով մեկընդմիշտ ճիշտ եւ վերլուծված համարվել։

Ճիշտ պիտի համարել, վոր լեզվի հնչյունական դրութիւնը եւ փոփոխութիւնները ֆիկսացիայի յին յենթարկվում լեզվի յուրացման ժամանակ, թե նորմալ ժամանակ (սերունդների կողմից) եւ թե լեզվախաչակումների ժամանակ (այլազգիների կողմից)։ Վերջին (խառնվելու) դեպքում վորոշ օրինաչափութիւնների եւ հըն-

---

* Իմ հայրենի Աշտարակ գյուղում մինչ-մինչ պատճառներից շատերը սկսում են արտասանել «մոնց» (=վոնց), «տվորկը» փոխանակ տվորքական տըբորկը (դեսսիմիլյացիայով դարձել է «տվորկը»), կամ «չեռվ» «ձեր», «ՙինչի» (= քնսի, կեր, խդի=այդի)... բայց գյուղի մեծամասնութիւնը այդ մերժում է։ Նույնը և Ձեսքանական տեսակետից—դրուց, տրուց, ըերուց... և դրից, տրից, ըերից..., ուր վերջինը հաղթանակում է, թեպետ նաև դրական լեզվի ազդեցութեամբ։

հյուսների ժառանգականության և ստացականության (ստացվի լինելու) ժամանակավոր գործունեություն և միայն հանդես գալիս։

Իսկ եթե վերցնենք լեզվի «նորմալ» ընթացքը, ուր չկան խաչավորության, գրի (գրական լեզվի) և այլ գործոնների ազդեցությունը,—քնական այդ նորմալը ևս հարաբերական հասկացողություն է,—ապա լեզվի վերարտադրվելը, կապված գլխավորապես սերունդների գեներացիայի հետ, աննկատելի կերպով վորոշ հնչյունների շեղում և առաջ բերում յուր նախկին վորակից։ Մենք այդ պատճառ չենք համարում. դա լեզվի «կեցության» միակ ձևն է՝ փոխանորդության և ձևափոխության։ Այստեղ սերունդները, վորոնք ավելի քիչ են նախապաշարված դեպի հին հնչյունապատկերները, ինչպես և լեզվի բոլոր կրողները, սոսկ կատարողների կամ դրսևորող մեդիումների (medium) դեր են խաղում։ Հնչյունի արտիկուլացիայի փոփոխումը կամա թե ակամա պետք է տեղի ունենա. արտասանական ավանդախախտման կուտակումը վոչ դիտակցորեն և մի ուղղությամբ ընթանում և վոչ էլ նախապես որոշված և յուղել նրա արտասանական ունակությունների տվյալ մոմենտում։ Այստեղ չկա մի ուղղության խնդիր. հնչյունի տվյալ ժամանակի «նորմալ» արտիկուլացիայի խախտումը մի քանի ուղղությամբ և սկսում, դրանք իրար չեն հավասարակշռում, այլ լրացնում են և ի վերջո մի հայտարարի գալիս։ Բավական և, վոր արտաբերման խախտումը սկսվեց, այլևս այդ հնչյունի նախկին ժառանգակները թուլանում և տեղի չեն տալիս նորին։ Այստեղ ևս պրիմատը հնչյունի պրակտիկան է։

Սակայն վորն է բուն պատճառը այդ փոփոխության։ Եթե ասենք սերունդները, դրանով վոչինչ չի բացատրվում, ինչպես ասվեց վերևում։ Հոդնեֆիզիկական կոմբինատոր ազդակները (ըստ Վունդտի) առաջ են գալիս մեր կարծիքով հնչյունի անդիտակցորեն փոփոխվելու հետևանքով և այդ փոփոխման հետ միասին, միայն դրա ընթացքում դառնում են արդեն և անհրաժեշտ ազդակներ։ Իսկ հնչյունափոխության բուն ազդակը, կապված լեզվական իրականության (հնչյուններ, ձևեր, բառեր, խոսքաններ) ընդհանրապես փոփոխելության անհրաժեշտության և բնականոնության հետ, մենք համարում ենք տրամաբանական ևոր տրամադրությունը, վորը իրեն անհրաժեշտություն է հայտնում և գալիս հասարակությունորեն, և այն էլ լեզվի կոնկրետ մոմենտում, անփոփոխ յուր կազմավորման մեջ թե լեզվական իմաստները, սոցիալիզիկ արտահայտությունը, և թե լեզվի պատմա-հասարակական զարգացման իմպերատիվը, կապված

հասարակական մտայնության և լեզվի զարգացման պահանջի միասնականության հետ։ Կոնկրետ փոփոխման ձևերը, ըստ այդմ, լինում են պատահական, թեպետև իրենց արտահայտության յուղանակով պայմանավորված են յուրաքանչյուր լեզվի այս կամ այն լեզվավորակի հետ, նրա սպեցիֆիկ տվյալների հետ։ Այդ կոնկրետ փոփոխման ձևերը, սկսելով կարծես թե տարերայնորեն, հոգեֆիզիկական զուտ լեզվական ներքին ազդակներով (որոնք թե ընդհանուր են և թե ձևավորվում կոնկրետ դեպքերի հետ), դրանք (փոփոխման ձևերը) հետդհետե նորմավորման են ենթարկվում, ընդգրկելով ձևաբանական տասիմիլյացիայի հետևանքով նորանոր բառեր։ Հոգեֆիզիկական այդ յերկրորդական ազդակները արդեն արտաքուստ գերիշխում են, անհրաժեշտորեն պայմանավորում են և յերևույթը դարձնում «օրինաչափություն», իբրև լեզվի ներքին դործոն։ Իսկ բուն պատճառը, արտասանական նոր տրամադրությունը, այլևս մթագնված և լինում։ Արտասանական այդ նոր տրամադրությունը, կենսագործվելով լեզվի այսպես կոչված (ըստ Բոդուենի) «լեզվական մտածողության» մեջ, իրեն դրսևորմամբ կարծես թե իրականացնում է կամ, ավելի լավ ասած, իրացնում է լեզվահասարակայնության ընդհանուր «սոցիալական պատվերը»։ Սակայն հնչունական փոփոխությունները առաջացնող մեր այս «արտասանական նոր տրամադրությունը» անմիջապես չի արտացոլում հասարակական մտայնության տեղատվություններն ու մակընթացությունները։ Լեզվի հնչյունական կառուցվածքն թե շատ ինքնահատուկ է և թե յուրահատուկ ձևով է արձագանգում հասարակական նոր տրամադրության, բացի այն, որ լեզվի հնչյունական մասը շատ պահպանողական է, հակառակ լեզվի իմաստական և լեքսիկական մասերի պատմա-հասարակական դյուրափոխման*։

Մարքսիզմի հիմնադիրներից հնչյունների փոփոխման պատմա-հասարակադիտական ճիշտ արժեքավորումը տվել է առաջին անգամ Ֆր. Էնգելսը՝ Բլոխին դրած իր նամակի մեջ, որտեղ նա առնվազն ծիծաղելի չի համարում նրանց, ովքեր

---

* Հնչյուններն, ինչպես մասամբ և այլ լեզվական կառուցվածքների այդ ինքնահատուկ դեմքի մասին խոսելիս, պետք է հիշել Կ. Մարքսի հետևյալ խոսքերը—"На „духе" заранее тяготеет проклятие „отягощения " его материей, которая выступает здесь в виде движущихся слоев воздуха, в виде звуков, коротко говоря, в виде языка" (Архив Маркса и Энгельса, кн. 1 стр. 220)։

հնչյունափոխությունը անմիջապես կապված են եկոնոմիկայի հետ, ընդգծելով, որ գերմանական բարբառների տարբերացման մեջ դեր է խաղացել նաև Սուդետ—Տաունուս լեռնաշղթան*։ Ենթադրությունը սրանով ուղում է զգուշացնել գռնհիկ մատերիալիզմից («եկոնոմիզմից»), որը կարող են մտցնել նաև լեզվական բնագավառը, բայց սրանով իհարկե չի բացատրվում լեզվական յերևույթների, մինչև իսկ հնչյունական որոշ փոփոխությունների, հետևի կապը հասարակական-արտադրական սուբստրատի հետ, իրրև պայմանավորող հեռավոր, բայց հիմնական, գործոնի հետ։ Միջնորդավորող անցումները մեզ դեռ որոշ չենն։ Պարզականացումը (упрощенство) և մեխանիստական անմիջական վերածումը (сведение) գործին իրական պատմական բացատրություն չեն տալիս։ Իսկ հնչյունական փոփոխման բնագավառն ավելի բարդ է, ավելի հեռու հասարակական զարգացման արտադրական բազիսից, քող թե, որ այդ հնչյունական ֆենոմենը կրում է յուր մեջ նաև ֆիզիկո-ֆիզիոլոգիական բնական մաս (կամ կողմ)։

Բարբառների մերվելով և մասսաների կուլտուրական բարձր վերելքի հետևանքով որոշ նորություն կարող է առաջանալ յեղած հնչական կողմի մեջ, բարբառային մի նոր ազդեցություն. սակայն, ըստ իս, այս պրոցեսը յերկար կտևի, քանի որ, կազմավորման (դաստիտարակող) որգաններըը հանդերձ դպրոցով, գիր ու գրականությամբ, թատրոնով և այլն ավելի ուժեղ ֆակտոր են յեղած արտասանության պահպանման համար, քան տեղական հնչական (և հընչափոխական) պարտիկուլարիզմը։ Լեզվի (և հնչյունական կողմի) բնագավառում ևս վճռողը լինում են պատմա-կուլտուրական հաջորդող ֆակտորները, քան սոսկ մեխանիկական կցկցումը բարբառների և նոր դասակարգերի տեղային պարտիկուլարիզմի։ Պրոլետարիատը վերցնում է անցյալի զարգացած ժառանգությունը, թեկուզ և շահագործող նախկին դասակարգերի, և տեղի յև

* Едва ли удастся кому-нибудь, не сделавшись смешным, об'яснить экономически существование каждого маленького немецкого государства в прошлом и в настоящее время, или об'яснить экономически происхождение верхненемецких изменений гласных, которое разделяет Германию (в отношении диалекта) на две половины, что усиливается еще географически цепью гор от Судетов до Таунуса». К. Маркс и Ф. Энгельс „Письма", изд. 3-е, перев., ред. и прим. В. Адоратского, Москва—Ленинград, 1928.

տալիս յուր բարբառամուծուքյուններով։ Այդ ժառանգուքյունը ի հարկն բարձրացվում է, հարստացվում է, նոր պահանջներին է հարմարեցվում, կրելով ըստ այդմ վորոշ փոփոխուքյուններ։ Լեզուն ևս յուր հնչյունական կազմով այդ տեսակետից բացառուքյուն չէ։

Ապագա համամարդկային միասնական լեզուն ևս կազմվելու է գերազանցորեն պատմա-հասարակական գործոնների ազդակներով, ինչպես վերևն ասվեց, այսինքն դեր են խաղալու լեզվի միացման տեսակետից միայն այն լեզուները, վորոնց միջոցով պրոլետարական հեղափոխուքյունն ու կուլտուրան տարածվելու են (ռուսաց, գերմանական, անգլիական, ռոմանական). այստեղ ևս մեխանիկական կցկցում կամ սինթեզ proper լեզուների չի կարող լինել, վորովհետև վճռողը քաղաքական և պատմա-կուլտուրական ընթացքն է, գործոններն են*։ Մինչև իսկ գլխավոր «կուլտուրական» նշածս լեզուների սիստեմների մեխանիկական կցկցում չի կարող լինել, այսինքն՝ տարրերայնուքյունը, վոր հենում լեզվախառնման ժամանակ ավելի ուժեղ եր (թեպետ այստեղ ևս միշտ իշխել է պատմա-կուլտուրականը), այժմ ավելի է պակասելու. և տարրդուքյան միջամտուքյունը (վերևից) նորմավորման կարող է չհնարավորել այդ պատմական — տարրերայինը։ Հաստատ կարելի է ասել, վոր ապագա միասնական համամարդկային լեզվում հնչյունափոխական տարերայնուքյունը ևս թուլանալու յուր ճիշտ է, լեզվի հնչյունական փոփոխուքյուն մի՛շտ կլինի, մանավանդ խառնվելուց հետո, ուր տարրեր լեզուների հնչական միասուիները կարող են դեռ իրենց զգալ տալ. պատմուքյունը մեզ այդ է վկայում։ Սակայն փոփոխման վորակն ու քանակը այլ կարող են լինել, քանի վոր օրթոեպիան (ուղիղ հնչելը) ավելի է

* Ցնքն այս պատմա-հասարակական մասերին ասելիով մոտենանք, ապա Դը-Սոսյուրի պնդումը, թե «ոչ մի ժամյակ չունենք պնդելու, վոր ազգային պատմության բուն գործոչներին համապատասխանում են լեզվի հնչյունների մեջ սուր փոփոխուքյուններ» („Курс" 142), ճշմարտուքյան չի համապատասխանի, ինչպես ճիշտ դիտում է և կոմմենտատոր Ի. Շորը։ Վերջինս ասում է. «Դը-Սոսյուրի այս տարրերուքյունը իմաստ կարող է ունենալ այն դեպքում, երբ նա ուղղված է հնչյունական փոփոխուքյունները անմիջապես հասարակա-անտեսականից և պատմականից հանելու դեմ։ Բայց լեզուների պատմուքյունը յուր սրամտությամբ ունի ամենահարուստ մասերիալները ապացուցելու համար այստեղ միշտ գործող աղերսակցուքյունների առկայուքյունը, երբ ասել է նկատում նոր սեռային կամ սոցիալական մի բարբառ իշխող դասակարգի լեզվի դեմ, երբ գրական լեզվի տրադիցիան

կազմավորվելու, ազգային կամ դասակարգային տարբերացնող (հեռացնող) մոմենտներ չեն լինելու, տարբերակությունը թուլանալու չի, հասարակականությունն ավելի չի զգացվելու յուր կուլտուրական միջամտությամբ և այլն։ Հնչյունական փոփոխությունների (վորակով, քանակով, դիրքով—դիսպոզիցիայով) արժեքը, վորպես լեզվի ձևաբանական տեխնիկական սուբստրատ, միշտ էլ կմնա։ Հենց այդ է յեղել հնչյունափոխության գլխավոր և պատմա-հասարակական դերը՝ ի սպաս լինել լեզվի սարուկտուր մասին, լեզվի շինարարության, լեզվի առաջընթացին։

Բացի հնչյունափոխական այս լեզվահասարակական շինարարության մոմենտից, ֆոնետիկայի սոցիալական արժեքն է նաև այն, վոր հենց իրենք հնչյուններն են սոցիալական պրոդուկցիայի հակադրություն կենդանական դիֆֆուզոյիդ աղմկաարտաբերումներին։ Կոլլեկտիվի մշակվածությունը լինելով՝ հնչյունները մինչև իսկ սուր դասակարգային պայքարի մոմենտներում ոգտագործվել կարող են և այդ պայքարի տեսակետից. յերեք ֆրանսիական կամ գերմանական բուրժուան յուր r հնչյունը դարձնելով յետնալեզվային r (картавое r), մոտ հայոց «ղ»-ին, դրանով յուր արտասանության մեջ զատվել և տենչում ժողովրդական խավերից ապա այդ հասարակական յերևույթը ստանում է և դասակարգային մասնավոր բնույթ, թեպետ պիտի ասել, վոր դեմոսը ևս, ինչպես շատ այլ կուլտուրական բնագավառներում, նաև այստեղ հետևում է այդ արտասանությանը և յուրացնում. Բուրժուական ծագում ունեցող այդ r հնչյունի արտասանությունը այդ դեպքում դառնում է ընդհանրական։

Հնչյունի փոփոխման հասարակական սուբստրատի մասին մենք արդեն վերևում ասել ենք, ի հակադրություն վորոշ դպրոցների սոսկ անհատական փոփոխման ֆակտորի, իսկ այդ փոփոխման լեզվաշինարարական, այն է՝ ձևաբանական արժեքի մասին, մենք կխոսենք «Ձևաբանություն» հատվածի մեջ։

Նորմաներն են խախտվում և այլն Այդ առթիվով յուրաքանչյուր լեզվի պատմություն ասելիս և յուր փաստերով դրա հաստատումը. այդպես և, որինակ, անգլո-նորմանդական բարբառի դերս վանվելը միջին անգլերենով անգլիական լեզվի պատմության մեջ, կամ ֆրանսիական մեծ հեղափոխությունից հետո՝ de la petit bourgeoisie parisienne արտասանության արիստոկրատ կողմի ամրապնդվելը» (նույն դրքում, էջ 244)։

IV

ԼԵԶՎԻ ԶԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

(«ՄՈՐՖՈԼՈԳԻԱ»)

1

1. ԼԵԶՈՒՆ—ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԵՎ

„Кто способен мыслить только при посредстве речи,тот еще никогда не испытал, что означает *отвлеченное и подлинное мышление*"(Дюринг).„Если так, то животные оказываются самыми отвлеченными и подлинными мыслителями, ибо их мышлению никогда не мешает назойливое вмешательство языка" (Энгельс). См. его „Антидюринг", Москва 1932 г. стр. 58).

Ցեթե մարդկային հնչյունական լեզուն յուր ֆիզիո-հոգեբանական և սոցիալական կողմերով հանդերձ վոչ այլ ինչ է քան յեթե կոլլեկտիվ աշխատանքից և աշխատանքի հետ ձեռք բերված (առացական) պրակտիկ և կազմակերպված գիտակցական գործունեյություն, ապա այդ լեզուն հանդիսանում է պատմականորեն նաև այդ գիտակցական գործունեյության մտածողության ձևը, վորով հնարավոր է յեղել սկզբնական դիֆֆուզոյին մտա-զգայական բարդ պատկերացումները և հետագա տարրորոշ պարզ մտածողությունը հաղորդել մյմյանց։

Այն «վիսակենդանական» բարդ հնչառմկային պատկերացումները, վորոնք կցորդական ասոցիացիայով կապակցվում էյին առարկաների և յերևույթների բարդ պատկերացումների հետ, հանդիսանում են այդ պրիմիտիվ «մտածողության» ձևը, միայն արտաքին հանգամանքների նկարագրությունը ժեստերով (միմիկայով) այդ մտածողության անբաժան և ուժեղ յերկրորդ կազմակերպիչն եր,—մի բան, վոր հիմա էլ յուր նշանակությունը

չի կորցրել Մի «գալլ» կամ «ջրեր» և նման հնչառոմկային պրե-միտիվ բացականչություններով մարդ տալիս եր բարդ հոգեկան պատկերացումներ, ձեռքի, գլխի կամ մարմնի և յերեսի մկանների ոժանդակությամբ ցույց տալով գալլի շարժման (հարձակման) ուղղությունը կամ հանգամանքները կամ ձեռքով (ափով) ցույց տալով ջրի բերելը կամ խմելը (կուց կազմելով) և նման բազմաղան գործունեություններ և հանգամանքներ[1]։ Վորպես առավիղ այժմ ևս կարելի յե գործածել այդ վոչ տարրորոշված (դիֆֆուզոյիդ) խոսքը, վորը հանդիսանում է փաստորեն բառ—նախադասություն, ինչպես «Շանհայ, կուլի, գաղութ...», մանավանդ բանաստեղծական յերևակայությունների համար այդ պրիմը վորոշ առավելություններ ունի (թափ և տալիս ֆանտազիային և չի կաշկանդում նրա կոնկրետ ձևակերպումները)։ Սկզբնական այդ դիֆֆուզոյիդ բառ-նախադասությունը, ինչպես տեսնում ենք, կարող եր և պետք եր վոր արտահայտեր բազմազիսի ժեստդացական պատկերացումներ, թույլ կերպով կոնկրետացվելով «դծային» (ժեստի) լեզվով։

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր սկզբնական բառ—նախադասության հնչառոմկային քե արտաստանական և քե մանավանդ առղական պատկերացումը, իբրև ձև, տալիս է բարդ և բազմապիսի պատկերացումներ, այսինքն՝ ունենում և առարկայի, նրա շարժման կամ դրության և հատկության միաժամանակ պատկերացումներ կամ անանջատ մի բարդ պատկերացում։ Կարծես քե խզում է առաջ գալիս ձևական ու բովանդակական կատեգորիաների միջև. ձևական հնարավորությունները միշտ յեղ են մնում, քեպետ և զարգանում են բովանդակական մասի ներգործության և ձգտում ունեն հասնելու վերջինիս։ Լեզվի այդ նախնական (վոչ տարրորոշված) վիճակի ներքին իմմանենտ ձևավորվելը կամ մոդիֆիկացիան, համընթաց բովանդակական պոստուլատի, կատարվում եր բնականորեն հնչյունական այլ և այլ տրանսֆորմացիաների կամ շարժումների միջոցով, այն է՝ հնչառոմկային քանակական, վորակական և դիսպոզիցիոն միջոցառումներով։ Բայց և այնպես բովանդակական մասը, հաղիվ հագեցված լինելով ձևական զարգացման նոր պրոդուկցիաներով, շարունակում և հասա-

---

[1] Համեմատեք նման սաղմնային սիմվոլիկա յերեխաների մեջ, ուր մի «մամա» կամ «թեթե» ռուսաց ма́ка (=молока) և նմաններդը արտահայտում են-բարդ ցանկություններ։

բակական հարաբերությունների և մտածողության զարգացման աղերսությամբ առաջ շարժվել, նորանոր մտաբնագավառներ ընդգրկել, նոր մտապատկերներ կամ հասկացողություններ առանալ։ Հենց սրանով էլ սկսում է առաջանալ և զարգանալ տարբորոշված լեզուն կամ խոսողությունը (членораздельная речь, gegliederte Rede), որով «դծային (ժեստի) լեզուն» հետզհետե թուլանում է և կորցնում յուր վորակական նախկին դերքը և դերը։

Ցեթե արտաքին անալոգիա բերենք, կարելի չի ասել, վոր ձևաբանական տարբորոշելիությունը, վորպես լեզվի ներքին իմանանտ և անհրաժեշտ միջոց, սկսվում է դեռ կենդանական «խոսոցից», յերբ որինակ, մի հավ յուր կչկչոցը դիֆֆերենցիացիայի չի յենթարկում, նայած թե ձու չի ածում, ճուռին է կանչում, սոված է կամ ահազանգ է հայտնում։ Զգացական տարբորոշությունը առաջ է բերում կչկչոցային տարբորոշում։ Ցեթե բնագիտական (բիոլոգիական) հողի վրա կենդանին դիմում է այդ միջոցին, ապա վորքան առավել այդ հատուկ պիտի լինի հասարակացնորեն կազմակերպված դիտակցական մարդուն, վորը փոխում է բնությունը, դիտակցորեն աղդում վերջինիս վրա և դիտակցում յուր այդ գործունեությունը։

Ձերբ առարկան և յուր ֆունկցիան, շարժումը, դրությունը և հատկությունը առանձնանում են վորպես մտապատկերներ, յերբ հետզհետե առաջ են գալիս վոչ թե սոսկ հոգեբանական առանձին պատկերացումներ, այլ և դրանց հասկացողությունները (понятие) և կապակցային մտային հարաբերությունները, կապված հասարակական զարգացման ավելի բարձր աստիճանների հետ, ապա կարելի չի ասել, վոր հենց այդտեղից կամ դրանով է սկըսվում մարդկային լեզուն, վորպես անջրպետ նախորդ կիսակենդանական կամ կենդանական «լեզվից»։ Մեր դատողական ունակությունը (рассудок) զարգանում է հենց լեզվի այդ վերջին շրջանի հետ, յերբ հոգեբանական ընդհանուր պատկերացումները դառնում են այն, ինչ կոչում ենք հասկացողություններ, և առաջ են գալիս կապակցական և վերացական հարաբերանշումները։ Նախկին դուռ հոգեբանական մտածողության մեջ անհնարին կլիներ ասել դիցուք, թե «յեթե այսինչ տվյալներից յելնենք՝ սխալ յեղրահանումների կհանդիպենք» կամ յերկուսի վրա ավելացած յերեք կրըտացվի հինդ» և նմաններըը։ Լեզվական մտածողությունն է միայն, վոր կարողանում է ձևակերպել և տալ նման ընդհանուր և վերացա-

կան նախադասություններ, ինչպես՝ բայց, սակայն, և, իսկ, թող թե, վորպեսզի, վորովհետև և նման շատ ու շատ կապակցական հասկացողություններ։ Միայն լեզվական մտածողության առանձնահատկություններով է, վոր նախադասության մեջ, առարկայի և յուր ֆունկցիայի փոխհարաբերության կապակցությամբ, արտահայտվում են «ռելացիոն հասկացողություններ» (реляционные понятия) տարածական և ժամանակի ասպեկտներով, այն է՝ հատկացում, ցուցում, յեղանակ և կերպ, գեմք, ժամանակ այլ և այլ մոմենտների նկատմամբ և այլն։

Ցեղի մարդկային գիտակցության զարգացումը կապված և կախված է հասարակական կեցության մեջ պայմանավորված մտայնության ձևից, ապա լեզուն, վորպես ձև բարձր մտածողության, հանդիսանում է նաև կազմակերպիչը այդ հասարակական գիտակցության ու նրա մտածողության, դառնում է այդ մտածողության բովանդակավորող ձևը։ Ցեղի «վերացական և իսկական մտածողությունը» ըստ Դյուրինգի կատարվում է առանց խոսքի կամ լեզվի, ապա այդ չարաչար սխալ է, քանի վոր թե հոգեբանական մտածողությունը և թե սեմիոլոգիական այլ ձևերի լեզուները (ժեստերով, միմիկայով, դրոշակներով, յերաժշտական գործիքներով, գծային նշաններով և այլն) չեն տալիս այն «վերացական և իսկական մտածողությունը» վոր տալիս է լեզվական սեմիոլոգիան։ Լեզվական ձևը այս դեպքում, կարելի յե ասել, վոր դառնում է բովանդակություն։ Ցեղ իղուր չե, վոր Ֆր. Ենգելսը այդքան սուր է պատասխանում Դյուրինգին, ասելով՝ «Ցեղեր այդպես և, ապա կենդանիները հանդիսանում են ամենավերացական և իսկական մտածողները, քանի վոր նրանց մտածողությանը չի խանգարում յերբեք լեզվի ձանձրացուցիչ միջամտությունը»։

Ինչպես տեսանք մեր նկարագրությունից, լեզվի ձևաբանական վիճակը, սկսած լեզվի ամենապրիմիտիվ դրությունից մինչև այժմյան զարգացած մարդու ամենաբարձր և վերացական լեզվական արտահայտումը, կրում է պատմական բնույթ և արտացոլում է մեր հասարակական մտքի զարգացման ետապները, լինելով արտահայտչական յուր ունակություններով (անկախ «լեզվամտածելից») տիրող մտայնության արգասիքը՝ արդյունքը։ Թեպետ լեզվի ձևաբանական մոդելը կամ տիպը յուր կազմավորման և զրսևորման մեջ միշտ կենտրոն է նախորդ ձևաբանական ասպիճանից և տվյալներից, թեպետ լեզվի այդ ձևավիճակը միշտ պայմանավորված և լինում նախորդ զարգացման ձևավիճակից և

յուր ներքին ձևական հանգամանքներով այդ լեզվաձևը իմանանա զարգացման արտահայտությունն է, սակայն յուր գոյակցիոնալ և քանակական կողմերով նա չենթակա չէ հասարակական մտայնության կազմավորմանը։ Նշանակություն չունի, չէթե մի լեզվատիպը ասում է «մայրս», մյուսը՝ «իմ մայրը», մեկը բնե-լնհեմ «տուն հացի» (իսկ lehem-bet «հացը տան»), իսկ մյուսը՝ տուն հացի կամ հացի տուն, այսինքն հոլովական հարաբերությունը արտահայտվում է մի տեղ դասավորմամբ, իսկ մյուս տեղ մասնիկի հավելմամբ. կամ ռուսաց один стол, два стола, три-четыре стола, пять столов, իսկ հայոց՝ մեկ սեղան, յերկու սեղան, յերեք սեղան... հինգ սեղան և այլն. կամ ռուսաց և այլ նոր լեզուների սեռերը (стол—արական սեռ, вода—իգական սեռ, окно—չեզոք սեռ), վորպես հնադույն ինացորդ՝ անհարիր մեր մտածողության։ Կամ վրաց մո-մ-ծերե-ո «ինձ—դրբը—ասաց նա», վորը փաստորեն մի բառ նախադասություն է։ Հետևապես կարևորը վոչ այնքան լեզվաձևի տիպն է, վորը գոյանում է նախնական բջիջ,ցեղի, եթնոսի կամ ազգի լեզվի մեջ, այլ այն թե վորքան նա ունակ է ապասավորել կամ վերափոխվելով ապասավորել նոր հասարակական պահանջները։ Ցեթե լեզվաձևի տիպը յուր հատկացման մեջ մի անհրաժեշտություն չէր, այլ սոսկ պատահականություն, — անհրաժեշտություն եր սոսկ ձևական տարբերացումը, վորպես տարրորոշ մարքի ձև,— ապա պատմականորեն կազմակերպված այդ լեզվաձևերը իրենց սոսկական ձևական դրսևորումներով չեն հարակցվում անմիջապես հասարակական զարգացման ձևերի հետ այլ իրենց ձևական տիպի մեջ դառնալով փաստ ու գործոն, վորպես լեզվաձևական անհրաժեշտություն իրենց ազդեցությունն են թողնում լեզվի ձևական կողմի հետևյալ ետապի զարգացման վրա, դրսևորելով լեզվի ձևավիճակի զարգացման իմանանա ներքին կողմը։ Իրենց տեղի զարգացման ատիճանի մեջ լեզվաձևերը պիտի բավարարեն հասարակական մտածողության հարաճուն պահանջը, և այդ զարգացման ատիճանները իրոք վոր պատմահասարակական մեծ նշանակություն ունեին։ Ցեթե լեզուները իրենց ստադիալ զարգացման մեջ դրսևորում են, վորպես վորակային ձևավորող երևույթներ (կամ տիպ), մերթ այս, մերթ այն լեզվատիպը, ապա ընդհանրապես վերցրած յուրաքանչյուր լեզու յուր այդ ձևավիճակի մեջ կրում է բազմազան տիպական երևույթներ։ Որինակ հայերենում «մայրս» և «իմ մայրը» կամ արարատյան բարբառում

«ան-նը-ներ-ում-ս» կամ «մեր տներում» կամ նույն բառերում —ինձ ունեմ, քեզ ունես... և յես ունեմ, դու ունես.. (դրական լեզվի ազդեցությամբ), դրանք տարբեր տիպերի կամ մտածողության ձևացորդներ են։

Բայց լեզվական տիպական ձևունակությունները իրենց հերթին ազդում են մտածողության վրա։ Ցեվ յեթե փորձենք այժմյան մեր մի պարզ նախադասությունը «յերեխան գնաց տուն» թարգմանել Աֆրիկայի, Ավստրալիայի կամ Ամերիկայի բնիկների լեզվով, ապա կստեղծվի մի բարդ արտահայտություն, ուր «յերեխա» բառին պիտի կցվի յուր դասի (սեռի), նիշը թիվը, պատկանելիությունը, բային՝ (գնաց) ուղեվորվելու ձևը, մեկնման և հասնելու տարածական և կոնկրետացնող նիշերը, իսկ յեթե բայը որյեկտ է պահանջում, ապա կցվում է ուղիղ (անմիջական) և թեք որյեկտների նիշերը։ Ինչ վոր ասվեց «յերեխա» բառի մասին, նույնը պիտի կրկնել և «տուն» բառի նկատմամբ։ Արխազերենը դեռ մինչև հիմա պահել է «խնդացի» և «անխնդը» առարկաների ձևական արտահայտությունը բայերի հետ (վերջածանցներով)։

Կարևորը լեզվական ձևական տիպերում այն չե, վոր, ինչպես կարծում էին, լեզուն առաջացրել է յուր մեջ յերկրորդական («քերականական») ձևական պատկանելություններ. դրանց ֆունկցիան կարելի յե և այլ կերպ արտահայտել (ժամանակ բառեր, շեշտ, դասավորություն..)։ Մի եսկիմոսերեն նույնչափ ճարտասցած կցական կամ թեքական հնարավորություն ունի, ինչպես մի լատիներեն, իսկ, որինակ, չինարենը կամ մասամբ անգլերենը զուրկ են այդ յերկրորդական ձևերից։ Բայց և այնպես Մարքսի «Կապիտալը» կամ Հեգելի «Լոգիկան» ավելի շուտ կարելի յե թարգմանել չինարեն կամ անգլերեն, բայց վոչ եսկիմոսերեն։ Լեզվական ձևական տիպի ներքին քանակական ճարտասցումն է, վոր տալիս է մտածողության հաճար նոր ելրակ, և վոչ թե սոսկ տիպական կաղապարը (ժամանիկավոր և թե վոչ, իսկ յեթե մասնիկավոր է՝ ապա նախածանցավոր և թե վերջածանցավոր կամ միջածանցավոր, նաև՝ կապի այս թե այն ձևն և դերբեշտում հայլն և այլն)։

Լեզվաձևային կամ քերականական շատ կատեգորիաներ կազմավորվում են լեզվի պատմական իրացման հետևանքով և հետևապես մշտաբովանդակ և բացարձակ չեն։ Մի ժամանակ կար յերկակի և յեռակի թիվ, բայց դրանք անհետացան. կային բա-

ունեն իդեոլոգիական խմբավորումներ, որոնք մասամբ նույնպես այժմ չքացել են: Թիվը, դեմքը, սեռը կամ յեղանակը, ժամանակը նմանապես այլևայլ լեզուներում նման չեն իրար: Ցեվ իզուր չեն ե. Սեպիրն ասում. „Не все то, что называют „временем", или „наклонением", или „числом", или „родом", или „лицом", совпадает по существу с тем, что разумеется под этими терминами в языках, скажем, латинском или французском" *(տես նրա* Язык, *1934, եջ 81, ծան. 2)*[1]: *Լեզվամտածողության ձևերի այս պատմականությունը հարկավ հայտնի չեր կարող լինել հին ժամանակ, երբ հետևանքով լեզվաբաններըր, հին հույներէ նման, լեզվի տրամաբանական վերլուծությունը և լեզվի ձևաբանական կառուցվածքը մշտնջենական և հունականի նման տիպական եյին համարում: Լեզվի բովանդակության և ձևի կատեգորիզացիան արվում եր միայն տրամաբանական ասպեկտով, և ամեն մի նախադասություն, որինակ, համարվում եր մի-մի դատողություն (*суждение*) յուր յենթակայով, ստորոգյալով և այլն: Բայց տրամաբանորեն յերեք, որինակ, «տուն գալիս յես հանդիպեցի քեզ» և «յերբ տուն եյի գնում յես հանդիպեցի քեզ» միևնույնն են, սակայն լեզվաբանական տեսակետից մենք դրանց տարբեր կացուցիներ ենք համարում: Մի «շուրթ» կամ «պտուղ» կարող են նույնը նշանակել, սակայն դրանք տարբեր բառեր են, քանի որ այստեղ դրանց ձևական հանգամանքը այլ է. տարբերություն կա գոնե հնչյունական կողմում, որն այս դեպքում վորոշորեն է: Ի՞նչ տրամաբանություն կա ռուսաց.* два, три, четыре стола, двадцать один стол, двадцать два, три.. стола *(բայց* одиннадцать столов), пять, шесть... столов *ձևերի մեջ, յերբ դրանք բոլորն եյ այժմ դիտակցվում են հոդնակի, բայց հին ձևաբանական տարբերությունները շարունակում են «ձևականորեն» ապրել: Ինչ տրամաբանական արդարացում և այժմ* стол *համարել արական սեռի բառ, իսկ որինակ* вода *իգական: Ի՞նչ տրամաբանություն կա, որի-*

[1] Հետաքրքիր է, որ հնչակավոր «մասունք բանի»-ները նույնպես այլևայլ ձևերով են արտահայտում: Սեպիրն ասում է. «Подобно тому, как мы можем оглаголить идею качества в таких случаях, как напр. «краснеет», мы можем представить себе качество или действие и в виде вещи. Мы говорим о «высоте дома» или падении яблока», как будто бы эти идеи были вполне параллельны таким, как «крыша дома» или «кожура яблока», забывая, что *высота, падение* (выраженные «именами») не переста-

նակ, յերբ «խելոք» ասելով հասկանում ենք «անխելք» (համմ. երիլովի «откуда умная бредешь ты голова?.), կամ յերբ ասում ենք «меня знобит», գերմ. es regnet, ֆր. il pluit... կամ հենց ռուսաց ветром сорвало крышу փոխանակ տրամաբանական ձևի՝ ветер сорвал крышу հայկ և այլն[1]։

Լեզվի ձևաբանական քննարկումը («տրակտովկան») չպիտի յելնի նախամտածված տրամաբանական պոստուլատներից, թե վորպիսի ճշտորոշված կատեգորիաներն են դրսևորված, թե վորքան են դատողության մասերը ճիշտ և որինաչափական և այլն։ Լեզվի ձևաբանական այդ կատեգորիաների վերլուծումը կապված է յուր հասկանալու մեջ մարդկային մտքի պատմահասարակական զարգացումից, և հետևապես լեզվի այդ ձևաբանական կողմի եացումը և իրացումը սոսկ պատմական է։

Այժմ դանք այն հարցին, թե վորքան հնարավոր և մտածողությունը առանց հնչյունական (resp. լեզվական) սիմվոլիկայի, Հնարավոր և արդյոք. իսկ յեթե այո, ապա ինչ ձևական այլ միջոցներով։

Հոգեբանական անմիջական ժառալրոցները նրանում և կայանում, վոր դրսից (դնպք, տեսարան և այլն) ստացած տեսողական, լսողական, շոշափական և այլ զգայությունների (ощущения) հետևանքով ունենում ենք դրանց պատկերացումները (представления), վորոնք կրկնվելու, այսինքն՝ վերականգնելու ժամանակ ավելի թուլանում և փոխվում են, մանավանդ վոր ասոցիատիվ կապերով զուգակցվում և այլ նման կամ կից պատկերացումների հետ։ Այդ մասին Ա. Տոմսոնը գրում է. „Впрочем

ли указывать на качество и действие, хотя мы заставили их как бы говорить голосом предметов. Совершенно так же, как есть языки, выражающие наши прилагательные глаголами, есть и такие, которые выражают их именами. В языке чинук [Հյուսիսային Ամերիկայի բնիկների լեզուներից], как мы видели, «большой стол» будет «стол его-великость», а в тибетском та же идея может быть выражена, через «стол великости», весьма схоже с тем, как мы вместо «умный человек» можем сказать «человек ума». Համեմատիր մեր դրաբարի անդան բարձրության, գնա հասանդ, բաժակ դառնության և այլն։

[1] Այնպիսի դեպքերում, ինչպես меня знобит, es regnet «անձրևում է», ветром сорвало крышу և այլն գործողը՝ ցնդաբանական այժմ չի գիտակցվում և չկա։ Ըստ Մաուի նման դեպքերում ցնդաբանական յեղել է այս կամ այն առարկան կամ վոգին, վորը կորչելով մեր այժմյան մտայնության մեջ, կորել է նաև լեզվական այդ արտահայտությունների մեջ։

сравнительно с ощущениями репродуктивные представления всегда слабее и в значительной степени неверны, невольно переиначены и дополнены частями других сходных представлений, случайным настроением и т. д. *В таких сложных образах состоит обыкновенно наше мышление без слов*" (տես նրա Общее языковедение, Одесса, 1910 г., *եջ 76. ընդգծ. մերն է*)։ *Բայց այս ժամպրոցնսը կատարվում է միայն մի անհատի մեջ և յուր վորակով ավելի անհատական է, քան հասարակական-հոգեբանական։ Այդ պատկերացումներն ու ապրումները մարդ կարող է հաղորդել այլևայլ նկարագրական միջոցներով, հնչուն կինոյի հաղորդական տեսարաններով և նկարագրություններով, նկարելով վորոշ մատերիալի վրա* (пиктография), *իսկ լսողական պատկերացումները՝ ձայնական (նմանական) վերարտադրությամբ։ Դիմում ենք նաև այլ սեմիոլոգիական («նշանաբանական»)*[1] *միջոցներին —ժեստերի, միմիկայի, և այլն։ Հայտնի լեզվաբան Ֆերդինանդ դե Սոսյուրը լեզվի ակուստիկական պատկերը համարելով մյուսների նման «նշան», ասում է հետևյալը.* „Язык есть система знаков *(այլ տեղում՝* „язык есть склад акустических образов"*)*, выражающих идеи, а следовательно его можно сравнивать с письмом, с азбукой для глухонемых, с символическими обрядами, с формами учтивости, с военными сигналами и т. д. и. т. п. Он только наиважнейшая из этих систем" *(տես նրա* Курс общей лингвистики, 1933, *եջ 40)։ Նա առաջարկում է ստեղծել մի գիտություն («Սեմիոլոգիա»), վոր հատկապես դրանցով զբաղվի*[2]*։*

Ա. Տոմսոնը դնում է, վոր բարդ պատկերացումների բաժան-բաժան լինելը, դրանց տարրրոշումը (առարկայի և նրա հատկացման, շարժման և դրության, առարկայի վորակի կամ

---

[1] Հունարեն sémeion «նշան» բառից։ Ձշգրիտ սեմանտիկա բառի հետ, վորը բառանշանակությունների պատմություն է տալիս։

[2] Ռ. Շորը նույն գրքում ծանոթություն մեջ ավելացնում է (*եջ 215*). «Сравнение языка с письмом как системой знаков различного порядка используется уже средневековым философом Оккамом (XIV в), сравнение произносимой речи с языком жестов, в частности с языком жестов глухонемых, особенно детально развивает Вундт (Die Sprache Bd. I). Сопоставление языка с обрядовостью проводится в построениях большинства этно-психологов... Сравнение языка с сигнальными системами развивается у Бюлера...»

վորպիսության և դրանց փոխհարաբերության) կարող էր լինել և առանց հնչյունական լեզվի միջնորդության, ասելով. Конечно, расчленение сложных представлений на отдельные представления до известной степени происходит и без языка, под влиянием ассоциаций по смежности и по сходству между теми составным и элементами сложных представлений, которые часто встречаются вместе, хотя и в связи с разными другими, меняющимися составными частями сложных представлений. Но это не опровергает того факта, что наши понятия (общие представления) в том виде, как они существуют в нас, обладающих языком, возникли в подавляющем большинстве случаев под влиянием языка, как значения слов и форм языка" (տես „Общ. язык" 78—79). Ինչն ըստ ինքյան մի «տուն», «բարձր», «կառուցել» և նման պատկերացումները, առանց վորևե արտաքուստ հիշեցնող նշանի (արտաառնական-լսողական, գրաֆիկ...), հանդիսանում են մի կամ նման առարկայի (տուն), վորպիսության (բարձր) և գործունեության (կառուցել) ներքին հոգևոր ժառալատկերացումը։ «Ճան» տեսողական զգայությունները կարող ենք առանալ մեկ տանից մի քանի անգամ, կամ շատ տներից։ Բայց յերբ առանց այդ արտաքին առարկայի (տուն) կամ նման առարկաների (տներ) մենք ժառալես ցանկանում ենք այդ առարկան կամ առարկանները վերհիշել կամ վերարտադրել, արդեն առանում ենք մի առարկայի ժառավոր պատկերացումը կամ նման առարկանների ընդհանուր պատկերացումը։ Սակայն այդ պատկերացումը, ինչպես բազմիցս ասվել է, մենք առանում ենք վոչ միայն առարկայի (առարկաների) անմիջական արտաքին գրգռությամբ՝ աղղեցությամբ, այլև միջնորդական նշանների (սիմբոլների, ազդանշանների), վորոնք իրրև լեզվական նշաններ (արտաառնական-լսողական պատկերացում, вокально-акустический образ) հանդիսանում են հենց լեզվի հիմնական դերակատարությունը՝ արտեղծելը։

Թողնելով առայժմ այլ միջնորդական սիգնալիզացիան, մենք կանդ առնենք լեզվական (լսողական-արտաառնական) նշանի վրա, վորպես հասկացողություններ ստեղծելու անհրաժեշտ հանդամանքի վրա։ Մենք գիտենք, վոր լեզվական մտածողության պատմահասարակական զարգացման անհրաժեշտության մեջ այս կամ այն առարկան կամ յերևույթը յուր մարդկային հաղորդման համար առացել և արտաառնական-լսողական սիգնալիզացիայի այս կամ

այն պատահական ձևակերպումը («հորջորջումը»). հետևապես այդ զուգորդումն առարկայի կամ յերևույթի հոգեկան պատկերացման և արտասանական-լսողական հոգեկան պատկերացման միջև, որ կատարվում է սոսկ կցորդության (առընթերության) հոգեբանական որինքի հիմունքով, հանդիսանում է լեզվական մտածողության առաջին սաղմնավորումը և այլևայլն՝ անհրաժեշտ և անխզելի: Ինչպես ե. Սեպիրն է ասում—„Такая ассоциация, волевая и в некотором смысле произвольная по своему характеру, требует значительного упражнения сознательного внимания. Но с течением времени эта ассоциация делается в силу привычки почти столь же автоматической, как и другие, и более быстрой, чем большинство из них“ („Язык“, էջ 11): Արտասանական-լսողական այդ պատկերը վոչ միայն զանազանում է մեր լեզվական մտածողության համար անհրաժեշտությունն կամ ներգործեն և պարտադիր մի նոր լեզվագործոն, այլև պատճառ մեծ նվաճում, վորից մենք հեշտությամբ չենք հրաժարվում, այլ մինչև իսկ վերցնելով հակառակ դաղափարական միջավայրից մենք այդ բառարտաքինը ոգտագործում ենք նոր բովանդակության համար: Իհարկե, վորոշ դեպքերում և մերժում ենք: Բառերի այդ մերժման կամ ոգտագործման և փոփոխության բուն պատճառները անհատի զորությունից վեր են և կապված են պատմա-կուլտուրական հանդամանքների վորոշ հասարակական դաղափարական ընդունման բովից անցնելու հետ:

Սակայն ինչն է անհրաժեշտ, վոր արտասանական-լսողական մտապատկերը իսկապես դառնա լեզվական (և վոչ սոսկ հոգեբանական) մտածողության բուն առաջնը: Սոսկ ասոցիացիան միայն հիմնական յելակետն է այդ մտածողության համար, բայց այդ դեռ քիչ է: Նախ այդ ասոցիացիան չպիտի հատուկ լինի միայն մի անհատի և ինա նրա մեջ, այլ ընդհանուր պիտի լինի վորոշ հասարակամտայնական կազմակերպված կոլլեկտիվին և պիտի հաղորդվի ուրիշներին նման ասոցիացիա կազմելու և հասկանալու համար, վորն և հենց բուն նպատակը այդ լեզվագոյացման: Հասկանալի յե, վոր ըմբռնման (բովանդակության) մեջ վորոշ չնչին տարբերություններ կլինեն, կապված զարգացման աստիճանից, պրոֆեսիայից, հասակից, դասակարգից և այլն: Ինչպես Ա. Տոմսոնն է ասում „Чем более различна среда каждого разговаривающего, тем менее верно и точно они понимают друг-друга“, „Вот почему близкие люди понимают друг

друга с полслова" („Общ. язык", 83)։ *Ցեքե լեզվական նշանը («բառը») վերաբերում է առարկայի (կարող է վերաբերել և յերևույթների՝ գործողության, գրության, հատկության—վորպիսության..) և այն ել միայն մի կոնկրետ առարկայի (իրի կամ անհատի), ապա կստանանք այսպես կոչված «հատուկ անուններ»։ Սակայն լեզվական մեքենայությը չի կարող բնության մեջ յեղող յուրաքանչյուր անհատ (կամ զատ-զատ) առարկային կամ յերևույթին տալ առանձին անուն։ Բոլոր տեսակի ու մեծության քարերին, բոլոր համի ու առնության ջրերին, բոլոր գույնի ու հոտավետության ծաղիկներին և այլն մենք չենք կարող առանձին հորջորջումներ տալ։ Ցավ ինչպես Սեպիրն է ասում.*—„мир опыта должен быть до крайности упрощен и обобщен для того, чтобы оказалось возможным построить инвентарь символов для всех наших восприятий вещей и отношений и этот инвентарь должен быть налицо, чтобы мы могли выражать мысли. Элементы языка—символы, фиксирующие явления опыта,—должны, следовательно, ассоциироваться с целыми группами, определенными классами этих явлений, а не с единичными явлениями опыта. Лишь при этом условии возможно общение, ибо единичный опыт пребывает в индивидуальном сознании и, строго говоря, це может быть сообщен. Для его сообщения требуется отнесение его к определенному классу явлений, которые коллектив воспринимает как тожественные" („Язык" 11—12). *Շարունակելով նույն գրքում և նշում (12) նա ասում է.* „...мы должны более или менее произвольно об'единить и считать подобными целые массы явлений опыта для того, чтобы обеспечить себе возможность рассматривать их чисто условно, наперекор очевидности, как тожественные. Этот дом и тот дом и тысячи других сходных явлений признаются имеющими настолько много общего, не взирая на их существенные и явные различия в деталях, что их оказывается возможным классифицировать под одинаковым обозначением. Иными словами, речевой элемент „дом" есть символ, прежде всего, не единичного восприятия и даже не представления отдельного предмета, но „понятия", иначе говоря, условной оболочки мысли, охватывающей тысячи различных явлений опыта и способной

охратить еще новые тысячи. Единичные значащие элементы речи суть символы понятий, а реальный поток речи можно рассматривать, как фиксацию этих понятий в их взаимной связи".

*Այսպիսով, ինչպես տեսնում ենք, մտածողության լեզվական ձևի զարգացման տեսակետից, մեր պրակտիկ փորձառության, լեզվական մարմնի և հիշողության խնդրող անթիվ կոնկրետ առարկաների հորձորջումներից խուսափելով, մենք, ի հակադրություն սոսկ հոգեբանական մտածողության, ստեղծել ենք լեզվական ձևի մտածողություն յուր թե կոնկրետ և թե մանավանդ դիտակցորեն վերամշակված ընդհանուր դաղափարներով, հասկացողություններով և դրանց բաղմաթիվ ռևլացիոն (հարաբերական) արտահայտական լեզվանշաններով,— մի բան, որ չի կարող տալ մյլ ձևի մտածողությունը։ Հենց վայրենիների լեզուների հետազոտությունն է մեզ ասում և հաստատում, որ այդտեղ կոնկրետ դաղափարներն են գերիշխում, որ, օրինակ, կան բաղմաթիվ բույսերի, ծառերի կամ թռչունների անուններ, բայց չկան դրանց սեռական պատկերացումները՝ բույս, ծառ, թռչուն և այլն[1], ինչպես ցույց է տալիս Լևի-Բրյուլի «Նախնական մտածողություն» աշխատանքը։ Լեզվական մտածողությունը հասարակական զարգացման հետ միանգամայն տարբերվում է յուր որոշակի «անձև» մտածողությունից, որ տալիս է սոսկ հոգեբանական, զգայարանների միջոցով ստացված, կոնկրետ և քիչ թե շատ ընդհանրացած պատկերացումների շարակցությունը։ Այս մասին ասել է և լեզվաբան Ա. Տոմսոնը—«наши понятия (общие представления) в том виде, как они существуют в нас, обладающих языком, возникли в подавляющем большинстве случаев под влиянием языка, как значения слов и форм языка" („Общ- яз.", 79)։ Լեզվական ձևի մտածողությունը վոչ միայն նոր վորակի մտածողություն է, այլ ձևը ձևակերպել և բովանդակությունը հասարակական գիտակցության զարգացմանը համընթաց, այլև վերացական և խոհական մտածողությունն է, ինչպես մատնանշում է Ենգելսը, հակառակ Դյուրինգի։ Ենգելսը գրում է «Ցնծի այդպես և [այսինքն՝ վե-

[1] Մասամբ այդ մնացել է և մեզ մոտ, յերբ գյուղերում չկա «թռչուն» դաղափարը, կա միայն թռչուններից վերցրած զույգ, այն էլ թռչող թռչուններն համար, իսկ հավը, օրինակ զույգ չի։ Թռչուն անունը միայն նոր և մշտնում՝ գրական լեզվի և ընդհանուր առօչհիմության ազդեցությամբ։

բացական և իսկական մտածողությունը առանց լեզվի չի, այնժամ կենդանի նները հանդիսանում են ամենավերացական և իսկական մտածողներ, վորովհետև նրանց մտածողությանը չի խանգարում յերբեք լեզվի ձանձրական (անզուսպ) միջամտությունը»։ Իսկ լեզվի և մտածողության փոխադարձ ազդեցությունը շատ լա ապացուցվում է հենց լեզվի պատմությամբ, վորի մասին մանրամասնորեն կխոսենք «ձևի պատմության» գլխում։ Այդ կողմից ճիշտ դիտում է Ե. Սեպիրը, ասելով—«Мы скорее должны предположить, что появление мыслительных процессов, как особого рода психической деятельности, относится почти к самому началу развития речи, а также что, понятие, раз возникнув, неизбежно воздействовало на жизнь своего языкового символа, способствуя дальнейшему росту языка. Этот сложный процесс взаимодействия языка и мышления мы со всей наглядностью наблюдаем и теперь. Орудие делает возможным продукт, продукт способствует усовершенствованию орудия. Зарождению нового понятия с неизбежностью сопутствует более или менее суженное или расширенное использование прежнего языкового материала; понятие не получает своего особого и независимого существования, покамест оно не нашло своего различаемого языкового воплощения. В большинстве случаев новый символ вырабатывается из уже существующего языкового материала по образу и подобию наличных в языке прецедентов“ (Язык“ 15):

Լեզվական մտածողության սիմվոլիկան, այսինքն՝ մտածողությունը լսողական պատկերների միջոցով, կարող և փոխանցվել կամ փոխարինվել այլ ձևի նշանացի խոսակցությամբ և մտածողությամբ. միայն խնդիրն այն է, թե այդ սուբստիտուցիաները, վորոնք մեծ մասամբ տեսողական են, հնչյունական (լսողական) պատկերների միջոցով են ասոցիացիայի յենթարկվում խմասի հետ, թե անմիջապես։ Մինչև իսկ սովորական հնչալեզվական մտածողության մեջ այժմ ընդունվում է, վոր հնչյունական պատկերները այդ դեպքում անմիջապես չեն դիտակցվում, այլ յենթագիտակցական սֆերային են պատկանում. իսկ այժմյան հոգեբանությունը մեզ արդեն ցույց է տվել, թե վորքան գործոն է սիմվոլիկան յենթագիտակցության սֆերայում։ «Դրա համար էլ այժմ ավելի հեշտ է հասկանալ քան քանի տարի առաջ էր, վոր մինչև

իսկ ամենանոսրացած միաքը անդիտակցած լեզվական սիմվոլիկայի միայն գիտակցված տարբերակն (двойник) եւ, ինչպես ասում է Ե. Սեպիրը („Язык“, 14)։

Գոյակցական սիմվոլիկայի ամենատարածված տեսողական տեսակն է գրային կամ տպագրած խոսքի սիմվոլիկան, ուր ֆիկսացիայի յենթարկված յուրաքանչյուր միավորին (տառ կամ տառակոմպլեքս) համապատասխանում է նախնական (հնչյունական սիմվոլիկայի հնչյունը կամ դրանց կոմպլեքսը (ձևը, բառը)։ Շատերը կարծում են, որ այդ փոխանցումը կարող է և չլինել, այլ գրային պատկերներն անմիջապես զուգակցվեն մտքի հետ։ Սա սխալ է, քանի որ հնչյունական պատկերների միջնորդավորումը կարող ենք թեև անմիջապես չզգենք, բայց յենթագիտակցությանն ամեն դեպքում անհրաժեշտորեն գոյություն ունի։ «Մինչև իսկ նրանք, ովքեր կարդում ու մտածում են առանց ոդտագործելու հնչյունական պատկերները, վերջին հաշվով կախված են դրանցից» (Սեպիր, 17)։ Ընթերցման ժամանակ տառը հանդիսանում է հնչյունական սիմվոլի սիմվոլը։ Հեռագրական գործում (որինակ, Մորզի ապարատում) դրսևորվող վորոշ կետերի և գծերի միասնությունը վեր է ածվում տառերի, իսկ սրանք էլ հնչյունական պատկերացումով հասկացվում են։ Այդպիսով „буква телеграфного кода есть в этом смысле символ символа символа“ (Сепир, „Язык“, 17), թեպետ չի բացառվում վարժ հեռագրիչների և անմիջական (առանց տառերի և հնչյունների) ըմբռնումը, ինչպես վոր յենթադրում են, սակայն հեռագրողի ըմբռնման համար այս դեպքում ձևավորող միջնորդը («կաղապարը») պիտի հանդիսանա նրա չխչկոցների հնչական սիմվոլիկան կամ նրա շոշափականո-մոտորային (ձեռքի միջոցով) սիմվոլիկան, նայած նրա բնական հակվածությանը։

Հայտնի չի մեզ այն գրային սիմվոլիկան, վոր գործ են ածում մաթեմատիկոսները։ Դրանց մտածողությունը թեպետ կազմավորված և դրսևորված է անմիջապես այդ նշաններով, սակայն ընդունվում է, վոր դրանք սուբստիտուցիան են հնչյունական բառի սիմվոլիկայի։ Ամեն մի նշան փոխարինում է լեզվական վորոշ տերմինոլոգիա. մի թեորեմայի կամ մաթեմատիկական վորևէ խնդրի ճշմարտությունը չի կախված այդ փոխարինող նշաններից, սակայն և միայն դրանց միջոցով է ապացուցվում։ Այստեղ, ըստ իս, այնպիսի սուբստիտուցիա չէ, ինչպես հենց հնչյունական լեզվի սիմվոլիկայում «ասյո» կամ «վոչ» հնչարտաբերը վո-

խարհնում են ամբողջական սովորական նոմինկլատուրա, լինելով, այսպես ասած, փոխնախադասություններ („зампредложения.) կամ դերնախադասություններ, թևավոր և կրկնվելով (ուժեղության համար) այդ նախադասությունների հետ[1]։

Մյուս տիպի (վոչ գրային-ռեպրոդուկտիվ) սեմիոլոգիական կամ նշանացի խոսակցություններն են հանդիսանում արտաքին շարժումնային կամ ժեստիկուլացիայի սիստեմի ձևերը, ինչպես վոր տեսնում ենք համր-խուլերի մոտ, վորոշ վանականների («տրապպիստները») մոտ, կամ յերբ մարդիկ հեռու չեն լինում, իրար տեսնում են և չեն կարող միմյանց լսել։ Պակաս կատարելության և հասած ռազմական սիգնալների (ազդանշանների) սիմվոլիկան կամ, որինակ, Հյուսիսային Ամերիկայի տափաստաններում ապրող հնդիկների ժեստիկուլացիան, յերբ այլալեզու այդ հնդկացիները այդ ժեստերի լեզվով միմյանց հասկանում են. ավելի անկատար սիմվոլիկա յե ծովում կամ վորսի ժամանակ գործածվող նշանները։ Դրանք բոլորն էլ վերջին հաշվով հնչյունական խոսողության սիմվոլիկայի սուբստիտուցիան են, քանի վոր ավտոմատիկ և լրելյայն փոխադրություն են հնչյունական լեզվի։ Վերապահություն պիտի լինի անշուշտ համր-խուլերի նշանացի խոսակցության նկատմամբ, վորովհետև նրանք ի բնե հընչյուններ չեն լսել, չունեին հնչյունական լեզու և իրենց շարժումնային լեզուն չեն կարող, թևկուղ և յենթագիտակցորեն, փոխադրել այդ հնչյունական լեզվի նոմինկլատուրայով։ Ցավ այս անպայման ապացուցում և մտածողության նաև վոչ հնչյունական ձևի գոյությունը, այլ նշանացի այլ ձևի (ժեստերի)։ Իհարկե այդ ձևերով, այսինքն հնչյունական լեզվի այլ և այլ նշանացի ռեպրոդուկցիայով, ինչպես և համր-խուլերի նշանացի խոսողության ժամանակ, մարդիկ արտահայտում են միայն ամենաանհրաժեշտ խոսքային տարրերը, քանի վոր այդ նշանները սահմանափակ հնարավորություններ միայն կարող են ունենալ։

Կուլտուրայի տեսակետից հսկայական նշանակություն ունի հնչյունական լեզվի գրային սուբստիտուցիան կամ ռեպրոդուկցիան։ Հնչյունական լեզվի փոխանցումը գրային ձևի պահպանում և մարդկային մտածողությունը անհետացումից և վայրկենություն-

---

[1] Որինակ, ռուս. գնացիր տուն—сходи կամ сходи, (յես) գնացի (տուն)։ կամ ռուս. գնացիր տուն—сходи կամ сходи, (յես) չգնացի (տուն)։ «Տուն» չյես, կարող են և չկրկնվել, ինչպես և մյուս լրացումները։

նրից, վորպիսին հատուկ է հնչական լեզվին. իսկ այդ կոնտեքստային հանդամանքը կուլտուրայի փոխանցման և զարգացման համար ամենամեծ դերն ունի:

Մենք դիտենք, վոր ժեստերի լեզուն մարդկային հնչական լեզվի զոյացման խնդրում սկզբում շատ մեծ դեր է խաղացել և կարելի չի ասել, վոր հնչյունական ձևավորման հետ ունեցել է նմանապես մեծ կազմակերպչական դեր: Վունդտը հիմնական նշանակություն էր տալիս ժեստերին, կամ ինչպես ինքն էր ասում «արտահայտչական շարժումներին» (Ausdrucksbewegungen), վորպիսին և հիմնականորեն պանտոմիման (ձեռքի և մասամբ մարմնի այլ մասերի միջոցով), վորին հարակցվում է միմիկականը, այսինքն՝ դեմքի մկանունքների շարժումը[1]:

Ռուս նորագույն գիտնականներից ամենից շատ նշանակություն էր տալիս ժեստերի լեզվին Ն. Մառը, կոչելով այդ «ձեռք լեզու» կամ «գծային» (линейный) լեզու: Հաբևեթաբանության հիմնադիրը այդ ձեռք լեզվին տալիս էր ավելի արժատական բնույթ, կապելով մեր մտածողության կազմակերպումը աջ ձեռքի շարժումների հետ, իսկ հետո այդ ձևավորված մտածողությունը փոխանցվել և հնչյունական ձևին, այսինքն յեղել և այն սուբստրուկցիան, վոր հետագայում հակառակ ուղղությամբ էլ է յեղել, այն է՝ հնչյունականից անցել նշանացի այլ ձևերի խոսակցության, ինչպես վերևը տեսանք: Ն. Մառը իզուր այդ նորագույն նշանացի ձևերը համարում է առավելագույն, հնագույն, այն է՝ լեզվի սկզբնական շրջանից մնացած[2]: Վոր հնչյունական արտի-

---

[1] Ռուս գիտնական (լսարնագետ) պրոֆ. Զևլինսկին յեզրակացնում է վանդտի տեսությունից այն, վոր այդ ժեստերին ակամայից հարակցվող հընչյունները հնագիտան, իրենց զարգացման հետևանքով, ժեստերից խլում են նրանց ներքին բովանդակային մասը, վերջիվերջո փոխարինելով այդ ժեստերը: Եվոլուցիան տեսակետից, որգանական կյանքի ամենացած ասպիճանի վրա, կենդանի հակները շարժումներ չեն կատարում ասանց ձայնի և պրմունի. Նշանակում է, ձայնը զարգացավ շարժումից հետո: Տես К. И. Кнауэр, Введение в языковедение, եջ 137—138: Ավելացնում է, վոր „обезьяны гримасничают но не жестикулируют", վորով միմիկան ավելի հինն է համարվում քան պանտոմիման:

[2] Նրա աշակերտների կողմից կատարվում էին, որինակ, Կովկասում, այդ նշանացի խոսակցության մնացորդների հետազոտություն և այլն, մի բոլոր չկատածելով, վոր դրանք կարող են և նոր սոցիալական իրադրություններին հետևանք լինել, ինչպես, որինակ, մեր նահապետների համրության, իբրև հնով սովորական վիճակի ատամհատության կապված դատակարգային հատկանիշի զոյացման հետ:

կուլացիայի կենտրոնը (Բրոկայի կենտրոն), ինչպես և հնչապատկերների (հիշողության) կենտրոնը—Վերնիկեի կենտրոնը—ձախ կիսագնդում է, դա փաստ է և չպիտի կասկած հարուցի խոսակցության հետ, քանի որ այն տեսակի հնչյուններ, սկսած զուտ կենդանական վիճակից, այդտեղ է կենտրոնացած, անկախ աչ ձեռքի լեզվակաղապարական ֆունկցիայից (տես նույնպես Ե. Սևիր, «Լեզու», էջ 9—10)։

Ցերեկ չհաշվենք հոգեբանական «մտածողությունը», իրրև անհատական պատկերացումների մի շարան, որը ներքին հոգեբանական «անձև» մի մտապրոցես է, ապա մարդկային մտածողությունը գոյանում և յերևան է գալիս այլևայլ պայմանական նշանների միջնորդությամբ, որոնցից ամենագլխավորն է հընչյունապատկերացումների սիմվոլիկան։ Սրանց և իմաստի միջև կայացող զուգորդությունը կարող է դառնալ և յենթագիտակցության հոգեաշխարհի գործառնություն։ Հնչյունականի դրային (տպային և այլն) սուբստիտուցիաները ամենակատարյալներն են, ունենալով այդ հնչյունականի հետ, թեկուզ և անգիտակցորեն, մեկ առ մեկական նշանակության կապակցություն („одно-одно-значная сопряженность“ ըստ մաթեմատիկոսների հորջորջման)։ Նշանացի մյուս սուբստիտուցիաները, այն է, հնչյունականի գծային (շարժունակային) փոխարինումները և վերարտադրությունները, և հատկապես միմիկան և պատոմիման (ձեռքով, գլխով և այլն), հնչյունական լեզվի գոյացման սկզբնական ժամանակներին մեծ դեր են խաղացել, գրեթե հավասարազոր լինելով այդ շարժունակային խոսակցությանը, սակայն վոչ բացարձակ կերպով, ինչպես վոմանք են դիտում, մանավանդ վոր պիշերը անհնարին եղ եր ձեռացի խոսել։ Մյուս ժեստիկուլյացիանները մեծ մասամբ նոր են, ինչպես չխոսող վանական տրապղիստների մոտ, Հյուսիսային Ամերիկայի բնիկներինը [1], ծովային և վորսորդու-

[1] Այդ բնիկների մասին հետաքրքիր նորություն ենք կարդում «Правда» լրագրում, ոգոստ. 22-ի 1935 թ. № 234 (6480), ուր վերջին VI էջի վրա «Язык жестов» վերնագրով տպված և հետևյալ հեռագիրը Լենինգրադից. «Ленинградская фабрика учебных и научных кинокартин «Союзтехфильм» закончила с'емку первого в мире научно-лингвистического фильма «Язык жестов». Режиссер фильма—В. Н. Николай. В картине снимался научный сотрудник индеец Арчибальд Финней, продемонстрировавший около 500 жестов североамериканских индейцев, применяемых ими для сношений между различными племенами. Язык жестов настолько развит, что при помощи его передаются даже такие сложные современные понятия, как, «телеграмма» и. т. д.»:

թյան սիդնալիզացիան և այլն։ Այնուհետև այդ նշանախոսությունները անգիտակցորեն վեր են ածվում հնչյունականի, իսկ հնագույն նշանացի միացորդներն են մնայն այն շարժումները, որ մենք հիմա էլ կատարում ենք սովորական խոսակցության ժամանակ, ուժ և տալավորություն ավելացնելով բանավոր ձևին։ Համր-խուլերի մոտ այդ թարգմանությունը (հնչյունականի վերածումը) իհարկե չի կարող լինել, քանի որ նրանք հնչյունները չեն լսել, բայց նրանք էլ մտածում են իրենց ձևական (շարժումնային) նշանների միջոցով. այլ կերպ մենք չենք կարող պատկերացնել։

Այդպիսով մենք տեսնում ենք, որ խոսելը (լեզուն) անմիջապես թե միջնորդապես, գիտակցորեն թե անգիտակցորեն, կապակցվում և կազմավորվում է որոշ նշանների միջոցով, այսինքն՝ ունի ձև,—մի հանգամանք, որ այդչափ մեծ դեր է խաղացել (խոսքս հնչյունական ձևի մտածողության մասին և) մարդկային բարդ և վերացական այժմյան մտածողության հանդես, ուր միակվել են այդ հնչյունական պատկերացումների միջոցով կոնկրետ և վերացական հասկացողություններ և դրանց հարաբերակցության վերացական արտահայտությունները (տարածության, ժամանակի, կեղանակի, կերպի, սեռի, հատկացման, պատճառի, պայմանի, նպատակի...)[1]։

Բոլոր ժողովուրդներն էլ, սկսած ամենավայրենի բուշմեններից, ունեն քիչ թե շատ զարգացած հնչյունալեզուներ իրենց անհրաժեշտ ֆոնետիկական սիստեմով, խոսքի տարրերի սինտեֆիկ դուդրդության համակացողությունների հետ և բարդ պարբառով, որով դրսևորվում և ամեն տեսակի հարաբերության ձևական արտահայտությունը։ Հաճախ զարգացման շատ ցածր աստիճանի վրա կանգնած ժողովուրդները (եսկիմոսներ, հոտենտոտներ...) ունեն լեզվի ձևական բազմազան հնարավորություններ, սակայն քանակապես հարկավ շատ չզարգացած, չունենա-

---

[1] Ե. Սեպիր ասում է. «Слуховые образы и соответствующие моторные образы, обусловливающие артикуляцию, какими бы окольными путями ни подходили к интересующему нас вопросу [символики не звучной], являются историческими источниками всякой речи и всякого мышления». կամ—«И так, язык есть некая структура, по своей внутренней природе—форма мысли» (էջ 18) կամ—«Что касается меня, то я вполне уверен в том, что мнение столь многих людей о возможности думать и даже рассуждать без языка, есть лишь иллюзия» (էջ 14)։

լով ժանավանդ հաբուստ տերմինոլոգիա, ինչպես և այնպիսի «բառեր», որոնք կուլտուրականության յուն արտացոլող երևույթները տարբորոշելին։ Ցուրաքանչյուր լեզու յուր սպեցիֆիկ իմմանենտ զարգացման հետևանքով, նայած պատմական մոմենտին և ընդհանուր զարգացման պահանջներին, դիմում և այս կամ այն հնչյունական միջոցառումների (քանակական, վորակական և դիսլոդիցիոն) ձևեր ստեղծելու համար։ Սակայն հասարակական ընդհանուր գիտակցության փոփոխության հետևանքով, վորն արտացոլում և հասարակական արտադրական վիճակը և ընդհանուր կեցության, այդ լեզուները կրում են և ընդհանուր լեզվական փոփոխություններ, հատուկ բոլոր ցեղերին, ազգերին և այլն, ժամանակի տեսակետից միայն յետ և առաջ ընկնելով, ինչպես հնչյունների առաջ շարժվելը դեպի բերանային խոռոչի առջևի մասերը, ինչպես յերկակի թվի կամ սեռերի անհետացումը, կոնկրետ և ընդհանուր առարկաների ձևականորեն նշումը, հոլովական և խոնարհման ֆունկցիաների նրբանշումը և այլն։ Այս ընդհանուր գլոտտոլոգիական՝ լեզվաստեղծական պրոցեսին զուգընթաց, մարդկային լեզվի ձևաբանական միավորները ևս ավելի յեն կոնտամինացիայի մեջ մտնում, խառնվում համադրվելով և ձուլվելով, քանի վոր լեզվակիր հասարակությունները ևս ավելի մեծ կոլլեկտիվներ են կազմում (ցեղերի դաշնակցություն, մեծ դեսպոտիական պետություններ..), և տասնյակ կամ դուցե հարյուր հազարավոր լեզուներից այժմ մնացել են մոտ 1800 լեզուներ, բարբառներ։ Ցավ քանի վոր այդ տարրեր ձևավոր լեզուների բովանդակական մասը քանի գնում ավելի յև մոռանում իրար, քանի վոր պատմության զարգացման ընթացքը տանում և դեպի բոլոր ազգերի (ազգալեզուների) կոնֆեդերացիա, համաշխարհային միասնական տնտեսության և գիտակցության, ապա կլինի ժամանակ, յերբ մարդկային լեզվի այդ մոտ յերկու հազար ձևերը դառնան ավելորդ, և նրբքուստ ստեղծվի մի նոր լեզվաձև ամբողջ մարդկության համար։ Այդ դեպքում դեր են խաղալու առաջին հերթին այն այժմյան լեզուները, վորոնցով կատարածվի հեղափոխությունը և կկազմակերպվի նոր տնտեսաձևը։ Նշանակություն ունեն այդ լեզուների կուլտուրական զարգացման աստիճանը և այժմյան կրողների քանակը (սլավոնական, գերմանական-անգլիական, ռոմանական տիպերը դերիշխելու յեն ըստ իս)։ բայց այդ լեզուն ևլի լինելու յե հնչյունավոր ձևի լեզու, վորքան էլ այդ կազմած լինի, հակառակ Մառին, էքսուբյան նոր-

ժանրերի» հետ և կաշկանդիչ լինեին։ Ցեվ այդ տեսակետից էլ դուբ չեր կ. Մարքսը դեռ «դերմանական իդեոլոգիայում» շեշտում, որ «նախապես մտածողություն գոյություն չունի որպես «մաքուր» գիտակցություն։ Ոդուլ վրա նախապես ծանրացած է լինում այն մատերիայով ներան «ճնշելու» նզովքը, որն էլ հայտ է գալիս այստեղ ոդի շարժվող շերտերի ձևով, հնչյունների ձևով, կրճատասած՝ լեզվի ձևով։ Լեզուն նույնչափ հին է, որքան և գիտակցությունը. լեզուն—այդ պրակտիկ, ուրիշների համար գոյություն ունեցող, հետևապես և ինձ համար գոյություն ունեցող, ռեալ գիտակցությունն է։ Ցեվ լեզուն, գիտակցության նման գոյանում է այլ մարդկանց հետ հաղորդակցվելու պահանջից[1]։ Այսպիսով Մարքսը «մաքուր» մտածողություն չի ընդունում, այլ լեզվական ձևի հետ է վերցնում, համարելով գիտակցությունը նույնչափ հին որքան և լեզուն։ Մտածողության ճշմարտությունը, ինչպես տեսանք, նաև Ենգելսը «մաքուր և իսկական մտածողություն» չեր ընդունում առանց լեզվական ձևական հանգամանքի։ Իսկ թե ինչքանով և այդ լեզվական հարուստ ձևական հնարավորությունը զարգացրել մեր մտածողությունը, դա անժխտելի չէ համարվում և լեզվաբանների կողմից։ Համեմատենք Սեպիրի հետևյալ խոսքերը ևս. „Он [язык] однако придает законченный вид мышлению, которое скрыто в его классификациях и формах и эвентуально может быть в них раскрыто; вопреки общераспространенному, но наивному взгляду, язык не есть ярлык заключительно налагаемый на уже готовую мысль“ („Язык“, էջ 13)։ Այսպիսով մենք տեսնում ենք, թե ինչպես և համընկնում մի քանի լեզվաբանների (Սեպիր, Տոմսոն...) կարծիքը մարքսիզմի հիմնադիրների կարծիքի հետ, հակառակ Մաուի վերացական և վոչ պատմական կոնցեպցիայի։

* * *

[1] Տես Архив К. Маркса и Ф. Энгельс,а кн. 1 էջ 220.

2. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԲԱՌ

a) ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Լեզուն լինելով մտածողության համար բովանդակավորող ձև, կամ «ձև-բովանդակություն», այն իմաստով, ինչպես վոր մենք բացատրել ենք, ունի բնականորեն և իրեն ներքին կառուցվածքային (սերուկտուր) մասերը։ Այդ մասերի ինքնորոշումը կամ լեզվական կերպավորումը կապված է թե լեզվի և լեզվական տիպերի ընդհանուր զարգացման հետ, կախված հասարակական զարգացման հետ, և թե ընդհանուրի և մասնավորի, ամբողջի ու մասի, ընդհանուր լեզվական ու խոսքի ֆունկցիոնալ՝ ձևական առումիցս։

Ցեթե լեզուն մտածողության հնչյունական ձևի պատմնցիալ կացությունն է, վորը դոյացել է կոնկրետ խոսքից, խոսողական պրակտիկայից, և ունի պարտադիր և սոցիալական ընդհանրություն, ապա խոսքը ավելի կոնկրետ է և բազմազան և ինդիվիդուալ ազատության և ստեղծագործության պրակտիկան է տալիս։ այդ խոսքը, կարելի յի ասել, ընդհանուր լեզվական ունակության («լեզվի» նեղ իմաստով) կինետիկ արտահայտության մասնավոր կողմն է, կազմվելով հաղորդման կոնկրետ պահանջից։ կարելի յե, իհարկե, այդ խոսողական ձևավորությը («նախադասությունները») և չհաղորդել, այն է՝ մտքում ասել. բայց սա չի կարևոր մոմենտը, քանի վոր այդ գործածությունը արտասանության և լսելու միջոցով է նախապես կազմված յեղել, իրրև լեզվի գոյացման անհրաժեշտ հասարակական իմպերատիվը։

Խոսքի ձևավորված միավորները («նախադասությունները») իրենց պատմական կազմավորման մեջ միատեսակ և բացարձակ սիստեմը չեյին կարող ունենալ, այլ կապված են յեղել հասարակական մտքի և հետևապես և լեզվի պատմական հաղորդական զարգացման հետ։ Նկատվում է այդ կողմից, ըստ իս, յերկու հիմնական կացություններ, յերբ մի կողմից մտածության տարրըրոշելիությունը ավելի թույլ և (համեմատիր «բառ-նախադասություններըը») և ընդհակառակը, յերբ նախադասությունը ավելի ռնալիտիկ (մասերի ուժեղ ձևավորությով) բնույթ և կրում։

Այժմ դանք հենց այդ խնդրին, թե ինչ է նախադասությունը, ինչպես այդ բնորոշել, որ ընդգրկի բոլոր լեզվական տիպերը և ժամանակները։

Ցեղած բնորոշումները (մոտ 130) կրում են կամ տրամաբանական կամ հոգեբանական և կամ ձևաբանական մոտեցումներ, տեսանկյուններ. կամ էլ, ի վերջին, դրանց այս կամ այն ձևի խառնուրդն է լինում։ Իսկ շատ լեզվաբաններ էլ հրաժարվում են տալ նախադասության դիտական բնորոշումը (դեֆինիցիան)։

Տրամաբանական տեսակետից նախադասության սովորական բնորոշումներն են. «նախադասությունը բառերով արտահայտված մի միտք է» կամ «նախադասությունը բառերի համադասություն (сочетание) է, որը վերջացրած միտք է արտահայտում»։ Ըստ-րոցական քերականությունների մեջ միշտ այսպես է տրվում նախադասության բանաձևումը։

Ձևաբանական կամ քերականական տեսակետից «նախադասությունը բառերի շարք է, որոնք հարաբերակցվում են ֆորմալ տարրերի միջոցով»։

Ցերխատարդ քերականների ավագ ներկայացուցիչ Պաուլը այսպես է բանաձևում. «նախադասությունը—դա հնչյունական արտահայտությունը կամ խորհրդանիշն է այն բանի, որը խոսողի հոգում կատարվում է մի քանի պատկերացումների միացում. այդ միջոց է ասաջ բերել լսողի մոտ նույն պատկերացումների միացումը»։

Հայտնի լեզվաբան և հնդեվրոպական լեզուների համեմատական շարահյուսության հիմնադիր Դելբրյուկը ասում է. «նախադասությունը—դա տարրորոշ խոսքի միջոցով այն դրսևորումն է մտքերի և զգացումների, որը պատկերացվում է խոսողին և լսողին իբրև կապակցված և վերջացրած մի ամբողջություն»։

Հոգեբանական տեսակետից հայտնի է վունդտի բնորոշումը. «նախադասությունը—դա լեզվական արտահայտումն է այն բաղադրիչ մասերի կամայորեն բաժանված միաժամանակյա պատկերացման, որոնք (մասերը) միմյանց հանդեպ տրամաբանական հարաբերության մեջ են դրված» (ռուսերեն՝ предложение есть языковое выражение произвольного расчленения совокупного представления на его составные части, поставленные в логическом отношении друг к другу»)։

Ռուս դիտնական Պոտեբնյան (Потебня) յուր „Из запи-

сок по русской грамматике" աշխատության մեջ ասում է, որ «մեր լեզվի արտահայտման (изложение) եական հատկությունը նրանումն է կայանում, որ նախադասության մեջ մտնում են խոսքի մասեր («մասունք բանից»-ները)»։ Ըստ Կուդրյավսկու «նախադասությունը մտքի արտահայտման ձևն է»։

Ա. Տոմսոնը գտնելով, որ նախադասության հիմքում պիտի լինի դատողություն ընդհանուր հոգեբանական առումով, որ ընդհանուր լեզվաբանության մեջ նախադասության բնորոշումը պիտի ընդգրկի աշխարհիս բոլոր լեզուները, մի բան, որ այժմ անիրագործելի է, շարունակում և ճշտորոշել և ընդարձակ նկարագրել այդ նախադասությունը. „предложение есть *обыкновенно* ряд слов, вылитый, так сказать, в одну из обычных в данном языке формальных рамок синтаксического сочетания слов в предложении и представляющий в значениях этих слов суждение в широком, психологическом смысле. Предложение возникает обыкновенно из разчленения сложного представления на значения слов с сознанием логических соотношений между ними, обусловливающих синтаксическую формальную сторону предложения. В звуковой стороне предложение об'единяется ударениями предложения (экспираторным и музыкальным) и отделяется от соседних предложений паузами" *(տես նրա „Общ. языков." 302—303)*։ *Սրան Տոմսոնը հարակցում է հետևյալը.* „составными частями или членами предложения бывают *подлежащее*—точка отправления суждения (subjectum, ὑποκείμενον) и *сказуемое* —высказываемое о подлежащем (praedicatum, κατηγορήμενον). Вся суть, из-за которой образуется предложение, заключается в сказуемом, а подлежащее указывает лишь, к чему относится сказуемое: Отношение между сказуемым и подлежащим очевидно логическое. Если тем не менее приходится говорить о суждении в психологическом смысле, то только потому, что существующая логика понимает под суждением только известные типы суждений, а не всякие суждения вообще, встречающиеся в действительности как значения предложений".

Նախադասության սահմանումը, ինչպես տեսնում ենք, կամ դժվարություն և պատճառում մորոշ դիտնականներին, որոնք և հրաժարվում են ճշտորոշել այդ, կամ ընդհանուր շատ դծեր են

տալիս, թեպետ և տարբեր տեսանկյուններով։ Ամերիկացի նոր լեզվաբան Ե. Սապիրը գտնում է, որ այդտեղ դժվարություն չկա. և նախադասությանը նա մոտենում է լոկ տրամաբանական տեսակետից, որը, ինչպես տեսանք, դերիշխում էր վերևում բերված կարծիքների մեջ։ Սապիրն ասում է. „Определить предложение не представляет трудности. Оно есть выраженное в речи суждение. Оно сочетает суб'ект высказывания с каким-либо утверждением в отношении этого суб'екта. Суб'ект и „предикат" (сказуемое) могут быть об'единены в одном слове, как, например, в латинском dico „говорю"; каждый из них может быть выражен самостоятельно, как, например, в однозначащем английском словосочетании I say „я говорю"; каждый из них или они оба, при наличии более сложных суждений, могут быть значительно детализованы. Сколько бы ни было входящих в состав суб'екта и предиката элементов (слов или их функциональных частей), в предложении сохраняется ощущение его единства, поскольку каждый из этих элементов необходим для полного выражения либо суб'екта высказывания, либо содержания предиката" (տես նրա „Язык", էջ 29)։

Ինչպես տեսնելով վերևում նշած բոլոր տեսակետները և լեզվի արտահայտչական այդ ձևին (նախադասությանը) մոտենալով լեզվի պատմա-հասարակական զարգացման տեսակետից, մենք առաջարկում ենք նախադասության սահմանումը տալ այս կերպ. «Նախադասությունը մեր տարրորոշված մտածողության (մտքի) կոնկրետ և ձևավորված խոսողական (խոսքի) մի ակնթան յն է, որով ստորոգվում և մեր պրակտիկայից (փորձից) կազմված առարկա-մտապատկերը»։ Այս սահմամբ նախադասությունը յուրահատուկ կերպով արտացոլում է (անդրադարձնում է) մեր գիտակցության մեջ արտաքին աշխարհի առարկաների և յերևույթների փոխհարաբերությունը, վերջին հաշվով արտացոլում է մտածելության և շարժման (դրության) կամ հատկության հարաբերությունը։ Նախադասությունը, այդպիսով, արտաքին աշխարհը մեր գիտակցման լեզվաարդյունքն է, մեր գիտակցական (осознательный) գործունեության արդյունքը։

Վոր նախադասությունը structured մի ամբողջություն է, այդ պահանջում է հենց մարդկային լեզվի եյությունը, իբրև բարձր (զարգացած) գիտակցության հետևանք։ Իրավացի եր

ասում լեզվաբան Շաւանթալը, վորին միանում է և Վունդտը վոր ապերցեպցիան, այսինքն՝ մոտապատկերների բաժանումն ու միացումը պատկանում է միայն մարդուն, վորով վերջինս տարբերվում է կենդանիներից։ Մենք գիտենք, վոր մինչ այդ լեզվ և վոչ տարբորոշված «բառ-նախադասությունը», վորին ժամանդակում եր ձեռքի և այլ որգանների շարժումը, և վորը արտահայտում եր գլխավորապես կամք և եմոցիա։ Այժմյան վոչ տարբ որոշված բառ-նախադասությունները այլ պահանջի արդյունք են. այժմ մեզ բառեր և կապակցական ձևեր չեն պակասում, բայց և այնպես, այլ և այլ մղումներից դրդված յերբեմն դիմում ենք այդ «նախնի» միջոցին, ինչպես «քեզ» („чаю"—կայարանում), «գրողը, դողը»...,— «չաղմկել», «զգաստ»։ Զարդացած բառ-նախադասությունները (называные слова-предложения) գործ են ածում պատկերավոր վոճի մեջ, ինչպես՝ միտինգ, դրոշակներ, ճառեր...։ Տարբորոշված նախադասությունը ունի յերկու աստիճան, մեկը՝ յերբ դրա մասերը դեռ սերտորեն են կապված միմյանց հետ, ինչպես, ասենք, վրաց մո-մ-ծերե-ո «դնալի-ինձ-դրիր,-ասաց», վորը մի բառ և, կամ Ամերիկայի բնիկների մոտ, «նուտկա» կոչված լեզվում—«յես սովորում եմ ուտել, զրազված լեզելով (այսինչ-այսինչ գործերով), քաանական կլոր առարկաներ (=խնձորներ)». կամ նույն Ամերիկայի «չինուկ» լեզվում՝ i-n-i-á-l-ú-d-am բառը, վորը նշանակում է «ահա-յես-այս-ներա-համար-դենը-տալու-յեկա») я пришел, чтобы отдать ей это ազատ թարգմանությամբ)[1]։ Իսկ ավելի տարբորոշված նախադասություն պիտի համարել, յերբ դրա անդամները («բառերը») ավելի ինքնուրույն են և տեղերը կարող են շարժել, ինչպես հենց հայոց «լինձ դրիր, ասաց նա» (գրիր ինձ, նա ասաց) կամ «յես յեկա այս բանը նրան տալու համար», ինչպես նույնը տեսնում ենք հնդևրոպական, սեմական և այլ լեզուներում[2]։

Ձևավորման (оформлесние) հանդամանքը նախադասության համար, ինչպես և լեզվի ընդհանրապես, նմանապես կարևոր պահանջ է։ Յեթե ասենք «յես, տուն, գնալ», այստեղ չկա մտածողության ձևավորված ակցիա, մեր լեզվին հատուկ, այլ պիտի ասվի—յես տուն եմ գնում (գնացի և այլն)։ Մենք գիտենք նույնպես, թե ինչքան

---

[1] Տես ն. Մեպիր, Լեզու, էջ 55, 26։ Համեմատիր ապտեկների լեզվում (Ամերիկա)—ninakakva «յես-մին-եմ-ուտում»,—մի բառ նախադասություն, կազմված ni (=յես), nakati (=մին) և kva (ուտել) բառերից։

[2] Տարբորոշության տարբեր ձևաստիճաններ են «իմ վորը շունը» և «շուն-իկ-ս»։

ինձ դեր և խաղում նախադասության ճիշտ կազմելու համար բա-
ների դասավորությունը, որը ձևաբանական կերևույթ է, որի-
նակ, Տիգրան կսիրե Վարդան, Վարդան կսիրե Տիգրան. այստեղ
կենթական և խնդիրը (որյակտը) տարբերվում են, նայած թե
նախադասության սկզբում են (կենթակա) թե վերջում (որյեկտ),
նման ռուսաց цель оправдывает средство, ֆր. ma mère aime
mon père (իմ մայրը սիրում և հորս) և այլն։ Այս կերևույ-
թը, այն է՝ դասավորության ձևաբանական նշանակությունը,
պղում է և բառերի նեղքին իմաստի վրա, որինակ, նա քար
վերցրեց («քար»-ը առարկա չե), նա քար սիրտ ունի («քար»-ը
ածական է=քարայրին), նա քար գնաց (կենի տալիս՝ «քար»-ը
կլիներ մակբայ=քարի պես). համեմատիր չինարեն—ժեն խաո լի
«մարդը սիրում է ոդուտը» (լի խաո ժեն—հակառակը), բայց
խաո լի ժեն=ոդտասեր մարդ (բառացի «սիրող ոդուտը մարդ»)։
Վորոշ լեզվաբաններ (Վունդտ) այս տիպի ձևաբանական կոնս-
տրուկցիան (առանց մասնիկների) հատկացնում են «կենեքնաձև լե-
զուներին», հակառակ «տրտաքնաձև [մասնիկավոր] լեզուներին»,
որը սխալ ձևաբանական տեսաբանություն է։ Հաճախ նախադա-
սության վորևե դլխավոր անդամ (կենթակա կամ ստորոգյալ)
առկա չի լինում, կախված կամ պատմական հանդամանքներից
կամ հոդեբանական-անմիջական։ Վորոշ որինակներ մենք արդեն
այս դլխի սկզբում բերել ենք, ինչպես ռուսաց ветром сорвало
крышу, куда его занесло?, меня лихорадит և այլն, կամ
ֆրանսերեն il pleut, il gèle.., դերմ. es regnet և այլն, ուր
«կենթական» (=նա), այն է il, es այժմ չեն դիտակցվում
(դրանք առաջ տոտեմներ կամ վոդիներ են յեղել, ըստ Մառի).
բայց ամեն դեպքում ժիտանական բացատրություն չի կարելի
տալ, ինչպես, որինակ, մթնեց, светает «լուսանում է» և այլն։
Մենք դիտենք, վոր վորոշ լեզուներում կենթական կարող է առանձին
և չդրվել, ինչպես, որինակ, լատ. dico—ասում եմ, ուր կենթա-
կան յեղակի թվով (=յես) արդեն արտահայտվում է բայի վեր-
ջավորությամբ. կենթակայի (ego=յես) առանձնակի հիշատակու-
մը կապված է ուժեղ շեշտելու հետ, յերբ հաջորդվում է այլ կեն-
թակայի (յես գնացի, իսկ դու մնացիր)։ Հրամայական կամ դրան
փոխարինող ըղձական (և adhortativus) յեղանակների ժամանակ կեն-
թական առկա (դիմացը) լինելու հետևանքով նույնպես չի հիշատակ-
վում (գնա՛ բեր, գնանք-բերենք)։ Ցենթական կարող է և անհետանալ
կամ ավելի ճիշտ անվորոշ (ընդհանուր) բնույթ ստանալ, թեպետ

բայձևը դիմավոր է մնում (կասես թե, ասում են, говорят..). իսկ յեթե «ձևականորեն» այդ դեպքում տեսնում ենք նրա ներկայությունը, փաստորեն այդ յենթական բովանդակությունը փոխած է լինում և չի գիտակցվում (կամ ընդհանուր առում ուշն է), ինչպես հայերեն «մարդ ուզում եր փախչել», ֆրանս. on parle «ասում են» գերմ. man sagt «ասում են» և այլն։

Սաորոգյալն ևս կարող է չլսանվել, ինչպես ասենք „дорогу-способным“, „красной армии—преданных сынов родины“..., կամ լատիներեն՝ homo homini lupus «մարդը մարդուն՝ գայլ»..., ես, վորպիսի յերջանկություն։ Կարող է և դնդչվել, ինչպես ռուսաց „береза-дерево, Иванов—слеп(ой), վորտեղ դասավորության յեղանակը սաորոգում է պատճառում (дерево береза կամ слепой Иванов նախադասություն չի)։ Այդպես է դնդչվել հին ռուսերենում անցյալ բաղադրյալ ժամանակում, ինչպես я писалъ есмь «ես գրեալ եմ» (գրարար), վորը դարձել է я писал «ես գրեալ» (գրաբարում ևս այդ ոճանդակ բայը կարող է դնդչվել)։ Սաորոգյալի սովորական դնդչում է լինում համադասս նախադասություններում, ինչպես, որինակ, յես գնացի գյուղ, իսկ դու՝ քաղաք։

Զբերելով բոլոր դեպքերը, մենք արդեն տեսանք, վոր յենթակայի և սաորոգյալի ներկայությունը ձևականորեն չի կրում բացարձակ բնույթ, այլև պայմանավորվում է մի շարք հոգեբանական և պատմական մոմենտներով։ Բայց այս չի նշանակում, վոր դա որինաչափական յերևույթ է սովորական մտածողության համար, իբրև մի սաադիալ ակցիայի։ Վերջիվերջո այդ բոլորը յենթարկվում է մտածողության պատմականորեն ևանալու մեջ. դոմինանտը միշտ նա յե։ Մինչև իսկ յենթակայի և սաորոգյալի ձևական ներկայության ժամանակ, համադասությունը լինում է ըստ իմաստի և ոչ ըստ ձևի, ինչպես—իմ գրքերը կորավ, յերբ «գրքերը» ընդունվում է ամբողջապես, իսկ «իմ գրքերը կորան» համադասության մեջ շեշտվում է գրքերի առանձին-առանձին լինելը. կա և հակառակը, ինչպես բարբառներում ասում են «ժողովուրդը գնացին» կամ գրաբարում «ազգն սիրեցին» («սիրեցին աշխարհիս Հայոց ազգն Սասանայ պարսկի» Ցեղիշեի պատմության մեջ), ուր համաքական յեղակի ձևով յենթական հասկացվում է իբրև անհատ միավորներ։

Ցեղեն յենթակայի և սաորոգյալի դուգորդումը մեր մտածողական ակցիայի տրամաբանական և հոգեբանական անհրաժեշտ և

բավող նախադասությանն է, թեպետ և վոչ քարացած ձևով, սակայն իրենց զարգացման մեջ տարբեր դիտակցական կացութիւններին արդյունք կարող են լինել. Որինակ, յեթե առարկան, վորպես յենթակա, սկզբում տալիս մի պատկեր (образ) եր կամ գառնում է նույն և նման առարկաների վերաժշկված մտապատկեր-հասկացողութիւնը, տալ դիտակցութեան ավելի բարձր պատմական աստիճանի վրա այդ «յենթական» կարող է և մի ամբողջ նախադասութիւն լինել, վորովհետև մենք կարող ենք առարկայացնել վոչ միայն մի «խակ» (խակը շաղկապ է), «ա» (ա-ն հոդակապ է) և այլն—ել չենք ասում վերացական և հատկացական անուններին մասին (յեղրակացութիւնդ սխալ է, կարծիրը մեր պայքարին նշանակ է և այլն)—այլև և դիցուք «յես չեմ ուզում մնռնել», ինչպես՝ նրա «յես չեմ ուզում մնռնելը» մինչև հիմա ինձ ցնցում է, այստեղ յենթական մի ամբողջ նախադասութիւն է («յես չեմ ուզում մնռնել»), վորը մեր դիտակցութեան մեջ, ինչպես ասացինք, յենթակայացվել է։

Ձևաբանական այն որինաչափութիւնը, վոր պատմական վորոշ մոմենտներում ի հայտ և դալիս այս կամ այն լեզվում կամ «աղգակից» լեզուներում, նմանատիպ բացարձակ չի և կապված է մեր ասել դիտակցման հետ, իբրև նախադասութեան սաորոգման (сказуемость) միակ չափանիշի հետ։ Այսպես, որինակ, հնդեվրոպական լեզուներում յենթական, վորպես գործող անուն (agens), դրվում է այսպես կոչված «ուղղականն» (Nominativus) հոլովաձևով, իսկ սաորոգյալը՝ բայի դիմավոր ձևով (verbum finitum)։ Այսպես առնդիվել և այդ լեզուների («մասնիկավոր» լեզուների) ներքին զարգացման հետևանքով, բայց, որինակ, այդ այժմ դժվար է պնդել մի անգլերենի կամ հենց ֆրանսերենի գոյականի համար, իսկ ռուսերենում „у меня нет денег“ կամ „сегодня не будет грозы“ նախադասութիւններում յենթական արդեն այլ հոլովով է (թեև այստեղ սեռականով տրվում է անվորոշ յենթական)։ դրաբարում ևս յենթական կարող է դրվել և վոչ ուղղական հոլովով (այլ սեռականով, վորոշ պարագայում)։ Իսկ վոր սաորոգյալը կարող է և verbum finitum չլինել, այդ մենք վերևում արդեն տեսանք։ Այսպիսով ընդհանուր այդ որինաչափութիւնը (հնդեվրոպական լեզուներում), կապված թե լեզուների ներքին (իմմանենտ) զարգացման հետ և թե դրան պայմանավորող մեր լեզվագիտակցութեան հետ, խախտվում և ձևափոխվում է։ Մինչև իսկ այնպիսի կուբյողների յենք հանդիպում, յերբ

նախադասության այսպես կոչված «պասսիվ կոնստրուկցիան», կարող է գիտակցվել և դառնալ «ակտիվ կոնստրուկցիա», ինչպես, որինակ, վրաց՝ կացմա դածերա ծերիլի «մարդ նամակ գրեց» առաջ նշանակում եր «մարդով գրված է նամակ», վորն այժմ վրացին արտահայտում է «կացիք դածերիլի ծերիլի» պասսիվ նոր կոնստրուկցիայով («մարդով գրված է նամակ»)։ Պասսիվ հին ձևական կոնստրուկցիան այժմ այդպես չի գիտակցվում, այլ ըմբռնվում է վորպես ակտիվ, իսկ պասսիվի նոր պահանջը այժմ այլ ձևով է լրացվում։ Այստեղ ևս մենք տեսնում ենք, վոր զարգացման դիմինանտը լեզվի մեջ մտածողությունն է և վոչ ձևը[1]։

Ցերը «մտածումը բանիմացներն են կրիտերիում (չափանիշ) համարում նախադասության առմանման համար, ինչպես այդ առաջարկել է Պոտեբնյան, ապա այդ առթիվ այն պիտի ասել, վոր այդ միայն վորոշ վերապահումով պիտի ընդունել, քանի վոր նախադասության առմանումը բղխում է արդեն լեզվի տարբորոշ լինելուց։ Հետևապես մեր մեջ գոյություն ունեն լեզվի այդ հիմնական առտադնները («բառերը»), լինի դա բազմասինթետիկ կոչված ամերիկյան բնիկների լեզվում, վրացերենում, վորոնք տալիս են ավելի շուտ բառ-նախադասություններ, քան ավելի տարբորոշ յեվրոպական և այլ լեզուներում։ Կարևորն այն է, վոր խոսողի մոտ լինի այդ նախադասության կազմավորումը և զգացումը, իբրև մի ամբողջություն յուր անհրաժեշտ մասերով։ Վերջապես ամենաստորադասված լեզուներում իսկ վորոշ դեպքերում մենք զգում ենք ձևական նախադասության պակասը, նրա վոչ հոգեբանական և տրամաբանական լրիվ լինելը՝ ամբողջացումը, ինչպես «չես հանձնեցի», վոր ըստ ձևաբանական պահանջի կանոնավոր, անհրաժեշտ և միևնույն բավող պայմաններն ունի, սակայն մեզ համար անհասկանալի չէ (ինչ հանձնեցի, ում հանձնեցի, չէրը հանձնեցի և այլն)։

Նախադասությունները լինում են դրական և բացասական, վորոնք իրենց հերթին կարող են լինել ըստ խոսողի վերաբերմունքի—1) պատմողական կամ նկարագրական (повествова-

---

[1] Լեզվի ներքին զարգացման և մտածողության փոխհարաբերության հետևանքով դրսերբ հայցական հոդնակին, վորպես որյեկտի կամ ուղղության ցեղական ձև, հետագայում դառնում է ուղղական ցեղակի, ինչպես՝ կարս, Ինունխ (> Ինուս), Ինուսկունխ, Ինունխ, Ապուլիս..., նաև՝ ծախս, բաշխիս, փուրս և այլն։ Ռուսերենում веретено առաջ ցեղել է հայցական հոլով։ Համեմատիր հոդնակի ձևեր, սաք, աչք, և այլնի այժմյան ցեղակի լինելը։

тельные, описательные), որինակ, Նա յիկամ, Հայաստանը բարձր դիրք ունի. 2) հրամայական—գնա, գնանք, չգնաս... 3) հարցական—ուր ես գնում, չես լսում, հիլանդ ես... 4) բացագանչական—այս ինչ դժբախտություն է, գրողը տանի (սատանան տանի), դավաճան, Աստված իմ..

Նախադասությունները ըստ ստորոգյալի բաժանում են յերկու հիմնական խմբի—բայական նախադասություն (Verbalsatz) և անվանական նախադասություն Nominalsatz). Առաջին տիպի նախադասությունների մեջ ստորոգյալը, վորպես ասացվածք, արտահայտվում է դիմավոր բայով, իսկ այնպիսի լեզուներում, ուր կապակցության արտաքին (կամ ներքին) բայաձև դոյության չունի (որինակ, չինարենում), այդ բայ-ստորոգյալը խոցվում և նախադասության մասերի դասավորության բայական նախադասությունները են, որինակ, գնա, յեկ, գնացի տուն, լուսինը մայր մտավ և այլն։ Բայց այն նախադասություններում, ուր գործողության վոչ թե արտահայտություն այլ ավելի շուտ կամային-զգայական արտահայտություն, այդ դեպքերում բայ-ստորոգյալի դեր են խաղում և այլ տիպի բառեր, վորպես խոսքի մաս, ինչպես—լուսթյուն, աս, կամաց, մոեկ, չծխել (բայ է), ափսոս.., ռուսաց՝ на (=վերցրու, на книгу= վերցրու դիրքը, հայցական հնդրով), жаль, виноват և այլն։ Անվանական նախադասություններում ստորոգյալը արտահայտվում է վորևե անվան հատկանիշի վերագրումով յինթակային, պարզ (անմիջական) կերպով թե ոժանդակ բայի (հանգույց, связка, copula) կապական միջնորդությամբ, ինչպես—Иванов слепой, Իվանովը կույր է, այս դիրք է, он здесь=նա այստեղ է, Петр студент և այլն։ Պարզ անվանական նախադասությունները հաճախ են սեմական և ուգրոֆիննական լեզուներում, թեպետ հնդեվրոպական լեզուներում ևս հնում այդ նույնպես դրծադրվել է. որինակ—արաբ. Zaydun 'alimun «Մեյիդը խելոք է», սանսկր. tvám várunas «դու Վարունան ես», հին պարսկ. manā pitā Vištāspa «իմ հայրը Վշտասպն է» և այլն։ Ռուսերենում մաքուր անվանականի դեպքում հետ, յերբ այդ ածականով է, կա և հատուկ ստորոգյալական կրճատ ձև (Иванов слепой, բայց և Иванов слеп նույն իմաստով)։ Ոժանդակ բայի միջնորդությունը զգացվում է վոչ ներկա ժամանակի համար, ինչպես և յեղանակային վերաբերմունքի տեսակետից։ Ոժանդակ բայերը առաջանում են դիմնաբիլորեն եյական (գոյական) բայերից։ Կան նախադասու-

քյուններ, որոնք համարվում են խառն տեսակի—բայանվանական կամ անվանաբայական նախադասություններ—он стал великим, անշնորհք մարդ եղավ, он кажется добрым, նա մեր առաջնորդը հանդիսացավ, Սուրենը համարվում է ժամանակ և այլն։

Մի ամբողջ նախադասություն մյուսի հանդեպ կարող է լինել վորպես լրացում, վորպես բաղկացուցիչ մաս, կամ ամբողջ նախադասության հանդեպ կամ նրա մի անդամի։ Այս դեպքում լրացնողը կոչում են յերկրորդական նախադասություն, իսկ հիմնականը՝ գլխավոր։ Որինակներ՝ ով լավ քննություն կտա, նա կընդունվի (=լավ քննություն տվողը կընդունվի), ինչ ասացի, դու չընդունեցիր (—ասածս չընդունեցիր), դու այն մարդն ես, վորին միշտ զրկել են (=դու միշտ զրկված մարդ ես) և այլն։ Առաջին դեպքում յերկրորդական նախադասությունը լրացնում է յենթական, յերկրորդ դեպքում՝ խնդիրը, յերրորդում՝ վորոշիչը։ Իսկ յեթե այդ վերջին նախադասությունը դասավորելինք այսպես «դու նա յես, վորին միշտ զրկել են» (=դու միշտ զրկված ես յեղել, դու մշտական զրկվածն ես), ապա այստեղ յերկրորդ նախադասությունը լրացնում է գլխավորի (առաջինի) ստորոգյալը։ Նախադասության պարագայական լրացման պահանջն ևս կարող է առանձին ստորադաս յերկրորդական նախադասությամբ արտահայտվել, ինչպես, որինակ, յերբ տուն եյի գնում՝ հանդիպեցի յեղբորս (=տուն գնալիս հանդիպեցի յեղբորս)—լրացնում է գլխավորի ժամանակը. կամ—չկարողացա գալ, վորովհետև ինձ վատ եյի զգում (=չկարողացա գալ ինձ վատ զգալու պատճառով)—լրացնում է գլխավորի պատճառական պարագան։ Այսպիսի և նման ստորադաս յերկրորդական նախադասությունների դոյությունը ապացուցում է, վոր մի նախադասություն թեպետ և ձևական տեսակետից ինքնորոշված կարող է լինել, վորպես հոդվածանական և տրամաբանական դատողություն, սակայն բոլոր հանգամանքները մի այդպիսի ձևական կոնստրուկցիայով հնարավոր չի լինում տալ. և հասարակական մարքի զարգացման դուրընթաց ուռճանում և բազմանում և հիմնական նախադասության համար յենթանախադասություններին, իրրև լրացուցիչ միավորների, պահանջը։ Սրան ապացույց կարող և ծառայել այն, վոր չզարգացած կոլլեկտիվներում (որինակ, գյուղում) քիչ են գործածում յերկրորդական նախադասություններ։ Նախադասությունների թե այս ստորադասականության կապերը և ձևերը և թե համադասությունը ուսումնասիրում և յուրաքանչյուր լեզ-

վի շարահյուսությունը, որպես ընդհանուր ձևաբանական մի մաս, և մեր ներկա թեմայից դուրս է։ Պետք է միայն մի բան նշանակել, որ նախադասության լրիվությունը կամ վերջացրած լինելը բերված բերելուցական է։ Նախ բերվորդականը բնավ վերջացրած չի և առանձին գոյություն չի կարող ունենալ, իսկ դերբայական նախադասության միտքն անգամ չի հասկացվում առանձին, կտրված լինելով յուր բերվորդականից (կամ բերվորդականներից) և նախորդ դերբայական և բերվորդական նախադասություններից։ Ըստ ձևի դերբայական նախադասությունը կարող է լինել լրիվ և հասկանալի, բայց դրա սպառիչ հասկացումը կապված է նախորդ և հետագա նախադասությունների հետ։ Ցավ ենք զգում լավ դիտենք, որ բերվում դիմավոխոն նպատակներով այս կամ այն ցիտատն են բերում և հակառակորդին խոսում, այն ինչ նրա ամբողջ պարբերությունը կամ արդյունքը վերցնես, կարող է այլ խնդիր առացվել։ Նախադասության ճիշտ սահմանումն ու պատմական ըմբռնումը արտացոլում է յուր մեջ ընդհանուրի և մասնավորի փոխհարաբերությունը, ինչպես այս դեպի սկզբում մենք նման դուրս հանց կացրինք լեզվի և խոսքի (речь) մեջ։

в) Բ Ա Ր

Ցեղե լեզվի իմաստավոր տարրերից (մասերից) կազմված խոսքի անալ հոսանքը վեր և ածվում առանձնացած և «ինքնուրույն» հատվածների, այսինքն՝ նախադասությունների, որոնք և պայմանավորում են այդ ամբողջ խոսքը, ապա նախադասությունը ևս յուր հերթին մի տեսակ գերագույն ձև է յուր բաղկացուցիչ իմաստակատորների։ Նկատմամբ, լինի այդ նախադասությունը տարբորոշված «բառ նախադասություն», ուր ինքնական, ստորոգյալը իրեն լրացումներով փաստորեն միասին և անանջատ են տրված (համմ. i-n-i-a-l-u-d-am «չես լինի այս բանը նրան տալու համար» Ամերիկայի բնիկների լեզվում), թե լինի տարբորոշված անջատ-անջատ անալ կամ ոժանդակ բառերով, ինչպես հայոց, ռուսաց, գերմանացոց և այլ լեզուներում։ Բառն այդ նախադասության մեջ այն ինքնուրույն, դրափոխելի (շարժուն) և ձևավորված միավորն է, որը մեծ մասամբ շեշտ է կրում, ժանավանդ անալ նշանակություն ունեցող բառերը, և չի կարող այլևս բաժանվել, չկորցնելով յուր իմաստը (նշանակությունը)։

Բառը պիտի համարել իմաստավոր միավորները, որոնք կապակցական (անալոգիկ) ֆունկցիա չեն տանում, ինչպես ոժանդակ բայը, նախդիր-յոդերները, շաղկապները։ Դրանք, ինչպես ոժանդակ բառերը, շեշտ չեն կրում։

Բառի սահմանումը, ինչպես և նախադասության, հարկավ մոտավոր պիտի համարել։ Լեզվաբանները կամ հրաժարվում են այդ անել, համարելով բառը ոչ հոգեբանական անալիզության, այլ աբստրակցիա, ինչպես արմատների և ածանցների նկատմամբ. կամ մոտավորապես նույնն են ասում, ինչ որ մենք բերածը։ Ե. Սևորկն այսպես է բնութագրում բառը. Слово есть один из мельчайших вполне самодавлеющих кусочков изолированного „смысла" к которому сводится предложение. Оно не может быть без нарушения смысла разложено на более мелкие частицы, по крайней мере одна из которых после такой операции показалась бы нам приблудившейся неизвестно откуда. *(տես նրա „Язык", էջ, 28)։*

Մենք գիտենք, որ բառի ինքնորոշումը պայմանավորվում է ոչ միայն տվյալ նախադասության անհատական կացությամբ, այլև այդ նախադասությունից դուրս՝ այլևայլ զուգորդություններն հնարքով։ Բառը կարող ենք և առանձին գործածել, մանավանդ յերբ նա կամ միանակ փոխաբերնում է նախադասության (Ո՞վ ասեց.—Սուրենը) կամ հենց մի նախադասություն է յուր մեջ ամբողջությամբ (ինչպես՝ ասում եմ, գնա, լատ. dico և այլն)։ Մի առարերեն բառի արմատը առանձին չի գործածվում, այնուամենայնիվ այդ ավելի զգալի և իրական և քան ածանցը (որինակ, ktl «սպանել» որ ձայնավորների միջոցով և ի հայտ գալիս՝ katala «սպանեց», kutila «սպանվեց», katlu «սպանություն» և այլն)։ Մինչև իսկ ամենասինթետիկ ամերիկյան լեզուներում, ըստ Սևորկի, ուր հնար չի բնորոշել առանձին բառը, թե բառամասը, բնիկները, յերբ գրագիտություն են սովորում, հնչությամբ բառերը զատում են իրարից, իսկ արմատներն ու ածանցները հրաժարվում են ջոկել, այն պատճառաբանությամբ, որ «մեզ համար չի ստացվում». բառի սահմանները որոշել նրանք չեկին դժվարանում և տալիս եկին թե վերացական հարաբերական (անալոգիկ) բառերը նման մեր «ինչ», «բայց» և նման բառերին և թե բազմանդամ բարդ բառերը (Սևորկ, «Լեզու», 27 և ծանոթություն)։

Բառի ձևական ինքնուրույնությունը, ինչպես ասել ենք, նշանակություն ունի բառաստեղծման համար։ Որինակ, հայոց «մայրս» և «իմ մայրը» բովանդակությամբ տարբերություն չունեն, բայց ձևական հանդամանքը մեզ թելադրում է «մայրս» ընդունել իբրև մի բառ, իսկ «իմ մայրը» իբրև երկու բառ (այդպես և «շոր-ներ» և «մեր շորերը»)։ Բերած այդ որինակներում հոդերը (ս, դ, ն) շարժական և դրսեվոխելի չեն, այլ բառի հետևից կպած են գոյություն ստանում, իսկ դրանց դերանվանական համարժեքները (իմ, քո, նրա կամ այս, այդ, այն կամ յես, դու, նա) կարող են յուր ու առաջ դրվել և իրեն բառից էլ շատ հեռու (իմ մայրը, իմ լավ մայրը, մայրն իմ...)։ Նշանակում է՝ մի «ս» բառ չեն, իսկ մի «իմ» բառ եւ Ռուսերենում մի на, в, при, с... բառեր են (на крыше, на железной крыше, в доме, в большом доме...), բայց находить, входить, приходить, сходить և նմաններին մեջ դրանք բառեր չեն, և այդ находить, входить, և այլն, վորպես բառեր, անբաժան են։

Մենք արդեն մատնանշել ենք, վոր բառի ինքնորոշումը բառաշարժածքից էլ դուրս էլի նկատի ունի այդ ձևական հանդամանքը։ Որինակ, շուրթ—պռող, ձախ—ահեակ, утаить—скрывать և այլն տարբեր բառեր են ըստ իրենց ձևական արտաքին հանդամանքի (շուրթը այլ բառ է քան պռող, ձախը քան ահեակ...)։ Սրանք կոչվում են նույնանիշ բառեր։ Բայց բառերի ինքնորոշման համար նշանակություն ունի, այսինքն՝ չափանիշ և հանդիսանում նաև իմաստական կողմը, յերբ ձևական արտաքինը միևնույնն է, յերբ դրանք նույնահունչ են, ինչպես мир «խաղաղություն» և мир «աշխարհ»—տարբեր բառեր են. համանման այլ «քարանձավ» և այլ «աղամարդ» և այլ-եւ բառ արմատը[1]։ Նշանակում է, բառաստեղծման համար բնական պիտի առնել վոչ միայն վերևում հիշված արտաքին կազակցության հանդամանքը, վոչ միայն բառի շարժունակությունը և ինքնուրույնությունը բառաշարժածքի մեջ, ինչպես «իմ մայրը»

[1] Սովորական յերևույթ է, վոր մի ժամանակ միևնույն բառի տարբեր առումները այնքա՜ն զատակցվում, քան հետագայում. և իմաստների հեռացման հետևանքով դրանք դառնում են տարբեր ծնունդահունչ բառեր։ Այդպիսի տարբեր բառեր են այժմ, ըստ իս, որինակ հայոց վողջ (=ամբողջ) և վողջ (=առողջ), նման դլոտալոգիական ընդհանուր մատնոցությամբ, ինչպես ռուսաց целый (=ամբողջ) և целый (=չվնասված, կենդանի, համմ. исцелять) կամ թուրքերեն սաղ (ամբողջ) և սաղ (=կենդանի, չմեռած)։

(յերկու բառ է) և «մայրս» (մի բառ է), ինչպես մի վրաց da-gi-cere-o (դագիծերեռ) «յես քեզ գրեցի, ասաց»—մի բառ է (=բառ նախադասություն), իսկ մի հայոց «յես քեզ գրեցի» յերեք բառից կազմված նախադասություն է, այլև սոսկ բառերի արտաքին ձևական հանգամանքը (համմտ. նաև мой «իմ» և мой «լվա» мыть բայից, три «յերեք» և три «տրորիր» тереть բայից) և կամ ներքին իմաստական հանգամանքը:

Այսպիսով, բառի ինքնորոշման պայմանները բղխում են թե նրա ձևական և թե բովանդակական հանգամանքներից, վերցրած այդ վերջինները իրրև ասոցիատիվ տարբերություններ կամ հակադրություններ այլ միավորների հետ: Այսպես և բառի ինքնորոշման և կազմավորման հանգամանքը ամբողջ լեզվագործունեության ընթացքում, ընդհանրապես վերցրած: Բայց մենք գիտենք նաև, որ այդպես կազմակերպված բառը յուր կոնկրետ բովանդակավորումը, յուր առումներն ու ճշգրիտ ըմբռնումը ստանում է նախադասության ձևական շարվածքում, ոչ միայն տարբերվելով ըստ «ժամանց բանի» (գոյական, ածական, բայ, մակբայ), ինչպես այդ է հայտ է գալիս արմատական (անմասնիկ) լեզուներում, ուր մի «քար» արտաքինը այդ դեպքում կարող է նշանակել քար, քարային, քարել, քարերեն.., այլև մի կոնցեպտուալ ահմանում (դիցուք, գոյական) նա յուր առումներն ու ճշգրիտ ըմբռնումը ստանում և ելի նույն նախադասության շարվածքում: Որինակ, մի «խորհուրդ» կարող է նշանակել գրաբարում թե «խոհ, միտք», թե «խորհրդակցություն» թե «խորհուրդ», որոնց կարելի յե միացնել և այժմյան մեր «խորհուրդ» առումը («Աշտարակի գյուղխորհուրդը խորհուրդ և տալիս խորհրդի կանչել...» տարբեր առումներով): Մենք գիտենք նաև, որ նախադասությունն անդամ կոնկրետավորվում է և ըմբռնելի յե լինում ամբողջ պարբերության մեջ կամ նախորդ և հաջորդ նախադասությունների հետ միասին: Այդ ընդհանուրի և մասնավորի ձևական և բովանդակական միասնական համըմբռնումը անց և կենում թե լեզվի, թե խոսքի (խոսույթի), թե նախադասության և թե բառի ներսման մեջ: Հատկապես շատ ակնհայտ և դերանունների բովանդակական ահմանավորումը, որ միայն կոնկրետ նախադասության մեջ և յերևում (իմ, մեր, այս, որ, ինչի միմյանց...): Դ. Ուշակովն ասում է. «Мы можем признаки и предметы мыслить или *по отношению к данной* мысли, или же *без*

отношения к данной мысли. По этому мы можем различать слова 1) получающие определенное значение только в данной речи („слова—местоимения"), напр., я, этот, мой, который, и 2) имеющие определенное значение независимо от данной речи („слова-названия"), напр., белизна, хождение, белый, ходить, стол, Волга" *տես նրա* „Кратк. введ. в науку о языке", *էջ 84)։ Սակայն, յերբ հասարակական գիտակցության, արտաքին աշխարհի ճանաչողության վրա ստիճանի զարգացման հետևանքով մարդ ձեռք է բերել տիպական դաղափարներ, կարդացել է, դիցուք հատկանիշը գտել և վերացականացնել, ինչպես Ուշակովի բերած* белизна, белый, ходить.. *որինակներում, ապա այդ դեռ չի նշանակում, վոր մասնավոր դիտումներից մշակած այդ ընդհանուր «բառ—անվանումները», պահելով առ այժմ իրենց տիպական ընդհանուրը, չեն տալ կոնկրետ նոր ձևավորումներ։ Համեմատեր հենց այդ նորը* белый *ընդհանուրի հետ* белый воин („белые отступили"), белоручка, война алой и белой розы, беловая... *իսկ* стол *ընդհանուրը այժմ ավել և «կերպարուր», հիմնարկի «բյուրո» և նման նոր առումները, վորոնք նախադասության կամ բառաշարվածքի ձևական դրվածքով են ճանաչվում։ Ի հարկե դրանց խմաստները զարգացումը հասարակական գիտակցության և հասարակական հարաբերությունների փոփոխման և զարգացման հետ է կապված, բայց նախադասությունը կամ բառաշարվածքը կամ ընդհանրապես խոսքային ձևարանական հնարավորությունները կազդապարում են այդ նոր հասկացողությունները և արտահայտման ժամանակ, իրրև միջոց, դնում են այդ հասկացողությունների ճիշտ ըմբռնումը (ընկալումը) վորոշ լեզվաձևային սահմանների մեջ։*

Մինչև իսկ բարդ բառերի բաղկացուցիչ արմատների կամ բառերի ձևական կապակցությունն և ընորոշում նրա ամբողջական ըմբռնումը։ Այդպիսի բարդությունների ձևական կապը ավելի ուժեղ և, քան սովորական բառաշարվածքում։ Ցեղեր վերցնենք այդ բարդության նույլ կապակցության տեսակը, վորը, գուցե հենց նախնականն եր, ապա որինակ կարելի յե բերել, դիցուք, հայոց «գլխի ընկնել» ասույթը, վորը ռուսերենով մի „догадываться" բառով և արտահայտվում։ Մենք կարող ենք իմանալ ինչ և յերկաթը և ինչ և ճանապարհը՝ ուղին, բայց չհասկանալ յերկաթուղին, ռուսաց железная дорога: *Նման բարդությունն-*

ներ են сногсшибательный, с какой стати. кинотеатр, спустя рукава (=небрежно), համենայն դեպս, այնուամենայնիվ... Միացյալ կամ զատ-զատ գրության յեղանակն այստեղ յերկիրդական է մեր խնդրի համար։ Բայց, սովորաբար, միասին և գրվում, յերբ բաղադրյալ մասերը (բառերը, արմատները) ավելի որդանապես են մերված իրար հետ։ Ավելի սերտ է միությունը լուժոզկոմ, наркомтяжпром, թուրքերեն ev-ler-imiz-da-ki (=մեր տներում յեղողը), ամերիկյան ընիկների wii-to-kuchum—punku—rūgani—yngwi va-ntū-m (ū), վոր նշանակում է «պատրաստվողները-դանակով-սև-բիզոնին-տնային (=սև կովին, յեղին) նըստած-մորքել», տառացի «դանակ-սև-բիզոն-տնային-մորքել-նըստել-ապառնի նշան (va)-դերբայ (ntū)-հոգնակի նշան շնչավոր առարկաների (mū)։ Մեզ հայտնի յև նման բարդություններ և գերմաներենում։ Այդպիսի բառերի ամբողջական կապակցությամբ և նոր նշանակություն, նոր վորակ ստացվում[1]։ Ավելի սերտ միություններ են—почему, неправда, потому что, վրա բերել, գործ ածել..., ավելի սերտ—գրատախտակ, աշխոր, ջրկիր, բարձրաբերձ և այլն։ Ամենից սերտ բառերի միասնությունն ավելի ուժեղ է։ Իսկ յեթե մասերի առանձին ըմբռնումը չի գիտակցվում, ապա բարդությունները դարձած են լինում պարզ բառեր. դա ձևական միացման բարձրագույն աստիճանն է, ինչպես ռուսաց говядина, մեր եղմիածին, գավառական «յեսիմ» (կազմած «յես ինչ իմանամ»-ից), цека, загс և այլն։ Բարդությունների ուսումնասիրության քերականության մեջ, ըստ իս, այդպես պետք է կատարել, այսինքն՝ վերցնել ամենաթույլ (սկզբնական) բարդություններից և հետզհետե հասցնել ամենասերտ բարդություններին, վորից հետո բարդությունը չի գիտակցվում և վեր և ած-

---

[1] Մի լեզվում վորոշ բարդություն զատ-զատ է գրվում, մի ուրիշ լեզվում՝ միասին, և սա ցույց է տալիս՝ վոր գրելու ձևը յերկրորդական է։ Որինակ, պարսկերենում padar suxta (տառացի «հայր այրված») իրրև բարդություն՝ միացյալ բառ նշանակում և այն մարդը վորի հայրը յերկնում (դժոխքում) այրվել և կամ այրվում է (=վիրավորական բառ է), ինչպես մեր բարբառներում «վորդամահ», «բալամահ» չի նշանակում մեռած յերեխա, այլ այն մարդը, վորի յերեխան է մեռած (հայհոյական բառ է)։ Հայերենում հոգնակիը (ա) ավելի սերտ է միացնում, իսկ պարսկերենում այդ արտահայտվում է առանձին բառերի հարակցությամբ։ Իսկ այդ հանգամանքը մեզ ասում է, վոր բարդ բառերի բաղադրիչ մասերի միացումը մեխանիկական չէ, այլ ձևաբանական։

վում պարզություն։ Միացման տարբեր ստեիճաններն ևս ձևական հանգամանք կարող են լինել. յոթն, որինակ, լուսավորության ժողովրդական կոմիսար տալիս և մեզ յերեք ժառանգակերների հաջորդական դուստրդուբյուն, ապա լուսժողկոմը այդ չի տալիս, թեպետ մասերի զրացումը դեռ կա, իսկ յոթն ասվեր Լ֊ժկ (ԼԸ֊ժկ, ԼԸ֊ԺԸկ հնարավոր արտասանությամբ) ապա այդ ժառանգի դիտակցությունը ևս չեր լինի, այլ կհասկացվեր մի անքակտելի ամբողջություն, մի պատկերացում։

Առանձին բառերը մենք բաժանեցինք ինքնուրույն և ոժանդակ, յոթն չհաշվենք միջարկությունները, իրրև զգացմունքի արտահայտություններ։ Վերջիններըը, սակայն, կարող են փոխարինել և ինքնուրույն բառեր („охать“, գրաբ. «վայել» կամ «վայ է վերայ ասել վայից»), և ընդհակառակը՝ բառանվանումները առանում են միջարկության նշանակություն (դժբախտություն, վռնդ ասածո, բարբառային «դրե յու քու մաստվածը..)։ Այդ զգացմունքային (միջարկության) նշանակության մոտ են նաև կոչական անվանումները («աո, ծո, ընկեր, Սուրեն, Գևորգյան...)։ Դերանուններըը վորոշ լեզուներում հանդես են գալիս թե ինքնուրույն ձևով, իրրև առանձին բառեր, և թե հոդի ձևով՝ կապած դոյականին կամ բային կամ ինքնուրույն դերանվան, մակրային ինչպես խոթերենում (մասամբ և հայերենում՝ կապած դոյականներին և բայերին—հայրդ, գրեցերդ..)։ Այդ վոչ ինքնուրույն, այլ ոժանդակ բառերը կոչում են յերբեմն նաև «վամանիկ, հոդ (энклитика...)»։ Դրանք դոյություն ունեն լրիվ բառերի միջոցով միայն, բայց ածանցներ դեռ չեն, և յերբեմն գծիկով միացվում են գլխավոր բառին (он-де[1], он-то, он-же, взялбы, кто-либо, как-нибудь...)։ Համեմատիր և շաղկապների կապած դոյությունը, ինչպես լատին.—que «յեվ», պարսկ.—ča.. խոթերեն—a (ia), —ma, վրաց—ցա֊դա (թու֊ցա֊դա „если-же“) և այլն։

Ըստ նշանակության ինքնուրույն բառերը բաժանում են դոյականների, իրրև առարկաներ ցույց տվողներ, բառեր փոխարինող դերանուններին, ածական հատկանիշը ցույց տվող ածականներին, թիվը ցույց տվող (հատկանշային կատեգորիա յե)՝ թվա-

---

[1] Նման դեպքերում, ինչպես առաց он-де, он-мол, խոթերենը արտահայտում է wa մասնիկով (mah han-ma-va-gan «յերբ-և-ասե-? = և յերբ, նրա ասկով..), իսկ վրացերենը բայական –o մասնիկով՝ mo-g-cere-o «յես քեզ դրեցի, ասում և (ասաց)»։

կանների, գոյականների շարժումը—դրությունը (փոփոխությունը) ցույց տվող բայերի և պարագայական (կերպին, ժամանակին և այլն) բնորոշման ածականների։ Ոժանդակ բառերը՝ նախադեր-հետդերները, ինչպես և շաղկապները, պատմականորեն գոյացել են «բառ-անվանումներից», ինքնուրույն բառերից։ Մենք գիտենք նաև, թե վորքան նախադասության ձևական հանդամանքը աղդում է դրանց կատեգորիաների փոփոխման վրա, ինչպես, որինակ, առաջ քաշել, նրա առաջը (գոյական), առաջ (ածական) մարդիկ վատ եյին ապրում, սեղանի առաջ (հետդիր) և այլն։ Հատկապես այդ յերևույթը նկատվում և «անձև» (անմասնիկ) լեզուներում։ Այս հիշյալ բառաբաժանումը («մասունք բառի», части речи) ավելի միաք ունի, քան մասնիկավոր լեզուների բաժանումը ըստ արտաքին ձևի—1) բառեր վոր ունեն միայն բառակազմության ձևեր, 2) բառեր վոր ունեն միայն բառահարաբերական (բառափոփոխության) ձևեր, այսինքն՝ թեքման և սեռեր ցույց տվող ձևեր, 3) բառեր, վոր ունեն խառն կերպով այդ յերկու ձևական դասերը, և վերջապես 4) բառեր, վոր չունեն վոչ մեկը այդ ձևերից (չձևավորված բառեր)։

Մեր նպատակն եր տալ բառի, ինչպես և նախադասության, գիտական սահմանումը, չմտնելով դրանց գոյացման և փոփոխման պատմական պայմանների մեջ. այս կարելի յե՞ւ հատուկ-ներում։ Այն լեզվաբանները, վորոնք բառի ու նախադասության գոյացման և յերացման հոգեբանական հանդամանքներին տալիս են պատմական ամենաուժեղ ֆակտորի նշանակություն (Վունդտ, այժմ հոլանդացի Ցակ. Վան—Գիննեկեն), շատ բաշար սխալվում են։ Մենք ամեն մի բառի կամ նախադասության մեջ կարող ենք դնել մի շատ զգացմունքային մոմենտներ։ Այդ կողմից շատ լավ բնութագրում և ե. Մակլերը, ասելով. „Они [воля и эмоция], строго говоря, всегда в каком-то смысле присутствуют в нормальной речи, но выражение их не носит подлинно языкового характера. Оттенки выразительности, тона и фразировки, разная степень быстроты и текучести речи, сопутствующие ей телодвижения, —все это отражает кое-что из внутренней жизни импульсов и чувств; но поскольку все эти выразительные средства являются в конечном счете не более как измененными формами инстинктивных звукоиспусканий и движений, общих у человека с низшими животными, их нельзя пок-

рывать общим понятием языка, как культурной по своей сущности категории, как бы неразрывно они ни были связаны с живой реальностью человеческой речи" („Язык" էջ 31)։ Իսկ մինչ այդ նա շեշտում է, որ „В общем следует признать, что в языке властвует мышление, а воля и эмоция выступают в нем как определенно второстепенные факторы". շեշտում է ևս „познавательный по преимуществу характер языка„ (էջ 32)։ Հոգեբանական դատողություն („психологическое суждение„) կոչվածը չի կարող մեզ պրոտոտիպը կամ պատմական զարգացման սուբստրատը լինել մտածական նախադասության։ Հոգեբաններն յերբ լսում ենք, դիցուք թե մի աղմուկ և տեսնում ենք մարդիկ են վազում, բացատրելով «մարդիկ են, մարդիկ են», այդ ամբողջը համարվում է լրիվ դատողություն, ուր սկզբնական զգացմունքը (աղմուկը) համարվում է «ընթացիկ» և «մարդիկ են» «սատրոգյալ». կարող է և «մարդիկ են վազում» ամբողջը լինել սատրոգյալ աղմկային նախամտածողության համար, որ չի արտահայտվում բառերով։ Մենք դիտենք, որ բառերն ևս ծագմամբ զգացմունքային արտահայտություններով եղին ուղում բացատրել (միջարկություն, բնաձայնական բառեր), որոնք այժմ չի ընդունվում։ Հոգեբանական այդ դատողություններն և բառերը կապված են պատճառական, յեզակի, անհատական և դժվարըմբռնելի կամ դժվարատեսանելի զգացմունքների հետ։ Դրանք չեն, որ պատճառականորեն կարող եղին զարգացնել մեր մտածողությունը բառերով։ Միայն հասարակական գիտակցություններն են, որ կոփվելով և մշակվելով աշխատանքային՝ արտադրական պրոցեսի հարատև ընթացքում, կարող է լինել լծակը (рычаг) նախադասության (և բառի), մտածողության այդ միավորի, կազմավորման համար, յուր արտաբանական և ձևաբանական կողմերով։ Հոգեբանական «նախադասությունը» (пожар! летят!..) չնչին դեր է խաղում մեր լեզվի դիտաձևերանոցում, ինչպես և ընդհանրապես զգացմունքային տոնը չի ձևակերպում լեզուն։ Իսկ լեզվի ձևաբանական կողմը միշտ և ստորադասը լեզվի պատմադիտակցականի (մտածողականի և ճանաչողականի), թեպետ այդ ձևական կողմը սոսկալի պահպանողական և յուրահատուկ է, բայց վերջին հաշվով յենթարկվում է գիտակցականին և ոգտագործվում վորպես հումք, արտահայտչական ձև։ Այսպիսով, լեզվական կատեգորիաների վերլուծման ժամանակ (խոսք-речь, նախադասություն, բառ և քերականական «ձև»)

յեղակետը պիտի լինի, ըստ իս, դրանց պատմականորեն նայման (դիտակցման) տրամաբանական-ձևական կողմը և վոչ հոգեբանականը։ Իսկ տրամաբանական կողմը վոչ թե պիտի հասկանալ տվորական տրամաբանության իմաստով, յերբ հասկացողություններից ուղիղ դատողություններ են կազմում, այլ ավելի լայն՝ պատմա-մտածական տեսակետով, յերբ տարբեր աշխարհայացքներ, տարբեր մտածողություններ ունեն և արտահայտչական (դրսեվորման) տարբեր «տրամաբանություններ», ինչպես, որինակ, վայրենիների մոտ, ինչպես ցույց և տվել Լևի-Բրյուլը։ Տրամաբանական կողմը (լեզվի) միայն ձևակերպողն և այդ պատմականի, երբև որինաչափական դրա արտահայտության։ Իսկ վորովհետև հին մտածողություններից այժմ ևս մեր լեզվական մտածողության մեջ նստվածքներ են մնացել, դրա համար էլ յերբեմն թվում է մեզ, վոր մեկնության միտքը յերկու կամ յերեք տարբեր վարիանտներով և արտահայտվում, ինչպես ветром сорвало крышу, ветер сорвал крышу կամ у меня нет денег—я не имею денег կամ мне хочется—я хочу և այլն։ Ցեղեն իմաստական նրբություն դեռ մնացել և կամ նոր և սկսում առաջանալ, ապա այդ ձևական տարբերությունները կմնան և ավելորդ չեն, իսկ յեթե իմաստական տարբերություն չկա, մեկն ու մեկը կանհետանան։ Ցեղեն լեզվի ձևական տեխնիցիզմը մեզ այժմ ստիպում և տարբեր նախադասական միավորներ համարել դիցուք «տուն դնալիս քեզ հանդիպեցի» և «յերբ տուն եյի դնում, քեզ հանդիպեցի», վորովհետև «ձևական» տարբերություն կա, բայց իմաստական՝ վոչ, այդ մենք կարող ենք ընդունել, չհամարելով, սակայն, վոր այստեղ կա ինչ վոր խղում ձևական ու բովանդակական միասնության մեջ. մենք արդեն որինակներ բերել ենք (ձախ—ահեակ, շուբա—պառշ...) այդ տեսակետից բառերի նկատմամբ։ Այստեղ այդ ձևական կողմը պատմական այն տեսակետով պիտի հասկանալ, վոր լեզուն կարող և մեկնության մտքի համար տարբեր ձևական միջոցներ ունենալ, տարած այլ և այլ բարբառներից, կամ հին հետ մշակած և նորը, վորի մասին (բառերի զարգացման մասին) մենք կխոսենք առանձին։ Մենք դիտենք, վոր հին իդեոլոգիայի բառային կլասիֆիկացիայի ձևերը (իդեական, արական, չեզոք, կորած—հարթած, խելացի—անխելք...) մինչև հիմա էլ մնում են, շատ քիչ կապակցվելով սեռերի, յերկակի թվերի և այլնի հետ, ինչպես три стола, четыре стола ազդված два стола յերկակիից կամ

окно *չեղոք*, стол—*արական*, вода—*իգական* (*միայն գիտակցվում է* он взял—она взяла *և այլն յերբ մարդկային կամ կենդանական սեռին է վերաբերվում*). *Մենք գիտենք, որ այժմյան ռուսական իսկ մտածողության համար* три, четыре стола *իսկ* пять шесть столов *անիմաստ է կամ* два черных стола, *ուր* черных *հոգնակի չէ, իսկ* стола *չեզակի սեռական հոլով. Նմանապես* три стола, *բայց* трех столов, *ուր* столов *արդեն հոգնակիի ձևով է գնում, կամ* три черные стола *և* три черных стола *և այսպես անվերջ. Ճանկալ, որ լեզվի մեջ կուտակված, հնի հետ և նորը խառնված, այս լեզվաձևական յերևույթները լինեն մեր այժմյան լեզվամտածողության համար որբնաչափելի, «տրամաբանական» ինչպես այդ ունենք մեծ մասամբ լեզվի այլ բնագավառներում, նրա այժմյան վորակական կտրիճի մեջ,—այդ կլիներ վոչ ճիշտ պատմական տեսակետից, և հետևապես վոչ ճիշտ մեր մտածողության դիալեկտիկական զարգացման տեսակետից. Ուշագրավ է Ե. Սեպիրի հետևյալ մտորությունը, որ բնավ ֆորմալիստական չէ. խոսելով բազմաձևության մասին (*дома, столы, стулья *կամ* три раза—трижды *կամ* скрыть—утаивать..) *նա խոսքն այլոց առում է.* „история языков убедительно показывает, что рано или поздно наименее часто встречающиеся ассоциации изгоняются за счет более живучих,—иными словами, что всем языкам присуща тенденция к экономии выражения [*հետաքրքիր պրոբլեմ է*]. Если бы эта тенденция совершенно не действовала, не могло бы быть грамматики. Грамматический факт (а наличие грамматического фактов именно и характерно для языка) есть как бы обобщенное выражение того чувства, что аналогичные понятия и отношения удобнее всего символизировать аналогичными формами. Будь язык вполне „грамматичен", он был бы совершеннейшим орудием выражения понятий. К несчастью или к счастью, нет языка тиранически последовательного до конца. Во всех грамматиках есть „исключения"» (Язык, *էջ 30—31*). *Այսպես, ուրեմն, լեզվի պատմական ստացվածքին այժմյան մի փուլի (կամ ստատիկ) ասպեկտով նայելիս, մենք ըստ ձևական չափանիշի տարբեր միավորներ ենք համարում վերոհիշյալ բերած որբնաչիները. Մենք կարող ենք մինչև իսկ սոսկ տեխնիկական կամ մանկավարժական տեսակետից աշակերտին սովորեցնել, որ*

два окна смотрят на улицу Նախադասության մեջ յենթական два-ն է, որովհետև լեզվի այժմյան որինաչափությունը պահանջում է միայն ուղղական հոլովով դրվածը համարել յենթակա, իսկ окна սեռական հոլովովը դրա որոշիչը, «հատկացուցիչը» և այլն, թեպետ գիտենք, որ լուսամուտի մասին է խոսվում, այնուամենայնիվ այս սակավադեպ յերևույթները, այս տեխնիկական վերլուծման ձևական հանգամանքը (պահանջը) մեզ չպիտի ստիպի ձեը համարել լեզվի զարգացման և ևացման հիմնական չափանիշը։ Д. Ушаков-ը բնութագրելով նախադասությունը— „предложение есть словесное выражение суждения„ (Кратк. введ. в науку о языке, եջ 87), քննադատելով դրդրոցական քերականության «սխոլաստիկան», ինքն ընկնում է սակայն ֆորմալիզմի դիրքը, ասելով· „Смешение элементов логики с грамматикой, являющееся в обычных школьных учебниках, принято называть „логико-грамматической“ точкой зрения. На смену ей в школу начинает проникать более соответствующее науке и свободное освободить школу от порожденной старой точкой зрения схоластики новое направление—„формальное“. Формальная точка зрения, проводимая в более новых учебниках грамматики, требует, чтобы члены предложения определялись теми формами, в которых являются в предложении слова и их сочетания“ (եջ 94)։ Ֆորմալ տեսակետը իրոք սկսեց զարգանալ յերիտասարդ քերականների կողմից (Գերժանիայում). Ռուսասատանում հատկապես մեծ դեր խաղաց պրոֆ. Ֆորտունատովի դպրոցը, որից յելել են Ուշակովը, Գորժեվլենկոն, Պետերսեն և այլք[1]. քերականության մեջ այդ ուղղությունը զարգացրեց Պեշկովսկին այն աստիճանի, որ, դիցուք, այս, լավ և հինգ (այս դիրքը, լավ դիրքը, հինգ դիրքը) «հատկանշական» բառերը մի խմբի մեջ կլին առնվում իրենց ձևական դիրքի (կապակցության) տեսակետից, անտեսելով դերանվան, ածականի և թվականի վորակական տարբերությունները։ Այդ դպրոցի, այսինքն՝ ձևական ճշտության տեսակետից «աննորմալ», «անկանոն», «բացառություն» կոչված յերևույթները կամ չեն ընդունվում կամ բացատրում են ավյալ շրջանի ձևաբանական նորմաներով։ Որինակ, ветром

[1]) Հայաստանում այդ դպրոցի կարկառուն ներկայացուցիչն է Մ. Աբեղյանը։

сорвало крышу *չունի ձևական յենթակա ուղղական հոլովով կամ* мне спится *կամ* а Моська, ну, на слона кидаться *չունի ձևավոր (դիմավոր) բայ-ստորոգյալ, հետևապես դա նախադասություն չէ։ Չի վոր այդ ժամանակությունը կա (Կրելովը վերցրել է ժողովրդից), չի վոր „ну—кидаться“ դիտակցվում է վորպես* ну стала кидаться. *Ինչու անպատճառ պաշտոնական նորմայով պիտի արտահայտվեր. մեթե որինաչափությունը չի խախտվում, չի փոխվում և չի անհետանում։ Հապա ինչպես և, վոր այլևս անդլերենը կորցնում է ուղիղ խնդրի համար հայցականի առանձին ձևը, հատկացուցիչի համար առանձին ձևը սեռականով, յենթակայի ձևը ուղղականով և այլն. իսկ ապացուցվում է, վոր չինական արժատական լեզուն, վոր հիմա չունի այդ արտաքին ձևերը, մի ժամանակ ունեցել է, սակայն կորցրել է և փոխարինել է նախադասության մեջ այլ ձևափոխությամբ։ Ցերբ հնից մնացած կամ նոր դոյացած ավանդաբար ձևական նորմաներ (նախադասություններ) ունենք, մենք կամ չգիտի բացատրենք քերականորեն (յերբեմն պատմական ավյալներ չունենք, ինչպես* мне спится *կամ* ветром сорвало крышу *և այլն*)[1] *կամ մեթոդական-ժամկավաբժական (տեխնիկական յուրացման) տեսակետից պիտի աշխատենք նոր նորմաներով «բացատրել», վորն իհարկե ֆորմալ բնույթ պիտի կրե։ Սակայն այս նշանակում է արդյոք, վոր լեզվական «տարերքի» (ֆակտուրայի) ճիշտ հասկանալը և վերլուծելը կախված է սոսկ յուր ձևաբանական հանգամանքից։ Լեզուն, ճիշտ և, վոր ժառանգության ձև է, կազմավորվում է, ձևակերպվում է այդ ձևով, բայց հիմնական գործոնը մեր դիտակցության պատմական զարգացումն է, վորպես հասարակական հարաբերությունների արդասիք. խնդիրն կրիտերիում լեզվի ձևաբանական նույնության հասկանալու ձևի մեջ չի թաղված. դա յերևույթական կողմն է։ Ծառերի հետևից անտառը չի տեսնում („из-за деревьев не видит леса“) և մեթոդականը վեր է ածում մեթոդոլոգիականի։*

* * *

[1] *Տեսնել Ն. Մառը այդ շատ լավ բացատրում է, ինչպես չեշտել ենք։*

ԲԱՌԱՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՈՃԱՆԴԱԿ ԲԱՌԵՐ

Մենք դիտենք, որ տարբորոշված միտքը իր պատմական ձևակերպումն և ստանում լեզվական սիդնալիզացիայի միջոցով, այսպես կոչված նախադասության մեջ, ուր վերջինիս իմաստավոր մասերը այսչափ կամ այնչափ ինքնորոշված են և կոմբինացիայի մեջ կարող են մտնել նման իմաստավոր միավորների հետ այլ նախադասություններում։ Այդպիսով այդ իմաստավոր միավորների (resp. բառերի) պրակտիկան դրանց կապակցական կյանքի մեջ և, դրանց ետացումը լինում և խոսվածական կամ շարահյուսական նկարագրության մեջ, նրանց սինտագմատիկայի մեջ, թեկուզ դա լինի ոչ միայն նախադասություն, այլև ասույթ, բառահարդրված, ֆրազա և այլն։ Բայց հենց այդ կապակցված խոսքն և ստիպում, որ մեր մտքի առարկաները՝ բառերը և այլ իմաստավոր կտորները՝ աբստրակցիայի միջոցով հնարավորություն ունենան նորանոր նման դուգորդված նախադասությունների կամ կապակցությունների մեջ մտնել. դրանք կապակցվում են անջատման հնարավորության միջոցով, և ընդհակառակը՝ դրանց անջատումը կամ բաժանելիությունը պայմանավորված և այլ իմաստավոր միավորների հետ ունեցած կապով, տվյալ նախադասությունից կամ կապակցությունից դուրս։ Հետևապես խոսքի իմաստավոր կտորները պետք և վերացակատացվեն (абстрагироваться), ասա թե ոչ չեր եղ լինի տարբորոշված խոսք ընդհանրապես։ Ամենից «ինքնական» յին մեր լեզվական մտածողության մեջ այն իմաստավոր կտորները կամ միավորները, որոնք կոչվում են բառեր. և այդ ինքնուրույնությունը տանում են դրանք (բառերը) թե պատմականորեն, թե հոգեբանորեն, թե իրենց ձևաբանական դրվածքով (վիճակով) կապակցության մեջ և թե իրենց ունալ կամ նյութական բովանդակության, թող թե շեշտավորումը (տես վերը)։ Վորպես այդ ինքնուրույնության կոնկրետ վկայություն և ասացույց կարելի յի բերել բառերի, իրրև նախադասության անդամ-

նների, առանձնացումը իրենց կապակցական յերկրորդական ձևով, ինչպես կարս (հայցական հոլով), Պալիկևանց (սեռ. հ. հոգնակի), կաթնով (դրբ. հ.) և այլն, վորոնք դարձել են արդեն ուղղական հոլով և կարող են նորից հոլովվել նոր կապակցությունների մեջ։ Արդյոք, ինքնուրույն չեն ժամանակում հետևյալ բառերը, վորպես չդարդացած նախադասություններ—„В два часа Красная площадь полна. Оркестры. Зрители. Иностранная рабочая делегация. Дипломатический корпус...“։ Համեմատեր նաև ինքնուրույն բառերի միջոցով միայն (և ոչ ոժանդակ) պատասխանը—դու ուր գնացիր, —Տուն։ Մենք իշխանություն ունենք, —Բոլշևիկյան. դան ով կպատասխանի,—Ես. և այլն և այլն։ Ամենից ինքնուրույն (ինքնակա) են դոյականները, ածականները (և թվականները), բայերը, անձնական դերանունները, մակբայները։

Բայց մենք լեզուների պատմությունից գիտենք, վոր ինքնուրույն բառերը, բացի խոսքի մեջ յեղած իրենց սովորական շարահյուսական կապակցություններից՝ հաճախ ավելի՛ սերտ հարաբերության մեջ են մնում մի քանի ոժանդակ բառերի հետ, կազմելով մի տեսակ բառահարադրություն (словосочетание), տալով ավելի սերտ (միասնական) կամ նոր իմաստ։ Դա բառերի բարդացման նախնական ետապն է, վորից արդեն առաջանում են բարդ բաղադրյալ բառեր (сложное или составное слово)։ Վերջիններիի հետ են պատմականորեն կապվում և դրանց դարդացած բաղադրությունները՝ ածանցավոր բառերը, իրրև բաղադրության վերջին և նոր տեսակը։

Հայոց լեզուն բառահարադրության տեսակետից (ինչպես և ընդհանրապես բարդության) ճոխ և բազմազան որինակներ կարող է տալ։ Նման պարսկերենին, վերմաներենին և այլն։ Համեմատեր հետևյալ հարադրությունները ըստ կապակցության և միասնության աստիճանավորումների—մեռնել պրծնել, թողնել փախչել, գալ հասնել..., կորած մոլորած, գիշեր-ցերեկ, տուն ու տեղ..., գլխի ընկնել, յերես տալ, իրար անցնել, գլուխ բերել, ծափ տալ, ձեռք մեկնել, ման ածել..., յետ դառնալ, ներս գնալ, մոտ բերել, ղեն դցել և այլն և այլն։ Ձևերեին հարադրության փոխարեն դրբ և ածվում պարզ բառ մեկնություն կամ մի փոքր այլ իմաստով, ինչպես—դրուց անել (=դրուցել), բաց անել (=բացել), խաղ անել (=խաղալ)..., բայց փախչել այլ և քան փախսը տալ, չափել այլ և քան չափսը բռնել, թափել այլ և քան թափ տալ

քաշել այլ է քան քաշ տալ և այլ և այլն։ Հայերենը, ինչպես և այլ լեզուները, այդ ձևաբանական տարրեր միջոցները (անալիտիկ և սինթետիկ) ոգտագործում են տարբեր բառեր ստեղծելու համար։ Հարադրություններ են ռուսերենում, որինակ, железная дорога, сногсшибательный (թեպետ միասին և գրվում), спустя рукава (=небрежено), очертя голову (=стремглав) և այլն։

Բառահարադրությունները, ինչպես ասացինք, փոխանցվում են սովորական բարդության, և այստեղ ևս ստացվում են փոխանցման աստիճանավորումներ և չերանգավորումներ (ըստ Մ. Աբեղյանի—կցական բարդություններ և իսկական բարդություններ), չերբ շեշտի և հոդակապի աղդեցությունը ամենից ուժեղն է դրանց շաղկապում, տալով «իսկական» բարդություն։

Բառահարադրության, ինչպես և իսկական բարդության անդամները կարող են համազոր լինել (դիշեր-ցերեկ, կեր ու խում, անց ու դարձ.., տեղատարափ, շեղջակուլա...), բայց մեծ մասամբ մի անդամը դառնում է մյուսի (չերկրորդի) համար լրացում, ոժանդակող կամ բացատրող բառ, ինչպես հետևյալ հարադրությունների մեջ—քաշ տալ, բաց անել, լաց լինել, չերես տալ, ծափ տալ, պար գալ և այլն (գլխավոր միտքն առաջինն է), կամ յետ դառնալ, վրա հասնել, ղեն ձգել և այլն (գլխավոր մասը չերկրորդն է)։

Համեմատիր բարդության առաջին անդամի բացատրական (resp. ոժանդակ) դերը, ինչպես—«սեղանատախտակ» այն տախտակն է, որը նման է (կլոր) սեղանին (գործ է ածվում դյուղերում հաց թխելու համար), «քարսիրտ»=քարի նման (=կարծր) սիրտ ունեցող, «հացատուն» (=հացի տուն), «բացագլուխ» (գլուխը բաց, բաց գլխով) և այլն և այլն։

Ցերբ հարադրական կապակցությունը ավելի չե սերտանում և զգացվում իբրև մի անմիջական ամբողջություն, մանավանդ ածանցման պայմաններում, ապա այդ կապակցությունը գրվում է և միասին։ Որինակ, ռուսաց с ума сойти միասնական բառահարադրությունից ունենք ածանցավոր сумашедший, կամ с ног сшибать կապակցությունից՝ сногсшибательный, կամ հայոց՝ «առաջ քաշել» կազմությունից—առաջքաշում. այդպես և՝ մեջ բերել — մեջբերում, սուտ ասել—սուտասան, ճրագ վառել—ճրագվառաց և այլն։ Միացման զգացումը հայերենում ուժեղ արտահայտվում է և նրանով, որ, որինակ, հոդը տրվում է ամբող-

ջությանը և վոչ թե յուրաքանչյուրին, ինչպես՝ անց ու դարձը, գրել-կարդալը, լաց ու կոծը, դիշեր-ցերեկը և այլն. հոլովվում են նույնպես ինչպես մեկ բառ—անցուդարձի, անցուդարձից, անցուդարձով.., գրել-կարդալու, գրել-կարդալուց և այլն։ Այդ միասնական ըմբռնման (դադցման) հետևանքով նման բառահարաբերությունները բնական և վոր պիտի միանանանման դրությամբ, ինչպես վոր հաճախ տեսնում ենք—կերուխում, անցուդարձ, յեռուղում.., այրուձի, առուտուր, յերթևեկ, յելևէջ և այլն*։

Բառահարաբերությունը կամ բառարարդացումը (բառաբաղադրությունը), իրրև ձևաբանական, այն է՝ բառաստեղծման մի միջոց, կքննվի մեր կողմից և առանձին հատվածում։ Այստեղ մեր նպատակն էր ցույց տալ, վոր սկզբնական անկախ բառը միտում և ստանում այդպիսի բարդությունների դառնալ ոժանդակ կամ սպասարկող՝ նոր միասնական իմաստ ստեղծելու տեսակետից։

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԲԱՌԱՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ինչպես տեսանք, անկախ կամ ինքնուրույն բառերը վոխադարձ հարաբերության կամ համադրության մեջ են մտնում միայն նոր միասնական բառեր ստեղծելու համար, ուր բաղադրության անդամներից մեկը հաճախ մյուսի համար ոժանդակ դեր է խաղում։ Ճիշտ այսպիսի կապակցությունը, ստեղծելով նոր «նյութական բովանդակություն», կարող է լինել թե շարահյուսական (նախադասության) պայմաններում և թե առանձին, անկախ այդ ընդհանուր ֆունկցիոնալ միավորից։

Բայց ինքնուրույն բառերը հարաբերության մեջ են մրտնում մյուսների հետ վոչ միայն նոր վորակի բառեր ստեղծելու համար, այլև վորոշ հարաբերություն ցույց տալու համար, այսպես ասած, նախադասության հիմնական անդամի բազմատեսակ ֆունկցիան վորոշելու համար, ի սպաս դալով, այդպիսով, նոր B
շարահյուսական հարաբերություն ստեղծելու համար։ Շարահյուսությունն այդ սպասարկու բառը սկզբում լինում է նաև անկախ, այսինքն դրծ և ածվում վորպես անկախ բառ թե յուր նյութական «էքսպլիկատիվ» նշանակությամբ և թե վորպես ոժանդակ

---

* Բարդության այդ սրընկերները մենք բերել ենք, ոգտվելով Մ. Աբեղյանի դրքից՝ Տես Մ. Աբեղյան Հայոց լեզվի պատմություն, Երևան 1931, եջ 178—179։

բառ՝ նոր հարաբերություն ցույց տալու համար: Այդպես է լինում մանավանդ այն լեզուներում, ուր այսպես կոչված յերկրորդական ձևերը չեն զարգացած: Բայց հետագայում այդպիսի բառերը կորցնում են իրենց անկախ նշանակությունը և դառնում են սոսկ ժամանակ, դրվելով ձևականորեն սկզբում առանձին, իսկ հետո՝նաև միասին: Բառի նախնական իմաստական ինքնուրույնության կորուստն հետ առաջանում է նաև նրա ֆորմալ դիրքի կորուստը, թեպետ այս պրոցեսը տևում է յերկար և աստիճանաբար:

Բերենք որինակներ:

Ջինարենում և կամբոջերենում (камбоджийский язык) «տալ» բայը, բացի յուր կոնկրետ գաղափարից, ոգտագործվում է նաև վերացական իմաստով, իբրև խորհրդանիշ, այսպես ասած, «կողմնակի խնդրի» հարաբերությունը ցույց տալու համար. այդպես և տրական հոլովի ֆունկցիան կատարում այդ «տալ» բայը հետևյալ նախադասության մեջ (կամբոջերեն).

«Մենք արինք պատմվածք այս տալ բոլոր այն մարդիկ, ով ունի յերեխա», այսինքն՝ մենք կազմեցինք այս պատմվածքը բոլոր նրանց համար, ովքեր ունեն յերեխաներ: Համեմատիր նման հարաբերական ֆունկցիա մեր հայոց «տալ» բայի հետևյալ ձևական կիրառության մեջ—բերել տալ, դրել տալ, պատմել տալ և նմաններում, ուր «տալ»-ը ունի նույն ֆունկցիան, ինչ վոր -ացնել, -եցնել, -ցնել մասնիկը պատճառական բայերի մեջ. այսինքն՝ մի «բերել տալ» կազմությամբ և դործառնությամբ (պաշտոնով) նույնն է, ինչվոր մի «հիվանդացնել», «խմեցնել», «փախցնել» և այլն: Հայերենում «եմ» յուական բայը դառնում է միևնույն ժամանակ և ժամանակ, ցույց տալով հատկացում, դեմք, թիվ և այլն, ինչպես «էր յերբեմն» (=կար մի ժամանակ), ուր «էր»-ը ունի նյութական ինքնուրույն նշանակություն, բայց «գնացել էր» (=գնացել ևր) կապակցության մեջ այդ «էր»-ը ժամանակ և, դարձել է կապական բառ (copula, связка): Համեմատիր այդ տեսակետից և ռուսաց буду дома, բայց буду говорить (նման դերմաներենին՝ ich werde sprechen), կամ ֆրանսերեն j'ai un livre (ունիմ մի դիրք), բայց j'ai parlé «[illegible] եմ» և այլն և այլն: Ռուերայներենում писати му, писати мешь, писати ме և այլն կապակցության մեջ му, мешь, ме ունեն արդեն ձևական նշանակություն, թեպետ անկախ կերպով այդ «му»-ն նշանակում է «ունեմ» և առանձին էլ գործ է ածվում: Գրաբարում

անդ նշանակում և այնտեղ (там), անդր՝ «դեպի այնտեղ» (=туда), անտի՝ «այնտեղից» և գործ են ածվում իբրև անկախ մակբայներ (տեղի դերանվանական մակբայները). այդպես և՝ աստ, աստի, այսր և այլն։ Բայց դրանք վորոշ կապակցության մեջ կորցնում են իրենց այդ ինքնուրույնությունը և կցվելով գոյականի վորոշ հոլովաձևին, ստանում են կոնկրետացնող հոդերի նշանակություն, ինչպես՝ ի քաղաքի անդ (=քաղաքումը), ի քաղաքէ անտի (=քաղաքիցը), ի քաղաք անդր (=դեպի քաղաքը, դեպի այն քաղաքը) և այլն և այլն, այսինքն փոխարինում են սովորական ի քաղաքին, ի քաղաքէն և ի քաղաքն հոդավոր ձևերը. իմաստի տեսակետից տարբերություն չկա ելեն ասենք «ի քաղաքէ անտի» թե «ի քաղաքէն», «ի քաղաքի անդ» թե «ի քաղաքին» և այլն և այլն։

Ինքնուրույն բառերի այդպիսի սպասարկու կամ ձևական նշանակություն ստանալու հետևանքով հաճախ դրանց ինքնուրույն իմաստական բովանդակությունը ևս կորչում է, այսինքն՝ բառերը դադարում են ունենալ ռևալ (նյութական) բովանդակություն և դառնում են միմիայն ձևական նշանակություն ունեցող բառեր (формальное слово, служебное слово), թեպետ շարահյուսական դերքաղվորման տեսակետից դրանք դրվում են առանձին, ձևականորեն դեռ «անկախ» են։ Այդ տիպի «ձևական» բառերի շարքին են պատկանում, որինակ, կապերը կամ կապակցական բառերը, վորոնք ծառայում են մի նախադասության անդամների կամ յերկու նախադասությունների իրար հետ կապելու համար, ինչպիսիք են—նախդիրներն ու հետդիրները (դեպի, առանց, հետ, վրա, մոտ..., на, без, с, над, при, под, за, к...), շաղկապները՝ թե, վոր, յեթե վորպեսզի, վորովհետև.. (=ստորադասական շաղկապներ են), և, ու, նաև, այլև, բայց (համադասական շաղկապներ), նման ռուսաց но, и, потому что, так что և այլն շաղկապներին։ Ոժանդակ (ձևական) բառերին են պատկանում և «լինել, լայն» բառերը, ինչպես և բայական copula-ն (եմ, էի, կլինեմ, был, буду և այլն)։ Վորոշ լեզվաբանների կողմից, ինչպես Մ. Աբեղյանի, Գոլժեզինսկու և այլոց, այդ ձևական տիպի բառերի շարքին են պատկանում և «յեղանակական» բառերը, ինչպես՝ թերևս, գուցե, հո, արդյոք, գոնե, գեթ, իբր թե, միթե, դրեթե, կարծես, անշուշտ, հաղիվ թե, հավանորեն և այլն*)։

---

*) Տես Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, եջ 132։ Իսկ Վ. Գոլժե-

Վորպես ձևական բառ պիտի համարել նաև մի շարք լեզուներում (օրինակ՝ հնդեվրոպական) գտնվող վորոշիչ հոդը, վորը սկզբում յեղել և ցուցական դերանուն և պահել է դրա ձևերը։ Թեպետ այդպիսի դերանունները արդեն հենց իրենց մեջ չունեն նյութական բովանդակություն, այլ հարաբերական, և այն էլ՝ տվյալ կապակցության (resp. նախադասության) մեջ, հետևապես դրանցից զարգացած վորոշիչ հոդերը պիտի պահպանեին նման ֆունկցիոնալ նշանակություն, իրըև ածանցյալ նշանակություն հանդես իրենց սկզբնական ցուցական դերանուններին։ Այդ հոդերը իրենց հետ հարադրվող բառերի իմաստը փոխում են կոնկրետացման կամ վորոշվածության ուղղությամբ, «վորտեղից ապա առաջանում և նաև վորոշյալ ցուցման նշանակությունը հանդես տվյալ առարկաների մի վոչ դասի՝ ի տարբերություն մյուս առարկաներից։ Համեմատեք գերմաներենում der Vater—հայրանի, վորոշյալ, մեր հայրը, հայրը, վորի մասին խոսվել և· die Väter հայրեր, ի տարբերություն մյուս միասեռ առարկաների։ Նմանապես ունենք ֆրանսիացոց le chien, les chiens (le հոդը առացվել է լատիներեն ille «այն» ցուցական դերանունից), բոլղարացոց жена-та և жени-те, հուներեն ὁ ἄνθρωπος, οἱ ἄνθρωποι և այլն*»։

Անշուշտ ձևական բառի նշանակություն ունեն և այն «յեղանակիչ» մասնիկները, վորոնք դրվելով բայի վորոշ յեղանակի վրա իմաստը շրջում են (փոխում են) մի այլ յեղանակի ուղղությամբ, ինչպես ռուսաց я взял «յես վերցրի», բայց я взял бы կամ я бы взял «յես կվերցնեի», նման հայոց «կը» (<հիւ) և «պիտի» մասնիկներին, վորոնք դրվելով ըղձական յեղանակի վրա իմաստը փոխում են դեպի յենթադրականը (կը գնամ—կգնայի, գրվում և՝ կգնամ, կգնայի) կամ դեպի հարկադրականը (պիտի գնամ—պիտի գնայի)։

զինակին յուր գրքի մեջ („Введение в языковедение, Москва 1913 եջ 149) ասում եր հետևյալը.—„В числе несамостоятельных слов, обозначающих отношение говорящего в речи (конечно, вероятно, мол, да, нет и т. д), точно также есть слова, представляющие ясные следы своего происхождения из самостоятельных слов; ср. русские конечно, вероятно, мол, нет и. т. д.„.

* Տես В. Поржезинский. Введение в языковедение, Москва 1913, եջ 157.

Ձևական բառերի ինքնուրույնությունը հաճախ այնքան է նվազում, որ դրանց առանձին գրվելը իրոք «ձևական» բնույթ է կրում։ Որինակ, անդլերենում անուններից առաջ դրվող սպասարկու մասնիկները, ինչպես՝ of, to, for, from, with, by և այլն ցույց են տալիս սոսկ հոլովական ֆունկցիաներ, հոլովական հարաբերություններ, ինչպես in, on, ot և նմանները ցույց են տալիս պարզ տարածական հարաբերություններ։

Այստեղ է, որ ձևական կամ ֆունկցիոնալ (և ոժանդակ) այդ բառ-մասնիկների էվոլյուցիոն զարգացման այդ վերջին աստիճանը, պահելով դեռ շարահյուսական (դիստրիբուցիոն) որոշ անկախություն ու ինքնուրույն, կարծես թե իր պաշտոնով ընդհուպ մոտենում է սոսկ մասնիկների կամ յերկրորդական ձևերի դիրքին և նշանակությանը։ Այժմ քննենք հենց այդ մասնիկները։

ՄԱՍՆԻԿՆԵՐ ԿԱՄ ՅԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՁԵՎԵՐ („ՄՈՐՖԵՄՆԵՐ“)

1. ՄԱՍՆԻԿՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Նախորդ յերկու հատվածներում մենք տեսանք, որ թե առանձին բառաստեղծական բառահարադրություններում կամ բառաբարդություններում և թե շարահյուսական կապակցություններից յելած բառահարաբերական բարդություններում որոշ ինքնուրույն բառեր հետզհետե սկսում են կամ ոժանդակական (բացատրական և սպասարկող) դեր խաղալ և կամ սոսկ կապակցական (ֆունկցիոնալ) և ձևական դեր խաղալ որոշ ինքնակա բառերի նկատմամբ։ Այսինքն, նախկին ինքնուրույն բառը համադրվելով կամ հարադրվելով մյուսին (կամ մյուսներին) բովանդակորեն փոխվում, իրեն ժխտում և և դրեթե վեր և ածվում ձևական մասնիկի, որը միայն յուր դիրքով և առանձին բառի տպավորություն է թողնում, վորովհետև այդ տեսակետից քիչ թե շատ ազատ և, մշտապես չի միացած հիմնական և նյութական նշանակություն ունեցող բառին (resp. բառերին)։

Հետևապես յեթե այդ ձևական նշանակություն ունեցող բառ-մասնիկները իրենց հարաբերակցության զարգացման վերջին փուլում միանան իրենց հիմնական բառերին, ունենալով վերջիններիս հետ ավելի սերտ բովանդակական միասնություն, որի հետևանքով և շեշտի միասնություն (այսինքն՝ մի շեշտ), այն ժամանակ այդ ձևական բառերը, որոնք «անկախ» դիտող-

դիցուկով արդեն մասնիկի դեր էին խաղում, այդ կատարյալ մի ամենացման մեջ բնական և վոր պիտի լինեն սոսկ մասնիկներ, կորցնելով իրենց նախկին բառային ձևական անկախություն։ Այսպիսով ստացվում է բաղադրյալ մի նոր բառ մի (կամ մի քանի) ձևական մասնիկով և մի (կամ մի քանի) հիմնական բառով (բառարմատով)։

Իսկ լեզվի բառախմբերի («մասունք բանի»-ների) վեր կատեգորիաները ավելի անմիջապես կարող են այդպիսի բարդություններ կամ բաղադրություններ մեջ ձևական մասնիկներ դառնալ. վեր ասլաքեն նրանք, վորոնք իրենց յերկարատև զարգացման մեջ արդեն կապական կամ ձևական բառեր էին։ Իսկ վերոնք էին այդ ձևական նշանակություն ունեցող բառերը, resp. մասնիկները։ Մենք վերևում արդեն տեսանք, վոր դրանք էին—շաղկապները, նախդիր-յետդիրները, կապական բայը (copula), յեղանակիչ բառերը, այլևայլ բառ-մասնիկներ, ինչպես հոլովական և այլ ֆունկցիաների համար և այլն։ Բնական է, վոր հենց դրանք հեշտությամբ կարող են նոր «ածանցի» կամ մասնիկի դեր ստանձնել նոր բաղադրության մեջ։ Բացի այդ, ընդհանրապես պիտի ասել, վոր մյուս բառախմբերից հեշտությամբ մասնիկի էվոլյուցիային են հասնում պակաս ինքնուրույն բառերը, որինակ դերանուններբը, վորոնց կոնկրետ նշանակությունը միայն տվյալ նախադասության մեջ և հայտնի։ Իսկ մյուս բառերի (գոյական, ածական, բայ) ոժանդակ և մինչև իսկ ձևական նշանակություն ձեռք բերելու մասին մենք արդեն խոսել ենք և ստորև ևս կխոսենք։ Անկախ բառը համադրվելով (resp. հարադրվելով)՝ հակադրվում է մյուսին և ժխտվում իր ինքնության մեջ, դառնալով մասնիկ։

Բերենք մասնիկների գոյացման համար որինակներ և սկսենք կապական բառերից։

«Ցեվ» («ու») շաղկապը, վորպես բառեր ևնախադասություններ միացնող կապ, սովորաբար պահում է յուր ձևական ինքնուրույնությունը, ինչպես՝ յես և դու, հայրն ու վորդին.., խոսում էինք, և նա լսում էր...։ Բայց լեզուներում դա հաճախ կցվում և յերկրորդ բառին, կազմելով մի միություն և մի շեշտով, ինչպես, որինակ, լատիներենում, ուր կարելի յե ասել pater et mater (հայրն ու մայրը), բայց և pater materque (ուր que նշանակում է «և»)։ Համեմատեք մասամբ մեր «և» շաղկապի ձևական ինք-

նուրբ յունարեն բառերի հետ, ինչպես՝ «մինչ եւ» (կա և ժխտական մինչ չեւ), «թեպետ եւ», «այլ եւ...», և հետագա մինչև, թեպետև, այլև..., ուր միանգամայն և շեշտի տեսակետից ավելի զարգացած դրություն ենք տեսնում։ Հայերենում այնպիսի միություններ, ինչպես Սուրենն-ել, Սուրենն-իսկ, Սուրենն-անգամ և նմանները նույնպես մի միություն են ներկայացնում մի շեշտով*։ Ռուսերենում կարելի չէ մատնանշել „он ~ то (не пришел)“ կամ „он-же (не пришел)“, ուր ~то կամ ~же կապերը կորցրել են նաև իրենց դիրքային անկախությունը։

Վերջինիս նախդիր-հոդիրներին բառաբաղադրիչ դեր կատարելու որինակներ։ Գրաբարյան առ միշտ, ընդ միշտ և այլն մեզ համար արդեն անբաժան միավորներ են (առմիշտ, ընդմիշտ) և պիտի դրվեն միասին, ինչպես վերևում բերած՝ թեպետև, մինչև, այլև և այլն։ Բնական է, որ մի միանգամություն են և առաւրյա, առաւիւնյա, առաւաւվէրն, առընթեր, առայժմ... կամ ընդհանուր, ընդդեմ, ընդարձակ, ընդառաջ և նմանները**։ Համեմատեք նաև նախդիրների նախամասնիկ (նախածանց) դերը հետևյալ բայերի մեջ—զգեստնել, ըստանձնել, ընդունել, ըմբռնել (<ընդբռնել), ընդդրկել, ընձեռել (<ընդձեռել), ընդվզել, ընկճել (<ընդդճել), ընդորինակել և այլն։ Այս բաղադրյալ բայերի կազմությունը յենթադրվում է որ նախդրավոր անուններից և առացվել, ինչպես, որինակ, «ընձեռել» բայը առացվել է («ընդ ձեռն առ» ձևից, «զգեստնել» բայը՝ «զգեստի հարկանել» ձևից, «ըստանձնել» բայը՝ «ըստ անձին ունել» ձևից և այլն և այլն***։ Գրաբարում բաղադրյալ բայեր կան սակայն, որոնց այդպիսի նախամասնիկները կրկնություն են համարվում անունների վրա դրված նախդիրներին, ինչպես՝ ընդհարկանել ընդ ինչ (ընդ ուժեք),

---

* Համեմատեր տարբերությունը այդ փոխնիփոխական միության տեսակետից—Սուրենն-ել չխոսեց „И Сурен не говорил“ (կամ также Сурен не говорил) ուր Սուրենն-ել մի միություն և Իսկ Սուրենը ել չխոսեց „Сурен больше не говорил“ այլ միություն և, յերկու բառով՝ «Սուրենը» և «ել», յերկու շեշտերով, և տարբեր նշանակությամբ։ Այնպիսի դեպքերում, ինչպես «որդին ել չխոսեց» յերկիմաստություն և առացվում, թեպետ հնչմամբ (պատրաստում) տարբերում ենք։

** Մ. Աբեղյանը այս բաղադրությունը միացնում է «կցական բարդություններին» (տես նրա դրքում, եջ 186)։ Մեր կարծիքով սրանք «ածանցյալ» բառակազմություններ են (производные словообразования) նախածանցներով։

*** Տես Մ. Աբեղյան, ibid., եջ 187—188.

առանցանել առ իւիք (առ ոմամբ), զանցանել զիւիք (զոմամբ), առարկանել > առարկել առ ոմն և այլն: Հայերի այսպիսի նախամանիկը կոչվում է լատիներեն praeverbium «նախաբայ»: Այնինից լավ դիտվում է այդ «նախաբայավոր բայերի» կազմությունը իրենց զարգացման մեջ հունարենում, լատիներենում, գերմաներենում և ռուսերենում, ուր այդ բայերի «նախաբայերը» (=նախամասնիկները), որպես նախդիրներ կրկնվում էին նաև անուններին հետ (լատ invenio in oppidum «գալիս եմ քաղաք», ռուս. вхожу в город.., ինչպես յեթե ասեինք մեր լեզվով—վրա վազել մեկի վրա, առաջ քաշել սեղանի առաջ և այլն*: Գերմաներենում այդ «նախաբայերը» դեռ վերջնականապես չեն մերվել բայարմատի հետ և շատ հաճախ նրանք անջատվում են նախադասության մեջ և դրվում դրա վերջում, ինչպես՝ auf, vor, aus, empor և այլն, բայց, որինակ, ent, ver, er և նմանները այլևս չեն անջատվում: Ռուսերենում դրեթե բոլոր նախդիրները ծառում են բաղադրյալ բայերի մեջ որպես «նախաբայեր» (=նախամասնիկներ), ինչպես—ссылать, посылать, присылать, убивать,набивать, забивать, добивать, перебивать, пробивать, исходить, отходить, входить, приходить և այլն, չկան միայն առանձին вы-, вос-, пере- նախդիրներ ինչպես և չեն կազմվում к, через նախդիրներից «նախաբայով» բայեր:

Նոր հայերենի այնպիսի «հարադրություններ», ինչպիսիք են—մոտ գալ, դուրս գնալ, ներս գնալ, առաջ գալ, դեն ձգել, վրա հասնել և այլն, վիստորեն, ըստ բովանդակության, նախամասնիկով բաղադրություններ են, թեպետ «հարադիրները» դեռ առանձին են գրվում, քանի որ խոնարհում ենք «մոտ եմ գալիս, մոտ էի գալիս» և այլն. բայց բարբառներում այդ կապակցությունը ավելի սերտանում է (համեմատիր «կվերկինա» վոխանակ այժմյան «վեր կը կենա» և նմանները):

Ոժանդակ կամ կապող բայերի մասին մենք արդեն խոսել ենք, որ դրանք սոսկական ստորոգումն են տալիս (որինակ՝ շուշանը ծաղիկ է, նա գնացել է), կերպարանափոխելով նաև հիմնական բայի բովանդակությունը կամ ավելի ճիշտ հարաբերությունը ժամանակների և այլ կատեգորիաների նկատմամբ, ինչպես ունենք я буду говорить, գերմ. ich werde sprechen,

---

* Ibid., էջ 188.

ուկրաֆներեն՝ писати-му (писати-меш, писати-ме) և այլն։ Սակայն ձևական ընութի կրող բայերն անգամ կարող են կորցնել իրենց բառային դիրքի ինքնուրույնությունը և կցվել հիմնական բառարմատին, դառնալով վերջինիս սոսկ ձևական մասնիկը («աֆֆիքսը»)։ Այդպիսի ընթացք ունի, որինակ, ֆրանսերենի ապառնի ժամանակի բաղադրությունը. դիցուք մի je finirai «ես կվերջացնեմ», tu finiras «դու կվերջացնես», il finira «նա կվերջացնի» և այլն, ուր avoir «ունել» բայի ներկա ժամանակի ձևերը (je'ai, tu as, il a...), դառնալով սոսկ ձևական (ֆունկցիոնալ) կցվում են անմիջապես անվորոշ դերբային վերջից (finir- և ai, as, a.. ձևերը)։ Այդտեղ կարելի չի ասել, վոր finir-ը դարձել է բուն, կամ այլ ձևով ասած՝ finirai բառի հիմնական մասը, բաղխը։ Գրաբարում նման կազմություն և ներկայացնում ստորադասական յեղանակի ներկա-ապառնին («առաջին ապառնին»), ինչպես դրիցեմ, բազմիցեմ, կարդայցեմ, թողուցուս, վոնց հիմնական մասը (գրբ-, բազմի-, կարդա-, թողու-) ներկայի բունն և e, i, a և u խոնարհիչներով, իսկ -իցեմ,-իցիմ, -ցցեմ,-ուցուս վերջամանիկները ձևափոխությունների են ոժանդակ բայի ապառնի ժամանակի (իցեմ «կլինեմ, буду», իցես, իցէ, իցեմք, իցէք, իցեն), ուր գրե+իցեմ դարձել է գրիցեմ, բազմի+իցիմ դարձել է բազմիցիմ, կարդա+իցեմ > կարդայցեմ, թողու+իցեմ >* թողոյցեմ >* թողուցեմ >* թողուցուս (առաջընթաց ասսիմիլացիայով)։ Նման բաղադրյալ կազմություն ունի և գրաբարի յերկրորդ «ապառնի» կոչեցյալը, նույն «իցեմ» ոժանդակի հետ, թեպետ ավելի կերպարանափոխված (թողից, թողցես թողցէ, թողցեմք—թողցուք, թողցէք—թողցիք, թողցեն)։

Դերանուններն ևս շատ ու շատ լեզուներում կորցնում են իրենց անկախ դիրքը և կցությի դեր են ստանձնում մյուս բառերի նկատմամբ։ Մենք արդեն տեսանք, վոր ցուցական դերանուններից ստացվում են վորոշիչ հոդերը, վորոնք բովանդակորեն արդեն այն չեն, ինչ այդ ցուցականները, ինչպես, որինակ, գերմ. der, die, das կամ ֆրանս. le, la (ստացված լատ. ille, illa ցուցականներից) կամ ուկրաֆնական баба-та, мужик-от և այլն, ուր та և от (<тот) նույնպես ցուցականներ են։ Յեթե ուկրաֆներենում այդ հոդերը կիսակցության (վերջակցության) դերումն են, ապա հայոց ս, դ, ն հոդերը միանգամայն արդեն կցություններ են և չունեն վորևե դիսպոզիցիոն անկախու-

թյուն և ինքնուրյուն։ Ցեղին վերցնենք «յես հայր», «իմ հայր» («հայր իմ») կամ «այս հայր» («հայր այս») և նմանները, այդտեղ «յես», «իմ», «այս» բառերը անկախ են, իսկ «հայրս» նույնարժեք բառի «ս» մասը արդեն մասնիկ է, դերանվանական հոդ է (գրաբարում հայրս=յես վորպես հայր, իմ հայրը, այս հայրը)։ Այդ դերանվանական հոդերը—մասնիկները ստացվել են անկախ բառերից («ս»-ն ես, այս դերանուններից, «դ»-ն դու, այդ դերանուններից և «ն»-ն նա, այն դերանուններից)։ Գրաբարում այդ հոդերը կարող են դրվել և վոչ անունների վրա, մինչևիսկ բայերի վրա (որ գրեցաւն=այն վոր գրվեց, զոր ասացերդ=այդ վոր դու ասացիր և այլն), վորը աշխարհաբարում չի մնացել (բայերի հետ հոդեր կան միայն պարսկահայ բարբառներում, այն էլ հավանորեն պարսկերենից ազդված)։ Սեմիտերենում դերանվանական մասնիկները կարող են նույնպես բայերին կցվել (վերջից), ինչպես, որինակ, արաբերեն katala-hu «սպանեց—նրան», իսկ խեթերեն հին մեռած լեզվում (Քրիստոսից 1800—1200 տարի առաջ) կային դույգ տիպի անձնական և ստացական դերանուններ—առանձին և վերջակից, վորոնք կցվում էին դրեթե բոլոր բառերին. որինակ uga «յես» և ammel «իմ» անկախ են, իսկ mu «ինձ» և miš «իմ» (չեզոք սեռի—mit) կցական դերանուններ են (կամ ինչպես Hrozny-ն և ասում՝ suffigierende Pronomina). այդպես կան իհարկե և մյուս դեմքերի համար, թե յեզակի և թե հոգնակի։ Դերանվանական մասնիկներ ունեն և ուրիշ շատ լեզուներ, ինչպես թուրքերենը, իրանականն նոր լեզուները և այլն։*

Ձևական բառերից «յեզանակիչները» ևս միատեսակ ունեն միանալու բայերին, այդպես մեր աշխարհաբարի կասեմ, կուտեմ, կըբերեմ և նմանների մեջ կը (կ-) մասնիկը արդեն որդանապես միացած է, թեպետ բարբառների բերեմ կը, խոսեմ կը.., կասեմ կը, կուտեմ կը և նմանները դեռ զգալ են տալիս կը մասնիկի մո-

---

* *Որինակ,* zig-a-mu «և (-a) դու (zig) ինձ»(-mu), apun-a-mu-antuhsan» «և (-a) այն (apun)» ինձ (=ինձ համար, -mu) մարդուն (antuhsan)», nu-mu «և (nu-) ինձ (mu-)», uppi-warat-mu «ուղարկիր (uppi) այն (-warat) ինձ (-mu)»։ *Բայերին նույնպես կցվում են, որինակ,* kuenzi-us «սպանում են»(kuenzi) նրանց (-us), *ինչպես վերևում տեսանք արաբերեն* katala-hu «սպանեց նրան» *նույնակազմ բաղադրության մեջ։*

տավոր անցյալում ձևական ինքնուրույնություն ունենալը*։ Այդպես և «պիտի» կեղտանակիչ բառը տեղ-տեղ մեր բարբառներում, ձայնավորով սկսվող բայերից առաջ արդեն սոսկ մասնիկ և դարձել (ս-), ինչպես՝ սերթամ (պիտի գնամ), սուտիմ (=պիտի ուտեմ) և այլն, իսկ բաղաձայնով սկսվողների առաջ դարձել և տի (դի), ինչպես տի բերիմ (=պիտի բերեմ) և այլն։

Ցերբ շարահյուսական գործակցիա ցույց տվող բառը կորցնում և նաև յուր ձևական ինքնուրույնությունը և կցվում և այլ հիմնական (կամ կերկրորդական) մի այլ բառի, երբև ֆոնետիկական մի ամբողջություն՝ մի շեշտով, դրանով նախկին ձևական բառի ֆունկցիան անպատճառ չպիտի փոխվի։ Ձևական բառի վերածվելը մասնիկի, ոորպես կապակցական նոր կեղտանակ, կերկրորդական նշանակություն կարող և ունենալ, չազդելով անմիջապես [դրա պաշտոնի վրա։ Միթե միևնույնը չե լատիներեն խոսողի համար կապակցել et (=և) ձևական բառով կամ—que) ձևական մասնիկով (pater et mater և մյուս ձևով՝ pater ma-rque), կամ cum (=հետ, հանդերձ) բառի համար ասել cum filio «որդու հետ», cum patre «հոր հետ»..., և մյուս կողմից՝ tecum «քեզ հետ», mecum «ինձ հետ», vobiscum «ձեզ հետ» և այլն։ Ֆունկցիայի մեջ տարբերություն չկա, լինի դա արտահայտված՝ ձևով (դերքով) անկախ բառով, թե սոսկ ձևական մասնիկով։ Նույնը կարելի յի ասել և դերանունների և դերանվանական մասնիկների («հոդերի») մասին. որինակ, ինչ տարբերություն կա այժմյան մեր «հայրս» և «իմ հայրը» արտահայտությունների մեջ.—մոչ մի, յեթե չվերցնենք իհարկե արտաքին հնչյունական և սոսկ ձևական հանգամանքները։ Հիմնական փոփոխումը բառի (resp. մասնիկի) բովանդակության կամ պաշտոնի մեջ է, իսկ ձևական (ֆորմալ) փոփոխությունը տվյալ դեպքերի համար կերկրորդական է**։

---

* Այդ կը (> կու) մասնիկը մենք աղբակից ենք համարում լազերեն ko նույնաստաշոան մասնիկին, ինչպես՝ լազ. b -carum «գրում եմ», carum «դու գրում ես», c̄arum-s «նա գրում է», բայց b-c̄ari—ko «կը գրեմ», c̄ari—ko «դու կգրես», c̄aru—ko «նա կգրե» (տես H. Марр грамм. чанского языка, եջ 53)։ Մ. Աբեղյանը այդ հայկական կու մասնիկը հանում է զավառական կո (=ոտա) բառից, որը մեր կարծիքով սխալ է։

** Մինչև իսկ այդ ձևական դերքի կերկրորդական նշանակությունը կարելի յի անվանել ֆրանս. je finirai «կվերջացնեմ» բայի վերջին ai մասնիկի մեջ (ասացվել է j' ai «ունեմ» անկախ բայից). համեմատած ai ժամանակ կամ ձևական բայի հետ j' ai parlé «ես ասացի» կազմության մեջ։

Այդպես և մասամբ խնդիրը, յերբ հարցը վերաբերում է նաև բառաստեղծական բարդութիւններին նեղ իմաստով, յերբ յերկու կամ աւելի բառեր միանալով (այլևայլ աստիճանի սերտութեամբ) կազմում են մի նոր իմաստական միութիւն, ինչպես, որինակ պարսկերէն phadar suxta (տառացի՝ հայր այրված), վոր նշանակում է «այն մարդը, վորի հայրը այրվել է (դժոխքում)», կամ չինարէն šui fu (տառացի «ջուր մարդ»), վոր նշանակում է «ջրի մարդ» այսինքն՝ ջրկիր կամ thien tszi «յերկինք վորդի» (> կայսր) և այլն. կամ մեր հայոց սեղան-տախտակ, արև-մուտք..., սեղանատուն, արևամուտ, տանտեր, տանուտեր, առաջ քաշում և այլն։ Այստեղ, ինչպես ցույց ենք տվել, կամ բարդութեան յերկու մասերն էլ հավասար միութիւններ են, կամ մեծ մասամբ մեկը լրացուցիչ և բացատրող դեր է խաղում (սովորաբար առաջինը). իսկ աւելի զարգացման դեպքում այդ ժանդակը կարող է ձևական մասնիկի դեր խաղալ, փոխվելով բովանդակութեան։ Այդ բացատրող բառի հնչյունական փոփոխութիւնը աւելի յև նպաստում բաղադրութեան այդ անդամի կորվելուն յուր նախկին բառային վիճակից, բայց սա աւելի շուտ հետևանք է և վոչ հիմնական պատճառ։ Այդ ժանդակ բառը մասնիկի աստիճանի յև վերածվում, յերբ նա հիմնական և կոնկրետ իմաստ այլևս չունի, այլ ստանում է աւելի վերացական և ընդհանուր, բայց և սահմանադծող կամ բացատրող դաղափար, կամ ինչպես Սեպիրն է ասում՝ դերիվացիոն դաղափար, այսինքն՝ ածանցական կամ յերկրորդական դաղափար։ Առանձին վերցրած այդ փոփոխված մասնիկը այլևս չի գուգորդվում այն բառի հետ, վորից նա ծագել է և հետևապես առանձին գոյութիւն ունենալ, իբրև անկախ բառ, նա չի կարող։ Դա արդեն մասնիկ է, կամ մոտ է մասնիկին, դառնալով, հետևապես յերկրորդական ձև՝ հանդիսանալ այն գլխավոր կամ հիմնական ձևի, վորը տալիս և բառարմատը*։

բարդութեան մեջ. այստեղ ևս ֆրանսիացին չի դիտակցում այդ ai բայը վորպես տունեմ, ինչպես ուկրաինական писать-иму և այլն։

*) Գործնականին այսպես և բնութագրում այդ յերկրորդական ձևի (մասնիկի) ծագումը. Мы уже видели, что сочетание двух (или нескольких) слов может получить значение одного слова („железная дорога„ и. т. п.) и стать далее одним словом. Если в этом последнем случае один из элементов данного сочетания повторяется в постоянной комбинации с другими элементами, и если при этом создается между ними та-

Բևեռնք որինակներ։ Գերմաներենում բոլոր -schaft *և* -tum *վերջացող վերացականները (*Herrschaft *«տիրապետություն, իշխանություն,* Reichtum *«հարստություն» և այլն) առաջացել են հին* scaf, scaft *«հատկություն» և* tuom *«վիճակ, դրություն»* (состояние) *անկախ բառերից։ Նմանապես* -lich *մասնիկը (*männlich *«արական»,* weiblich *«իգական» և այլն) առացվել և մի անկախ բառից (*gelich = *այժմյան* gleich), *որի նշանակությունն է «նման» (հավասարիր առորին գերմ.* lik = *անգլ.* like)։ *Ձրանսերենի* ment *ածանցը, որով մակբայներ են կազմվում, ծագում է լատիներեն* mente *«մտքով» (*mens = *միտք) բառից, ինչպես, որինակ,* fièrement *«կատաղորեն» առացվել և հին* fera mente *(վայրենի մտքով) կազմությունից։ Հայերենում կարող ենք մատնանշել* -at *մասնիկը, որ առացվել և հատանել «կտրել» բայի արմատից, որինակ—գլուխ հատանել > գլուխ հատել > գլխատել, ուր «հանձնչյունը ընկել և (հավասարիր դատել < դհատել, դով < դհով, դարկել* < դհարկել = *գրաբ. դարկանել և այլն, ուր «հ» հնչյունը դ բաղաձայնից յետո ընկնում է). այդպես առացվել են* -պչատ, *կռնատ, կիսատ և այլն*։ *Մենք ունեցինք գրաբարում արդեն մնացած հը—(* <*հու—) մի մասնիկ, ինչպես հլու, համառատ, հզոր, հպարտ (* <*հպարծ ձևից), հուժկու բառերի մեջ, որը (հը—) առաջ յեղել և անկախ բառ նախահայկական շրջանում («հնդեվրոպական լեզվում») և նշանակել է «լավ»։ Գրաբարյան և այժմյան—պես, բար և որեն ոժանդակ բառերը դառնում են և թևերս դարձել են մասնիկներ (ինչպես՝ մեծապես, քշնամաբար, զաղանորեն և այլն)։ Նման դեր են կատարում և նման ծագում ունեն արա~, բաղ~, դեր~, հակ~, համ~, յինք~, վեր~, տար~ և այլն «առաջադիրները» մի շարք բառերի սկզբում։ Կալնել (=«բռնել») բայի «կալ» արմատը իմաստա~*

кое соотношение, что данный повторяющийся элемент сознается как видоизменяющий однородным образом значение других варирующихся элементов, с которыми он сочетается, то данный элемент становится формальной принадлежностью, а те последние—основными принадлежностями в составе данных слов" (*տես նրա վերը, եջ 165*)։

* *Գավառական պատա բառը առացվել է նույն ձևով, ուր պա~ արմատը նշանակում է «պատնեշ, շրջունք» և ազգակից է վրաց* piri *«բերան», մեր պատնեշ, պառ բառերին։*

կան փոփոխությամբ ձևական դեր և սկսում խաղալ մի շարք բայերի համար, որպես «սկսողական կերպի» բայաձևեր, ինչպես՝ ջրակալել, թարախակալել, խոցակալել, սառցակալել, ժամռակալել, մազակալել, չիգարակալել, ճարպակալել, թևիկակալել և այլն և այլն*։ Ըստ Մ. Աբեղյանի մանիկ պիտ համարել «չմ» մասը չմահավան, չմակեր, չմախոս, չմախուժ բառերի սկզբում, որը (չմ-) ստացվել է չմչմ-(հմմտ. չմչմակեր և այլն) նախորդից, իսկ սա էլ չինչին բառից. այդպես և և հան- մասը շապկահան, տակնահան և նմաններում, ուր այդ «հան»-ը անմիջապես չի զուգորդվում այն հան- արմատի հետ, որ ունենք խելքահան, արմատահան, մտահան և նման բառերի մեջ (տես նրա Հայոց լ. տես., եջ 230—231 և 236—238)։

Որինակներ՝ բառերի վերածման մասին մասնիկների՝ կարելի չե բերել շատ և շատ լեզուներից, որտեղ ընդհանրապես մասնիկներ գոյություն ունեն և հետևապես մասնիկացման համար հողը կարծես թե պատմականորեն պատրաստ և չեղել։ Կան լեզուներ, ինչպես, որինակ, չինարենը, որտեղ այդ մասնիկները չկային, բայց այդ լեզվի զարգացման վերջին նոր շրջանում, կարելի չե ասել մեր աչքի առաջ, սկսում և զարգանալ ձևական (ֆունկցիոնալ) բառերի մի նոր մորֆոլոգիական կացություն և դրանցից էլ ձևական մասնիկների վիճակ, որով այժմյան չինարենը մոտենում և հետզհետե այսպես կոչված կցական տիպի լեզուներին։

Ինքնուրույն բառերի վերոնկարագրյալ էվոլյուցիան մինչև ձևական մասնիկները (և դրանց մահացումը) տալիս են լեզուները ընդհանրապես մարդկային լեզվի զարգացման մի 5—6 հազար տարվա ընթացքում, սկսած մեր թվագրությունից մոտ 4000 տարի առաջ, յերբ, որինակ, գրի չե անց կացվում սումերերեն լեզուն։ Բայց լեզուների ձևաբանական զարգացումը ավելի հին և ավելի շատ յերկար անցյալներում մեզ բնականաբար հայտնի չպիտի լիներ։ Հետագա զարգացման ձևաբանական որինաչա-

---

* Մի ժամանակ «բռնել» գաղափարից նույնպես կազմվել են նման «սկսող կերպի» բայեր (verba incohativa) ամբ մասնիկով, որ կա շատ լեզուներում «բռնել» իմաստով, որպես անկախ բառ։ Համեմատիր—խուսափել (խույս տալ), սաքսափնչ (սաքսել), շուքափնչ «շքեղանալ»։ Այժմյան՝ քնափ, մռափ, ինչպես և -ապ մասնիկով հին խուճապ, պարապ, տագնապ, տառապ, շտապ և այլն նույն ծագումն ունեն։ Տես իմ Chetto-armeniaca գիրքը, եջ 80—82

վություններն հիման վրա, ինչպես մասնավորապես և մասնիկի նայման կամ դոյացման հիման վրա անկախ բառից, լեզվաբանները տեսականորեն յենթադրում են, որ նման որինաչափություններով լեզուն զարգացած պիտի լինի և այդ հեռավոր անցյալներում, սկսած մարդկային լեզվի ծագման ստադիայից։ Կամ ինչպես Դ. Ուշակովն է ասում. «հնարավորություն չունենալով այս կամ այն ձևական պատկանելիությունների [մասնիկների] առաջացման պրոցեսը վինել նախապատմական ժամանակաշրջանում, մենք աչխատանքով կարող ենք մեղ պատկերացնել այդ պրոցեսի ընդհանուր բնույթը»*։ Բայց ինչպես իրավամբ նկատում է այդ նույն դիտնականը, «մեղ հայտնի աֆֆիքսների [ածանցների, մասնիկների] հոծ մեծամասնությունը վերապրել է աչխարհի մի յերկար պատմություն, որը յենթադրել անգամ դժվար է, թե իսկապես վոր բառից և ծագել դրանցից մեկը կամ մյուսը»**։

Մեր կարծիքով մասնիկների ծագման յերկրորդ աղբյուրը (բացի անկախ> ձևական բառերից) պիտի համարել պատահական հնչյունական ավելացումը արմատի վրա, որով սկզբում թերևս իմաստական տարբերացում անմիջապես չի լինում, սակայն հետագայում բառաստեղծական կամ բառահարաբերական նոր առաջացած պահանջի համեմատ այդ նոր տարբերակը դիֆֆերենցիացիայի յե յենթարկվում իմաստական կամ ֆունկցիայի տեսակետից առաջին հիմնական ձևից և ստացվում և նոր գիտակցված յերկրորդ ձև՝ բառիմաստական (լեքսիկ) թե բառահարաբերական (սինտակտիկ)։ Ձևի առաջացման պատահականությունը ընդունվում և լեզվաբանների կողմից այսպես կոչված «ներքին ֆլեքսիայի», (կամ «բնի ֆլեքսիայի») համար, յերբ, որինակ, մի ռուսական село դառնում և сёла („сеола"), земля—(черно)-зём և այլն շեշտի և հաջորդ «կոշտ» բաղաձայնի հետևանքով և հետագայում դառնում ձևաբանական անհրաժեշտ ֆակտոր. այսինքն, е-յով յեղակինները, բացի իրենց հոգնակի վերջամանեխից, ստանում են նաև о ձևական հանգամանքը, և բոլոր весло, кресло, ведро և նմանները դառնում են вёсла, крёсла, вёдра.. աչխատանքով, ինչպես մի ուսր пальто դառնում և польта (ժողովրդական լեզվում) կամ красно (=«դաղգյան, քաքաո») դառնում և крóсна նման սովորական нога—нóги,

---

* Տես նրա „Краткое введение в науку о языке", изд. V, էջ 74։

** Նույն տեղում, էջ 75։

вода́—во́ды, окно́—о́кна և այլն*: Իսկ յեթե հնչյունական պատահական դիպվածության հետևանքով վոչ միայն հնչյունի վորակական փոփոխություն կատարվեր, ինչպես վերևում, այլ նոր հնչյունի հավելում լիներ, ինչպես վոր դիցուք մի вилка, доска.. կամ ножка, кошка, окошко և նման բառերից ստանում ենք հոգնակի սեռական вилок, досок... կամ ножек, кошек, окошек և այլն, այսինքն՝ նոր о և е հնչյունների հավելում, վորպես հնչյունաֆիզիոլոգիական պատահական նորամուծություն, ապա այդ е և о ձայնավորները դառնում են ձևաբանական ֆակտոր ևս, այսինքն բացի բառավերջում «ղերո վերջավորություն» ունենալուց նման բառերը ստանում են նաև ներքին ինֆիքսացիա՝ ներմանիկավորում: Սա գիտակցվում և դառնում անալոգիայով մյուս բոլոր դեպքերի համար ել անհրաժեշտ:

Վերցնենք որինակներ հայերենից:

Մենք ունենք ճանկել, ճկել, հավալ և այլն բայերը և տեսնում ենք, վոր «ռ» հնչյունի վերջահավելմամբ գոյանում են նոր տարբերակներ—ճանկռել, ճկռել, հավռալ (<* հավռալ) և այլն: Այդտեղ «ռ»-ն, ըստ իս, ծագել է հնչյունաբանորեն (և վոչ թե «առնել» բայի արժատն է, ինչպես վոմանք են կարծում), և ստեղծված յերկու տարբերակների մեջ սկզբում իմաստական դիֆֆերենցիացիա չի նկատվում, այդ լինում և հետագայում, լեզվի հարստացման պահանջի տեսակետից: Հետևապես յեթե այդ «ռ»-յով ածանցյալները ստանան նոր իմաստ, դիցուք թե ուժեղացման շնշտ, ինչպես այդ ճանկռել, ճկռել, սկռել (սուզվել), հավռալ և նման դեպքերում, իսկ այդ «ռ»-ն ավյալ դեպքում այդ պաշտոնն և ստանձնում, և մյուս կողմից պահված լինի դրանց հարաբերակցությունը պարզ ճկել, ճանկել, սկել, (սուզել) և մյուսներին, ապա կարող ենք ասել, վոր հնչյունական այդ պատահական հավելվածը դարձել է նոր ձև, նոր բառաստեղծական մասնիկ, (վերջամասնիկ суффикс): Ռուսերենում ունենք купить, любить, лепить և այլն, վորոնց ներկան կամ ապառնին куплю, люблю, леплю ստանում և այդպիսի հավելում, առաջացած սակ հնչյու-

---

* Տես Д. Ушаков-ի հիշված դիրքը, էջեր 75—77 „...изменение в звуковой стороне основы, составляющее здесь формальную принадлежность, также не имело прежде формального значения, а приобрело его, так сказать, случайно." (էջ 75): Կամ—„Итак, *формальное* значение различных принадлежностей в процессе возникновения разных форм развивалось из значения *неформального*" (էջ 77):

նականորեն. չէին դրա հետ առաջանար նաև նոր իմաստի կամ գործառույթի հավելում ի հակադրություն այդպիսին չունեցող ձևերի, ապա այդ «լ»-ն կլիներ նոր ձև, նոր մասնիկ։

Մենք ունենք հնուց -իկ նվազական-փաղաքշական վերջամասնիկը, ինչպես շնիկ, փոքրիկ, լավիկ, Արփիկ, Լուսիկ և այլն և այլն։ Բայց մենք նկատել ենք, որ արմատի վերջին բաղաձայնի և -իկ ածանցի միջև պատահական կերպով (սոսկ հնչյունաբանորեն) առաջանում է «լ» կամ «ռ» բաղաձայնը։ Ցնվ ահա լեզվի զարգացման հասարակական պահանջով այդ «լ» և «ռ» հնչյուններով սարքերակները սկսում են ստանալ մի նոր մեզ հարկավոր իմաստ, որի պահանջը կար, բայց մի բառաձևով չէր արտահայտվում, այն է՝ ավելի փաղաքշական բառեր, ինչպես նեղլիկ, կարճլիկ, կոկլիկ, շնկլիկ, հաստլիկ, բարակլիկ (<*բարակլիկ), սոթլիկ, սուտլիկ, և այլն -լիկ նորաձև մասնիկով, և անաքզական բառեր, ինչպես՝ հաստռիկ, հուշտռիկ, հեվռիկ, ցեքռիկ, լոթռիկ, կունդռիկ և այլն—ռիկ նորաձև մասնիկով*։ Վոր «լ» հընչյունը նոր և ծագել (ինչպես և «ռ»-ն) և ի սպաս և դրվել փաղաքշականության ուժեղացնելու, այդ պահանջը բավարարելու համար նման սոսկածանց այլ փաղաքշական «-ակ-իկ»,—«ի-ակ», «-իկ-իկ» և նմաններին (պատանեկիկ, փոքրկիկ, լայնկիկ և այլն), այդ ապացուցվում է և այլ լեզուների նման ածանցի դեպքերում, ինչպես ռուսաց малый—маленький—малюсенький, тихий—тихонький—тихохонький և այլն։ Իսկ վոր այդ «լ» (ինչպես և «ռ») հնչյունը որդանապես կապ չի ունեցել «-իկ» փաղաքշականի հետ, իրրև մի անանջատ և սկզբնական -լիկ, այլ հետո յի մլացել, դիտակցվել և պրոդուկտիվ դարձել, այդ յերևվում է և այդ «լ» բաղաձայնի առաջացումից և այլ ածանցների առաջ, բալաձայնից հետո դրվելով, ինչպես վախ-լ-ուն, խաբ-լ-ուկ.., ճզ-լ-անի (ժողովրդական՝ ճզանի), կուզ-լ-ան, դոզ-լ-ան, և այլն։

Հնչյունի այդպիսի պատահական դոյացումն ու հավելացումը, ինչպես և դրա հետագա ձևաբանական ոգտագործումը վորպես մասնիկ, մենք հարկավ պիտի ունենանք և արմատի կամ բառաքզի մեջ, վոչ միայն դրանցից դուրս, ինչպես վերևում մատնանշվել է։

* Այս մասին առաջին անգամ մենք հենք ասել մեր «Մի քանի հնչաբանական նկատողություններ հայերենում» հոդվածում. տես Գիտություն և Արվեստի ինստիտուտի Տեղեկագիր, № 2 1927 թ.։

Ըստ էս, այդպիսի հնչյունական ֆենոմենի միջածանցացում (կամ ներածանցացում) մենք պիտի տեսնենք սովորական պոկել և ածանցավորյալ պոկվել բայերի մեջ, ինչպես և բնդորել և բլընդորել նման կազմությունների մեջ. թերևս այդպիսի «լ» հնչյուն ունենք և «կլոր» բառի մեջ հանդիպ. «կոր»-ի, ինչպես և գավառական «սլուր» («սուլուր», «սուլուրիկ»), հանդիպ. «սուր» բառի։ Այս միջածանցման դեպքը «լ» բաղաձայնի միջոցով այնպես չտարածվեց մեր բարբառներում, ինչպես վերոհիշյալ վերջածանցման դեպքերում (-լ-իկ, լ-ան, լ-ուկ..) և կարելի չ՝ ասել յուր մորֆոլոգիական գոյացման պրոցեսն և միայն սկսել։ Միջածանցման կատարյալ մի դեպք պահել և մեզ գրաբարը, ուր թերևս այդ նույնպես պատահական հնչյունազարգացման ոգուտ գործում է։ Այդ w (հայոց ւ)հնչյունն և, վորը թերևս շեշտի հետևանքով ծագել և առանց ձևաբանական նշանակության առաջ և արտասր (=արտօսր) բառերի մեջ, քանի վոր դրանց հնագույն արմատներում այդ «w»-ն չպիտի լիներ (մենք առաջ հանում ենք *առիծ սկզբնականից և համեմատում լատին. rex «թագավոր», reg- «կառավարել» արմատով, և սանսկր. rājā «թագավոր» նույն արմատից), իսկ «արտասր»-ը ստացվել է artasu- բնից = լատ. lacruma, հուն. δάκρυ և այլն։ Սակայն այդ w տոնանտ հնչյունը, բայական բների մեջ մտնելով, տվել է նոր վորակ, այն է՝ տեղծել է բայանուններ կամ բայերից գոյականներ, ինչպես ճանաչ-եմ (<* ծանաչ-եմ աստիմիլացիայի չենթարկված հին բնից), տաւլիս և ծանաւթ>ծանօթ, ամաչ-եմ>ամաւթ, աղաչ-եմ>աղաւթ, արած-եմ>արաւտ, ղ-գած-իմ>գաւտի, ուր տեղի ունի վոչ միայն w (=մեր ւ) տոնանտի ներածանցում այլև աֆֆրիկատների (չ, ծ) դեղասսիբիլյացիա, այսինքն՝ «շ» և «ս» հնչյուններից ղրկվելը։ Համեմատիր նաև — մատ-չ-իմ>մաւտ, հետ-ում>հեւտ (=հիւտ), յատ-եմ>յաւտ, թան-ամ «թրջել»>թաւն, գրտ-անեմ (արմատն և գիտ, համմտ. գրաբ. եգիտ «գտավ») բայից գիւտ և այլն*։ Այս w տոնանտի հայկական հողի վրա առաջանալը, համաձայնորեն վերոհիշյալ պատահական հնչյունաբանական յեղանակով, պիտի ընդունել նաև այն պատճառով, վոր հայոց լեզվի կազմություների մեջ (հնդեվրոպական, կովկասյան և այլն) այդպիսի յերևույթ մենք չգիտենք (w տոնանտով)։ Ճիշտ և, հնդեվրոպական

---

* Տես իմ հիշած աշխատանքը («Հնդեվրոպական մի քանի մեսսորդներ» էջ 1—4. առանձին արտատիպը)։

լեզուներում կար *bhreg- և *bheg- «կոտրել» կամ *syu—և *su- «կարել» կրկնակի ձևերը, ուր կամ «r» և «y» հնչյունները նոր են միջածանցվել կամ ընդհակառակը՝ հնագույն *bhreg- և *suy- արմատներից հնչյունակորուստմամբ առաջացել են նորերը (*bheg- և *su-)։

Վերջացնելով «երկբորդական ձևերի» կամ մասնիկների ծագման և զոյացման խնդիրը, մենք տեսանք, որ դրանք ստեղծվում են նախ ձևական կամ ֆունկցիոնալ բառերից, ինչպես և բառահամադրության կամ բառաբաղադրության այնպիսի փոխհարաբերություններից, երբ դրանցից մեկը մյուսի հանդեպ ոժանդակ կամ սպասարկու դեր է խաղում։ Այս պարագայում շեշտի և հնչյունական փոխհարաբերությունը՝ համընթաց իմաստակախ առավել նպաստավոր պայման է ստեղծում ոժանդակ բառերի և մասնիկների զոյացման պրոցեսում։ Բացի այս հիմնական մասնիկաստեղծ պրոցեսներից՝ կա մեր կարծիքով և մեկ ուրիշը, երբ բառարմատի վրա (առջևից, միջից թե վերջից) պատահական կերպով զարգանում է մի հնչյուն կամ հնչյունակոմպլեքս, որով ստեղծվում են երկու տարբերակ (կամ փոխհակ) բառաձևեր, մեկը առանց այդ հնչահավելման և մյուսը դրանով հանդերձ։ Իմաստական նրբերանգ մտցնելու տեսակետից, չեթե կարիք և լինում նոր բառի, այդ երկբորդ տարբերակը (այսինքն՝ հնչահավելուվով) ոգտագործվում է այդ պահանջի համաձայն, դառնալով նոր բառ, նոր վորակով. իսկ մասնիկը, վորը մտցնում է այդ իմաստատարբերությունը, անալոգիայով կարող է տարածվել և այլ դեպքերի վրա և դառնալ այդպիսով ներգործոն ու պրոդուկտիվ մի նոր մասնիկ։

2. ՄԱՍՆԻԿՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Խոսելով ձևական մասնիկների (ինչպես ավելի առաջ և ձևական բառերի) մասին, մենք տեսանք, որ դրանք կարող են ծագել ինքնուրույն բառերից կամ հնչյունական պատահական հավելման ոգտագործման հետևանքով, նշելով նաև որ լեզուներ կան (չինարեն և այլք), որ այդ մասնիկներից զուրկ են։ Այժմ մեզ մնում է տալ այդ մասնիկների գիտական սահմանումն ու կոնկրետ արտահայտությունները, այսինքն տեսակները, ինչպես նաև այդ մասնիկների զարգացումը և մահացումը։

Վերցնենք մի որևէ նախադասություն, որինակ, ուսանո-

դուհինները ձայնարկից վերադարձան իրենց տունը։ Վերջին դասաղրքյան բնագիտական արտահայտությունն այդ նախադասությունը լրիվ և վերջացած միտք և արտահայտում չէր։ «Ուսանողուհինները» չնչին պատճառով «վերադարձան» տարբերությամբ և «ճանապարհից ու տուն» տերմ պարագաներով. իսկ դրանց բառային ինքնորոշումը հոգեբանական տարբերակիչ կոմբինացիաների միջոցով ևս մենք արդեն չէր մեզում ավել ենք։ Առաջին բառը «ուսանողուհիները» նման տարբերակիչ կապակցությունների (կոմբինացիաների) շնորհիվ, այսինքն տարբ՝ կապի և բաժանման միանգամյան որոշման, մենք բաժանում ենք հետևյալ ձևաբանական-իմաստաբանական տարրերի կամ միավորների ուսումնասիրության։ այսինքն՝ վեց մասի, որոնցից առաջինը (ուս-) առաջին և հիմնական և ընդհանուր դասակարգ, այն է՝ սովորելու, ուսանելու դասակարգը, պահված ուսանել, ուսուցիչ, ուսում, բիրտ և նմանների մեջ. իսկ -ան-մասնիկը, այժմ մեզ համար միասած, մի ժամանակ ավել և պրոդուկտիվ այդ «ուսանել» գործողության տևական և անկատար առանձնացվածութ, ի տակադրություն անցյալ կատարյալի բնի (հետադարձ կերպիչ) վորոշյալ և կատարված տարածին։ Ող ածանցը ավել և ուսան- բնին ավելի առանձնորոշ կերպարանք, այն է՝ ներգործող անձի գաղափար, -ուհի մասը այդ «ուսանող» միանգամյան վորոշ գաղափարի հատկանիշը (առնություն) իմաստ տալին, իսկ վերջին -ը մասնիկը մարդանում և վորոշյալ կամ հենկրետացրած մասնաւ ենթ վերջնական բառը—«վերադարձան», այստեղ նույն ձևով վարվելով մասնատում ենք հետևյալ ձևա-իմաստական կատրները. վեր-ադարձ-ան (4 կատր), վորոնցից գարձ- մասը հիմնական գաղափարն է տալիս, վեր- մասնիկը վերաբերում է յուր գտնվելուն կամ դիրքորոշության, -ա- կապի ձևա-իմաստական ընդհանուր կերպած և և դա գարձել և տալ տեղափոխության մի միացություն, բնական բավարարելին դեռ կենսունակ, -ան վերջամասնիկը յուրյ և տալիս անցյալություն (կատարված կերպով), դեմք, թիվ, սեռ, ընդհանուր ձևչպիսով մենք տեսնում ենք, վոր կան այնպիսի ձևաիմաստական կատրներ, վորոնք ունեն հիմնական նշանակություն, տալիս են տեղեկություն և հիմնական գաղափար, ինչպես եր ուս- և գարձ- մասերը քննած բառերում։ Ձևաբանական և իմաստական անալիզով այդ անբաժանելի մասը (неанализируемая часть) կշռում են բառի արմատ, կամ հիմնական մորֆեմա, հիմնական ձև.

վեր- մասնիկը դառնալ դադարելին տալիս է ավելի կոնկրետություն (=դեպի յետ, նորից), վորով այդ դառնալ բառի վորակը փոխում է, առնչվելով նոր բառ, նոր վորակի բառ, իսկ -ան վերջավոր մասնիկը (վերադարձ-ան) ծառայում է միայն այդ ձևակերպված նոր բառի հարաբերությունները վորոշելու դեպի «ուսանողուհիները» (յինչական), այսինքն՝ տալիս է թվի ու հոդվածի (հոդվածի), դեպքի (III դեպք), անցյալի գործողության և այլնի ցույն վերջիններիս «ճաշարանից» ձևավորությունը, ասած այդ կրաժանելիներիս ճաշ-արան-ից (դժվար թե ճաշ-ա-րան-ից), ուր ճաշ-ը տալիս է ճաշելու հիմնական դադարելը, ա-արան-ը դրա տեղն ունենալը մի ինչ վոր տեղում, իսկ վերջին ա-ից ժամանակը մեկնության (դուրս գալու) կետն և ժամանակում վերադառնալ գործողության համար, այսինքն՝ կապում է ճաշարան բառը, վորպես անշարժման տեղի պարագա հիմնական ասացողության («վերադարձան») հետ:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր կան հիմնական և յերկրորդական ձևեր, իսկ յերկրորդականների մեջ՝ յերկու տեսակ ձևակազմական մասեր, առաջինը ցույց է տալիս վորոշ սահմանափակում այդ հիմնական դադարելի համար, նրա սահմանորոշումը կամ կոնկրետացումը ըստ նոր իմաստի, և դրանք կոչվում են «բառաստեղծականը» կամ «բառակազմության» յերկրորդական ձևեր (ինչպես վերջավորության «-արան» ճաշարան նորավորակ բառի մեջ, կամ «վեր-ա-»նախամասնիկը վերադարձան բառի մեջ, կամ «-ան-ող-ուհի-ներ-ը» վերջավորությունները «ուսանողուհիները» բառի նկատմամբ). իսկ յերկրորդը ցույց է տալիս բառի հարաբերությունը կամ կապը նախադասության մեջ այս կամ այն բառի հետ, մասնավորում է բառի այսպես ասած, շարահյուսական դերը (ֆունկցիան), բառի կապական հարաբերությունները: Այդ իսկ պատճառներով էլ պիտի սահմանել յերկու «ձևի կամ «մորֆեմի», մեկը հիմնական կամ արմատական, իսկ մյուսները յերկրորդական՝ բառաստեղծման յերկրորդական ձև և բառահարաբերության յերկրորդական ձև: Բուա լեզվաբան Ֆորտունատովը և նրա հետ յուր աշակերտները (Ֆորժեզնեսկին, Ուշակովը և այլք) այդ յերկրորդական ձևերը կոչում են նաև „формальные принадлежности“ (=ձևական պատկանելություններ): Մենք այստեղ դործ կածենք միայն «յերկրորդական ձև» անվանումը, ի նկատի ունենալով և գլխավոր կամ հիմնական ձևը, վորը չգիտեմ ինչու շատ լեզվաբաններ

«ձև» չեն կոչում. իսկ վերանք էլ, ինչպես գերմանական յերիտքերականական շկոլան և նրա հետևորդները*, այդ «ձև» անվան տակ հասկանում են միայն յերկրորդական՝ բառահարաբերական «ձևը»։ Ռուս լեզվաբաններից Բոդուեն դը-Կուրտենեն ևս, ինչպես մասամբ և Տոմսոնը, վոր «ձև» հասկացողությանը ավելի ընդհանուր բնույթ տվին։ Մենք յուր տեղում կտեսնենք, վոր լեզվի «ձև» ըմբռնումը ավելի ընդարձակ է, և յուր արտահայտություններն և գտնում մորֆոլոգիական (resp. քերականական) ընդհանուր լեզվական պրոցեսներում։

Յերկրորդական ձևերի կցումը, անկախ դրանց յերկու հիմնական բնույթից, կոչում են աֆֆիքսացիա։ Յերբ այդ աֆֆիքսացիան կատարվում է արմատի սկզբից, ապա դա կոչվում է պրեֆիքսացիա, իսկ յերկրորդական այդ ձևը՝ պրեֆիքս, յերբ այդ լինում է արմատի մեջում (ներսում)՝ ինֆիքսացիա, իսկ ձևը՝ ինֆիքս, իսկ յերբ այդ կցումը կատարվում է արմատի վերջից, ապա ունենք սուֆֆիքսացիա, իսկ ձևույթը՝ սուֆֆիքս։ Այդպիսի կցույթներ, վորպես ձևախմաստական ամենափոքր տարրեր (=մասնիկներ), կարող են լինել թե մի հատ և թե շատ, մանավանդ բառավերջում և սկզբում։

Ի նկատի ունենալով այդ կցույթ-մասնիկների վորակական տարբերությունը, մեկը վորպես նոր բառ ստեղծող, իսկ մյուսը՝ կապող և հարաբերող, հետևապես ի նկատի ունենալով և այդպիսի բառական կազմությունների վորակական տարբերությունները, մենք պիտի ընդունենք ռուս լեզվաբանների կողմից մասնիկների տրոհումը յերկու մասի նաև հորջորջման տեսակետից, բառաստեղծական մասնիկը կոչենք աֆֆիքս, բաժանելով ըստ կցման տեղի՝ պրեֆիքս, ինֆիքս և սուֆֆիքս, հայերեն համապատասխան՝ ածանց (նախածանց, միջածանց կամ ներածանց, վերջածանց)**։ Իսկ բառահարաբերական մասնիկը կոչում են «ֆլեքսիա»։

Այդ ֆլեքսիան յերբ լինում է բառավերջում կոչում են «վերջավորություն» (окончание)։ «Նախաֆլեքսիա», «միջաֆլեքսիա», կամ «վերջաֆլեքսիա» տերմիններ դոյություն չունեն. իսկ «ֆլեքսիա» անվան տակ յերբեմն հասկանում են և այլ

---

* Այդպես և մեզ մոտ և ընկ. Մ. Աբեղյանը։

** Ընկ. Մ. Աբեղյանը նույնպես հետևում է այս դասակարգման և հորջորջմանը։

ձևաբանական յերևույթ («ներքին ֆլեքսիա» անունով), վորի մասին մենք կխոսենք «մորֆոլոգիական պրոցեսները» գլխում։

Յերկրորդական ձևերը, մանավանդ բառահարաբերականները, ունենում են հաճախ շատ նշանակություն կամ ֆունկցիա։ Որինակ, մի ~ական (կամ ~կան) բառաստեղծական մասնիկը, այն է՝ ածանցը, այլ և այլ նրբություններ է պատճառում, նայած վորտիսի բառի յի կցվում. համեմատիր —մամեդական, նահապետական..., հայրական, մայրական, նկարչական, մանկական, հայկական, վրացական..., ձեմարանական, դինվորական, առևտրական, վկայական, ուրվական..., վարձկան, մուրացկան, լծկան, խոռվկան, ծննդկան... մեկական, յերկուական..., անբժշկական (=անբժշկելի), անբուժական, անդրդվական և այլն։ Կամ մի ~իկ մասնիկը հետևյալ բառերի մեջ՝ ռազմիկ, մարտիկ..., շնիկ, փոքրիկ, հայրիկ..., հնդիկ, պարսիկ, տաճիկ..., մարդիկ։ Կամ մի ~ուստ մասնիկը՝ հագուստ, զալուստ, վախուստ.., բայց՝ վերուստ, ներքուստ, արտաքուստ և այլն։ Ի հարկե այդ վերջին դեպքերում ունենք մի քանի տարբեր «~իկ»-եր և յերկու «~ուստ»-եր, վորոնք միայն արտաքին հնչյունական նմանություն ունեն. հետևապես դրանք տարբեր, բայց համահնչյուն մասնիկներ են, ինչպես ունենք այր (=քարանձավ), այր (=տղամարդ) և այրել (=վառել) կամ ռուսաց мой (=իմ) և мой (=լվա), три (=յերեք) և три (=տրորիր тереть բայից) և այլն և այլն։ Հետևապես մի ածանց կարող է տարբեր առումներին նրբություններ ունենալ (ինչպես ~ական - ‖ կան մասնիկը) և մի քանի տարբեր բովանդակության ածանցներ արտաքինով միանհնչյուն լինեն։ Ավելի քիչ է պատահում, վոր տարբեր արտաքինով (այսինքն՝ հնչյուններով) մասնիկները ունենան միևնույն բովանդակությունը, ինչպես ~իկ, ~ակ, ~ուկ նվազականները. լեզուն խուսափում է այդպիսի բնույթից. բայց հոմանիշ ֆունկցիա կարող են կատարել այդ տարբեր ձևի մասնիկները, ինչպես ~ային և ~ական, ինչպես ~արան և ~անոց, ինչպես ~ող, ~ուն և այլն և այլն։ Համակարգ բաղմաֆունկցիոնալ են, և այն էլ «ֆլեկտիվ» (թեքական) տիպի լեզուներում բառահարաբերական մասնիկները, որինակ, մի ~ից վերջավորությունը (ճաշարանից, դյուղից...) ցույց է տալիս, թե հոլովը (բացառ. հոլով) և թե թիվը, մի ռուսաց стол-у ձևի*

---

* Ներքին ձև ասելով հասկանում են, փոխաբերական իմաստով իհարկե, նաև ամբողջ ձևավորված բառը։ Սա իհարկե ճիշտ արտահայտություն չէ։

մեջ -ու վերջավորությունը (ֆլեքսիան) ցույց է տալիս թե քիվը (յեզակի), թե հոլովը (տրակ.) և թե սեռը (արական)։ Այստեղ ևս կարող է արտաքինով նմանանմնչյուն մի մասնիկ հանդես գալ, յերբ անուանվնք իրարին գրանց վորակը։ Ինչպես, որինակ, русскую несу братъ книгу նախադասությունն մեջ յերկք բառերն էլ ունեն արտաքուստ նման ու, բայց ի հարկե այստեղ յերկք տարբեր մորֆեմներ են, քանի վոր բովանդակությամբ տարբեր են. մեկը (нес-у) ցույց է տալիս գեմք, քիվ, ժամանակ, սեռ (залог), յեղանակ (изъявительное), մյուսը՝ брат-у բառի մեջ տրակ. հոլովի ֆունկցիան, յեզակի քիվ և արական սեռ (род), իսկ վերջինը (книг-у) ցույց է տալիս հոլով (իբրև անմիջական օբյեկտի ձև), յեզակի քիվ և իգական սեռ։

Հետևապես տարբեր մասնիկներ են, յերբ վորակային տարբերություն կա բովանդակության տեսակետից, իսկ հնչյունորեն նման են (հազուս, վախտուս.. և վերտուս, ներքուս և այլն)։ Նույնպես տարբեր մասնիկներ են, յերբ տարբերություն կա ձևական, այսինքն հնչյունական տեսակետից, իսկ բովանդակությամբ նույնն են (որինակ՝ շինի, անիկ.., գնաուկ, դռնուկ.. գառնուկ, ձագուկ... հայկ. բառերի -իկ -ակ և -ուկ մասնիկները)։

Յերբ ձևական բառը սոսկ ժամդակ և ապատարիկ չի, այսինքն ինքնուրույն բովանդակություն չունի, միացած մինչև իսկ մի շեշտով հիմնական բառի հետ, տալա ձևական մասնիկը ավելի ևս այդ բնույթն է ստանում։ Մասնիկը ստանց բառի մեռած է, բայց այդ մասնիկը բառի հետ կապակցում է վորոշ նշանակողական կամ հարաբերական ֆունկցիա։ Ցեվ, ինչպես ասվել է, բառաստեղծական մասնիկը նոր բառ է ստեղծում այն բառամասից կամ բառարմատից, վորին նա միանում է, որինակ՝ մեծ —մեծավոր, մեծավոր—մեծավորական, մեծավորական—մեծավորականություն և այլն։ Այսպես և բնկել—բնկեցնել, բնկեցնել—բնկեցվել և նմաններըւ Իսկ բառահարաբերական մասնիկը կապում է հարաբերակցում է այդ նորակազմ և ընդհանրապես հիմնական բառերը կամ բառարմատները։ Ամեն մի բառաստեղծական ածանցներով (մասնիկներով) կոչվում է «հիմք» (բուն, основа), վորի վրա միայն ավելանում են բառահարաբերական մասնիկները՝ ֆլեքսիաները։

Բառահարաբերական կամ կապական մասնիկների կցումը կոչվում է նաև թեքում (флектирование), վորի ուսումնքը կոչվում

Իր մի ժամանակ* ձևաբանության կամ մորֆոլոգիա (հուն. ձևաբան և գրություն խոսք բառերից)։ Ձևաբանության այս բնորոշումը, ինչպես տեսել ենք և դեռ ստորև կտեսնենք, շատ սահմանափակ է։

Բառահարաբերական մասնիկները այդ շարահյուսական դերը, որ անուններին կամ բայերին, բաժանվում է յոթ հիմնական տարբերակների՝ հոլովման մասնիկներ և խոնարհման մասնիկներ, որա հետևանքով բնորոշը բաժանվում է նաև հոլովման և խոնարհման։

Հոլովվում են առարկաներ կամ այդպիսին մտածվող հատկություններ և հատկանիշներ, ինչպես և դրանց փոխարինող դերանուններ։ Եվրոպական լեզուներում մինչև իսկ գոյական բառերը, ամբողջ նախադասություններ և այլն և դրանք հոլովվելիս հոլովական վերջավորությունները կոչվում են հոլովներ (լատիներեն casus, ռուս. падеж) և բաժանվում են շատ տեսակների, նայած թե առարկա մտածվող բառը ինչ հարաբերության մեջ է մտնում առարկայի հետ։ Եվրոպական լեզուներում գործողության հարաբերությունը դեպի գործողությունը (դրությունը), ապա այդ արտահայտվում է ուղղական հոլովով (լատ. nominativus, ռուս. именительный пад.), որն է նախադասության մեջ և ինքնիշխան։ Իսկ մեկն առարկան, որ չի գործողն է (agens), այլ որի վրա է միտված գործողության ուղղությունը կամ, այլ կերպ ասած, այդ գործողության կրողն է (patiens), ապա այդ կրողի հարաբերությունը բոլոր լեզուներում արտահայտվում է հայցական հոլովով (լատ. accusativus, ռուս. винительный падеж). Իսկ մարդ· ազգին կամ վերաբերմունք որ կատարվում է գործողությունը, դրվում է տրական հոլովով (լատ. dativus, ռուս. дательный)։ Այն առարկան, որի հետ կատարվում է գործողությունը, կարող է ունենալ մարդակից հոլովածև (sociativus), թեպետ շատ լեզուներում այդ համընկնում է ձևով այն հոլովածևի հետ, որը ցույց է տալիս առարկան, որի միջոցով է այդ գործողությունը կատարվում (instrumentalis, творительный, գործիական)։ Առարկան, որի մեջ է կատարվում գործողությունը (դրությունը) նշվում է տեղական (=ներգոյական) կոչված հոլովածևով (locativus, местный п.)։ Մի առարկայի հատկությունը մյուսին մեծ մասամբ նշվում է տե-

*Նոր քերականներին (младограмматики), ինչպիսիք են Բրուգմանը, Լեսկինը, Պաուլը և ուրիշները։ Մ. Աբեղյանը նույն ուղղության է հետևում

ական» հոլովաձևով (genetivus, родительный п.)։ Կան նաև «բացառական» հոլով (Ablativus, отложительный)*, illativus («ի քաղաք», в город)**, superessivus (քաղաքի վրա, на городе), sublativus (на город, դեպի քաղաք), elativus (из города, քաղաքից), adessivus (у города, քաղաքի մոտ) և այլն***։

Իսկ յերբ բայը, լինելով ստորոդյալ կամ պարագայական բառ, այլևայլ հարաբերությյան մեջ է մտնում իրեն հարաբերող առարկայի հետ, այսինքն՝ յերբ ստանում ենք խոնարհման յերկրորդական ձևեր (խոնարհում=լատ. conjugatio, ռուս. спряжение), ապա այդ հարաբերությյան ձևերի միջոցով նշվում և նախ հենց ինքը ստորոդությյունը յենթակային, վորպիսի ձևը մեծ մասամբ տալիս է և դեմքի ու թվի, ինչպես և ժամանակի, սեռի ու յեղանակի ֆունկցիան։ Բայց սա իհարկե պարտադիր չե, լեզուներ կան, ուր այդ բոլորի համար գործ է ածվում առանձին ձև, այսինքն՝ յուրաքանչյուր ֆունկցիային (թիվ, դեմք, ժամանակ, սեռ=залог և սեռ =род, յեղանակ= наклонение, вид=կերպ) տրվում է առանձին ձև։ Լեզուներ կան, ուր բայի հետ տրվում է նաև որյակտի (ուղիղ և կողմնակի) հարաբերությյան նշանը, ինչպես սեմիտերենում, կովկասյան լեզուներում (և վրացերենում), ամերիկյան բնիկների մի շարք լեզուներում և այլն։ Բայերի մեջ տարբերում ենք անցողական բայեր (verbum transitivum), յերբ գործողությյունը ուղիղ խնդիր է վերցնում, և վոչ անցողակ (verbum intransitivum), յերբ այդ չի կատարվում. վերջինս լինում է չեզոք և կրավորական բայերի նկատմամբ. ռուսերենում բայերի այդ կատեգորիզացիան կրում է „залог“ անունը, թեպետ ընդհանրապես լեզվագիտությյան մեջ բայերի այդ սահմանումն և ընդունված (ներգործական բայ verbum activum, չեզոք բայ verbum medium և կրավորական բայ verbum passivum)։ Յեղանակները (լատ. modus, ռուս. наклонение) ցույց են տալիս խոսողի վերաբերմունքը դեպի ասացողությյունը, դեպի բայը. յերբ ստորոդյալ հարաբերումը (հատկանշումը) յենթակային խոսողը պատկե-

---

* Որինակ от города՝ հայոց «քաղաքից» տալիս է թե Ablativus-ի և թե elativus-ի ֆունկցիան։ Elativus-ը ռուսերեն կոչվում է „Исходный падеж“։

** Այդ հոլովաձևը կա, որինակ, վրացերենում, ուրարտական մեռած լեզվում (խալդերենում) և այլն և կոչվում է ռուսերեն „направительный падеж„ (գերմ. Richtungscasus)։

*** Տես А. Томсон, Общее языковедение, 1910, էջեր 320—321

բացնում և որպես իրական գործողություն կամ դրություն, ապա այդ ձեղնակը կոչվում է սահմանական (modus indicativus, изъявительное наклонение), *յեթե որպես հնարավոր՝* potentialis *կամ պայմանական ստորադասական* (conjunctivus), *յեթե որպես ցանկություն, իղձ՝* optativus («ըղձական»), *յեթե որպես հրաման* imperativus (հրամայական, повелительное) *և այլն և այլն։ Հայերենում սահմանվում են նաև յենթադրական և հարկադրական ձեղնակներ։ Կա իմարկե և ժամանակի ձևական արտահայտություններ, յերբ գործողությունը (դրությունը) կատարվում է խոսելու ակզիայի հետ (միաժամանակ), ապա այդ ներկան է* (praesens, настоящее время), *վորը կարող է լինել կոնկրետ և շարունակական (ընդհանուր), յերբ գործողությունը խոսելու մոմենտին նախորդել է՝ անցյալ* (praeteritum, прошедшее вр.), *վորը նամանավանդ այլևայլ կոնկրետավորում է ստանում (ըստ տեվողության, կատարելության, անցյալի մի այլ մոմենտի նկատմամբ և այլն), ինչպիսիք են* perfectum, plusquamperfectum։ *Նշվում են լեզվաբանների կողմից (որինակ Սեպիրի)* նաև հետևյալ տերմիններով «անցյալներ», ինչպես անցյալ անվորոշ* [praeteritum], *ժողովորդական անցյալ, հեռավոր անցյալ, մյութական անցյալ (*мифическое прош.), *կատարյալ անցյալ, նախնական անցյալ* (предварительное прош.)։ *Այսպես գոյություն ունեն և այլևայլ ապառնիներ, վերցրած խոսելու մոմենտի հանդեպ* (futurum, будущее вр.), *ինչպես և անցյալ մի մոմենտի նկատմամբ (համեմատիր—կխոսեի, խոսած կլինեի, ֆրանս.* j' aurai dit, *գերմ.* ich werde gesagt haben), *վորը լատիներեն կոչվում է* futurum exactum։

Մանրիկներով թեքումը յերբեմն բավական տարբերվում է, նայած թե հոլովումն է վերցվում թե խոնարհումը։ Որինակ, ֆրանսերենը հոլովաձևերը գրեթե կորցրել է, բայց բայաձևերի մեջ հարուստ է, իսկ, որինակ, ռուսերենը հարուստ է հոլովման ձևերով, իսկ աղքատ՝ խոնարհման ձևերի մեջ։ Հայերենը (ինչպես և վրացերենը) յերկու տեսակետից էլ թեքման (հոլովման և խոնարհման) հարուստ ձևեր ունի։ Որինակի համար կմատնանշենք մեզ Պոլսո հայոց բարբառի բայական պարզ և բաղադրյալ հետևյալ կազմություններըը, պահելով արտասանական ղրանց գրությունները այժմյան նոր ուղղագրության հնչումով. դը սի-

* *Տես նրա դիրքը* „Язык" *էջ* 84. „прошедшее время, напр., может, быть неопределенным прошедшим, ближайшим, отдаленным, мифическим, совершенным, предварительным„.

բեմ (ներկ.), դը սիրեմ գոր (ներկ. շարունակական), դը սիրեի (անց. անկ.), դը սիրեի գոր (անկատ. շարուն.), սիրեցի (անցկատ.), բիդի սիրեմ (ապառնի), բիդի սիրեի (անց ապառնի), սիրեմ (ստոր. ներկ.), սիրեի (ստոր. անց.). իսկ ըսիրեցը դերբայով—սիրեր եմ (վաղակ. ներկ.) և սիրեր էի (վաղ. անց.): Սոսկալի բարդ են «սիրած» (=սիրած) դերբայով, ինչպես և ըսիրելուց դերբայով ժամանակները—սիրած եմ, սիրած եմ յեղեր, սիրած դըլլամ, սիրած դըլլամ յեղեր, սիրած դըլլամ գոր, սիրած դըլլամ գոր եղեր, սիրած ըլլամ (նե), սիրած ըլլամ (նե) եղեր, սիրած եղա, սիրած բիդի ըլլամ, սիրած բիդի ըլլամ եղեր, սիրած ըլլալու ըլլամ (նե), սիրած ըլլալու ըլլամ (նե) եղեր: Այս բոլորը կարելի չե կրճատել, փոխանակ ըսիրածը դերբայը ըսիրելուց դերբայով:

Ցեքն վերցնենք բառաստեղծական և բառահարաբերական յերկրորդական ձևերի, այսպես ասած, ներքին տիպիզացիան իրենց քանակով և մորակով, ապա այդ իրավամբ արտացոլում և լեզվական ժառանգության, այսինքն՝ և հասարակական ամբողջ աշխարհայացքի պատմական դրությունները: Ճիշտ և ընդհանուր. Սեռերը, յերևելով նախադասության այդ մասնիկներին բազմազան արտահայտության և տարբերության տեսակետից, յերբ ասում ե թե «նախադասությունը ավելի շուտ պատմական և անգիտակից հոգեբանական ուժերի մի արդյունք ե, քան նվիճումների արտմաբանական մի սինթեզ, որոնք [նվիճումները] ընկալվում են իրենց խիստ անհատականության [=յեզակիության] մեջ*: կար մի ժամանակ յերկակի թիվ, յեռակի թիվ, բնական Ամերիկայի բնիկները այդ դեռ պահում են. Թվի այդպիսի կատեգորիզացիան իրեն հասուկ մասնիկներով անցյալի մտածողության արդյունք և. հնդեվրոպական շատ լեզուներ (հունարեն, սլավոներեն) դեռ յերկակի թիվ պահում էին, բայց վորոշ ժամանակից հետո, կապված մտածողության հետ, այդ վերանում է**: Ցեքն ընդհանրապես վերցնենք անվանական այդ թվերը, ապա անհրաժեշտ ենք, վոր կան—յեզակի

---

* Предложение есть продукт скорее исторических и бессознательных психологических сил, нежели логического синтеза элементов, схваченных в их строгой индивидуальности» (Язык, եջ 70):

** *Մեր հայոց բարբառները անգ-անդ դեռ եչին ամում յերկակի թիվը, ինչպես աչվի, ոտվի, ձեռվի, ընթվի... մի մասնիկով:*

և հոգնակի, եզակի, երկրակի և հոգնակի, եզակի, յերկակի, յեռակի և հոգնակի, միական (единичное), բաժանական (распределительное) և հավաքական (собирательное)։ Այդ ժամանակ նկատվում է և բայերի մեջ (եզակի-հոգնակի, բայց և՝ եզակի, երկակի և հոգնակի)։ Շատ լեզուներ անունների մեջ ունեն հատուկ մասնիկներ սեռի համար, անձի և իրի համար, շնչավորի և անշունչի համար, հատարակի և հատուկի համար և այլն. իսկ Աֆրիկայի, Ամերիկայի և մի քանի այլ լեզուների մեջ (ժամանակ և հովհատյան) պահվել են դոյականների այլևայլ դասեր—խելացի թե անխելք,* տափակ թե գնդաձև՝ ըստ առարկայի արտաքինի և այլն։ Աֆրիկայի նեգրական վարշ ցեղերի մոտ ասելիք ավելի ուշադիր դասակարգում կա, յուրաքանչյուրը յուր հատուկ մասնիկովըստ դիմանական Մ. Ռեմոֆիեսի, այդ լեզուներում «ընդհանրապես մարդկային հասկները կազմում են մեկը այդ կատեգորիաներից. Ջուբր, հնդուհինները և հարվող կամ հասդ մարքիները կազմում են յերկրորդը. յերրորդը ընդգրկում է վայրը և ծառայությունը. չորրորդը՝ խոսք և խոսակցությունը, արհեստը. հինգերորդը՝ հողը յուր տարբեր կողմերով (avec ses divers aspects) և այն ամենը, ինչ նրանից յերևում է. վեցերորդը՝ ինչ վերաբերում է տարիա այս կամ այն տեղին...» և այլն և այլն**։

Մասնիկներ կան, որպես արտահայտություն հին (հնդեվրոպ.) մտածողության, որոնք տալիս են շատ բարդ «տարածական» հասկացողություններ։ Որինակ, յեթե մի ռուսերենով բավական և ասել „земледелец убивает утенка" (որինակը Մոսկվինն է), կամ անգլիացին the farmer kills the duckling, կամ գերմանացին der Bauer tötet das Entlein, կամ հայերեն «հողագործը սպանում է բադիկին» և այլն և այլն, ապա կան լեզուներ, որոնք առարկաների մեջ (հողագործ, բադիկ) յեղած տարածական հարաբերությունները, ինչպես և խոսողի և լսողի մեջ յեղած այդպիսի հարաբերությունները յուրահատուկ և բարդ կերպով են արտահայտում. այդ լեզուները այլ կերպ չեն էլ կարող խոսքը արտահայտել, հարկ տալով իրենց պատժական «կոնկրետ» մտածողությանը։ Որինակ, Ամերիկայի կուակ'յուտլ (куакъютл)

---

* Պահել է, որինակ, արխազերենը բայի հետ, վորպես օբյեկտիվ մասնիկ։

** Այս տեղը մենք բերել ենք հիշյալ գիտնականի այն հոդվածից, որը նա գետեղել է „Les langues du monde" հայտնի ժողովածուի մեջ. մեր ընդգծումները։

բնիկների ցեղի լեզվով պիտի այդ բերված նախադասության մասնիկներով արտահայտվեր—արդյոք տեսանելի չեն խոսողի համար և հողագործը և բաղիկը, թե դրանցից մեկը նրան տեսանելի չե. կամ թե այդ հողագործն ու բաղիկը ընդհանրապես տեսողության դաշտի մեջ են գտնվում, արդյոք, խոսողի և լսողի համար, թե ինչ վոր անվորոշ կետի վրա, վորի մասին միայն ժամանակվում է, վոր այդ կետը «այստեղ չե»։ Այլ բառերով ասած, սպանում է արդյոք այն հողագործը, վոր մեզ անտեսանելի չե, բայց գտնվում է դռան հետևում, ինձնից քիչ հեռու, իսկ դու [լսողդ] նստած ես ահա այնտեղ, ինձնից հեռու, թե սպանում է հողագործը, վորը ապրում է վորպես քո հարևանը և վորին այժմ մենք ահա այնտեղ տեսնում ենք։ Նմանը նշվում է և բաղիկի պատկանելության և հեռավորության մասին*։ Այստեղից յերևում է, թե վորքան բարդ են այդ պրիմիտիվ, բայց կոնկրետ մտածողության տարածական (ցուցական և պատկանելական) հարաբերական գաղափարները։

Նման կոնկրետություն են հայտնաբերում և դնչքերը, որինակ մի «մենք» բազմազան մտածողությամբ և ըմբռնվում. կամ հոգնակի «յես» դերանվան համար, կամ այդ «մենք»-ը նույնչափ հեռու յե «յես»-ից, ինչքան և «դուք»-ից կամ «նա»-յից. յերկու դեպքն էլ կան։ Հետո ընդգրկում է արդյոք «մենք»-ը նաև նրան, վորի հետ խոսում են, թե վոչ, այսինքն՝ ասացվում է «ինկլյուզիվ» ձև, յերբ այդ խոսակիցը ևս հասկացվում է «մենք»-ի մեջ, և «եքսկլյուզիվ ձև», յերբ այդ չի հասկացվում**։

Բազմազան ձևական (մասնիկներով) արտահայտություն են գտնում բայերի մեջ այսպես կոչված «կերպերը» (виды), վորոնցով ստեղծվում են նոր վորակի բայեր։ Այդ կերպերն են— վայրկենային (моментальный), տևական (дуративный), շարունակական (континуативный), սկզնական (инцептивный)***, դադարական (цессативный), տևական-կրկնողական, (дуративно-итеративный), հետևանքային (результативный) ինտենսիվ կերպ (intensivum), intensiv-iterativum ևայլն****,

---

* Տես Ե. Սևպիր, „Язык" էջ 72

** Այդ կողմից ուշադրավ և որինակ., ևավա կղզու բնիկների լեզուն, վորն արտահայտում է մեր հիշած «մենք»-ի այդպիսի ըմբռնումները։

*** Լատիներենում դրանք կոչվում են verb incohativa (esco մասնիկով, որինակ rubeo «կարմրել», բայց rubesco «սկսել դառնալ կարմիր» և այլն)։

**** Տես Սևպիր (ibid., 84)։ Վերջին յերկուսը iterativum և intensiv-iterativum մեր հավելվածքն է։

Հայերենում այդ մասամբ տեղի է ունենում բայերի կրկնողությամբ (ձգձգել, քաշքշել և այլն), որով ստեղծվում է կրկնողական կերպ (iterativum), թեպետ կա և մանրիկով intensiv-iterativum կերպ (բռնկել բայց բռնկաել, կոտրել, բայց կոտրտել և այլն). իսկ բարբառներում, ինչպես ասվել է, «կալել» բայի փոխակերպված խմաստով («սկսել բռնել»), ստեղծվում են սկսողական (начинательный, инцептивный) կերպը, ինչպես՝ սառցակալել, ջիդարակալել և այլն*։ Ռուսերենում յերկու հիմնական կերպեր են տարբերում—կատարյալ և անկատար (бросить и бросать, достигнуть—достигать...) իրենց յերկու տեսակներով՝ բազմանգամյա (многократный) և միանգամյա (однократный). համեմատեր плакать (=տևական կերպ), заплакать (կատարյալ՝ սկսնական), поплакать (=դադարական), поплакивать (բազմանգամյա՝ խտերատիվ), всплакнуть (=միանգամյա՝ վայրկենական)։

Յերկրորդական ձևերով են արտահայտվում լեզուներում յերբեմն և խոսողի հաղորդման իմացությունը, այսինքն՝ թե ինչ աղբյուրի և բնույթի է այդ հաղորդման իմացումը, իր հաղորդողի փորձից և տացվել, թե ուտարի (ուրիշի) խոսքով և, և կամ թե դա խոսողի յեղրակացություն է։ Հիշենք վրացերենում բայավերջի «ი» մորֆեմը, որը նշանակում է, թե ասույթը լինում է ըստ ուրիշի կարծիքի, նման մասամբ ռուսաց կիսամասնիկ-դեյին (он-де..), мол-йн (он-мол.) կամ „дескать„ (он дескать..)։

Մենք արդեն խոսել ենք հոլովման և խոնարհման մասնիկների շարահյուսական դերերի մասին։ Ընդհանրապես հոլովմամբ արտահայտվում են տարածական-հարաբերական ֆունկցիաներ, իսկ խոնարհմամբ գործողության (դրության) ժամանակային, կերպային յեղանակային և այլն հարաբերությունները։ Կարծես թե այստեղ գոյություն ունի նյութի և շարժման անդրադարձումը լեզվական մտածողության մեջ, ուր առաջինը (նյութականը) արտահայտվում է իրի (առարկայի) փոխհարաբերության ձևերով, իսկ յերկրորդը (շարժումը) հատկանշի (բայի և՛ ածականի) ժամանակային, յեղանակային և այլն հարաբերակցության մեջ։ Դեպք, թիվ և սեռ (род) արտահայտում են և՛ գոյականները (և դերանուններ-

---

* Համեմատեր և -ակ (կամ -ազ) հին, թերևս խեթերենից վերցրած, վերջածանցի նման դերը մի շարք բայերի մեջ։ Թրաբարի «չ»-ն (վախչել, կառչել..) յեղել է մի ժամանակ սկսնակ կերպի համար։

բը) և՝ բայերը (դիրքս, դրքիս, դրքիցս...) գիտեմ, գիտես, գիտե...), այնպես որ հոլովման և խոնարհման հիմնական տարբերությունը նշանը այդ է, ինչ ասվել է՝ Շաթահյուսական անանկնաիոց բայաստրոդյալի համար ամենաբնորոշն է ինդոիրն «առարկայի» (հատկանշի հատկացումը գոյականին—ինքնուրույն)։ Լեզուներ կան, որոնք այդ շարահյուսական և ձևաբանական կապը ինքնուրույն և առարկայալի մեջ փոփոխում է, նայած թե բայը, որինակ, չնորոշ է թե ներգործական, ինչպես, որինակ, վրացերենում, որոնք ներգործական բայերի անցյալ կատարյալի հետ ինքնական դրվում է առանձին հոլովաձևով (-man վերջավորությամբ), իսկ մյուս դեպքերում՝ «ուղղական» կոչված հոլովաձևով. համեմատիր նաև՝ ուրարտական (խալդական) մեռած լեզվի նման տարբերացումը չեզոք և ներգործական բայերի և ինքնականների վերջավորությունների մեջ (Xaldise aruni «խալդը տվեց», բայց Xaldini uštabi «խալդը արշավեց», ուր թե բայական վերջավորությունները են տարբերվում և թե ինքնակայի)։ Կազմված մատենագրության հին վիճակի հետ՝ սկզբում հաճախ եր «առաստիճ» կոչված կոնստրուկցիան, որոն այժմ «ակտիվ»-ի ըմբռնում և պատճառում խոսողին, ինչպես գրաբարի եմ գրեալ է=ես գրել եմ կամ մի քրդերեն man nəvisi-a («իմ գրեալ է»)=ես գրել եմ։ Լեզուների մեջ սա հաճախ և պատահում բացի այդ, ինքն այժմ լեզուներում բայը չի տալիս յուր վերաբերմունքը գնդի անմիջական և հոգեկան որչեկը (քանի թե գնդի ինքնական), այլ այդ արտացոլում և «նոր» տիպի ժամանակություն, հակառակ հնին և կոնկրետին, ինչպես անանում ենք ամերիկան, վոլկասյան և այլ լեզուներում (վրաց բայը, որինակ, ասելիս և այդ աորյեիսիվ և ուղղակի ու անուղղակի որչեիսիվ բայաձևերինները), իսկ մատենիների կցումը կարող է լինել թե բայից առաջ, թե յետ և թե միևչեհակ բայի մեջ (արմատի մեջ). համեմատիր վրաց ar-«լինել» բայի ներկան me v-ar, šen x-ar, igi ar-s (=ես եմ, դու յես, նա է...), ուր բացի սովորական դերանուններից me, šen, igi, վորոնք անկախ բառեր են, բայի հետ կրկնվում է v-, x- նախավորություններ* և -s վերջավորության միջոցով հարաբերությունը այդ դեմքերին (թվին, ժամանակին և այլն)։ Մենք

* «նախավորության» դեր է խաղում գրաբարում այսպես կոչված աուգմենտը, որը կցվում է սորիսաի (անց. կատ.) յերբորդ դեմքին, յերեք բայը միավանկ է (եկն, եաև, եբաց, եյաց... եաւ, եօծ...)։

մասամբ լեզուներում իշխում է վերջամանիկային կցումը («суффиксация»), թե հոլովման և թե խոնարհման ժամանակ։

Ցեղի ինքնան մի ձևը (մասնիկը) կարող է շատ գոնե նշանակություններ արտահայտել (օրինակ стол-ов բառի «ов»-ը՝ սեռի, թվի և հոլովի ֆունկցիա, կամ бер-у բառի «-у»-ն՝ դիմքի, թվի, սեռի (=залог), ժամանակի և այլն ֆունկցիաներ), ապա և մի ֆունկցիան կարող է մի նախադասության մեջ և շատ ձևերով արտահայտվել, ինչպես «նա գնաց յուր տունը և մյուս կողմից՝ նրանք գնացին իրենց տունը, ուր գիմքի և թվի ֆունկցիաները բազմազան (3 տեսակ) կերպով տարբերվում են։ Հոլովն և սեռը (род), որը կարող է կրկնվել թե գոյականի (resp. յինքնակայի), թե բայի (resp. ստորոգյալի) և թե մյուս բառերի հետ, իբրև կամ առանձին մասնիկ, թե հոլովման կամ խոնարհման մասնիկի միջոցով (համեմատեր մասամբ հնից ռուսաց он пошел-она пошла)։ այդ ևս ավելի հինն լեզուներին ժամանակական արտահայտություն են, որ ամենից լավ պահվել է Ամերիկայի և Աֆրիկայի բնիկների լեզուներում։ Սեմիտներենը խոնարհման մեջ ևս տեսի դիֆֆերենցիացիան պահել է։

Վերջացնելով մասնիկների կամ յերկրորդական ձևերի առանձնաձև ու տեսակավորումը՝ ըստ իրենց բովանդակության և ձևավարանական դրության, մնաք տեսանք, որ դրանցից մի մասը արմատական (հիմնական) և ընդհանուր գաղափարին պատճառում է մի նոր նշանակություն կամ բացատրում, խմաստի մի նոր հավելում կամ կոնկրետացում, որով առնչվում և նախորդից մի նոր բան, նոր բանխմաստով ու վորակով։ Իսկ յերբ այդ լեզվական կազմությունը առնվում և կոնկրետ նախադասության (resp. շարահյուսական կապակցության) մեջ, վորպես դրա քիչ թե շատ մի ինքնուրույն ոտիկը, ապա այդ լեզվական («իրականան, «ժամանակ») նշանակության հետ առաջանում և նաև մի նորը՝ ֆունկցիոնալը, բառահարաբերականը, որը կարող և արտահայտվել նույնպես մասնիկով (յերկրորդական ձևով), ինչպիսին են հոլովման կամ խոնարհման կամ այլ մասնիկները, թեպետ այդ արտահայտությունները կարող են լինել և այլ (ոչ մասնիկային) միջոցներով։

Առաջին տիպ, այն է՝ բառաստեղծական մասնիկները, որոնք բառարմատի հետ միասին ավյալ նախադասության (կամ ավելի փոքր կապակցության) ժամանակամիջոցից անկախ են ծագում և հետևապես ինքնուրույն են,—ինչպես և գոյացման ժամանակ էլ կարող էին առաջանալ անկախ այս ու այն նախա-

դասութ յունից (resp. կապակցութ յունից),—կազմում են բառաբաժան հետ նոր բառակազմութ յան «ժառանգիլ (նյութական) բովանդակութ յունը», իսկ նախադասութ յան մեջ յեղած կապակցութ յան հետևանքով առաջացած «բառահարաբերական» մասնիկները ցույց են տալիս ռելացիոն գաղափարներ՝ կոնկրետ թե պարզ (վերացական)։

Ցեվ այսպիսով, առանձին բառը, ինչպես Սեպիրն է ասում, արտահայտում է կամ պարզ պատկերացում (գաղափար), կամ փոխադարձորեն կապակցված և հոգեբանական միասնութ յուն կազմող գաղափարների մի կոմբինացիա*։

Բայց լեզուներ կան, ինչպես եսկիմոսներինը, Ամերիկայի բնիկների «նուտկա» կոչված հնդիկներինը, մեծ մասամբ և սեմիտներինը, վորտեղ յերկու կամ ավելի գաղափարներ չեն կարող մի նոր բարդութ յուն («բարդ բառ») ստեղծել, և արմատական ռեալ գաղափարը ստիպված արտահայտվում է մասնիկի միջոցով, լեզվի բազմասինթետիկ ձևաբանական սպեցիֆիկային հատապատասխան, ուր այդ լեզվի շարահյուսական կապակցութ յունը համադրութ յամբ („синтезирование“) և տրվում։ Ցեվ ձևաբանական այդ դրութ յունից (լեզվի ձևաբանական այդ տիպից) յեղած արմատական ռեալ գաղափարները ևս արտահայտվում են վոչ թե անկախ բառերով, այլ կցվող մասնիկներով։ Այս չի հակասում մասնիկների վեր նշած բովանդակական դերին, քանի վոր «բառաստեղծական» կոչված մասնիկը (=ածանցը) նույնպես ժառանգիլ բովանդակութ յուն և պատճառում հիմնական ընդհանուր գաղափարին, ինչպես այս հատվածում նշվել է։ Որինակ, արմատներով բարդութ յուն կազմող մի վորևե լեզվում մի այնպիսի նախադասութ յան մեջ, ինչպես «յերբ, նրանց ասելով, նա չորս որվա բացակայութ յան մեջ եր» մենք առնվազն յերեք արմատական ելևմտնտներ կունենայինք («բացակայել», «չորս», «որ»), ամերիկյան բնիկների այդ «նուտկա» լեզվում արմատական ելևմտնտը արտահայտվում է միայն «չորս» անկախ բառով, իսկ մյուսները արտահայտվում են միայն բառաստեղծական մասնիկներով (վերջածանցներով), վորոնք նույնչափ կոնկրետ նշանակութ յուն են տալիս, ինչ վոր և արմատական անկախ ելևմտնտը**։

---

* «Отдельное слово выражает либо простое понятие, либо комбинацию взаимоувязанных и образующих психологическое единство понятий» («Язык» էջ 64)

** Տես Սեպիրի մոտ „Язык“, էջ 52։ Սեպիրը բերելով այդ նախադասու-

3. ՄԱՍՆԻԿՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԶԱՐԳԱՑՈՒՄԸ)

Մենք ցույժ խոսել ենք մասնիկների ծագման (առաջացման) և վորակի ու տեսակների մասին, այսինքն՝ թե լեզուներում ինչպես և ասցել այդ մասնիկների լեզվաշինարարական պատմական դերը, նշանակությունը։ Մնում է մեղ ցույց տալ դրանց հաշորդ զարգացումը, փոփոխությունները և անհետացումը՝ մահացումը։

Արդեն մասնիկների ծագման մասին խոսելիս մենք տեսանք, վոր ձևական այն բառերը, վորոնք բառաիմաբերական *ֆունկցիա չեն ցույց տալիս, ինչպես, որինակ, ընդ, ու և այլն (մեծ մասամբ՝ տարածական գաղափար), բարդության (բաղադրության) դեպքում հանդես են գալիս վորպես բառաստեղծական («դերբիվացիոն») գաղափար արտահայտող յերկրորդական ձև, ինչպիսիք են, որինակ, ընդմիշտ, ընդարձակ, դժտանել, աքցրել (< գքցրել), առյուծ և այլն։ Իսկ առաներևում, որինակ, ուր տեսնում ենք նման երևույթներ (ինչպես և հնդեվրոպական շատ լեզուներում՝ լատիներեն, հունարեն, գերմաներեն և այլն), այդ ձևական կամ սպասարկու բառերը կարող են և կերպի գաղափար արտահայտել բառարտադրության մեջ, ինչպես* на *առանձին տալիս է տարածական գաղափար, բայց* нападать, надавить *և նմանների մեջ ծառայում է բառաստեղծական նոր ֆունկցիայով, այն է՝ ահա-վանդածում է* падать, давить *հիմնական («արմատական») գաղափարները «վրա» կոնկրետ գաղափարով. իսկ որինակ,* написать *բառին այդ «на»-ն տալիս և կատարյալ կերպի վորակ-*

թյունը, չի խոսում «ընդունց ասելով» հիմնական գաղափարի մասնիկով արտահայտվելու մասին, չնայածգրելով, վոր այդ ընթերցողներին ծանոթ պիտի լինեն։ Մենք այդ դիտենք, որինակ, և վրացերենից, ուր մի v-ici-o *նշանակում է «յես (v-)— գիտեմ—ասում և նա (-o)»։ Ցեխ մի «առարկայնակություն» (մեր լեզվի անանկությեց) կցանկացի այստեղ հիշատակել, յերբ տերի գաղափարը փոխանցվում է ժամանակի գաղափարին (վորը առարկայնակ չէ և ամեն լեզվում էլ կա), բայց արտահայտվում է «մասնիկով»։ Աղջիկս մի անգամ վերցնելով բաժակի դերը և նրա վրա դրած մյուս աղջկանս «Լուսիկ» անունը՝ ասաց. «ալա, այս Ջալալողլվանից է ասացել», այսինքն ուզում է ասել, այն ժամանակից, յերբ մի անգամ գնացել էինք Ջալալողլի(=Սանփաշանան)։ Այստեղ ժամանակի գաղափարը, վորը հիմնական է, վոչ թե արտահայտվել է մեր լեզվին հատուկ ժամանակի բառերի հոլովման ձևով (որ, ոբվա, ոբվանից... շաբաթ, շաբաթվա, շաբաթվանից»), այլ դրանց անալոգիայով անդունական նման «ժամանակացման» ձևով։ Եվթե սուկ անդունական բացառական հոլովի ֆունկցիան ոբվեր, կասվեր «Ջալալողլուց», բայց վոչ «Ջալալողլվանից»։ Մեր լեզվում աղջկանս այս «ասելը» նորմատիվ չէ, բայց մի «հնուկաս» լեզվի համար նորմատիվ և «ժամանակ, ոբ» բառը մասնիկով արտահայտը*

Այդպես և իհարկե և ուրիշ ձևական բառ > մասնիկների նկատմամբ։

Մենք նույնպես մատնանշել ենք շարահյուսական կապակցության մեջ առացած բառահարաբերական մասնիկի փոխանցումը նոր բառաստեղծական ելևէնտի, ինչպես—կաբինով, ծախ, Պապիկյանց և այլն, որոնք անկախ նախկին շարահյուսական կապակցությունից են մտածվում և նոր բառեր են։ Թեպետ այստեղ վորոշ ձևեր մնացած են և բառակապակցությունից առացված բառը յուր մասնիկով և փոխվել, իսկ մասնիկը առանձին կարող և ակտուալ չլինել նոր կազմություններին մեջ (որինակ, հին հոդնակի հայցականի «ս»-ն), սակայն կան դեպքեր, յերբ բառահարաբերական մասնիկը կենդանի յե դեռ, բայց և նոր ֆունկցիա յե ստանում, որինակ, մենք ասում ենք գյուղացիք, վորդիք... ուր «ք»-ն դեռ հոդնակիի և ուղղականի ֆունկցիա յե կատարում (ինչպես հոդնակի յենի՝ ուտեմ—ուտենք, դիտությամբ—դիտությամբք), բայց, որինակ, հումք, գնացք, շարժք, տնօք, հայրենիք, ուսելիք. հագնելիք և նմանների մեջ այդ «ք»-ն բառաստեղծական նոր պաշտոն և կատարում. բառահարաբերական ֆունկցիայի հետ՝ նաև բառաստեղծական. այսպես ուշադրավ և մտածողության տեսակետից այն, վոր բառի նախնական հոդնակի գաղափարը վեր և ածվում բառի վերացական (ընդհանուր) և յեզակի գաղափարին. այսինքն մի հումք կամ ուսելիք պիտի նշանակվին «հումերը», «ուսելիները», վորոնք ամբողջությամբ են վերցվում և փոխանցվում նոր վորակի։ Մասնիկների այսպիսի վորակական փոփոխության տեսակետից ի նկատի չպիտի առնել այն բառիմաստական փոփոխությունները մասնիկներով, յերբ, որինակ, հոլովաձևերով տնունները դառնում են մակբայ կամ շաղկապ, ինչպես դրաբարում՝ զոր օրինակ, ի զուր, ի սպառ, յակամայս, ի վեր, իսկոյն (սեռ. հոլ.), վաղուց (սեռ. հ.), արդէն, ի հարկէ, ապաքէն, ի բնէ, բնաւ, դիւրաւ, (դիւրեաւ), իրաւ, իրաւք, արդեօք, սակաւ, խաւիւ, հաղիւ, վաղիւ և այլն*։ Այժմ մակբայական ածանցներ են դարձել, բան Մ. Արեղյանի, «-ով»

* Վրացերենում ևս կա նման փոխանցում -իվ վերջավորությամբ, վորը բան Մառի, վրացական ծագում ունի, ինչպես igurdiv (набок, наискось) առացված guerdi (=бок) բառից, irguliw (=շուրջանակի) առացված rguali (շրջան) բառից, phrxiv (վոտով)՝ pherxi (վոտ) բառից, jliv «ձլիվ» (=հագիվ)՝ jali (=ուժ) բառից, marjuniv (աջից)՝ marjuene (աջ) բառից և այլն. տես H. Марр, грам. др. груз. яз. 1925. Ленинград, էջ 30.

յեվ «-ուս» հետևյալ դեպքերում, ինչպես վերեվ, ներքեվ, ներքսեվ, դրսեվ, միջև, առջև և այլն, կամ ամոթու (հին «առ ամօթոյ» ձևից), ահու, ծիծաղու և այլն (տես նրա Հայոց լ. տես., էջ 241), իսկ սրանք ծագել են, ինչպես տեսնում ենք, հոլովական ձևերից, այսինքն՝ բառահարաբերական մասնիկից։

Մասնիկները այլևայլ դուրգրդուբյուններով կարող են և միանալ կազմելով մի միասնական (անբաժանելի) նոր մասնիկ։ Այսպես, ունենք -կոտ վերջածանցը, որը առացվել է «կ+ոտ» յերկու ածանցներից։ Բայերին ածանցվող -ուկ մասնիկի վրա (մրսուկ, քնուկ, նստուկ.., որոնք դործ են ածվում բարբառներում) ավելանում է -ոտ մասնիկը, որն ամենադործածական մասնիկներից է (ցնխոտ, մսոտ, կեղտոտ..), և առացվում է դուրգրդուբյամբ այդ նոր -կոտ մասնիկը, ինչպես՝ վախկոտ, ցասկոտ, պարծենկոտ, քնկոտ, ալարկոտ և այլն։ Ըստ Մ. Աբեղյանի նման բարդ մասնիկ են և բարբառային -կակ, -կեկ, -կիկ, -կուկ (տես նրա դիրքը, էջ 240), որոնց մենք կավելացնեինք և բարբառային -կենի մասնիկը, որով, օրինակ, Աշտարակում կազմվում են ծառերի անուններ, ինչպես՝ ԹՔԹՔկենի (ԹՔԹՔթկենի), խխորկենի, շաքարկենի, խեճեճկենի և նմանները։ Մենք դեռ դրաբարից պետևնք, որ -ութիւն վերացական վերջածանիկը նման բարդություն ունի, գոյանալով -ոյթ (բնոյթ, գայրոյթ..) և -իւն (արդիւն, աւիւն.., գոչիւն, թնդիւն..) մասնիկից, թեպետ նման դեպք կա և ուրիշ հնդեվրոպական լեզուներում (համմ. լատ. —ution վերջածանիկը նման ֆունկցիայով, որն ուղղ. հոլովում հնչվում է -utio, constitutio, բայց constitutionis, constitutioni, constitutionem և այլն)։ Ծերբևին ունենք և յերկու բառահարաբերական, օրինակ, խոնարհման վերջավորություններ, որոնք կարելի յե ասել միասնացման ճանապարհին են, ինչպես ռուսաց идем «գնանք», որը վերաբերում է «ինձ և ձեզ (շատերիդ)», բայց ид-ем-те «գնանք» վերաբերում է ինձ և Ձեզ (մեկիդ), կամ «ինձ և ձեզ (շատերիդ)», որպես քաղաքավարի արտահայտություն, և առացվել և անշուշտ պալատական կամ բուրժուական ժամանակության հետևանքով, հակառակ այն «քերականական կանոններին», որ յերկու խոնարհման վերջավորություն հնդեվրոպական լեզուն չի առանում. բայց, ինչպես տեսնում ենք, մասածողությունը հաղթահարում է ձևական ֆետիշները. այդտեղ-եմ մասնիկը տալիս է դեմքի և թվի գաղափարը (հոդնակի I դեմք), սակայն -ե մասնիկը (համմ. читай-читайте, возьми-возьмите, և այլն)

հատկապես կոնկրետացնում և այդ հոգնակին յերկրորդ դեմքի համար, ում դիմում են, և այն էլ՝ քաղաքավարության նրբություն ստեղծ համար։ Ռուսաց иный անցյալ դերբայի ածանցը բարդ և н-ный (հմմտ. виден և виден-н-ый), թեպետ չի գիտակցվում այդ բարդության կազմությունը (-н առաջին մասը ստացվել և հնագույն ьн ձևից)։ Յերբեմն բառարնի վերջին բաղաձայնը կապակցվելով իրեն հարող ածանցի բաղաձայնի (կամ ձայնավորի) հետ, գիտակցվում և վորպես նոր ածանցային կազմություն և անալոգիայով անցնում և ա այլ դեպքերի, ինչպես գերմաներենում -heit ժամանիկը սկզբում ավելանալով հետնալեզվային к, g, (x) բաղաձայնով բնաբերին, ասենք՝ ewigheit, հետագայում փոխվելով դարձել և -keit (ewigkeit) անցնելով և մյուսների վրա։ Ռուսաց -чик ժամանիկը սկզբում ստացվել և конец, венец, молодец.. և նման բառերին ավելացնելով -ик նվազականը, և միացմամբ ու հնչյունափոխության գոյանում և кончик, венчик, молодчик..., բայց և мальчик, аппаратчик, пулеметчик և այլն։

Նման հետաքրքիր մի կազմություն և այժմյան վրաց բացառական հոլովի -dan վերջավորությունը, որինակ, khalakhidan «քաղաքից», վորը ստացվել և հին khalakhith ձևից և gan «ի բաց» (от, из) հետդիրից, այսինքն՝ khalakhith-gan (из города, от города)։ Հնում -ith հոլովամասը նշանակում եր և բացառական հոլով, իսկ այժմ միայն գործիական. և վրացիք այժմ բացառական հոլովի համար միայն կարող եյին այդ հետդրվոր (-gan հետդիրի ոգնությամբ) կազմություն ունենալ։ Սակայն հնչյունական այլ և այլ փոփոխությամբ khalakhith -gan դառնում և khalakhid-gan > khalakhidan, վորը և գործածականն և (արևելյան վրաստանում դարձել և մինչև իսկ khalakhidam)*։

Բառահարաբերական (resp. թեքման) ձևերը հաճախ կարող են փոխարինվել նման ֆունկցիա կատարող ավելի տարածված ձևերով, ինչպես այժմյան ռուսաց мест, дел, окошек և այլն «բացառական» կամ դեր վերջավորություն ունեցող հոգնակի

*) Ցնթե մենք ծանոթ չլինեք այժմյան վրաց բացառական հոլովի պատմությանը և տառական ձևով (տարբերությունների չնկատելով և փոխիշացնելով) մտանեք վրաց այդ -dan բացառական հոլով դարձած նոր ձևին, ապա կարող եք ազգակցել թյուրքական նույն բացառ. հոլովի-dan-ի հետ, պատմական մեծ ու փոքր յերկաքայությունները անել և այլն։ Մաքը յուր վերջին փուլում այդպես եր փոխիշացնում բառի հնչյունակազմը։

անուականները (մի ժամանակ այդտեղ լսվել է «ъ» հնչյունը= մոտավորապես կարճ ŭ (ու) այժմ ժողովրդի մեջ հաճախ փոխարինվում են ձիշտ столов, докторов և նմանները-ов վերջավորութիւնով, այսինքն՝ հնչվում են местов, делов, окошков և այլն։ Իսկ ռուսական այդ -ов վերջավորութիւնը գոյացել է հին u սրմատական վերջավորութիւնից, անջատվել և գիտակցվել վորպես հոլովական վերջավորութիւն (յեղել է sunou̯-, sunuբնաձևը, վորը դարձել է сынов-)։ Նման յերևույթ տեղի ունի այժմյան հայերենում, յերբ հին ձևի ձուկ-ձկան-ձկնից.. փոխարինվում է ձուկ-ձկի-ձկից և այլն, ինչպես և ժամանակ ցույց տվող անուանների սիստեմը (որ-որվա-որվանից) կրում է նուն աղինցութիւնը (որ-որի-որից)։ Դեռ ավելին։ Ուղղականում -ի վերջավորութիւն ունեցող գոյականները, վորոնք բաղմաթիվ են և կազմում են «ուշ» հոլովումը, նմանապես սկսում են այս եվոլյուցիան կրել, յենթարկվելով «ի» հոլովման սիստեմին (Անկի, վոսկիի, Անկից, վոսկիից..)։

Բայց պատահում են նաև այնպիսի դեպքեր, յերբ բառը պահում է յերկու հոլովաձևերն էլ, ինչպես, որինակ, ռուսաց սեռական յեղակի а և у վերջավորութիւնները, կամ տեղական (Locativus, «предложный») հոլովի е (=հին ъ) և у վերջավորութիւնները։ Այս դեպքում դրանք կարող են համազոյակից լինել միայն և միայն իրենց գործածութեան և ֆունկցիայի մեջ յեղած վորևե (թեկուզ և չնչին) փոփոխութեամբ. և ունենք, որինակ, фунт чаю, բայց цвет чая (սեռ. հոլովներ), ուր чаю (<čay-u, ռուսերեն տառերով чай-у) ձեր ստացել է բաժանական նշանակութիւն (разделительное значение, քան Պորժեզինսկու)։ Նմանապես համեմատեր ներգոյական (տեղական) հոլովի համար —о лесе «անտառի մասին», о крае «յերկրի մասին», բայց в лесу «անտառում», на краю «յերկրում» և այլն*։ Հայերենում մի բան ունենք տարբեր հոլովական ձևերով, բայց այն էլ վոչ թե վերջավորութեան տեսակետից, այլ բառամիջի հնչյունական փոփոխութեան տեսակետից, ինչպես աստուծոյ և աստուածոց, ուր առաջինը վերաբերում էր քրիստոնեական աստծուն, իսկ յերկրորդը՝ հեթանոսական։ Համեմատեր նաև մեր «մորուց» և «մորից» հոլովաձևերը իրենց բարբառային տարբեր իմաստներով։

Իսկ յերեխայի այդպիսի տարբերացումը առաջ չի

---

* Համեմատեր նաև հոգնակիի տարբեր ձևերի հետ և տարբեր իմաստները. ռուսաց колени-коленья, мехи-меха, духи-дух'и, збы-зубья և այլն։

բնչում իմաստական դիֆֆերենցիացիա, կամ՝ ավելի ճիշտ կլիներ ասել, չի ոգտագործվում լեզվի նոր պահանջի տեսակետից, ապա դրանցից մեկն ու մեկը տեղի պիտի տա և անհետանա։ Որինակ, մեր հայոց բարբառներում, ինչպես արարատյան, ուրնենք «այս» ցուցական դերանունից բացառական հոլ. սուց և սուցիկ, որոնք չեն տարբերացվել և հետևապես, չեին դրական լեզվի ազդեցությունը չլիներ, ապա այդ յերկու ձևերից մեկը միայն պիտի մնար (այժմ փոխարինվում են դրական «սրանից» ձևով)։ Ռուսերենում այժմ կա женою (ženoyu), բայց և женой (ženoy) կամ сильнее (sil'neye) և сильней (sil'ney) առանց իմաստական տարբերացման, որովհետև նորի կողքին (женой, сильней..) դեռ մնում և հինը առանց ոգտագործման. դրանք հնչյունական «ձևական» տարբերություն ունեն և ոչ ձևաբանական-իմաստական։

Մեր գրաբարում և մանավանդ ժողովրդական բարբառներում հաճախ դիտվում է, որ յերբ մասնիկը իր ֆունկցիան սկսում է կորցնել (մթագնվում է), ապա դրան ուժեղացնելու կամ աստիճական (շեշտական) նոր իմաստ պատճառելու համար ավելացվում են նոր նման ձևեր. որինակ, գրաբարում վանորայ, դեղորայ և նմանները հավաքական հոդնակիներ էին, և ուժեղացնելու համար ավելացվում էր հետագայում նաև «ք» մասնիկը (վանորայք, դեղորայք..), իսկ մեր բարբառներում ունենք հաճախ յերկք հոդնակիացնող մասնիկների հավելում, ինչպես «խաղեյ(ն)-ք-տ-եր» (3 մասնիկ՝ ք, տ, եր), կնկ-ա-ներ (2 մասնիկ՝ ա, ներ), աչքներ (2 մասնիկ (-ւք, -ներ), կնանիք (2 մասնիկ՝ -անի, -ք), ախպեր-ա-ք -ներ (2 մասնիկ՝ -ա, -ք, իսկ «ն» հնչյունը նորամուծ է) և այլն և այլն։ Գրաբարյան սովաւ, դովաւ և նովաւ ձևերը, որպես գործիական յեզակի, նույնպես կրկնակի ձև ունեին, կազմված նախնական *ս-ո-վ-ա (դովա, նովա), ուր «ս»-ն արմատ է, «ո»-ն հոլովման նիշ (մի ժամանակ՝ արական սեռի), ինչպես ունենք՝ ս-ո-ք-ա.., ս-ո-ք-ա, ս-ո-յ-ա և այլն, իսկ «վ»-ն գործիականի վերջավորություն (նման՝ ինեւ, քեւ, քով, ամաւ, գնաով և այլն. վերջի «ա»-ն համարվում է

---

* Գրաբարը պահել է «-անի» և «-ա» հավաքական հոդնակիները և առանձին, բացի սովորական հոդնակի «ք»-ից, ինչպես՝ մանկտի, ոսկրտի, ծակտի.., կանանի, աւազանի, ազատանի.., իսկ բարբառներում և յերկակի «-վ», ինչպես՝ աչվի, ընքվի, ոտվի և այլն։

«համիաստիկ» նշան, նման վրաց khalis-a «կնոջ» (սեռ. հ., կա և qkalis), khal-s-a «կնոջ» (տրակ. հ., կա և khal-s), գործիական laqki-th-a և այլն։ Գրաբարի *սովա, *դովա, *նովա կազմությունները անալոգիայի թե այլ ազդեցությամբ առացել են կրկին գործիականի w նշանը (սովա-ւ, դովա-ւ, նովա-ւ)*։ Կովկասյան լեզուներում ևս, ինչպես արխազերենում, դիովում և մի քանի նման ֆունկցիա ունեցող մասնիկների կուտակում, մասնավորապես ուղղական հոդնակիում (ըստ Ն. Մառի)։

Բայց մասնիկը կարող է ոչ միայն նշանակությունը փոխել կամ թուլ գիտակցվել, և հետևապես, ինչպես տեսանք, կորիք ունենա «ընդհանրացնելու» կամ ուժեղացնելու (շեշտվելու), այլև այդ մասնիկը կարող է միանգամայն մասնակի նշանակության մեջ, միայն վորպես բառի անանջատ մի հնչյունակազմական տարր հանդես գալ։

Մենք գիտենք, թե վորքան մեծ ու դերիշխող դեր են խաղում լեզուների ձևաբանական զարգացման կյանքում մասնիկները (բառաստեղծական և բառահարաբերական՝ շարահյուսական)։ Մոտավորապես պատկերացում ենք ստանում այդ մասնիկների գոյացման (ծագման), հացման և փոխանցումների մասին։ Հետևապես մասնիկների այդ էվոլյուցիան պատմական մի յերկար պրոցես է, և իրենք էլ պատմականության արդյունք են։ Ինչ խոսք, ուրեմն, վոր մասնիկները կարող են և իսպառ չդիտակցվել բառի հետ, այսինքն՝ մասնակի, անհետանալ վորպես ձև, միայնով բառի հետ սոսկ հնչակոմպլեքսային դերում (առանց նշանակության)։ Ամենահետաքրքիր մոմենտն է պրում մասնիկը այն ժամանակ, յերբ նրա պահանջը շատ է, և անալոգիայով հնարավորություն կա այդ ձևաբանական պրակտիկան տարածել։ Այստեղ միակ խոչընդոտը նույնանիշ մասնիկի մրցությունը կարող է լինել, վերցրած յուր լեզվից կամ ուսար լեզվից, իսկ այս վերջին խնդիրը գերազանցորեն պատմա-կուլտուրական մեծ խընդիրների հետ է կապված։ Որինակ, հարց կարելի յե տալ, միթե հայերը չունեցին պարսկերեն -ական (-կան) կամ -ուհի ածանցներին փոխարինող տեղայինները. յերե չունենային և պահանջ

*) Նման կրկնություն հոդնակիացնող «ք» մասնիկի նկատմամբ ունենք և նույն դերանունների հոդնակի գործիականի մեջ, ինչպիսիք են՝ նոքաւք (=նոքօք), սոքաւք (սոքօք) և դոքաւք (դոքօք), ինչպես և սոյն, դոյն և նոյն դերանուններից հոդն. գործիական սոքաւմբք, դոքաւմբք և նոքաւմբք ձևերի մեջ յերկու «ք»-երով։

կար, ապա փոխառնելը հասկանալի կեր, մանավանդ վոր պարսկական կուլտուրան ուժեղորեն ազդել և նախարարական Հայաստանի վրա, ինչպես և նրա լեզվի վրա։ Բայց մենք լեզվական այլ փաստերից գիտենք, վոր, օրինակ, տեղական հին բառերը տեղի չեն տալիս դրսից եկող բառերին, չնայած այդ դրսի կուլտուրան կամ ավելի զորավոր և տվյալ իշխող խավերի համար, կամ կարիք ունի նոր բառանրբություններին, վոր տեղական լեզուն չի տվել*)։ Թերևս այս ժառանգությունը մասամբ զորձնի և մասնիկների նկատմամբ, ինչպես, հավանորեն, ունենք պարսից վերոհիշյալ -ուհի, -ական և թերևս -ական, -արան, -աւանդ (-աւէտ) և նման ածանցների խնդրում։

Ածանցները ամենից լավ դիտակցվում են և ակտուալ են տվյալ պատմական ժամենամ տեսակետից, կեր դրանք ստեղծ են մի շարք միատեսակ նշանակություն ունեցող բառերի մեջ, և մյուս կողմից՝ կեր յուրաքանչյուր բառարմատ կամ բառարտն այլ ածանցներով ևս բարդություն (բաղադրություն) և վերցնում։ Այդ դիտակցումը սոսկ հոգեբանական զուգորդությունների վրա չեն հիմնում, կեր մասնիկի կամ յուր արմատի կապակցությունները այլ կոմբինացիաներով տալիս և մեր մտածողության մեջ այդ տվյալ մասնիկի և արմատի կամ բնի բաժանումը միմյանցից։ Ցեղի հիմնական (արմատական) ձևերը նշենք A, B, C տառերով, իսկ ներկրորդական ձևերը (մասնիկները)՝ a, b, c.. տառերով, այն ժամանակ լրիվ կորելացիաների կամ հոգեբանական համազուգորդությունների համար կստանանք հետևյալ սխեմատիկ ընթացքը—

Aa—Ba—Ca
↓ ↓ ↓
Ab—Bb—Cb
↓ ↓ ↓
Ac—Bc—Cc

Այսպես են տալիս մեզ այդ զուգորդությունների պրոցեսի աբստրակտիկ նկարագրությունը Սոսյուրը, Արնոյանը, Գոլժեվինսկին, Ռուշկովը և այլք։ Այս կարծես քիչ ընդհանրացած կարծիք է։

---

*) Որինակ, մենք հայերը չունեինք ասպիսակ, ասե, ակապուլյա և նման գույների անունները, վոր վերցրել ենք պարսկերենից։ Անշուշտ ունեցել ենք, բայց պարսկական կուլտուրական համալքը վանել տվեց տեղական տերմինները հմմտ. այժմյան ստոզովի, հորիչնևի և նմանները ուսերենից։

Բայց մենք կարծում ենք, որ յեվրոպական (ինչպես և դվեսավոր) ձևի գիտակցման և անջատման (выделение) համար այս հանգիսանում է մաքսիմալ պայմանը հոգեբանական այդ գործողությունների մեջ). Մասնիկի սահուն գործածության ժամանակ, իսկ այդ լինում է նրա ծագման և մահացման շրջանում, ինչպես նրա կանգ առնելու (застойность) միջին ժամանակում, վերոհիշյալ պայմանները ավելորդ են։ Բավական է, որ բաղադրության կազմությունը կրած լինի յուր բաղկացուցիչ տարրերի, այսինքն՝ սրա հետ և կդրսևորվի մասնիկը։ Իսկ այս դրսևորման կամ բաժանման մասին, որ հիմնականն է և միևնույնը**), մյուս լրիվ գործողությունները ավելի խորացնում են այս նվազագույնը, վորպես մասնիկի ակտիվ գործունեության պայման։ Որինակ, մի «մարդիկ» բառը յուր հակադրությամբ ունի «մարդ»-ին անջատում, դրսևորում է -ներ մասնիկը վորպես հոգնակիացնող ձև. և սա միանգամայն գիտակցվում է, թեպետև այդ -«ներ»ը այդ ֆունկցիայով այլ «միասեռ» (однородный) բառերում չենք տեսնում։ Նմանապես դրաբարի «ևեկն» (=յեկավ)

---

*) Ուշադրությունը պարապմունքով այդ լրիվ սխեման ասում է. „Чтобы слово различалось в сознании говорящего на основу и формальную принадлежность, или, что то же: *чтобы сознавалась в слове форма, —нужны два условия*: 1) нужно, чтобы та же формальная принадлежность существовала в других однородных словах с другими основами, а кроме того, 2) нужно, чтобы та же основа существовала в других словах с другими формальными принадлежностями". *Որինակներ և բերում.* "Напр. рука разлагается на рук+а не только потому, что -*а* существует еще в ног-а, изб-а, жен-а и. т. п., но и потому, что основа рук-существует еще в рук-ою, рук-у, рук-ами и т. д. Или. напр., несу разлагается в сознании на нес+у в соотношении с вед-у, бер-у, и т. п., а также с нес-ешь, нес-ет, нес-ем и т. д.„ *Տես նրա գիրքը* (Краткое введ. в науку о языке, изд. V, *էջ 66-67*),

**) *Համմ. Պոբժևկինյան հետևյալ խոսքերը այդ «դրսևորման» մասին, որը հիշյա և, թեպետ ձևի ըմբռնումը ամենամոտիկ է։ Նա ասում է.* „Наконец, формой мы называем способность знака языка, выделять в нашем сознании основу и формальную принадлежность, а также сам знак языка заключающий в себе формальную принадлежность и имеющий, следовательно, известную форму" (*Տես նրա* Введ. в язык., *էջ 111*)։ *Նույնը մոտավորապես ասում է և Ուշակովը.* „Таким образом, „формой„ слова называется *способность слова выделять основу и формальную принадлежность*» (*Տես նրա գիրքը, էջ 65*)։

յուր հակադրությամբ թևկուղ մի «եկի» (=յեկա) կամ «եկիր» (=յեկար) խոնարհաձևին, անջատում է մեր գիտակցության մեջ «-ն» մասնիկը, վորպես յեղակի յերրորդ դեմքի վերջավորություն, թևկուղ և չունենանք մի յերկրորդ նմանօրինակ խոնարհաձև անցյալ կատարյալի այդ դեմքի համար «ն» մասնիկով։ Արարատյան բարբառում (որինակ, Աշտարակում) ունենք թթուաշ միակ բառը յուր վերջի -աշ մասնիկով, վորի նշանակությունը՝ թուլացնել թթվության հատկությունը՝ շատ լավ գիտակցվում է ամբողջ «թթուաշ»-ի հակադրությամբ սովորական «թթու» ձևի իմաստին։ Գալաս վորոշելիություն ենք տեսնում, յերբ մասնիկը շատ սովորական է, այսինքն՝ մի շարք բառերի մեջ է լինում, բայց նրա տվյալ հիմնական մասը, վորին նա կըցվում է, անկախ կամ այլ ձևերով չի գործածվում։ Որինակ, «շտեմարան»-ը աղերսակցվում է յերգարան, բառարան, ննջարան, լսարան և նման բաղադրություններին, ուր -արան մասնիկը վորոշակի կերպով տեղ է ցույց տալիս (յենթադրվում է, վոր -«արան» գոյացել է պարսկերեն -(a)dan-ից, ինչպես jamadan "чемодан"=jama «շոր»+dan «տեղ» այդպես և šamdan «ժամակալ և այլն)։ Բայց «շտեմ-» հիմնական անջատվող մասը լավ չի գիտակցվում, պարզ չէ, քանի վոր առանձին չկա. ժառավորապես պիտի նշանակեր «մթերք, պահածո» և նման բան։ Ճիշտ նշանակությունը կստացվի, իհարկե, յեթե այդ štem արմատը գրանենք ուրիշ հին (կամ նոր) հարևան կամ ազգակից լեզուներում։

Ինչպես տեսնում ենք, մասնիկը կամ արմատը յերբեմն կարող է ամիսոփված լինել միայն մի բառաձևի մեջ, այսինքն՝ մի գործածություն միայն ունենալ (ինչպես մարդիկ, թթուաշ, շտեմարան բառերի դեպքում, հմմտ. նաև ռուսաց детвора «յերեխայք» -в-ора հոգնակիով, վորը այլևս չկա)։ Այս, անշուշտ, հնությունից մնացող, քարացած և անհետացող որինակներ են։ Դեռ ավելին։ Քարացած, վոչ արդյունավետ (վոչ պրոդուկտիվ) պիտի կոչենք և, որինակ, այնպիսի մասնիկներ, վորոնք թևակատ և շատ դեպքերում են հանդես գալիս, սակայն այլևս անալոգիայով նոր տեսակները չեն ստեղծում, ինչպես -ատ մասնիկը (ուտատ, գովատ..) կամ -ուստ նրա տարբերակը (գալուստ, փախուստ..) և այլն, կամ «հր» նախամասնիկը, ինչպես հղոր, հմուտ, հյուծ, հպարտ.., վորն արդեն չի էլ գիտակցվում, մանավանդ վոր «հյուծ»-ի հակադրությունը «լուծ» արմատին, ինչպես և «հպարտ»-ի հակադրությունը «պարտ» (=պարծ-իմ, պարծան-

կատ..) արմատներին մեր լեզվում մեռած է (միայն դրաբարում կար լուսայ=լսեցի, լուր=լսեր և այլն)։ Այդ պատմական և լեզվահամեմատական քննութիւնը և ավելի շուտ պարզվում այդ հը (< hu ‖ su) նախահայկական մասնիկի նշանակութիւնը (=լավ>շատ)։ Նման մեթոդոլոգիայով մենք յուր տեղում կերևան բերինք հայոց an-«վրա, վրայով, դեպի» մի մեռած մասնիկ, որը պահվել է դրաբարյան անձեռուց (անձեռուցիկ), անառնական, անկողին և գավառական՝ անուռ, անբահի, անթոլվել, անթփել, անճաղել (անցողել), անթևել և այլ բառերի մեջ*։ Մասնիկի թուլ գիտակցումը կարող է լինել և վոչ միայն անցյալից մեռացած և քարացած մի կամ մի քանի բաղադրութիւնների մեջ։ Այդ կարող է լինել և նոր կազմվող ձևավորումների մեջ։ Որինակ, յեթե մի -լիկ (հասարլիկ, կոկլիկ, շեկլիկ..) կամ -ռիկ (հուշտռիկ, հասառիկ..) նոր, բարդ մասնիկները դիտակցվում են որպես նոր ուրույն ֆունկցիա կատարող (=ուժեղ փաղաքշականութիւն և անարգութիւն), ապա մի «լ» ներմասնիկը բընդորել—բլնդորել կամ պող—պլող (‖ պոլոզ «սրածայր») կամ պոկել—պլոկել, կամ կոր—կլոր և նման դեպքերում չստացավ անհրաժեշտ ավյալներ և պայմաններ «մասնիկանալու», այսինքն՝ նոր վորակի մասնիկ դառնալու. բարբառային այդ «լ» ներմասնիկին (միջամասնիկին) անշուշտ արդելից նոր գրական լեզվի տարածվելը յուր նորմաներով, ուր հետքն անգամ չկա այդպիսի ներմասնիկների (գրաբարի w մեռած միջամասնիկի մասին ևս վերը, եջ 208).

Մասնիկի անմիջական գիտակցումը և դերը ժամանակ պարզ և լինում, յերբ նա անմիջական կորբելացիա յի կազմում առանձին ևս գործածվող բնի կամ արմատի հետ։ Որինակ, մեր բարբառներում (արարատյան և այլն) հնչիկ բառը չունի փաղաքշական (կամ նվաղական) իմաստ, քանի վոր դրա հիմնական

* Տես իմ «Հնչեփոխական մի քանի ծագումներ հայերենում», 1927 թ. Ցեղեան, տառնձին տոտիսկը, եջ 4-8։ Ստուգաբանորեն այդ «ան» հնագույն հայկական մասնիկը մենք կապակցել ենք այնտեղ հնդեվրոպական նման մասնիկի հետ, նույն ֆունկցիայով, ինչպես հունարեն ανα «վեր, վրայով, միջով», գոթական ana-=գերմ. an «մոտ, վրան, ամենքիս» ana նույն նշանակութիւնով և այլն։ Բայց այդ «ana»-ն կա և հին ասորա-բաբելոնական (ակկադական) լեզվում, վորն իբրև նախդիր կատարում է մեր արական հոլովի ֆունկցիան, նշանակելով նաև «դեպի, վրան» հավանորեն, հայերենը այդ յերկու աղբյուրների նպաստավոր պայմանն է ստացել, թեպետև այդ an-ը շատ չստորածվեց։

«կին» մասը առանձին չի գործածվում, և հետևապես -իկ մանրիկի դերացումը չքանում է մնջաեղից. թեպետև կան բարդություններ՝ տերտերակին, քավորակին, տեգերակին և այլն, իսկ հոդնակում այդ «կնիկ» (=կին) բառի հետք կա «կնանիք»։ Ինչպես տեսնում ենք «կնիկ» բառը, որը նշանակում է սոսկական կին (женщина և жена) և ոչ փաղաքշական-նվաղական և, յուր -իկ ածանցին չի տալիս առանձին մի դեր և կարծես թե սկզբնական անբաղադիր բառ լինի (ուղ. կնիկ, սեռ. տր. կնկա, բաց. կնկանից...), ունենալով հոդնակի կնանիք (սեռ. տր. կնանոնց...)։ Ածանցը մթագնված և, քանի որ չկա նրան հակադիր բնի «կին» մասի ինքնուրույն գործածություններ։ Մանավանդ ածանցումը դժվարանում է, երբ բնի բաղաձայնը ևս փոխվում է, ինչպես հպարտ բառի մեջ, ուր «պարտ»-ը փոխակերպված է «պարծ» սկզբնականից։ Իսկ մի դանակ, ծաղիկ և նման բառերի մեջ մենք այլևս մանրիկ (-ակ, -իկ) չենք կարող տեսնել, քանի որ ոչ թե չկան դան- և ծաղ- բները, այլև փոխակերպված բնով կամ այլ ձևույթով ևս չկան և անցյալում էլ չեն եղել. դրանց մանրիկների անջատումը կարելի չէ պատկերացնել սոսկ տեսակետորեն, յենթադրորեն, երբ մանավանդ ոտար լեզուների վորոշ տվյալներ դրան նպաստեն։

Ածանցումը դժվար և դիտակցվում, երբ բառաբունը յուր հիմնական իմաստով շատ և հեռացած տվյալ բառի բաղադրության իմաստից։ Որինակ, ռուսերենում шило, мыло, светило և այլն բառերը դեռ դիտակցվում են կազմված шить (կարել), мыть (լվանալ) և светить (լուսս տալ, լուսանալ) բայերի ընդերից, թեպետ այդ բաղադրությունները շատ ընդհանուր իմաստ ունեն և -ло մասնիկը այդպիսով չի տալիս անմիջապես սլավոնական -dlo (=մեր -իչ, -ող, մասնիկներին) մասնիկի ֆունկցիան. իսկ, որինակ, дело բառի նույն կազմությունն ավելի չի մթագնված և նրա կապակցությունը действие, деятельность բառերի դե- արմատի հետ դրեթե այժմ չի դգացվում։ Ավելի մթագնված և կարելի չէ ասել ժեռած և рыло (=ժռութ, դունչ) բառի բաղադրությունը, քանի որ դրա -ло մասնիկը չի կապակցվում рыть (=փորել) արմատի (ры-) հետ. իսկ մի ժամանակ рыло նշանակել և բառացի «փորիչ», գործածելով անշուշտ խոզի և այլ կենդանիների մասին։

Բառաբաղադրության անալիզը յուր հոգեբանական-լեզվական ասոցիացիաններով պիտի կատարել միշտ յեղելով յուր

ժամանակի պատմական տվյալներից, այսինքն՝ լեզվի զարգացման (և դիտակցման) պատմականությունից. և մեր վերևում բերված օրինակները դրա ապացույցն են։ Համեմատեր ռուսաց добрый բառը յուր այժմյան добр- արմատով, որը սակայն մի ժամանակ կազմվել է доба (=пора, удобное время) հին բառից, որ конец և начало (на-чен-ло) բառերը առաջացած հնագույն кон ‖ кен > чен արմատից և այլն և այլն։ Ցերեկ լեզվի այդ պատմականությունը («հիստորիզմը») անտես առնենք, ինչպես և անում են լեքսիկն և մեծամասն լեզվաբանները, ապա ռուսաց кусок, кусать բառերը մի կողմից և кушать, вкусить բառերը մյուս կողմից հեշտությամբ մի արմատից կսկրտինք, ինչպես շատ լավ նկատում է Դ. Ուշակովը, այնինչ առաջին խմբակուսը ստացվել են кос- (ենդայլեն o-յով) արմատից, իսկ երկրորդները՝ кус- արմատից։ Այդ պատմականությունը մեզ ասում է, որ, որինակ, свидетель բառը յեղել է մի ժամանակ сведетель (=դիտակ), ինչպես և смирный բառը կազմվել է мера (հին смерение «չափվելը») բառից, իսկ հետո յեն այդ բառերը ժողովրդական խմաստավորմամբ (ժողովրդական ստուգաբանությամբ) կապակցվել видеть և мир (=խաղաղություն) բառերի հետ, դառնալով свидетель և смирный*։

Բառաբաղադրության այս վերլուծումը մեզ բերում է այն յեզրակացության, որ մասնիկի դիտակցումը ևս պատմական է, որ նա որոշ ժամանակ ակտուալ եր և հեշտությամբ մտքով անջատվում և դիտակցվում է յուր դերի մեջ և մինչև իսկ նորանոր կազմությունների մեջ կարող եր խցկվել։ Մասնիկի էվոլյուցիայի հաջորդ հատվածը, նայած նրա կոնկրետ հանգամանքներին, կարող է մթագնման և քարացման ճանապարհով բերել հասցնել նրա կատարյալ մահացմանը, ինչպես ռուսաց р մասնիկը добрый, хитрый (по-хит-ить արմատից է) և նմանների մեջ, կամ հայոց w միջամասնիկը (ծանաւթ, աղաւթ.. բառերի մեջ), -ուկ և -ակ մասնիկը ծաղիկ և դանակ բառերի մեջ և այլն և այլն։ Իսկ մասնիկների ծագման մասին խոսելիս, մենք տեսանք, որ դրանք կարող են մինչև իսկ անկախ և ինքնուրույն բառերից առաջանալ։ Դուրս և դալիս, ուրեմն, որ ցորեն կոնկրետ մասնիկ յուր զարգացումը կարող է սկսել անկախ և ինքնուրույն բառից,

---

* Տես Д. Ушаков, краткое введение в науку о языке, §§ 71—72, 70 և § 127։

վորը դառնալով յերկրորդական ձև (բառաստեղծական կամ բառահարաբերական), ժխտվում և բացասվում է վորպես բառ. խակ ժամնիկը, այդ նախկին ինքնուրույն բառը, քարանալով և չդիտակցվելով հասնում է մահացման, միայով սոսկ հնչյունական մի կցորդ (աւտորիբուտ) յուր բառարմատի հետ։ Այդպիսով, ինչպես տեսնում ենք, բառարմատների կազմությունները ևս պատմականորեն փոփոխական են, այսինքն՝ բառարմատ ենք կոչում բառի այն մասը, վորը զուրկ է բառահարաբերական (շարահյուսական) ժամնիկից (կամ ժամնիկներից), ինչպես և բառաստեղծական (բառակազմության), վերցրած տվյալ պատմական մոմենտի տեսակետով։ Այդ դեպքում ասվում է, վոր բառարմատը հավասար է «անածանց բնին» (непроизводная основа), վորը հակադրվում է հետևապես «ածանցավոր բնին» (производная основа), այսինքն բառի այն մասին, վորն ունի բառակազմության մասնիկներ։ Ներկայումներն բառարմատ ասելով ենք հասկանում —բառարմատ և բառակազմության ածանցներ, առանց բառահարաբերական-շարահյուսական մասնիկի (մասնիկների)։

Ածանցների և ավելացող ֆլեքսիաների, այսինքն՝ յերկրորդական այդ ձևերի նախնական վորոշ արտահայտությունը (օրինակ, յերկակի կամ յեռակի թիվ, այլևայլ «դասեր» և այլն) անշուշտ կապ ուներ յուր դարաշրջանի հասարակական մտայնության հետ։ Այդ վերջինիս արմատական փոփոխման հետ նման մասնիկները հաճախ շարունակում են ձևափոխված միայ՝ դառնալով սոսկ լեզվատեխնիկայի (տեխնիզացիայի) մի քարացած, բայց և անվանելի մի բնո լեզվի հատոր, ինչպիսիք են այժմյան շատ լեզուների (գերմաներեն, ռուսերեն և այլն) սեռերը։ Լեզվատրադիցիան այս դեպքում շատ պահպանողական և, կարծես թե մի неотвязчивый պահանջ է։ Բայց իրոք այս խարուսիկ է. վերջիվերջո այդ ևս տեղի չի տալիս և փոխվում է, ինչպես տեսնում ենք անգլերենում, ուր մինչև մի քանի դարերը այդ սեռերը ավանդորեն կային (արական, իգական, չեզոք, ոչ.) և հետո դուրս վանվեցին։ Մանավորապես հետաքրքիր է Սուդանի նեգրերի նման յերևույթի աղքատությունը։ Այդ լեզուների մեջ կային և դեռ կան նախամասնիկներ կամ վերջամասնիկներ, սակայն դրանք այժմ կամ չքանում են, կամ տարբերակվում են բառարմատի մեջ, վորով վերանում է գոյականների և բայերի ձևական անջատումը ևս։ Նեգրերի լեզուներում այդ ագգլիքսացիան չծառայեց դրանց լեզվի հարստացման համար և մյուս կողմից էլ այն հասարակական աշխարհայացքը, վոր պահում էր այդ

ուրույն տիպի լեզվածանցուժը, արդին չքացել կամ չքանում եր։ Այստեղ կարելի չի ասել, որ նեգրական այդ լեզուների ձևաբանական տիպիզացիան կտխման մեջ է լեզվահասարակական ժառանգությունից. նեգրական այդ նախկին մասնիկավոր լեզուները դառնում են «անմասնիկ» («մոնոֆ») լեզուներ. հասարակական գործոնը հաղթահարում է լեզվի ձևաբանական տիպի այդ պահպանողությունը։

Թնքական տիպի լեզուներում անգամ մենք տեսնում ենք, որ թնքական «ներքին» ածանցները, այսինքն՝ հոլովական և խոնարհման վերջավորությունները, բովանդակորեն չեն արտահայտում նախադասության անդամների հարաբերությունները և ժամանակվում են ձևական բառերով (հմմտ. ռուսաց հոլովման սխտեմում անգամ այդ կոմբինացիան — со стола կամ из стола =բացառական հոլովի ֆունկցիա սեռական «ներքին» ձևից+ձևական со, из բառերը և նման այլ դեպքեր)։ Թնքման այդ ձևերի չքացման և մահացման պրոցեսում գլխավոր դերը անցնում է այլևայլ ձևաբանական միջոցների, ինչպես, օրինակ, ձևական բառերին։ Ցավ ինացած կցկտուր մի քանի հոլովական (կամ խոնարհման) ձևերը ոգտագործվում են այդ նոր կոմբինացիայով շարահյուսական յուրաքանչյուր հարաբերությունների համար, ինչպես, օրինակ, դերմաներենում մի dem Hause «տան» հոլովաձևը (ընդամենը 3—4 ձևեր են ինացել) ոգտագործվում է բացի տրականի սոսկական (սեփական) ֆունկցիայից (որպես կողմնակի խնդիր), նաև ներդրական, բացառական, գործիական ֆունկցիաների համար, ինչպես in dem Hause «տան մեջ», aus dem Hause «տանից», mit dem Hause «տնով, տան միջոցով» և այլն։ Այդպես և, օրինակ, ֆրանսերենում. խոնարհման մասնիկների դերը անցնում է նախկին ուրույն դերանուններին, որոնք արդեն դառնում են ձևական բառեր, ինչպես ž-parl, tü-parl, il-parl ասյլն(=յես խոսում եմ, դու խոսում ես և այլն), կամ ռուսաց я писал, ты писал, он писал, ուր դերանունները նաև կատեգորական ֆունկցիաներ են իրենց վրա վերցնում կարող և պատահել, իհարկե, յերբ մի հոլովաձև կամ խոնարհման ձև չունենա մասնիկ. այդ կոչվում է «բացասական ձև» (отрицательная форма), ինչպես՝ կարդացի, կարդացիր, կարդաց, կարդացինք և այլն, ուր «կարդաց»-ը թեպետ չունի սեփական վերջավորություն, բայց յուրաջ ձևավորված հոլովների հարաբերությամբ պարզ դիտակցվում է (կարդաց=նա կարդաց),

այնինչ մի писал կամ ֆրանսիացոց parl ձևերն արդեն դուրս են յեկել այդ անմիջական հարաբերությունից (կորրելացիայից) և արդեն կարիք են զգում արտաքուստ հարագրվող ձևական բառերի ոգնությյան։ Այստեղ արդեն կարելի յե ասել, որ լեզուն սկսում է յուր ձևաբանական սիստը փոխել, պահելով յուր անցողական փուլում և նախորդ ծնացորդներ։ Բառակազմության և բառահարաբերության լեզվաձևաբանական միջոցները և սիստերը բավականին շատ են։ Ցեղ թեպետ միատիպականություն այդ կողմից շատ քիչ և պատահում—մեծ մասամբ գերիշխում են մի կամ մի քանի տեսակները,—բայց և այնպես լեզուները ձևաբանական փոփոխման մեջ ստանում են իրենց ուրույն դեմքը, իրենց ձևաբանական դեմքը։ Այստեղ մեզ պետք է հետաքրքրի լեզուների մեջ յերևան յեկող հենց այդ ձևաբանական («քերականական») բազմաոեսակություները, բազմաձևություները, այսինքն այն ձևաբանական բազմազան ունակությունները, որոնցով առնչվում են նոր բառեր (=իրական բովանդակություններ) և բառահարաբերություններ*։ Անցնենք այդ խնդրին։

---

* Բառահարաբերությունները բաժանում են յերկու մասի—1) հենց «քերականական» (=հատկացական) առումով, յերբ արվում և յերկու բառերի հարաբերակցումը (հոլովական և խոնարհման մասնիկներով և այլն) և 2) խոսողի վերաբերումը իրին կամ յերևույթին (սեռ, թիվ, յեղանակ...)։ Այդ բառահարաբերությունները կամ ակցիոնները կոչվում են նաև «իներակցիոնակ կատեգորիաներ»։

3. ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (ПРИЕМ-НЕР)

(Լեզվի բերթկացնական միջոցները)

Ձևաբանությանը վերաբերող մինչև այժմ շարադրած հատվածներում մենք աշխատել ենք տալ լեզվի վորոշ միավորների ձևաբանդակական պատմական ահմանումը յուր ծագումով և զարգացմամբ, սկսած ամենապրիմիտիվ «բառ-նախադասությունից»։ Նախ, հենց ինքը լեզուն, ինչպես տեսանք, մտածողության և հնչյունապատկերների միջնորդ սիմվոլիզացիայով, վորը նրա ձևական և մասամբ կազմակերպիչ հանգամանքն է. կամ այլ կերպ ասած, այդ լեզուն կարելի չէ կոչել և մտածողության այդպիսի մի ձև։

Իսկ յեթե վերցնենք պատմականորեն մշակված այդ լեզվի ձևաբանդակական ամեցիֆիկ միավորները ձևակերպումն ու ահմանումը, ապա նախ և առաջ այդպիսի կատեգորիա պիտի համարել նախադասությունը կոչվածը, վորը տալիս է իրեն ուրույն կոնստրուկցիայով մեր մտածողության վորոշակի ձևակերպված խոշոր միավորը, իրրև տարբորոշված մի միտք։ Ինչպես տեսանք, նախադասությունը յուր հիմնական հոդե-որամաբանական առաջբուններով հանդերձ արտացոլում է մարդկային ստադիալ մտածողության վորոշ ստեհաններ։ Յեթե այժմ մենք ասում ենք մեկին «չես գնացի տուն» և բավականանում ենք այդչափով, ապա մի ամերիկյան կամ ավստրալիական բնիկը այդ միտքը կարող է արտահայտել միայն ու միայն շատ կոնկրետավորություններով (հարաբերանիշերով) հանդերձ, նշելով, որինակ, գնալու ձևը (հանգիստ, շորորվելով...), կամ տունը վիրչափ հեռավորության վրա ևր խոսողի կամ լսողի հանդեպ, հայտնի ևր յեղած առաջուց թե վոչ և նման շատ անհրաժեշտ կոնցեպտուալ պահանջներ։ Լեզվի մեջ «նախադասություն» կոչվածը շատ հարուստ կողմերով և հանդես գալիս (դլխավոր-յերկրորդական, դրական-արգելական, նկարագրական-հարցական-բացագանչական-հրամա-

յական, նախադասությունների յեղանակիչ մոմենտները «տրա-
մաբանական» շեշտի միջոցով և այլն). այս մասին յուր տեղում
խոսվել է։

Լեզվի «ձևա-բովանդական միավոր» մենք համարեցինք նաև
մեր մտքի հիմնական առարկաները իրենց ունել (մատերիել) բո-
վանդակությամբ — այն է՝ բառերը, որպես հիմնական և անհրա-
ժեշտ մտապատրաստը իրեն իրային, վորակային, գործողական և
այլ գաղափարներով։ Տարբորոշված լեզվի մեջ չի կարող ինք-
նուրույն բառ չլինել. գոնե նախադասության մեջ դրանցից
մեկը ձևականորեն ուրույն դիրք պիտի ունենա, իսկ մյուս
կոնկրետ գաղափարները կարող են և «մասնիկներով» արտա-
հայտվել, թեպետ այս քիչ և պատահում։

Բայց բացի բառից մենք հանդիպում ենք նաև «ձևական
բառ» և «մասնիկ» կոչված լեզվակատեգորիաներին, վորոնք
ժամանակ դեր են խաղում կամ բառերի հիմնական նշանակու-
թյան հանդեպ կամ բառերի շարակցման (կապակցության) խընդ-
րում, արտահայտվելով այլևայլ հարաբերություն կամ վերաբե-
րություն, վորպես կապական («քերականական») ձև։

Այդպիսով, կարելի եր տեսնել, թե ինչպես սկզբում բառը
նախադասություն եր, թե ինչպես բառը հետո տարբորոշված մտքի
(նախադասության) միայն հիմնական և ինքնուրույն մի անդամն
եր, և հետո այդ բառը ձևական ֆունկցիա եր կատարում, իսկ վեր-
ջում դառնում և նաև մասնիկ (բառաստեղծման և բառահարաբերու-
թյան)։ Իսկ ամենից վերջը՝ և ժահանում է, վորպես մասնիկ։ Մենք
շեշտեցինք նաև, վոր բառերի և մասնիկների բովանդակական և
քանակական կողմը կապված է յուր դարի մտածողության հետ։
Բառերի մասին դեռ կխոսենք առանձին։

Արդ, լեզվի, իբրև հնչյունաձև մտածողության, պատմա-
կան զարգացման հետևանքով մենք ստանում ենք յերկու հիմնա-
կան ձևա-բովանդակական լեզվային (resp. խոսքի) միավորներ՝
նախադասություն, բառ և կապական ձև։ Եվ թե առաջինը տալիս
է մտքի (մտածողության կոնկրետացման) մի ձևակերպում,
ապա յերկրորդը լեզվորեն արտահայտում է իրային գաղա-
փարներ, հատկանշեր և հատկանշերի հատկանշեր, իսկ կապական
ձևը, լինի դա ձևական (սպասարկու) բառ թե բառահարաբերա-
կան մասնիկ, յուր ֆունկցիան ստանում և կատարում է ինքնու-
րույն բառերի կամ այդպիսիներից կազմված կապակցված մի-
ավորների (resp. նախադասությունների) վերաբերմամբ։ Լեզվա-

բաններից շատերը, մանավանդ գերմանական «յերբեմնասարդ քե-րականներին» հետևողները լեզվի «ձև» ասելով հասկանում են միայն կապական յերկրորդական ձևերը, կոչելով դրանք formans, formativ։ Այլ կերպ ասած, դրանք թեքման ձևերն են «թեքական» (և կցական?) լեզուներում և հետևապես «ձևաբանությունը» լեզուների դիտության մեջ համընկնում է միմիայն թեքման ուսմունքին այդ տիպի լեզուների համար։ Այս ուսմունքը սահմանափակ և նախ նրանով, որ կապական ձևը, որպես լեզվական ձևա-բովանդակական պատմական կատեգորիա, ամեն մի տարբորոշված լեզվում պիտի լինի. իսկ այդ յերևույթը միայն մասնիկով չի արտահայտվում, այլև այլկերպ, և լեզվական այդ ֆունկցիայի համար յերկրորդական նշանակություն ունի։ Ամեն մի լեզու ունի նախադասության ստեղծելու, բառեր կազմելու և դրանց կապակցելու այս կամ այն ինքնուրույն միջոցները, ձևերը. և «մորֆոլոգիան», այսինքն՝ ձևաբանությունը պիտի ընդգրկի այդ յերևքի ել կազմության ձևերի ուսմունքը։ Թողնելով շարահյուսությանը նախադասության կապակցական անդամների դերը և նշանակությունը, նախադասությունների փոխադարձ կապը և արտահայտությունը, մենք այս հատվածում հատկապես կանգ ենք առնելու այն «ձևաբանական» միջոցների վրա, որոնցով ընդհանրապես ստեղծվում են այլևայլ լեզուներում նոր բառեր կամ բառերի հարաբերակցություն, այլ կերպ ասած՝ նյութական բովանդակություն և ֆունկցիոնալ հարաբերություններ։ Այդ նյութական կոչված բովանդակությունը արտահայտվում է դլխավորապես բառ արմատով, իսկ յերբեմն և ածանցով («բառաստեղծական մասնիկով»), նայած լեզվին։ Դրանք կարող են լինել և բարդացած վիճակում։ Կան յերբեմն և փոխանցման կամ անվորոշության մոմենտներ՝ կոնկրետացնող (բառաստեղծող) և բառահարաբերական մասնիկների բովանդակական հարաբերությունը ճշտելու մեջ. որինակ, վոմանք հոգնակի մասնիկը (ինչպես մեր -եր, -ներ, թյուրք. lar || ler և այլն) համարում են ռելացիոն հասկացողություն արտահայտող ձև (Սեպիր), իսկ վոմանք՝ նոր վորակի բառաստեղծ մասնիկ (Պորժեզինսկի, Ուշակով...)։ Ածականների աստիճանացույց մասնիկները (ըստ Պորժեզինսկու) նոր վորակի բառեր են ստեղծում, այսինքն՝ բառաստեղծ մասնիկներ են. այսպիսի վորակի են և կերպերը, ինչպես ռուսաց՝ бросать և бросить, достигать և достигнуть և այլն և այլն։

Լեզուների համեմատական ուսումնասիրության մեջ, երբ գննվում է դրանց պատմական աղերսը, վորպես «ազգակցություն», այնքի չի առնվում վերոհիշյալ ձևաբանական եվ մնացորդների համապատասխանությունը, առանձին-առանձին վերցրած, և գլխավորապես բառարմատների և մասնիկների «ազգակցական» փոխհարաբերությունը։ Հոդադրության, բարդության և նախադասության ձևերի համապատասխանությունը ավելի յերկրորդական և, կամ ստորադաս և նախորդին, իսկ ձևաբանական տիպի տեսակետից (տիպերի մասին կխոսվի առանձին) մի թյուրքական ev-ler-imiz կարող է մոտ լինել դիցուք քե հայոց բարբառային տն-եր-նի-ս կազմության, բայց ազգակցական տեսակետից արժեք չունենալ։ Համեմատելիները են դրանց մեջ յուրաքանչյուր միայն արմատական և մասնիկային առանձին եվեմենտները՝ կոնկրետ մորֆեմները։

Ձևաբանությունը պիտի զբաղվի հենց այդ առանձին եվեմենտների գոյացման և ձևավորման խնդրով բոլոր լեզուներում, թողնելով դրանց արտահայտչականը կապակցության մեջ յուրաքանչյուր լեզվի շարահյուսության։ Այդ յերկուսի միասնությունը կազմում է տվյալ լեզվի ստրուկտուրան՝ քերականությունը, վորը հետևապես վերցնում է վոչ միայն լեզվի հումքը (հնչյունական եվեմենտը), այլև ձևա-բովանդակականը ընդհանրապես։ Մեթոդական տեսակետից ընդհանուր քերականությունը կարելի յե բաժանել՝ հնչյունաբանության, ձևաբանության (ինչ միջոցներով են ստեղծվում հիմնական և յերկրորդական ձևերը) և շարահյուսության (ինչպես են կապվում և ինչ են արտահայտում բառերն ու նախադասությունները), թեպետ ավելացնում են նաև իմաստաբանություն (семасиология) և բառաբանություն (лексикология)*։

---

* Դեն լեզվաբան Ռ. Շորը յուր „На путях к марксистской лингвистике" (Учпедгиз, Москва, 1931 г.) բրոշյուրում հետևյալ կերպ և բնորոշում «քերականության պրոբլեմի» դրությունը. „В разрешении грамматической проблемы особенно на последних этапах сравнительного языковедения, четко выступают основные недочеты недиалектического статического подхода к языковым категориям: отсюда—крайнее сужение понятия формы, беспомощность в определении основного значения отдельных языковых категорий и постоянные колебания в определении предмета грамматики" (стр. 39): Տես այս մասին նաև В. Аптекарь, Н. Марр и новое учение о языке, Москва, 1934 г., եջ 122. Մ. Աբեղյանը կողմնակից է քերականության լայն ըմբռնման (տես նրա «Հայոց լեզ. տեսություն» եջ 66)։

Քննենք այսօր մեկ առ մեկ ձևաբանության բուն խնդիրները, այն է, ինչ միջոցներով և մարդկային լեզուն արտահայտում կամ կառուցում առանձին արմատաձևերը (հիմնական, այն է՝ ռեալ ու կենդանի գաղափարները) և կապական առանձին ձևերը («անալացիոն գաղափարները»)։ Արտահայտումները շատ են (վեց տեսակի*) և կարող են խաչաձևվել յուրաքանչյուր լեզվի մեջ, թեպետ դրանցից վորոշ քանակը (մեկ -յերկուսը) գլխավոր և վորակիչ ձևաբանական միջոցն են հանդիսանում։ Այդ վեց տեսակներն են—1) բառերի դասավորման կարգը (порядок слов), 2) բառակցում (сложение), 3) կրկնություն, 4) աֆֆիքսացիա, 5) արմատական կամ «քերականական» ելևմտների ներքին փոփոխությունը (ձայնավորների և բաղաձայնների), 6) շեշտ (արտաշնչական և յերաժշտական)։ Կարելի յե ավելացնել նաև—ձայնավորների յերկարացումը կամ սղումը, բաղաձայնների կրկնությունը (յերկարացումը) կամ սղումը, թեպետ Սեպիրը սրանք հնարավոր և համարում միացնել բառի ներքին ելևմտների փոփոխության մեջ, վորպես ստորատեսակներ։ Յուրաքանչյուր ձևաբանական միջոցը պիտի համարել ձևական բառի հարստացումը կամ կցումը։

ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Բառերի դասավորման յեղանակը ամենից շատ զգալ և տալիս այն լեզուներում, վորոնք չունեն մանրիմներ (կամ քիչ են գործածում), և ձևաբանության գլխավոր մեջ թեպետ հնագույն միջոցն և հանդիսացել։ Վերցնենք, որինակ, հատկացուցիչի և հատկացյալի փոխհարաբերությունը նման տիպի լեզուներում։ Սուդանական նեգրերենում, որինակ, մի en kur նշանակում և «տեր յերկրի» (կամ՝ տերը յերկրի) ինչպես հին հրեական լեզվում beth lehem «տուն հացի», բայց հակառակ դասավորությունը կատր հատկացուցիչի և հատկացյալի գերերի փոփոխություն, այսինքն kur en (=յերկիրը տիրոջ), lehem beth «հացը տան» կայլն։ Հմմտ. Սուդանի նեգրերի (Շարի բարբառի)՝ lu «տուն», m-mu «բնբան», իսկ lu m-mu «տան բնբան» (=դուռն), ինչպես և մի այլ նեգրական բարբառում՝ kwolę «տուն», m-bu «բնբան», իսկ kwolę mbu «դուռն»։

---

* Ըստ Սեպիրի, տես նրա „Язык", եջ 48

Կարելի է վերցնել նման տիպի լեզուներում (ուր ժամանակները չկան կամ չքանում են) նաև յենթակայի և որյեկտի (կրող խնդրի) ձևավորման խնդիրը հանդես ստորոգյալի։ Այս ևս արտահայտվում է դասավորության ձևական հանգամանքով։ Որինակ, անգլերենում՝ the woman sees the man «կինը տեսնում է մարդուն» նախադասության մեջ առաջին տեղը գրավող the woman («կինը») բառը միայն յենթակա է, իսկ վերջին տեղ գրավողը (ստորոգյալից հետո)՝ ուղիղ խնդիրն է։ Հակառակ դասավորության պայմաններում ((the man sees the woman) հակառակ հարաբերությունը ցույց կտրվեր, այսինքն՝ նախորդ դասավորության յենթական կդառնար խնդիր, իսկ խնդիրը՝ յենթակա։ Այսպես և ֆրանսերենում, դիցուք Paul aime Olga «Պողոսը սիրում է Ոլգային», բայց Olga aime Paul «Ոլգան սիրում է Պողոսին»։ Իսկ այն լեզուներում, ինչպես ռուսերենում, մեր գրական հայերենում, հունարենում, լատիներենում և այլն, ուր այդ հարաբերությունը (յենթակա թե խնդիր) ժամնիկով է ցույց տրվում, բառերի տարբեր դասավորման վերոհիշյալ յեղանակը կամ նշանակություն չունի, կամ էլ հնաոտրական կամ վոճաբանական նշանակություն միայն կարող է ունենալ։ Ռուսերենում, որինակ, Ольга любит Павла կամ հայերենում «Ոլգան սիրում է Պողոսին» վեց կոմբինացիա կարող է ունենալ տարբեր դասավորմամբ և իմաստը դրանից զգալիորեն չի տուժիլ (Ольга любит Павла, любит Ольга Павла, Ольга Павла любит, Павла любит Ольга...), թեպետ դեպքեր են լինում և «թեքական» կոչված լեզուներում, երբ իմաստը ձևի անվորոշության պատճառով լավ չի հասկացվում, ինչպես՝ цель оправдывает средство, мать любит дочь, весло задело платье..., շունը տերը չի ճանաչում, Տիգրանը սպանեց Վարդանը (բարբառներում) և այլն և այլն։ Այս դեպքում խնամոնացիան վորոշող դեր է առանձնում։

Համեմատել նաև—студент Петр և Петр студент, их было 40 человек և их было человек 40 և այլն։

Մենք գիտենք նաև, վոր շատ լեզուներում, որինակ, անգլերենում, գերմաներենում, ֆրանսերենում և այլն, դասավորման յեղանակը ֆորմալ դեր է խաղում և նախադասությունների վորակը փոխելու մեջ, ինչպես անգլ. he is here «նա այստեղ է», բայց is he here «այստե՞ղ է նա» (=արդյո՞ք նա այստե՞ղ է), նման գերմ. er ist hier և ist er hier և այլն։

Բառերի բարդացումը սկսվում է դրանց սովորական շարահյուսական կապակցությունից, վորպես հնագույն և հիմնական բառահարաբերության դրությունից, թեպետ անալոգիայով կապվում է և անկախ այդ հանդամանքից՝ ցերբ սովորական բառահարադրումը կամ բառաշարահարությունը հասկացվում է իմաստական տեսակետից մի միասնություն՝ բառերի ավելի սերտ և հարատև դործածական միության հետ միասին, ապա սա առաջին քայլն է բառաբարդացման (իսկական իմաստով)։ Այդպես են, որինակ, ռուսաց железная дорога, спустя рукава, с ума сошел.., հայոց՝ ֆծի մերուք, տաք գլուխ.., գլխի ընկնել, մեռնել-պրծնել, դիշեր-ցերեկ, յետ դառնալ, բաց անել և այլն, վորոնց հաջորդում է ավելի սերտ կապակցությունները—кинотеатр, արևմուտք, սեղանատեխտակ..., շանսատակ, տանտիկին, հորաքույր, կերուխում, խրատանցում..., սեղանատուն, արևամուտ, հացահատիկ և այլն։ Այս մասին մենք արդեն վերևը դրել ենք։ Մենչևիսկ լեզուներ կան, ուր արմատների կամ բառարմների բարդացմամբ ստեղծվում են նախադասություններ, ինչպես Ամերիկայի բնիկների (հնդիկների) վորոշ լեզուներում. որինակ, իրոկեզների մոտ «յես-միս-ուտել» (ni-naka-kva) մի բարդություն է, ավելի սերտ քան ռուսաց կամ հայոց я ем мясо «յես ուտում եմ միս» և այլն։ Սրան մի քիչ նման է մեր բարբառային (Աբարատյան) «յեսիմ» չգիտակցվող բաղադրություն-նախադասությունը, վորը կազմվել է «յես ինչ իմանամ» (յես+ի [նչ]+[ի] մ [անամ]) բարդությունից, կորցնելով յերկրորդ և յերրորդ բառերից վորոշ հնչյունամասեր. այդպես է արել, ի միջի այլոց, և վերոհիշյալ իրոկեզերենը, թեպետ ավելի փոքր հապավումով (nakati «միս» հապավվել է և դարձել բարդության մեջ naka)։ Մեր այժմյան наркомтяжпром և այլն մասամբ սրանց նման են, բայց դրանք սոսկ բարդ բառեր են (հապավումով), բայց վոչ նախադասություններ, ինչպես յեսիմ, վորևիցե, Vergissmeinnicht—незабудка, քաջալեր(ել), եղջիմածին և այլն։ Սեմիտներենում այսպիսի բարդություն (նախադասությունը> բարդ բառ) սովորական յերևույթ է։

Լեզուներ կան, վոր չեն կազմում արմատական հիմնականներից բարդ բառ, նման մեր «իսկական բարդություններին», ինչպես եսկիմոսերենում, Ամերիկայի «նուտկա» հնդիկներենում և մեծ

մասամբ անմիտեբենում*։ Նուտկա լեզվում, ինչպես ասվել է, բարդությունը վեր է ածվում բարդ բաղադրության՝ մի արմատից և կցույթներից, ուր վերջինները կարող են փոխարինել բառեր և ունենալ ոչ թե բովանդակություն։

Բառաբարդություն է անշուշտ և արմատի կրկնությունը, որի մասին կխոսվի առանձին։

Բարդ բառերի անդամների փոխհարաբերությունը բաղադրության ամբողջության հանդեպ չի բերվում լինում և հավասար, և առացվում է «համադասական» բարդություն, ինչպես գիշեր-ցերեկ, խառնիխուռն, անցուդարձ, ջարդուբուրդ, այրուձի, ազուհաց, մեծ ու փոքր, տաբեցտարի և այլն։ Հնդկական քերականները այդ դարդացումը (հայր-մայր, քույր-եղբայր) կոչում էին dvandva (ըստ Տոմսոնի—соединительное сложение)։ Բայց լեզուներում մեծ մասամբ բարդության մի անդամը մյուսի հանդեպ բացատրիչ կամ լրացնող դեր է կատարում (composita determinativa), որն է «ստորադասական» բարդություն, ինչպես՝ խավարաբնակ = խավարում բնակվող, լավատես=լավ տեսնող, բազմամարդ = շատ մարդ ունեցող և այլն։ Մեր լեզվում, սովորաբար, առաջինն է յենթարկվում յերկրորդին, կազմելով «ստորադաս բարդություն». վրացերենում, որինակ, ինչպես և մասամբ խեթերենում և հունարենում առաջինն է գերիշխում (հմմտ. վրաց gulšavi=սևասիրտ, thvalčreli=ճղրիկ աչքերով (մարդ), phexmravali «բազմոտնյա, многоножка» և այլն և այլն)։ Բացատրող գոյականը այլևայլ հոլովների փունկցիա յե արտահայտում. հմմտ. խավարաբնակ (=խավարում բնակվող), հացատուն (=հացի տուն), գործազուրկ (=գործից զրկված), լուսատու (=լույս տվող), շոգեշարժ (=շոգիով շարժվող) և այլն։

Հետաքրքիր է նաև տեսնել, թե ինչ խմբի բառեր են բարդվում միմյանց հետ։ Կան բարդություններ անունների և ածականների միմյանց հետ (nominal composita), բայց կա և դրանց բարդումը բայի հետ, ինչպես և բայերի միմյանց բարդվելը (verbal composita), նայած թե ինչ լեզու յե։ Հայերենը, այդ կողմից, բավական հարուստ է յուր այդպիսի խմբավորումներով։ Վերցնենք նախ գոյականները, ածականները և բայարմատները բարդությունը գոյականների հետ, որոնցով կազմվում են գոյականներ, ինչպես—գորագունդ, անձրևաջուր, յերկնակամար...,

* Տես Ե. Սևորը, «Վեպ», էջ 51։

անահող, վերնատուն, նորահարս..., դրսսավայր, պահամանո... կամ վերջնանք գոյականների ու ածականների բարդությունը ածականի հետ, որոնցով կազմվում են ածականներ, ինչպես—լուսապայծառ, արտաքաց, մարդաշատ, հողախառն, մարդավայել, մտավարժ և այլն։ կամ գոյականների ու ածականների բարդությունը մի բայարմատի կամ բայաբնի հետ, որոնցով ստացվում են կամ գործողության անունը (անվորոշ դերբայի իմաստ), կամ ներկա դերբայի իմաստ, որպես գործող անձի անուն, ինչպես և մի անցյալ դերբայի նշանակություն, ինչպիսիք են, որինակ, գրաժողով, այգեթաղ, արևամուտ, յերկրաշարժ, աքլորականչ, քայլափոխ..., կամ՝ արտամուղ, տնաքանդ, ձեռնհաս,..., մարդասեր, ձկնորս, խավարամուտ, յերկնահաս..., ջրատար, գետատար..., գրավարժ, ինքնահավան, չափահաս..., խելքահան, յերկրաբույս..., ձյունապատ, ալիգարդ, ջրաղաց..., խավարաբնակ, գետնաքարշ... Այդտեղ, վերջին դեպքում, բարդության առաջին անդամները, որպես յերկրորդ անդամի իմաստի սահմանագծողներ (վորոշողներ) ունեն այլևայլ հոլովական ֆունկցիաներ, ինչպես՝ արտաձև=սիրտը մնուած (ուղղ. հ.), մարդասեր=մարդ սիրող, (հայց. հ.), ջրատար=ջրի տարվածը, (սեռ. հ.) կամ ջրից տարվածը (բաց. հ.), գրավարժ=գրի վարժված (տր. հ.), խելքահան=խելքից հանված, (բաց. հ.), ձյունապատ=ձյունով պատած (գործ. հ.), խավարաբնակ=խավարում բնակվող (ներ. հ.)*։

Բարդությունների այդ բաղմազանության տեսակետից թեև հայոց լեզվի հետ մրցեն Ամերիկայի հնդիկների լեզուները, ուր հանդիպում ենք գրեթե բոլոր տիպերի նման բաղադրությունների (ըստ Սեպիրի), ինչպես՝ անունը անվան հետ, ածականը անվան հետ, բայը անվան հետ (ստացվում է անուն), անունը բայի հետ (ստացվում է բայ), մակբայը բայի հետ, բայը բայի հետ։ Այդպես և «պայուտա» կոչված լեզվում, այնինչ մյուս լեզուներում վորոշ սահմանափակություն է նկատվում, որինակ, չկա բայի բարդացումը բայի հետ («յանա» լեզվում), կամ անվան բարդացումը անվան հետ («իրոկեզերենում», վորը ացտեկյան մի լեզու չի Մեքսիկայում)**։

Արդ, ինչ ենք ստանում բարդացման ամբողջ պրոցեսի ըն-

---

* Որինակների համար տես Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տեսություն» գրքից, էջ 206—210։

** Տես ե. Սեպիր, «Լեզու», էջ 52—53.

քացքուս։ Նախ՝ համադրություններ կամ շարահարություններ (соположения), որպես ձևական և իմաստական տեսակետից մի որգանիզմ, մի ամբողջություն։ Ցերկրորդ՝ բարդություններ իսկական իմաստով (сложение), որոն ունի մի շեշտ, ընդհանուր հնչյունափոխություն, հոդակապ և այլն և որը պիտի տարբերվի կցական համադրություններից (синтезирование), ուր մի արմատ և բաղմաթիվ կցույթ-մասնիկներ ինչպես «նուտկա» հրնդկերենում։ Բարդություններում պիտի տարբերել տարբեր տիպեր —pus անդամների ֆունկցիայի (համադասական-հավասար, թե առաջադաս՝ լրացնող), pus դրանց տեղի (այսինքն առաջինն և լրացնում յերկրորդին, թե՝ ընդհակառակը)* և pus բառախմբերի տեսակների։ Այս նորմալ տիպի բարդություններին հետ չպիտի շփոթել այն պատահական և հնուց յեկող շարահյուսական կապակցությունները, որոնք մթագնվելով և միասնանալով այժմ մի ամբողջություն են ներկայացնում, ինչպես՝ վերջիվերջո, այնուամենայնիվ, համենայնդեպս, տարեցտարի և այլն։

Մեր այժմյան հայալեական բարդությունները պահում են դեռ իրենց ամբողջության և մասերի գիտակցումը, նայած հապավման աստիճանավորմանը։ Որինակ, յեթե լուս-ժող-կոմ, совнар-ком և նմանները դեռ գիտակցվում են իրենց մասերով, սակայն մի Բուհ, Вуз, Сто, Загс և նմանները արդեն այդ բաղադրության ըմբռնման տեսակետից անգիտակցելի յեն, կարելի յե ասել մի պարզ արմատ են ներկայացնում, նման մեր բարբառների բնականորեն կազմված «յեսիմ»-ին և այլն։ Նման հապավում, ինչպես տեսանք, արվում է և Ամերիկայի հնդիկների վորոշ լեզուներում, ինչպես իրոկեզերենում, ուր միայն արմատն է բարդվում։

ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

Վորպես շատ հայտնի ձևաբանական մի միջոց (формативный прием), և թերևս հնագույններից մեկը, այդ արմատի կրկնությունն է, թե ամբողջությամբ և թե փոփոխված ու կրճատ-

---

* Ցերը որյինակն է բարդվում բառի հետ, վորպես բարդություն-նախադասություն (համմա. իրոկեզերենի՝ ni-naka-kva, տես վերը), ապա այդ կարող է թե առաջ դրվել, ինչպես իրոկեզերենում և թե բայից յետո, ինչպես «յանա», «ցիմշիան» (բրիտանական Կոլումբիայում) և այլ լեզուներում՝ (տես, Ցապիր, եջ 33)։

ված ձևով։ Այդ կրկնությունը, նայած բառի վորակին, պատճառում է բաշխում (распределение), բազմակիություն (множественность), կրկնողություն (повторность), գործողության սովորական լինելը (обычность действия), ծավալի հավելացում (увеличение в об'еме), ուժգնության աճող ինտենսիվություն (повышенная интенсивность), տևականություն (длительность)*.

Բերենք որինակներ նախ հայերենից, վոր այդ կողմից շատ հարուստ է։

Բաշխական դաղափար են պատճառում, որինակ, թվականների կրկնությունները, ինչպես՝ մի-մի (մեկ-մեկ), յերկու-յերկու, յերեք-յերեք և այլն (յերեք-յերեք կանգնել = յուրաքանչյուր շարքում յերեքով կանգնել)։ Համեմատիր նաև՝ գունդ գունդ դնացին, խումբ խումբ հեռացան, ուր բաշխման դաղափարի հետ տրվում է և բազմակիության։

Բազմակիությունը տալիս են, որինակ, գոյականների և ածականների (մասամբ և մակբայների), ինչպես և դերանունների ու բայերի կրկնությունները։ Համեմատիր—1) տեսակ տեսակ, փունջ-փունջ, բուռը բուռը և այլն, վորոնք ածականներ են և ցույց են տալիս նաև զանազանություն**. 2) մեծ մեծ (խոսուններ), ծանր ծանր (խոսքեր), սուր սուր (փշեր)..., կամաց կամաց, քիչ քիչ, շուտ շուտ.., 3) ով ու ով (են գալիս), ինձ ու ինձ (մոտծում եմ), իրան իրան (խոսում է).. վորոնք ցույց են տալիս բազմակիության հետ և առանձնության շեշտում։

Բազմակիությունը կամ ավելի լավ՝ բազմապատկությունը կամ գործողության կրկնությունը, ուժեղացում և այլն տալիս են բայերը, ինչպես՝ քաշքշել, փայլփլել, ձգձգել, թռթռալ, ծակծկել, բնկբնկել..., թավալ թավալ անել, յետ յետ գնալ, վեր վեր թռչել, փոնթ փոնթ գալ, պատառ պատառ անել և այլն։ Համեմատիր այդ կողմից «բնաձայնական» կրկնավորները, ինչպես՝ ճվճվալ, բղբղալ, ծվծվալ, խշխշալ, գոռգոռալ, սվսվալ, փսփսալ և այլն։

Ծավալի ավելացում նույնպես տալիս են հայոց կրկնավորները—մի բան, վոր շատ լավ ընդծել է Մ. Աբեղյանը հետևյալ խոսքերով. «Անդրադարձվում է բառի

---

* Տես Ն. Մառը, «Լեզու», եջ 59.

** Համմ. գրաբարում—գունդս գունդս աբձակէին յերկիր հեռասան (եղիշե) = այլ և այլ գնդեր էլին ուղղվում հեռավոր յերկիր.

նշանակությունը. առնվում է մի առարկա իր նմաններով, իր պարագաներով, կամ մի հատկություն իր նման կամ մոտիկ հատկություններով»*, ինչպես—մանր մունր, փալաս-փուլուս, հաբայ-հուբայ, ծակ ու ծուկ.., հաց ու մաց, սուտ-մուտ, ժուռ ու մուռ, պարապ-սարապ.., ամման-չամման, ոլոր-մոլոր, ամպ ու դամպ, առոք-փառոք, Ախս-Մասիս (=մեծ ու փոքր Մասիսները), ամիճ-պամիճ և այլն, ուր կրկնության ժամանակ սկզբի բաղաձայնը հավելանում (ամման-չամման), փոխվում (պարապ-սարապ) կամ պակասում և (առոք-փառոք), ինչպես և փոխվում և միջի ձայնավորը (մանր-մունր)։ Նման յերևույթ կա, ի միջի այլոց, և թյուրքական լեզուներում, ինչպես ուզբեկներենում՝ չայ փայ („чаишко"), աթ-մաթ (աթ «ձի»), թարակ-թուրուկ („трескотня", грохот"), баран-маран և այլն, վորը մինչև իսկ անցել և շրջապատի ռուսներին։ Այդ նույն յերևույթը կա և մեր ազգերի լեզուներենում (mal-mul, xurda-murda, xara-xura...) և այլն. համմ. ռուսաց бухты-барахты, чудо-юдо. тары-бары.., անգլերեն՝ sing-song („монотонное пение"), wishy-waschy („жидковатый, бурдистый", washy „жидкий"), harum-scarum„ беспорядочный", roly-poly—պուդդինգի տեսակ է, նաև «թմիլիկ» („пухленький" о детях)**։ Ըստ Սեպիրի այդ տիպի կրկնություն գրեթե ամեն տեղ կա. համմ. և չինարեն ping-pang „стук дождевых капель о крышу",*** տիբետերեն kyang—kyong «ծուլլ», մանջուրերեն porpon-parpan „подслеповатый"։

Բայց այդ «զույգ բառերը» (парные слова) սոսկ բառախաղ չեն, ինչպես վորոշ լեզուների նկատմամբ թվում և վոմանց****։ Մի հայոց խճճվել-մճճվել վոչ միայն ուժեղացնում և հիմնական գաղափարը, այլև յերկրորդ մասը կարող և անջատվել կրկնողությունից և դառնալ անկախ բառ («մճճվել»), ինչպես ունենք «մոլոր», առաջացած ոլոր-մոլորից։ Գրաբարում հաճախ կարդում ենք «և ծնաւ նա ուստերս և դաստերս բազուսս», սա-

---

* Տես նրա «Հայոց լեզվի տեսությունը», եջ 184։

** Տես А. Сухотин-ի ծանոթությունը Սեպիրի «Язык» գրքի վերջում, եջ 190։

*** Վորից առացվում է և «պինգ-պունգ» կոչված խաղի տեսակը (ibid, 60, ծանոթ. 1)։

**** Այնպիսի դեպքերում, ինչպես «տակա-մակա» եղ եր պակաս իրոք վոր գոյություն ունի այդպիսի բառախաղ, այն ել վոչ քո միայն կրկնվելով,

կայն դոյութիւն և ունեցել հին հնդեւրոպական լեզուներում միայն dustr (<duster)=дочерь, գերմ. Tochter և այլն, իսկ ustr «տղա» հնագոյն ժամանակ չի յեղել և մեր կարծիքով այդպիսի կրկնավորից և ստեղծվել, այսինքն ustr-dustr, «վոչ աղջիկը և աղջիկը»=տղա և աղջիկը. յետո ustr բառը առանձնանում է, և իւրաքանչիւր հայտնի հայագետներ Hübschmann և Meillet ցանկանում այդ ustr-ը հնդեւրոպական լեզուներով մի կերպ ստուգաբանել (վորն իւրաքանչիւր շատ ու շատ վերապահական է): Թերևս և «ծուխ» հնագոյն բառից (համմ. խեթերեն tu h h uis «ծուխ»), հետագայում վերոհիշյալ ձևով ստեղծվել և «մուխ», վորը վոչ մի կապ չունի ռուսաց (սլավ.) смуглый և նման բառերի հետ, ինչպես սրվում է «Արմատական Բառարանում», քանի վոր հայոց «խ»-ն չի համապատասխանում ըստ համեմատական հընչյունական որենքի սլավոնական «г»-յին, իսկ սլավոնական смуглый բառը պիտի կապակցել թե իմաստի մոտիկության և թե հնչյունական որենքի տեսակետից մեր «մուգ» (=смуглый) բառին, „s"-ի որինաչափ անհետացումով հայերենում:

Հատկապես ընորոշիչ են և բովանդակորեն էլ բազմաբաղադրեալ հայերէն կրկնութեան այն դեպքերը, յորում կրկնութեան մի անդամը յուր վորոշ մասով կրճատված է լինում, թեպետ այս դեպքում ևս սկզբնական հիմնական նշանակությունը—կրկնողության կամ տևականության իմաստը—մնում է անփոփոխ. Այստեղ կարող են ձևաբանական տեսակետից ուշադրության առնվել և տարբերացման յենթարկվել, նայած լեզվին, այդպիսի կրկնության այս և այլ կոմբինացիաները, կախված լինելով կրկնարմատի մի քանի վանկերի կամ ավելի բաղաձայնների հաջորդումից, կրկնարմատի ձայնավորի փոփոխումից կամ այդ երևույթի տեղի ունենալուց կրկնարմատի սկզբում, միջում թե վերջում:

այլ տեսակետից. А. Сухотин-ը քյուրդ-թաթարական լեզուների նկատմամբ այն կարծիքին է, վոր այդ կրկնությունները քերականական նոր միջոց չեն ներկայացնում, պարապուր չեն և մի տեսակ խաղ է. Едва ли можно сказать, чтобы самый метод образования этих парных слов относился собственно к структурной системе данного языка, чтобы он являлся одним из используемых в языке грамматических средств. Это не столько грамматическое явление, сколько своего рода словесная игра» Կամ բե՛ «Парные слова .. иногда носят [քյուրդերենում] чисто факультативный характер, ничего не внося дополнительного в концептуальное содержание основного слова, но только придавая ему несколько шутливый оттенок...» Տես Սեպիր մատ էջ 190.

Բնբնք այլ և այլ լեզուներից որինակներ։

*Հայերենում հայտնի չեն, որինակ, ծիծաղ կրկնավոր բառը՝ կազմված «ծաղ (ու-)» սոսկական արմատից (համմտ. ծաղր, սեռ. հոլ. ծաղու և այլն), փափագ-իմ, պապանձ-իմ, դադար-իմ և այլն, ուր կրկնվածը առաջի մասն է՝ վերջից հապավված (*ծիղ-ծաղ-, *փագ-փագ-, *պանձ-պանձ-, *դար-դար- և այլն վերականգնելի չփոփոխվածներ են)։ Այդպես են անշուշտ կրճատված, բայց և հնչյունական փոփոխությամբ «մարմանդ», «զարզանդ» և «հարհանդ» բառերը (գուցե և «կարկանդակ»)*։ Սեպերը այլ և այլ հնդկերեն լեզուներից (Ամերիկայի) մատնանշում և հետևյալ որինակները. չիլե լեզվում՝ ggen «քնած լինել» gen «քնել» պարզից, ֆուլ լեզվում՝ pepeu-'do «սուտասան», իսկ հոգնակի fefeu-'be, վորոնք կազմվել են պարզ fewa «ստել» արմատից. բոնտոկ-իգորոտ լեզվում՝ anak «յերեխա», բայց կրկնակին ananak «յերեխաներ» [համմտ. ճապոնական վոչ փոփոխվող նիցի-նիցի, ձի-ձի, վորոնք նույնպես հոգնակի չեն]. նույն լեզվում՝ kamu-ek «շտապում եմ», բայց kakamu-ek «ավելի յեմ շտապում». ցիմշիան լեզվում՝ gyad «մարդ», բայց gyigyiad «մարդիկ». նասս լեզվում՝ gyibayuk «փախչել» (убегать), բայց gyiguibayuk «փախչող» (убегающий)։*

Վերցնենք այն դեպքը, յերբ արմատի վերջն և կրկնվում, ինչպես հայոց յորյորջել, հայթայթել, խաբեբայ, շաղփաղփ ևայլն։ Սոմալի լեզվում կա, որինակ, ur «մարմին», բայց urar «մարմիններ», խառւսա լեզվում (Սուդանում)՝ suna «անուն», իսկ suna-«na-ki «անուններ». յաչո լեզվում (հնդկերեն Նեվադայում)՝ gusu բիզոն», իսկ gususu «բիզոններ». տակելմա լեզվում (հնդկերեն Որեգոնում)՝ himi-d «զրուցել», իսկ himim-d «սովորաբար զրուցել»։

Արմատի մասնակի կրկնությունը ոգտագործվել և յերբեմն և այնպիսի ֆունկցիաների համար, վորոնք չեն կապված յեղել ածեցման կամ հավելման գաղափարի հետ։ Հայտնի չե բոլորիս հնդևրոպական մի շարք լեզուներում perfectum կոչված անցյալի

---

* *Թեպետ մարմանդ, զարգանդ և հարհանդ գովաստական բառեր են, բայց մեր կարծիքով դրանք շատ հին բառեր են։ Համմմատիր մեր մարմանդ (=դանդաղ) բառի հետ սանկրիտերեն* manda—медленный, слабый, mandam „медленно, тихо", mandamandam *կամ* mandam mandam „совсем тихо совсем медленно" *(տես մեր* „Происх. др-арм. слова amehi, Петроград. 1916. ЗВО том XXIII, *եջ 357 (առանձին, եջ 9)*.

կազմությունը այդպիսի կրկնության, ինչպես սանսկրիտերեն dadarsha «տեսա», հունարեն leloipa «թողի», լատիներեն tetigi «կպա, շոշափվեցի» (я коснулся), գոթերեն lelot, «թողի, արձակեցի» (я пустил)։ Հայերենը միայն մի դեպքում է պահել այդ հնդեվրոպական ձևունակությունը, այն է՝ առնեմ «առնում եմ» բայը յուր ar- արմատը կրկնում է անցյալ կատարյալում (հին perfectum-ից փոխառնված) և տալիս է արար-ի. մեր բարբառները կազմում են պարզ արմատից «արի» (արեցի» անալոգիայով է)։ Հետաքրքիր է այդ կողմից ամերիկյան հնդկերեն տալվա լեզուն, ուր բայի բունը տարբեր ձևերով է հանդես գալիս. ժեկով կազմվում է ներկա և անցյալ, իսկ մյուսով՝ ապառնի, վոքոշ յնդանակներ և ածանցված ձևերը (производные отглагольные формы), ինչպես al-yebeb-i'n «յես նրան ցույց եմ տալիս (կամ «յես նրան ցույց էյի տալիս»), իսկ al-yeb-in «յես նրան ցույց կտամ»։ Համեմատիր բայակրկնության այդպիսի «վերբացատական» ֆունկցիայի տեսակետից նաև եվե (эве) նեգրական լեզվում (Գվինեայի ափերին)՝ yi «գնալ», yiyi. «գնալը, ընթացումը», կամ՝ wo «անել» իսկ wowo «արած» (mawomawo չանելիքը», не подлежащий деланию" թե բացատական մասնիկի և թե բայարմատի կրկնության միջոցով). Հոթենտոտների լեզվում հայտնի յև նման կրկնության պատճառական բայի համար, ինչպես gam «ասել» բայը gam-gam* «սովորել ասել, խոսեցնել». նույնը և անվանական արմատից, ինչպես՝ khoe-b «մարդ հոթենտոտ», բայը khoe-khoe «խոսել հոթենտոտերեն»։

Կրկնավոր բայերի հիմնական ֆունկցիան (բազմակիությունը) ուժեղացնելու կամ յերկարացնելու համար մեր հայոց բարբառները դիմում են նաև «տևականացնող»-or (կամ-ot) ածանցի ոգնությանն, ինչպես նման ուժեղացում արվում է թվի (հոգնակիի) տեսակետից։ Որինակ, պաչել-պաչպչել-պաչպչորել, խաչել-խաչխաչել-խաչխաչորել, ափսփսել-ափսփսորել (ափ «ձեռքի-թաթ» բառից), բնդել-բնդռնդել-բնդռնդորել (բնդբնդորել), վոբի համար կա և բընդորել կամ բընձորել (ուր «ր» ներածանցը փոխարինում է կրկնության ֆունկցիան). խլել-խլխլել-խլխլոտել (-ոտ մասնիկով). լմել-լմլմել-լմլմորել, ծամել-ծամծմել-ծամ-

* Այդ gam «ասել» բայի սկզբում կա ներշնչական մի հնչյուն (click), որը տառով չի գրված այստեղ։ Տես Ե. Սիպիրի «Լեզուն», եջ 60 և ծանոթ. 4, ինչպես և եջ 92, ծանոթ. 3։

ծմորել, դաղել-դաղդղել-դաղդղորել, չափել-չափչփել-չափչփորել, բշտել-բշտբշտորել։ Համմ. նաև ճմռել-ճմռռել-ճմռռորել (յերկու ուժեղացնող ածանցներով «ռ»,-«որ»), ճվճվորիկ, բղբղորիկ և այլն։ Ինչպես բայից ունենք խառնշտել (<խառն-ընջ-տ-ել), որը ուժեղացվում է «-որ» տեսականացնող մասնիկով և ստացվում է խառնշտորել, այդպես և լպստել (լպս-տ-ել) և լպստորել։ Կարծես թե բայի կրկնությունը տալիս է բազմատևական կերպը (Iterativum), իսկ-or (կամ-ot,-t) ածանցներով այդ գործողությունն տեսականացվում (Durativum) կամ թերևս ուժեղացվում է (Intensivum)։

Ռուսաց լեզուն կրկնություններով շատ աղքատ է*։ Այդ բացը կամ նկարագրորեն է լրացվում կամ էլ յերբեմն շաղկապով սովորական կրկնություն է ունենում, ինչպես—флаги, флаги. флаги... կամ более и более, новые и новые, красный прекрасный, мало по малу և այլն**։ Արդեն իսկական կրկնություններ կազմում քիչ թվով մակբայներ, ինչպես еле-еле, -чуть--чуть-, то-то և այլն։ Համմ. նաև ну-ну. ой-ой բացագանչական մասնիկը։ Արդյոք, ռուսաց тихохонький չի՞ ստացվել тихо բառի կրկնությունից (тихо+[ти]хо), որին ավելացել և ուժեղացնող (փաղաքշող) մի նոր—онький ածանցը, նման վերոհիշյալ գավառական հայոց որինակներին. իսկ սրա անալոգիայով կարող եր կազմվել близёхонький և նմաններ։ Հնագույն քաոցած կրկնություններ են (սլավոնական) հետևյալ բառերը՝ колокол «զանգ», որի հետ կապված և տեսողության գաղափար, նման գրաբարի զաւղանջել (զօղանջել) կրկնակի կազմության, կամ այժմյան զնգզնգալ բայի ֆունկցիայով։ Ցեվ յերկրորդ՝ սլավոններեն глагол «բայ» բառը, որը նշանակել և «խոսք» (համմ. глаголить), նման հայոց բարբառել բառի կրկնակ կազմության (համմ. նաև՝ մրթմրթալ, бормотать...)***։

Կրկնությունների բնականոնություն, որպես բարդության մի յուրատեսակ ձև՝ բազմակիության նախնական մի միջոց, հասուկ պիտի լինի գրեթե բոլոր լեզուներին, ինչպես և շեշտված եւ Սակայն, մենք կարծում ենք, որ այդ կրկնության որոշ

---

* Ի միջի այլոց շատ սիրում են կրկնություններ մալայան լեզուները։

** Համմ. նման կազմությամբ հայոց՝ գունդգունդ, փոխիփոխ, խառնիխուռն, մերթընդմերթ, զնամառնամ և այլն։

*** Այդպիսի կազմվածք ունի և հայոց «հայհոյել» բայը։ Համմ. հոթենտոտների khoe-khoe «խոսել հոթենտոտերեն» բայի նման կազմությունը։

«прием»-ներ կարող են փոխանցվել մի լեզվից մյուսին (կամ փոխառնվել անմիջապես)։ Այդպիսի քիչ թե շատ ընդհանուր և թևերս «փոխանցված» կազմություն ունավորություն և թողնում այժմյան հաց-մաց, ծուռ-մուռ, խճճվել-ժճճվել, պարապ-սարսափ, աման-չաման և նման կազմությունը, որը կա և վրացերենում, թյուրքական շատ լեզուներում, պարսերենում, թևպետև դեռ դրաբարում ունեինք շղոմղոդ, հասատասկաս—հասատաբեաս, խառնամառն, խաժամուժ, աղջամուղջ, արհամարհել և այլն «բնական» բարդություններ, որպես այդպիսի կրկնավորներ «ժ» բաղաձայնի ողնությամբ և «ա» հոդակապի միացմամբ (համմատ. հոդակապով նաև՝ նորանոր, չարաչար, գանազան, բարձրաբերձ, մեծամեծ ևայլն)*։

ԱՖՖԻՔՍԱՑԻԱ**

Աֆֆիքսների մասին մենք մանրամասնորեն խոսել ենք, երբ մոտեցանք ձևի պատմական գոյացման խնդրին, ինչպես և լեզվի բովանդակական կողմին՝ մտքին (resp. նախադասության) և մտքի առարկաներին՝ բառերին (նյութական բովանդակության), ձևական բառերին և յերկրորդական ձև-մասնիկներին (բառաստեղծական և բառահարաբերական կամ բառափոխական)։

Անտարակույս բոլոր ձևաբանական միջոցներից ամենից շատ տարածված են աֆֆիքսները կամ մասնիկները և մանավանդ վերջամասնիկները՝ սուֆֆիքսները, մի քիչ պակաս նախամասնիկները՝ պրեֆիքսները, իսկ ավելի պակաս միջամասնիկները (ներմասնիկները)՝ ինֆիքսները։ Մենք արդեն գիտենք, որ քիչ լեզուներ կան, ինչպես չինարենը, սիամերենը և մասամբ տիբետերենն ու աննամերենը, որոնք չունեն մասնիկներ և որպես ձևական բառ. ոգտագործում են ինքնուրույն բառաժամանակը։ Լեզուներ կան, ինչպես թյուրքերենը, հոթենտոտերենը, եսկիմոսերենը, նուտկա և յանա հնդկերենը Ամերիկայում, որոնք գործ են ածում միայն վերջամասնիկներ, իսկ, որինակ,

---

* «Մայատպկան» հին բառն ևս այդպիսի կրկնություն և հոդակապով, սակայն խայա (=բիծ, пятно) արմատը յերկրորդ դեպքում սկզբի «խ»-ն փոխում է «ք» շրթնայինի (նման խառնամառն, հասատաբեաս ևայլն), իսկ արմատի մեջ առաջանում է «ք» (> ղ) նոր հնչյուն, ինչպես և «այ» յերկհնյանը փոխվում է «ա» ձայնավորի։

** Տես նաև Սևիր, Լեզու, եջ 53—57.

քխմեր (կամ կամբոջի) լեզուն ֆրանսիական կոխինխինայում (Ինդոչին) ունի միայն նախամասնիկներ, իսկ վերջամասնիկները արդեն ձուլվել են արմատի հետ և չեն դիտակցվում։ Լեզուներ էլ կան, ուր բառաստեղծական մասնիկը («ածանցը») արմատի սկզբից և դրվում և վերջում, բայց բառահարաբերական մասնիկը միայն բառավերջում, ինչպես, օրինակ, հնդևրոպական լեզուներում։ Մյուս կողմից էլ կան լեզուներ, ինչպես «Բանտուս» նեգրերինը կամ Հյուսիսային Ամերիկայի ատաբասյան հնդկական լեզուները, ուրտեղ քերականական՝ բառահարաբերական մասնիկները արմատին են նախորդում, նախամասնիկավոր լեզուներ են, վերջամասնիկները ավելի քիչ են կապված արմատի հետ։ Ընդհանրապես աֆֆիքսավոր լեզուների մեջ այդ մասնիկների ֆունկցիան այլևայլ քանակի տարբերացման և չենթարկվում ըստ դիրքի՝ բառասկզբում թե վերջում. յերբեմն դերիշխում է, դիցուք բառաստեղծական մասնիկը բառասկզբում, յերբեմն՝ բառավերջում. այդպես և բառահարաբերական մասնիկը։ Համմ., օրինակ, դերանվանական հարաբերական մասնիկի կցումը բային վրաց լեզվում (սկզբում), սեմիտերենում (սկզբում և վերջում), խեթերենում (վերջում) և այլն։ Իսկ, օրինակ, Կալիֆորնիայի (Հյուս. Ամերիկա) «չիմարիկո» կոչված հնդկերեն լեզվում այդ դերանվանական աֆֆիքսների դիրքը (սկզբում թե վերջում) կախված է բայից. վորոշ բայերին սկզբից է կցվում, իսկ մյուսներին՝ վերջից։

Բերենք պրեֆիքսացիայի, սուֆֆիքսացիայի և ինֆիքսացիայի* մի քանի բնորոշ օրինակներ.

Հյուսիսային Ամերիկայի (Որեգոն նահանգի) չինուկ հընդկերենում, ինչպես և խուպա հնդկերենում (Կալիֆորնիայում) գերիշխում է նախամասնիկացումը։ Օրինակ, չինուկերեն i-n-i-ă-l-u-d-am բառը բաղկացած է մի հիմնական (d) արմատից, իսկ ձևացողները մասնիկներ են (թվով վեց). i-ձևը տալիս է անվերջական անցյալի գաղափար, -n- ցույց է տալիս «յես» դերանունը, -i- դերանուն «այս», -ă- «նա» («նէ»), -l- «համար» (կամ սրակ. հոլովի ֆունկցիա), -u- ցույց է տալիս խոսողից յերած ուղղություն՝ դեպի այն կողմ ("туда"), -d-հիմնական արմատաձևը նշանակում է «տալ, հանձնել», իսկ վերջամասնիկ

* Հայերեն կարելի յե թարգմանել՝ նախամասնիկացում (префиксация), վերջամասնիկացում (суффиксация) և միջամասնիկացում (инфиксация) կամ՝ ներմասնիկացում (ըստ Մ. Աբեղյանի)։

«-am»-ը ցույց և տալիս գալու (գնալը շարժվելու) գաղափար։ Ամբողջ բառը, վորն և փաստորեն նախադասություն (շեշտը a ձայնավորի վրա է), նշանակում և հետևապես՝ կես կեկա, վոր հանձնում նրան (կին և) այս բանը. իսկ տառացիորեն՝ ահա կես այս նէ համար (նրան) գնալը տալ գալ (=ահա կես այս բանը նրան տալու կեկա)։

Վերջաժամանիկների համար վերցնենք ֆոքս կոչված հընդկերեններից* հետևյալ բառ-նախադասությունը՝ eh-kiwi-n-a-m-oht -ati-wa-ch(i) «այն ժամանակ նրանք բոլորը միասին ստիպեցին (նրան) փախչել իրենցից» (тогда они все вместе заставили (его) убегать от них)։ Արմատն է kiwi-«շարժվել դես ու դեն». նախաժամանիկ eh-ժոտավորապես նշանակում է «այն ժամանակ» (тогда), „-n-"-ն կարծես թե հոդակապ է հաջորդ -a-յի հետ կապվելու համար. «-a-»-ն յերկրորդական արմատ (բուն) է և ցույց և տալիս «փախչելը». „m" ցույց է տալիս պատճառականություն (причинность) շնչավոր առարկայի համար. -o(ht)-ցույց է տալիս չեզոք կամ չեզոք-կրավորական (medio-passivum) սեռը յինթիակայի նկատմամբ. -a(ti)-փոխադարձություն ժամանակ և. -wa-chi ցույց է տալիս յերրորդ դեմք հոգնակի շնչավոր առարկաների համար (-wa-=հոգնակի. իսկ chi=դեմք) «սառըբադասական» ձևերի մեջ։ Ամբողջը ժոտավորապես հնշանակե. «այն ժամանակ նրանք (շնչավորները) ստիպեցին մի շնչավոր հակի թափառել, փախչելով կամ մեկից կամ մյուսից» (=тогда они (одушевленные) принудили некое одушевленное существо скитаться, убегая то от одного, то от другого из них)։ Սեպիրը բերելով այս որինակը («Լեզու», եջ 55—56) ավելացնում է. „В эскимосском, нутка, яна и других языках налицо подобные же сложные нагромождения суффиксальных элементов, но выполняемые ими функции и принципы их комбинирования весьма разнятся от одного языка к другому" (ibid., 56):

Ինֆիքսացիան (ներմանիկացում) լեզուների մեջ քիչ և տեղի ունենում. և այս քիչը բացատրվի նրանով, վոր արմատի ամբողջության զգացումը խախտվում և թուլանում է։ Հնդեվրոպական լեզուներից ներմանիկ ունեն սանսկրիտը,

---

* Միսսիսիպիի հովտի ալգոնկինյան լեզուներից և և լավ ուսումնասիրված (բաս. Սեպիրի)։

նարինը և լատիներինը բայերի ներկա ընի տարբերման համար նրա (բայի) մյուս ձևերից, ինչպես լատ. vinc-o «հաղթում եմ, բայց vic-i «հաղթեցի», linquo» թողնում եմ—liqu-i «թողի»*, հունարեն lamb-an-o «վերցնում եմ»—e-lab-on «վերցրի» և այլն։ Ավելի բացահայտ է այդ ինֆիքսի դերը հարավ-արևելյան Ասիայի և Մալայան արխիպելագոսի լեզուներում։ Որինակ, քխմեր («կամբոջի») լեզվում՝ tmeu «գնացող-յակող» (ходящий) և daneu «գնալ-գալը» (ходьба), որոնք ածանցված են -m- և -an- ինֆիքսներով deu „ходить" արմատից։ Ֆիլիպինյան կղզիների «բոնտոկ-իգորոտ» կոչված լեզվում -in ինֆածանցը (ներմասնիկը) գործողության արդյունքն է տալիս, ինչպես kayu «անտառ», բայց kinayu «ցախ», իսկ -um- ինֆածանցը հատուկ է շատ անանցողական բայերի համար հանդերձ իրենց անձնական դերանվանական վերջավորություններով, ինչպես՝ sad «սպասել», բայց sumid-ak «չես սպասում եմ». կամ՝ kineg «լուղղ», իսկ kuminek-ak «չես լռում եմ»։ Այլ բայերի մեջ այդ „um"-ը տալիս է ապառնի ժամանակը, ինչպես tengao «տոնել», բայց tumengao-ak «կտոնեմ». իսկ անցյալի համար հաճախ գործ է ածվում -in- ներմասնիկը։ Ցեբե այդ լեզվի բառի մեջ արդեն կա -um- ներմասնիկը, ապա նախորդ in և um ներմասնիկները -in-m- միացյալ ձևով են հանդես գալիս, ինչպես՝ kinminek-ak «չես լռում էիր»։ Ֆիլիպինյան կղզիների այդ բոնտոկ-իգորոտ լեզվի մեջ, ինչպես տեսնում ենք, ներմասնիկը նույնպես կենսունակ է ինչպես այլ լեզուների նախամասնիկները կամ վերջամասնիկները։ Նույն յերևույթը (ինֆածանցման) տեղի ունի և Ամերիկայի բնիկների շատ լեզուներում։ Որինակ, յանա կոչված լեզվում հոգնակին կազմվում է ինֆածանցի միջոցով, ինչպես՝ k'uruwi «հնքիմներ» (знахари) կազմված k'uwi յեզակիից (հնքիմ, „знахарь"). չինուկերենում „l" ինֆմասնիկը որոշ բայերի պատճառում և գործողության կրկնություն, ինչպես՝ ksik'ludelk „она поглядывает на него", iksik'lutk „она глядела на него" (արմատական ելևէնտն է=tk). իսկ «այուլ» հնդկերենում որոշ բայերում տեսնում ենք դերանվանական ելևէնտների ներմասնիկացում, ինչպես՝ cheti „разложить костер

---

* Հայերենում այդ նույն արմատը ունի վերջամասնիկ -an-, ինչպես՝ գրաբարյան լըքանեմ (<likh-a-nem) «թողնում եմ». անց. կատ. լըք-ի, լըք-եր, ե-լիք և այլն։

խակ chevati „я раскладываю костер". shuta „промахнуться", խակ shuuta-pi мы „промахиваемся" (տես այս բոլորի մասին Սեպիրի մոտ, էջ 56—57)։ Այս վերջին դեպքը մեզ հիշեցնում է մինգրելերեն muša արմատից կազմվող ներկան, ուր w դերանվանական սուղորական նախամասնիկը դրվում է մեջը և առաջ-ում է muwš-ənkh «աշխատում եմ» փոխանակ սուղորական w-muš-ənkh կազմության*։

ԱՐՄԱՏԱՀՆՉՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Այստեղ արմատի սեփական հնչյուններն են փոփոխության ենթարկվում, որը վոմանք կոչում են «ներքին ֆլեքսիա». և այս լինում է թե բաղաձայնների և թե ձայնավորների նկատմամբ, թե քանակապես և թե վորակապես։

Ձայնավորների վորակական փոփոխման տեսակետից համեմատել գերմ. Apfel «խնձոր», Äpfel «խնձորներ», Ofen «վառարան», Öfen *(հոգն.) հայոց* ŝun *(ուղ., հայց.),* ŝan *(սեռ. տր.),* anjən «անձն»—anjin *(սեռ. տր.),* anjan-ç *(սեռ., տր., բաց. հոգն.) և* vehanjun-kh «վեհանձնությունք» *(ուղղ. հոգն.), ուր տեսնում ենք այլևայլ հոլովիչների համար* anjən ‖ anjin ‖ anjan ‖ anjun *չորս հոլովաբնների ալտերնացիա ընդ վերջին ձայնավորների փոփոխմամբ (ə ‖ i ‖ a ‖ u),—մի յերևույթ, վոր շատ արխայիկ է հնդեվրոպական լեզուների համար, բայց ճոխությամբ դեռ պահած ուներ դրաբարը։ Համեմատել անգլերենում* sing, sang, sung *և* song *միևնույն արմատի («յերգել») տարբերացումները, ինչպես և յեզակիի (*goose «սագ») *և հոգնակիի (*geese «սագեր») *նույն ներքին տարբերացումը ձայնավորների վորակական փոփոխությամբ, ինչպես ունի զերմաներենը։ Հայոց* sun «սուն» (=կերակուր, անուշդ, пища) *և* san «սան» (կերակրվող, питомец) *բառերի մեջ այդ ձայնավորական տարբերացումը ստեղծել և նոր բառեր։ Համմ. կլլն—կանայք, քերել ‖ քորել և այլն նման ֆունկցիայով ռուսերենում վորպես այդ ներքին ֆլեքսիայի որինակներ կարելի յե մատնանշել որինակ* nagà «վոտ»—nógi «վոտեր», akno «լուսամուտ»—ókna «լուսամուտներ»..., կամ selo «село» *(գյուղ)*—s'óla „сёла" *(գյուղեր), летать «թռչել»—лётчик*

---

* Այդ muša արմատը կա նաև հայերենում «մշակ» ձևով, վորն ըստ Մառի ստացվել և եբրայական mušak «մոսոխ, մեսխացի» հին տերմինից։

«քուչոդ» ասյլն, իսկ տարբեր ածանցման դեպքերում ունենք՝ որինակ, бер-у, бр-ать, со-бир-ать, с-бор, այսինքն՝ бер- ‖ бор- ‖ бр- ‖ бир- ալտերնատիվ ձևերը ըստ ձայնավորների փոփոխության ժխնուչ արմատի մեջ։

Ամենահետաքրքիրը որինակներ են տալիս՝ ձայնավորների փոփոխմամբ նոր բառեր կամ բառահարաբերություններ ստեղծելու համար՝ սեմիտական լեզուները և խամիտերենը, իսկ բաղաձայնների փոփոխմամբ՝ հնդեվրոպական իրլանդերենը և Աֆրիկայի Սուդանի «ֆուլ» կոչված նեգրերենը։ Բերենք որինակներ։ Այժմյան արաբերենում (Ցեզիլստոսում)* «բեկուն» (ломанное) հոդնակին կազմվում է հետևյալ կերպ. որինակ. balad «յերկրամաս» (местность)—bilad (հոդն.), gild «կաշի»—gulud (հոդն.), ragil «մարդ»—rigal (հոդն.), šibbak «լուսամուտ» šababik (հոդն.), kurd «քուրդ»—akrad «քրդեր» և այլն։ Մարոկկոյի բերբերյան «շիլհ» լեզվում («քամյանն» լեզուներ են) izbil նշանակում և «մաղ», իսկ հոդնակի՝ izbel, այդպես և a-slem «ձուկ»—i-slim-en «ձկներ», sn «իմանալ»—sen «լինել դիտուն» և այլն։ Սոմալի լեզուն (խամիտերեն) տալիս է նման ձայնավորափոխություններ, ինչպես՝ al «յեմ» (я есть), իսկ il «եյի» (я был)**, i-daha «խոսում եմ, իսկ i-di «խոսում եյի», deh «խոսիր»։

Բաղաձայնների փոփոխումը ժխնուչ արմատում, վորպես ֆունկցիոնալ մի միջոց, ամենից լավ հայտնի յե իրլանդերենում և նեգրական «ֆուլ» լեզվում։ Իրլանդերենում, որինակ, բայարժատի պարզ պայթականը փոխանցվելով շնչական պայթականի (ասպիրատի)՝ հիմք և ծառայում անցյալ ժամանակի ձևավորման. յեթե բայը, դիցուք, սկսվում է t բաղաձայնով, ապա անցյալում նա դառնում է th, վորը հիմա հնչվում է h, իսկ յեթե սկսվել է g բաղաձայնով, ապա անցյալ ժամանակում արմատը դրա փոխարեն ստանում է gh, վորը հնչվում է վորպես ձայնեղ սպիրանտ «ղ» (մեր «ղ») կամ «y» (մեր «յ»), նայած դրանց հաջորդող ձայնավորի վորակին։ Ցեզ այդպիսով, ինչպես Սեպիրն է ասում. „В современном ирландском языке принцип измене-

---

* Այս և մյուս որինակները բերում ենք՝ Սեպիրի գրքից քաղելով (տես նրա «Լեզուն», էջեր 57—59).

** Այդ փոփոխությունը մեզ հիշեցնում է վրաց akh «այսուհետ» և ikh «այնուհետ» ալտերնացիան, վորպես բառաստեղծական նման միջոց։

ния согласных, возникший в древнейшем периоде языка *в качестве побочного следствия из определенной фонетической обстановки*, сделался одним из основных грамматических процессов" („Язык", եջ 59, ընդգծումը մերն է)*։ Իսկ Սուդանի ֆուլ նեգրերենում «անձերի դասին» պատկանող դոյականները իրենց սկզբի բաղաձայնը փոխում են հոգնակիում այլ հնչյունի, ինչպես g, j, d, b, k, ch, p բաղաձայնները փոխվում են համապատասխան կարդով y (կամ w), y, r, w, h, s, f բաղաձայնների։ Որինակ, jim-o [žim-o] «ընկեր», իսկ yim-'be «ընկերներ», pio-o «խփող», իսկ fio-'be «խփողներ» և այլն։ Բայց զարմանալին այն է, որ «իրերի դասին» պատկանող դոյականները սրամտաձորեն հակառակն են անում հոգնակի ստեղծելու համար, ինչպես, որինակ, yola-re «մարդագետին» (лужайка), բայց jola-je «մարդագետիններ», fitan-du «հոգի»—pital-i «հոգիներ» և այլն։ Սեպիրը մատնանշում է անգլերենում արմատավերջի բաղաձայնի փոփոխության մի յերկու դեպք, յերբ դրանով դոյականն ու անունը տարբերացման են յենթարկվում, ինչպես՝ wreath (խուլ th-յով) «պսակ», բայց to wreathe (ձայնեղ th-յով) «հյուսել պսակ», կամ՝ house «տուն» բայց to house (ուր s=z) «ապաստան տալ, „приютить". իսկ այժմյան ամերիկացիք իրենց անգլերենում սկսում են տարբեր հնչել rise «վերելք» (the rise of democracy «դեմոկրատիայի վերելքը»), հնչելով «րրիս» (խուլ «ս»-յով), իսկ to rise բայը (ուր s=z) «վեր յելնել, „подниматься" յուր z հնչմամբ արդեն տարբերացվել է**։

Բացի արմատի ձայնավորներն ու բաղաձայնների վորակական փոփոխություններից՝ արմատի ֆունկցիայի կամ բովանդակության փոփոխման համար ոժանդակ դեր են խաղում նաև այդ հնչյունների քանակական փոփոխությունները, յերբ ձայնավորը կարճից դառնում է յերկար կամ ընդհակառակը, իսկ բաղաձայնը կրկնվում է, կամ ավելի ճիշտ՝ յերկարում և ուժե-

---

* Նման պատահական հնչյունաբանական պարագան ձևաբանական ֆակտոր է դարձել նաև ռուսաց село—сёла, ведро—вёдра, нога—но́ги և այլն բառերի մեջ (մինչև իսկ ժամը՝ пальто—по́льта ժողովրդական լեզվում, ինչպես և красно—кро́сна—շորի տեսակ է)։ Հոգնակիի համար այդ պատահական հնչյունափոխությունը (շեշտի հետևանքով) այժմ դարձել և անհրաժեշտ ձև։

** «Նկատ», եջ 58.

դառնում է (consonne géminée)։ Վերևում արաբերենից բերված օրինակների մեջ կային այդպիսի ձայնավորների կարճացում-երկարացում, որը չի նշված. իսկ բաղաձայնների համար հատկանշական հենց նույն արաբերենում արժատի միջի բաղաձայնի փոփոխող դերը, երբ նա «կրկնվում է», ինչպես՝ kasara «նա կըտրեց», բայց kassara «նա կտրտեց», որով («կրկնության համը») բայը ստանում է բազմակիության և ուժեղացման նոր ֆունկցիա։ Համմտ. հայոց՝ հիմնար հնչյունը ավելի ուժեղացնելու համար հիմնական միտքը*, նման ռուսաց дуррак, թյուրք axxmax և այլն նման բառերի նույն դերին։

Ցերբ քննում ենք արմատի հնչյունների այսպիսի վորակական և քանակական փոխհարաբերությունները, վորպես ֆորմատիվ մի միջոց, ապա միշտ ի նկատի պիտի ունենալ դրա հետ և ֆունկցիոնալ կամ բովանդակական փոփոխությունը։ Որինակ, ռուսերենում ունենք лик «դեմք» արմատի յերեք ալտերնատիվ ձևեր, յերեք փոփոխակները շնորհիվ k բաղաձայնի փոխվելուն ц և ч բաղաձայնների, ինչպես лик (облик..), личный, лицо, лица և այլն, սակայն лик- ‖ лич- ‖ лиц- փոփոխումը նոր վորակ չի տալիս, կարծես թե չոր ու ցամաք «ձևական» է. այդպես և верх ‖ верш-ина, вод-ить ‖ вож-у ‖ вождь և այլն և այլն։ Սակայն յերբ մի հնդեվրոպական վորևե հին լեզվում արմատաձայնավորի e ‖ o ‖ — (զերո) փոփոխությամբ այլևայլ բայաբներ հին ատենջվում (ներկան e բնով, անց. կատարյալը o բնով հայկն), այն ժամանակ այդ „перегласовка“-ն պատճառում է նաև ձևաբանական իմաստ, այսինքն՝ ստանում է նոր նշանակություն։ Թեև ակզբում նման փոփոխությունները պատահական կերպով են լինում, կրելով սոսկ ձևական նշանակություն, իսկ հետո միայն ստանում են նոր ֆունկցիա ևս, յեթե լեզուն այդ պահանջը ուներ։ Այս կապակցությամբ բերենք որինակներ հայերենից։

Հին հայերենը, ինչպես և մեր բարբառները, շատ լավ որինակներ ունեն հատկապես բաղաձայնների փոփոխման համար, որով նախկին արմատը ստանում է նոր իմաստ։ Այսպես, որինակ, առաջ յեղել է արուեստ, որը նշանակել է «արվեստ, տեխնիկա, դիտություն, արհեստ» և այլն, իսկ հետո դրանից առաջացել է w ‖ h ալտերնացիայով նոր «արհեստ» բառը, որը թեպետ

---

* Վազգել, լոպազ, ինձը, տասը, ուխտը և նմանների մեջ կրկնության նոր ֆունկցիա չի ստեղծել։

հնում ուներ գրեթե նույն իմաստները, ինչպես և «արուեստը», սակայն, հասարակական պահանջին տեղի տալով, գրանցից մեկը (վերջինը՝ արհեստը) հարմարեցվել և նոր «արհեստ» հասկացությանը, մորպես հասարակական-տնտեսական այդ շրջանի մի կարևոր գործոնի։ Այդպես, որինակ, և մի «շոգի» բառը, որը նշանակել և «հոգի, շունչ», «գոլորշի» (համմտ. առ ոշոգի, առաշոգի «առանձին»). բայց § ‖ h ալտերնացիայով առաջացել և, թերևս մի այլ բարբառում, մի նոր «հոգի» փոփոխակը, որը սկզբում կարող եր իմաստով չտարբերվել, բայց հետո, կրոնական մորոշ պահանջի համաձայն, ստացել և նոր իմաստ «հոգի» (=душа)։ Այդ յերկու բառերն էլ (շոգի, հոգի) իրենց վերջին բաղաձայնների կրճատումով տալիս են նոր ալտերնատիվ ձևեր, թեպետ կարող եր և հակառակը լինել, և ստացվում են շոգ „душный. жаркий“, և հոգ „забота“, իսկ հոգի ձևից h հնչյունի կրճատումով առաջացել և ոգի (ogi), որը հիմա հնչվում և «վոգի» և ստացել և այլ նշանակություն, քան «հոգի» բառը (հոգի „душа“, ոգի «վոգի» =дух)*։ Համեմատիր նաև հետևյալ հաճախակից փոփոխականները—հետ ‖ յետ, հայր—հօր ‖ յօրայ («խորթ հայր»), հատ-անեմ ‖ յատեմ („обрезывать“), կուռ ‖ ճուռ (բարբառներում), տատանել ‖ ծածանել ‖ սասանել, ծայր ‖ սայր, թեքել ‖ ծնքել, թորել ‖ ծորել (‖ սրսել, որը պահել են բարբառները), խայթ ‖ խայծ, ղող-ել ‖ ղողիր ‖ ձանձիր (=ձանձրալի), շնչել ‖ հնչել, շրունել ‖ խրունել և այլն։

Հայոց բարբառներում այս յերևույթը դեռ կենսունակ է։ Որինակ, Աշտարակում ունենք պռճոկել (срывать), բայց սրա կողքին այժմ ստեղծվել և հնչյունափոխությամբ նաև՝ փոշոտել «թիրանը իրարից պոկել, կես անել», կամ թե «պռուկ» բառից

---

* Բառահարաբերական ձևերի կազմության համար՝ արմատահնչյունի կրճատման մեկնությի՝ համմտ. ուսաց мать (ուղղ. և հայց. հ. յեկ.) ստացված mater արմատից, որը մեում և մյուս հնդեվրոպում (սեռ., տր., գործ., տեղական և հսկնակիում), այդպես և дочь բառի կրճատումը (համմտ. дочери. дочерью և այլն). իսկ հնում նույնը յեղել և և брат բառի նկատմամբ։ Լատիներեում cor «սիրտ», որպես ուղղ. հոլով, ստացվել և cd- արմատահնչյունի կրճատմամբ (համմտ. սեռ. cord-is, տրակ. cord-i և այլն)։ Հայերենում ունենքսիրտ, որինակ, ուղղ. սար, մեղր, ծաղր, բայց սեռ, տր. սառ, մեղու, ծաղու և այլն, որոնք կազմվել են առանց ր-ի (<ուր՝ *մեղուր, *սառուր, *ծաղուր) բաղաձայնի։ Համմտ. այդպես՝ արտասուր (слеза) և արտասուք (ուղղ. հոգն.), ուր հոգնակին չունի այդ ր-ը։

ստեղծել են «պատռոկ» (շորի բուտոն. կոճակները, որ նման են պատռվածքի). կամ բընդորել-բընդորել և սրանց հետ՝ բընձորել և բընձորել, թեպետ վերջին տարբերակները («ձ» բաղաձայնով) նոր իմաստ չունեն և հետևապես դրանցից մի տեսակն է ապրելու (կամ բընդորել ‖ բընդորել և կամ բընձորել ‖ բընձորել)*։ Վաղարշապատում այժմ մռութ (морда, рыло) բառի կողքին ստեղծել են մռուղ (արհամարհական իմաստով՝ «մռուզը կախել է») և մզութ (փաղաքշական իմաստով)։ Մենք արդեն կրկնություններից դիտենք, որ դիսիմիլատիվ կրկնավորը (յերկրորդ անդամը) կարող է անջատվել. և թերևս հենց այդ ձևով ունենք ժճճվել բայը յուր խճճվել նախկինի հետ, ինչպես և մշրվել բայը փշրվել ձևի հետ, որոշ իմաստական նրբություններով, նայած բարբառին։

Կարող է պատահել, որ ալտերնատիվ ձևերը դադարեն և չդատազործվեն, բայց հիմնականները մնան։ Որինակ, բընդել—բընդորել ձևերը մնան, բայց բընդել (բլանդել)—բընդորել ձևերը (կամ բընդորել—բընձորել ձևերը) կորչեն, թեպետ և միջամասնիկ «լ» և վերջամասնիկ «-որ»- որոշ նրբություն են պատճառում։ Այդպես և «մռութ»-ը կմնա, իսկ «մռուղ»-ը և «մզութ»-ը հավանորեն կանհետանան (հիմա էլ վաղարշապատում քչերն են այդ իմանում)։ Համմ. ցամաք բառից ստեղծված մի շարք փոփոխակ բայեր—ցամաքել ‖ ցմքել ‖ սմքել ‖ չմքել ‖ չմշկել (Աշտարակում) այլևայլ նրբություններով։

Համեմատիր վրացերենում հետևյալ հետաքրքիր փոփոխակները—iportka ‖ iphorthxa ‖ ibordya «սողում եր չորեքթաթ» և սակայն դրանց իմաստական դիֆֆերենցիացիան դեռ չկա, և հետևապես դրանց ձևական պահպանման հիմքը թույլ է**։

Արդ, ինչ յեղրակացությունն են բերում մեզ այս հատվածի տվյալները։ Դրանք կարելի յե բաժանել վեցի—1) ձայնավորի փորակական փոփոխություն, 2) ձայնավորի սղում, 3) ձայնավորի յերկարացում—կարճացում. 4) բաղաձայնի փորակական փոփոխություն, 5) բաղաձայնի անկում կամ անհետացում (շոդի—շոգ, հոգի—հոգ, հոգի—ոգի), 6) բաղաձայնի յերկարացում՝

---

* Ցնծալ գրական լեզուն յուր նորմաները չքելտղրի և չփոխի այդ հին յերևույթը մեր բարբառներում։

** Այս որինակը յես բերում եմ, ոգտվելով Ն. Մառի „Грамматика др.-литературного грузинск. языка, Ленинград. 1925 г., стр. 024—025։

ուժեղացում (արաբ. kasara և kassara)։ Իսկ յեթե ընդունենք, որ արմատի մեջ կարող են պատահական կերպով մտնել և նոր հնչյուններ, և հետագայում դառնալ մասնիկներ, ապա արմատի հնչյունների ներքին փոփոխության տեսակները կարելի յե և մեկով ավելացնել։ Ընդհանրապես ասած, այս ձևաբանական մի-ջոցը („внутреннее перерождение элементов корня") հիմնվում է արմատի ձայնավորների կամ բաղաձայնների վրա-կան և քանակական փոփոխությունների վրա, թեպետ դրանցից դյուրավորը պիտի համարել առաջինը՝ վրակական փոփոխու-թյունը։

Շ ե շ տ

Նոր բառ կամ բառահարաբերություն կազմելու մեջ որոշ դեր է խաղում և շեշտը, լինի դա արտաշնչականը, այսինքն ու-ժի վրա հիմնվածը, թե յերաժշտականը, «ինտոնացիան»։ Հաճա-խակի այդ շեշտերի գործոությունը մնում մնում չի լինում, այլ խճողվում է այլ գործոտիով մյուսների հետ, ինչպես արմատի բաղաձայնի յերկարացումն է, կամ նրա վրակական փոփոխու-թյունն է. իսկ ավելի հաճախ, շեշտի ժամանակության հետ լի-նում է և աղիքացիա։

Անգլերենում, որինակ, շեշտի փոփոխմամբ բայը և գոյա-կանը սկսում են տարբերվել, ինչպես՝ to refúnd «վճարել», բայց a réfund «վճար», to extràct «հանել» (извлекать), բայց an éxtract «հանում, հանույթ» (извлечение), to lack lúster «աղոտ լինել, աղոտանալ» (быть тусклым), բայց láck-luster eyes «աղոտ աչքեր» (тусклые глаза)։ Ռուսերենում ժամանակ-շինք рекú «գետ» (սեռ. հ. յեդակի) իսկ péки «գետեր» (ուղղ. և հայց. հոդնակի). այդպես և стены՛ և стёны և այլն. իսկ воды՛ (հնչվում և вады) և вóды, կամ окнá (հնչվում և акнá) և óкна և նմանների մեջ շեշտի ֆունկցիոնալ դերի հետ գործում է և ձայնավորների (о և а) վրակական փոփոխությունը՝ ալ-տերնացիան։

Չինարենում յերաժշտական շեշտը շատ մեծ դեր է խաղում այդ կողմից, ինչպես՝ chung (հավասար տոնով) «մեջը, մեջտե-ղը» իսկ chung (իջնող տոնով) «ընկնել մեջը». կամ թե mai (բարձրացող տոնով) «գնել, առնել», իսկ mai (իջնող տոնով) «վաճառել». կամ թե՝ pei (իջնող տոնով) «մեջք», իսկ pei (հա-

վասաբ տոնով) «կրել մեջքին» և այլն։ Այսպիսի դեպքեր, սակայն, չինարենում ավելի քիչ են այն սովորականներից, երբ արմատի յերաժշտական հնչյունը բնական և, արտաքուստ համընկնելով նման արմատին, բայց այլ յերաժշտական տոնով։ Չինարենում այս դեպքում չորս տեսակի շեշտեր կան, իսկ անուանումներնում՝ վեց։ Որինակ, չինարենում feng հավասար տոնով նշանակում է «քամի», իսկ feng իջնող տոնով նշանակում է «ծառայել», վոր վոչ մի կապ չունեն իրար հետ, ինչպես, որինակ, ռուսաց му́ка «տանջանք» և мука́ «ալյուր», կամ թևրևս замо́к «կողպեք» և за́мок «դղյակ» և այլն*։

Բայց մեզ այստեղ հետաքրքրում է շեշտի դերը զուտ ֆունկցիոնալ կամ քերականական տեսակետից, երբ միևնույն բառից ստացվում է նրա նոր տիպը այլ վորակով կամ ֆունկցիայով, այսինքն՝ նոր բառ կամ նոր բառահարաբերություն։ Այդ կողմից, ամենից շատ և բազմազան դեպքեր ենք տեսնում Նեգրերի մոտ (Սուդանում), ինչպես մասամբ և Ամերիկայի բնիկների մոտ, հնդկերեն լեզուներում։ Սուդանի «եվե» (эве) լեզվում subo «ծառայել» արմատից ունենք յերկու կրկնակ ձևեր— subosubo «ծառայել», վորն ունի ցած տոն առաջին յերկու վանկերի վրա և բարձր տոն վերջին յերկուսի վրա. իսկ subosubo «ծառայող» ունի բոլոր վանկերում բարձր տոն։ Նեղոս գետի վերին հոսանքում գործածվող «շիլլուկ» լեզվում գոնում ենք՝ yit (բարձր տոնով) «ականջ», իսկ yit (ցած տոնով) «ականջներ». այդպես և այլուր aka «աստամ» և «աստամներ», նաև ցած շեշտին։ Բայական gwed—«գրել» արմատից ունենք այդ նեգրերենում gwed-o «գրում եմ» (ցած տոնով), gwet «գրված եր» (իջնող տոնով), gwet «գրիր» (բարձրացող տոնով) և gwet «գրություն, писание» (միջին տոնով)։ Ամերիկայում, այն է՝ Ալյասկայի հարավային ափում ապրող «տլինգիտ» հնդիկների մոտ ինտոնացիայի փոփոխումը առաջացնում է բայերի մեջ տարբեր ժամանակներ (ցածր տոնով կազմվում և անցյալ ժամա-

---

* Ամերիկայում «աստաբասյան» հնդկերենում դեպքեր կան, վոր յերկու դեպքով էլ կարելի յե բացատրել (ըստ Սեպիրի). կամ մի արմատից կամ ձևից շեշտով նորն է ստացվել, կամ դրանք անկախ են և շեշտերն անկախ ծագումով են, ինչպես այլ բազմաձայնները և ձայնավորները։ Որինակ, ta - di - gis (Ճնավոխոս) կոչված լեզվում նշանակում է «դու լվացվում ես (շեշտը յերկրորդ վանկի վրա), իսկ ta - di - gis «Ճնա լվացվում է» (շեշտը առաջին վանկի վրա յե)։ Տես Ե. Սեպիր, «Լեզուն», էջ 62.

նակը, իսկ բարձր տոնով՝ ապառնին)։ Համմ. նաև «տահելման» հնդկերենում (Ամերիկայում)* hel «յերգ» (իջնող տոնով), բայց hel «յերգիր» բարձրացող տոնով). այդպես և sel (իջնող տոնով) «ան ներկ», իսկ sel (բարձրացող տոնով) «ներկիր»։

Մենք արդեն գիտենք, թե ինչքան մեծ դեր է խաղում նախադասությունների տիպերի (տեսակների) և դրանց ձևավորման մեջ ինտոնացիան։ Ցերբ նախադասությունը յուր մտքով վերջացած է լինում, ապա և ինտոնացիան իջնում է և դադարում վերջում։ Այդպես է նկարագրական-հայտարարական տիպի նախադասությունների ինտոնացիան (повествовательная интонация)։ Բայց հարցական, բացագանչական և հրամայական տիպի նախադասություններում ինտոնացիան շարժուն է յուր տեղով, նայած խոսողի վերաբերմունքին։ Որինակ, հարցական ինտոնացիան («տրամաբանական շեշտ») կարող է լինել հետևյալ նախադասության յուրաքանչյուր անդամի վրա՝ «յերեկ քույրս գնաց համերգ», ուր շեշտվող բառի վանկը ստանում է բարձրացող ինտոնացիա, իսկ մյուս բառերի մեջ իջնող կամ հավասար շեշտ և, այսինքն՝ ստանում ենք չորս տիպի հարցումներ (յերեկ քույրս գնաց համերգ, յերեկ քույրս գնաց համերգ, յերեկ քույրս գնաց համերգ և յերեկ քույրս գնաց համերգ)։ Հրամայական և բացագանչական տիպի նախադասություններում ևս շեշտը տարբեր տեղեր կարող է ունենալ և արտահայտում է հրաման կամ դրդում (побуждение) և կամ այլևայլ ըմոցիաներ, զարմանք, հիացմունք, ափսոսանք։ Հաճախ այդ յերկուսն էլ միասին են հանդես գալիս (բացագանչա-հրամայական ինտոնացիա), ինչպես ասենք՝ գե, գնալու յես վերջապես տուն (քե չե)։ Նմանապես խոսն կարող է լինել և բացագանչական ու հրամայական ինտոնացիան. «որինակ, «ինչպես, դու արդեն այստեղ ես (հարցում և զարմանք)։

ԶԵՎԱԿԱՆ ԲԱՌԵՐ

Մենք արդեն յուր տեղում տեսանք «ձևական» («օպասարկու») կամ ժամանակ բառերի ծագումն ու դերը։ Դրանք կարող են թե բառաստեղծական և թե բառահարաբերական «քե-

---

* Մյուսյալ նահանգների Որեգոն նահանգում. այդ տահելման պատկանում է «պենուտի» կոչվող խմբին (Տե՛ս «Լեզուս Սեպիրի մոտ, եջ 214)։

բականական») դեր խաղալ. հետևապես դրանք ևս ձևաբանական միջոցներից մեկը պիտի հանդիսանան, ինչպես վերոհիշյալ վեցը*: Լինելով սկզբում անկախ բառ, հետո նաև ժամանակ մյուս բառի հատար, վերջում դրանք դառնում են սոսկ ձևական բառ, ինչպես լեզուների պատմությունն և մեզ սովորեցնում: Ջնաբենը այժմ հենց այդ պրոցեսն և ապրում: Սովորաբար լեզուներում ձևական բառերի դերը հարակցվում և մյուս ձևաբանական միջոցներին ավելի կոնկրետացնելով վերջիններիի ֆունկցիան: Որինակ, ռուսաց սեռական հոլովի ձևը հարակցվելով с կամ из ձևական բառերով տալիս և բացառական հոլովի հարաբերությունը**: Կարող և պատահել իհարկե, վոր հոլովական ձևը նախադասության մեջ, կախված բայի կամ անվան իմաստից, ստանա իր ձիշտ ֆունկցիան: Դիցուք թե մի լատիներեն horto «այգով» թե «այգուց» իմաստը կարող և ձիշտ հասկացվել նախադասությունից, թեպետ բացառականի համար ավելացվում և նաև ex նախդիրը. կամ մեր բարբառներում—կերթամ տուն, կինամ տուն, տուն իմ փոքր ի, ծախեցի իմ տուն և այլն նախադասությունների մեջ «տուն» ձևը թե ուղղական, թե հայցական և թե ներգոյական հոլովի ֆունկցիան կարող և արտահայտել (այսինքն այս դեպքում՝ յենթակայի, խնդրի և տեղի պարագայի), մոտենալով այդ ձևով ավելի շուտ «ամորֆ» տիպի լեզուների քերականական արտահայտությանը: Այստեղ մենք կարող ենք ասել, վոր նախադասության անդամների (և կապակցության) բովանդակությունը նույնպես ձևաբանական դեր և խաղում, և թերևս դա կոչենք ութերորդ միջոց:

---

*) Ե. Սևորդը բավականանում և միայն վեցը նշելով: Մենք ավելացրինք և այս յոթերորդը:

** Գրաբարում բացառականը նախդրավոր հոլով և, իսկ աշխարհաբարում բավականանում ենք միայն հոլովաձևով, ինչպես «ի քաղաքէ» (=քաղաքից) ֆունկցիան արվում և «ի» նախդրով և «-է» վերջավորությամբ, բայց աշխարհաբարում միայն վերջավորությամբ (-ից). այդպես և «ի քաղաք երթամ», աշխարհաբար «քաղաք եմ գնում» և այլն: Համմ. ռուսաց «к нему» (я подошел к нему), բայց հայերեն «նրան» (յես մոտեցա նրան), թեպետ ունենք և պարզ համապատասխանները (я передал ему=յես հանձնեցի նրան): Համմ. և ներգոյականը. գրաբարում «ի քաղաքի=աշխ. «քաղաքում», բայց ռուս. в городе, գերմ. in der Stadt և այլն գրաբարի պես: Համմ. հայոց մասիսով, բայց թուրք. karanda,sən ila և նմանները:

4. ԼԵԶՈՒՆԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Լեզուների խմբավորումը կամ դասակարգումը կատարվում է դիտնականների կողմից յերկու ձևով։ Կամ վերցնում են լեզուների մեջ գոյացած այն ընդհանուր տարրերը (արմատակազմից) ու պրիոմները, որոնք ստացվել են այդ լեզուների պատմահասարակական զարգացման ընթացքում, թե իրենց փոխադարձ սինթետիզացիայի կամ յուրացման հետևանքով (հասարակությունների միացման ժամանակ՝ առհմատիրական և մանավանդ դասակարգային շրջանում) և թե լեզուների ցրման (անջատման) հետևանքով, յերբ առհմատիրական հասարակակարգում մի ցեղ բաղմանում ու ցրվում, տարածվում էր այս ու այն կողմ։ Լեզուների այս հողի վրա գոյացած «ազգակցությունը» (родство) հնարավորություն և տալիս դրանց բաժանել այլևայլ խմբերի («ընտանիքների»), իսկ այդպիսի կլասսիֆիկացիան կոչվում և լեզվաբանության մեջ «գենեոլոգիական» (=ծննդաբանական), որը, թերևս, ավելի լավ լինի կոչել՝ լեզուների պատմական (կամ պատմա-հասարակական) կլասսիֆիկացիա։ Յեվ կամ վերցնում են լեզուների մեջ ստեղծված (անկախ իրարից) այն ձևական սիստեմը՝ տիպը, որով նրանք ժողովում են իրար։ Այդտեղ կլխավորապես ի նկատի յեն առնվում լեզվական հասկացությունների և կապակցությունների ձևաբանական միջոցները, որոնց մասին մենք խոսել ենք։ Լեզուների «ձևաբանական դասակարգումը» (морфологическая классификация) հաճարվում և վոչ այնքան արժեքավոր, ինչքան «գենեոլոգիականը», իսկ ֆրանսիացոց հայտնի լեզվաբան Մեյեն (Meillet), այժմ հանդուգնյալ, այդ ձևաբանական դասակարգումը համարում էր վոչ դիտական և մերժում էր)։ Ա. Տոմսոնը իրա-*

---

* Սեպիրի «Լեզու» գրքի մեկնաբանիչ Ա. Սոբոլևինը, ընդհանուր հղինակի (Սեպիրի) հետաքրքիր տեսակետները այդ դասակարգման մասին (ըստ ամերիկյան տիպերի), ավելացնում է. „Явные несообразности и проти-

վամբ հնաևյալն և նկատում այդ խնդրի մասին. «Պետք է սահկայն նկատել, որ շատ լեզուներ դեռ քիչ են ուսումնասիրված և դրանց ձևերի նշանակություններն ու պատմությունը առնասարակ քիչ են մատչելի, մանավանդ մի անձնավորության համար, յուրը նկատի յնս առնում դրանց թիվը, և որ անհնարին և տեղավորել լրիվ կերպով բոլոր լեզուները լեզուների մի քանի ֆորմալ տիպերի փեղկերի մեջ։ Դրա համար էլ ձևաբանական դասակարգումը գտնվում և ընդհանրապես անբավարար վիճակում և չի կարող առայժմ լուրջ գիտական նշանակություն ունենալ» (տես А. Томсон, Общее языковедение, Одесса, 1910, էջեր 41—42)։ Պիտի մատնանշել նաև, որ «սղզակից» կոչված լեզուներում ձևաբանական տիպը (կամ «քերականական կառուցվածքը») կարող և լինել և միանգամայն տարբեր, և ընդհակառակը՝ միևնույն ձևաբանական տիպ («ժողով») կարող և ստացվել և մոչ «սղզակից» լեզուներում, որոնք գտնվում են դիցուք թե մեկը Ասիայում (չինարեն) և մյուսը Աֆրիկայում (որինակ Գվինեայի «ևվե» նեգրերենը)։

Ձևաբանական այդ դասակարգման տեսակետից լեզուները բաժանում են յերեք խմբերի (տիպերի)՝ արմատական («անձև»=անմասնիկ), կցական և թևքական, որոնց միացնում են նաև՝ պոլիսինթետիկ կամ ինկորպորատիվ տիպը*։

Առաջին տիպի լեզուներում (արմատական, корневой), ինչպես

воречия ходячей классификации, прекрасно вскрываемые автором комментируемой нами книги, привели к тому, что интерес к классификации языков по структурным типам, к так называемой „морфологической" классификации, значительно упал у современных представителей буржуазной лингвистики, и наиболее авторитетный ее представитель А. Мейе отвергает вообще всякую морфологическую классификацию, как ненаучную, и единственно научной признает „генеалогическую" классификацию, классификацию языков по генетически родственным группам (семействам)». *Мейе. Введ., 1934, էջ 198.* (հրատարակություն ОГИЗ. СОЦЭКГИЗ).

* Ձևերի տիպ բաժանումը հիմնականորեն ավել և Ավգուստ Շլեգելը յուր «Նոթեր (заметка) պրովանսալական լեզվի և գրականության մասին» գրքում 1818 թվին, իսկ 1822 թվին Վիլհելմ ֆոն Հումբոլդտը յուր «Քերականական ձևերի ծագման և նրանց ազդեցության մասին գաղափարների զարգացման վրա» աշխատանքում ավելացրեց նաև «ներմարմնավորյալ» (инкорпоративный) կամ «բազմահամադրական» (полисинтетический) կոչված լեզվատիպը, որը հատուկ և, որինակ, ամերիկյան բնիկներին, ուր մի բառաբաղադրությամբ մի նախադասություն և արվում (տես Մեյեի մատ էջ 198)։

չինարենում, աննամերենում, սիամերենում հայկն, բառերը մեծ մասամբ միավանկանի արմատներ են, չունեն ոչ բառաստեղծական և ոչ էլ բառահարաբերական (հոլովման և խոնարհման) մասնիկներ։ Այդ պատճառով էլ թևքական տիպից յելած ֆորմալ ըմբռնողությամբ այդ լեզուները (չինարենը և այլն) կոչում են նաև «համորֆ», որ հունարեն բառ է և նշանակում է «անձև»։ Սկզբում այս տերմինը ընդունելի չէ, քանի որ դրա տակ կարելի յե հասկանալ, որ այդ լեզուները ընդհանրապես ձև չունեն,—մի բան, որ անհնարին պիտի թվա մեզ, թեպետ այդ տերմինի հեղինակները «համորֆ» ասելով հասկացել են «անմասնիկ» (ձևը հասկացվում էր միայն բառահարաբերական մասնիկը)։ Արմատական լեզուները կոչում են նաև «անջատական» (изолирующие языки)։ Մասնիկ չունենալու հետևանքով այդ լեզուներում գոյականը, ածականը, բայը և այլն չեն տարբերվում արտաքուստ, թեպետ արմատների վորոշ դասավորության պատճառով դրանք հասկացվում են. որինակ մի ta արմատը նշանակում է «մեծություն», «մեծ», «մեծացնել» և «շատ», նայած տեղին։ Այդ լեզուներում քերականությունը չի ունենա «ձևաբանություն» (նեղ իմաստով), վորպես մի բառի բառաստեղծական և բառահարաբերական մասնիկի ուսումնք, բայց կունենա անշուշտ հնչյունաբանություն, շարահյուսություն, ուր կքննվեն բառաստեղծման և հարաբերության այն սպեցիֆիկ ձևերը, վորոնք հատուկ են դրանց։ Իհարկե այդ ևս կլինի «ձևաբանություն», բայց լայն առումով, քանի վոր քննվելու յի բառաբովանդակության և հարաբերության գոյացումը դասավորման, արմատաբարդության (արմատների միացում), շեշտի, ոժանդակ բառի (վորը միաժամանակ այլ դեպքերում պահում է յուր ինքնուրույնությունը) և իմաստի միջնորդության։ հետևապես մասնիկի պակասը լրացվում և այլ ձևաբանական գործոններով։ Լեզուներ կան, վորոնք նման են այս տիպի լեզուներին, բայց ունեն նաև արմատի հնչյունական ևլեմենտների ներքին փոփոխություն («փուռիա», «ներքին ֆլեքսիա»), ինչպես տերբեռերենը, թեպետ վոչ շատ զարգացած ձևով։ Չինարենի մասին, մասնավորապես, այն կարծիքը կա, վոր նա մինչև VI-րդ դարը (Քր. յետո) ուներ մասնիկներ և դրանից յետո յե կորցնում այդ մասնիկները և դառնում «սուռ արմատական» լեզու։ Ի միջի այլոց նոր չինարենը արդեն նորից և սահեցել մասնիկներ («կցություններ»)՝ առաջված մի ժամանակ ինքնու-

բուլն բառերից (որինակ գերանունները և այլն), և հետզհետե ժառանգում է «կցական» տիպի լեզուներին։ Նանկինի գրական լեզվի հիմքում կա մոտ 450 արմատներ։ Քինական արմատների պատմական տարբերացումը, այսինքն՝ նոր արմատի գոյացումը հնից, կատարվել է արմատի սկզբնական բաղաձայնի և միջի ձայնավորի փոխոխմամբ, արմատի վերջի բաղաձայնի անկմամբ և այլն։ Իհարկե, այդտեղ դերծել է շեշտը, որինակ, mai բարձրացող շեշտով նշանակել է «գնել», իսկ իջնող շեշտ ստանալով կազմվել է նոր տարբերակ «ծախել» իմաստով, այդպես և լինում իհարկե և մյուս արմատների հետ։

Այժմյան ֆրանսերենը և մանավանդ անգլերենը գրեթե կորցրել են իրենց բառահարաբերական (թևքման) յիրկորդական ձևերը՝ մասնիկները, որով դրանք մասամբ մոտենում են «արմատական» տիպի լեզուներին, թեպետ և պահում են մասամբ արմատի ներքին հնչյունափոխական ձևերը, որոշ թվով բառահարաբերական մասնիկներ (հոգնակիի համար, խոնարհման մեջ) և ստվար թվով՝ բառակազմական մասնիկներ։ Իսկ ի տրխուր, որինակ, հոլովական ձևերի կորուստի, այդ լեզուները հոլովական հարաբերությունները այժմ արտահայտում են «ձևական» (ոժանդակ) բառերով՝ նախդիրներով։

— *Կցական կամ «ագլյուտինատիվ» լեզուները* (агглютинативные, агглютинирующие языки)—*մասնիկավոր են, ունեն կցույթներ* (прилепы), *որոնք կարող են միանալ արմատին, թե սկզբից և թե վերջից, իսկ արմատը միշտ և անփոփոխ։ Մասնիկների միացումը շատ թույլ է, կարծես «թքով և կպցրած», ինչպես ասում է մեր ժողովուրդը, և հենց այդ պատճառով էլ այդ լեզուները կոչվում են «կցական» կամ «ագլյուտինատիվ», հազմված լատիներեն* agglutinare «*կպկցկլ*» (склеивать) *բայից, որն իր հերթին առաջացել է* gluten «*սոսինձ*» (клей) *գոյականից։ Մասնիկները այդ լեզուներում ավելի շարժական և քիչ ֆուսկցիա յին ցույց տալիս, քան թևքական (ֆլեկտիվ) կոչված լեզուներում**։ *Որինակ, յերե մի դրաբարյան ֆլեկտիվ ձևով «տանց» (=տների,-ըից) կազմությունը ունի արմատի փոփոխություն* (u ‖ a: *տուն-* ‖ *տան-*) *և «ց» վերջավորություն, տա-*

* *Մասնիկների շարժականության տեսակետից համեմատել թյուրքական*—sevmišlerdir *և* sevmišdirler *(սիրում էին),* seviorlar idi *կամ* sevior idiler *(սիրում էին),* seveǰek-lerdir *կամ* seveǰekdirler *(կսիրեն)։*

ցիս և յերկու ֆունկցիա՝ հոլովի և թվի (իսկ այլ լեզուներում նաև սեռի, ինչպես дом-ов, ուր —ов-ը յերեք ֆունկցիա ունի), ապա մեր աշխարհաբարի կցական ձևի «տըն-եր-ի» կազմությունը այդ յերկու ֆունկցիաները տալիս և արդեն վոչ թե մի մասնիկով («ց» դրարարում), այլ յերկու, մեկով՝ հոգնակի թիվ (-եր-), իսկ մյուսով հոլովի ֆունկցիա, վոր կա և յեղակիում նույն ձևով (-ի)։ Համմ. Թուրքերենում—ev «տուն» ev—dā «տանը» (ներգոյական հոլ.), իսկ ev-ler-dā «տներում»։ Մեր այժմյան բարբառներում ունենք այնպիսի բարդ կցականություն, ինչպես արարատյան «տըն-նը-ներ-ում-ս» (=մեր տներում), շոր-նը-ներ-ից-ս (մեր շորերից)... կամ այլ տեղերում՝ շոր-եր-ներ-ս, շոր-եր-նի-ս և այլն և այլն, վորտեղ մի հոգնակիի նշանը իրին և վերաբերում (-եր), իսկ մյուսը՝ անձին (-ներ,-նի>նը)։ Համմ. Թուրքերենում՝ ev-ler- imiz-dä-ki «մեր տներում (evlerimizdä) գտնվողը (-ki)», վորը կարելի յե իր հերթին հոլովել։ Թեքական լեզուներում այսպիսի ձևական կազմությունը անհնարին և։ Կցական լեզուների ամենալավ տիպարն և Թուրքերենը, ուր այդ կցություները վերջից են միայն հավելանում, բայց այլ կցական լեզուներում (որինակ Ամերիկայի վորոշ հնդկական լեզուներում) այդ հավելացումը կարող և լինել և սկզբում, կամ ել՝ և սկզբում և վերջում։ Ռուսերենում, որինակ, развить—развиться, бить—биться և այլն ունի վերջում -ся (=իրեն) կցությը, իսկ որինակ заплакать, поплакать և նմանների մեջ за,- по- կնդրի նախակցությը։ Համմ. Թուրքերեն բայի նման կցական կազմությունը՝ yaz-«գրել» արմատից, ինչպես, որինակ, yaz-dər-əl-ma-miš-tər «գրած չի լինում», ուր dər կցությը պատճառական ֆունկցիա յե տալիս նման հայց—ցնել (ացնել, եցնել, ցնել), əl մասնիկը՝ կրավորականություն (=մեր «վ»), ma ունի բացասական ֆունկցիա (=մեր չ, վոչ), բայց միայն մասնիկաձև, miš անցյալ դերբայի ֆունկցիա (=մեր -ած) և վերջի tər ժամանակ բայի յերրորդ դեմքի ֆունկցիա։ Ամերիկյան ընիկների մոտ այդ կցականությունը ավելի յե զարգացած այն իմաստով, վոր այնտեղ վոչ միայն կցական այդպիսի բարդ բառեր կամ բառաձևեր են կազմվում, նման մեր հնդափոխական շրջանի нар-ком-тяж-пром և այլնին, ուր ի մեջի այլոց նույնպես հապավվելով կարող և բարդվել, այլ այդ ձևով կազմվում են և ամբողջական նախադասություններ, բայարմատի հետ, ուր կցությները թե առաջ կարող են դրվել և թե յետո

Մեր «յեսիմ»-ը, վորը կազմվել է «յես-ինչ-իմանամ» նախադասությունից, այժմ մեզ համար (արարատյան բարբառում) քերական այլևս բարդություն չի, բայց յուր կյանկանության ձևի տեսակետից հիշեցնում հենց այդ ամերիկյան բնիկների «բառ—նախադասությունը»։

Թյուրքերինը, վորպես կցական լեզու, ունի նաև այն հատկությունը, վոր սկզբնադիր արմատը անփոփոխ է մնում յուր հնչյունական դրությամբ, բայց իր ձայնավորի վորակով ազդում է (ետոն և տալիս») հաջորդ կցությունների ձայնավորների վրա։ Յեթե արմատի ձայնավորը յետնալեզվային է և միջնալեզվային (a, o, u, aə, ə, ы), ապա կցություններինը ևս նույն կարգի ձայնավորներից պետք է լինեն, իսկ յեթե արմատի ձայնավորը առաջնալեզվային շարքից է (aə, ə, i, ö, ü..), ապա կցություններինը ևս այդպես է։ Այս հարմոնիզացիան կամ ավելի ճիշտ հնչյունաբանական առաջընթաց ասսիմիլացիան ունին նաև ֆիննական և մոնղոլական լեզուները*։ Թյուրքական արմատի վերջին բաղաձայնն է նույնպես ազդում հաջորդ կցության կից բաղաձայնի վրա. այսինքն՝ այստեղ ևս գոյություն ունի առաջընթաց («պրոգրեսսիվ») ասսիմիլացիա։ Այս յերկու հնչյունաբանական յերևույթներն էլ հոդեբանորեն վկայում են, վոր արմատն է գերիշխում հաջորդ կցությունների հնչյունական արտաքինի վրա և յուր դերքով կարգավորում այդ վերջինները։

Լեզուների ձևաբանական յերրորդ տիպը—քերական կամ ֆլեկտիվ կոչվածն է, ուր մասնիկները ավելանում են արմատի սկզբից, վերջից, բայց և միջից՝ ներսից, ուր այդ մասնիկների միացումը ավելի օրգանական է, իսկ իրենք մասնիկները ավելի շատ ֆունկցիա յեն կատարում, քան կցական լեզուներում. օրինակ, մի докторов բառի -ов մասնիկը ունի յերեք ֆունկցիա (քիվ, հոլով, սեռ), ամենին անալիտիկ (resp. կցական) լեզուներում նման ֆունկցիաները բաժանվում են յուր առանձին մասնիկներին։ Քերական լեզուներում փոփոխական և նաև արմատի հնչյունական կազմը, թե ձայնավորների և թե բաղաձայնների նկատմամբ։ Մի ռուսաց бер-у բայի (վերցնում եմ) бер-արմատը կարող է ալտերնացիա կազմել ըստ ձայնավորի бор- (сбор, убор..)

---

* Համա., օրինակ, թյուրքական oda-lar-əməz-da «մեր սենյակներում», բայց ev-ler-imiz-dä «մեր տներում», վորոնց մեջ ձայնավորները ներդաշնակած են իրար ըստ վերոհիշյալ կարգի։

бир-(убирать, собирать...) և бр-(брать, собрать...) արմատ-ձևերի հետ, այսինքն՝ е ‖ о ‖ и ‖ —(zero) չորս ձևի ալտերնացիա արմատի մեջ։ Կամ մի արած-եմ արմատը կարող է տալ արաւտ (> արօտ) փոխանցումը արմատի մեջ «ա» (w) ավելացնելով և բաղաձայնի (ծ) վորակը փոխելով (տ), այն է՝ դեղատախիլա-ցիայի յենթարկելով այդ «ծ»-ն։ Արմատի հնչյունը կարող է յերկարել, կրկնվել, բարդանալ, ընկնել և այլն,—մի բան, վոր չկա նախորդ տիպի լեզուներում (արմատական և կցական)։ Սրանց պիտի ավելացնել և շեշտի դերը։ Կցական լեզուների արմատի շարժունությունը ամենից լավ յերևան է դալիս սեմիտական լեզուներում, վորոնք հնդեվրոպական լեզուների հետ պատկանում են այդ կցական ձևաբանական տիպին*։ Արաբերեն-ում, որինակ, մի kurd «քուրդ» բառի հոդնակին կլինի a-krad, ուր մեջում u ձայնավորը փոխվից „a“-ի և ետևում դրա ասպիրացիայով և յերկու բաղաձայնների աղղեցությամբ (kr), վոր արարը չի կարող հնչել, սկզբում ևս ավելանում է a, իսկ r բաղաձայնը „d“-ից հետանում է և ժառանգում է „k“-ին (տես նաև gild «հարշ», gulud «հարշներ» և այլն, եջ 261—267)։ Մենք դիտենք նույնպես, վոր սեմական բայարմատի յերեք բաղաձայնի մեջ կարող են մտնել a, i, u, ձայնավորները և կազմել տարբեր բայաձևեր, դերբայներ, անուններ և այլն, նման մեր հայոց ktr արմատից գոյացած կուռ (խելքակուռ...), կուռ (վոչխարների խուզումը), կտոր, կտոր, կտոր-ել ձևափոխություններին։

Լեզուները բաժանում են նաև այսպես կոչված սինթետիկ և անալիտիկ խմբերի, ըստ իրենց ներքին կառուցվածքի։ Առաջին տիպով բառահարաբերությունը տրվում է ժամնիկով բառի հետ, իսկ յերկրորդ դեպքում՝ ձևական առանձին բառով (նախդիր-հոդեր...), ինչպես ռուսաց стола, столу... սինթետիկ ձևերին համապատասխանում են ֆրանսիացոց de la table, a la table և այլն անալիտիկ ձևերը։ Այսպիսի բաժանումը ևս պատկանում է Ա. Շլեգելին, թեպետ սա ավելի քիչ է ընդունված, քան նախորդ 3 կամ 4 տիպերի բաժանումը։ Բայց սինթետիկ կամ անալիտիկ ձևերի տարբեր. արտահայտություններ կա և

---

* Ֆ. Ֆորտունատովը, փորձել կամ յերիտքերականական շկոլայի հիմնադիրը Բատտոտանում, առաջարկում էր սեմիտական լեզուները կոչել «փեքտական-կցական» („флективно—агглютинативные языки“). այդ մասին տես Գոլժիզիհոկու մոտ, „Введ. в языков., 1913 г., եջ 123.

ոչ միայն բառահարաբերական ձևերի մեջ, այլև, ըստ իս, բառակազմության մեջ, ինչպես բանալ, լալ, պարել և այլն արտահայտված են սինթետիկ ձևով, իսկ բաց անել, լաց լինել, պար գալ և այլն՝ անալիտիկ ձևով։ Հայերենը այս յերկու հնարավորությունները յերբեմն ոգտագործում է գաղափարների և բառերի հարաբացման ձևական հնարավորությունների հավար, ինչպես «քաշել» մի իմաստով, բայց «քաշ տալ» արդեն մի քիչ փոխված իմաստով (մեկը ТЯНУТЬ, մյուսը ВОЛОЧИТЬ)։ Համմտ. նաև՝ թափել և թափ տալ, կանգնել և կանգ առնել, փախչել—փախը տալ, խաբել—խաբը տալ և այլն և այլն։

Լեզուների ձևաբանական դասակարգումը, ինչպես շեշտվեց և, շուրի մեծ գիտական արժեք և չափ կարող է լավ ձևակերպման։ Այդ կողմից մի նոր փորձ է արել Ջեսպերսը յուր «Լեզուն» գրքում, թեպետ նրա առաջարկած ձևաբանական դասակարգումը ևս շատ թերի յին և քննադատելի։ Ավելորդ չեր լինի այստեղ բերել յերկու ուրիշ լեզվաբանների կարծիքը լեզուների այդ դասակարգման և փոխհարաբերության մասին։ Այսպես, Ուշակովն ասում է. «Առաջ կարծում էին, որ բոլոր լեզուները իրենց պատմական զարգացման ընթացքում անցնում են միևնույն ստադիաները, որ սկզբում դրանք բոլորն էլ յեղել են արմատական, հետո անցել են ագլյուտինացիայի (կցման) ստադիան և վերջապես՝ ֆլեքսիայի (թեքման)։ Այս կարծիքի հետ սերտված է նաև մի ուրիշը, այն է՝ որ թեքական կառուցվածքը ավելի կատարելագործվածն է։ Այդ յերկու կարծիքներն էլ այժմ հողնված են։ Որ լեզուների քերականական կառուցվածքը (строй) ժամանակի ընթացքում կարող է փոխվել, այդ անկասկած է, բայց այդպիսի հաջորդականություն չի կարելի սահմանել։ Ձեվ յերեի կարելի յե յենթադրել, որ որոշ թեքական լեզուներ առաջացել են կցականներից, ապա մյուս կողմից՝ թեքական տիպի որոշ լեզուներում ժամանակի ընթացքում անհետանում են բառերի որոշ ձևեր, այնպես որ որոշ տեսակետներից նրանք սկսում են նմանվել արմատականներին (որինակ, անգլերենը)։ Ջեսպերսենի մասին կա մասնագետների այն կարծիքը, որ նա միշտ արմատական չի յեղել, այլ որ նա, ընդհակառակը, վերապրել է կցականության ստադիանը։ Իսկ ինչ վերաբերում է, մասնավորապես, յերկրորդ կարծիքին, ապա նա հակագիտական է. ամեն մի լեզու ընդունակ է արտահայտել յուրաքանչյուրն իր ձևով, այն հարաբերությունները մտքի առարկաների միջև, ո-

բանք այդ լեզվով խոսողի մտածողությունը կարող է հայտնաբերել։ Իսկ չեթե կարելի չի խոսել մի լեզվի առավելության մասին մյուսի հանդեպ (կրթված մարդու կամ կուլտուրական ժողովրդի լեզուն անկիրթ մարդու կամ վայրենիների լեզվի հանդեպ), ապա այդ տարբերությունը վերաբերում է ոչ թե քերականական կառուցվածքին (строй), որի մասին մեզ մոտ խոսվում է, այլ լեզվի այլ կողմերին, որինակ, բառարանի հարստության թե աղքատության մասին, վերացական մտքերի համար կան բառեր, թե ոչ և այլն և այլն։ Մտավոր զարգացման հետ մարդը կամ ժողովուրդը հնարաստացնի և իր լեզուն, բայց նրա լեզվի քերականական կառուցվածքը կարող է մնալ նույն դրության մեջ» (տես նրա դիրքը, հ.հ. 79—80)։ Գրեթե նույնն է ասում և Ա. Տոմսոնը. «Շնչեխների որինակով անջատական լեզուներում տեսնում ենք լեզվի սկզբնական արմատական դրությունը, որից միացման միջոցով դուրս է գալիս (выработался) կցական կառուցվածքը (строй), որի ամենակատարյալ (высший) զարգացումը համապատասխանում են թևքական կառուցվածքը։ Այդ կարծիքին հակառակ այն նոր լեզուների անալիտիկ կառուցվածքի մեջ, որոնք կորցրել են հին թևքական ձևերը, մանավանդ անդլերենում և չինարենում, մի քանի նորագույն լեզվաբաններ տեսնում են լեզվի զարգացման ձևական զարգացումը, որը (լեզուն) դեն է նետել ձևական բևռը և այդպիսով ավելի չի համապատասխանում ամենագարգացած, այսինքն՝ պարզ, որոշ և հստակ մտածողության։ Պետք է հարկին ընդհատ առնել, որ մանանշված չերիք կամ չորս տիպերի մեջ լեզուները ընդհանրապես դժվարությամբ են տեղավորվում (укладываются с натяжкой)։ Իրենց պատմական զարգացման մեջ նրանք կարող են անցնել դրությունները, որոնք մոտ լինեն այս կամ այն տիպին։ Բայց նշանակալի է այն, որ նոր հնդեվրոպական լեզուները փոխարինեցին հարուստ թևքական կառուցվածքը մեծ մասամբ անալիտիկ, մասամբ կցական կառուցվածքով։ Ցեղեն ընդունենք, որ մտածողությունը առաջ է գնում (прогрессирует), ապա համեմատ դեպի թևքական կառուցվածքը չի կարելի համարել լեզվի ինչ որ զարգացում (высшее развитие языка)»։ Տես նրա «Общее языковедение», հ.հ. 44—45։

Իսկ ինչ եր ասում Ն. Մառը լեզվի այդ չերիք (չորս) ձևաբանական տիպերի մասին։ Նա ոչ միայն դրանց հաջորդականության մեջ չեր չերկմտում, ոչ միայն չեր խոսում շատ լե-

զուներն այդ տիպերի մեջ դժվարությամբ ընդգրկելու մասին և ընդհանրապես այդ ձևաբանական սահմանների սոսկ տեսական բնույթի մասին, այլ վորպես կատարյալ ճշմարտություն ընդունելով, նա անմիջապես ցանկանում էր տեսնել այդ հիմնավորել և ապացուցել,—մի փորձ, վոր մեր կարծիքով միանգամայն հաջող և ուշադրության արժանի էր (1929 թվին).

«Смены мышления—это три системы построения звуковой речи, по совокупности вытекающие из различных систем хозяйства и им отвечающих социальных структур—1) первобытного коммунизма со строем речи синтетическим, с полисемантизмом слов, без различия основного и функционального значения; 2) общественной структуры, основанной на выделении различных видов хозяйства с общественным разделением труда, т. е. с разделением общества по профессиям, расслоении единого общества на производственно-технические группы, представляющие первобытную форму цехов, когда им сопутствует строй речи, выделяющий части речи, а во фразе—различные предложения, в предложениях—различные его части и. т. п., и другие с различными функциональными словами, в последствии обращающиеся в морфологические элементы, с различением в словах основных значений и с нарастанием в них рядом с основным функционального смысла; 3) сословного или классового общества, с техническим разделением труда, с морфологией флективного порядка» (Տես նրա «Актуальные проблемы и очередные задачи яфетической теории, էջեր 23—24).

Մենք գիտենք իհարկե, վոր բոլոր լեզուները իրարից տարբերվում են։ Բայց յերբեմն այդ տարբերությունների միայն չորս քսամաք նկարագրությունն էլ մեզ վերջնական և ճշգրիտ բնորոշում չի տալիս։ Մենք գիտենք նույնպես, վոր շատ լեզուներ չեն յենթարկվում ավանդական այդ դասակարգմանը (արմատական, կցական, թևքական) և միայն բնությամբ կարելի յե դրանց մեջ խցկել։ Ամեն մի լեզու անշուշտ ունի իր ուրույնությունը և։ Դրանց ընդհանրությունները (ձևաբանական տեսակետից) չեն բղխում դրանց ազգակցությունից, այլ վոչ ազգակիցները հաճախ մոտավոր ձևաբանական տիպի յեն ժառանգում։ Ըստ լեզվաբան Սեպիրի («Լեզուն», էջեր 55—80) լեզուների ձևաբանական դասակարգման համար չորս կարգի խոչընդոտներ են ծառանում—1) տեսակետ ընտրելը, 2) հատկեպերին ընդհանրացում կատարելը, հիմնված լինելով սահմանափակ թվով լեզուների վրա (լատիներեն, արա-

բերին, թյուբքերին, չինարեն և թերևս եսկիմոսերեն և ամերիկյան բնիկների այլ լեզուն), 3) լեզվաբանների ձգտումը միասնական պարզ ֆորմուլայի (ըստ հնարավորության՝ յեռամիասնական ֆորմուլայի) և 4) եվոլյուցիոնիստական նախապաշարումը, վորի հետ շաղախվել և և հնդեվրոպական լեզուների (սկզբում՝ լատիներեն, հունարեն, սանսկրիտ..) բարձր լինելը ժյուանների հանդեպ, վորն անշուշտ արտացոլում և բուրժուական իդեոլոգիա։

Մաոի կարծիքը լեզուների ձևաբանական դասակարգման յերեք տիպերի մասին, վորպես արտացոլանք յերեք հասարակա-տնտեսական ձևերի և հարաբերությունների, առաջին փորձն և մատերիալիստորեն հասկանալու լեզուների այդ տիպերը կամ «դծանկարները» (чертежа), ինչպես Սեպիրն և ասում,—մի բան վոր դրվածքի կամ մոտեցման տեսակետից անշուշտ արժեքավոր և, յեթե իհարկե լեզվական ձևատիպերի այդ արտաքին մոտեցում-հեռացումները կարելի կլինեն անմիջապես կապակցել այդ հասարակա-տնտեսական սուբստրատի հետ (հիշեք մասամբ ենգելսի ասածը լեզվի հնչյունական փոփոխությունների մասին)։ Կան անշուշտ լեզվատիպական արտահայտությունների մեջ յերկու հակամերժ կետեր—անմասնիկ և մասնիկավոր, սինթետիկ և անալիտիկ, մի քանի ելեմենտների միացումից նոր բառ ստեղծել և կամ սուկ մեկից ծնեցնել նոր բառ (ներքին հնչյունափոխությամբ)։

Մեր կարծիքով լեզուների ձևաբանական կլասսիֆիկացիան առայժմ հեռուները չի կարող գնալ դրանց տիպերի ճիշտ սահմանման և բացատրության մեջ, թեպետ և լեզվատիպերի այդ ձևաբանական իմմանենտը բնորոշվում և վերջին հաշվով հասարակականով։ Լեզուների ձևաբանական տիպերի գնահատականը (յեթե ընդհանրապես այդ հնարավոր և անել) առայժմ սուկ նկարագրականից այն կողմը չի անցնում։ Մենք լեզուների պատմությունից գիտենք, վոր մի «անջատական-աբմատական» տիպի լեզվով խոսում են և Ամերիկայի կամ Աֆրիկայի հետամնաց (թերևս տոհմատիրական) ժողովուրդները և թե Չինաստանի կապիտալիստական և խորհրդային շրջանները։ Կարևորն և այստեղ, վոր լեզվատիպը հնարավորություն տա նորանոր բառեր և հարաբերություններ արտահայտելու, իսկ լեզվաբանների կարծիքով այդ հնարավորությունը դրանք տալիս են*)։

---

* Հմմտ. նաև Սեպիրի հետևյալ խոսքերը. «все языки располагают ресурсами для создания новых слов, стоит только возникнуть надобности в них» («Язык», 97, Ֆոնոք. 2)։

5. ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՊՐՈՑԵՍՆԵՐԻ ԵՈՒԹՅՈՒՆԸ

(«Ձևի դիալեկտիկայի ըստ էության»)

ՁԵՎԸ ՈՐ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես նախորդ հատվածից տեսանք, մեր լեզվական մտածողության այլևայլ կատեգորիաները, հիմնական թե հարաբերական հասկացողությունները, արտահայտվում են լեզուներիս մեջ բազմազան կերպով, առաջին յոթ հիմնական միջոցներով. նայած իհարկե լեզվին. ցեթե նախադասությունը մեր լեզվական մտածողության մեջ ամենամեծ ձևաբովանդակական մի միավոր է, ապա դրա ձևական սահմանումը սկսվում է մի բառից (հմմտ. լատ. dico և այլն) կամ բառ-նախադասություններից (հնդեվր. վրացերենում կամ Ամերիկայի հնդկերենում), վերջանալով պարզ ընդլայնած «նախադասություն», ուր կան առանձին սուբյեկտ, որյեկտ, ատրիբուտ, պրեդիկատ և այլն։ Բառը ևս բազմազան ձևով և հանդես գալիս լեզուներում, թե վորպես ձևաբովանդակական մի ինքնուրույն, մի հոգեբանական միավոր, և թե վորպես մասնիկ, այսինքն՝ ձևաբանորեն կախյալ միավոր, յուրն չխոսենք, իհարկե հարադրյալ կամ սովորական բարդ բառերի մասին։ Իսկ վորքան բազմազան էլին մասնիկները, և վորքան ֆունկցիա կա-*

---

* Սակիրը հնաոքրքիր դեպքեր է բերում հնդիկներէ լեզվական գիտակցության մասին, բերելով է միչի այլոց և հետևյալը. У наивного индейца, совершенно непривычного к понятию написанного слова, никогда не чувствуется серьезного затруднения при диктовке ученому лингвисту текста на родном языке слова за словом; у него, конечно, есть склонность связывать одно слово за другим, как в обыкновенной речи, но если его попросить говорить с расстановкой, и если он понял, что от него требуется, он способен сразу же выделять слова, как таковые, и повторять их по-одному. Вместе с тем он определенно отказывается выделять корневые и грамматические элементы на том основании, что благодаря этому «не получается смысла» (տես նրա «Language», էջ 27)։

բող և կապված լինել դրանցից յուրաքանչյուրի հետ,— մենք արդեն մանրամասն չուր տեղում տեսել ենք:

Լեզվական այդ հասկացողությունների և կատեգորիաների բազմաձև լինելը կախված է ոչ միայն լեզվի սպեցիֆիկ զարգացումից, նրա ձևաբանական խմբավորումից, որն այս կերպ կամ այն կերպ է կաղապարում այդ հասկացությունները կամ կատեգորիանները: Ցավ պետք պետք է մատնանշել, որ լեզուների այդ ընդհանուր ձևաբանական սիստեմները կամ «մոդելները» (ինչպես Սեպիրն է ասում) բավականին պահպանողական են և աղղում են մինչև իսկ լեզվի հետագա զարգացման վրա:

Բայց և այնպես, լեզուների այդ բազմազան ֆորմատիվ միջոցները, որով արտահայտվում է ոչ միայն կոնկրետ հասկացությունը կամ հարաբերությունը, նույնպես կապվածության մեջ են գտնվում վերջինների պատմական զարգացումից, կախված են լինում դրանցից: Ցեթե մեր լեզվական գիտակցությունից կորչում է յերկակի թիվը, ապա անհետանում է և դրա ձևը. այդպես և սեռը, այլևայլ վերաբերությունների տեսակները, թե քանակական և թե վորակական, դեմքերի տեսակները, ժամանակի տեսակները, բառերի «դասերը» և այլն և այլն: Ցեթե բուրժուական մտածողության մեջ «դուռ» գաղափարը ցածրի հետ և միայն կապվում, ապա այդ դուրս և ընկնում, ինչպես այժմյան անգլերենում. իսկ յեթե «քաղաքավարության» համար հողնակի յերկրորդ դեմքն էլ չի բավարարում, ինչպես մենք հիմա սովորաբար գործ ենք ածում, ապա ծայրահեղորեն գիմում են և հոգնակի յերրորդ դեմքին յերկրորդ դեմքի համար, ինչպես տեսնում ենք գերմաներենում. իսկ ռուսերենը, հակառակ իր քերականական պատմական նորմաներին, քաղաքավարության համար գիմում է յերկու ֆլեքսիաների (վերջավորությունների), ինչպես՝ ид-ем-те (հմմտ. на «վերցրու» և на-те «վերցրեք»): Ցերբ Սուդանի նեգրերի մոտ դոյականների «դասերը» (классы) այժմ սկսում են տեղի տալ մտայնության փոփոխման հետևանքով, ապա դրանց նախկին ձևական արտահայտությունները ևս վերանում են կամ մերվելով բառարմին՝ այլևս չեն գիտակցվում: Բառերն անդամ երբեմն նշանակության մերժվելու դեպքում (կամ հնանալու պատճառով), ինչպես вече, посадник.., նախապես, ասպետ ևայլն, կամ կորչում են կամ իրենց հնչյունական արտաքինով առանում են նորմասա, նայած դարի (ետոխայի) պահանջին և մտայնությանը: Բայց և այնպես, մենք հաճախ ենք տեսնում, թե վորքան դի-

մագնուն են քերականական վորոշ ձևերը. որինակ, անունների սեռերի հին դիտակցումը չկա ռուսերենում (ДОМ — արական սեռ, ВОДА — իգական սեռ և այլն), բայց դրանք դեռ իներցիայով շարունակում են գործել, դառնալով լեզվի կարծես թե մի սոսկ տեխնիկական միջոց, նրա տեխնիցիզմի մի արտահայտություն («լեզվական տեխնոլոգիա»)։

Յուրաքանչյուր լեզու լեզվական հասկացությունների կամ քերականական հարաբերությունների համար կարող է դիմել վերոհիշյալ յոթ ձևաբանական միջոցներից մի քանիսին, ավելի կամ պակաս թվով (հայերենը, որինակ, մինչև վեց այդպիսի միջոցների), բայց առաջատար կամ հիմնական ձևաբանական միջոցներ լինում են, իհարկե, ավելի քիչ։ Այստեղ ձևաբանական այդ միջոցների պատմական վորակն և կարևոր, այսինքն՝ վորքանք են տվյալ մամենտի ձևաբանական պրոդուկտիվ միջոցները։ Լեզուներում այդ հիմնական (վորակիչ) միջոցները, իհարկե, նույնպես փոխվում են, և լեզուն ստանում է այլ «ձևաբանական» դեմք կամ տիպ, վորը կարծես անմիջապես չի կապվում լեզվի զարգացման հասարակական ժամանակներից կամ պատմաշրջաններից, չեթե, իհարկե, այդ տիպը չի խանգարում այդ միջոցներով մտքի զարգացմանը։ Բայց չեթե մի չինական անմասնիկ լեզվատիպով կարելի չե իր ներքին ռեսուրսները զարգացնել և թարգմանել, դիցուք թե, Մարքսի «Կապիտալը» կամ Հեգելի «Տրամաբանությունը», ապա այդ արվում է մի «մասնիկավոր» ռուսերենով կամ արաբերենով, ապա այդ լեզուն ձևի և բովանդակության տեսակետից խոչընդոտ չի ներկայացնում։ Լեզվի ձևաբանական տիպը տվյալ դեպքում չեզրորոշական և լինում, կարևորն է նրա քանակական զարգացման հնարավորությունը, վորն իսկապես վորոշական արդյունք և տալիս, քանի վոր մի անգլերեն գրեթե անմասնիկ լեզուն ավելի չի հարստացա քան մասնիկավոր հ. կիժոսլերենը կամ բանտու ներգրեենը։ Լեզվի այդ իմմանենտի քանակական զարգացումն և հասարակական արժեքավորում ստանում և լեզվական նոր ժամանակության համար (հասարակական նորանոր պայմաններում) դառնում նոր վորակ, յուրացրած ու գիտակցած նոր աստիճան։ Հասարակական ժամանակության չդադարող (տևական) տևական պայմաններում լեզուն մինչև իսկ կարող է յուր ձևաբանական միջոցների տիպն ու քանակը փոխել, բայց այդ չի նշանակում, թե

լեզուն զարգացել և. կաթևորն և արտահայտչական յեղանակներէ քանակական հարստութիւնը։

Ինչպես տեսնում ենք, ամեն մի լեզու ունի իրեն հատուկ լեզվական «ինվենտարը» և կոնստրուկտիվ հնարավորութիւններ, նայած այդ լեզուն կրողների տվյալ պատմական ժամանակաշրջանի կուլտուրական զարգացմանը և աշխարհայացքին՝ մտայնութեանը։ Ունենալով սակեցիֆիկ ձևավորութիւններ, այդ հատկանիշները չպիտի ունենան, սակայն, և նույն քանակի բովանդակութիւններ, քանի որ վերջիններս, թեպետև ձևակերպվում են այդ լեզվաձևերով, բայց և ֆունկցիոնալ և անմիջական հարաբերութեան մեջ են տվյալ ժամանակի մտածողութեան հետ, որը զարգանում է կրողների աշխարհաճանաչողութեամբ. իսկ այդ վերջին հանգամանքը խարխլվում է ժողովուրդների աշխատանքային-արտադրական հարաբերութիւնների վրա, իրենց կենցաղով, հոգեբանութեամբ և այլն։ Ուրեմն, լեզվական միավորները ձևով բաղմազան են և բազմաքանակ, սակայն դրանց բովանդակական մասը սահմանափակ է, կախված պատմական վորոշ սահմանափակից, «հասարակական մտքի» զարգացումից։ Հասարակական մեծ միավորների կազմավորման հետ, ինչպես և ընդհանուր ըմբռնումների հետ, լեզուները մոտենում են իրար, յերբեմն տեղի տալով, կորչելով կամ ձուլվելով, ինչպես և հասարակական դասակարգային շրջանում, նրա մեծ պետութիւններ և «կուլտուրաների» ճնշման ներքո։ Ապագա սոցիալիստական տնտեսական մի հասարակութիւնը յուր կուռ աշխարհայացքով և մտայնութեամբ կարիք չի ունենա այդ բազմաձև լեզուների, վորոնք արդեն ատաջադիմութեան համար բալլաստ են լինելու և պատմական վերապրուկներ (пережитки)։ Այդ ժամանակ վերանալու յե և այն «վկրատը», վորը հիմա էլ յուր սուր կողմերով այդքան մեզ դժալ է տալիս. և լեզուների այդ արտաքին բազմաձևութիւնը և ներքին իմմանենտը վերջին հաշվով յենթարկվում և մարդկային մտածողութեան ընթացքին, նրա դինամիկային։ Լեզուների պատմական զարգացումը այդ դինամիկան ապացուցել և և արդարացրել է։

ԸՆԴՀԱՆՈՒՐՆ ՈՒ ՄԱՍՆԱՎՈՐԸ

Ցեթե «ձևաբանութիւնը» զբաղվում է առաճնի ձևաբանական մի ջոցների („прием“-ների) ուսումնքով, ապա հարկավ

այդ նշանակություն ունի լեզվի ձևական կապակցության մեջ, նրա հասարակական հաղորդման համար, այլ խոսքով ասած, մեր լեզվական մտածողության կոնկրետավորումների, այն է՝ նախադասությունների մեջ։ Չեն կարող գոյություն ունենալ այդ ձևերն ու ձևական առանձին ունակությունները, եթե նրանք չհասկացվեն իրենց կոնկրետ արտահայտչականի մեջ, իրենց լեզվական «պրակտիկայի» մեջ։ Շարահյուսական կազմությունն ու բովանդակությունն և դժվարանալը լեզվական մտածողության համար, նա ևր յեղել և լեզվի սկզբնական ծագման մանուտին։ Լեզվի «շարահյուսությունը» (синтаксис) և լեզվի ընդհանուր ձևաբանդակական ուսմունքը, «քերականությունը» լայն իմաստով՝ իր մեջ առյալ և առանձին ձևերը։ Մեթոդական և դործնական նկարագրության պատճառով «ձևաբանությունն» ու «շարահյուսությունը» առանձնացնում են, վերջինիս թողնելով նախադասության առաջարկը՝ բառերի կապակցությունն ու արտահայտչականը մի նախադասության մեջ, ինչպես և նախադասությունների նման կապակցությունն ու արտահայտչական կողմը։ Մինչև իսկ մեր լեզվական մտածողության ամենափոքր և ինքնուրույն միավորները՝ բառերը (գոյականներ, ածականները, բայեր) թեպետ և գոյություն ունեն վորպես մշակված և հիմնական լեզվաստուդձներ, վորպես լեզվական մտածողության հիմնական առարկաներ, այնուամենայնիվ նրանց պրակտիկան ու կյանքը („становление“) տրվում են միմիայն բարդ կամ կապակցված խոսային շարադրման մեջ. դրանց պրակտիկան իրենց «սինտագմատիկայումն» և, և տարբորոշված մտածողության ամենաինքնուրույն անգամն անդամ ապրում և կապակցության մեջ, խոսքի մեջ։ Հետևապես պատմական արժեքը այդ ինքնորոշված ձևախմաստական կատեգորիաներին, անդամ ամենաինքնուրույններին («բառեր»), վոչ թե սոսկ իրենց մեջ և, այլ պրակտիկ խոսողական հաղորդակցության մեջ, լինի դա նախադասություն, ֆրազա, դարձվածք (оборот) և այլն, դա միևնույնն եւ Այսինքն՝ կապակցված հաղորդումը («շարահյուսությունը») իրեն և յենթարկում վերջին հաշվով թե լեզվի ատաղձային հուժքը՝ հնչյունական ֆենոմենը, թե ձևաստեղծականը նրա իմաստով, վորովհետև լեզվում դերիշխում և հենց այդ կապակցված հաղորդումը։ Ձևի նուբյունը բառերի և նախադասությունների կապակցական հաղորդման մեջ եւ Դա և դերադույն իմաստը լեզվի—կենսորուկիով մտահաղորդումը հնչյունա-

հան սիմվոլիկայով։ Հետևապես «քերականության» մեջ, որպես լեզվի նկարագրական դիտության, անխղելիորեն կապված են իրար հետ քե հնչյունաբանությունը, քե ձևաբանությունը (նաև իմաստով), քե շարահյուսությունը և քե բառագիտությունը (лексикология) իր տուլգարանական, բառակազմական և իմաստաբանական կողմերով։

Ցնթե թողնենք մարդկային լեզվական մտածողության և մանավոր լեզվաձևական սիստեմների փոխհարաբերությունը իրենց պատմական զարգացման մեջ, կամ մի կոնկրետ լեզվի, որպես ձևոք բերված ունակության, և խոսքի, որպես նրա կոնկրետացվորման, փոխհարաբերությունը, ուր մեկը պայմանավորված և մյուսով, և անցնենք մի բառի անգամ ձևաբանական խնդրին, ապա մենք կտեսնենք, որ այդ բառի ձևավորող հանգամանքը հանդիսանում և նրա հնչյունական արտաքինը, որպես բովանդականիշ կամ ֆունկցիանիշ ելնելով, նայած ինարկե դրա ինքնուրույն, քե ոժանդակ՝ սպասարկու լինելուն։

Բառի այդ յերկու կողմերի միասնությունը ծագել և պայմանական և պատահական կերպով ու հետո դարձել պատմական անհրաժեշտություն, յերբ արդեն յուրացվել ու գիտակցվել է։ Այդ կապակցությունը կատարվում է հոգեբանորեն ասոցիացիայով։ Ցնթե իմաստական կողմը զարթնում և մեր ուղեղում, բայց հնչյունականը անմիջապես չի միացվում, կամ ընդհակառակը, այն ժամանակ չկա բառ լեզվական իմաստով, չկա բառի «բառացման» անհրաժեշտ նախապայմանը, որպես լեզվական մտածողության համար «մտքի առարկա» (предмет мысли)։ Սակայն բառիմաստի փոփոխությունը կապված և հասարակական գիտակցության կամ մտայնության զարգացման հետ և ոգտագործում և բառահնչյունական արտաքինը։ Այդ արտաքինը կարող և փոխվել, իսկ իմաստը մնալ նախկինը, և ընդհակառակը։ Համեմատեք стрелять (նետ արձակել, իսկ հիմա գնդակ արձակել, գնդակահարել), защищать (վահանի հետևը առնել > պաշտպանել), վարժապետ, պարապ (свободный, занятый) և այլ բառերի կամ արմատների հնչյունական հին արտաքինը և իմաստների փոփոխությունը պատմահասարակական այլևայլ մտայնությամբ։

Ցնթե վերցնենք «մտանիկավոր» լեզուների բառը, ապա այստեղ տեսնում ենք դրա մեջ ձևավորված յերկու նշանակություն, յերեք բառը ինքնուրույն և և ցույց և տալիս առարկա,

հատկություն, վորակ, գործողություն և այլն։ Հիմնական նշանակությունը կոչվում է «նյութական» բովանդակություն (реальное или лексическое содержание), իսկ ձյուլը ցույց է տալիս կապակցության մեջ յեղած հարաբերությունը (формальное содержание)։ Դրանք յերկուսով էլ միասին են հանդես գալիս (բացասական ձևը ևս ձև է կորրելատիվ զգացմամբ)։ Որինակ, մի քար, вода և այլն ունեն այդպիսի յերկու իմաստ, թե ընդհանուր, վորը կա վոչ միայն քար, вода և այլնի մեջ, այլև քարի, воды..., քարով, водой.., քարեր, во́ды և այլն, այլև ունեն մասնավոր իմաստ, այն է՝ հոլովի, թվի, իսկ ռուսաց բառաձևը նաև սեռի ֆունկցիա։ Այդպես և мать, матери, матерью.., կամ լատիներեն cor (=սիրտ), cord-is (սեռ. հոլ.), cord-i (տրակ. հ.) և այլն ունեն մի ընդհանուր բառիմաստ, կապված ընդհանրապես матерь-, cord-արմատների հետ, և բառահարաբերական այլ ֆունկցիաներ, թեպետ և ուղղական ու հայցական հոլովաձևերը կրճատված են և բացասական ձևով են արտահայտված (չունեն բառահարաբերական առանձին ձև)։ Սեմիտական լեզուներում հիմնական գաղափարը տրվում է ընդհանուր յերեք բաղաձայններով, վորոնք արմատի չձևավորված ելեմենտներն են, իսկ դրանց կոնկրետ ձևավորմամբ արտահայտվում է թե այդ ընդհանուրը և թե մասնավոր բառահարաբերականը, ինչպես, որինակ՝ արաբերենում ktl «սպանել»—katlu «սպանել, սպանություն», katala «սպանեց», kutila «սպանվեց» և այլն։ Համեմատիր նման հայոց ktr-«կտրել» ընդհանուրը, վորը կա կտտրել, կտրել, կտուր (խելքակտուր), դրաբ. կուտր (վոչխարների խուզումը), կտոր, կոտրել մասնավորների մեջ։ Բայց այդ մասնավոր կոնկրետավորումը, որինակ, մի «կոտորել», ունի իրեն հերթին մասնավորը, վորոնց մեջ նա կեցվում և վորպես ընդհանուր, ինչպես գրաբարյան կոտորեմ, կոտորես.., կոտորէի, կոտորէիր.., կոտորեցի, կոտորեցեր.., կոտորող, կոտորեալ, կոտորելի.. և այլն և այլն ձևերի մեջ, վորտեղ կա թե ածանցյալ ընդհանուրը և թե ածանցյալ մասնավորը։

Բայց կան իհարկե լեզուներ («ժողովֆ»=անմասնիկ լեզուներ), ուր բառի մասնավոր իմաստը (բառահարաբերականը, ֆորմալը) չի տրվում իրեն բառի մեջ. բառով տրվում է միայն ռեալ բովանդակականը կամ լեքսիկականը, իսկ բառահարաբերության ֆունկցիան ստացվում է կապակցության այլևայլ յեղանակներով (դասավորում, ոժանդակ բառ, շեշտ...)։ Պիտի ասել,

սակայն, որ մասնիկավոր (թևքական, կցական) լեզուներում ևս բառի հիմնական (լեքսիկական) իմաստը ճշտորեն կոնկրետավորվում և նախադասության մեջ։ Այդպես, մի գրաբարյան «խօսիմ» կարող է նշանակել թե «խոսում եմ» և թե «խոսում եմ», գրէի=գրում էի և գրվում էի և այլն. կամ հենց բառի-մասի տեսակետից համա. յես ջրեցի նրա արտը, յես ջրեցի նրա խոսքերը..., կամ՝ նա մի քար վերցրեց և նա քար սիրտ ուներ և այլն և այլն։ Նախադասության ընդհանուր ձևական ցուցիչները նման դեպքերում հանդիսանում են ավելի մեծ ձևաբանական պայման, քան յուրաքանչյուր բառի սեփական ձևը։ Դեռ ավելին. մի այնպիսի նախադասություն, ինչպես «մարտը մոտենում է» և նմանները, կարող են հասկացվել կոնկրետ արտահայտության վիճակի հետ, խոսակցության հոգեբանական տոցիացիաների հետ, և ըստ այդմ՝ կարող է նշանակել թե «մարտ ամենը մոտենում է» և թե «հակիվը մոտենում է»։ Թեպետ վերջին դեպքերը քիչ են պատահում, բայց և այնպես բառի կոնկրետ ձևը ավելի լավ և հասկացվում ընդհանուր կապակցության մեջ, խոսակցության սոցիալ-հոգեբանական ընդհանուր վիճակի մեջ։

ԼԵԶՎԻ ՁԵՎԱ-ԻՄԱՍՏԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Մենք դիտենք, որ լեզվական այդ «հազվությունների» կառուցման հիմնական նյութը կամ առաղձը հնչյունական ֆենոմենն է, այսինքն՝ հնչյուններն են իրենց բազմատիպ ֆիզիկո-ֆիզիոլոգիական արտահայտությամբ։ Այդ հնչյունական առաղձից են առնծված նախ և առաջ լեզվի ձևա-իմաստական ամենատարրական միավորները՝ արմատները ու մասնիկները (աֆֆիքսները), որոնք իրենց հերթին կազմում են լեզվի ձևա-իմաստաբանական կառուցվածքի առաղձը, անքաժանելի (ըստ իմաստի) տարրերը՝ առոմեները։ Քիչ լեզուներ կան, ուր գերիշխեն այդ մորֆեմներից միայն մեկն ու մեկը, կամ արմատ-բառը կամ մասնիկը, որը տալիս և թե հիմնական գաղափար և թե բառահարաբերություն։ Ձինարենն, որինակ, միայն արմատների ոգնությամբ և բարդություններ կամ «սինտագմաներ» կազմում (բարդ բառեր, ասույթներ, նախադասություններ),.իսկ, որինակ, ամերիկյան բնիկների որոշ լեզուներ այդ նպատակի համար գերազանցորեն ոգտագործում են մասնիկներ (հմմտ. i-n-i-a-l-u-

d-am «ահա յես յեկա այս նրան տալու համար»)։ Մեծ մասամբ լեզուներում հանդես են գալիս մորֆեմների այդ յերկու տեսակների (արմատների և ածանց-ժանրիչների) կոմբինացիաները, այլևայլ հարաբերությամբ, վորակով, տեղով-դիրքով և այլն։ Մասնիկների պատմական գոյացման և ձևավորումների մասին մենք յուր տեղում խոսել ենք, իսկ արմատների գոյացման մասին կխոսենք հաջորդ մասում։ Իսկ այն հիմնական ձևաբանական միջոցները, վորոնք ընդհանրապես գոյություն ունեն լեզուներում, մենք արդեն տվել ենք։ Այդ յոթ միջոցներով մենք ստեղծում ենք կամ հիմնական գաղափարներ (բառեր) կամ դրանց կապակցական ֆունկցիաները՝ հարաբերությունները, կամ այլ ձևով ասած՝ մատերիալ (ռևալ) հասկացություններ և այլևայլ ռելացիաներ, հարաբերակցություններ («պարզ և վերացական»)։

Լեզվի ձևա-իմաստաբանական աստղձներից կամ առումներից (մորֆեմներից, նեղ իմաստով) այլևայլ ձևաբանական միջոցներով կառուցվում և բարդ բառերի, ասույթների և նախադասությունների ամբողջ շենքը, իսկ կապակցական հաղորդումը (связное сообщение) լեզվի գլխավոր նպատակն է, նրա առարյան, պրակտիկան, նրա տարբորոշ մտքի միակ արտահայտությունը։

Իսկ վորոնք են այն հիմնական սկզբունքները, վորոնցով ստեղծվում են բառեր և բառահարաբերություններ, ինչպես նաև նախադասություններ։

Նախ և առաջ միացման կամ հավելման միջոցն է։ Այդ մենք տեսանք «բարդության» (հարադրական, կցական), արմատակրկնության, աֆֆիքսացիայի և ձևական բառերի կցման ժամանակ։ Կարելի յե ասել, լեզվի ամենահիմնական ձևաբանական սկզբունքը—այդ հավելման կամ միացման միջոցն է։ Այդ յերևույթը արդեն գոյություն ուներ և արմատի մեջ, ուր հնչյունների հաջորդական միացում և տեղի ունեցել։ Այդ «սինտագմատիկ» սկզբունքը լեզվի կառուցման թեպետ ամենակարևոր, բայց միակ յեղանակը չե, և գոյություն պիտի ունենա բնականորեն բոլոր լեզուներում։

Յերկրորդ ձևաբանական սկզբունքը—դա մորֆեմների և բառերի զասավորման կամ դիրքի սկզբունքն է, վորով նոր ձևա-իմաստաական միավորներ են ստեղծվում, սկսած մորֆեմից վերջացնելով նախադասությամբ։ Որինակ, յերբ սուոմերենում ասենք en.kur (պետը յերկրի) կամ kur.en (յերկիրը պետի) կամ հին հրեականում beth lehem (տուն հացի=հացատուն) և lehem

beth («հացը ուտեց, տնահաց»), ապա դրանք տարբեր լեքսիկական վորակիներ են. նմանապես մի ռուսաց я видел сына учителя (յես տեսա ուսուցչի տղային) և я видел учителя сына (յես տեսա տղայի (ս) ուսուցչին) տարբեր վորակիներ են ըստ այդ բառերի հարաբերության նախադասության մեջ. հմմտ. նմանապես տարբերությունը воды՛ стакан և стакан воды ձևերի մեջ։ Մինչև խոկ այդ դասավորությամբ տարբեր նախադասություններ են ստեղծվում՝ հարցական կամ դրական, գլխավոր կամ յերկրորդական և այլն։ Կարելի յե ասել, վոր արմատի մեջ անգամ հնչյունների դասավորությունը տարբեր վորակիներ կազմող և ստեղծիչ։ Ցերբ, որինակ, արաբերենում մի kurd «քուրդ» հոգնակիում տալիս է akrad, այսինքն, բացի սկզբի a-յից, տեղի յե ունենում արմատի մեջ հնչյունափոխության հետ (u ‖ a) նաև „r" բաղաձայնի դիրքափոխում, դա հենց այդ մեր հիշած սկզբունքի տարբական արտահայտությունն է։ Իսկ հայերենում, որինակ, մի հին ձգել (=«քաշել, тянуть» և «գցել бросить») դրա-փոխության համեմատ դառնում է *գձել, վորն այժմ հնչվում է «գցել» (մեր ժողովրդական լեզուներում—բարբառներում հին բ, դ, գ, ջ, ձ բառամիջ հնչվում են վ, թ, ք, չ, ց). և այդ յերկու տարբերակներն էլ ձգել (=ժողովրդական հնչվածը, որինակ, արարատյան բարբառում ձ'ըքել, jhəkhel) և գցել (<*գձել, արարատյան՝ քըցել <*գ'ըցել, ինչպես քըթնել < գ'ըթնել «գտնել», ք'ըթալ < գ'ըթալ..) ոգտագործվում են միևնույն լեզվում տարբեր բառեր ստեղծելու համար՝ ձգել «քաշել» և գցել «շպրտել, նետել»։

Ցերրորդ ձևաբանական սկզբունքը շեշտն է. դրանով ստեղծվում են տարբեր բառեր (հմմտ. չինարենում) և բառահարաբերություններ (տես եջ 267—269)։ Շեշտը մեծ դեր է խաղում և բառակապակցության մեջ, ինչպես, որինակ, արամատրանական շեշտը նախադասության մեջ, ինտոնացիան հարցական, հրամայական և բացագանչական նախադասությունների մեջ, պատասխանի մեջ (այո, այո), գլխավոր և յերկրորդական նախադասությունների բաժանման մեջ և այլն։ Չկա լեզու, ուր շեշտը այլևայլ վորակով (արտաշնչական թե յերաժշտական, կամ խառը ձևով) այսչափ կամ այնչափ հանդես չգա, վորպես ձևաբանական միջոց։ Մանավանդ նրա դերն ուժեղանում է այն դեպքում, յերբ մյուս ձևաստեղծական միջոցները (յեղանակները) ավելի աղքատ են կամ քիչ։

Չորրորդ ձևաստեղծական յեղանակը վերաբերում է միայն

արմատին կամ բառարմատին և թերևս մասնիկին, թեպետ վերջին-նիս համար լավ օրինակներ չկան։ Այդ յեղանակի (միջոցի) մասին արդեն ասվել է. դա արմատի (resp. բնի) հնչյունների վոքալական կամ «քանակական» (=տևականացման) փոփոխության մեջ է, վորի մասին կխոսվի նաև հաջորդ հատվածում։

Ընդհանրապես վերցրած, լեզվի ձևա-իմաստական միավորների կամ կազմությունների ստեղծման համար լեզուն դիմում է հնչյունական ելեմենտի այլևայլ քանակական, վորակական և դիսլոզիցիոն կոմբինացիաներին։ Ֆունկցիոն հնարավորությունները իրենց այդ յերեք արտահայտչական ասպեկտներով տալիս են թե ձևա-իմաստական տարրական ելեմենտների (արմատ, մասնիկ) և թե լեզվի ավելի զարգացած միավորների՝ սինտագմաների (=բառերի, ասույթների և նախադասության) ձևավորությունները։ Այդ յերեք սկզբունքները (յեթե շեշտը ևս համարենք հնչյունի վորակական մոմենտ)*—քանակական, վորակական և դիսլոզիցիոն—կարմիր թելով անցնում են տարբորոշ լեզվի գոյացման ու զարգացման ամբողջ եվոլյուցիայի մեջ։

ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՍՍԻՄԻԼԱՑԻԱ («ԱՆԱԼՈԳԻԱ») ԾԵՎ ԴԻՍՍԻՄԻԼԱՑԻԱ

a) Ձևաբանական ասսիմիլյացիա

Մտցնելով «ձևաբանական ասսիմիլյացիա» տերմինը հին հունական «անալոգիա»յի փոխարեն**, ինչպես վոր այդ անում ևր Բոդուեն դը-Կուրտենեն, մենք այդ յերևույթի տակ պիտի հասկանանք քերականական վորոշ ձևի կամ արմատի վերափոխումը՝ մի այլ քերականական ձևի կամ արմատի ազդեցության շնորհիվ, վորոնց կարծես թե նմանվում են այդ առաջիններըւ Իսկ ավելի ընդարձակ առումով, ձևաբանական ասսիմիլյացիայով ստեղծվում են նաև միանդամայն նոր բառեր և բառաձևեր՝ յե-

---

* Այլապես պիտի վերցնել չորսը—հավելում (միացում), դասավորություն, շեշտ և արմատի ելեմենտների ներքին հնչյունափոխություն։

** Հունարենում «անալոգիա» (ἀναλογία) նշանակում ևր «համապատասխանություն, համաչափություն»։ Բոդուենը «ձևաբանական ասսիմիլյացիա» անվանելով, այդ ևս թարգմանում ևր առաջներով „морфологическое уединоображение“ (տե՛ս նրա «Лекции по введению в языковедение»)։

ված տիպերին կամ մոդելներին (կաղապարներին) հետևելով. նմանվելով այդ յեղած ձևաբանական կազմություններին։ Թե առաջին (վերափոխման) և թե յերկրորդ (վերաստեղծման՝ վերարտադրման) դեպքերում էլ նորերը նմանվում են հներին, հին կազմություններին, ուստի «ձևաբանական ասոցիացիա» (շաղկապումն») տերմինը միանգամայն ճիշտ և արտահայտում յե բուլյերը։ Անշուշտ, նախորդ այդ ձևաբանական տիպերը, որոնց հետևում են, տարածված ու կենսունակ ձևեր պիտի լինեն։

Ցեթե վերցնենք այն դեպքերը, յերբ արմատներն ու յերկրորդական ձևերն են փոխվում կամ, ավելի ճիշտ, փոխարինվում, ապա այստեղ լինում է նոր միայն այդ արմատների ձևերի կամ մասնիկների սոսկ հնչյունական նորամուծությունը, քանի որ այդ նորերի ձևաբանական ֆունկցիան չի փոխվում, մնում է նախկինը։ Բառերի և բառաձևերի այս հնչյունական փոփոխությունը այնուամենայնիվ ձևաբանական է և ոչ ֆոնետիկական (հնչյունաբանական), ինչպիսիք են շեշտի, դրափոխության, ասպիրացիա-դասպիրացիայի, դիրքի և այլոց պատճառությամբ առաջացած հնչյունափոխությունները։ Ձևաբանական ասոցիացիան մեծ դեր է խաղում վերլուծական (ինտերպրետացիոն) մոտեցումը, այն ինչ հնչյունաբանական փոփոխությունների ժամանակ իշխում է միայն ֆիզիոլոգիական-հոգեբանականը։ Ինչպես Ֆ. դը-Սոսյուրն է ասում. „Аналогией об'ясняются все нормальные модификации внешнего вида слов не фонетического характера. Аналогия предполагает образец и регулярное подражание ему. Аналогичная форма это такая форма, которая образована по образцу одной или нескольких других форм согласно определенному правилу"*։

Իսկական ձևաբանական ասոցիացիա պիտի համարել այն դեպքերը, յերբ մի բառաձև անվերլուծելի ամբողջությամբ (մոտ բաղադրյալ բառ) կամ մի բաղադրյալ բառ յուր մասերով (արմատ, մասնիկ) յենթարկվում է մի այլ բառի նմանեցման ազդեցության։ Որինակ, «սեպտեմբեր»-ը ժողովրդական լեզվում, ունենալով վորոշ ընդհանրություն հոկտեմբեր, դեկտեմբեր կազմությունների հետ, այդ նմանությունն ավելի յե զարգացնում, փոխելով յուր «պ» բաղաձայնը «կ» բաղաձայնի, և ստացվում է «սեկտեմբեր»։ Այս ասոցիացիան հարյուր տոկոսով իհարկե

* Տես նրա Курс общей лингвистики, 1933, էջ 151.

չի կարող լինել, քանի որ իմաստի, այսինքն՝ բառի գոյության հիմնական մի պահանջը կկորչեր և, որինակ, տարբերություն չեր լինի սեկտեմբեր-դեկտեմբեր բառերի մեջ, յեթե առաջինը յուր «ս» հնչյունն ևս փոխեր (կստացվեր՝ դեկտեմբեր-դեկտեմբեր). Այդպես և նախասլավոնական *невять «ինն» դարձել և հաջորդ десять «տասն» բառի ազդեցությամբ девять. ավելի նմանվելը այստեղ նույնպես անհնարին եր։ Համմ. նաև այժմյան մեր «ցածր» բառի նոր կազմությունը (վերջին «ր» հնչյունի ավելացմամբ) յուր հակադիր «բարձր» բառի ազդեցությամբ, կամ հնդեվրոպական grev-is «ծանր» (հինը՝ gravis) յուր հակադիր levis «թեթև» բառի ազդեցությամբ և այլն։ Այս ամբողջական բառերի ձևաբանական այսինքն բառի արտաքին տեսքի (հնչյունական կազմության) տասիմիլյացիան նախապես պահանջում և դրանց նախնական մասնակի նմանությունը, ինչպես «սեպտեմբեր»-ի վերոշ մասը կա հոկտեմբերը, նոյեմբերը և դեկտեմբերը ձևերի մեջ, կամ *невять բառինը десятьբառի մեջ (е-ять մասերը), կամ «ցած» բառինը «բարձր» բառի մեջ (-ած ‖ -ա(ր)ձ) և այլն և այլն**)։ Բայց ավելի շատ դեպքեր են լինում այդ ձևաբանական տասիմիլյացիայի համար այն ժամանակ, յերբ բառ բաղադրյալ եւ Այստեղ գործում է վոչ միայն անմիջական հոգեբանական կողմը, ինչպես վերևում, այլև վերլուծական-մեկնաբանականը, այսինքն՝ բառի կազմության մասերի փոխհարաբերության ըմբռնումը, դրանց ինտերպրետացիան։ Ցավ այս տեղ յև ունենում ձևաբանական ելեմենտների հետ վոչ միայն հավելման (միացման) սկզբունքի դեպքում, այլև շեշտի, դարձվածքության և բառի ներքին հնչյունական փոփոխման ժամանակ։ Բերենք որինակներ ըստ այդ ձևաբանական միջոցների տիպի։ Մեր այժմյան հայերենում ունենք մի քանի հոլովման սխեմաներ կամ կիսասխեմաներ. և նկատում ենք, վոր «ի» հոլովման տասիմիլատիվ ազդեցությամբ նախկին «ու» հոլովման ձևերը հետզհետե տեղի յեն տալիս, նմանվում են «ի» սխեմային, ինչպես՝ Անիի, Անիից.., դինիի, դինիից և այլն, փոխանակ Անու, Անուց... դինու, դինուց և այլն, վորը նույնպես դեռ գործածական և պաշտոնական ընդունվածն է։ Այդպես և ժամանակի բառերի—

---

* Մեր կարծիքով հայոց erkir «յերկիր» բառը, հակադիր erkin-ի, նույն տասիմիլյացիայով առաջվել է նախահայկական *ekira-չպահված ձևից. համմ. ուրարտական kira (և kiura) «հող», սումերներեն kur «յերկիր»։

«վա(ն)» հոլովման ձևերը տեղի չեն տալիս սովորական «ի» հոլովման ձևերին, ինչպես՝ որի, որից.., ամի, ամից և այլն, թեպետ դեռ կա որվա, որվանից.., ամսվա, ամսվանից ևայլն։ Արաբատյան բարբառում ունենք ձևաբանական ասսիմիլյացիա բառահնչյունների ներքին փոփոխմամբ, որպես հոլովման ձև, ինչպես հին հէր (<հայր)—հօր (սեռ.-տր.), մէր (<մայր)—մօր, ախպէր (<*աղբայր)—ախպօր, այդպես և ջանալոգիայով, հևսուր—հևսոր, տէքը (<տայդր)—տէքոր, աներ—անոր, հընդեր—հընդոր, քէր (<քոյր)—քըվոր (հմմտ. դրաբ.՝ քեռ, քուեր)։ Այս ասսիմիլյացիայի համար անշուշտ նշանակութիւն ունի հին բառերի ներքին իմաստական աղգակցութիւնը, որպես ընտանիքի անդամների տերմիններ (patronomica), որոշհետև ասենք մի «Ր» հնչյունով վերջացող բառ չի ենթարկվում այս ձևաբանական փոփոխման (որինակ, մուր—մրի, տէր—տիրոջ կամ տիրվոնչ և այլն)։ Գրաբարում, երբ որոշ պատմական դիպվածութեամբ ստեղծվեց ներքին հնչյունափոխութեամբ, դիցուք, մի ամաչ-(եմ) արմատից՝ ամաւթ (>ամօթ), որը ոգտագործվեց գոյական ստեղծելու համար (այստեղ կա թե ներքին հնչյունահավելում՝ աճում, և թե դեղատսիբիլացիա չ>թ), ապա այդ «ջանալոգիայով» սկսվեց կազմվել նաև՝ աղաչ-(եմ)—աղաւթ (>աղօթ), *ծանաչ-(եմ)>ճանաչ-(եմ)—ծանաւթ (>ծանօթ), արած-(եմ)—արաւտ (>արօտ).., որոնք ավելի փոփոխված շարունակութիւններ են քան՝ մատ-(չ-իմ)—մաւտ (>մօտ), հևս(ում)—հեւս (հիւս «հյուս»), գրօ-(ան-եմ) [<գիտ արմատից]—գիւտ և այլն։ Այս որինաչափութիւնը նախադրաբարյան եր, իսկ գրաբարում դա հանդես և գալիս քարացած («մնուածք») ատենաճանաչում, քանի որ նորերն այլևս չկային կազմվում*։ Հին «ճանաչեմ» (նորկա «ճանաչում եմ») և անցյալ կատարյալ «ծանեայ» բայաբների տարբերացումը (ըստ ճան- || ծան-արմատաձևերի և-աչ- մասնիկի) հետագայում ներկայի բնի աղդեցութեամբ դառնում և միայն ճան(ն)չ-ել || ճանա(ն)չ-ելի, այսինքն ատենաի (անց. կատարյալի) «ծանեայ» ձևը փոխարինվել և ճանա(ն)չ-(եցի) բնաձևով, ինչ-

---

* Նշմարելի ձևաոդիը բառաբանում (15—16 դարերում կազմված) հիշվող «բաղօթ» իբրև «աղաճառք» (զի որ բաղաւդ եղեն գործոյն, անուամբ նորա կոչին մինչև յայսաւր) բառը ըստ մեր հիշված որինաչափութեան պիտի կազմված լինի մի հին չվկայած *բաղաչ-եմ բայից։ Այս բաղօթ (գրված և բաղաւտ) բառը հիշում է Ս. Ամատունու բառաբանը (եջ 84)։

պես ունենք գրել-գրեցի, քայլել-քայլեցի այլն։ Ռուսերենում հին конь, царь ձևերի փոխարեն, որոնք նշին նաև սեռական հոգնակի, այլ հոլովման սիստեմի նմանությամբ, ինչպես путь—путей, кость—костей և այլն, դառնում են коней, царей այլն. իսկ այժմ ժողովուրդը հաճախ ասում է местов, делов, пробков.. յենթարկելով դրանք столов, городов և նմաններին, փոխանակ ասելու սովորական և ընդունված («պաշտոնական») мест, дел, пробок և այլն։ Նույն հոլովման մի սիստեմում անգամ լինում է այդ ասպիմիլատիվ փոխարինումը, ինչպես հին ռուսաց руце դարձել է (ավելի ճիշտ փոխանցվել է) руке ձևով, քանի որ рука, рукой և այլն, ինչպես յերևիանները այժմ песок ուղղական հոլովաձևի նմանությամբ ասում են սեռական песока, տրական песоку և այլն, փոխանակ՝ песка, песку և այլն։ Համմ. նաև ժողովրդական пекешь, пекет այլն пеку, пекут արմատաձևերի նմանությամբ, թեպետ ուկրաիներենում լինում է և печу, печешь.., ուր пеку-ն է փոխվում „ч"-յով արմատաձևի ազդեցությամբ։ Շեշտի ասպիմիլատիվ ձևը յերևում է ռուսերենում, որինակ, пальто——пóльта, красно́—крóсна (քաթանի տեսակ է) յեզակի և հոգնակի կազմության մեջ նման սովորական окно—óкна, вода—вóды այլն։ Գերմաներենում հնչյունափոխությունն էլ gast «հյուր» բառի համար հոգնակին յեղել է gasti, որը դառնալով gaste առաջ է բերել բառամիջի a-յի «ումլաուտ» կոչված յերևույթը, այսինքն՝ վերջին „e"-յի ազդեցությամբ gaste դարձել է gäste. այդպես և Balg—Bälge և այլն, որոնց «անալոգիայով» նաև Kranz—Kränze, Hals—Hälse և այլն և այլն։ Ֆ. դը-Սոսյուրը բերելով և բացատրելով այս վերջին որինակները (տես նրա գիրքը էջ 151) ավելացնում է „Аналогия действует в направлении большей регулярности и стремится унифицировать методы словообразования и словоизменения. Но и у нее есть свои капризы: наряду с Kranz—Kränze и т. д. мы имеем Tag—Tage, Salz—Salze и т. д., по той или иной причине устоявшие против действия аналогии. Таким образом нельзя вперед сказать, до какого предела распространится подражание образцу и каковы те типы, по которым будут равняться другие. Порождают действие аналогии не всегда наиболее многочисленные формы" (էջ 151)։ Այդ վերջին կարծիքը լավ ապացուցվում է և արաբատյան կնսոր, անքոր և այլնի կազմությամբ, որոնց նախնական ձոզե-

ը (որինակը) յեղել են միայն յերկք բառաձևեր (հօր, մօր, եղբօր). այդտեղ վոչ թե քանակն (յերկք) և դեր խաղացել, վորքան վորակը և դրանց «պատմահոգեբանական» դդացումն ու կենսունակությունը։ Այդպիսի դեպք անշուշտ յեղել է և այժմյան —վա(ն) հոլովման տարածման ժամանակ, յերբ մի պատահական դեպքում տարի—տարւոյ (սեռ.-տրակ.-բաց.) կանոնավոր հին ձևը (նման՝ ոսկի—ոսկւոյ, հոգի—հոգւոյ և այլն) «ա» հոլովման ազդեցությամբ* դառնում է «տարւոյ»=այժմյան տարվա, վորի անալոգիայով ժամանակ ցույց տվող բառերը, անկախ նրանից թե ուղղական հոլովում ինչով են վերջանում, հետևում են այդ որինակին, և առանում ենք բարբառներում՝ գարունք—գարունքվա, ամառ—ամառվա, գիշեր («քըշեր»)—գիշերվա և այլն և այլն։ Գրական լեզուն այժմ այդ սիստեմից հետզհետե հրաժարվում է, թեպետ բարբառները դեռ կենդանի յեն պահում։ Անտարակույս ձևարանական ասոցիացիայով սկսվում են սկզբում քիչ նմանություններ (подражания), բայց հետո տարածվում է, իսկ նախկին բառաձևը կամ սիստեմը կարող է խափան չդառնալ։ Այս յերևույթը, նմանապես, սկսվում է վորոշ քանակի անհատների կողմից (թեկուզ և սակավաթիվ), սակայն տարածման հող է դառնում հետզհետե բոլորի կողմից, քանի վոր միանգամից և բոլորը չեյին կարող այդ նմանեցումները կատարել։

Մենք տեսանք, վոր ձևարանական ասոցիացիայի կարող են ենթարկվել յեղած պարզ կամ արմատական բառերը (համմտ. *невять>девять, սեպտեմբեր>սեկտեմբեր և այլն) կամ կազմված բաղադրություններըե, յերբ միևնույն արմատի (բնի) մի տարբերակը փոխարինվում է մյուսով, ինչպես ռուսաց տրահան հոլովի հին руц-(е) արմատաձևը փոխարինվում է рук-(е) ակզբնաձևով рукой, рука, руку և նմաններին բնի ազդեցությամբ, կամ յերբ այդ բաղադրության յերկրորդական ձևն (մասնիկն) է փոխարինվում մի ուրիշով, ավելի կենսունակով, պահելով երեն ֆունկցիան, ինչպես գինու>գինիի.. կամ ռուսաց мест, дел...> местов, делов և այլն։ Այդպիսի ասոցիացիայի դեպքեր, վորպես ընդհանրություն նախորդի, մենք տեսանք և շեշտի կամ

---

* Այդ հոլովման սիստեմը թեպետ առանձին քիչ դեպքերում է պահվել, բայց մյուս սիստեմների վրա ազդել և խառնվել է դրանց հետ, ինչպես 1—ա հոլովման սիստեմի մեջ, ու || ում խառն սիստեմի մեջ (հոգւով || հոգիու),-ները յոթանաչն սիստեմի մեջ (դառներք—դառերու, դառերց—դառերաց և այլն)։

ներքին հնչյունափոխության ձևաբանական միջոցներով կազմվելու ժամանակ (пальто—пóльта..նման окнó—óкна և այլն, կամ աղաւք <աղաչ-իմ, ինչպես ամաւք <ամաչ-իմ, ծանաւք <*ծանաչ-եմ > ճանաչ-եմ, արաւտ <արած-եմ և այլն)։ Առաջին դեպքում յեղած կազմությունը (պարդ կամ բաղադրյալ) յուր ելևմտնաները աստիճանացիայով յենթարկում և փոփոխության, իսկ յերկրորդ դեպքում յեղած մի կամ մի քանի դեպքերի հիման վրա (դրանց «անալոգիայով») կազմվում են նոր բառաձևեր կամ կազմություններ, վորպես նոր բառեր։ Այդ նորակազմությունները (новообразования) ավելի շատ լինում են հավելման (միացման) միջոցով, քան վորպես ածանցավոր և քան վորպես բարդ կազմություններ, ինչպես մի начальник, разбойник և նմանների ձևով կազմում ենք десятник, колхозник և այլն, կամ ոտար բառերի ազդեցությամբ, ինչպես фашист, пацифист, социалист և այլն կազմում ենք троцкист, уклонист, связист և այլն, յերբ արդեն արմատը տեղական է։ Այդպես և բարդության դեպքերում, ինչպես այժմյան пылесос, землечерпалка, самолет և նմանները հին земледелец, хлебороб և նմանների օրինակով։ Անշուշտ այս դեպքերում մեխանիկական անմիջականությունը չի վոր գործում և, ինչպես կարծում են վորոշ լեզվաբաններ, ինչպես реакция: реакционер, репрессия: х (այդ անհայտը և репрессионер)* կամ ֆրանսերեն pardonner : impardonnable և այլն, և մյուս կողմից՝ décorer : х (ուր х=indécorable), ինչպես տալիս և Սոսյուրը (տես նրա դիւրքը, էջ—199)։

Սակայն մենք դիտենք, վոր ամեն դեպքում այդ «անալոգիական» ածանցում կամ բարդացումը չի լինում. մարդիկ նաև ընտրում են, հաշվի չեն առնում իմաստաբանական հարմարությունը, և մեխանիկորեն անալոգիական կազմություններ չեն կարող լինել**։

Մեր բոլոր բերած դեպքերում նկատում ենք նաև այն, վոր ձևաբանական աստիճանացիայով փոխարինվում կամ նորակազմվում են միայն ու միայն հին (լեզվում գոյություն ունեցող) տարրերով կամ տարրերից։ Յեղած բառաձևի ձևաբանական

---

* Յերկու վերջիկյ կետերը նշանակում են «ուրիշ» (վերբերում է», относится), ինչպես գործ և ածվում մաթեմատիկայում, ֆիզիկայում և այլն։

** Թերևս մի արվեստական լեզվում, օրինակ, էսպերանտոյում, ինչպես ցնշում է Սոսյուրը, այդ բոլոր հնարավորությունները կան։

մասը տեղի չի տալիս մի նոր, «ավելի կենսունակի» (արմատ, ասոնիկ), կամ լեզուում գոյություն ունեցող մի քանի տարրերից, ըստ անալոգիայի, կազմվում է մի նոր բառաձև։ Եվ այս էլ լինում է միայն վորոշ պայմաններում, յերբ յեղած օրինակը, վորին նմանվում են, օրինաչափական և տիպական է դարձած։ Մի պատմական «կցական» բաղադրություն (=բարդություն) չի կարող լինել այդ ասոցիլյացիայի օրինակը, յերեք յուր ձևաբանական հիմնական միջոցներով (մասցում, շեշտ, կարգ) կազմելու համար չկա իմաստական և մասամբ ձևական նաև այլ հանգամանքներ։ Ճիշտ է, յերևույթը սկսվում է մանավորներից, յեղակի զուգքերից, բայց տարածման համար («ըստ անալոգիայի») հարկավոր է և վորոշ հող, պայմաններ։ Մենք հաճախ տեսնում ենք, վոր միայն չոր ու ցամաք կցկցումը չի, վոր ստեղծում է նոր բառեր, թեպետ այդ միջոցը հիմնականն է։ Վոչ միայն այդ է լինում, այլև իմաստական միասնության տեսակետից դուրահնարաբար կամ ածանցաբար և՛ շեշտի միացնող հանգամանքը, և՛ հոդակապի հանգամանքը, և՛ հնչյունափոխության հանգամանքը և այլն, թող թե կազմության համար ընտրություն կայացնելը և ընդունելը։ Այդ կողմից պետք ասել, վոր ամենատիպական ձևաբանական կազմությունների օրինակն է աղղողը։ Որինակ, հայերենում, այնպիսի տիպերը, ինչպես՝ այրուձի, առուտուր..., կամ վաղեվաղ, քովնքով, փոխնիփոխ.., կամ՝ պատեպատ, փայլփայլ, փոխիփոխ, խառնիխուռն և նմանները ավելի քիչ հին տարածված, քան սովորական «բնական» բարդության տիպը յուր «ա» հոդակապով, մի շեշտով և հնչյունափոխությամբ։

Վորքան վոր ձևաբանական ասոցիլյացիան («անալոգիան») յուր կոմբինացիաների մեջ դրժ ունի միայն լեզվի մեջ յեղած տարրերի հետ, դրանց մեկը փոխարինելով ժյուսով, կամ յեղած տարրերի մեջ վերաբաշխում կատարելով (մի քանիսը միացնելով), այդ ձևաբանական այդ ասոցիլյացիան թե պահպանողական է և թե փոփոխող յերևույթ է։ Պահպանողականն այն է, վոր դրժ ունի յեղած տարրերի հետ, իսկ փոփոխող հանգամանքն այն է, վոր դրանցով նոր ձևեր ու կազմություններ է ստեղծում։ Լեզվի էվոլյուցիայի մեջ այդ ձևաբանական ասոցիլյացիան մեծ դեր է խաղում։ Բացի այդ ասոցիլյացիայից բառի հնչյունական պատկերը կարող է փոխվել սոսկ հնչյունական ֆենոմեններից (շեշտ, ասոցիլյացիա-դիսոցիլյացիա, մետաթեզիս, դիրք, «սպոնտան»

հնչյունափոխություն և այլն) կամ ժողովրդական ստուգաբանությունից, որը նման է անալոգիային նրանով, որ յեղած անծանոթ բառի հնչյունական մի մասը փոխվում է, որ յեղած ձևերին նմանվի և միտք ստացվի։ Նման մոչ հնչյունական ֆակտորներից փոխվում է բառի հնչյունական տեսքը և «արտակարգ» այն դեպքերում, յերբ կոչնչու և նման հանդամանքներում բառապատկերը սոսկալի փոխվում, կրճատվում է։ Մոչ հնչյունական ֆակտորի միտի վերագրել և մեր այժմյան հապավումները, յերբ խնայողության տեսակետից բառերը կրճատվում են (լուս-ժողկոմ, наркомвнешторг և այլն)։ Բայց ընդհանրապես վերցրած բառի հնչյունական պատկերը փոխվում է դիմավորապես «հնչյունաբարանորեն» (фонетически) և ձևաբանորեն (морфологически)։ Առաջին դեպքում յերևույթը ենում է մի բառի սահմանում և ֆիզիոլոգիական և (թեպետ և յուրացվում, պարտադիր և դառնում, հասարակականում է), թեպետ այդ կարող և ոգտագործվել ձևաբանության համար (տես ստորև). իսկ յերկրորդ տիպի փոփոխությունները սոսկ ձևաբանական են, և ազդակը այդ բառի սահմանից դուրս է, ինչպես հին руц-(е) դառնում է рук-(е), այսինքն՝ արմատի «ц» հնչյունը փոխարինվում է «к» հնչյունով մյուս բառաձևերի ազդեցությամբ (рук—որ կա рука руку рукой և այլնի մեջ), քանի որ „ц" հնչյունը չի կարող դառնալ „к"։ Այդպես և ցածր բառի «р»-ն գոյացել է բարձր բառի «շինարարությամբ» կամ գինու բառի «ու»-ն չի դառնում «իի» (գինիի), այլ փոխարինվում է «ի» հոլովման ձևի ազդեցությամբ։ Այդ փոփոխությունները հետևապես փոխարինումներ են, ձևաբանական բնույթ են կրում, և մի բառի սահմանից դուրս և գտնվում դրանց պատճառը*։

---

* Տեսանք հնական բնութագրությունն և տալիս անալոգիայի նշանակությանը. „По аналогии не возникает новых звуков в языке, а лишь переносятся морфологические принадлежности с одних слов на другие, звуковые принадлежности с одних звуковых комплексов на другие, формы словосочетаний с одних предложений на другие. Старые формы продолжают конечно сначала существовать рядом с новыми: потом или они сохраняются, особенно когда каждая форма получает постепенно особое значение вследствие дифференциации значения, или же одна из них, старая или новая, исчезает, т. е. постепенно забывается. Ср. „на краю" рядом с „в Приамурском крае"... Новообразования по аналогии обыкновенно упорядочивают язык, устраняя лишние различия, возникшие вслед-

Ձևաբանական իսկական ասոցիացիա պիտի համարել միայն այն դեպքը, երբ բարդության մի անդամը (արմատը, մասնիկ) փոխարինվում է մի նորաձևով կամ նորով, հետևելով այլ օրինակների*։ Իսկ յեղած արմատներից կամ մասնիկներից մի նորը կազմելը ընդհանուր սխեմայի օրինակով արդեն հետանում է, և այդ «իսկական ասոցիացիայից», թեպետ այդտեղ ևս նմանվել կամ ընդօրինակել գոյություն ունի։ Ինչ ձևով էլ լինի, «անալոգիան» նոր էլեմենտներ (արմատ, մասնիկ) չի ստեղծում, այլ յեղածն է ոգտագործում։ Նոր արմատ, որ կապ չունենա հնի հետ, քիչ է ստեղծվում. այդ նախ բնաձայնական բառարմատ է, որի կարիքը լեզվի մեջ այնքան էլ շատ չի, յերկրորդ՝ արվեստական բառեր, ինչպիսին է «գազ» (gas) բառը որը կազմել է մոտ 1600 թվականին բժիշկ և միսթիկ Բապտիստա վան Հելմոնտը, ոգտագործելով Chaos, blas-en և geist (քաոս, փչել և ոգի) բառերի հնչյունական էլեմենտները։ Նոր բառեր, բառարմատներ և յերկրորդական ձևեր կարելի յե վերցնել և անցյալից, յեթե լեզուն ունի անցյալի դրավոր դոկումենտացիա։ Կարելի յե այդպիսիները վերցնել և ազգակից բարբառներից, ինչպես նաև ուսյալ լեզուներից։ Բայց կա նաև ուրիշ մի միջոց, որի մասին կխոսենք քիչ հետո։

Ընդհանրացնելով ձևաբանական ասոցիացիայի («անալոգիայի») դերը և արժեքը լեզվի էվոլյուցիայի մեջ, նրա ձևաբանական տեղաշարժության և վերընթացության մեջ, մենք գալիս

ствие фонетических изменений языка, как напр. появление „руке" вм. „руце", „печу", „печуть" вм. „пеку" и пр., „пекешь", „пекет" вм. „печешь" и. т. д. Новообразования по аналогии не поддаются таким частным законам, как фонетические изменения звуков. Они об'ясняются лишь общими психическими законами; но какие частные психические условия вызывали в одном случае новообразование, в другом—нет, этого какими либо законами пока определить не удалось" (տես նրա „Общее языковедение, էջեր 344—345)։

* Լեզվաբաններից յերբեմն քերականներն էլին, որ հայտնաբերեցին անալոգիայի իսկական դերը և ցույց տվին, որ նա հնչյունական փոփոխությունների հետ միասին հանդիսանում է լեզուների էվոլյուցիայի հզոր գործոնը, «որոնք [լեզուները] դրա շնորհիվ փոխանցվում են մի կատմակերպված վիճակից հաջորդին» (տես Սոսյուրի գիրքը, էջ 152)։

Ուշադիր „Новообразования" գլխում (տես նրա գիրքը, էջ 129) քերում է օրինակներ միայն առանձին տեսակ «անալոգիայից», թեպետ այդ անունը («անալոգիա») չի տալիս։

ենք հետևյալ յեղրակացությանն։ Մենք տեսանք, որ ձևաբանական այդ ասոցիմիլատիվ ձևը և որոշ ձևաբանական միջոցներով մի ընդորինակություն մի այլի, մեկի թե մի քանիսի, որ այդ ասոցիմիլացիան ձգտում և ավելի կարգավորություն և միորինակություն մտցնել բառակազմական և բառահարաբերական ձևերի և սիստեմների մեջ, դեն ձգելով ավելի քիչ գործածականը և տարածելով ավելի կենսունակը, փոխարինելով ավելի հինն ու անկանոնը ավելի նորմատիվ ձևերով, ավելի կենսունակ տարրերով։ Դրանով իսկ մենք ղեկում ենք գարաշրջանի ձևաբանական ունակությունների ավելի կամ պակաս կենսունակ լինելը, գարաշրջանի «ձևաբանական վոգուե» դինամիկան։ Այնուամենայնիվ ձևաբանական ասոցիմիլացիան, յեղած կոնկրետ որինակին կամ որինակներին հետևելով և փոխելով մի տարրը մյուսով կամ մի քանի յեղած տարրերից նորը ստեղծելով, յուրովհանն չի ստեղծում նոր ելեմենտ (արմատ, մասնիկ), այլ յեղածն և ոգտագործում։ Այդ ասոցիմիլացիան, ինչպես ասվել և, ցույց և տալիս միայն նմանվելը (подражание) յեղած պատճեններին կամ որինակին, ևվոլյուցիոն դեր և խաղում լեզվաձևերի վարգացման և տարածման մեջ, շնշտը դնելով անշուշտ գարաշրջանի կենսունակ տիպերի վրա։ Այս ընթացքով լեզուն կարող և հասնել քիչ ձևերի և միորինակության, պահելով միայն ամենագործածվող տարրերը։ Սակայն ամեն մի լեզվի մեջ կա և հակառակ հոսանք, որով այդ նորմալ և ունիֆիկացիոն ասոցիմիլատիվ ընթացքը հակառակ ուղղությամբ և տանում, որով ստեղծվում են նոր ձևեր (արմատ և մասամբ մասնիկներ)։ Ցեթե թողնենք գավառական հին և ոտար բառարմատների ներմուծումը, բնաձայնական նոր բառերի, ինչպես և արվեստական հազվադեպ բառերի կազմվելը, ապա կարծես թե այլևս այլ միջոց չի մնում նոր բառարմատներ ձևոք բերելու*։ Սակայն այդ այդպես չե։ Նոր արմատներ (և թերևս մասնիկներ) կարող են ստեղծվել այդ տարրերի ներքին հնչյունափոխության հիման վրա, այսինքն՝ նախկին արմատների մասերբալի հիման վրա, բայց դիֆֆերենցիացիայի յենթարկելով նրա արտաքին ձևը, որը և մենք առաջարկում ենք կոչել «ձևաբանական դիսսիմիլացիա»։

---

* Մենք չենք հաշվում «նոր» արմատ, յերբ յեղածների միացումը հնոտագրում մեքանվում և այլևայլ պատճառով և իբրև մի արմատ և գիտակցվում, ինչպես заг. յեսիմ, говядино, փաղաքշել..., և մինչև իսկ՝ այժմ, աշխոր, совхоз և այլն, ուր կազմությունը դեռ չի մոռացվ։

Մուծելով այդ տերմինը գուտ դրվածքային կարգով, վորպես մի պրոբլեմա, մենք կարծում ենք, վոր այնուամենայնիվ յերկու մոտեցում կարող և լինել դրա ընութագրմանը, կարելի յե այդ «ձևաբանական դիսսիմիլացիան» վերլուծել ու ձևակերպել յերկու ասպեկտներով։

Առաջին տեսակը այն կլիներ, յերբ մի արմատից (resp. թնից) հնչյունների ներքին փոփոխմամբ, «վորակապես և քանակապես», առաջանում է մի յերկրորդ արմատաձև, առաջինի տարբերակը։ Այդպես տեղի յե ունենում հնչյունների ալտերնացիա, վորը և ծառայում է նոր բառահարաբերության կամ նոր բառ ստեղծելու համար։ Այդպիսի փոփոխվելը յեղած մի արմատից. քան խս, կարելի յե կոչել «ձևաբանական դիսսիմիլացիա», ինչպես օրինակ, անգլերենում «յերգել» արմատից ստեղծվել են sing, sang, sung, song *չորս ձևերը կամ արաբերենում* himar «էշ» hamir «էշեր» *(համմ. գերմ.* Mutter «մայր»—Mütter «մայրեր», *անգլ.* goose «սագ»—geese «սագեր» *և այլն և այլն). այս մասին, վորպես ձևաստեղծական մի գործոնի (միջոցի), մենք խոսել ենք իր տեղում։ Նույնը տեսնում ենք և բաղաձայնների փոփոխմամբ նոր «դիսսիմիլատիվ» ձև ստեղծելու մեջ (օրինակ, անգլ.* wreath *խուլ* th*-յով նշանակում և «պսակ» իսկ* to wreathe *ձայնեղ* th*-յով նշանակում և «հյուսել պսակ». տես նույն տեղում մյուս օրինակները, հատկապես իրլանդերենից և Սուդանի «Ֆուլ» նեգրերենից, եջ 261—267)։ Մենք գիտենք, վոր հայերենն ևս տալիս և շատ լավ օրինակներ դրանց համար, ինչպես շունշան, տուն—տան, դուստր—դստեր, աստղ—աստեղ, հայր—հաւր (հօր), մայր—մաւր (մօր) և այլն և այլն։ Սովորաբար այդ արմատափոխությանը միանում է և շեշտի ու մանրիկների հավելում, ինչպես կին—կանայք, արտօ՛ր—արտասուք և այլն։ Բացի հնչյունների յերկարացումից (և ուժեղացումից՝ բնաձայնով դառնալուց) այդ արմատների ներքին հնչյունափոխությանը մեջ պիտի ավելացնել և հնչյունի անկում կամ ավելացում, ինչպես լատ.* cor «սիրտ» *(ուղղ., հայց.), բայց* cord*-is (սեռ.),* cord*-i (տր.) և այլն, կամ ռուսաց* мать *(ուղղ., հայց.), բայց* матер*-и (սեռ. տր.) և այլն։ Մենք գիտենք նաև, վոր այսպիսի ներքին հնչյունափոխությունը մի յերկու դեպքերից կարող և տարածվել և համատարած օրինակների վրա «անալոգիայով», յերբ իհարկե դրա համար*

հնչյունա-ձևաբանական հող կա, ինչպես և լեզվա-հասարակական զարգացման վորոշ կոնկրետ պահանջ, վորը չի բավարարվում այլ ձևաբանական միջոցներով։ Այդպիսով «ձևաբանական դիսսիմիլյացիան» մի քանի բառարմատների մեջ որինակ է դառնում ուրիշների համար, և ձևաբանական դիսսիմիլյացիան, վոր հնչյունական դիպվածությամբ է գոյանում («պատահականորեն»), դառնում է արդեն ձևաբանական ասսիմիլյացիայի հիմք։ Վերջին պրոցեսը պայմանավորվում է առաջինով և դառնում է նորմատիվ եվոլյուցիոն յերևույթ։

Հայերենը հետաքրքիր որինակներ է տալիս, վոչ միայն նոր արմատաձևեր ստեղծելով յեղակի կամ հոդնակիի համար, կամ հոլովական և խոնարհման ձևերի համար, այլև միանգամայն նոր արմատներ ստեղծելու համար, ինչպես մեր կարծիքով դուստր «աղջիկ, дочь» բառից «d» հնչյունի անկումով (համմատած-փառք, Ախս-Մասիս..) գոյացել է «ուստր» վոր նշանակում է «տղա», թևևս հին «դուստր-ուստր» կրկնությունից, վոր տեսնում ենք գրաբարում («ես ծնաւ Արամ ուստեր և դստեր բազումս...»)։ Ցերը այժմ Աշտարակում «պռճոկել» բառից գոյացնում են ներքին հնչյունափոխությամբ «փոչոգել» և այդ ոգտագործում են իմաստական նոր նպատակների համար (նոր բառ ստեղծելով), կամ Վաղարշապատում «մռուք» բառից և նրա հետ գործ են ածում մռուք (փողաքշական առումով „мордочка") և մռուզ արհամարհական իմաստով՝ դունչ*, ապա այդ լավագույն ապացույցն է, վոր նոր արմատ կարելի յե ստեղծել հնից, վերջինիս հնչյունական փոփոխմամբ։ Այստեղ գոյություն չունի մեկի անցում մյուսին այնպես, ինչպես վոր, որինակ, առաջ յեղել է «հայր», հետո «հեր» կամ «հար», այլ այստեղ մի «ցամաք-ել» ձևի հետ համագոյակից են դառնում (сосуществуют) մի քանի տարբերակներ, վորպես դիսսիմիլատիվ արմատաձևեր կամ նոր արմատներ, ինչպես մեր արարատյան «ցմքել», «չմքել» «սմքել» և այլն։ Այդպիսով, լեզվաբանների կողմից նշված դուբլետները, վոր ժխտվում եր, որինակ, Վունդտի կողմից, մեր հայոց այժմյան մեկնուն բարբառներում (գյուղում, ընտանիքում) ի հայտ և գալիս և արդարացվում։ Կարող է մինչև իսկ սկզբնական արմատը մնալ, իսկ նրա ածանցյալները չմնան, այսինքն մի «մռուք» շարունակի ապրել, բայց մի «մռուզ» կամ «մդուք»

---

* Այդպես է ասում, որինակ, իմ զոքանչը, վորը վաղարշապատցի յե։

այլևս չդործածվելն, նույնն հետագա հանգամանքներին (բարբա-ոի անհետացում, դրական լեզվի աղքեցություն և այլն)։

Ձևաբանական ասոցիացիայի (անալոգիայի) համար ևս բերած «դիսոցիատիվ» օրինակները, հատկապես բաղաձայն հնչյունների փոփոխմամբ, կարող են լինել և անոդտագործելի, քանի վոր հնչյունաբանական և այլ բնույթի հող պիտի լինի դրա համար։ Մեր հին լեզվում ունենք բազմաթիվ դիսոցիատիվ արմատատարբերակներ, ինչպես թորել—ծորել—սորել (դասական բառ. և), տատանել—ծածանել—սասանել, ծայր—սայր, խայթ—խայծ, արուեստ—արհեստ և այլն և այլն, բայց դրանց հիման վրա, դրանց օրինակով նոր արմատներ չեն ստեղծվել. դրանք մնացել են իրենց անհատական ու մեկուսացած շրջանակներում։ Հակառակն ենք տեսնում, օրինակ, ռուսերենում, ուր к ‖ ч ‖ ц կամ г ‖ ж ‖ з և այլն ալտերնացիան արմատների մեջ տալիս և անալոգիական նորակազմություններ (лик ‖ лич-ный ‖ лиц-о, друг ‖ друж-ба ‖ друзь-я...), մանավանդ к ‖ ч և г ‖ ж ալտերնացիայով (пеку—печешь, теку—течешь..., бегу—бежишь, берегу—бережешь...)։

Բայց «ձևաբանական դիսոցիացիային» կարելի չէ մոտենալ մի չերկրորդ բնութագրմամբ, մի այլ կողմից, այն է՝ վերցնելով այդ չերևույթը ձևաբանական ասոցիացիայի հետ, վորպես չերկու ծայրեր մի ընդհանուր պրոցեսի։ Այստեղ քննենք այդ ասոցիացիայի այն դեպքերը («իսկական անալոդիա»), չերբ չեղած մի պարզ ձևը կամ բաղադրյալ ձևի մի մասն և փոխվում, այսինքն՝ չերբ «ցած» ձևը «բարձր» ձևի նմանեցնող աղդեցությամբ («ասոցիացիայով») վեր և ածվում «ցածր» ձևի և կամ չերբ мест, дел.. ձևերից столов, домов և նմաններին աղդեցությամբ ստանում ենք местов, делов և այլն։ Այստեղ կա և ասոցիացիա և դիսոցիացիա, վորովհետև «ցածր»-ը նմանվել և «բարձր»-ին, բայց և դրանով տարնմանվել և «ցած»-ից, այսինքն, «ցածր»-ը «ցած»-ից տարնմանվել և «բարձր»-ի նմանեցնող աղդեցությամբ, դրա միջամտությամբ, քանի վոր առանց այդ վերջին ֆակտորի «ցածր»-ը չեր ստացվի (չեր «տարնմանվի») «ցած»-ից։ Այդպես և делов, местов և այլն կազմվել են столов, домов և նմաններին ասոցիատիվ աղդեցությամբ, վորով նորակազմվածները իրենց հոլովական ձևով տարնմանվել են սկզբնական дел, мест և այլն ձևերից։ Համմտ. հոլովական ֆունկցիայի ձևական արտահայտության փոփոխումը հայերենում, ինչ-

պես՝ Անէի, գինէի... (արտաքին հնչյունափոխությամբ) կամ արտաքին բարբառի հընգոր, անոր, կեսոր... (ներքին հնչյունափոխությամբ) ձևերը, ուր իհարկե նույնպես կան մեր նշած ասոիմիլատիվ և դիսոիմիլատիվ հանգամանքները։ Կարելի է այդ միատնական պրոցեսը տեսնել և նոր բառ կազմելու ժամանակ, յերբ մի պարզ կամ ածանցված բառից կազմվում է ավելի նորը։ Որինակ, акция—акционер և այլն բառերի կազմությանն անալոգիայով ստեղծում ենք реакция—реакционер, репрессия—репрессионер և այլն, կամ տուն—տնային, դաշտ—դաշտային և այլն բառերի նմանությամբ կազմում ենք կոլխոզ—կոլխոզային, խորհուրդ—խորհրդային և այլն և այլն*. իսկ մենք այլ կերպ էլ չենք կարող նոր ձևեր ստեղծել, քան ուրիշ յեղածների հետ կապակցելով և վերլուծելով (Թողած պատահական դեպքերը)։ Ձևաբանական ասոիմիլացիան և դիսոիմիլացիան այդ ընդհանուր ձևաբանական անալիզի և սինթեզի մի այլ արտահայտությունն է նոր ձևերի ստեղծման կամ փոփոխման պրոցեսում։

Ձևաբանական այս ասոիմիլացիայի և դիսոիմիլացիայի միատնական պրոցեսի մեջ հանդես են գալիս յերեք կողմեր կամ միավորներ։ Նա ինքը ազդվողը կամ դիսոիմիլացիայի յենթարկվող կողմը (միավորը)։ յերկրորդ՝ ազդող կամ նմանեցնող (ասոիմիլացիայի յենթարկող) կողմը, վորը կարող և լինել մի հատ կամ շատ (հին руце-յի վրա ազդել են рука, руку, рукой, рук և այլն, դարձնելով руце>руке)։ և յերրորդը՝ այդ հետևանքն է, վոր ստացվում է այդ յերկու վերոհիշյալ կողմերի ասոիմիլատիվ-դիսոիմիլատիվ պրոցեսի մեջ։ Սոսսյուրը (տես նրա դիրքը, եջ 152) առաջին յերկու ձևերը կոչում է «տարրդիցիոն», վորոնցից ազդող՝ ասոիմիլացիայի յենթարկող ձևերը կոչում է «կազմող խումբ» (производящая группа), իսկ ստացվող արդյունքը՝ նոր ձև (новая форма)։

Մենք իր տեղում մատնանշել ենք և յերկրորդական ձևերի պատահական դեպքերի մասին, հնչյունական պատահական դեպքերի մասին հնչյունական պատահական ֆենոմենից, յերբ նոր տարրերացումը ոգտագործվում է նոր իմաստի համար

---

* Որինակ, «կոլխոզային» նոր ձևը դիսոիմիլատիվ և «կոլխոզ» ձևից յենթարկված լինելով միաժամանակ ասոիմիլատիվ ազդեցության այն ձևաբանական սիստեմի, վոր կա տուն—տնային, դաշտ—դաշտային կազմությունների մեջ։

(հմմտ. ճկել—ճկուել, ճանկել—ճանկռել..., կամ պոկել—պլոկել, բընդոթել—բընդոթել...), բայց այս յերևույթը իհարկե պարտադիր չե նոր դիֆֆերենցիալ ձևի կամ ժամանակի համար, քանի վոր կարող են լինել հնչյունական տարբերացումներ, բայց ձևաբանորեն չդատապարտվեն, ինչպես հիմա ռուսաց женою և женой, скорее և скорей..., կամ ֆրանսիացոց reprandre, regagner, retoucher.. և rouvrir, racheter.., ուր կա re- ‖ r- նախամանիկի յերկու տարբերակները, կամ inconnu, indigne... և inutile, inesthétique և այլն յերկու նման տարբերակներով (e ընդային և in յերկհընչյուն միանիշ ժամանիկ)*, վորոնք ֆոնետիկայով չեն տարբերակված։

Ձևաբանական տասիմիլացիայի («անալոգիայի») և դիսասիմիլացիայի մեջ, յեթե վերջինս վերցնենք առաջին (սկզբում քննված) տպավորով, մենք պիտի տեսնենք հին հուն տեսաբաններին «անալոգիայի» և «անոմալիայի» փոխհարաբերության արտացոլումը։ Ձերը հնչյունական «հուլը» փոփոխությունը, կրկնելով տուրդաբանորեն նոր բառապատկերի կազմությունը հնից (համմտ. ֆրանսիացոց droit «ուղիղ» < լատին. di-rec-t-um ձևից, կամ onze «տասնևմեկ» < լատ. un-decim-ից և այլն) կամ հնի կողքին տեղծելով և համագոյակից դարձնելով մի նորը («արտակարգը»), դրանով մտցնում է խախտում յեղած սիստեմի մեջ, ապա այս փոփոխությունը թեպետ առյերևույթ դիպվածական և տարերային ե, բայց և նորոգիչ գործոն ե, թեպետ բառի (resp. և լեզվի?) համար մի յուրատեսակ թռիչք ե, բայց և նոր նորմայի նոր պատվանդան և ձգում և տեղծում։ Դիսսիմիլացիան և տասիմիլացիան լեզվի զարգացման ձևաբանական տեսակետից անշուշտ հնից այդ են արտացոլում։

* * *

Վերջացնելով «Ձևաբանությունը» գլուխը յուր բոլոր հատվածներով, հարկ ենք համարում վորպես յեզրակացություն նշել հետևյալը։ Նախ, մեր ժողովուրդը լեզվի ձևին յեղել և վոչ նեղ քերականական յուր արտիցիոն իմաստով, այլ ընդհանուր լեզվական տեսակետից, լեզվի պատմական զոյացման տեսակետից, վորպես մի հատարակական-հուլտուրական սպեցիֆիկ ֆենոմենի։ Ձևի այդ լայն առումով մենք տեսաբանեցինք վոր-

---

* Որինակները բերված են Սոսյուրի դրքից (էջ 150)։

պես «ձև» նախ հենց ինքը լեզուն. յերկրորդ, վերջինք լեզվի պատմականորեն ձևակերպված յերեք «ձևաբովանդակական միավորների» քննությունը—նախադասության (resp. կոնկրետ ժամքի —ժամածության), բառի յուր լայն առումով, վորպես հասկացության, և մասնիկի, վորպես քերականական ամենափոքր կատեգորիայի (բառ ստեղծելու և հարաբերելու մի միջոց). յերրորդ, քննեցինք բառահարաբերությունները («քերականական կատեգորիանները»). չորրորդ, տվինք այն բոլոր ֆորմատիվ միջոցները (պրիոմները), վորոնցով ընդհանրապես ստեղծվում են բառեր և լեզվական սպեցիֆիկ «հարաբերություններ». հինգերորդ, բերինք լեզուների տրադիցիոն «ձևաբանական կլասիֆիկացիան», վորը այժմ ֆորմալ բնույթ և կրում, «տեսականորեն» և դրվում. և վեցերորդ, աշխատեցինք տալ լեզվի ձևաբանական պրոցեսների ընդհանուր արժեքը և սկզբունքները։ Ցնծե նյութը տեսակետից կար նկարագրական մոտեցում, ապա սրա հետ հանդես և բերվել և պատմական զարգացման վերաբերմունք։

Թողնենք այդպես և հետևյալ «բառագիտությունը»։

V

ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ЛЕКСИКОЛОГИЯ

ԲԱՌԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐՋԸ

Այս «բառագիտություն» ընդհանուր վերնագիրը կրող գլուխը վերաբերում է բառին (լեքսեմային) յուր բոլոր կողմերով։ Հետևապես, դրա մեջ պետք է մտնեն բառի ծագման (առաջացման) խնդիրը, սահմանումը, ձևաբանական կողմը, դասակարգումը ըստ այլևայլ հատկանիշի, բառանկարագրությունը («բառադրություն» лексикография), բառի գործածության և փոփոխության հատարակական պայմանները, իմաստաբանությունը («սեմանտիկան») և այլն։ Շատ լեզվաբաններ գրքից այս հատվածը կոչում են «բառարան» (словарь), վորն ըստ իս ավելի անճիշտ է, քան մեր ընդհանուր «բառագիտություն» վերնագիրը։ Վոմանք էլ այս բոլոր նյութը չերեք վերնագրի տակ են առնում—բառարան, բառակազմություն և իմաստաբանություն, շեշտելով մանավանդ վերջին չերկուսը։

Բառի կամ ավելի ճիշտ բառարմատի ծագման խնդիրը («արմատների դաղտնիքը») կապված է ընդհանրապես լեզվի ծագման հետ, վորը քննվելու չի հաջորդ մեծ գլխում («Լեզվի ծագումը, պրոցեսը» և այլն)։

Բառի սահմանման և հացման հետ կապված խնդիրները քննվել են նախորդ «Ձևաբանություն» հատվածում։ Այդտեղ հիմնականում մենք նշել ենք, վոր բառերը ըստ ներքին բովանդակության և պաշտոնի լինում են «իրական կամ նյութական» և «հարաբերական», կամ այլ կերպ ասած նաև՝ ինքնուրույն և ձևական, վոչ ինքնուրույն («ժանդակ»), վորը կարող է մեր ածվել և մանրիկի։ Մոտենալով բառի չերկու կողմերի տեսակետից, արտաքին-հնչյունական և ներքին-բովանդակական, մենք նշել ենք, վոր ավյալ հնչյունական («նշանակողական»),

«անվանողական», «ձևավորող») արտաքինը ընդհանուր բառանվանման անհրաժեշտության մեջ կեղել և սկզբում մի պատահական կցույթ (ատոբիրուա), մի անվանողական ազդանշան՝ սիմվոլիկա։ Լեզվական տեսակետից, կերը տվյալ հասկացության հետ կերևան չի դալիս նրա հնչյունական անվանումը, կամ ընդհակառակը՝ հնչյունական պատկերացումը չունի նշանակողական բովանդակություն (իմաստը չենք հիշում), ապա չկա և բուն իրեն իսկական իմաստով։ Հիշենք բառի առանձնության ըմբռնումը, կերը բառի այդ առանձնացումը կապում ենք բառի ձևական (հնչյունական) և բովանդակական կողմերի փոխադարձ տարբեր հարաբերակցությից, ինչպես, որինակ, մարտ (=ամիսը) և մարտ (=կռիվ) համարում ենք առանձին բառեր, վորովհետև իմաստական խզում (տարբերություն) կա այդ ընդհանուր արտաքինի (մարտ) մեջ. և կամ «սպիտակ»-«ճերմակ» (թուշ—այտ, շրթունք—պռոշ և այլն) և նմանները նույնպես տարբեր բառեր ենք համարում ըստ արտաքին (հնչյունական) տարբերության։ Այդ վերջին տեսակներից (նույնանիշ բառ) ընդհանրապես լեզուները խուսափում են, աշխատելով ևս տարբերացնել, այսինքն՝ դարձնել դրանք համանիշ (синоним)։ Հիշենք և հականիշ բառերը (антоним), ինչպես բարձր—ցած, սև—սպիտակ և այլն, ինչպես և վերոհիշյալ նույնհնչյուն (բայց տարբերանիշ) բառերը, ինչպես՝ մարտ (ամիս, կռիվ), այր (=տղամարդ, քարանձավ, այրել բայի արմատը), այս (=«այս» դերանունը և այս=սառնամանիք, ձնվ) և այլն և այլն։ Հնչյունական հնչեն վարիացիաները (փոփոխությունները) կեթե իմաստի (կամ ֆունկցիայի) վրա չեն ազդում, ուրեմն չունեն և բառակազմական (կամ բառահարաբերական) նոր հանգամանք, ինչպես՝ ռուսաց скорее և скорей, женою և женой, зал և зала (և կերբեմն՝ зало)«դահլիճ» և այլն։

Բառի կառուցվածքային (структурный) մասի նկարագրությունը ևս տված է «Քևարանության» մեջ, ուր բառ-լեքսեմները համառ նշելի պիտի լինեն կերեք կևսեր։ Նախ լինում են պարզ (քար, սեղան...) և վոչ պարզ բառեր։ Վերջինը, վորպես բարդություն, լինում և նախ ևարադիր կապակցությամբ մի միասնական հասկացողություն—շուռ դալ, ծափ տալ, բաց ու խուփ անել, գլխի ընկնել, մեռնել-պրծնել, спустя рукава, скрепя сердце..., железная дорога, վորը ռուս դիմանական Ֆուրատնատովը կոչում եր слитное речение („железная дорога", „Великий пост...) կամ слитное слово (скрепя сердце, сорви го-

лова...). և յերկրորդ՝ լինում է բաղադրական (կցական) կապակցութիւամբ մի բարդութիւն, վոր սովորական քերականութեան տերմինոլոգիայով կոչվում է «ածանցավոր» (ան-ակ, ամ-ա-վոր-ական, շն-իկ-ս, ան-նը-ներ-ս...) և «բարդ» բառեր, լինի դա «իսկական» և վոչ «իսկական» բարդութիւն, ինչպես վոր հորջորջում է պրոֆ. Մ. Աբեղյանը։ Ցերեկ նախադասութիւնը սովորաբար արտահայտվում է լեզուներում հարադիր կամ զուգադիր կապակցութիւամբ (iuxtacompositio), ինչպես—ահա յես յեկա այս նրան հանձնելու համար, յես գնացի տուն... ապա յերբեմն և բաղադիր կապակցութիւնը (compositio) նույնպես այդ դերը կարող է խաղալ, ինչպես Ամերիկայի բնիկների լեզուներում (հիշենք i-n-i-a-l-u-d-am «ահա յես այս նրան տալու յեկա»), կովկասյան լեզուներում (որինակ վրացերենում) և այլն. համեմատել նաև՝ մրթ-ն-ել, с-тем-не-л-о և նմաններբը։ Վերջապես «Ձևաբանութիւան» մեջ մենք տեսանք, թե ինչպիսի ընդհանուր ձևաբանական պրիոմներ յեն դիմում աշխարհիս լեզուները նոր բառեր ստեղծելու համար կամ դրանց կապակցութեան մեջ դնելու համար։ Շատ լեզվաբաններ, ի նկատի ունենալով կոնկրետ լեզվի նկարագրութեան հարմարութիւնները, այդ մասը կոչում են «բառակազմութիւն», ուր քննում են առանձնապես բառի կազմութեան միջոցները (տեսակները) և առանձին կազմարար տարրերը (արմատ և ածանց), հատկապես բառակազմական մասնիկները («ածանցները»), թողնելով բառահարաբերական («բառափոխական») յերկրորդական ձևերի—մասնիկների քննութիւնը «ձևաբանութեանը» նեղ առումով։ Այս վերջին մոտեցումը ցուցաբերում են «յերիտասարդ քերականներին» զերմանական դպրոցի ներկայացուցիչները, վորը շատ նեղ ու սահմանափակ է, «փորմալիզմով» հագեցած։ Ինչուշտ, բառակազմութիւնն ու բառահարաբերական ձևերի (հոլովման և խոնարհման) ուսումնքը պիտի միացնել և չանջատել ընդհանուր «ձևաբանութիւնից», ուր դրանք կարող են առանձին մասեր կազմել զուտ նկարագրական հեշտութեան (մեթոդական) և ուսուցման տեսակետից։ Այդ պատճառով էլ մենք այս «Բառագիտութիւնն» համարժեք չենք տեսնում «բառակազմութիւնը» առանձին, քանի վոր դա մտնում է բուն «Ձևաբանութեան» մեջ և տրվել է։

Մենք դիտենք նաև, վոր բառերը իրենց հնչյունական արտաքինով և վորոշ պայմանում (հնչյունական միևնույն նամանութիւն) կարող են ազդել միմյանց վրա և վոչ լրիվ ասոցիմիլա-

ցիա առաջ բերել (լրիվ չի կարող լինել տարբեր իմաստների պատճառով), ինչպես՝ բարձր-ցածր, սեկտեմբեր ժողովրդական ձևը հոկտեմբերի, դեկտեմբերի ազդեցությամբ և այլն։

Բառերի այդ արտաքին հնչյունական զուգորդությանն է վերագրվում և «ժողովրդական ստուգաբանություն» ձևարանական յերևույթը, յերբ ձևով չդիտակցվող բառը (կամ բառամասը) իրեն հնչյունակազմով զուգորդվում (=նմանեցվում) են լեզվում յեղած և գիտակցվող բառերին կամ արմատներին։

Բառերի ձևարանական դասակարգման մասին տես վերը։

ԲԱՌԱԳԱՇԱՐ (ԲԱՌԱՐԱՆ)

Բառերի դասակարգման համար նախապես պիտի հավաքած ունենանք տվյալ լեզվի ամբողջ բառապաշարը, որը կոչվում է բառարան։ Այդտեղ մանում են թե մտքի և թե զգացմունքի լեզվական արտահայտությունները՝ առարկաները։ Լեզվի բառամթերքը կարող և տվյալ լեզվի հնչյունական և ձևարանական մասից վորոշ անկախ ընթացք ունենալ, որինակ, այդ բառամթերքը կարող և բավական փոխվել, իսկ հնչյունարանությունն ու ձևարանությունը միևն նախկինը։ Այդ տեսակետից ուշագրավ և նշել, վոր, որինակ, Հնդկաստանի «հինդուստանի» կոչվող լեզվում, այն և նրա գրական («ուրդու») լեզվում, նախադասության բոլոր անդամները կարող են լինել բացառապես պարսկական, իսկ քերականական ելեմենտները (հոլովման և խոնարհման) միայն են տեղական հնդկականը, կամ թե հայոց բոշաների մոտ հնչյունական և քերականական տարրերը հայերեն են, իսկ բառերը իրենցը՝ բոշաներինը (դրանք գաղթականներ են Հնդկաստանից)։

Բառարանները կարելի յև կազմել յերկու ասպեկտով՝ ստատիկ և դինամիկ, այսինքն՝ մի լեզվական դրության բառապաշարի սոսկ բացատրական նկարագրությունը և կամ դրա պատմական ընթացքը, յուր փոփոխություններով և ծագումով։ Բառերի այդ յերկու տեսակ նկարագրությունն էլ կոչվում և «լեքսիկոգրաֆիա», վոր նշանակում և «բառանկարագրություն» (տառացի՝ բառագրություն), և կազմվում և այբուբենական սիստեմով, ուր բառերը կամ արմատները անմիջական կապ չունեն իրենց հաջորդականության մեջ, բացի այդ հնչյունականից (վորն արվում և հարկավ բառերը հեշտ գտնելու տեսակետից)։ Բացի

այդպիսի ընդհանուր բացատրական բառաբաններից,—իսկ բացատրությունը կարելի է տալ և մի քանի լեզուներով,—կան և մասնավոր, այն է՝ մասնագիտական բառարաններ, ինչպես՝ բժշկական, բնագիտական, փիլիսոփայական, իրավաբանական, տեխնիկական, ռազմական և այլն։

Որքր բառը վերցնում են իրեն ծագման և զարգացման մեջ, ապա այդ կոչում են ստուգաբանություն («էտիմոլոգիա»)*։ իսկ այդ ձևով կազմած բառարանը կոչվում է ստուգաբանական բառարան» (պատկառ ճիշտ կլիներ կոչել՝ արմատական բառարան)։ Իրոպես պատմական գիտություն ստուգաբանությունը վերականգնում է բառի հնագույն ձևը և բովանդակությունը վորքան այդ հնարավոր է, գրավոր հին հիշատակարանների և այլ լեզուների բառամթերքի հետ համեմատելով։ Աղգակից լեզուների համեմատական քերականությունը գլխավորապես հիմնվում է այդ ստուգաբանությունների տվյալների վրա։ Ժ. Վանդրիեսի ասելով՝ сравнительная грамматика и фонетика были созданы на основе данных этимологии. Этимология, фонетика и граммтика друг друга поддерживают. Овладевши закономерными соответствиями звуков и грамматических форм, этимолог, правильно применяя эти соответствия, в состоянии принести большую пользу лингвистике (տես նրա Язык, եջ 168)։ Բառիմաստների փոփոխության մեջ է նկատի պետք ունենալ ժամանակի հասարակական մտածողությունը և մտայնությունը, վորովհետև բառի այժմյան իմաստը երբեմն չի համընկնում այդ բառի անցյալ իմաստի կամ իմաստների հետ։ Բառի ճիշտ իմաստը ստեմնափակվում է յուր տվյալ ժամանակով և մինչև իսկ տվյալ նախադասության մեջ յեղած գործածության։

Լեքսիկոգրաֆիան փորձում է կարծես թե յուր այբուբենական հաշվառումով տալ տվյալ լեզվի ամբողջ բառապաշարը, բայց այս բանը հաջողվում է միայն վորոշ վերապահումով։ Նախ, այդտեղ մոռնում են բառեր, վոր կամ չեն գործածվում տվյալ մոմենտում և կամ քիչ են գործածվում։ Յերկրորդ, գրական կամ ընդհանուր լեզվի բառապաշարին խառնում են շատ բառեր ու

---

* Առաջ այդ հունական տերմինով սիրել կերտով կոչում էին քերականության այն մասը, վորն ընդգրկում է հնչյունաբանությունը և ձևաբանությունը, հանած ուրիշ շարահյուսությունը։

վոճներ, որ հատուկ են այս ու այն բարբառին կամ գրողին։ Ցեմ վերջապես, բառի առումները (իմաստի տեսակետից), ինչպես և նրա ածանցման հնարավորությունները, չեն կաշկանդված և սահմանափակված, և մի տվյալ միջնադում անգամ ստեղծվում են նորանոր բառեր, յեթե չխոսենք նաև փոխառումների մասին։ Ընդհանրապես և ժողովրդական վերցրած, իհարկե, կարելի չե տալ տվյալ լեզվի ամփոփ բառապաշարը, որով և կիմացվի թե այս լեզուն և հարուստ, կամ ժլատը։ Փորձում են մինչև իսկ նշել այս կամ այն գրողի լեզվի հարստությունը. դիցուք թե Շեքսպիրը գործ է ածել 15 հազար բառ (վոմանց հաշվառումով՝ 24000), կամ Միլտոնը գործ է ածել 7000—8000 բառ, Հոմերոսը՝ մոտ 9000 բառ, Աստվածաշնչում՝ 5642 բառ, Նոր Կտակարանում 4800 բառ և այլն և այլն*։ Բայց գրողի գրվածքների բառապաշարը միշտ չի հանդիսանում ճիշտ թվական արտահայտությունը յուր բառապիտության, ել չենք ասում յուր ժողովրդի (ազգի) կենդանի բառապաշարի։ Սովորական բառաքանակը խոսակցության ժամանակ կուլտուրապես հետամնաց յեվրոպացու մոտ յեթե հարյուրի սահմանումն են վերցնում։

Բառընտրության մեջ, թե քանակական և թե վորակական տեսակետից, մեծ նշանակություն ունի, իհարկե, խոսողի սոցիալական դիրքը, ծագումը։ Համեմատենք, որինակ, մի բուրժուա ֆինանսիստի լեքսիկոնը և մի բանվորի, կամ մի ինժեների և մի ուսուցչի և այլն։ Իսկ մի սոցիալական շերտում վերցրած, որինակ, խաշնարած դյուղացին մի շարք այլ բառեր ու վոճներ և գործ ածում, քան այդեղործ դյուղացին. և այդպես նաև այլ դեպքերում։

ԲԱՌԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՇՈՒՐՋԸ

Բառերը ցույց են տալիս կամ մտքի առարկա կամ զգացմունքի առարկա («միջառկություն», «ձայնառկություն»), թեպետ վերջիններն էլ կարող են մտածվել յերբեմն վորպես մտքի առարկա (որինակ, նրա «ախ»-ը սիրտս խոցեց), և մտքի առարկաներն էլ կարող են զգացմունքային ուժեղ շեշտում առանալ (աա, ժպրախտություն», чёрт побери...)։ Ընդհանրապես ասած, խոսողը միշտ կարող է իր վերաբերմունքը (զգացմունքը) ցույց տալ յուր մտքի

* Տես Ж. Вандриес, Язык, Москва, 1937 г., էջ 177.

այս կամ այն առարկային (համմտ. հենց «յեղանակիչ-ժամանակները», ինչպես՝ թևեա, անշուշտ..., կամ բայի յեղանակները բառերի այս կամ այն շեշտումներով և այլն)։

Այդ «մաքի առարկա» բառերի մեջ կարող է լինել յերկու տեսակ դասակարգում. կամ բառերի ձևական տեսակետից՝ բառակազմության և բառահարաբերության մեջ, և կամ բառերի նրբերին բովանդակության տեսակետից՝ անկախ բառի ձևական ինքնօրոշումից։

Ձևական («քերականական») դասակարգումը կվերաբերի այնպիսի լեզուներին, ուր բառերն ունեն այդպիսի արտաքին կառուցվածք, թե բուն լեքսիկական («բառակազմության») բովանդակությամբ և թե շարահյուսական («բառահարաբերության»)։ Յեթե վերցնենք առաջին սկզբունքը, ապա բառերը կարող ենք բաժանել բարդ բառերի այլևայլ տեսակների (բառերի կցումով, բառարմատների կցումով, բառերի կամ բառարմատների կրկնումով կրնոց տարբեր փոփոխակներով), կամ նախածանցավորներն առանձին և հետածանցավորներն առանձին և այլն։ Սա, իհարկե, բրնն ուսուցողական և գիտական մեծ արժեք ունի անպայման։ Բայց ավելի ընդունված և բառերը դասակարգել այդ ձևական («քերականական») տեսակետից, ի նկատի ունենալով գլխավորապես բառի «ձև» դրսևորելը յուր կապակցության (նախադասության) մեջ։ Հնդեվրոպական լեզուներում, որինակ, բառերի ամենաընդհանուր դասերն են հանդիսանում—հոլովվող բառերը, 2) հոլովվող բայց և սեռով համաձայնվող բառերը և 3) խոնարհվող բառերը։ Այդ յերեք դասերին հակադրվում և մակբայը, որը չունի բառահարաբերության ուրույն ձև (կապական բառերը չեն համարվում, իհարկե, ինքնուրույն բառեր և առանձին դաս են կազմում)։

Յեթե վերցնենք բառերի դասակարգումը ըստ բովանդակության,—մի բան, որ վերաբերում է աշխարհիս բոլոր լեզուներին,—ապա այստեղ տարբերում են 1) «բառեր-անվանումներ», որոնք ցույց են տալիս հատկանիշը (սպիտակ, սպիտակություն, ընթանալ, ընթացք..) կամ այդ հատկանիշերը պարունակող առարկաներ (ձյուն, ինքնաթիռ, սեղան..) և 2) բառեր-դերանուններ, որոնք միշտ կոնկրետ են՝ ցույց տալով առարկաներ (յես, դու, նա, ով, ինչ..). կամ հատկանիշներ ու հարաբերություններ

(այս, իմ, վոր..)*): Իսկ հատկանշները (признаки) մենք կարող ենք մտածել կամ վորպես ժամանակի մեջ գոյություն ունեցողներ (գործողություն, դրություն) և կամ այդ ժամանակից անկախ (վորակ, քանակ, այլևայլ հարաբերություններ): Անշուշտ այդ հատկանշները մենք կարող ենք մեր մտքով առարկայացնել («գոյականացնել»), ինչպես՝ սպիտակը, սպիտակությունը, յերեքը, յեռյակը, ուտելը, ընթացքը և այլն: Բառ-անվանումների մեջ, վորոնք ցույց են տալիս առարկաներ, մենք տարբերում ենք ընդհանուր կամ հասարակ բառեր, յերբ դրանք ցույց են տալիս առարկաներ հանդերձ իրենց հատկանշերով, թեկուզ այդպիսին լինի մի առարկա (որինակ, արև, յերկրագունդ..). և յերկրորդ՝ հատուկ բառեր, յերբ վերցվում են միայն առարկաներ, անկախ իրենց սեռական և տեսական հատկանշերից, թեկուզ այդպիսի առարկաներ լինեն և շատ (Վարդան, Վարդանյան, Արինջ...):

Յերբ մենք բոլոր բառերը ըստ բովանդակության բաժանում ենք յերկու մեծ խմբերի (դասերի), ապա այդ արվում է հարկավ շատ ընդհանուր առումով: Առարկաներն մեծ խումբը կարելի յե ստորաբաժանել, որինակ, ծառերի խմբակի, գետերի խմբակի, կենդանիների խմբակի և այլն և այլն, իսկ հատկանշերի խումբը՝ ավելի յենթախմբերի, ինչպես, որինակ, բառերի, վոր ցույց են տալիս գույն, թիվ, ձև և այլն: Մինչև իսկ կարող է լինել և հատկանշի հատկանիշը իրեն չափով, ձևով, աստիճանով, վոր տեսնում ենք մակբայների մեջ:

Այդպիսով, ուրեմն, մենք ունենում ենք հետևյալ «մասունք բանի»-ները (խոսքի մասերը)—1) ձախարկություն, վորպես կոնկրետ այս կամ այն նոմոցիայի արտահայտություն, 2) գոյական, վորպես առարկա կամ այդպիսին ժամանակվող հատկանիշ, 3) ածականներ, վորպես վորակի կամ հարաբերության ընդհանուր հատկանիշ, 4) թվական, վորպես թվի կամ կարգի յենթահատկանիշ, 5) դերանուն, վորպես, առարկա կամ հատկանիշ ու հա-

---

* Ըստ Գաբելենցի. այսպես և «Наиболее общими неграмматическими классами слов в наших языках являются: 1) слова-названия, обозначающие признаки предметов мысли или предметы мысли как вместилища известных признаков и 2) слова местоимения, обозначающие или предметы мысли в их отношении к данной речи, или само отношение этих предметов мысли к данной речи (ср. различие в значении русских: *я, ты, он* и *этот* (человек), *который* (воз) и. т. д. (տես նրա գիրքը էջեր 120—121)

բաբերութիւն փոխարինող բառ, 6) բայ, որպես ըստ ժամանակի փոփոխվող հատկանիշ (գործողութիւն, դրութիւն), 7) մակբայ, որպես հատկանշի հատկանիշ իրեն այլևայլ ձևերով ու ստեճանններով, 8) կապական ֆորմալ բառեր—նախդիր կամ հետդիր և շաղկապ, որպես այլևայլ հարաբերութիւններ նշող բառեր, որոնցից հետդիր-նախդիրը ինքնուրոյն բառերի մէջև յեղած այլևայլ քերականական հարաբերութեան համար և, իսկ շաղկապը՝ ինքնուրոյն բառերի և նախադասութիւնների։ Նախնական և հիմնական խմբերը անշուշտ յերևքն են յեղել՝ դոյականներ և ածականներ ու բայեր, յերեթ այդ նախնութեան տեսակետից չհաշվինք, իհարկե, մի քանի ներքին ձայնարկութիւնները), որոնք նախադասութեան անմիջական կապակցութիւնից (սինտաքսիսից) դուրս են, թեպետ և խոսքի մէջ են (այդ տեսակետից պիտի դասվեն նաև կոչական բառերը)։

Այն լեզուները, որոնք ունեն բառի ձևային դրսևորում (ժամանակներով), այդտեղ ժասունք բանխոսները ինքնորոշվում են ըստ այդ հանգամանքի, իսկ անմասնիկ («ժոլոֆ») լեզվում բառաբերելացումը ըստ բովանդակութեան (առարկա, հատկանիշ-հարաբերութիւն, հատկանշի հատկանիշ) լինում է միայն նախադասութեան այլ ձևական հանգամանքների միջոցով (դասավորութիւն, շեշտ)։ Բայց ընդհանրապես պիտի ասել, որ մասնիկավոր լեզուների մէջ անգամ բառերն իրենց առանձին դեպերի ինացքայով (ժամանակներով-ածանցներով, ֆլեքսիայով) հանդերձ նուլևայես կախվածութեան մէջ են կոնկրետ նախադասութեան մէջ յեղած իրենց դիրքից ու հարաբերութիւնից։ Իսկ այսպիսի առումներից յեղած բառի վորակը կարող է և հիմնովին փոխվել։ Որինակ, առաջ մի «ծառայող», «ժեռնէլ», «վիրավոր» և նմանները հատկանիշ ցույց տվող բայածականներ կամ ածականներ էին, սակայն այժմ հասկացվում են գլխավորապես վորպես առարկաներ-դոյականներ (թեպետ և ասում ենք՝ ծառայող մարդ, վիրավոր զինվոր)։ Նախադասութեան այլևայլ կապակցութիւնների մեջ, որինակ, մի «սառը» բառը կարող է լինել և դոյական և ածական և մակբայ (ամառը սառը դուռ է գալիս, սառը ջուր, նա սառը պատասխանեց), իսկ մի անդլերենում կամ չինարենում մինչև անգամ բայական առում ևս կարող է ունենալ այդպիսի դոյականը*)։

---

* Որինակ, անգլերենում fire հիմնականում նշանակել է «կրակ», ինչպես—put a fire in my room «մառեք կրակը իմ սենյակում», բայց ունենք նաև—I fire my room «ես տաքացնում եմ իմ սենյակը», a fire fly «կրակ հանող» (=լուսատիկ), տես Ж. Вандриес, Язык, էջ 118։

Այդ բոլորի ճիշտ դրսևորողը անշուշտ նախադասությունն է կամ ավելի փոքր կապակցությունը (որինակ, «քար սիրտ» կապակցության մեջ «քար»-ը ածական է)։ Անշուշտ բառի այդ բովանդակական տարբերությունները՝ կապված այդ բառի կապակցական հարաբերությունների՝ չեն կարող հավասարակշռված քանակով հանդես գալ. վերջիվերջո մեր մտածողության մեջ թեկուզ այդպիսի կոնկրետավորվող ըստ բովանդակության բառը ունենում է մի գերիշխող իմաստ (կամ առարկա և առարկայացող հատկանիշ, կամ պարզ հատկանիշ և հարաբերական)։

Ուրեմն, յեթե մի հանրագումարի վերածենք բառերի դասակարգումը ըստ բովանդակության, ապա հնարավոր են չորս հիմնական և մեծ խմբեր—նախ եմոցիոնալ (աֆֆեկտի) բառեր, ինչպես՝ ձայնարկություններն է և մասամբ այդպիսի դրության մատնող կոչական բառերը (հրդեհ!, Մուրեն!). յերկրորդ՝ առարկա ցույց տվող կամ այդպիսին մտածվող բառեր, որոնք են գոյականները (սեղան, սպիտակություն...) և անձնական դերանունները (յես, դու, նա). յերրորդ՝ հատկանիշ ցույց տվող բառեր, կամ վորպես միայն հատկանիշ (ածական, թվական, մասամբ դերանուն և մակրայ) և կամ փոփոխվող ըստ ժամանակի հատկանիշ (բայ). և չորրորդ՝ հարաբերություն կամ կապակցություն ցույց տվող բառախումբը (նախդիր-հետդիր, շաղկապ և մասամբ դերանունները՝ ցուցական, հարաբերական և առացական)։ Դալրոցական բաժանումը ինքը «մասունք բանի»-ների բացի այս մտնեցումից ունի նաև ուսուցողական և մասամբ ձևական նկատառումներ, վորոշ մասն էլ ավանդական է և լոգիզմով հագեցած։ Գաումական ասպեկտը կարծես չկա։

ԲԱՌԻՄԱՍՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ («ՍԵՄԱՆՏԻԿԱ»)

Յեթե չհաշվենք սակավաթիվ բնաձայնական բառերը (խըշշալ, մկկալ, ոռռալ. չըըըքաք...), վորոնց հնչյունները իրենց միասնությամբ տալիս են առանձին արտահայտություն և անմիջական վերարտադրություն (վերապատկերում) իրեն առարկայի, ապա բոլոր մյուս բառերը չունեն այդ կապը իրենց իմաստի հետ։ Կապակցությունը չի հիմնված յեղել ինչ վոր նևրքին անմիջականության և նմանության հողի վրա, այլ լոկ գոյացել և պատահականորեն, ուր ավյալ հնչյունակոմպլեքսը առընթերության կամ կցորդության զուգորդությամբ տրվում է ավյալ

իմաստին։ Վոչ մի այլ անհրաժեշտություն չի կղել, քանզի այդպիսի զուգորդությունը յուրացվելով իրեն հերքին դարձել և մի պատմական նվաճում լեզվի համար, մի անհրաժեշտություն։ Միշտ իմաստի համար պիտի մնա այդ անհրաժեշտությունը՝ հընչյունական ձևով արտահայտելու, յերբ խոսում ենք իհարկե հընչյունաձև մտածողության մասին։ Սակայն այդ չի նշանակում, վոր բառիմաստի զարգացումը կախված և այդ տվյալ հնչյունակոմպլեքսից, վորով նա արտահայտվում է։ Բառիմաստը կախված է մեր հասարակական մտայնության և աշխարհաճանաչողության, բայց վոչ բառի արտաքինից, քանզի բառի ձևական դիֆֆերենցիացիան կարող է ոգտագործվել իմաստի տարբերացումների համար։ Ենթե չհաշվենք այդ մոմենտը, ապա բառի հնչյունական արտաքինի հասարակական արժեքը միայն իմաստը պահելու, ձևավորելու և արտահայտելու մեջն է։ Բառի հնչյունական արտաքինը կարող է փոխվել, շնորհիվ հնչյունների հարափոխ վիճակի՝ կախված շեշտից, մեմյանց ազդեցություններից, դերքից և այլն, բայց բառիմաստը մնում է անփոխոխ. որինակ, մի հին «աղբայր» ժողովրդական ձևը հիմա դարձել է «ախպեր», կամ «աղբեւբ»-ը—«ախպուր» և այլն, բայց իմաստը չի փոխվել կամ քնքականական «նոսիբ», «մոնիբ» և նման ձևերը այժմ արդեն հնչում ենք նոսի, մոի և այլն, բայց իմաստը չենք փոխում։ Նով, ընդհակառակը, այսինքն՝ հնչյունական արտաքինը կարող է մնալ անփոխոխ, բայց իմաստը փոխվել. հմմտ.—ընկեր «միասին ուտող» (=սեղանակից, կազմած ընդ+կեր եղեմենանեղից), ինչպես վրաց amxanagi (պարսից բառ) նույն հին իմաստով (xanag =սեղան բառից և am «հետ»—մասնակից), բայց այժմյան դրանց իմաստը միանգամայն այլ է. այդպես «ապրել» առաջ նշանակել է «դուրս պրծնել, ազատվել», իսկ հիմա՝ ապրել, (=жить), վորից և «ապրանք» յերբորդ իմաստափոխակը։ Կամ, ասենք, ռուսաց стрелять առաջ նշանակել է «նետ արձակել», իսկ հիմա «կրակել, գնդակոծել», защитить նշանակել է «վահանել» (щит) հետև առնել», իսկ հիմա «պաշտպանել». և այսպես անվերջ։

Ենթե վոր բառիմաստի զարգացումը (փոփոխումը) կախված է մեր գիտակցական (մտայնական) կյանքից, վոր յենթակա չէ փոփոխության, ապա և բառիմաստի մեջ մենք կարող ենք դիտել զարգացման յերեք մոմենտներ։ Նախ, վորոշ հասկացություններ կարող են հետագայում գործ չածվել, ինչպես՝ նախարար, մյուրոն, ապատ (=պղնվական), пристав, тиун, посадник,

вече և այլն, և հետևապես և այդ բառերն էլ դուրս պիտի ձգային ծերկրորդ դեպքն այն է, վոր հին բառերը կարող են ձևով պահպանվել, բայց իրենց իմաստը փոխած լինել, ինչպես—սեպուհ, սրբազան (որինակ, իմ սեպուհ և սրբազան պարտականությունն է), ազնիվ (կամ ազնվական), պարլամենտ, բրիգադա, կոմիսսար..., ապրել, ընկեր, защитить, должник (առաջ նշանակում էր՝ պարտատեր, իսկ հիմա՝ պարտապան), մորթել (առաջ՝ մորթազերծ անել, հիմա՝ վիզը կտրել, մորթել) և այլն և այլն։ ծերրորդ դեպքն այն է, վոր չկա հին իմաստի փոխանցում մի նորի, այլ ստեղծվում է միանգամայն նոր հասկացություն (գաղափար), վորի համար յեղած լեզվական ելեմենտներից ստեղծվում է նոր բառ, ինչպես самовар, самолет, трактор, աշխոր, կոլխոզ, ուդարնիկ, հակագազ և այլն։ Մենք առաջ էլ կարող էինք «ինքն» և «թռչել» հասկացությունները ունենալ, ինչպես և կային «ուդարնիկ» և «տաքնապ» բառերը, սակայն չկար «ինքնաթիռ» և «ուդարնիկ տաքնապ»։ Ձեվ այդպես և մյուս դեպքերում։ Բայց մենք վերջնենք բառիմաստի զարգացման հատկապես յերկրորդ մոմենտը, այն է, յերբ բառը յուր իմաստն և փոխում։ Այստեղ ընդհանրապես պիտի նշել, վոր լեզվաբանության մեջ այս գլուխը՝ բառիմաստի փոփոխության ուսմունքը (семантика, семасиология), այնքան էլ լավ չի ուսումնասիրված, քան պետ հետաքրքրական գլուխներից մեկն է։

ԻՄԱՍՏԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Լեզվի ինքնուրույն բառերը, բացառելով մասամբ հատուկ անուններն ու տեխնիկական տերմինները, սովորաբար սահմանում են այլևայլ իմաստական շեղումներ կամ տարբերացումներ («առումներ»), յերբ հիմնական պատկերացումը այլևայլ դուրդրություններով աղերսակցվում և կողմնակի պատկերացումների կամ հասկացությունների հետ։ Այս պիտի համարել նաև նորմալ յերևույթ հենց լեզվաշինարարության տեսակետից, յերբ մեր լեզվական մտածողության մեջ հասկացություններն ու պատկերացումները ավելի շատ և շուտ են զարգանում քան դրանց ձևերը։ Ցեթե ամեն մի նրբության համար մենք ստեղծելինք նոր բառեր, վորը իդեալական կլիներ հարկավ, ապա միևնույն ժամանակ այդ կլիներ մի բալլաստ մեր հիշողության համար և գործնականորեն անիրագործելի։ Որինակ, սուր բառը նշանակել և

դնենք մի տեսակը (меч) և այստեղից՝ դրա «սուր» (острый) հատկությունը. սակայն մենք այդ փոխաբերական իմաստը դրել ենք ածում և շատ այլ առարկաների նկատմամբ, ինչպես՝ սուր հոտառություն, սուր լսողություն, սուր տեսողություն, սուր խոսքեր («սրախոսություն»), սուր աշակերտ և այլն։ Համեմատել այդպես և «կանդնել» իմաստը յուր այլևայլ առումներով, ինչպես՝ նա կանդնել է, տրամվայը կանդնել է, ժամացույցը կանգնել է, ոտը կանգնել է* և այլն։

Լեզվի զարգացման մեջ այս կերևույթը միանգամայն բնականոն է և անհրաժեշտ։ Ցեղ յեթե բառի ձևաբանական ներքին տարբերացումները («դիսիմիլացիան») վորոշ չափով զարմանում են «առումներին» ձևական պահպանության այդ լինում է նախ ինչ-քանակով, այն էլ՝ վորոշ լեզուներում և հին ժամանակ, իսկ այդ առումներն էլ իրենց հերթին դառնում են հիմնական հասկացություններ և էլի առանում նորանոր «առումներ»։ Բառիմաստի այդ փոխաբերական ըմբռնումները կամ առումները լինում են վոչ դիտավորյալ, այլ կարելի յե ասել՝ ինքնաբերաբար, կախված կերևույթների այս կամ այն կերպ ճանաչումից։

Բայց կան դեպքեր, յերբ իմաստի փոխաբերումը մենք կատարում ենք դիտավորյալ կերպով, գիտակցորեն։ Այդ անում ենք այն ժամանակ, յերբ նկարագրվող առարկային ավելի վառ պատկերացում տալու համար նրան վերագրում ենք այլ առարկայի հատկանիշը։ Որինակ, յեթե «աերևների սոսափյունի» փոխարեն դրի ածենք «աերևների փսփսոց», ապա կստացվի հենց այդպիսի փոխանցում։ Այդպես կարելի յե ասել և «բնությունը քնած է», «բառը ժպտում է», говор волн (փոխանակ шум волн) և այլն**։

Յերբ բառիմաստը դրի է ածվում իրեն բուն առարկայի համար, ապա ունենք բուն կամ իսկական նշանակություն (прямое или собственное значение). իսկ յերբ դրի է ածվում այլ կերևույթի փոխարեն, ստանում ենք փոխաբերական նշանակություն (переносное значение), վոր հունարեն կոչվում է «մետաֆո-

---

* Աշխարհում ասում են «ավինդը կանգնել ա» (=յեղեռնակը կայունացել է)։

** Համեմատել հետևյալ մետաֆորաները Դեպը գիտի Նեկրագրությունից, վոր տալիս է Գոգոլը. „Леса *толпятся* к водам и, наклонившись, *глядят* в них и *не наглядятся*, и *не налюбуются* светлым своим зраком, и *усмехаются* ему, и *приветствуют* его, *кивая* ветвями".

բառ։ Փոխաբերական այդ առումները կարող են հետզհետե հեռանալ և բառի պատմական այդ զարգացման մեջ չդիտակցվել իբրև մի ամբողջություն։ Այդ դեպքում ստացվում են անշուշտ նոր բառեր, լինելով նույնանշյուն («омонимы»), ինչպես перо (=փետուր) և перо (=գրչածայր), рак (=խեցգետին) և рак (հիվանդության տեսակ է), լեզու (=խոսք) և լեզու (=բերանի օրգանը), ակն (=աչք), ակն (=մատանու ակը), ակն (=սայլի անիվը), դաս (=խուժը) և դաս (=սովորելու դասը), պատարագ (=նվեր) և պատարագ (=յեկեղեցական հանդես), վողջ (=ամբողջ) և վողջ (=կենդանի, целый) և այլն և այլն։ Իսկ յերբ իմաստաւորիանները գիտակցվում են իրենց միանականության մեջ, ապա մենք ունենք մի բառ իրեն, այսպես ասած, ընդհանուր և ժամանակով (կոնկրետ) առումներով։

Կոնտեքստում, այսինքն կապակցության (resp. նախադասության) կոնկրետ պայմաններում, բառիմաստը ունենում է յուր կոնկրետ սահմանաւորումը։ Հետևապես բառիմաստի տարբերակները չեն կարող շփոթվել։ Մենք յուր տեղում տեսանք, վոր յերբեմն բառը կարող է դործ ածվել և վորպես գոյական և վորպես ածական և վորպես մակբայ և այլն, բայց նախադասության մեջ այդ շփոթը իհարկե չի լինում։ Այդ նույնը տեսնում ենք և մի նշանակության մեջ, այսինքն՝ բառը գոյական կամ մի ածական և այլն լինելով, իրեն հերթին ունենում է շատ առորոշյալ առումներ, վորոնք սակայն չեն շփոթվում կոնկրետ կապակցություններում։ Լեզուն պահանջում է մեզանից առույգ և պարզ արտահայտություն. կալամբուրները* միայն հատուկ դեպքերում են տեղի ունենում և հաջողություն գտնում (յերբ խոսողը նախահոգեբանական հող և պատրաստում լսողների մեջ)։

Մենք գիտենք արդեն, վոր ամյալ բառի նշանակությունը սահմանվում է նախադասության ընդհանուր մտքով, ինչպես մանավանդ այդ բառի հետ յեղած կապակցված այլ բառերով. հանձնաժող—վայր ընկնել, բայց գլխի ընկնել, գլուխը ցավում է, բայց գլուխը կորցրել է, մայրը մտավ տուն, բայց արևը մայր մտավ և այլն և այլն, կամ ռուսաց ехать на охоту բայց охота тебе, русский язык բայց длинный язык, за столом, բայց

---

* Այնպիսի բառախաղումներ, վորոնք շփոթ են պատճառում, և միայն այս կերպ կամ այն կերպ է հասկացվում։

„комната со столом" և "2-ой стол", կամ на носу (քթին), գայլ задирать нос (յերևակայել, համմ. դրաբարի «մքթամբ» նման կաղմուվքյունը) և „остаться с носом" (=խաբվել) և այլն և այլն։ Բայց և այնպես, վորպեսզի լսողը բառի հետ շատ ճիշտ պատկերացում կազմի, բացի ֆրազային (նախադասական) ձևական այդ կապակցություններից, հոգեբանորեն պահանջվում է նաև լսողին վորոշ չափով ոգնել բառիմաստի ճիշտ ընկալման համար, նրան հոգեբանորեն նախատրամադրել։ Այս արվում է խոսքի նախորդ փուլի ոգնությամբ, յերբ վորոշ հող և պատրաստված լինում, հետո՝ շրջապատի միջնորդության, միմիկայով, ժեստիկուլյացիայով, խոսողների սոցիալական ծագման հանդամանքով և այլն։ Որինակ, մի «նավահանգիստ», «զբոսավայր», «կայարան», «համալսարան» և այլն այլ կոնկրետ առում կարող են ունենալ Ոդեսայի բնակչի համար քան Լենինգրադի։ Կամ «քաղաք» այլ և Մոսկվայի արվարձաններում ապրողի համար, քան Թբիլիսիի և այլն։ Ցեթե կոնկրետացվող «արտահայտային» հանդամանք չլինի, մի «ռադերացիա» սոսկական բառը այլ առումներ և ունենում մի բժշկի մոտ, մի ֆինանսիստի կամ ռազմագետի մոտ և այլն։ «Թյուրիմացություն» և լինում, յերբ խոսողը՝ լավ չմտածելով ունկնդրի դրության մեջ (ինչպես հաճախ և լինում ցրված մարդկանց մոտ, ծերուկների կամ յերևակաների մոտ), չի դիմում բոլոր մեր ընթած խոսային պահանջներին և պայմաններին, լինեն դրանք տեխնիկական-լեզվային, թե հոգեբանական-ընդհանուր։

Վերաբերմունք կամ մտայնություն դեպի բառի իմաստային կողմը կարող և ցույց տրվել վոչ միայն մի վորևե խմբակի, դասի կամ դասակարգի կողմից, այլև մի ամբողջ հասարակության կամ յերկրի կողմից, մանավանդ յերբ գործ ունենք հասարակական, վարչական, պետական, տնտեսական*, կուլտուրական, բարոյական և նման տերմիններին հետ։ Համեմատել, որինակ, ընկեր (անձնական և քաղաքացիական առումով), մրցություն («սոցմրցություն»), հերոս («աշխատանքի հերոս», «Միության

---

* Հետաքրքրական դեպք և հիշատակում Վանդրիեսը «սեզոն» բառի նման ապրելեցեցկայի մասին, կախված տնտեսական չահերից. «Слово сезон также принадлежит к словам с многочисленными значениями. Для директора театра или собственника дачи, для торговца фруктами, портнихи или владельца виноградника, можно сказать, для любого торговца или пред-

հերոս»), պարլամենտ («խորհուրդների համագումար»), հանդամանուն, կուսակցություն և նման տերմինները մեզ մոտ և կապիտալիստական յերկրներում։ Մենք արդեն նշել ենք յուր տեղում վոչ միայն այսպիսի իմաստական տարբերությունների («առումներ») մասին, կախված հասարակական մտայնությունից, այլև բառերի և վոճերի քանակի տարբերության մասին։

Բառիմաստի փոխանցումը (переход) կատարվում է հոգեբանական ղեկավորությունների՝ ըստ տարածության (կցորդության) և ըստ նմանության։ Որինակ, սուբ (դանակ), սուբ (հոտառություն), սուբ (լսողություն) և այլն, կամ ձին գալիս է, անձրևը գալիս է և նման անցումները լինում են ըստ նմանության, իսկ քաղաք (շենքերը և այլն) և քաղաքը (=ժողովուրդ), գլուխ (մարդու)—քան գլուխ վոչխար, հավար (№) և հյուրանոցի համար և այլն կատարվում են ըստ տարածության ղեկավորության։ Փոխանցումների բուն պատճառը իհարկե հասարակական գիտակցության մեջ է, իսկ այդ հոգեբանական ղեկավորությունները սոսկ իրացման (կատարման) ներքին ճանապարհներն են. որինակ, մի գործ (հիմնարկը) սկսել և գործ ածվել մեկին վերջերս նման հեղուկի գումանը, կամ բրիգադա (կոլխողում) հանդեպ ռազմական բրիգադայի և այլն։ Նման անցումները պիտի նախապես հող ունենան, վոր այս կերպ կամ այն կերպ ղեկավորություն ստանալով նոր առում ունենան։

ԲԱՌԻՄԱՍՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Մենք տեսանք յուր տեղում, վոր բառերի մեծ մասը հոգեբանական յերկու հիմնական ղեկավորության յեղանակով կարող և ունենալ իմաստի այլևայլ տարբերացումներ (առումներ), վորոնք հետզհետե հեռանալով դրանց ընդհանուր շաղկապող գաղափարից, կարող են վերածվել նոր առանձին նույնահնչյուն բառերի և հետևաբար իրենց միասնականությունը կորցնել։ Բառիմաստության այդ բազմիմաստությունը կոչում են «պոլիսեմիա» (հունարեն

принимателя есть *сезон* (saison), т. е. период наиболее деятельной работы; этот период меняется в зависимости от рода деятельности и места. В одной из частей Пемброкшира *сезоном* называют время года, когда жеребцов развозят по области; это показывает, что дело идет о стране животноводческой, где все заинтересованы в случке скота» (*տես նրա «Язык», եջ 190*)։

քառ ե)*, իսկ յեթե բառը պահում է լոկ մի իմաստ (հատուկ անուններըը, տեխնիկական նեղ տերմիններըը և այլն), ապա այդ կոչվում է մոնոսեմիա («միանիմաստ»)։

Բազմիմաստությունը լինում է մեծ մասամբ շատավիղային կամ, ինչպես Ն. Մարն է ասում, փունջային ձևով. այսինքն՝ մի նախնական նշանակությունից դիցուք ածանցվում են յերեք տարբերակներ, վորոնք արդեն իրենց հերթին տալիս են մեկը մյուսից անկախ նորանոր յենթատարբերացումներ։ Որինակ, մի «ձեռք» բառը տալիս է մի քանի հիմնական ածանցումներ՝ կարողություն (ուժ), հոմանավորություն և այլն. բայց «կարողություն»-ը իրեն հերթին կարող է ածանցվել «հունեցվածք», «միջոց» (համմ. «մի ձեռնոց»), «հնարավորություն» (ձեռքս կարճ է) և այլն և այլն։

Սեմասիոլոգիայի հիմնական նպատակը պիտի լինի իմարկել բառիմաստի փոփոխությունները վորոշ որինաչափություններ մեջ լուսաբանել, սիստեմատիզացիայի յենթարկել բառիմաստների այդ բոլոր և բազմաձև փոխոխությունները, վորքան իմարկե այդ հնարավոր է։ Այս պիտի արվի հարկավ բառիմաստի զարգացման մեջ պատմական ասպեկտով։

Բայց մենք գիտենք, վոր մի տվյալ մոմենտում անգամ այդ պիտի փոփոխության սիստեմներ («որինաչափություններ») գոյություն ունեն, յերբ իմաստի փոխանցումը կամ փոխաբերումը կատարվում է մեր կողմից դիտավորյալ կերպով՝ վոճը («լեզուն») ավելի պատկերավոր դարձնելու նպատակով։ Այս պատկերավոր արտահայտության ձևերը կարող են, իհարկե, և տեղի չունենալ և կամ յերկուսն էլ լինել՝ պահելով իրենց դիտավորյալ բնույթը։ Ռեթորիկության կամ ավելի ճիշտ նրա «վոճագիտության» (стилистика) մեջ այդ տեսակետից տարբերում են յերկու հիմնական փոխոխաձևեր (тропа-ներ, հունարեն τρόπος, τρέπω «փոխում եմ, թևքում եմ» բայից). դրանք են՝ մետաֆորան, մետոնիմիա և սինեկդոխա։ Առաջինի մասին մենք արդեն խոսել ենք, թեպետ

---

* Նշելի յե, որինակ, ֆրանսերեն bureau «բյուրո» (=սեղան) բառի փոփոխությունները։ Սկզբից նշանակել է շոր ուղտի բրդից (bure), յետո նշանակել է սեղան, վորը ծածկվում էր այդ շորով, հետո՝ ամեն մի սեղան, վորտեղ գրասեղան, և ապա այն անդը (սենյակը), վորտեղ դրված է այդպիսի գրասեղան, վերջապես այդ գործով զբաղվող մարդկանց։ Մինչև իսկ առացվում է ավելի ընդհանուր իմաստ, այն է՝ «բյուրո»-ն, վորպես մի խումբ մարդիկ, վոր կատարում են այս կամ այն հիմնարկը՝ (համմ. бюро похоронных процессий)։

պիտի ասել, որ այդտեղ սխտեմատիզացիա չի արվում, այլ պարզ փոխաբերություններ են, որպես կրճատ համեմատություններ (բնությունը քնել է, տերևները փսփսում են և այլն և այլն, տես վերը)։ Մետոնոմիայի ժամանակ դիտավորյալ կերպով կատարվում են հետևյալ տեսակի իմաստափոխություններ—1) պարունակողը դրվում է պարունակելիի փոխարեն, ինչպես՝ յերկիրը գաղթեց (փոխանակ ժողովուրդը), յես յերեք բաժակ խմեցի, 2) հեղինակը՝ յուր յերկերի փոխարեն, ինչպես՝ նա շատ է կարդում Շեքսպիրը (փոխանակ՝ գրքերը) և այլն։ Սինեկդոխա յեն համարում—1) յեզակին հոգնակիով փոխարինելը և ընդհակառակը, ինչպես՝ յերբ առաջ յեկավ Կովկաս (փոխանակ՝ ռուսները, ռուսաց զորքը), կամ՝ Շեքսպիրներն ու Գյոթեները դարերի ծնունդ են, 2) վերացական առումը կոնկրետի փոխարեն, ինչպես где бедность по миру не ходит (Державин), ուր «бедность» փոխարինում է «бедняки»,—համմտ. ուսանողություն=ուսանողներ, որպես հավաքական առում, հին ваше благородие (փոխանակ, դուք ազնվազարմդ) և այլն, 3) մասը ամբողջի փոխարեն և ընդհակառակը, ինչպես՝ քսան գլուխ վոչխար, հարյուր դրոշի (вымпел) նավատորմիդ*.., համմտ. առաջ сколько голов (=մարդ), столько умов, և այլն։ Վորոշ սինեկդոխաներ արդեն պատմականության են պատկանում, ինչպես՝ ցեղի հոդնակին—տեղի փոխարեն, նման դրարարյան Վիրք (վրացիք, բայց և Վրաստան), Հայք (=հայեր և Հայաստան և այլն), նման հին ռուսական дорога из варяги в греки «ճանապարհ (որ տանում է) Շվեդիայից Հունաստան»։ Արդյոք այստեղ էլ պատկերավոր դարձնելու նկատառումով է յեղել այդ փոխանցումը, թե ինչ վոր մի հին մտայնության հետևանք է (թեպետ համմտ. մեր բարբառներում՝ Մկոն գնաց քրդերը, փոխանակ՝ քրդերի յայլան, դյուղը)։

Այս կարգի դիտավորյալ իմաստափոխություններ են վերաբերում և այն դեպքերը, յերբ հնչնանքով (իրոնիայով) մի դրական բառիմաստ (բառ) ենք տալիս բացասական յերևույթին. դիցուք մեկը անտեղի խոսեց քարով մյուսին և մենք հեգ-

---

* Մոնղոլերենում «խոշուն» նշանակում է զորաշար, վորպես ցեղի («անյմի») սինվոլ. բայց առընթերության զուգորդությամբ այդ «խոշուն»-ը անցել է իրեն կրող ցեղին, վորպես ռազմական մի միավորի, և քյուրքական լեզուներում այդ արդեն նշանակած պիտի լիներ զորք», ինչպես վոր զոթ և ածում հայ ժողովուրդը («զոշուն»), վորպես փոխառություն։

նանքով ասելինք. «կեցցես», «բրավո», «հոչաղ», „молодец" և այլն կամ «այ, խելոք», «համա խելք բան ասեցիր» և այլն (հմմտ. Կրիլովի առակի մեջ „откуда умная бредешь ты голова"—ասում է եղինը)։ Նման կարգի, բայց հակառակ իմաստով կարելի է կոչել, իբր «հոգիս» բառեր են գործ ածում փաղաքշականի համար, հմմտ. ռուսերենում—ну՛ и башка (մեծ ուրախ. համար, վոր խելոք գլուխ ունի), э'х ты девченка (плутишка) կամ áх разбойник և այլն, ուր, իհարկե, ինկատի պիտի առնել համապատասխան ինտոնացիան և միմիկան։

Այս բոլորը իհարկե ասելու ձևից և կախված, դիտավորյալ և կոնկրետ ու ժամանակավոր բնույթ է կրում, բայց կա նման մի փոփոխություն, վորը արտացոլում է աերող հասարակական մտայնությունը (բուրժուական) և սովորական ու ընդհանուր բնույթ է կրում. որինակ, մի շարք լեզուներում «բարի» կամ «պարզ» հասկացությունները նշանակում են նաև «հիմար»։ Ինչպես Վանդրիեսն է ասում. „Во многих языках слова, значение которых связано с добротой, мягкостью, спокойствием, служат также для обозначения глупости. Простосердечие—достоинство характера—превращается в простоватость—недостаток ума. По французски слово simple (простой) и по-немецки einfältig (то же значение) означают человека глуповатого или даже совсем глупого... Английское silly, немецкое albern, валлийское gwirion (на севере) первоначально значили: первое *спокойный, безобидный*, второе *дружеский, хороший*, третье—*искренний, невинный*; все эти три слова означают в настоящее время *дурак* или *простак* (տես նրա Язык, եջ 194–195)։

Բառիմաստի փոփոխությանն որինաչափությունները, ինչե՞ր կան այդպիսիները, դեռ լավ չեն ուսումնասիրված։ Չկա նաև պատմա-ժամանակագրական ուսումնասիրության փորձ, վոր արվեր հասարակական գիտակցության զարգացման կապակցությամբ, վորպես վերջնական արտացոլում հասարակա-տնտեսական հարաբերությունների։ Ն. Մառի հատուկենտ մտքերը արժեքավոր են լինում այն տեսակետից, վոր բառերի վերլուծությունը իմաստի տեսակետից մեզ կապում է դժբախտ լեզուների հետ և վոչ թե բառ ուսել կնշանակի իր պատմական միջավայրում, իր պատմական փոփոխությամբ կապված տվյալ լեզվի ձևաբանական սպեցիֆիկայի հետ։

Բառիմաստի փոփոխության այդ «որինաչափությունները» քննվել են առայժմ միայն տրամաբանորեն. հոգեբանական ընթացքները ևս չեղել են աղում Ա. Տոմսոնը ևս, հետևելով այդ տրամաբանական կոնցեպցիային (ինչպես և մյուս լեզվաբաննները), ասում է հետևյալը. „конечно, логическая классификация для языковедения несущественна, так как для языковедения лишь важно выяснить взаимодействие тех факторов, при которых происходят изменения значения вообще. Но удовлетворительную классификацию, основанную на различиях в психическом процессе изменения значений, пока установить нельзя, так как в действительности здесь разнообразие большое, и большинство более отдаленных языков в этом отношении еще почти неизвестны, а другие мало исследованы" (տես նրա „Общее языковедение", 1910, եջ 294)։ Չժխտելով ձևական տրամաբանության և հոգեբանության այդ մոտեցումները, վորպես վորոշ առաջադիմություն և ոգուտ բառիմաստի ուսումնասիրության խնդրում,—մի բան, վոր կիր և առվում և բառերի (խոսքի մասերի) դասակարգման մեջ,— մենք մի բան միայն կշեշտելինք, վոր այդ բոլորը մեզ տալիս և միայն բառիմաստների կապակցության յուղանակները (հոգեբանական դուգորդությունները ըստ առընթերության և նմանության) և ընդհանուր տրամաբանական կոնցեպցիաներ (ծավալի և հատկանշի փոխհարաբերության և այլն),—մի բան, վոր չի արտացոլում մարդու նյութական զարգացման հետ կապված հասարակական գիտակցության տեղաշարժերը, «որինաչափությունները»։

Բառիմաստի փոփոխման բոլոր տեսակները (ըստ տրամաբանության) հանգեցնում են յերեք հիմնական տիպերի—նեղացում (сужение), ընդլայնում (расширение) և շրջում (смещение)։ Իմաստի նեղացումը կամ սահմանափակումը լինում է այն ժամանակ, յերբ ավելի ընդհանուր նշանակությունը վեր և ածվում ավելի մասնավորի։ Իմաստի ընդլայնումը հակառակ ընթացքն է տալիս, այն է՝ մասնավոր նշանակությունից գնում է դեպի ընդհանուրը։ Իսկ յերբ իմաստի ծավալը այդ ձևերով չի փոխվում, ապա ունենք նշանակության սոսկ շրջում։ Հաճախ այս վերջին իմաստաստեղծումն է, վոր առիթ է ծառայում էլեն հերթին իմաստի ընդլայնվելուն կամ սահմանափակվելուն։

ԲԱՌԻՄԱՍՏԻ ՆԵՂԱՑՈՒՄ (ԿԱՄ «ՍՊԵՑԻԱԼԻԶԱՑԻԱ»)

Բառիմաստի առումը կարող և ավելի առանձնանալ, յերբ, ինչպես ձևական արտահայտությունն է ասում, նախկին նշանակության վրա ավելանում են նոր նկատի առնվող հատկանիշներ։ Հին ավելի ընդհանուր նշանակությունը կարող է և պահպանվել, բայց կարող է և հետագայում կորչել։ Այդպիսի իմաստափոխումը կոչում են բառիմաստի նեղացում կամ սպեցիալիզացիա։ Այս յերևույթը հաճախ է տեղի ունենում բառի իմաստափոխության մեջ։ Որինակ, ռուսերենում орудие նշանակում է «գործիք», բայց կա և ժամանակ առումը «զենքանոթ», այդպես և зелень «կանաչ», «կանաչի», բայց և «կանաչ փոշի», предложение «առաջարկություն» բայց և «նախադասություն», пить «խմել» բայց և «արբեցողությամբ պարապել», այդպես և писать «նկի ընդհանուր «գրել» և ժամանակ «շարադրել, сочинять» առումը և այլն։ Բառիմաստի այդ սպեցիալիզացիան կարող է և կապակցվել հին ընդհանուր իմաստի հետ, յերբ վերջինս արդեն գործածությունից դուրս է ընկել, ինչպես ռուսաց пиво մի ժամանակ նշանակել է ընդհանրապես «խմիչք» (пи-ть «խմել» արմատից) և հետո նաև՝ գարեջուր. բայց այժմ միայն վերջինն է գործածելի. այդպես немец «համր» դարձել է ոտարազգի՝ ռուսերենի նկատմամբ «համր» (=չդիտցող), իսկ հետագայում՝ գերմանացի, վորը միակ գործածելին է այժմ։ Հայերենում կարելի յե ժամանակներ առաջին դեպքի համար—ազատվել („освободиться"), բայց և սպեցիֆիկ առումով՝ յերեխա բերել (որինակ, արարատյան բարբառում), քամի (ветер), բայց և ուժմատիզմ (արարատյան բարբառում), տեղը (места), բայց և անկողին (տեղերս քցի), գրող (писатель), բայց և գրող=հրեշտակ կամ դև*, վորից բարբառային՝ գրող «սատանա» (որինակ, գրողը քեզ տանի), մինչնակ, «մինչինը» (մինչնակ յեղբայրը), բայց և այդիններբ (արտերի) մինչև ընկած բաց տարածությունը։ Իսկ յերբ վերցնենք այն սպեցիֆիկ առումները, վոր այժմ առանձնացել են և հին իմաստի հետ չեն կապակցվում, տալա կարելի յե ժամանակներ հետևյալ որինակները—աբջան «տավար» (գրաբարում), իսկ հիմա միայն՝ յերկաբ

---

* Համեմատել՝ գրքաց, «գիր»-ը հեթանոսական իմաստ ունի. այդպես և պիք անել» արարատյան բարբառում նշանակում է «հեթանոսական գիր անել» (Հովհաննէս գիր աբեր՝ լուսացավ)։

տարեկան ժողի (հնչում են «աչառ»), գարման «պետք, անունդ», իսկ հիմա գարման=հարդ» (саман), շարժք չշարժվելու գործողությունը, յերևույթը» (грамматика), իսկ այժմ միայն յերկրի շարժումը (ժողովուրդը հնչում և «ժամք»>«ժամչկ»), հավ «թռչուն» (грамматика), իսկ այժմ՝ հավ (курица) նման հին հունարեն ὄρνις («որնիս»), որ նշանակել և «թռչուն» (птица), իսկ հետագայում, քրիստոնեական շրջանից սկսած, նշանակել և «հավ» (курица), ինչպես տեսնում ենք ավետարանում (ըստ Ղուկասի, XIII, 34)=այժմյան ὄρνιθα բառին (=հավ). իսկ լատիներեն ovica «թռչուն» վեր և ածվել այժմյան ֆրանսերենում oie «սագ» (տես՝ Ж Вандриес, язык, եջ 189)։ Հին հունարենում πτερόϛ («պտերոս») նշանակել և «զրկված», իսկ այժմյան հունարենում կույր, այդպես և լատիներեն orbus «զրկված» այժմյան ռոմանական լեզուներում նշանակում և «կույր» (իսկ հայերենում այդ հնդեվրոպական արմատը ստացել և այլ սպեցիֆիկ առում՝ որբ, այսինքն՝ զրկված ծնողներից)։

ԲԱՌԻՄԱՍՏԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ (РАСШИРЕНИЕ)

Իմաստափոխության այս դեպքը լինում է այն ժամանակ, յերբ, ինչպես ֆորմալ տրամաբանությունն է ասում, բառը կորցնում է յուր եական հատկանիշերի մի մասը, որով և նրա ծավալը ընդարձակվում է։ Որինակ, ռուսերենում—идет «գնում է» (կենդանի եակների մասին), բայց և пароход идет, часы идут, дождь идет և այլն. կամ՝ стоит «կանգնած է» (այսինքն՝ որ գնում է, որ պատված է), բայց և՝ дерево стоит, часы стоят, цены стоят высокие և այլն (տես А. Томсон, Общее язык, եջ 295)։ Այս առումները կան և հայերենում։ Ռուսերենում մատնանշվում է նաև краска «ներկ», որ սկզբում միայն կարմրացնող նյութ եր (հմմտ. крас-ивый, արմատն է крас-ный «կարմիր»), բայց հետագայում ամեն մի ներկ կոչվում է „краска“, ինչպես և чернила սկզբում միայն «սև հեղուկ» եր (գրելու և այլն), իսկ հիմա ամեն տեսակ «թանաք» (կարելի յե մինչև իսկ ասել՝ красные чернила, синие чернила և այլն)*։ Հնում «մեհեան»

---

* Այդ красные чернила և այլն, յերբ բառի սկզբնական իմաստի աստիճանից մանանանք, իհարկե, անհարիր բաներ են, բայց այժմ չի զգացվում։ Այդպես էլ ասվում է благодаря болезни «շնորհիվ հիվանդության, հի-

նշանակել և միայն Մ-ին ստծու կատուն, իսկ հետո ընդհանրապես՝ կատուն, բացին՝ Մեր այժմյան «բառ» բառը կարող է յերբեմն բարբառներում առանալ «խոսք, զրույց» ընդարձակ առումը, ինչպես արարատյան և մշեցոց բարբառում—վարդապետին ասին՝ վորդիդ մեռնի. ասաց—յես վորդի չունեմ, համաբառդ բառ չի (առած) [տես Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 90]։

Ցերթ մոռնանք վոչ միայն տրամաբանական մտածողության օրենքներն ու տեսակետից, այլև սոսոցիատիվ մտածողության, ապա խնդրի ընդարձակում մենք ունենք և այն դեպքում, յերբ մի «սեղան» իմաստը հասարակական գիտակցության զարգացման հետ զանազանվում և գրասենյակ և վերջն էլ՝ հիմնարկ։ կամ շատ լեզուներում «տուն» սոսկական հասկացությունը, կապված հասարակական-տնտեսական զարգացման հետ, դառնում է տոհմ > ցեղ > ազգություն > հասարակություն. այդպես և ազգ, род և նման բառերը (ազգ թռչնոց, род Рюриковичей, род людской)։

Բառիմաստի ընդարձակման այս առումով պիտի մոռնալ և այն դեպքերին, յերբ հատուկ անունը կրող մի մեծ անձնավորության ժողովրդի մեջ նույնացվում է յուր պատմական մեծ դերի (ֆունկցիայի) հետ, ինչպես Kaesar (Julius Caesar) դարձել և հայոց «կայսր» դերմ. (Kaiser) «թագավոր» և ռուսաց цзарь > царь. կամ Կարլոս մեծին անունը նույնպիսի ֆունկցիայի հետևանքով դարձել և սլավոնականում краль (սերբերենում), кро́ль (լեհերենում) և король (ռուսերենում)։ Հայոց այժմյան «աստված» բառը թրակիացիների և փռյուգիացիների մոտ յեղել և հատուկ անուն, այն է՝ նրանց դլխավոր «Սաբաձիոս» աստծու անունը, բայց հայերի մոտ ստացել է ավելի ընդար-

---

վանդության պատճառով», ուր благодаря այժմ նշանակում և շնորհիվ, պատճառով, բայց սկզբում կապվում էր միայն բարենպաստ նշանակություններին հետ (благодаря помощи, благадаря выздоровлению և այլն), կազմված լինելով благо (լավ) և даря (շնորհելով) բառերից։ Նույն փոխաբերությունը կա և մեր շնորհիվ բառի մեջ (սկզբում միայն լավ, դրական առումով)։ Բերականները այդ յերևույթը կոչում էին կատաքրեզա, որ հունարեն նշանակում է «չարաշահում» (злоупотребление)։ Նույն պատմականությունն է, որ и больно уж хорошо, ужасно милый, страшно обрадовался, ужасно красивый և նման բառերի մեջ։

ձակ և հասարակ իմաստ՝ աստուած (бог)*։ Այս կապակցութեամբ պիտի հիշել և այժմեան ампер, вольт, силуэт, форд, монпасье և այլ բառերի նախկին հատուկ անուններ լինելը, կապուած այդ անձանց վորոշ գործունեութեան հետ։ Այս յերևոյթի հակառակն է այն, յերբ բառի հասարակ (ընդարձակ) առումից առաջանում է հատկական անունը, ինչպես՝ Զրվեժ, Աշտարակ, Տեղեր («Դրզեր»), Թեղուտ, Новгород, Сухой Фонтан և այլն։

ԲԱՌԻՄԱՍՏԻ ՇԱՐԺՈՒՄ (ԱՆՑՈՒՄ)

Բառիմաստի շրջում (смещение) կամ անցում (перенос) լինում է այն ժամանակ, յերբ բառի սովորական նշանակութիւնը մի կամ մի քանի ընդհանուր հատկանիշերով (ըստ նմանութեան և առընթերութեան կամ կցորդութեան) զուգորդվում է մի նոր նշանակութեան հետ, պահելով հարկավ բառի ձևական արտաքինը։ Այդ ժեկ կամ մի քանի ընդհանուր զուգորդող հատկանիշերը հաճախ լինում են և վոչ այնքան էլ եական հատկանիշեր, վորոնք սակայն իմաստափոխաբերման ժամանակ ինչ-ինչ պատճառներով ավելի ուժեղ են հարուցված՝ դրդված (возбуждены)։ Ծորմալ տրամաբանութեան տեսակետից, բառի նախկին նշանակութիւնը կորցնում է յուր եական հատկանիշերի մեծ մասը և ի տրխուր ստանում է նորերը։ Այնպես վոր բառի նշանակութեան ծավալը չի սահմանափակվում (նեղանում) կամ ընդարձակվում, ինչպես տեսանք վերևում, այլ մեում է և նուշնը։

Սովորական այդ ձևի փոխաբերութիւններից մեզ հայտնի չեն ըստ նմանութեան հետևյալները։ Առարկաների ըստ արտաքին նմանութեան—աչք (աչք), վորպես մարդու կամ կենդանու, հետո փոխաբերաբար՝ աղբյուրի աչք, ժամանու աչք, սայլի աչք (անիվը), կատար (աքաղաղի) և կատար (սարի) նման ռուսաց гребень բառի այդ յերկու նշանակութեան,—յերակ («տամար») մարդու և քարի կամ հանքի մեջ նման ռուսաց жилка նույն իմաստներին,—թեվ (թռչունի, մարդու), բայց և՝ դորքի, սավառնակի, և այլն և այլն։ Ըստ ֆունկցիայի նմանութեան—ռուսաց коньки (իբր

---

* Այս բացատրութիւնը (աստղաբանութիւնը) Ն. Մառինն և, վոր ընդունված է բոլորի կողմից Թրակիացիների և փռյուգիացիների մոտ հնչվում եր վոչ միայն հին ձևով (Մարանխոս), այլև ավելի նոր՝ Սմանիու Հայրենում հնագույն ձևը պիտի լիներ *ամած(ո)> աստած(ո), վորից «ս» հնչյունի անուամով միայն նոր «աստված» (դրվում եր աստուած)։

ձիու պես վազում են), թև ու թիկունք (=հենարան), „сестра“ (милосердия), (он его) „правая рука“ և այլն*։ Հատկանշերի մեջ ևս տեսնում ենք այդպիսի փոխաբերումներ—1) երբ մարդու անձնական հատկությունները կամ գործունեությունը «ըստ նմանության» տարածվում է նաև անշունչ առարկաների այլևայլ երևույթների վրա, ինչպես՝ արևը բարձրանում է (կիզում է) կամ մտնում է, որ ինակը ցույց է տալիս, погода обещает быть хорошей, шляпа идет к нему, ветер свищет, воет, подымает и переносит предметы և այլն. 2) երբ, ընդհակառակը, բնության տարածական հասկացությունները փոխանցվում են մարդու հոգեկան գործունեության վրա, ինչպես՝ բարձր տրամադրություն, մեծ խելք (հոգի..), մոքի բռիչք, ուշադրություն դարձնել, трогать сердце, уступить книгу, крылья любви և այլն. 3) երբ հոգեկան մի զգացմունքի անունը տրվում է մի այլ զգացմունքի, ինչպես՝ քաղցր շաքար (և այլն), բայց և քաղցր հնչյուն, пронзительный цвет, сладкий запах, (слышен запах), горячая любовь, սուր դանակ և այլն, բայց և սուր հոտառություն (լսողություն և այլն)..., Թեպետ այս փոփոխությունները ավելի յին ընդարձակվում (հմմտ. փափուկ դրություն, բերի մարդ և այլն)։

Ֆունկցիոնալ անմանրիկայի տեսակետից, պատմական տվյալներով, կարելի յե մատնանշել հետևյալ որինակները—«Հռոմ» անունը, որ սկզբում հին Հռոմի (հռոմեական պետության) հզորության և պետականության արտահայտությունն եր, հետագայում տրվում և նաև Բյուզանդիային (հայոց «Հռոմ», «Հռոմն», «հռոմեներ» և այլն), իսկ երբ այդ վերջինիս պետական-քաղաքական ֆունկցիան վերցնում են ոսմանցիք, ապա քրդերի հորջորջմամբ և այժմյան Տաճկաստանն էլ է կոչվում «Ռում»**։ Կարելի յե ժամանակով Ն. Մառի κοη (ցοη) բեռնակիր անասունը, որ սկզբում որոշ անտեսության մեջ նշանակել և «շուն», յետո՝ յեղբերու, վերջապես՝ ձի, նայած թե որտեղ և երբ այդ կենդանիները շարունակել են նույն անտեսական ֆունկցիա-

---

* Տես А. Томсон, Общ. языков., եջ 296։

** Համեմատել սրա հետ այն երևույթը, երբ հին Ռուսաստանի այլևայլ այլազգիներին (հայերին, վրացիներին և այլն) արտահայտում համարյա «ռուս» եյին հորջորջում։

նները*։ Վորոշ լեզուներում «փետուր» անունը, վորով գրում էին (հատկապես սապի փետուրով), անցել և ըստ ֆունկցիայի այժմյան մետաղե գրչածայրերին, ինչպես են ռուսաց перо, գերմ. Feder բառերը։ Հոգեբանական զուգորդության ձևը այս բոլոր դեպքերում վոչ այնքան ըստ նմանության է, վորքան ըստ պատճառական կցորդության, իսկ բուն պատճառը փոփոխության իմարկե պատմա-հասարակականն է։

Բառիմաստի շրջումը (смещение) առանց ծավալի փոփոխության լինում է և այն դեպքում, յերբ այդ նշանակությունը տարածական, ժամանակական և պատճառական կապակցության մեջ է մտնում մի այլ յերևույթի հետ («ըստ կցորդության զուգորդության»)։ Այդպես է լինում, որինակ, այն դեպքերում, յերբ մասի անունը ամբողջին է անցնում, և ընդհակառակը, ինչպես՝ «գլուխ»-ը ամբողջ մարմնի փոխարեն (հարյուր գլուխ վոչխար, գլուխս կորցրել եմ=ինձ կորցրել եմ...), «համար»-ը սենյակի փոխարեն (ապրում է հյուրանոցի այսինչ համարում) և այլն։ Կամ պարունակողի անունը անցնում է պարունակվելիին, ինչպես քաղաք (տեղը, ժողովուրդը), суд (տեղը, բայց և մարդիկ, համմտ. суд идет), վոր սկզբում նշանակել է «դատ», «դատելը», նման դրաբարյան «ատյան» բառի այդ յերեք առումներին։ Կամ հատկանշի անունը անցնում է այդ հատկանիշը պարունակող առարկային, ինչպես՝ ամբուրյուն (ամուր լինելու հատկություն, բայց և բերդ, վորն այդ կրում է), հարբուրյուն (հարբ լինելը և հարբեցողը), քթու (քթու ջուր, քթու դնել, ադաքթու)**, հումք, сласти, новости և այլն և այլն։ Կամ նման այն դեպքը՝ յերբ գործողության անունը անցնում է իրեն հետ կապակցվող յերևույթին (կամ առարկային), ինչպես՝ պսակվել (венчаться), сесть на престол (գահ բարձրանալ), украшение (=զարդարելը և զարդը), владение (տիրելը և կալվածքը), печенье

---

* Ցերը մի ժամանակ մեր ասնը քեզի փոխարեն յերեկոները և առավոտները սուրճ եյինք դուրս ածում, շարունակում եյինք այդ սուրճը անվանել «քեզ», քեզնո լավ պիտակցում եյինք, վոր դա քեզ չեն բայց յերբ այդ սուրճը ճաշին եյինք խմում, յուր անունն էլ տալիս եյինք, վորովհետև նա իրեն փունկցիան այդ դեպքում պահում էր։

** Համապատասխան և նշանակությամբ ռուսաց кислый, маринад և кислота (որինակ серная кислота) բառերին, քեզնո ռուսերենում кислота նշանակում է նաև քթություն։

(թխելը և թխվածքը)*՝ կամ ընդհակառակը, գործողի անունը անցնում և հետևանքին, ինչպես՝ լեզու (որդանը և լեզու-խոսքը), ձեռք (որդանը և ձեռք դնելը՝ почерк), գուշկին (գրողը և գիրքը, читать Пушкина) և այլն։

Բառիմաստի այս շրջափոխությունները ըստ կյորդուբյան («առանց ծավալի փոխոխության») կարող են և չդիտակցվել այժմ, պատկանելով անցյալին, ինչպես մի «դեղ» նշանակած լիներ «բույս» (=злак, ինչպես՝ խաշնդեղ, դադդեղ, ճակնդեղ բառերի մեջ) և մանավորապես վորոշ հատկությունները բույս (որինակ, բուժիչ հատկություններով)՝ հետո անցնում, և ըստ կյորդուբյան զուգորդության, յուր հատկության, դառնալով՝ բուժիչ նյութ (лекарство)—համեմատել ռուսաց՝ трава, отравить։ Հին հայոց նահատակ բառը նշանակել և «առաջին շարքերում խիղախ կռվող, հերոս», վորպես կենդանի մարդ, իսկ հետո դարձել և՝ դաղափարի համար զոհված։ Կամ ահագին նշանակել և «ահեղ», իսկ հիմա՝ մեծ, հսկա. և այսպես անվերջ։

Հետաքրքիր և մանավորապես այն դեպքը, յերբ ցեղանունը անցնում է այդ ցեղի հատկության՝ ըստ այլ ցեղերի սուբյեկտիվի ըմբռնողության, ինչպես «կարաչի» ցեղանունը հիմա մեր գյուղերում նշանակում է «կռվարար», վորպես այդ ցեղի հատկությունը (կամ ցիգան «գողող, գ[illegible]ող») և այլն**։ Հայոց և վրաց մշակ (muša) բառը ըստ Ադոնցի և Մառի յեղել և մի ժամանակ mušk («մոսխ», «մեսխ») ցեղանունը, իսկ հետագայում վորպես նվաճված և սորկացած ցեղ նշանակել և «մշակ»։ Վրաց մոտ gmiri այժմ միայն նշանակում և «հերոս», սակայն դա առաջ յեղել և մեր կարծիքով kimmer, gamir հայտնի ցեղանունը, վոր VII-րդ դարում (նախ քան մեր երան) հսկայական դեր խաղաց Փոքր Ասիայի քաղաքական և եթնիկական խմորումների մեջ։ Այդպես են անշուշտ և հայոց «խոռ» (=ժլատ), վորպես Ճնացորդ հայտնի xurri ցեղի (համմ. Խորենացու Խոր, Խորխորունի), կամ Թերևս՝ խեթ (համմ. խեթ հայացք), վորպես Ճնացորդ փոքրասիական «խեթ» ցեղի, և սկայ (հետո միայն՝ հսկայ), վորպես սակ (սկյութացիք) ցեղանունը (saka> ska> hska)։ Ռուսերենում կարելի յե ժամանակել чудак, чужак (чу-

---

* Համեմատել—печенье пирогов, буду кило печенья.

** Հայոց պարթև (հասակ) առացվել և պարթև ցեղանունից, ինչպես վրաց kerketi «վեցկլոակով стройный» առաջ յեղել և «չերկես» ցեղանունը։

жой) բառերը, որոնք կապակցվում են ֆիննական чудь ցեղանվան հետ։

Հատկապես պետք մատնանշել բառիմաստի փոփոխությունը («ըստ կցորդության») անտեսական հարաբերությունների ապարիզում, յերբ, որինակ, անտեսության հիմնական միջոցը դառնում և նոր հարաբերությունների արտահայտչական ձև կամ միջոց, ինչպես մեր տավար (կով, յեզ), լատիներեն taurus «յեզ», թյուրքերեն duar նույն բառը ստացել և ռուսերենում «ապրանք» իմաստը։ Հոմերը աղջիկներին հոր նկատմամբ կոչում եր «յեզաբերներ» (alphesiboiai „приносящие быков"), որովհետև փեսացուները յեզներ եյին նվիրում աղջկա հորը։ Իրլանդերենում cumal նշանակում և «ստրկուհի» (որինակ, մի cumal-ը արժե 3 կով), բայց այդ նույն բառը ստանում և նաև «դրամ, монета» նշանակությունը*։ Գերմանական vieh (անասուն—скот) բառի հին այդ առումի դիմաց անգլիացիք գործ են ածում նույն բառը fee ձևով, որ նշանակում և մի տեսակ դրամավճար (вид денежного вознаграждения)։ Հին հունարենում klēnos նշանակել է.. «դույլ, մի գլուխ անասուն, գրաստ», նայած ժամանակին և տեղին։ Իսկ սլավոնական скот բառը, որ համարում են գերմաներենից վերցրած, հավազոր և ծագմամբ գերմանական այժմյան schatz «գանձ» բառին, որի հին ձևն և գոթական skattz «դրամ, монета». համեմատել այդ տեսակետից լատիներեն pecunia «դրամ» ածանցավոր բառը, որ ստացվել և pekus („скот") պարզ բառից, նման ռուսաց куна բառին (կուղի մորթի եր և մի տեսակ դրամական միավոր), կազմած куница «կուզ» կենդանու անունից**։ «Բանկ» բառը, որ սկզբում նշանակում եր միայն նստարան (գերմաներենում), հետագայում ստանում և և «բանկ» հիմնարկի անունը, նման հին սեղանավորներին («աշրաֆներին»), որոնք սեղանի շուրջը նստած փող եյին մանրացնում և այլն, ստանալով դրա համար վորոշ հատուցում. այստեղ գործել և ֆունկցիոնալ սեմանտիկան, բայց կցորդական զուգորդությամբ։ Տնտեսագիտական տերմինների նման հետաքրքիր իմաստաշրջումներ կարելի յե իհարկե շատ գտնել։

---

* Տես Ж. Вандриес. Язык, եջ 197—198, և ծանոթությունը (եջ 198)— „Лошадь продается за один cumal серебра в документах, относящихся к Св. Патрику".

** Նույն գրքում եջ 198 և 369։

Այս բոլոր իմաստաշրջումները, վորպես որինաչափություններ, լինելով կյորդական ասոցիացիայով՝ արտացոլում են դարաշրջանի այլևայլ հասարակա-անտեսական և կուլտուր-պետական հարաբերությունները ու մտայնությունը, ինչպես եթնիկական-ցեղատիրական, վորսորդական անտեսության (куна «կզի մորթ» և «փող»), սերկատիրական (cumal «աղախին» և «փող», համմտ. работа «աշխատանք» կազմված раб «սերուկ» բառից), կապիտալիստական-դրամատիրական (банк) և այլն և այլն։ Վորոշ մտայնություն մեզ համար այժմ կարող է թվալ անհասկանալի, յերբ դա պատկանում է հեռու անցյալին և մանավանդ պարուրված է կրոնական իդեոլոգիայով։ Այդ դեռ պարզ է, որինակ, յերբ «արև» հասկացողությունը հին լեզուներում, լինելով և դրա (արևի) աստվածը, տալիս եր արև-որ (солнце-день), ինչպես հին ակկադերենում, խալդերենում և այլն (համմտ. և թյուրքերեն «դյուն» յերկու այդ հին առումներով), բայց և արև—կյանք», «արև—արդարություն—արդար—դատաստան—դատապարտություն» և դուրս այդ ձևով «արև—միտք» (համմտ. գերմ. Sonne «արև» և Sinne «միտք» ըստ Մառի)։ Իսկ մի շարք հետամնաց ցեղերի մոտ (Ավբրիկայում, Ամերիկայում), շնորհիվ հնադույն նման մտայնության, յեղջերուի և յուր փետուրի անունը նշանակում եր նաև «հաց», վորովհետև այդ յեղջերուի հալող վորսը զուգադիպում եր ցանքսին,—մի իմաստահապակցություն, վորը հորջորջվում եր Լևի-Բրյուլի կողմից վորպես «նախամտածողական», մեզ համար այժմ նման փոխաբերություններն իհարկե անհասկանալի են (փետուր-յեղջերու ‖ վորս ‖ ցանք ‖ հաց...)։ Մառը նման կապակցությամբ գտնում եր, վոր վորոշ լեզուներում «ձեռք» բառիմաստը տվել է նաև «վին» և «ջուր» իմաստաշրջումները, կամ «արև—աղ» (солнце—соль), կամ յերկինք—թռչուն—տաճար—քիմք—շրջան» և այլն և այլն։ Ամեն դեպքում էլ պետք է պատմականորեն ստուգված մտաերիալ ունենալ, քանի վոր կարելի յե վերաբերվել և լոկ մտահայեցողաբար որինակ, հասկանալի յե «կրակի գին է», «արևս խնդում է քեզ համար» և այլն, բայց նույնչափ հեշտ են բացատրվում արդյոք, «արևը մայր մտավ», «գնա քո արևի ձենն ածի» և նմանները։ Ձերբ արևկյան սլավոնը իրեն Яръ, Ярило (=մեր «Աբա» և վրաց aralo) աստծու հետ կապում եր գարնան ծնունդը, կանաչը և ամառկանությունը, ապա հեշտությամբ այստեղից նա կազմում եր яркий, ярый, яровой, (վորից այժմյան яровиза-

ция) և այլն, կամ հայերն ու պարսիկները Մհեր արևի աստծու անունից՝ ամենի («կատաղի»)*,—այս բոլորը հեշտությամբ բացատրվում է, երբ հայտնի չե այդ հին իդեոլոգիան։ Մյուս դեպքերում կենա չոր ու ցամաք յենթադրություն։

Ի վերջո ավելորդ չեր լինի հիշատակել, թե ինչքան մեծ նշանակություն ունեն լեզուներում, մորթոս բառակազմության և բառխաստի փոփոխության նյութ, այն բառական կապակցությունները (աստւյթները, речения), որոնք կազմվում են մարդուս կյանքի տեսակետից «գլուխ», «աչք», «վոտ(ք)», «ձեռ(ք)», և «սիրտ» կարևորագույն բառերից և մի այլ հարուստիր վորևե բառից։ Այդ կողմից շատ հարուստ և մանավանդ հայերենը, մանավանդ նրա բարբառները, ուր այդպիսի հարուստիրներից յուրաքանչյուր դեպքում ստեղծվում է մի քանի տասնյակ և ավելի «բառույթներ» (աստւյթներ՝ речения, идиомы)։ Որինակ վերցնենք «գլուխ» բառի աստւյթները—գլուխ բերել (завершить), գլուխ հանել մի բանից (постигать, уразуметь), գլուխ գալ (удаваться), գլուխ դնել (вникать, следовать), գլուխ թափել մեկից (отстраняться, отвиливать), գլուխ պահել (обойтись, уживаться, саботажничать), գլուխ չունեմ քեզ հետ (мне не до тебя), գլուխ տալ (кланяться), գլուխ տանել (надоедать), գլուխն ուտել (покончить с кем-либо), գլուխ յեղել (надуть), գլուխը թլսորել (надуть-обмануть), գլուխը կախել (поникнуть головой), գլուխը կորցնել (растеряться), գլուխը հաստ (дубина), գլուխը կապել (навязать), գլուխը տակը (տակովը) տալ (согласиться на что-либо), գլուխդ քարը (поделом тебе), գլխի ընկնել (догадаться), գլխի քցել և այլն և այլն։

ԲԱՌԱՓՈԽԱՆՈՐԴՈՒՄ (СМЕНА СЛОВА)

Մենք գիտենք արդեն, վոր բառաձևը կարող և վեր ածվել վերջին հաշվով ժամնիկի, փոխելով սրա հետ և յուր նախկին իմաստը։ Ցեվ կամ բառը կարող է անհայտանալ, յեթե նրա իմաստն և անընդունելի ավյալ ժամանակի համար (հմմտ. вече, пристав, наместник, царь...)։ վերջապես, բառաձևը կարող և ծնալ, գործածվելով այլ դաղափարի համար։

---

* Համեմատել հունական «Պան» աստծու անվան հետ կապված «պանիկա» (=խրտնություն) իմաստի ածանցումը։

Բացի յեղած բառաձևի այս եվոլյուցիայից, մենք կարող ենք և նոր բառեր ստեղծել յեղած հին էլեմենտներից (արմատներից, մասնիկներից), կամ վերցնել մի այլ բարբառից կամ լեզվից (տեղական բարբառներից, հին գրավոր լեզվից և ուսաբ լեզուներից), կարող ենք և մի բառ փոխառնել այլուսով։

Բառերի զարգացման և գոյացման այս նորմալ ընթացքը կախված է իհարկե մեր հասարակական կյանքից և մտքի զարգացումից, անդրադարձնում է յուր մեջ ժամանակի սոցիալ-անտեսական և ընդհանրապես պատմա-կուլտուրական բոլոր նրբանցումները (перипетии) և մտախոհությունը։ Բառի այդ նորմալ կյանքը յուր հասարակական կեցուցիայի մեջ է, վորով նա ստեղծվում է, փոխվում և անհայտանում։

Այս վերջին հատվածում մենք կվերլուծենք բառի փոխանորդումը (смена), այսինքն՝ վոչ թե յեղած բառաձևի փոփոխության և անհայտացման ընթացքը, այլ այսպես ասած բառարանի նորոգումը (обновление словаря), կարճ ասած՝ այն յերևույթները, վորոնք կապված են բառի փոխառության, փոխարինման, ընտրության, նորագոյացման և այլնի հետ։

Բառի ներքին և սպեցիֆիկ ձևափոխումը լինում է նախ այն ժամանակ, յերբ բառաձևը իրեն հակադրության համար և ձևական ներքին դիսսիմիլացիայով տալիս է նոր տարբերակ, և հին ձևի կողքին գոյանում է մի նորը կամ յերկուսը (дуплет, триплет...)։ Կարծես թե լեզուն իրեն իմմանենտ կարիքն է զգում այդպիսի տարբերացման, վորով և ընդառաջում է նոր բառ ստեղծելու պահանջին։ Ճիշտ է, այս յերևույթը այժմ քիչ է պատահում լեզուներում, և մենք գիտակցորեն դիմում ենք բառաստեղծման այլ ձևաբանական միջոցներին։ Բառի ձևաբանական այս տարբերացումը լինում է տարբերախոսին և կարող է ոգտագործվել նոր բառեր (և ձևեր) ստեղծելու համար, բայց կարող է և չոգտագործվել, և Ճիշտ նախնական «ժայռ» բառաձևը։ Այս յերևույթի հիմքում, ինչպես գիտենք, ընկած է հնչյունաբանական պատահական փոփոխությունը (համմ. տատանել || ծածանել || սասանել, թորել || ծորել || սորել, ծայռ || սայռ, շոգի ||| հոգի || ոգի (> վոգի) կամ շոգի || շոգ—հոգի || հոգ և այլն և այլն։

Նոր բառաձևի առաջացման պատճառ են համարում և այն դեպքը, յերբ հնչյունաբանորեն բառաձևը «համշվում է», այն է՝ քանակով պակասում է և հասնում է մեկ կամ յերկու հնչյունի։ Այդպես և յեղել հին լատիներեն շատ բառաբաժանների հետ

ֆրանսերենում։ Հատուկ տեղանունները, որոնք բավական պահպանողական են, այդպիսի կրճատվելու դեպքում պահվում են հատարակ (բացատրական) անունների հարակցությամբ, ինչպես, որինակ, Ain գետանունը կամ Eu քաղաքանունը գործ են ածվում la rivière d'Ain և la ville d'Eu ձևով և կամ հնչյունորեն յերկարացվում են (որինակ՝ մի Bourg բառը հնչում են վերջին բաղաձայնով հանդերձ, տես Вандриес, Язык, 201).

Բառի փոխարինմանը նպաստել է մի ժամանակ և այդ բառի այսպես ասած «ֆետիշացումը» (մեր հորջորջումն է), յերբ բառի արտաքինը վորոշ իդեոլոգիական նկատառումներով կամ դրդապատճառներով ստանում եր մի առանձին նշանակություն ու ազդեցություն, պարուրվում եր խորհրդավորությամբ և մինչև իսկ մառավախությամբ։ Բառի այդ հնչյունական արտաքինը վանում կամ կլանում եր ներքին բովանդակականը, ստանալով ավելի մեծ նշանակություն։ Նկատվում եր այդ բանը կրոնական իդեոլոգիայի բնագավառում, ինչպես և վորսորդական կենցաղային և այլն, տարածվելով նաև գրավոր խոսքի կամ բառի վրա։ Բառը, ինչպես ասում են, ստանում եր մոգական ֆունկցիա և հեշտությամբ արգելքի տակ եր առնվում և փոխարինվում մի այլ բառաձևով։ Այդպիսի արգելված բառերը կոչվում են «տաբու» (табу), և հետամնաց ժողովուրդների մեջ դեռ այժմ էլ տեղի ունի թե այդ մոտյանությունը և թե այդ «տաբու»-ն* և փոխարինումը։

Որինակ, վորսորդը չպիտի մոքում անգամ տար յուր վորսի անունը, վորը կարող եր յերևի լսել և փախչել. թող յերեխ հարկ լիներ հաղորդել, ապա այլ ձևով (նկարագրորեն) եր այդ արտասանում։ Մինչև վերջերս դեռ Ռուսաստանի հյուսիսում արջ (медведь) բառի փոխարեն գործ էին ածում նրա անվորոշ փոխարինումը „зверь“ կամ „хозяин“ (անտառի տերը), իսկ ինքը „медведь“ հորջորջումն էլ մի ժամանակ (նախապատմական) յեղել և меду-ед (մեղր ուտող) նկարագրական արտահայտու-

---

* Տաբու՝ այսինքն՝ արգելումը, լինում եր և իրերի նկատմամբ։ Դեռ մեզ մոտ էլ դրա հետքերը մնում էին, ինչպես, որինակ, յերբ քրդերը ամառնոցներ չվելիս ճանապարհին թողնում էին ծածկված վորոշ իրեր, վորոնք «տաբու» էին տարբերների համար։ Քրիստոնյաների պատ պահելը, այսինքն՝ վորոշ ժամանակ վորոշ կերակուրներ չուտելը, կամ ճաշի ժամանակ այդ նույն արգելումը մինչև ճաշը որհնելը և նման յերևույթները անշուշտ արձագանքն են այդ հնագույն տաբուի։

թյունը մի ինչ վոր հին անհայտ բառի փոխաբերն։ Նման բառարդելումներ յեղել են իհարկե այլ վտանգավոր կենդանիների անուններին հանդես, ինչպես և հիվանդությունների, ժահվան, հրեշների, դեվերի, ճիվաղների ու այլ առարկաների ու յերևույթների ու անունների նկատմամբ*։

Զախ կողմը շատ ժողովուրդների մոտ ունեցել և նախնականում այդ մոգական նշանակությունը, վորպես չար ուժերի (դեվերի) կողմ, վորի հետևանքով և արգելվում եր արտասանել այդ «ձախ» բառը և միայն նկարագրորեն կամ փոխաբերաբար եր արտահայտվում այդ ինքնատիպ հասկացությունը։ Սրա հետևանքով էլ յեվրոպական լեզուների մեծամասնությունը պահպանել է միայն մի արմատ «աջ»-ի համար, բայց «ձախ» հասկացության համար գործ է ածում տարբեր բառեր, վորոնք կարող են ընդհանուր լինել միայն մի յերկու լեզուներում, թեպետ լեզուն աշխատում է այդ բառերն էլ փոխաբերել։ Համեմատել մեզ մոտ «ձախ ու ծուռը խոսել», «ձախորդ» «ձախորդություն», «ձախվել»=ձախող(վ)ել, գործն ձախ է գնում և այլն և այլն, մյուս կողմից՝ աջլիկ, հաջողություն, հաջողում (բարի հաջողում), правда, правильный և այլն (правый «աջ» բառից), վրաց gamarǯoba «հաջողում, հաղթություն», (marǯvene «աջ ձեռք» բառից) և այլն։ Թրքարում «ձախ»-ի համար կար յերկու բառ—ահիակ և ձախ, բայց «աջ»-ի համար միայն այդ մեկ բառն եր։

Բառաձևի հետ կապված այդ նախնական ֆետիշացումը, այդ կրոնա-իդեոլոգիական («մոգական») հին նախապաշարումը վոչ միայն մտավախություն և առաջ բերում նրա հնչյունական կողմի աղճատության տեսակետից, վորով և փոխաբերվում կամ խեղաթյուրվում ելին այդ բառերը, այլև աղդում եր բառիմաստի վրա։ Բառաձևը դարձնում ելին գուշակություն, կախարդանքի և անեծքի մի սիմվոլ, նայած իհարկե բառաձևին, արտասանելու յեղանակին և նպատակին։ Բառը այդ կողմից, ինչպես լատինական մի ֆորմուլա է ասում, և և գուշակություն (nomen—omen «բառանունը գուշակություն է»)։ Հենց ինքը խոսելու—ասելու բայը, նայած առոգանելու (ոգման) ձևին

---

* Տես Ж. Вандриес, Язык, էջ 366, Շորի ծանոթություն։ Իրլանդերենում արջի համար կար 12-ից վոչ պակաս բառ, նույնպես և лосось ձկան համար։ Սրանք անուղղա տաբուի հետևանքով են շատացել (մեկը մյուսով փոխարինվելով)։ Տես նույն գիրքը, էջ 207։

և նպատակին, ստանում է կախարդական ֆունկցիա, ինչպես լատիներեն oratio «խոսք» բառը Շոտլանդիայի գաելական լեզուում ortha ձևով նշանակում է «վիճակ» (жребий), իսկ վոտկի մասին ասվում է, որ «նա խոսք ունի» (tha facal aice)*։ Խեթերենում ḫuk—բայարմատը այժմ թարգմանում են «կախարդել, թովել», որը սկզբում սակայն պիտի նշանակած լիներ «ասել-խոսել» (> յերդել), ինչպես ցույց և տալիս նույն արմատը հայերենում—խոկամ «ասում եմ, խորհում եմ, կարդում եմ» (խեթերենում ḫuk անշուշտ արտասանվել է xok). այդպիսի փոխանցում ունի խեթերեն uttaniya—„колдовать, заклинать“ (=կախարդել, թովել) կազմված լինելով պարզ uttar «բառ», «խոսք» (слово) բառից**։ Համեմատել ռուսաց говорить և заговорить (թովել, թլսորել), մեր թոթովել «ասել (խոսել) թլվատ պես» (կազմած պարզ թով-արմատից), որը սկզբում պիտի նշանակեր «ասել, խոսել», սակայն հետո ստացել է «թովել» (կախարդել, обворожить) իմաստը։ Այդպես և ֆրանսերեն ու անգլերեն incantation «թովչանք, կախարդանք» (чары, колдовство), որը կազմվել է լատիներեն canto «յերգում եմ» բայից։

Ազդու եր իհարկե և յերգն ու չափածո խոսքը։ Այդ թովչանքի հետևանքով եր անշուշտ, յերբ Վիրգիլիոսը ասում եր „carmina vel coelo possunt deducere lunam“ (стихами можно свести с неба луну“)։ Բառը յուր գրավոր ձևով ավելի յեր դառնում մոգական ֆունկցիա ստացող մի առարկա, որով և շահագործում էին խեղճ ժողովրդին (հմմտ. մեր «գիր անել», «գրբաց», «գրող»=սատանա)***։

Բառափոխարինումը տեղի յե ունենում և այսպես կոչված եվֆեմիզմի (евфемизм) հետևանքով, յերբ վորոշ բառեր իրենց դեհեղիկ և կոպիտ լինելու պատճառով փոխարինվում են ավելի «նուրբ» բառերով, վորոնք ավելի հեռավոր պատկերացում են տալիս առարկայի կամ յերևույթի մասին։ Այս եվֆեմիզմի առաջ

---

* Տես Ж. Вандриес, Язык, էջ 176։

** Տես իմ Chetto-armeniaca, էջ 88, 111, 119։

*** Վանդրիեսը ասում է „Поэтому язык знаков обладает для дикаря всеми магическими свойствами устного языка, свойствами запрещенных слов (табу) и евфемизмов. Так же опасно нарисовать тигра или бегемота, как и назвать их, так как рисунок, как и слово, составляет часть таинственной сущности всякого существа“ (էջ 286)։ Նույնն է ասում և ղևոնական Դանցելը (ibid.)։

դալը կապված է ավելի նոր և կուլտուրական դաբաշրջաններէ հետ, քնպես հիմքում ունի նույն բառարգելումը, ինչ վոր կար և առաջ դեպքում։ Տաբուներությունն այն է, վոր եվֆեմիզմը, վորպես քաղաքավարություն և բարձր կուլտուրականություն, դրծ ունի անվայել և վուլգար բառերի արգելքի և փոխարինման հետ, իսկ առաջուն յուր գոյությամբ պարտական է բառերի միստիկական բնույթին կամ դրանց հետ կապված կրոնա-ժողովական նախապաշարումներին։

Ինչպես ժ. Վանդրիեսն է ասում. „Влияние социальной среды выступает очень четко в изменениях словаря из соображений приличия. В обществе не принято говорить о физиологических актах, считающихся неприличными или грубыми. Слова, их означающие, изгоняются из словаря воспитанных людей. Для передачи этих актов в языке есть разнообразные специальные выражения, сохраняющиеся в языке до того момента, пока они в свою очередь становятся грубыми и непристойными“ (տես նրա „Язык“, եջ 105)։

Որինակներ։ Ֆրանսերենում pisser «միզել» համարվում է կոպիտ և չի գործ ածվում կրթված մարդկանց կողմից, փոխարինելով ավելի հարմար uriner բայով։ Մեզ մոտ «միզել» ավելի քաղաքավարի չե, քան դավառական «ջրվեժ անել» կամ «ցեխել»։ Բայց հետաքրքիր է այն, վոր ֆրանսերեն pissoir «միզելու տեղ» փոխառվելով գերմանացիների կողմից չունի ֆրանսիական կոպիտ բնբռնումը և գերմանացոց համար դառնում է եվֆեմիզմ։ «Փսխել» կոպիտ բայը նույնպես փոխարինվում է այլ մեզով բառերով, ինչպես մեզ մոտ «սբերը չկտ բերել», „«սբերը չկտ տալ» նկարագրական ձևով. ռուսերենում рвет փոխվում է стошнило, գերմաներենում sich erbrechen փոխարինվում է sich übergeben բայով, ֆրանսերենում՝ vomir (*փսխել*) կոպիտ առումով գործ է ածվում բժշկության մեջ, իսկ սովորաբար փոխարինվում է rejeter (*բառացի՝ դուրս տալ*), rendre (*վերադարձնել*), s'expliquer (*բառացի՝ բացատրվել*) և այլն։ Ռուսերենում «հղի» բառը ևս կրել է այդպիսի փոփոխություններ—սկզբում брюхатая (*գործ եր ածում Պուշկինը*), հետո՝ „в положении“, „в ожидании“, „беременная“ (*կոպիտ է*), համեմատել մեր բարբառային՝ ժամփոխ, պատճառավոր, յերկու հոգիս և այլն (*հին հղի նշանակել և սկզբում «լիքը»*)։ «Մեռնել» հասկացությունը սովորաբար շատ

լեզուներում հավելվիզմական ասույթներով և տրվում, ինչպես ֆրանսերենում՝ mourir (մեռնել) փոխարինվում է périr (կորուսվել), passer (անցնել), trépasser (նույնը), décéder (հեռանալ), s'endormir (почить, հանգստանալ), rendre son âme (տալ հոգին), partir կամ s'en aller (հեռանալ-գնալ). գերմաներենում sterben սովորականի փոխարեն ասում են vergehen (բառացի՝ գնալ), erblassen, verbleichen (բառացի՝ դունաթափվել), dahingehen («գնալ այնտեղ»), dahinscheiden (հրաժեշտ տալ)*։

Բառարգելումը, որ լինում է քաղաքավարության դրդումից կամ բառի սխեթիկական բնույթից, ստիպում է վոչ միայն փոխարինել այդ բառը մի ուրիշով (կամ ուրիշներով), այլև այդ անքաղաքավարի կամ տարու բառը հնչյունորեն փոփոխել, որով ժեղմացվում և նախկին իմաստը (համմ ֆրանս. bigre ‖ fichtre „чорт возьми"). այդ լինում է մանավանդ, յերբ նըշվում են և մարդու պակասությունները (կուրություն, հիմարությունը...)։

Բառանորոգումը կախված է նաև բառի ֆունկցիայի փոփոխումից և մեր տարբեր վերաբերմունքից, կախված դրադրությունքից, դասակարգերի կամ դասերի փոխհարաբերությունից և այլն։ Կարծես թե այդ դեպքում բառանորոգումը կամ նոր բառ ստեղծելը վեր և ածվում բառընտրության (отбор слов), ի նկատի ունենալով հենց այդ հասարակական տարբերացումները։ Որինակ, «նվեր» ընդհանուր հասկացության համար առաջացել են հին հայերենում «նուէր», «պատարագ», «ձիր», «պարգև», «ընծայ», «ձօն» բառերը այլևայլ հասարակա-տնտեսական և կուլտուրական ու քաղաքական պայմաններում**։ Դրանք հետագայում ընտրվում են (ջոկվում) նոր լեզվաշինարարության համար, ստանալով սպեցիֆիկ այլևայլ նշանակություններ, և կամ կորչում են, չեն գործածվում (ինչպես «ձիր» բառը, թեպետ համեմատիր ածանցական «ձիրի» բառը, ինչպես ռուսաց дар-ից ունենք да-

---

* Որինակները վերցրել եմ Վանդրիեսի դրքից (եջ 205—206, 371). «Մեռնել» բայի այդ փոխարինումները մեղմացնում են անշուշտ մահվան պատկերացումները, կամ ինչպես Վանդրիեսն է ասում՝ придают образу смерти менее тягостный облик (եջ 206).

** Ցերբ նախարարը նվիրում է իրենից հասարակական մի փոքր ցած դիրք ունեցողին, ապա այդ մի բառով է արտահայտվում, իսկ հակառակ դեպքում՝ այլ բառով։ Կամ պարսից կուլտուրական և քաղաքական պղտկության հետևանքով մեր լեզուն են մտնում «նուէր» և «պատարագ» բառերը։

ром «ձրի»։ Սերը «ձի» բառը միայն ընդհանուր նշանակություն ուներ, որպես կենդանու անուն, և կամ միայն գրաստի (բեռնակիր անասուն) իմաստով էր կատարում, ապա կարիք չեր զգացվում նոր բառերի այդ կենդանու համար։ Բայց յերբ հասարակական և կուլտուրական նոր պահանջների համեմատ կարիք և զգացվում, որինակ, հեծնելու ձիու, ռազմական (կռվի) ձիու և փոխադրական (փոստի) ձիու, ապա ստեղծվում կամ վերցվում են այլ լեզուներից նոր բառեր այդպիսի «ձիերի» համար. համեմատել մեր «ձի» և մյուս կողմից «յերիվար» ու «ծժուկ», կամ ռուսերենում лошадь և конь, լիտովցիների arklys և žirgas, գերմանական Pferd և Horse և այլն։ Բազմազանության նման պատճառներ ենք տեսնում և «վարձատրության» հասկացության համար, ինչպես ռուսաց оклад, жалованье, заработок, кормовые, гонорар, оплата, содержание և այլն, կամ ֆրանսերենում—gages (*անային ծառայողին տրվող*), traitement (*բարձր չինովնիկին տրվող*), solde (*սպայի համար*), prête (*զինվորի համար*), appointements (*ծառայողի համար*), honoraire (*բժշկի կամ ադվոկատի*), salaire (*բանվորի*), paye (*սեպագրի բանվորի*), indemnité (*պարլամենտի անդամին*), mensualités (*ժուրնալիստի համար*), feux (*դերասանի համար*) և այլն և այլն*։ Բազմազան արտահայտություններ ենք տեսնում, որինակ, խաբել դաղափարի համար, ինչպես ռուսաց обмануть, надуть, облапошить, провести за нос,, околпачить, оставить в дураках, охмурить, և այլն, ինչպես վոր այդ նույնը տեսնում ենք և ուրիշ լեզուներում**։

Հասարակական նոր ժամկետությունը վորոշ հասկացությունների համար կարող և չընդունել հին բառը և դրա տեղը նորը գտնել, յերբ այդ նախկին բառածևերի հետ կապված և խորթ և թշնամական հին պատկերացում, ինչպես հին «վարժապետ», «վոստիկան» և նման բառերը փոխարինվել են ուսուցիչ (դաստուր), միլիցիոներ և այլնով։ Իհարկե այդ հին բառերը կարող են և չփոխարինվել նորերով, յերբ հասկացությունն էլ և անհետացել, ինչպես նախարար, вече, посадница և նմանները։ Մեծ մասամբ դրանք հարմարեցվում են նոր բովանդակության տեսակետից։

---

* Տես Ж. Вандриес, Язык, էջ 209, 371։

** Նույն դրքում, էջ 370.

Բայց վորոշ քաղաքական-կուլտուրական ուժեղ սիտուացիա կարող է մի թույլ լեզվից հանել իրեն սովորական բառերը և այդ հասկացությունների համար դրսից պարտադրել այլ, այսպես կոչված, փոխառյալ բառեր։ Որինակ, հայերը մինչև պարսկերենից (և մասամբ հին) վերցրել են հարյուրավոր բառեր, ինչպես նախարար, սեպուհ, աշխարհ, բաժ, պատերազմ, պատասխան, գուշն, սպիտակ, սև, կալուստ, ճակատ և այլն և այլն։ Չի կարելի ասել, վոր հայերենում այդ հասկացությունները առաջացել էին միայն պարսիկների ազդեցության կամ տիրապետության հետևանքով։ Անշուշտ ճակատի, սպիտակի, գուշնի, սևի և նմանների համար տեղական բառեր յեղել են, բայց պարսկերենի քաղաքական դիրքը, հատկապես հայ նախարարության կուլտուր-քաղաքական կապերի և մատչության հետևանքով, հարյուրներով հանել ևր տալիս տեղական հայ բառերը և փոխարինում պարսկերենով (նույնպես և հատուկ անունները պարսկական էլին մեծ մասամբ)։

Ցերբ առարկան կամ յերևույթը նոր է, ինչ վոր հաճախ պատահում է այսպես կոչված «կուլտուրական բառերի» հետ (մասնավոր և տեխնիկական տերմիններ), ապա այդ հասկացությունների հետ գալիս և մուտք է գործում նաև նոր բառը։ Ինչպես լատիներենում ասում էլին rem verba sequuntur «իրին բառերն են հետևում», և սամովար, կակաո, կոմբայն, կոմիսար, սոցիալիզմ և նման նոր հասկացությունների հետ գալիս են իհարկե և այդ արտաքին բառերը։ Այս փոխառությունները, վորպես կուլտուրական բառեր, ընդհանրապես չպետք է քարգմանել, ինչպես վոմանք ձգտում են վոչինչ «ոտար» չհանդուրժել իրենց «սեպուհը» լեզվում։ Բայց չե՞ վոր այդպես են մուտք գործել և շատ ուրիշ բառեր, վորոնք հիմա գուտ «ազգային» են համարվում (համմտ. ռուսերենում лошадь, молоко, хлеб, князь. тысяча..., հայոց՝ պատերազմ, պատասխան, սեպուհ, նախարար և այլն)։ Չեխերը գերմանական քաղաքական և կուլտուրական ճնշմանը հակադրվելով և ինքնապաշտպանության զգացումի թելադրանքով չէին վերցնում ոտար բառեր և մինչև իսկ ընդհանուր միջազգային բառերը գոռում քարգմանել, չեխացրել են, ինչպես թատրոն բառը քարգմանել են divadlo, քիմիա բառը՝ lučba,, hudba «յերաժշտություն» և այլն։

Փոխառյալ բառը կարող է ձևափոխված և իմաստափոխված վերադառնալ և իրեն այն սկզբնական լեզուն, վորից վերցված

են յեղել։ Որինակ, անդլիացիք ֆրանսերենից վերցրել են boget «քիսա, փողի տոպրակ», որը փոփոխվելով իրեն արտասանությամբ և նոր իմաստ ստանալով («բյուջետ»), կապված անգլիական պարլամենտարիզմի հետ, նորից վերցվել է ֆրանսիացիների (և բոլորի) կողմից։ Այդպես և թյուրքերեն карандаш բառը, որ սկզբում նշանակել է «սև քար» և վերցվել ռուսների կողմից, բայց ձևափոխված այժմ վերադարձել է նորից թուրքերին։

Բառափոխառությունը կարող է լինել և տառացի թարգմանության միջոցով, ինչպես և խնդրառության (կապակցության), յերբ այդ լինում է հակառակ ավյալ լեզվի սովորական ոգուն և ձևաբանությանը, ինչպես հին ժամանակ հայերը մայրաքաղաք բառը պատճենահանել են հուն metropolis բառից (հայերենի քերականությանը մոտ կլիներ «քաղաքամայր»), այդպես և «տպագրություն» թարգմանվել է սերվիլ կերպով հուն apodeikson-ից և այլն, իսկ նորերս ասենք «ինքնաթիռ» տառացի վերարտադրությունն է ռուսաց самолет բառի կազմության կամ առաջ самовар-ը թարգմանել հին ինքնայեռ և այլն և կամ ասում հին սխալ կերպով «ամուսնանալ նրա վրա» (жениться на ней) փոխանակ՝ ամուսնանալ նրա հետ։ Այսպիսի արհեստականն և դրային փոխառությունը կոչում են կալկա (калька), որ տառացի նշանակում է «պատճենահանում, ընդօրինակում»։ Ռուսերենում այդ կալկաների համար կարելի չե մատնանշել, որինակ совесть բառը հունարեն suneidesis բառի որինակով կազմած, այդպես և հետագայում влияние ֆրանսերեն influence բառի ընդօրինակումով, развитие ֆրանսերեն développement բառից, ինքնարկվելով саморазвитие բարդությամբ գերմանական Selbstentwicklung բառի ազդեցության, разбить на голову «(թշնամուն) ջարդ ու փշուր անել», որ մտել է ռուսաց լեզուն 18-րդ դարում, որպես տառացի թարգմանություն գերմաներեն auf's Haupt schlagen ասությից (խղճմից) և այլն և այլն։

Այդպես, ուրեմն, մենք տեսնում ենք, որ ոտար բառի փոխառությունը (заимствование, Lehnwort) լինում է 1) նոր հասկացության համար, այն էլ մեծ մասամբ կուլտուրական տերմիններին, տարածվելով մի որևե յերկրից (լեզվից), 2) հին հասկացությունների համար յեղած բառերի փոխարկումով ոտար բառով, ինչպես որ մասամբ տեղի չե ունեցել, որինակ, հայերեն բառերի նկատմամբ, փոխարինվելով պարսիկ բառերով (ճակատ, գուշ,

սպիտակ...), և 3) նոր կամ հին հասկացության տառացի թարգմանությամբ, այսպես կոչված, կալկայի ձևով։

Բայց այս բառափոխառությունները միակ աղբյուրը չեն, որով նոր բառեր են մտնում այս ու այն լեզուն։ Ցեղեր բառափոխառությունները, այն էլ մի որոշ լեզվից միայն, ընդունելն ընդհանուր և սիստեմատիկ բնույթ, քե նոր հասկացությունների (ոչ միայն «կալյատուրական») և քե հների փոխարկման հետևանքով, ապա տվյալ լեզուն իրեն ցեղային (ազգային) նկարագիրը հեշտությամբ կարող է փոխել, պահելով թերևս կապակցության (ներքին սորուկտուրայի) առանձնահատկությունները, որոնք ամենավերջումն են կորչում և փոխարինվում ուսարով (այս մասին խոսվում է «Լեզուների ծագման և փոփոխման» հատվածում)։

Բառանորոգումը կամ բառափոխանորոգումը կարելի չե անել և լեզվի ներքին ռեսուրսներով, վերցնելով անցյալում գործածված բառապաշարից և հարմարեցնելով նոր պահանջներին (ինչ մոտ՝ գրաբարից), չեքե էվոլյուցիական ուժեղ արգելքներ չկան. յերկրորդ, այդ կարելի չե անել և հարատած տեղական բարբառներից. և վերջապես, ամենամեծ չափերով այդ կարելի չե կատարել իրեն գրական լեզվի ելեմենտներից, այդ լեզվին հատուկ ձևաբանական պրիոմներով (բառերի կամ արմատների կոմբինացիաներով, կրկնությամբ, ածանցմամբ, շեշտով և այլն։

Վերջին հաշվով այս բոլորը հանգում է կամ բառափոխառության և կամ գործածվող կենդանի լեզվի ելեմենտների ոգտագործման (բարդությամբ, ածանցմամբ). բայց չի ստեղծվում նոր բառ միանգամայն մտածվի կերպով, այսինքն՝ ոչ յեղած բառարմատներից կամ այլ ելեմենտներից։ Այդպիսի մտատեղծ բառեր միավորներով են հաշվվում բոլոր լեզուներում, ինչպիսիք են raz (այն էլ՝ դերմ. Geist «ոգի» բառի վերհիշության ազդեցությամբ), рококо, ֆր. félibre, кодак, մեր «սուրճ» բառը։

Լեզվի բառաստեղծման և նորոգման քաղաքականությունը անանձնական չե այդ լեզվի (բարբառի, յենթաբարբառի) ընդհանուր պատմահասարակական վիճակից ու մտայնությունից և, կարելի չե ասել, հանդիսանում է հենց այդ իրադրության առաջին արձագանգողը։ Որքանն բնորոշ եր, որինակ, հենց հայոց բառա-

ստեղծումը հունարենի նմանութեամբ, որպես լեզվաշինարարութեան հրատապ մի պահանջ, երբ սակավաթիվ հին նախածանցավոր բառերի ձևաբանական հողի վրա զարգացրին հայկական ելևէնտներով, բայց հունարենի ձևական ընդօրինակութեամբ. այնպիսի կազմութիւններ, ինչպես՝ վերադիտել, վերաբերել..., տրամաբանել, տրամախոսել... բաղադրել, բաղդատել... արտահայտել, արտաբերել..., շարադրել, շարադրել..., ներածել, ներբողել..., ենթադրել, ենթակայ..., ստորոգել, ստորագրել և այլն և այլն կամ վերջին · բնորոշ են մեր իրականութեան և մտայնութեան տեսակետից այնպիսի նոր բառաձևեր, ինչպես՝ աշխոյժ, լուսժողկոմ, зарплата, ВУЗ և այլն։ Բայց հաճախ մենք տեսնում ենք, որ հակառակ նոր իրադրութեան և պահանջների հին մտայնութիւնը դեռ զգալ է տալիս իրեն որոշ տեղերում, թեև ավելի կուլտուրապես յետ մնացած շրջաններում կամ խաւերում։ Որինակ, այժմ, մենք դրական լեզվի, մամուլի, ժողովների և մյուս բոլոր ճանապարհներով տարածում ենք մեր պետական նոր լեզվի բառերը. սակայն տեղ տեղ դիտելի չէ, որ շրջունակում են «սեղան» կամ «այգի» չասել (և տասնյակ նման բաներ), այլ գերադասում են կամ հին ռուսական СТОЛ-ը, որը որոշ իշխող և ճնշող (և «կուլտուրական») դրոշմ եր, այժմ անցած մեզ համար. կամ դիցուք տեղական «իդի» (=այգի) բառը գերադասում են փոխարինել «քաղաքավարի» բաղ բառով, որով նման մարդկանց մեջ շարունակում և անգիտակցորեն գործել հին թյուրքական (սարդարյան Ցերևանի) մտայնութիւնը։ Ինչ խոսք, որ մի քանի տասնյակ տարիներից հետո այդ «ճիշտ-շացումը» ևս կվերանա, ինչպես որ պիտի վերանան տեղական բարբառները։

Բայց յիշեն բարբառների վիճակը իրենց բառապաշարով և բառաձևերով կրել է որոշ բնական և էվոլյուցիոն ընթացք, ինչպես և տարերայնութիւն, սակայն այդ չի կարելի ասել գրական լեզվի և բառապաշարի մասին, ուր կա որոշ ներգործուն միջամտութիւն և կարգավորում մտավորական այս կամ այն շրջանների կողմից։ Իսկ այս հանգամանքը իրեն հատուկ դրոշը կարող է դնել իհարկե և բառապաշարի յուրացման վրա։ Այս կամ այն տրամադրութիւններից յետ մեկ մեծ տեղ և տրվում (անքննադատաբար) ոտար բառերին և տերմիններին, մեկ էլ դրեթե ամբողջովին այդ տեխնիկական և գիտական տերմինները աշխատում են ամեն գնով թարգմանել. իսկ մեղ մոտ կա

նաև «գրաբարյան» կամ «բարբառյան» թեքում։ Մինչև իսկ ոտար բառերի յուրացման ժամանակ վոմանք շեշտը դնում են, դիցուք թե, այս ինչ ոտար լեզվից և վոչ թե մի այլ, ասենք՝ ֆրանսերենին ձևով լատինական և հունական բառեր և վոչ ռուսական (նորմ, բրիգադ..., բայց վոչ նորմա, բրիգադա և այլն)։ Ազգայնական թեքում պիտի համարել այն արտառոց վերաբերմունքը, յերբ ամեն ինչ աշխատում են թարգմանել, թեկուզ և շատ ընդհանուր յուրացման և ճշտության, ինչպես ամենավար փոխանակ դեմոկրատ, ընկերվարություն փոխանակ՝ սոցիալիզմ և այլն (համեմատել ռուսների մոտ անհաջող փորձը թարգմանել դիցուք колоземица փոխանակ атмосфера, мокроступ փոխանակ галоша և այլն)։ Չպիտի թարգմանել վոչ միայն նման կուլտուրական բառերը, այլ և ժողովրդի միջոցով փոխառած «քյալլագյոզ», «յոլա գնալ» և նման թյուրքական հասարակ բառերը, վորոնց համար հայերենները դուռով պիտի ստեղծել. իսկ պատմությունը մեզ ասում է, վոր նման փոխառություններ են և «հայերեն» պատասխան, արձակ, վարձ, սպիտակ և նման հարյուրավոր պարսիկ բառեր, ինչպես և ռուսաց փոխառյալ рисовать, хлеб, лошадь և նմանները, վորոնք ռուսի համար դուռ ռուսերեն են թվում։ Այժմյան մեր փոխառությունները վոչ թե անմիջական մեր հարևանների բառերն են, ինչպես առաջ եր, այլ ընդհանուր միջազգային բառեր, մեծ մասամբ լատինական և հունական, վորոնք մտնում են հայոց լեզուն գլխավորապես ռուսերենի միջնորդությամբ։ Այդպիսի ուղիներով և կատարվում բառափոխառությունը՝ անմիջական հարևաններից կամ ընդհանուր կուլտուրական ազդեցությամբ։ Ցեխ այդ լինում և (մանավանդ վերջինը) անշուշտ սահմանափակ քանակով և չի կարող վորոշիչ ազդեցություն անել լեզվի վորակի վրա։

Ընդհանրապես պիտի ասել, վոր տվյալ լեզվի բառաստեղծման կամ բառափոխանորդման պրակտիկան կախված է այդ լեզուն կրողների թե պատմա-հասարակական վիճակից և թե ընդհանուր մտայնությունից։ Այդ վերջին նկատառումով պիտի ասել, վոր մեզ մոտ գրական լեզուն յուր այդ պրակտիկայով յերբեմն սկսում է հարկ տալ կաստայական մեկուսացմանը,—մի բան, վոր տեղի ունի և այլ լեզուներում—յերբ կտրվում է մասսաների յուրացման պահանջից, մասնակցությունից և ընդունելի լինելուց։ Որինակ, յեթե այժմ մեր պետականության մեջ միայն

կան վորակ, վորոշ, վորդի և այլն (բառասկզբում «վ»-յով հնչվող) բառերը, ապա այդ ձևով դա պիտի լինի և դիտակցվի մյուս բառդուբյուններում (անվորակ, ամենավորակ..., անվորոշ, ամենավորոշ և այլն) և վոչ թե մեխանիկական մոտեցմամբ, վոր հաճախ հակասություններ է (երբ դրաբարյան «անորոշ» ձևը ծնում ժողովրդի մեջ՝ այդպես էլ հնչվել է, վոր սխալ է)։ Մի «չորքստանի» դրաբարյան վոխառություն է, բայց մի նոր կազմած «կողմնորոշ», «ճշտորոշ» բառաձևը կարելի չեր տալ «կողմնավորոշ», «ճշտավորոշ» ավելի հասկանալի և մատչելի ձևերով։

Գրական մեր լեզվի այդ լճացման և արխայիզացիայի հավար կարելի չե մասամբ մոռնանալ և վորոշիչ «ն» հոդի արվեստական միակերպությունը, չերբ անխտիր բոլոր ձայնավորով սկսվող բառերից առաջ, անկախ հնչման տարբերությունից և պատմությից, նախորդ հոդավոր բառը մեխանիկորեն վերջացնում են այդ «ն»-ով։ Կամ թե sp, st, sk, zg և այլն բառասկզբնահնչյունականակոմբինացիաները արվեստականորեն հնչում են «ը» ձայնավորով և նախորդ բառը «ն» հոդով վերջացնում, կարծես թե հնում միշտ այդպես եր (թեպետ հմմտ. դրաբարյան «ի սկզբանէ» և վոչ «յսկզբանէ»)։ Իսկ մինչև նոր լեզուն յուր զարգացմամբ նոր արհեստական օրինաչափություններ ձեռք չի բերում և միշտ հին ռեսուրսներով և նա պայմանավորված։ Լեզուն միշտ պիտի ունենա և յուր ներկայի պահանջները։

Տվյալ լեզվի բառային («բառարանական») քաղաքականությունը չի կարված նկարել այդ ամբողջ լեզվի պատմա-հասարակական զարգացումից, արտացոլելով լեզվի և մտածողության (ձևի և բովանդակության) պրոբլեմը մարդկային հասարակությունների (ինչպես և ցեղերի ու ազգերի) պատմական փոխհարաբերության մեջ,—մի խնդիր, վորը քննվում և առարկայիս հաջորդ գլխում։

ՀԱՍՍՀ Գիտությունների [illegible]

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

	էջ
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՎԱԾԸ ՅԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ	5
ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՑԻՊԼԻՆՆԵՐԸ	10

II ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

ԼԵԶՈՒ	19
ՀՈՄՈ—ՄԻՏԳ	26
ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ	36

III ՀՆՉՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (Ֆոնետիկա)

1. Հնչյունների ֆիզիոլոգիա (42—78)

Հնչյունաբանության դրվածքը	42
Արտաբանական ապարատը	45
Ձեռքժեստական և տրմկային հնչյուններ	50
Հնչյունների դասակարգումը	50
Ձայնավորներ	51
Բաղաձայններ	56
Ճնռաթևզվային բաղաձայններ	59
Միջնաթևզվային բաղաձայններ	60
Առաջնաթևզվային բաղաձայններ	60
Շրթնային բաղաձայններ	61
Աֆֆրիկատներ	62
Ձանձանաձներ	64
Հնչյունի քանակը	67
Հնչյունի տարբերությունը տոնի և արտաշնչության տեսակետից	69
Վանկ	70
Շեշտ	73
Ձերկյաբրաձներ (դիֆտոնգներ)	76

2. Ձնչյունական փոփոխություններ (79—142)

Աբտիկուլյացիան բուռ	83
Հնչյունաարտացոլումը ունի՞ նպատակադրում	85
Հնչյունական փոփոխությունների տեսակները	89

Հնչյունաձիրքի ֆակտորությունը բառակազմում 91
Հնչյունաձիրքի ֆակտորությունը բառավերջում 94
Հնչյունաձիրքի ֆակտորությունը բառամիջում 97
Տեսական կամ իմանենտիվ բազաձայն 99
Նեյտրը որպես հնչյունափոխության ֆակտոր 101
«Աբսիկուլացիոն բազա»-ն որպես հնչյունափոխական ֆակտոր . 103
Հոլական և նման բառերի արտակարգ հնչյունափոխությունը . 104
Դրափոխություն կամ յեռահաջորդություն («մետաթեզա») . . 105
Ժողովրդական սուտաբանություն (Volksetymologie) . . . 107
Ասիմիլյացիա և դիսիմիլյացիա 109
Բարդացում և պարզացում 113
Ընդհանուր պատմական հնչյունափոխություն 117
Հնչյունական քանակի վերածումը նոր որակի («փոննեմայի») . 122
Перебой և ալտերնացիա և այլն 124
Հնչյունափոխությունների հարակցվելը մի բառի մեջ . . . 124
Հնչյունափոխական շղթաներ 127
Ընդհանուր հնչյունափոխությունների պատմական պատճառը . 137
Հնչյունաբանության սոցիալական տարրերը 142

IV ՔԵՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ

1. Լեզուն մտածողության ձեվ (143—163)

2. Քեվաբովանդակական միավորներ (164—240)

a) Նախադասություն . . . . . 164—175
b) Բառ . . . . . 175—187
c) Բառահարաբերություններ և ժամանակ բառեր . . . 188—191
d) Շարահյուսական բառահարաբերություն . . . . 191—195
e) Մասնիկներ կամ յերկրորդական ձեվեր . . . . . 195—240

մասնիկի ծագումը (195—209), տեսակները (209—224), քերականական կատեգորիաները (215—221), մասնիկների փոփոխությունները (221—240)

3. Քեվաբանական միջոցներ (прием-ներ) (241—270)

a) Դասավորություն . . . . . 245—246
b) Բառաբարդում . . . . . 247—250
c) Կրկնություն . . . . . 250—257
d) Աֆֆիքսացիա . . . . . 257—261
e) Արմատահնչյունների փոփոխություն . . . . . 261—267
f) Շեշտ . . . . . 267—269
i) Ձևական բառեր . . . . . 269—270

4. Լեզուների ձեվաբանական դասակարգում (271—281)

5. Ձեվաբանական պրոցեսների եությունը (282—308)

a) Ձևն ու բովանդակությունը . . . . . 282—285
b) Ընդհանուրն ու մասնավորը . . . . . 285—289
c) Լեզվի ձևախմաստական միավորների կառուցման սկզբունքները . . . . . 289—292
d) Ձևաբանական սոսիմբլացիա և դիսոիմբլացիա . . . 292—308

V ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Բառի ձևավորման շուրջը . . . . . 309—312
Բառապաշար . . . . . 312—314
Բառի դասակարգման շուրջը . . . . . 314—318
Բառիմաստի փոփոխություն . . . . . 318—320
Իմաստափոխության ընթացքը . . . . . 320—324
Բառիմաստի փոփոխության տեսակները . . . . . 324—328
Բառիմաստի ներգաղում (հակցիալիզացիա) . . . . 329—330
Բառիմաստի ընդլայնում . . . . . 330—332
Բառիմաստի շրջում . . . . . 332—338
Բառափոխանցդում . . . . . 338—351

Գլխ. խմբագիր՝ Ղ. Վարդապետյան
Տնխ. խմբագիր՝ Զ. Մարուխյան
Սրբագրիչ՝ Վ. Ցևատյան

Հանձնված է արտադրության 24/II 1939 թ.
Ստորագրված է տպագրելու 20/VII 1939 թ.
22½ տպադր. մամուլ, մեկ մամուլում. 38400 տպ. նիշ.
Գլավլիտի լիազոր № 8096. Պատվեր № 60 տիրաժ 2000

Պետհամալսարանի հրատարակչության տպարան, Ցեբևան, Տերյան 72։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0011528

ЦЕНА
11
14715